

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
1914 Թ. ՀՈՒԼԻՍ - 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ
02-11.05.1917
ԵՐԵՎԱՆ
06.01.1918
ԵՐԵՎԱՆ 2015


ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
1943
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

РУБЕН ОНИКОВИЧ СААКЯН

# ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ И АДМИНИСТРАТИВНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ

## (ИЮЛЬ 1914 г. - ФЕВРАЛЬ 1917 г.)

ЕРЕВАН
ИНСТИТУТ ИСТОРИИ
2015

104897 947.925

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԲԵՆ ՕՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ

104998

# ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

## (1914 Թ. ՀՈՒԼԻՍ - 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
128

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
128

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ս150

Ի հիշատակ
Ռուբեն Հենրիկի Գասպարյանի

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով

Երաշխավորվել է հրատարակման ՀՀ ԳԱԱ Պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր՝ Է. Ա. Կոստանդյան

Սահակյան Ռուբեն
Ս150 Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար)/ Ռ. Սահակյան. - Եր.: Պատմ. ինստիտուտ. 2015. - 428 էջ:

Մենագրությունը նվիրված է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914 հուլիսից մինչև 1917 թ. փետրվար ռուս-թուրքական ռազմաճակատում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի պատմությանը: Նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա աշխատությունում լուսաբանվում են հայ կամավորական շարժումը, արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերը, Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմակերպումը, Օսմանյան կայսրությունից գրավված Արևմտյան Հայաստանի շրջաններում ռուսական զինվորական գեներալ-նահանգապետության կազմակերպումը և գործունեությունը, արևմտահայության փրկության և հայկական բնակավայրերի վերաշինության հետ կապված հարցերը, ռուսական իշխանություններին գաղութային քաղաքականությունը և այլն:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների և հասարակայնության համար:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99941-73-95-2
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմը՝ 1914–1917 թվականները հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ առավել ծանր, ճգնաժամային և միաժամանակ հերոսական ժամանակահատվածն էր, ուստի չէր կարող չլինել ոչ միայն հայ, այլև օտար պատմաբանների ուշադրության և հետազոտությունների կենտրոնում: Ստեղծվել է պատմագիտական բազմալեզու հսկայական գրականություն: Գրվել են հոդվածներ, հուշեր, գիտական աշխատություններ, հրապարակվել փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, որոնք անշուշտ շատ կարևոր են: Սակայն, 1914–1916 թթ. հայության մասնակցությանը կամավորական շարժմանը և հատկապես Արևմտյան Հայաստանի կողոպտված և ավերված բնակավայրերի ու տնտեսության վերականգնման, Արևմտյան Հայաստանում զինվորական գեներալ-նահանգապետության կազմակերպման վերաբերյալ սակավաթիվ են այն ուսումնասիրությունները, ուր մանրամասնորեն բացահայտված լինեն կարևոր և առանցքային հիմնահարցերը:

Ուսումնասիրողների գրեթե ճնշող մեծամասնությունը 1914–1917 թթ. իրադարձություններին անդրադարձել է կապված հայերի ցեղասպանության, բռնագաղթի, գաղթականության խնդրի, մարտական գործողությունների ծավալման, Անտանտի և Քառյակ միության տերությունների՝ այդ ժամանակաշրջանի ներքին և արտաքին քաղաքականության հետ և այլն: Ըստ որում, հեղինակների մեծ մասն ուշադրություն չի դարձրել զգալի թվով արխիվային փաստաթղթերի, ժամանակի մամուլի արդիական ու տեղեկատվական

հրապարակումներին, որոնք ուսումնասիրողներին հնարավորություն կտային առավել համակողմանի լուսաբանել իրադարձությունները:

Արխիվային փաստաթղթերի և ժամանակի մամուլի հաղորդումները կարևոր են նաև այն առումով, որ ամենայն մանրամասնությամբ վկայում են 1914–1917 թթ. Արևմտյան Հայաստանում տեղի *ունեցած դեպքերը*, հասարակական, կրոնական, բարեգործական կազմակերպությունների, ռուսական իշխանությունների հայտարարություններն ու հաշվետվությունները կատարված աշխատանքների, գաղթականների տեղաշարժերի, ցուցադրվող օգնության տեսակի, քանակի, քրդական գերությունից փրկված անձանց, գեներալ-նահանգապետության հիմնման և այլնի վերաբերյալ:

Ժամանակագրորեն մենագրությունն ընդգրկում է 1914 թ. հուլիսից՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկսելուց մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխություն ընկած ժամանակահատվածը: Հետազոտության նպատակն է նորահայտ վավերագրերի հիման վրա լուսաբանել.

1. Ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորական շարժումը և լուծարման պատճառները:
2. Օսմանյան կառավարության կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը և ի պատասխան դրա հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը:
3. Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմակերպումն ու գործունեությունը: Հուլիսյան նահանջի պատճառները:
4. Հայկական կազմակերպությունների՝ Պետրոգրադում հրավիրված համագումարի աշխատանքները և ընդունած որոշումները:
5. Կովկասյան բանակի կողմից Օսմանյան կայսրությունից գրավված Արևմտյան Հայաստանի շրջաններում զինվորական գեներալ-նահանգապետության հիմնումը և իրականացվող քաղաքականությունը:
6. Ռուսական բանակի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի մի մասի նահանգներում, գավառներում ու գավառակներում՝ Ալաշկերտի, Բասենի, Վան-Վասպուրականի, Էրզրումի, Երզն-

կայի, Բաբերդի, Մշո դաշտի և Խնուսի բնակավայրերի հայ բնակչության փրկությունը, ինքնապաշտպանական խմբերի կազմակերպումը, ավերված բնակավայրերի վերականգնումը, գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպումը, ռուսական իշխանությունների գաղութային քաղաքականությունը և այլն:

Աշխատությունում ուսումնասիրվել և քննական վերլուծություն է տրվել հայկական, ռուսական և օտար աղբյուրներին, գրականությանը և պարբերական մամուլին, որոնք թեմատիկորեն վերաբերվում են հետազոտության ժամանակագրական սահմաններին: Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Առաջին խմբի մեջ մտնում են նորահայտ փաստաթղթեր, որոնք լուսաբանում են կամավորական շարժումը, արևմտահայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերը, Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետարանի), Կովկասի փոխարքայության, ռուսական բանակի հրամանատարության, գեներալ-նահանգապետության և կաթողիկոս Գևորգ Ե-ի, հայ, ռուս և օտարազգի քաղաքական, պետական, դիվանագիտական, հոգևոր, զինվորական, հասարակական և այլ գործիչների հեռագրերը, նամակները, հրամանները, հաշվետվությունները, հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան և բրիտանական պետական, հասարակական, կրոնական, բարեգործական կազմակերպությունների և ընկերությունների ծավալած աշխատանքները, ռուսական իշխանությունների քաղաքականությունը նորանվաճ Արևմտյան Հայաստանում և այլն:

2. Աղբյուրների առանձին խումբ են կազմում հուշերը: Հուշագրությունները, որպես անձնական ծագման աղբյուրներ, պահանջում են պատմական վերլուծության հատուկ մեթոդներ, քանի որ հեղինակներն իրենց առջև դրել են հստակ նպատակներ, համապատասխանաբար հավաքելով և համակարգելով տեղեկատվությունը, այս կամ այն փաստին գնահատականներ տալիս առաջնորդվել են սեփական պատկերացումներով ու նախապատվություններով: Այնուա-

մենայնիվ, հուշերը հաճախ միակ վկայություններն են այս կամ այն իրադարձության կամ դեպքի վերաբերյալ, որոնք այլ տեղ հնարավոր չէ գտնել:

3. Փաստական զգալի նյութ է պարունակում ժամանակի պարբերական մամուլը, որը կազմում է աղբյուրների առանձին խումբ: Մամուլում հրապարակվել են վերլուծական հոդվածներ, նամակներ, հեռագրեր, հաշվետվություններ և զեկույցներ, որոնք լուսաբանել են ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունները, կամավորների մղած կռիվները, արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները, Վանի հայկական իշխանության կազմավորումը (ժամանակավոր վարչության կամ նահանգապետության) և գործունեությունը, ռուսական կառավարության որդեգրած քաղաքականությունը Օսմանյան կայսրությունից գրավված հայկական գավառներում, գեներալ-նահանգապետության կազմակերպումը, Արևմտյան Հայաստանի վերաշինության և գաղթականության վերադարձի հետ կապված խնդիրները, հայ հասարակական, կրոնական և բարեգործական կազմակերպությունների գործունեությունը: Մամուլի հաղորդումների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել քննադատական մոտեցում, քանի որ երբեմն տրվել է ոչ ճիշտ տեղեկատվություն, իսկ մի շարք պարբերականներ եղել են այս կամ այն քաղաքական կամ հասարակական կազմակերպության օրգաններ և որոշ դեպքերում հրապարակել են հակասական և իրարամերժ տեղեկատվություն:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում կազմավորվում է կամավորական յոթ խումբ, որոնցից հինգը գործում են Թիֆլիսի Հայկական կենտրոնական բյուրոյին կից գործող Հայ կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի (Կարգադրիչ մարմին) ղեկավարության ներքո: Հնչակյանները հրաժարվում են գործել Ազգային բյուրոյի ընդհանուր ղեկավարության ներքո և նախընտրում են ունենալ առանձին ստորաբաժանում: Կարսում կազմակերպվում են երկու խումբ, որոնցից մեկը գլխավորում է Հնչակյան կուսակցության անդամ Հարություն Գասպարյանը: Նրանք մասնակցում են մարտական գործողությունների սկզբնական փուլին և 1915 թ. հունվարին լուծարվում են:

1915 թ. ռուսական բանակի սպա Ա. Ջանփոլադյանին հանձնարարվում է կազմակերպել նոր խումբ՝ V-ը, որի մարտիկները հիմնականում հնչակյան կուսակցության անդամներ էին: Ստորաբաժանման կազմավորումն ընթանում է ներկուսակցական պայքարում: Հնչակյան ղեկավարության և խմբի հրամանատարության միջև լուրջ տարակարծություններ են առաջանում, քանի որ կուսակցությունը ցանկանում էր ստորաբաժանման ղեկավարության մեջ կիրառել կուսակցական ղեկավարության սկզբունքները՝ զանց առնելով զինվորականը: Խնդիրը լուծվում է միայն ռուսական հրամանատարության միջամտությամբ:

Ի տարբերություն հնչակյանների, կազմակերպված և առանց կուսակցական միջամտության էր ընթանում Ազգային բյուրոյի ղեկավարությամբ գործող I, II, III, IV և V, ապա VII, VIII (պահեստային) խմբերի կազմավորումը, որտեղ հիմնականում ընդգրկվում են ՀՅԴ-ն անդամներ ու համակիրներ, ինչպես նաև Օսմանյան կայսրության դեմ մարտնչողներ, որոնք ցանկանում էին հասնել Արևմտյան Հայաստանի ազատագրությանը: Ստորաբաժանումների ձևավորման ընթացքում հիմնականում առաջանում են զուտ սպառազինման և հանդերձավորման հետ կապված բազմաբնույթ հիմնախնդիրներ:

Կամավորական շարժման մասին մեզ հայտնի առաջին ուսումնասիրության հեղինակը մարտական գործողությունների անմիջական մասնակից, V կամ Արարատյան գնդի կամավորական Ռուբեն Շաթիրյանն էր: Նրա հոդվածաշարը տպագրվել է Մոսկվայում լույս տեսնող "Армянский вестник" շաբաթաթերթում[1]: Կամավորականը ներկայացրել է ընթացած կռիվները, 1915 թ. մայիսին Վան արշավելը և այլ կարևոր մանրամասներ: Հոդվածներից մեկում Ռ. Շաթիրյանը խստորեն քննադատում է մի շարք գեներալների, որոնք իրենց հակահայ գործողություններով չէին նպաստում հայկական զինուժի հաջողություններին և մի շարք դեպքերում անհեթեթ մեղադրանքներով վատաբանում ու ամբաստանում էին կամավորներին: Նա, առանձնահատուկ դրվատանքի խոսքեր է հայտնում ռուսական բա-

[1] Տե՛ս Армянский вестник, Москва, 1917, N 10–11, 12 марта, с. 11–15; N 13, 26 марта, с. 4–8; N 14, 9 апреля, с. 5–8.

նակի կրտսեր և միջին հրամանատարական կազմի մասին, ընդգծելով նրանց խաղացած կարևոր դերը մարտական գործողություններում և հայ կամավորների նկատմամբ ունեցած վերաբերմունքում:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան VI խմբի սպա, հետագայում հրամանատար Հայկ Բժշկյանը (Գայ) իր հոդվածներում[1] ներկայացրել է ստորաբաժանման մարտական ուղին և մասնակցությունը կռիվներին: Նա նաև կարևոր տեղեկություններ է հաղորդում հայերի կոտորածների մասին: Հարկ ենք համարում նշել, որ Հ. Բժշկյանը չէր բավարարվում սոսկ այս կամ այն մարտի նկարագրությամբ, այլև իր հոդվածներում քննարկում էր ռազմավարական բնույթի մի շարք հիմնարար հարցեր, որոնք վերաբերվում են մարտական գործողությունների հետագա ծավալմանը: Կարելի է փաստել, որ ռուս-թուրքական ռազմաճակատում աստիճանաբար կայանում էր ապագա խորհրդային զինվորական-գիտնականը:

Համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հետաքննել թուրքական վայրագությունները, ինչպես նաև կազմել ամփոփ մի աշխատություն, որտեղ ներկայացված կլիներ հայերի մասնակցությունը մարտական գործողություններին և արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները:

Հայ հայրենակցական միությունների կենտրոնական միությունը մեծանուն գրող և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ նախածեռնում է վերը նշված աշխատանքները: Կազմվում է Պատմառազմական հանձնաժողով, որը գլխավորում է մարտական գործողությունների անմիջական մասնակից գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան): Նրանց հանձնարարվում է սեղմ ժամկետում պատրաստել և 1919 թ. Փարիզում բացվող վեհաժողովին ներկայացնել ամփոփ մի աշխատություն, որտեղ լու-

[1] Հ. Բժշկյանի հոդվածները տե՛ս «Գաղափար», Թիֆլիս, 1916, N 4, 24 փետրվարի, N 55, 3 յուլիսի, N 56, 6 յուլիսի, N 58, 10 յուլիսի: VI խմբի մասին տե՛ս Հնչակեան Տարեգիրք (Ամերիկայի շրջանի), Առաջին տարի, Փրավիտենս, 1931, *Հովհաննիսյան Գ.,* Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, (այսուհետև՝ ԲՀԱ), 2003, N 1, էջ 130–221:

սաբանված կլիներ հայերի մասնակցությունը մարտական գործողություններին: 1920 թ. հունվարին հայկական պատվիրակության անդամ Միքայել Պապաջանյանին (Պապաջանով) հանձնվում է ուսումնասիրության մի մասը՝ 314 մեքենագիր էջ: Աշխատության հետագա ճակատագիրը մնում է անհայտ[1]:

Կամավորական շարժման և խմբերի մարտական գործողությունների վերաբերյալ ուսումնասիրություն է գրել մարտական գործողությունների մասնակից գեներալ Գաբրիել Ղորղանյանը (Կորգանով)[2]: Նրա ուշադրության կենտրոնում են եղել գլխավորապես հայկական հրաձգային գումարտակների վարած մարտերը: Գեներալը պարզաբանել է, թե ինչու ռուսական հրամանատարությունն աշխատում էր խմբերը մեկ ուղղությամբ չկենտրոնացնել, այլ ուղարկել ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր տեղամասեր:

Հայ կամավորական շարժման սկզբնական փուլի մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում այդ շարժման նախաձեռնողներից մեկի՝ մասնագիտությամբ բժիշկ Յակով Զավրիևի (Հակոբ Զավրիյան) անտիպ գրառումները[3]: Սկզբնապես նա գտնվել է Իգդիրում և մասնակցել է II խմբի կազմավորմանը: Հետագայում Յ. Զավրիևը տեղափոխվել է I խումբ: Նա ամենայն մանրամասնությամբ հաշվա-

---

[1] ***Закарян Ан.,*** Поэт-генерал Александр Кулебякин и Армения, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, 2001, N 3, էջ 115–126, ***Զաքարյան Ս. Հ.,*** Գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի մասնակցությունը Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասի քննիչ հանձնաժողովի աշխատանքներին, Հայկական բանակ, 2002, Երևան, N 1–2, էջ 155–158, նույնի՝ Նորահայտ փաստաթղթեր Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» գործունեության մասին, ՊԲՀ, 2002, N 2, էջ 271–304, ***Закарян Ан.,*** Александр Кулебякин и Армения, Ереван, 2003.

[2] ***Ղորղանեան Գ.,*** Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (Նիւթեր պատմութեան համար), Հայրենիք, Բոստոն, 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 67–85, թիւ 12, հոկտեմբեր, էջ 106–122: Գեներալի աշխատությունը թարգմանվել է նաև ռուսերեն, տե՛ս ***Корганов Г. Г.,*** Участие армян в мировой войне на Кавказском фронте (1914–1918) с 19-ю схемами. Пер. с фр. Пирумян Ю. Л., Долбакян Э. Е. Ред. Долбакян Э. Е., Мелик-Шахназаров А. А., Москва, 2011.

[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 503, ցուցակ 1, գործ 56, գործ 71:

ռել է, թե ինչ է պետք ստորաբաժանման հանդերձավորման և սպառազինման համար:

Իր հուշերում, հատկապես I կամավորական խմբի մասին, արժանահավատ ու հույժ կարևոր տեղեկություններ և փաստեր է հաղորդում 1914-ից 1916 թթ. Կովկասյան II հրաձգային բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանը (Ֆոմա Նազարբեկով)[1]: Ստորաբաժանումը 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. մայիս գործել է գեներալ Թ. Նազարբեկյանի զորամասի կազմում: Գեներալը բարձր է գնահատում հայ աշխարհազորայինների մարտական ունակությունները:

Թ. Նազարբեկյանը և գնդապետ, հետագայում՝ գեներալ Մովսես Սիլիկյանը (Մոիսեյ Սիլիկով) հատկապես առանձնացնում են Դրոյի հրամանատարությամբ գործող II դրուժինայի մարտական պատրաստականությունը և կարգապահությունը: Գեներալի անձնական ֆոնդում պահպանվել են Մ. Սիլիկյանի նամակները և նրանցից արված քաղվածքները, որտեղ նա կարևոր մանրամասնություններ է հաղորդում հայ կամավորների մղած մարտերի մասին[2]: Թ. Նազարբեկյանն իր հուշերը գրելիս օգտվել է նաև գեներալ Հովհաննես Հախվերդյանի (Իվան Հախվերդով) հետ ունեցած նամակագրությունից, որը ևս լրացուցիչ նյութ է հաղորդում կամավորների, ինչպես նաև ռուսական հրամանատարության վերաբերյալ:

Կամավորական շարժման մասնակից և V խմբի, ապա Արարատյան գնդի հրամանատար Վարդանի[3] (Սարգիս Մեհրաբյան) հուշերը կարևոր վկայություններ են, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են շարժման սկզբնական փուլը՝ խմբի համալրումը, զինավարժությունները, կազմավորումը և մասնակցությունը տարբեր մարտերին և Վանի ազատագրմանը: Քանի որ նա հուշերը գրել է ստալինյան բռնատիրության տարիներին, ապա այնտեղ հանդիպում են մի շարք անընդունելի գնահատականներ: Այնուամենայ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1–7, 9–12, 15, 19, 22, 23, 25, 28, 33:

[2] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս *Սահակյան Ռ.*, Գեներալ Մովսես Սիլիկյան. (Կենսագրության անհայտ էջեր), ՊԲՀ, 2012, N 2, էջ 63–74, *Карапетян М. Л.*, Генерал-лейтенант Мовсес Силикян (к 150-летию со дня рождения), Вестник общественных наук, Ереван, 2012, N 4, с. 291–294.

[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, 15, 20, 22:

նիվ, Վարդանի հուշերը կարևոր սկզբնաղբյուր են կամավորական շարժումը լուսաբանելու, հատկապես Վանի ազատագրումը և 1915 թ. հուլիսյան նահանջի իրական պատճառները բացահայտելու համար:

Պատմառազմական բաժնի քարտուղար և կամավորական շարժման մասնակից Լևոն Լիսիցյանն իր անտիպ գրառումներում հիմնականում տեղեկություններ է հաղորդում կամավորական շարժման սկզբնական փուլի մասին[1]:

Անտիպ է մնում Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Հարությունյան) «Հայության երկունքը» աշխատությունը, որը նվիրված է Հայաստանի Հանրապետության պատմությանը, որտեղ հեղինակն անդրադարձել է հայ կամավորական շարժմանը և Վանի հայկական իշխանությանը[2]: Պատմաբանը կամավորական շարժմանն անդրադարձել իր մեկ այլ աշխատությունում[3]:

Կամավորների մարտական գործողությունները լուսաբանելու խնդրում կարևոր են նաև V գնդի մարտիկներ Կարապետ Թարփոշյանի[4] և Սուրեն Չենտիկյանի[5] անտիպ հուշերը: Հատկապես արժեքավոր են Կ. Թարփոշյանի վկայությունները, ուր նա որպես ականատես ներկայացնում է Վանի ազատագրումը և 1915 թ. հուլիսյան նահանջը:

Կամավորական շարժման գրեթե բոլոր մանրամասները պահպանվել են ՀԱԱ-ի թիվ 1267 ֆոնդում («Առաջին համաշխարհային պատերազմում հայ կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու»), որտեղ լուսաբանվում են հայկական կամավորական խմբերի կազմավորման ընթացքը, ստորաբաժանումների համալրումը, սպառազինությունը, հրամանատար-

---

[1] ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 7, 60, 66, 77, 133

[2] *Ա-Դո,* Հայության երկունքը,-Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի Ա-Դոյի ֆոնդ, ֆոնդ 839/195(ղ), նույնի՝ Հաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից), Պատմաբանասիրական հանդես, 2012, N 1, էջ 223–242, նույնի՝ Վանի նահանգապետութեան պատմութիւնից (Յունիս 14 – Յուլիս 7 – Յուլիս 25, 1915) ու Ա-Դօն, Հայկազեան Հայագիտական Հանդէս, 2012, N 32, Պէյրութ, էջ 407–430:

[3] Նույնի՝ Ռուսական ցարերը և հայկական հարցը. Առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ.գ.թ. Ռուբեն Գասպարյանի և պ.գ.թ. Ռուբեն Սահակյանի, Երևան, 2013:

[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 15:

[5] Նույն տեղում, գ. 22:

ների զեկույցները, հաշվետվությունները, կրած կորուստները, ստացված հրամանները և գումարները, հարաբերությունները ռուսական հրամանատարության հետ և այլն[1]:

Կամավորական II խմբի մարտիկ Սուրեն Մելիքյանը[2] հրատարակել է հուշեր, որոնք ընդգրկում են մարտական գործողությունների երրորդ շրջանը՝ 1915 թ. սեպտեմբերից մինչև ստորաբաժանումների լուծարումը՝ 1916 թ. սեպտեմբեր: Հետաքրքիր են հատկապես այն հատվածները, որտեղ ներկայացվում են անմիջական բախումները Կ. Պոլսի շրջանից ժամանած և մարտական բարձր պատրաստականություն ունեցող օսմանյան զորամասերի հետ, որոնց վարժեցրել էին գերմանացի զինվորական հրահանգիչները:

Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) կողմից հրապարակվել են արխիվային վավերագրեր, որոնք ներկայացնում են ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Անդրանիկ Օզանյանի գործունեությունը, այդ թվում նաև կամավորական շարժման ընթացքում[3]:

Հայ կամավորական խմբերի, նրանց սպառազինության և մղած կռիվների մասին հետաքրքիր և ուշագրավ հուշեր է թողել Անդրկասպյան կազակային բրիգադի խորունժի, հետագայում գնդապետ Ֆեոդոր Ելիսեևը[4]: Նրա հուշերում կարևոր տեղեկություններ կան Վանի ազատագրման և 1915 թ. հուլիսյան նահանջի մասին:

Հայ կամավորական շարժմանն անդրադարձել են ռուս-թուրքական ռազմաճակատում մարտնչած և հրամանատարական տարբեր

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 2, 3, 8, 9, 16, 20, 25, 48, 96, 134, ց. 2, գ. 5, 8, 9, 14, 22, 25, 27, 29, 31, 32, 45, 49, 50, 53, 58, 70, 96, 132–136, 145, 146, 148, 149, 152–155, 157, 163, 165, 196, 204[1], ց. 4, գ. 1, 6–8, 10, 14, 16:

[2] *Մելիքեան Ս.,* Հայ կամաւորի յուշերից, Թիֆլիս, 1917:

[3] *Андраник Озанян,* Документы и материалы. Составители: Руководитель — Арутюнян А. О., Эвоян В. С., Мирзоян С. С., Сафян П. Г., Шатирян Г. М., Вестник архивов Армении, Ереван, 1991, N 1—2, с. 130-221.

[4] *Елисеев Ф. И.,* Казаки на Кавказском фронте 1914–1917. Записки полковника Кубанского казачьего войска в тринадцати брошюрах-тетрадях, Москва, 2001. Սույն աշխատության գրախոսությունը տե՛ս *Մելքոնյան Ա.,* Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեև, «Կազակները Կովկասյան ճակատում 1914–1917», ԲՀԱ, 2004, N 1, էջ 174–191:

պաշտոններ զբաղեցրած ռազմական պատմաբաններ, գեներալներ Եվգենի Մասլովսկին[1] ու Նիկոլայ Կորսունը[2]:

Երկու նշանավոր զորավարների ռազմագիտական հետազոտություններում տարբեր առիթներով հիշատակվում են հայ կամավորները՝ գլխավորապես մարտական գործողությունների սկզբնական փուլում՝ Սարիղամիշի նշանավոր օպերացիայի ժամանակ: Երկու գեներալներն էլ առանձնացնում են IV խմբի հրամանատար Քեռու (Արշակ Գավաֆյան) զեկուցագիրը, որում նշանավոր հայդուկը նախազգուշացնում է Կովկասյան I բանակային կորպուսի (Սարիղամիշյան ջոկատ) հրամանատար գեներալ Գեորգի Բերխմանին հակառակորդի գերակշիռ ուժերի հայտնվելու մասին: Քեռու հավաստի տեղեկությունն անուշադրության է մատնվում հրամանատարի կողմից, որը հետագայում ցավալի հետևանքներ է ունենում:

Գեներալ Ե. Մասլովսկին, որն իր ուսումնասիրությունը հրատարակել էր վտարանդիության մեջ, թվում էր թե ավելի ազատ պետք է լիներ իր հայացքներն ու կարծիքներն, ինչպես նաև փաստերն արտահայտելիս, սակայն խիստ զուսպ է հայ մարտիկներին գնահատելիս և մի շարք դեպքերում թերագնահատում է նրանց դերը:

Ի տարբերություն Ե. Մասլովսկու, խորհրդային տարիներին իր ուսումնասիրությունը գրած գեներալ Նիկոլայ Կորսունը բարձր է գնահատում հայկական խմբերի մարտական ունակությունները: Ինքնին հասկանալի է, որ գեներալը չէր կարող ուղղակիորեն գրել այդ մասին, սակայն իր աշխատության հավելվածում զետեղել էր կարևոր մի փաստաթուղթ՝ ՆԳ նախարարության 1915 թ. մայիսի 15-ի զեկուցագիրը Գերագույն գլխավոր հրամանատարությանը, ուր առաջարկվում էր զինաթափել խմբերը: Սակայն Կովկասյան բանակի շտաբը մերժում է առաջարկը՝ պատճառաբանելով, որ դա հավա-

---

[1] *Масловский Е. В.,* Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк, Париж, 1933.

[2] *Корсун Н. Г.,* Сарыкамышская операция на Кавказском фронте мировой войны в 1914–1915 гг., Москва, 1937, его же, Эрзерумская операция на Кавказском фронте 1916 году, Москва, 1938, его же, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., Москва, 1940 его же, Кампания 1914 г. на Кавказском фронте, Военно-исторический журнал, Москва, 1940, N 5, с. 25–48.

սարազոր է մարտական բարձր ունակություններ ունեցող ստորաբաժանումների լուծարմանը:

Պատմաբան Մակիչ Արզումանյանի[1] ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ նա գիտական շրջանառության մեջ մտցրել է զգալի թվով ոչ միայն հայկական, այլև ռուսական աղբյուրներ: Իր հետազոտությունում նա լուսաբանում է մի շարք կարևոր հիմնահարցեր, ինչպես՝ կամավորական շարժումը, Վանի հուլիսյան նահանջը, ցարիզմի գաղութային քաղաքականությունը նվաճված Արևմտյան Հայաստանում: Հարկ ենք համարում նշել, որ Մ. Արզումանյանի անձնական արխիվում պահպանվում են զգալի քանակությամբ արխիվային վավերագրեր, որոնք նա ձեռք է բերել նախկին ԽՍՀՄ-ի տարբեր արխիվներից[2], սակայն տարբեր պատճառներով չէր հասցրել դնել գիտական շրջանառության մեջ: Այդ նյութերի մի մասը մենք օգտագործել ենք մեր աշխատությունում:

Հիմնախնդրին նվիրված աշխատություններից առանձնանում է Աշոտ Հարությունյանի[3] ուսումնասիրությունը: Վերջինս ռազմական պատմաբան էր, եղել է զինվորական և Հայրենական Մեծ պատերազմի տարիներին մասնակցել է գերմանական զորքերի դեմ մղած մարտերին: Այսինքն՝ Ա. Հարությունյանն անդրադառնալով ռազմաքաղաքական պատմության լուսաբանմանը՝ հանդես է գալիս ոչ միայն որպես գիտնական, այլև մարտական փորձ ունեցող բարձրաստիճան սպա և այդ տեսանկյունից վերլուծում է մարտական գործողություններն ու գնահատականներ է տալիս օպերացիաներին:

Պատմաբանը անդրադառնում է նաև Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների վարած գաղութային քաղաքականությանը: Մեր կարծիքով, Ե. Մասլովսկու և Ն. Կորսունի ուսումնասիրություններին իր գիտական արժեքով և նշանակությամբ համարժեք է Ա. Հարությունյանի աշխատությունը:

---

[1] *Արզումանյան Մ.,* Հայաստան, 1914–1917, Երևան, 1969:
[2] *Արզումանյան Մակիչ Վահանի անձնական ֆոնդ,*, ֆ. 1168, ց. 1, գ. 153, 316, 319, 320, 323, 324:
[3] *Арутюнян А. О.,* Кавказский фронт 1914–1917 гг., Ереван, 1971.

Անդրանիկին նվիրված իր ծավալուն և փաստառատ աշխատությունում պատմաբան Հրաչիկ Սիմոնյանն[1] անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատում I խմբի մասնակցությանը մարտական գործողություններին: Նա իր ուսումնասիրությունում ներկայացրել է խմբի մղած բոլոր մարտերը և առաջինն է հայտնաբերել և գիտական շրջանառության մեջ դրել կարևոր մի փաստաթուղթ՝ I խմբում ոստիկանություն հիմնելու մասին[2]:

Պատմաբան Մուրադ Կարապետյանի[3] ուսումնասիրությունները լուսաբանում են ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորների գործունեությունը: Հատկապես արժեքավոր են պատմաբանի հրատարակած փաստաթղթերը, որոնք ներկայացնում են խմբերի մարտական ուղին և մղած կռիվները, ինչպես նաև հրամանատարության կողմից ձեռնարկված միջոցառումները՝ մարտիկների շրջանում կարգապահությունն ամրապնդելու և զինվորական կանոնադրության հետ ծանոթացնելու խնդրում: Նա հրատարակել և գիտական շրջանառության մեջ է դրել գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի հանձնաժողովի հավաքած նյութերի մի մասը[4]:

Պատմաբան Արամ Նազարյանն[5] իր ուսումնասիրություններում անդրադարձել է հայ կամավորական խմբերի կազմավորման հիմնախնդիրներին, կարգադրիչ մարմնի հրավիրած համագումարին, հատկացված դրամական միջոցներին, ինչպես նաև ճշտել է ռուսական բանակի կազմում պատերազմին մասնակցած հայ զինծառայողների թվակազմը:

---

[1] *Սիմոնյան Հր.,* Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գ. Ա, Երևան, 1996:

[2] Նույն տեղում, էջ 497–498:

[3] *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, 1999, էջ 184–273, նույնի՝ Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայկական բանակ, Երևան, 1999, N 2, էջ 65–79:

[4] *Նույնի*՝ Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), էջ 184–317:

[5] *Նազարյան Ա. Ս.,* Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ռազմաճակատում (1914–1918 թվականներ), Երևան, 1999, նույնի՝ Հայ կամավորական շարժումը 1914–1916 թվականներին և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, Երևան, 2011:

Պատմաբան Մանուկ Ստեփանյանի աշխատությունը նվիրված է Հնչակյան կուսակցության գործունեությանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին[1]: Նրա ուշադրությունից վրիպել են Հայաստանի ազգային արխիվում պահվող մի շարք կարևոր սկզբնաղբյուրներ, որոնք լույս են սփռում կամավորական շարժման սկզբնական շրջանում ծագած ներկուսակցական պայքարին, որը նպատակ ուներ VI խմբի ղեկավարման խնդրում մտցնել կուսակցական մոտեցումներ, ինչը ռազմական իրավիճակում անթույլատրելի էր:

Պատմաբան Վլադիմիր Բուլդակովը[2] ամբաստանում է ՀՅԴ-ին, որն իբր իր խաղաղ ժամանակվա ռազմավարությունը՝ զանգվածների հոգեկանի վրա ազդել արյունոտ սադրանքներով, «տեղափոխել» է ռուս-թուրքական ռազմաճակատ. այն արտահայտվել է հայկական գումարտակների գործողություններում: Նա մեղադրում է հայ մարտիկներին, որոնք իբր կոտորել են թուրք և քուրդ խաղաղ բնակչությանը:

Ռուսաստանցի հետազոտող Վալերի Շամբարովի[3] այն եզակի ուսումնասիրություններից է, ուր ամենայն մանրամասնությամբ լուսաբանվում են 1914–1918 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունները: Հեղինակը անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատին և հայ կամավորական շարժմանը: Նա հատկապես բարձր է գնահատում Անդրանիկին և նրա հրամանատարության ներքո գտնվող I խումբը:

Ռուսաստանցի պատմաբան Ռոման Եվդոկիմովի[4] թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ռուս-թուրքական ռազմաճակա-

---

[1] ***Ստեփանյան Մ.,*** Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը առաջին աշխարհամարտի և հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Երևան, 2005, նույնի՝ Կամավորական շարժումը և սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), Երևան, 2004, N 1, էջ 158–166:

[2] ***Булдаков В. П.,*** Кризис империи и революционный национализм начала XX в. в России, Вопросы истории, Москва, 2000, N 1 с. 29–45.

[3] ***Шамбаров В. Е.,*** За веру, Царя и Отечество!, Москва, 2003.

[4] ***Евдокимов Р. Н.,*** Казачьи войска в условиях Первой мировой войны: Кавказский фронт. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 2005 http://www.Dissercat.com/content/kazachi-voiska-v-usloviyakh-pervoi-mirovoi-voiny-kavkazskii-front

տում կազակային զորքերի մասնակցությանը մարտական գործողություններին (1914 թ. հոկտեմբերի 16-ից (29) մինչև 1918 թ. հունիսի 23-ը (5 հուլիսի): Վերլուծելով Խորհրդային Միության մարշալ Սեմյոն Բուդյոննու հուշերը, նա չգիտես թե ինչու նշում է, որ հեղինակը մասնակցել է Կովկասում ընթացող մարտական գործողություններին և դա այն դեպքում, երբ Կովկասյան բանակը գլխավորապես գործել է Արևմտյան Հայաստանում: Ատենախոսն առանձնացնում է այն հայտնի փաստը, որ ռուս-թուրքական ռազմաճակատը միակն էր, որտեղ ռուսական զորքերը որևէ պարտություն չեն կրել և կազակները արդարացի են համարել պատերազմը Օսմանյան կայսրության դեմ, քանի որ ցանկացել են հասնել այդ տերության կործանմանը և փրկել թուրքահպատակ քրիստոնյաներին սուլթանական տիրապետությունից:

Պատմաբան Դիլյարա Իսմայիլ-Զադեյի հետազոտությունը[1] նվիրված է Կովկասի փոխարքա, կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի գործունեությանը: Հեղինակը կանգ է առնում մի շարք առանցքային հարցերի, ինչպես օրինակ հայ կամավորական շարժման և Արևմտյան Հայաստանի ռուսական գաղութացման խնդիրների վրա:

Ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունների հետազոտմանն է նվիրված ռուսաստանցի պատմաբան Դավիթ Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունը[2]: Նա հանդես է եկել նաև առանձին հոդվածներով: Մեզ առավել հետաքրքրել է հոդվածներից մեկը, որտեղ պատմաբանը հենվելով

---

[1] ***Исмаил Заде Д. И.,*** Граф И. И. Воронцов-Дашков. Наместник Кавказский. Москва, 2005. (Россия забытая и неизвестная). Книга на сайте http://militera.lib.ru/

[2] ***Мартиросян Д. Г.,*** Российско-турецкий фронт Первой мировой войны. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, 2006, http://dilb.rsl.ru/load.php?path=/rsl01002000000/rsl01002948516/rsl01002948516.pdf; его же: Российско-турецкий фронт Первой мировой войны. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, 2006, http://dilib.rsl.ru/load.php? path=/rsl01002000000/ rsl01002948000 /rsl 01002948516.pdf, его же: Сарыкамышская операция (12–24 декабря 1914 г.). Военно-исторические исследования в Поволжье: св. науч. трудов, Саратов, 2006, Вып. 7, с. 55–65 http:// www.sgu.ru /files/nodes/10090/08.pdf.

ռուսական արխիվային փաստաթղթերի վրա ներկայացրել է Վանի ազատագրման իրական պատմությունը[1]:

Վերլուծելով ռուսական հրամանատարության հրամանները և զեկուցագրերը, Դ. Մարտիրոսյանը եկել է այն եզրակացության, որ թուրքերի դեմ գործող Բայազետի ջոկատի (Անդրկասպյան կազակային բրիգադ) առջև դրված չի եղել մարտական առաջադրանք՝ օգնել օրհասական դրության մեջ գտնվող Վանի հայությանը: Ռուսները Վանի ուղղությամբ հայտնվել են հետապնդելով Խալիլ բեյի դիվիզիային, որը Դիլմանի ճակատամարտում պարտվելուց հետո ճողոպրում էր գեներալ Թ. Նազարբեկյանի II հրաձգային բրիգադից: Դրանով հեղինակը հերքում է թուրքական պատմագրության այն սին թեզը, թե Վանում հայերը «ապստամբել» էին՝ նպատակ ունենալով աջակցել ռուսական առաջխաղացմանը: Փաստորեն Դ. Մարտիրոսյանի կողմից մերժվում է տասնամյակներ շարունակ խորհրդային պատմագրության այն տեսակետը, թե IV բանակային կորպուսի զորամասերն առաջացել են միայն ու միայն Վանի հայությանը փրկելու համար: Պատմաբանի եզրակացությունը հաստատվում է հայկական աղբյուրներով և մասնավորապես Վարդանի հուշերով:

Ռուսական արխիվներում Դ. Մարտիրոսյանը հայտնաբերել է փաստաթղթեր, որոնք բացահայտում են այն, որ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915 թ. հունվար ամիսներին թուրքական հրամանատարության կողմից աջակցություն ստացած Բաթումի նահանգի թուրք և աջար բնակչության մի մասի խռովությունը: Նրանցից կազմակերպվել են հրոսակախմբեր, որոնք կռվել են ռուսական բանակի դեմ և հարձակվել են ինչպես հայկական, այնպես էլ հունական ու ռուսական բնակավայրերի վրա: Այդ գործողությունները համակարգել և ղեկավարել են «Թեշքիլաթը մահսուսեի» ահաբեկչական ջոկատները[2]:

---

[1] *Мартиросян Д. Г.,* Ванская операция-эпизоды армянской и русской истории, http://www.regnum. ru/news/11617 86.html.

[2] Его же, Трагедия батумских армян: просто "резня" или предвестник армянского геноцида?// „Родина", Москва, 2010, N 4, с. 68–71, //http://www.august-1914.ru/martirosyan3.html.

Ռուսաստանցի պատմաբան Սերգեյ Բազանովը բարձր է գնահատել հայ կամավորների մարտական ունակությունները: Նա գրում է հետևյալը. «Խոսելով հայկական կամավորական կազմավորումների մարտական ուղու մասին, պետք է հաշվի առնել, որ նրանք հիմնականում ներառվում են ռուսական զորքերի գործողությունների ընդհանուր օպերատիվ և մարտավարական պատկերում: Նրանց հաջողությունները շատ դեպքերում պայմանավորված էին ռուսական զորամասերի և զորամիավորումների հաղթանակներով: Դա, սակայն, ոչ մի դեպքում չի նսեմացնում հայ կամավորների սխրագործությունները»[1]:

Պատմաբան Նատալյա Շուտովան իր թեկնածուական ատենախոսությունում արձանագրել է այն փաստը, որ վերջին տասնամյակում ռուսական պատմագրության մեջ կատարվել է հայ կամավորական շարժման վերագնահատում: Եթե խորհրդային տարիներին հայ կամավորական շարժումը որակավորվում էր որպես ցարական կառավարության կողմից հրահրված, անուշադրության մատնելով նրա հայրենասիրական բնույթը, ապա վերջին հետազոտություններում ընդգծվում է շարժման հայրենասիրական մղումը, որը նպատակ ուներ ազատագրել Արևմտյան Հայաստանը թուրքական բռնատիրությունից[2]:

Ուշադրության արժանի է պատմաբան Ալեքսանդր Կուրցևի հոդվածը, ուր հեղինակը քննարկում է 1914–1917 թթ. փախստականների տեղավորման, տեղաբաշխման և օգնության հետ կապված խնդիրները[3]: Իր ուսումնասիրությունում նա անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունների հետևանքով փախստական դարձած թուրքահպատակ և ռուսահպատակ հայերին, ասորիներին, հույներին և ռուսներին ցույց տրվող օգ-

---

[1] *Базанов С. Н.,* Полное презрение к смерти. Добровольческие национальные части в Русской армии в годы Первой мировой войны, "История", Москва, N 5, 2006, http://his.1september.ru /2006/05/22.htm.

[2] *Шутова Н. Е.,* Армянский вопрос в российско-турецких отношениях (1911–1921 гг.). Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Владимир, 2006, http://www.lib.ua-ru. net/diss/cont/210573.html

[3] *Курцев А. Н.,* Беженцы первой мировой войны: в России (1914–19170, "Вопросы истории", М., N 8, 1999 , с. 98–113.

նությանը: Նրա կողմից բերվում են վիճակագրական տվյալներ, որոնք ցույց են տալիս հայ փախստականների ընդհանուր թվաքանակը: Ինքնին հասկանալի է, որ վիճակագրությունն ամբողջական չէր և մի շարք դեպքերում Անդրկովկասում ռուսական իշխանությունների կողմից չեն հաշվառվել հայ, ասորի և հույն փախստականները: Պատմաբանը հատկապես առանձնացնում է 1915 թ. հուլիսյան նահանջը և գաղթը, որի հետևանքով փախստականների թիվը կտրուկ աճում է: Ըստ Ա. Կուրցևի, միայն ռուսական տարածքում ապաստանում են 200 հազարից ավելի հայեր: Իսկ Կովկասում գտնվող փախստականների ընդհանուր թիվը 1915 թ. աշնանը կազմել է մոտ 300 հազար[1]:

Ա. Կուրցևը հենվելով ռուսական արխիվային վավերագրերի վրա, նշում է, որ մինչև 1915 թ. կեսերը հայ փախստականներին օգնում և զանազան ծառայություններ էին մատուցում գլխավորապես հայկական բարեգործական կազմակերպությունները, որոնք չունեին անհրաժեշտ միջոցները: Այդ իսկ պատճառով կառավարությունն ստիպված է լինում միջամտել և փախստականների սկզբնական կարիքների համար տրամադրել մոտ երկու միլիոն ռուբլի: Նրանց սկսում են օգնել Կովկասի փոխարքայությունը և Մեծ իշխանուհի Տատյանա Ռոմանովայի գլխավորած կոմիտեն[2]:

Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում մղված մարտական գործողություններին անդրադարձել է Վ. Ալլենը և Պ. Մուրատոֆը (Մուրատով)[3]: Նրանք ներկայացրել են 1828-ից մինչև 1921 թթ. ռուս-թուրքական պատերազմները, առա-

---

[1] Курцев А. Н., указ. статья, с. 105.

[2] Там же. Մեծ իշխանուհի Տատյանայի գլխավորած կոմիտեն հիրավի զգալի օգնություն է ցույց տալիս հայ գաղթականներին: Կոմիտեն իր գործունեությունում առաջնորդվում էր զուտ մարդասիրական մղումներով՝ իր առջև չդնելով որևէ քաղաքական շահ: Որպես օրինակ վկայակոչենք այն հանգամանքը, որ հայ գաղթականական դպրոցներում ուսուցիչների վարձատրության խնդիրն իր վրա է վերցնում կոմիտեն: Բացի այդ, կոմիտեն նախաձեռնում է մի շատ կարևոր աշխատանք՝ կորած երեխաների որոնումը: Այդ նպատակով կազմվում է հատուկ հարցախույզ, որն ուղարկվում է որբերի խնդիրներով զբաղվող կազմակերպություններին, այդ թվում նաև հայկական:

[3] *Allen W. E. D. and Muratoff P.*, Caucasian Battlefields. A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828–1921. Cambridge, 1953.

վել հանգամանալից անդրադառնալով Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում մղված մարտական գործողություններին:

Ամերիկյան բանակի փոխգնդապետ, ռազմական պատմաբան Էդվարդ Էրիկսոնն[1] իր հիմնական ուսումնասիրության դաշտն է ընտրել Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը: Նա այն սակավաթիվ ուսումնասիրողներից է, որին թույլատրվել է օգտվել թուրքական ռազմական արխիվներից և պատահական չէ, որ նրա աշխատության առաջաբանի հեղինակն է Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ գեներալ Հուսեյին Կիվրիկօղլին[2]: Է. Էրիկսոնը հենվելով գլխավորապես թուրքական զինվորական սկզբնաղբյուրների վրա, որոնք կասկածելի և միտումնավոր բնույթ ունեն, ճգնում է ապացուցել, որ Վանի ինքնապաշտպանությունը և Արարատյան գնդի կողմից քաղաքի ազատագրումը համաձայնեցված գործողություն էր:

Փաստորեն է. Էրիկսոնը կրկնում է թուրքական պատմագրության հայտնի տեսակետը և փորձում է գիտական հասարակայնությանն ապացուցել, որ թուրքական II և III բանակների անհաջողությունների պատճառը նրանց թիկունքում գործող հայ կամավորները և «խռովարարներն» էին: Իր հերթին նա զգուշորեն շրջանցում է հայերի ցեղասպանության հետ կապված հարցերը: Հստակ երևում է, որ գիրքը գրվել է թուրքական Գլխավոր շտաբի պատվերով կամ սերտ համագործակցությամբ:

Կոլումբիայի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Մարկ ֆոն Հագենն[3] իր հոդվածում անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճա-

---

[1] ***Erickson E. J.,*** The Armenians and Ottoman Military Policy, 1915, War in History, April 2008, vol. 15, pp. 141–147. http://wih.sagepub.com/search?author1= Edward+J.+Erickson &sortspec= date&submit=Submit, նույնի՝ Armenian Massacres: New Records Undercut Old Blame Reexamining History, "Middle East Quarterly", Summer 2006, pp. 67–75, http://www.meforum. org/991/armenian-massacres-new-records-undercut-old-blame.

[2] ***Erickson E. J.,*** Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War. Foreword by General Hüseyn Kivrikoğlu, Greenwood Press, 2000, http://www.tc-america.org/media/Ericson_militarypolicy1915.pdf.

[3] Տե՛ս ***Хаген фон М.,*** Пределы реформы: национализм и русская императорская армия в 1874–1917 годы, Отечественная история, Москва, 2004, N 5, с. 37–45. http://www.august-1914.ru/hagen.html.

կատում մարտնչող հայ կամավորներին: Նա ամբաստանում է խմբերին, թե իբր նրանք թուրքական բանակի թիկունքում նախապատրաստել են «ապստամբություններ»:

Թուրքական տեսակետն է ներկայացնում և պաշտպանում Անկարայի Բիլքենդ համալսարանի պրոֆեսոր, բրիտանացի պատմաբան Նորման Սթոունը[1]: Նա հայտնի է որպես Հայոց ցեղասպանությունը ժխտող հետազոտող: Հայերի բռնագաղթի պատճառը նա համարում է Վանի հայերի «ապստամբությունը»: Ն. Սթոունի գիրքը գրախոսած ռուսաստանցի պատմաբան Օլեգ Հայրապետովը ուղղակիորեն փաստում է, որ թուրքական ծառայության անցած բրիտանացին ամբողջությամբ խեղաթյուրել է հայտնի փաստերն ու իրողությունները[2]:

Ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորական շարժումը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

1. Կամավորական շարժման սկզբնական շրջանը: Այս փուլն ընդգրկում է 1914 թ. օգոստոս-սեպտեմբերից մինչև 1914 թ. հոկտեմբերի 23-ը, երբ ռազմաճակատ է մեկնում Անդրանիկի I կամավորական խումբը:
2. 1914 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը: Խմբերը մասնակցում են մարտական գործողություններին և տեղափոխվում թիկունք հանգստի և համալրման համար:
3. 1915 թ. հունվարի 5-ից մինչև ապրիլի 1-ը: Կազմավորվում է Արարատյան գունդը:
4. 1915 թ. ապրիլի 15-ից մինչև Վանի հուլիսյան նահանջը:
5. 1915 թ. սեպտեմբերից մինչև 1916 թ. հունվար-սեպտեմբեր: Խմբերը մասնակցում են կարևորագույն մարտական գործողություններին, ապա դուրս են բերվում ռազմաճակատից և վերակազմավորվում հրաձգային գումարտակների:

---

[1] Տե՛ս *Стоун Н.,* Первая мировая война. Краткая история. Пер. с англ. И. В. Лобанова, Москва, 2011.

[2] Տե՛ս *Айрапетов О. Р.,* Не очень краткая история…H. Stone. World War One. A Short History. Penguin Group. 2007, "Русский Сборник": исследования по истории России, Москва, том XI, 2012, с. 491–513: Գրախոսության համառոտ թարգմանությունը տե՛ս *Սահակյան Ռ.,* Թուրքական ծառայության անցած բրիտանացի պատմաբանի նոր աշխատության մասին, «Հայ զինվոր», 2013, Երևան, N 6, 7:

Ամփոփելով 1914–1916 թթ. հայ կամավորական շարժման մասին եղած հետազոտությունները, հարկ ենք համարում փաստել, որ դրանք ունեցան դրական նշանակություն, թեև ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս փորձ է արվում գիտական շրջանառության մեջ մտցնել այն թեզը, թե կամավորական խմբերի կազմակերպումը պատճառներից մեկն է եղել, որ երիտթուրքական կառավարությունը նախածեռնել է հայերի ցեղասպանությունը: Իրականում հայկական աշխարհազորային կազմավորումների մասնակցությունը լոկ առիթ է հանդիսացնել օսմանյան կառավարության համար հայերին ոչնչացնելու և նրանց շարժական ու անշարժ գույքին տիրանալու համար: Այդ են վկայում ոչ միայն հայկական, այլև օտար հետազոտությունները: Ուստի նման սին պնդումներով մենք չպետք է հնարավորություն տանք թուրքական կողմին «հաստատելու» վերը նշվածը:

Չնայած բազմաթիվ կազմակերպչական, ֆինանսական և կարգապահական թերություններին, այնուամենայնիվ կամավորական շարժումն ունեցավ իր դրական հետևանքը: Կամավորները բախտորոշ դեր ունեցան 1915 թ. ապրիլին Դիլմանի նշանավոր ճակատամարտում և 1915 թ. մայիսին Վանի հայ ու ասորի բնակչության փրկության գործում: Հայ աշխարհազորայինների ակտիվ գործողությունների շնորհիվ հնարավոր է լինում քրդական գերությունից ազատել կամ փրկագնել զգալի թվով հայ պատանդների և գերիների: Իհարկե, ռուսական իշխանությունները սխալվեցին լուծարելով կամավորական ստորաբաժանումները: Կասկածելով, որ կազմավորումները կարող են դառնալ ինքնավար Հայաստանի զինված ուժերի հիմքը՝ կառավարությունը որոշեց հրաժարվել նրանց ծառայությունից: Կարելի է փաստել, որ ռազմաճակատում իրադրությունն ամրապնդելուց հետո այլևս կարիք չէր զգացվում հայ կամավորական ստորաբաժանումների:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական իշխանությունները փոխում են իրենց վերաբերմունքը ազգային զինվորական կազմավորումների նկատմամբ, ռուսական հրամանատարությունը նախածեռնում է հայկական հրաձգային գումարտակն-

երի հենքի վրա ձևավորել ավելի խոշոր մարտական ստորաբաժանումներ: Դա պայմանավորված էր ոչ միայն բանակի մարտակազմը լրացնելու ցանկությամբ, այլև այն հանգամանքով, որ հայկական գումարտակները ցուցադրել էին մարտական բարձր հատկություններ և աչքի էին ընկել իրենց կարգապահությամբ: Հայ մարտիկները դարձան այն ուժը, որը 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ կանգնեցրեց օսմանյան բանակի առաջխաղացումը և փրկեց հայությանը վերջնական կործանումից:

Աշխատությունում համառոտ է ներկայացված 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում օսմանյան իշխանությունների կողմից իրականացրած հայերի ցեղասպանությունը և արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը, քանի որ այդ իրադարձությունների վերաբերյալ պաշտպանել ենք թեկնածուական ատենախոսություն և հրատարակել ենք մենագրություն[1]:

Մեր գիտական պրպտումների ընթացքում հայտնաբերել ենք նորահայտ փաստաթղթեր, որոնք բացահայտում են պատերազմի սկզբում օսմանյան կանոնավոր բանակի և «Թեշքիլաթը մահսուսեի» կողմից Կարսի մարզում և հատկապես Բաթումի նահանգում հայերի զանգվածային կոտորածների և բնակավայրերի կողոպուտի մասին: Հատկապես արժեքավոր են Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) նախագահ Սամսոն Հարությունյանի[2] և

---

[1] *Саакян Р. О.,* Оборонительные бои в Западной Армении в 1915 году. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1991; նույնի՝ Արևմտահայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, նույնի՝ Ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում 1915 թվականին եւ ՀՅ Դաշնակցությունը, Երևան, 2010, նույնի՝ Տրապիզոնի Գաղթական Հայութեան Փրկութեան Կազմակերպումը Ա. Համաշխարհային պատերազմին (1916–1917 թթ.), Հայկազեան Հայագիտական Հանդէս (այսուհետև՝ ՀՀՀ), Պէյրութ, 2011, հատոր ԼԱ, էջ 526–527:

[2] ՀԱԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 383, թ. 13–17:

նույն ընկերության լիազոր Խաչատուր Կարճիկյանի[1] զեկուցագրերը, ինչպես նաև փրկվածների վկայությունները[2]:

Աշխատությունում լուսաբանել ենք 1915 թ. մայիսին Վանի ազատագրումից հետո ռուսական հրամանատարության կողմից ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմավորումն ու գործունեությունը: Առաջինը հիմնախնդիրը լուսաբանել է Ա-Դոն[3]: Նա, ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով նահանգապետության արխիվը, ներկայացրել է նրա առօրյա աշխատանքային գործունեությունը լուսաբանող փաստաթղթերը: Ա-Դոն Վանի նահանգապետությանն անդրադարձել էր նաև իր անտիպ աշխատություններում[4]:

Հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել հայկական իշխանության տարբեր մարմիններում աշխատած Արտակ Դարբինյանի[5], Արմենակ Եկարյանի[6], Վարազդատ Տերոյանի[7], միսիոներներ Քլարենս Աշըրի և Գ. Կնապի[8] հուշերում:

Ա. Դարբինյանը և Ա. Եկարյանը, չնայած այն հանգամանքին, որ զբաղեցրել են պատասխանատու պաշտոններ՝ հպանցիկ են անդրա-

---

[1] Տես նույն տեղում, գ. 117, թ. 25–30:

[2] *Կիրիմյան Ա.,* Վարդան Մազմանյանի վկայությունները Բաթումի մարզի Տանձոտ գյուղի հայ բնակչության կոտորածների մասին, ԲՀԱ, 2005, N 1, էջ 3–17, *Սահակյան Ռ. Օ.,* Փաստաթղթեր Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսահպատակ հայերի զանգվածային կոտորածների մասին, ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, 2012, N 4, էջ 257–276, նույնի՝ Բաթումի նահանգի հայութեան կողոպուտն ու սպանութիւնները Ա. Համաշխարհայինի սկզբում՝ 1914ի աշնան (փաստաթղթեր), ՀՀՀ, Պէյրութ, 2013, հատոր ԼԳ, էջ 7–45:

[3] *Ա-Դո,* Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երևան, 1917:

[4] *Նույնի՝* Ռուսական ցարերը և հայկական հարցը. Առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ.գ.թ. Ռուբեն Գասպարյանի և պ.գ.թ. Ռուբեն Սահակյանի, Երևան, 2013, նույնի՝ Իմ հիշողությունները, Երևան, (1950), Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ, *Սահակյան Ռ.,* Հաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից), ՊԲՀ, N 1, 2012, էջ 223–242:

[5] *Դարբինեան Ա.,* Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890ական 1940), Փարիզ, 1947:

[6] *Յուշեր Արմենակ Եկարեանի,* խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Գահիրէ, 1947:

[7] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան, հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյան, Երևան, 2006, էջ 325–329:

[8] ***Ussher C. D., Knapp G.H.,*** An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, 1917.

դառնում նահանգապետարանի գործունեությանը, և դա այն դեպքում, երբ երկուսն էլ ամենագործուն մասնակցությունն են ունեցել հայկական իշխանության կայացման բարդ և միաժամանակ պատվավոր աշխատանքներին:

Չնայած հայկական իշխանության կարճ գոյատևմանը, նրա գործունեությունը մոռացության չմատնվեց: Հետագայում տպագրվում են ժամանակակիցների հուշերը, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ[1]: Նահանգապետության կազմավորման և գործունեության խնդիրները հետազոտվել են Ավետիս Հարությունյանի[2] և Արմեն Ասրյանի[3] ուսումնասիրություններում:

Վանի նահանգապետության գործունեությունը հետազոտելու նպատակով շրջանառության մեջ են դրվել արխիվային նորահայտ վավերագրեր[4] և ժամանակի մամուլի[1] հրապարակումներ: Լու-

---

[1] Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնևհինգամեակին առթիվ. 1915–1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, Վան-Վասպուրականի հերոսամարտը-75, Ժողովածու, Կազմող՝ Հ. Փափազյան, խմբագիր՝ Հ. Պողոսյան, Երևան, 1990, Արամը, Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Ավագյան, Մ. Ավետիսյան, առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասրյան. գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2009, էջ 63–271:

[2] *Հարությունյան Ա. Հ.*, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ԼՀԳ, 2002, N, 2, էջ 46–58, նույնի՝ Վանի նահանգապետության պարենային քաղաքականությունը (1915 թ. մայիս-հուլիս), «Էջմիածին», 2010, Դ, էջ 56–61, նույնի՝ Деятельность Московского армянского комитета в годы Первой мировой войны, ԲՀԱ, 2008, N 1, էջ 253–257:

[3] *Ասրյան Ա. Ս.*, Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, ԲՀԱ, 2007, N 1–2, էջ 31–36, նույնի՝ Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008:

[4] *Սահակյան Ռ.*, Ոստիկանական ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, ԲՀԱ, 2003, N 2, էջ 153–161, նույնի՝ Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, ԲՀԱ, 2004, N 1, էջ 38–43, նույնի՝ նույնի՝ Վանի նահանգապետության դատահրավական համակարգի ձևավորման պատմությունից, ԲՀԱ, 2006, N 1, էջ 48–56, նույնի՝ Փաստաթղթեր Վասպուրականի վերաշինության վերաբերյալ (1915–1916 թթ.), ԲՀԱ, 2006, N 1, էջ 23–39, նույնի՝ Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8-հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2008, էջ 35–118, նույնի՝ Ուսումնական գործի կազմակերպումը

սաբանվել են նահանգապետարանի, տարբեր գավառների ու գավառակների, քաղաքապետարանի, դատաիրավական և մյուս մարմինների գործունեությունը, հարաբերությունները ռուսական ռազմական իշխանությունների հետ, թուրք-քրդական գազանություններ հետաքննությունը և այլն:

Իր պետականաշեն գործունեությամբ աչքի է ընկնում Այգեստանի ինքնապաշտպանության կազմակերպիչ և փաստական ղեկավար, Վանի և շրջանի կառավարիչ (նահանգապետ) Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան): Փաստորեն XVIII դարում Սյունիքում և Արցախում հայկական իշխանությունների կորստից հետո հայությունը հնարավորություն էր ստանում ստեղծել իր ապագա պետականությունը: Ճիշտ է, հայկական ինքնավարությունը գոյատևում է կարճ ժամանակ՝ 1915 թ. մայիսի 7-ից մինչև հուլիսի 27-ը, սակայն այն ապարդյուն չի անցնում: Նահանգապետության շրջանում կուտակված փորձն օգտագործվում է Ա. Մանուկյանի կողմից, երբ նա 1917 թ. վերջից դարձավ Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավար և 1918 թ. հուլիսի 24-ից՝ ՀՀ-ն Ներքին գործերի նախարար:

Կարելի է ենթադրել, որ ռուսական կառավարությունը երկյուղում էր, որ Վանը կարող է դառնալ ապագա հայկական ինքնավարության սաղմը, որովհետև հայկական մամուլում և հայ հասարակական–քաղաքական գործիչների ելույթներում այդ քաղաքն անվանվում էր ապագա ինքնավար Հայաստանի մայրաքաղաք: Այդ իսկ պատճառով որոշվեց մեկ հարվածով «երկու նապաստակ» որսալ: Առաջինը՝ հապշտապ նահանջով խախտել արդեն ձևավորված կառավարման մարմինները և տեղահանել բնակչությանը: Նման քայլը կբերեր նաև հայ հասարակության երկփեղկմանը, որը նմանապես ձեռնտու էր ռուսական իշխանություններին: Երկրորդը՝ դրդել հակառակորդին անցնել հարձակման, կտրել նրան մատակարարման հիմնական ուղիներից, թույլ տալ օսմանյան զորքին խորանալ ավեր-

---

Վանի նահանգում (1917 թ.), ԲՀԱ, 2011, N 1, էջ 12–23, նույնի՝ Հաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից), ՊԲՀ, 2012, N 1, էջ 223–242, նույնի՝ Վանի նահանգապետութեան պատմութիւնից (Յունիս 14 – Յուլիս 7 – Յուլիս 25, 1915), ՀՀՀ, Պէյրութ, 2012, թիւ 32, էջ 407–430:

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1915, N 127, 10 յունիսի, «Մշակ», 1915, Թիֆլիս, N 131, 19 յունիսի, N 141, 2 յուլիսի, N 142, 3 յուլիսի, «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, 19 հունիսի, N 30:

ված և գրեթե անմարդաբնակ տարածքներով, ապա անցնելով հակահարձակման՝ ջախջախել նրան:

Ալեքսանդրա Բախտուրինան, հավանաբար, առաջին ռուսաստանյան պատմաբանն է, որը քննարկել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական կայսրության քաղաքականությունը տերության ծայրամասերում, այդ թվում նաև նորանվաճ վայրերում: Նա անդրադառնում է Արևմտյան Հայաստանում ռուսական քաղաքականությանը: Աշխատության հիմնական թերությունն այն է, որ հեղինակը գլխավորապես օգտագործել է տպագիր գրականություն և շրջանառության մեջ չի դրել արխիվային վավերագրեր:

Իր տեղեկություններն Արևմտյան Հայաստանի, այնտեղ ռուսական վարչակարգ ստեղծելու մասին, Ա. Բախտուրինան հիմնականում քաղել է Ա. Հարությունյանի աշխատությունից[1]: Այնուամենայնիվ, Ա. Բախտուրինայի ուսումնասիրությունն իր բովանդակությամբ առանձնանում է մյուս աշխատություններից, քանի որ, ճիշտ է զգուշորեն, առանց շատ փակագծեր բացելու և մեկնաբանելու, փորձ է արվում լուսաբանել 1914–1917 թթ. ռուսական իրական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում[2]:

Վանի նահանգապետության վերացումից հետո ռուսական իշխանությունները այլևս չեն վերականգնում հայկական իշխանությունը: Գրավված տարածքներում հաստատվում է ռուսական վարչակարգ: 1916 թ. մայիսի 22-ին հիմնվում է «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրաված Թուրքական Հայաստանի և այլ մարզերի գինվորական գեներալ–նահանգապետի վարչությունը» (Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետություն), որը գործում է մինչև 1917 թ. ապրիլի 27-ը: Մոլի միապետական, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պեշկովը նշանակվում է գեներալ-նահանգապետի պաշտոնում:

Անհրաժեշտ է նշել, որ ռուսական կառավարությունը չէր ցանկանում գրավված տարածքներում հիմնել հայկական ինքնավար

---

[1] Տե՛ս *Арутюнян А. О.*, указ. соч., с. 351–370.

[2] *Бахтурина Ал. Ю.*, Окраины российской империи: государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914–1917 гг.), Москва, 2004, с 208–222. Սույն աշխատության գրախոսությունը տե՛ս *Սահակյան Ռ. Օ.*- Ալեքսանդրա Բախտուրինա, Ռուսական կայսրության ծայրամասերը. Պետական կառավարումը և քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1917 թթ.), Մոսկվա, 2004, 209 էջ, ռուսերեն, ԲՀԱ, 2004, N 2, էջ 187–190:

որևէ մարմին: Ավելին, ռուսները նպատակ ունեին գաղութացնել հայկական տարածքները՝ այնտեղ բնակեցնելով ռուս վերաբնակիչների և կազակների: Այդ նպատակով Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններն են ուղարկվում արշավախմբեր և հողային խնդիրներն ուսումնասիրող հանձնաժողովներ, որոնք պետք է ընտրեին ռուսական գաղութացման համար առավել հարմար վայրերը:

Նշված հիմնահարցը լուսաբանելու նպատակով մեր կողմից շրջանառության մեջ են մտցվել արխիվային վավերագրեր, որոնք ֆոտո ժապավենի ձևով ստացվել է նախկին ԽՍՀՄ-ի Լենինգրադի Կենտրոնական պատմական արխիվից[1]: Փաստաթղթերը պարզորոշ ներկայացնում են ռուսական կառավարության կողմից հայկական բնակավայրերը ռուս վերաբնակիչներին տրամադրելու ծրագրերի ու գործի դրվող գործուն քայլերի մասին: Այսպես, 1916 թ. ամռանն Արևմտյան Հայաստան է գալիս բուսաբան և աշխարհագրագետ, Տոմսկի համալսարանի նախկին ռեկտոր, պրոֆեսոր Վասիլի Սապոժնիկովի գլխավորած արշավախումբը, որին հանձնարարվում է ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի հողատեսակները և բույսերը, կազմել հաշվետվություն: Ամփոփելով իր հետազոտությունները՝ պրոֆեսորը եզրակացնում էր, որ ռուսական բնակեցման համար առավել հարմար վայրերից էր Մշո դաշտը[2]:

Ռուսական իշխանությունների կողմից ձեռնարկվող ոչ հայանպաստ քայլերի մասին ահազանգում են նաև հայ գործիչները, որոնց թվում էր Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին գրած նամակում[3]: Տեր հայրը ականատես է եղել, թե ինչպես մի շարք հայկական եկեղեցիներ ռուս զինվորականների կողմից վեր են ածվում քաղկեդոնական-ուղղափառ տաճարների:

Առանձին հետազոտության թեմա է դարձել 1915–1917 թթ. Արևմտյան Հայաստանի կողոպտված և ավերված բնակավայրերի վերա-

---

[1] ՀԱԱ, Հավաքածու 1, CA-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 10:

[2] Նույն տեղում:

[3] *Սահակյան Ռ.*, Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին, 2009, ԼՀԳ, N 3, էջ 297–301:

կանգնման, փախստականների և բռնագաղթվածների վերադարձի, փրկագնման ու գյուղատնտեսական աշխատանքների վերսկսման, բնակչության ինքնապաշտպանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման հետ կապված հարցերը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայությունը բացի կամավորական շարժմանն օժանդակելուց, զգալի նյութական միջոցներ է տրամադրում գաղթականությանն օգնելու և Արևմտյան Հայաստանի տնտեսությունը վերականգնելու համար: Անհրաժեշտ էր ամենատարրական միջոցներով ապահովել ցեղասպանությունից փրկվածներին: Այս հիմնախնդրով զբաղվում են հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան և մասամբ բրիտանական հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Նրանցից առավել ակտիվ գործում են Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն, Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքը (Քաղաքների միություն), Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությունը (Գյուղատնտեսական ընկերություն), Մոսկվայի հայկական կոմիտեն, Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեն՝ ռազմական գործողություններից տուժածներին ժամանակավոր օգնություն ցուցաբերելու համար (Комитет великой княжны Татьяны Николаевны для оказания временной помощи пострадавшим от военных действий, Տատյանայի կոմիտե) և ամերիկյան բարեգործական ընկերությունները, նաև այլ կազմակերպություններ:

Կարևոր էր հատկապես 1915 թ. օգոստոսի 30-ի ռուսական կառավարության որոշումը, ըստ որի, ինչպես բոլոր փախստականներն ու տարհանվածները, այդ թվում նաև հայերը, ստանալու էին պետական նպաստ: Դա որոշակիորեն թեթևացնում էր հայկական կազմակերպությունների աշխատանքը, քանի որ նրանց ունեցած միջոցները հնարավորություն չէին տալիս ամբողջությամբ բավարարել գաղթականներ կարիքները:

Արևմտյան Հայաստանի վերաշինության հետ կապված հարցերը լուսաբանելու նպատակով աշխատության մեջ գիտական շրջանառության մեջ են դրվել նորահայտ արխիվային փաստաթղթեր և

ժամանակի պարբերականներում հրապարակված զանազան բնույթի հաղորդագրություններ՝ ականատեսների և թղթակիցների վկայություններ, կազմակերպությունների հաշվետվություններ և այլն: Դրանք պարունակում են մանրամասն վիճակագրական տեղեկություններ գաղթականների թվաքանակի, տեղաշարժերի, մշակվող հողատարածությունների, օգնության քանակի, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, թուրքերի և քրդերի կողմից հասցված նյութական վնասի, ռուսական իշխանությունների վարած քաղաքականության և այլնի մասին: Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնումն իր խորքում նշանակում էր գավառների վերահայացում:

Հայտնի է, որ հայկական գավառներում բնակվող թուրք և քուրդ բնակչությունն ունենալով տեղական օսմանյան իշխանությունների բացահայտ և քողարկված պաշտպանությունը, զավթել էր հայերին պատկանող հողերը և հարկադրում էր նրանց հեռանալ իրենց բնակավայրերից: Այդ միտումը հստակ երևում է հատկապես 1890-ական թվականների հայկական կոտորածների ժամանակ: Օսմանյան քաղաքականության արտահայտման ձևերից մեկն էլ հայկական գավառների ժողովրդագրական պատկերի միտումնավոր խեղաթյուրումն էր՝ բնակեցումը տարբեր մահմեդական ցեղերով: 1915–1917 թթ. բացառիկ հնարավորություն է ստեղծվում վերականգնել ժողովրդագրական պատկերը, կրկին տեր դառնալ նախկին բնակավայրերին և հողատարածություններին: Նախկին բնակավայրերը վերադառնալու ցանկություն են հայտնում թուրքքրդական ճնշումների հետևանքով տարբեր տարիներին Ռուսաստանում ապաստանած հայերը:

Բնակավայրերի հայացումը ոչ միշտ էր խրախուսվում ռուսական իշխանությունների կողմից, որոնք իրենց հերթին ցանկանում էին սահմանաներձ շրջանները, ինչպես Ալաշկերտի հովիտը, ապա Մշո դաշտը բնակեցնել ռուս վերաբնակիչներով:

Ռուսական իշխանությունները նախատեսում էին ավելացնել նաև Կարսի մարզում և Բաթումի նահանգում բնակվող ռուսների թիվը: Ռուսաստանի զանազան վայրերից ստացվում են դիմումներ՝ Ալաշկերտի հովտում բնակություն հաստատելու համար: Ինքնին

հասկանալի է, որ հայկական կազմակերպությունների ջանքերը՝ հայերին վերադարձնել իրենց բնակավայրերը, պետք է հանդիպեին ռուսական զինվորական և քաղաքացիական իշխանությունների ընդդիմությանը:

Բացի այդ, ռուսական մամուլում հայտնվում են կամավորներին վարկաբեկող հրապարակումներ: Հավանաբար իշխանությունների դրդմամբ ակտիվանում է վրաց-թաթարական խմբավորումը, որն իր հերթին տարածում է հակահայ բնույթի լուրեր և տպագրում սադրիչ հոդվածներ: Ինքնին հասկանալի է, որ հայ հասարակական գործիչները, ինչպես մեծանուն գրող Հովհաննես Թումանյանը, իրենց հրապարակային ելույթներում հերքում էին ամբաստանությունները, հորդորելով չհավատալ նման սին լուրերին:

Ռուսական իշխանությունները փորձում են սիրաշահել և օգտագործել քրդական զանազան ցեղախմբերի: Հայերի փոխարեն քրդերի նկատմամբ տարվող բարեկամական քաղաքականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ քրդերը գտնվում էին սոցիալ-տնտեսական և մշակութային ցածր մակարդակում, ուստի ենթադրվում էր, որ նրանք ավելի ենթակա էին ռուսացման, քան հայերը: Իրականում քրդերը միայն արտաքնապես, ձևականորեն էին «ենթարկվում» ռուսական իշխանություններին: Նրանք ցանկացած հարմար պահու օգտագործում էին ռուսական զորամասերի, առավել ևս հայերի վրա հարձակվելու համար: Ողջ պատերազմի ընթացքում, չնայած ռուսների ծախսած զգալի դրամական միջոցներին, հնարավոր չի լինում քրդական ցեղերի մեծ մասին ենթարկել կամ գոնե հասնել նրանց չեզոքությանը:

Ռուսական իշխանությունների քաղաքականությունը մեծապես խոչնդոտում են հայկական կազմակերպությունների աշխատանքները, հատկապես 1915 թ. օգոստոսից հետո, երբ Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում մեծ իշխան, գեներալ Նիկոլայ Ռոմանովը: Նա արգելում է հայ փախստականների վերադարձն այն վայրեր, որոնք նախատեսված էին բնակեցնել ռուսներով և կազակներով:

Ռուսական իշխանություններն իրենց քաղաքականության սխալն ընդունում են միայն 1916 թ. վերջերին, հատկապես 1917 թ. փետր-

վարյան հեղափոխությունից հետո: Նրանք հայ գաղթականության հարցերով զբաղվող կազմակերպություններին արտոնություններ են տալիս տնտեսությունը վերականգնելու և երկրագործական աշխատանքները կանոնավոր կատարելու համար:

Հարկ ենք համարում փաստել, որ ռուսական բարձրաստիճան սպաներից շատերը դեմ էին և չէին ընդունում փոխարքա Ն. Ռոմանովի կողմից տարվող քաղաքականությունը: Սպաների մեջ խոսում էր ոչ միայն մարդասիրությունը և կարեկցանքը, այլև պետական շահի հստակ գիտակցումը: Դյուրացնելով Արևմտյան Հայաստանի զանազան բնակավայրերի վերականգնումը՝ նրանք նման կերպ պաշտպանում են իրենց թիկունքը և հնարավորություն են ունենում զորամասերն ապահովել փոխադրամիջոցներով, սննդամթերքով և անասնակերով: Հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան բարեգործական կազմակերպություններն առավել լայնածավալ աշխատանքներ են կազմակերպում Վանի նահանգում, որն ուներ իր հիմնավոր պատճառները: 1915 թ. հուլիսյան նահանջից հետո զգալի թվով վանեցիներ էին փրկվել, ինչը հնարավորություն տվեց արագ կազմակերպել նրանց մի մասի վերադարձը հարազատ վայրեր և վերսկսել աշխատանքներն ավերված տնտեսությունը վերականգնելու համար: Ճիշտ է, ռուսական իշխանությունները չեն վերականգնում հայկական իշխանությունը, սակայն հայերից կազմում են Վանի քաղաքապետարան, միլիցիոն (աշխարհազորային) ստորաբաժանում և այլն: 1915 թ. աշնանից նահանգի հայկական բնակավայրերում իրենց գործունեությունն են ծավալում տարբեր կազմակերպություններ: Նահանգ են ներկրվում զգալի քանակությամբ սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, լծկաններ և այլն: Հիմնվում են սննդակայաններ, բժշկասանիտարական կետեր, սննդամթերքի պահեստներ, հողագործական գործիքների պատրաստման արհեստանոցներ և այլն:

Սակայն 1916 թ. տեղի ունեցած մի քանի նահանջները ծանր հարված են հասցնում քաղաքի և նահանգի հայությանը: Նրանց զգալի մասը հոգնած և հուսահատված անվերջ նահանջներից, կամ դրանց մասին անընդհատ շրջանառվող լուրերից, այլևս չեն ցանկանում վերադառնալ հայրենի վայրերը քանի դեռ իրավիճակը չէր կա-

յունացել: Իրենց հերթին բարեգործական կազմակերպությունները, որոնք նահանջների հետևանքով ահռելի նյութական կորուստներ են ունենում, չեն շտապում վերսկսել իրենց աշխատանքները Վանում և նահանգում:

Հայ հասարակական, քաղաքական և հոգևոր շրջանակները ևս խորը հիասթափություն են ապրում, քանի որ մարդկային կորուստները, ներդրված ահռելի ծախսերն ու ջանքերն ապարդյուն են անցնում: Խորացող ճգնաժամի պայմաններում հայությունն այլևս ի զորու չէր նույն չափի օգնություն ցուցաբերել գաղթականությանը և Արևմտյան Հայաստանի վերականգնման աշխատանքներին: Բանն այն է, որ արևելահայությունը ևս գտնվում էր նյութական ծանր դրության մեջ: Աշխատունակ արական բնակչության մի մասը գործող բանակում էր, ինչի հետևանքով ցանքատարածությունների զգալի մասը չէր մշակվում, կրճատվել էր ընտանի կենդանիների, հատկապես լծկանների գլխաքանակը[1]:

1916 թ. փետրվարին Մուշի և Էրզրումի գրավումը ռուսների կողմից հնարավորություն է ստեղծում հայկական և ռուսական կազմակերպություններին գործունեություն ծավալել նաև այդ վայրերում: Ի տարբերություն Ալաշկերտի հովտի և Վանի, կազմակերպությունների համար առաջնահերթ խնդիրները՝ հայերի ազատագրումն էր քրդական և թուրքական գերությունից փրկագնման կամ բանակցությունների ճանապարհով: Այդ վայրերի բնակչության մեծ մասը կոտորվել կամ բռնագաղթի էր ենթարկվել: Եթե Վանի նահանգում և Ալաշկերտի հովտում կար որոշ թվով բնակչություն, ապա Տարոնը, Էրզրումը, Երզնկան ու Բաբերդը գրեթե ամբողջությամբ հայաթափվել էին[2]:

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս *Արտաշէս Չիլինգարեան*, Հայութեան մեծ տագնապը, Գործ, Բագու, 1917, փետրուար, N 2, էջ 89, 91–94: Ըստ Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության կատարած ուսումնասիրությունների, Նոր Բայազետ, Դարալեգյազ և Նախիջևան գավառներում ընտանի կենդանիների գլխաքանակը պակասել է համապատասխանաբար 51%, 56% և 52%-ով: Կրճատվել են նաև հացահատիկային կուլտուրաների ցանքերը, տե՛ս նույն տեղում, էջ 94:

[2] *Սահակյան Ռ.,* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարոնահայությանը օգնության կազմակերպումը, ՊԲՀ, 2011, N 1, էջ 36–60, նույնի՝ Փաստաթղթեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թիֆլիսի

Մուշ, Էրզրում, Երզնկա և Բաբերդ են գործուղվում ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի, Քաղաքների միության, Գյուղատնտեսական ընկերության, էջմիածնի եղբայրական օգնության, Մոսկվայի հայկական կոմիտեի և այլ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ Ռոստոմը[1], Կարո Սասունին[2], Յ. Զավրիևը (Հակոբ Զավրիյան)[3], Աշոտ Աթանասյանը[4], Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Սեբաստացի Մուրադը (Խրիմյան)[5], Զավեն վարդապետ Բաբայանը[6], և ուրիշներ: Նրանք քայլեր են ձեռնարկում փրկվածներին տարրական բժշկական օգնություն ցուցաբերելու գործում: Հաջողվում է էրզրում տեղափոխել Դերսիմի քրդերի մոտ ապաստանած հայ երեխաների, կանանց ու աղջիկների մի մասին: Նրանց համար հիմնվում են որբանոցներ, ապաստարաններ և դպրոցներ: Սակայն, ընդհանուր առմամբ, նշված շրջանների բնակչությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ահավոր պայմաններում, հաճախ առանց տարրական օգնության: Այդ ամենին գումարվում է տեղի ռուսական զինվորական հրամանատարության որոշ ներկայացուցիչնե-

---

Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության գործունեության մասին, ԲՀԱ, 2011, N 2, էջ 30–54, նույնի՝ Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական ընկերության գործունեությունը Ալաշկերտի հովտում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1916 թթ.), ԼՀԳ, 2012, N 1, էջ 16–27:

[1] Նույնի՝ Նորահայտ վավերագրեր Կարինում Ռոստոմի և հայ բարեգործական ընկերությունների 1916 թ. գործունեության վերաբերյալ, Վէմ, Երևան, 2010, թիվ 4, էջ 195–204:

[2] Նույնի՝ Կարո Սասունու զեկուցագրերը՝ Տարոնի հայության վիճակի մասին, Վէմ, 2010, թիվ 1, էջ 185–199: *Սասունցի Կ.,* Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1957, նույնի՝ Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918), Պէյրութ, 1966:

[3] Նույնի՝ Փաստաթղթեր Յակով Զավրիևի անտիպ արխիվից, ՊԲՀ, 2011, N 1–2, էջ 255–273:

[4] Նույնի՝ Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, ԲՀԱ, 2007, N 1–2, էջ 37–54:

[5] Նույնի՝ Վավերագրեր Երզնկայի և Բաբերդի հայության 1916–1917 թթ. վիճակի մասին, Վէմ, 2010, թիվ 2, էջ 171–179, *Ստեփանյան Գ. Խ.,* Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը): Պ. Հ. Հովհաննիսյանի և Ա. Գ. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, 2005, էջ 542–558:

[6] Նույնի՝ էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովի ներկայացուցիչ Զավեն վարդապետի նամակները Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանին՝ ազատագրված Կարին քաղաքի և գավառների հայ բնակչությանն օգնելու մասին, ԲՀԱ, 2010, N 2, էջ 60–70:

րի կրավորական վերաբերմունքը: Այնուամենայնիվ, շնորհիվ կազմակերպությունների տարած աշխատանքների, հնարավոր է լինում աստիճանաբար տանելի պայմաններ ստեղծել փրկվածների համար:

Արևմտյան Հայաստանի վերաշինության համար գաղթականությանն օգնություն ցուցաբերող հայկական կազմակերպությունները որոշում են միավորել իրենց ջանքերը և ստեղծել մեկ միասնական ղեկավար կենտրոն՝ գործողությունները համակարգելու համար: Այդ նպատակով, 1916 թ. մայիսի 10-ից 13-ը Պետրոգրադում, հրավիրվում է արևմտահայ գաղթականների հիմնահարցերով զբաղվող ընկերությունների համագումար: Այս հիմնահարցի լուսաբանմանն են նվիրված համագումարի պատգամավոր Վարազդատ Տերոյանի[1] հաշվետվությունը, պատմաբաններ Ավետիս Հարությունյանի[2] և Էմմա Կոստանդյանի[3] հոդվածները: Համագումարի աշխատանքը, ընթացքը և ընդունված որոշումների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր և նյութեր է հրատարակել Հայաստանի ազգային արխիվը[4]:

Համագումարը, ցավոք, չկարողացավ համախմբել գործող հայկական կազմակերպություններին և ստեղծել միասնական մի մարմին: Պատճառները մի քանիսն էին, որոնցից կառանձնացնենք գլխավորը՝ քաղաքականը: Հասարակական և քաղաքական կազմակերպություններից յուրաքանչյուրը ցանկանում էր գերիշխող դիրք ունենալ և տնօրինել գաղթականությանը ցույց տրվող օգնությունը: Բացի այդ, կառավարությանը ձեռնտու չէր, որ հիմնվեր հայկական միասնական մի մարմին, որը կարող էր համախմբել հայությանը: Այսպիսով, առկա ներքին և արտաքին պատճառներով նախատեսվածը չի իրականացվում:

---

[1] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 330–338:

[2] *Հարությունյան Ա. Հ.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը և նրա նշանակությունը, Էջմիածին, 2008, Դ, էջ 73–79:

[3] *Կոստանդյան Է. Ա.,* Նորահայտ արխիվային փաստաթղթեր 1916 թ. մարտին Պետերբուրգում կայացած հայկական համագումարի մասին, 2009, ԼՀԳ, N 2, էջ 255–258:

[4] Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Երևան, 2004, էջ 117–158:

Մեր կողմից գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք արխիվային վավերագրեր, որոնք պահպանվում են Հայաստանի Հանրապետության հետևյալ արխիվներում՝ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Հայաստանի պատմության թանգարան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Տեր-Մարտիրոսյանների (Ա-Դո) ընտանեկան արխիվ:

Հիմնահարցի համակողմանի ուսումնասիրման նպատակով մեր կողմից օգտագործվել են հետևյալ պարբերականները. «Ազդակ Շաբաթօրեակ» (Բեյրութ), «Արիամարտ» (Կ. Պոլիս), «Աշխատաւոր» (Թիֆլիս), «Աշխատանք» (Երևան), «Արեւ» (Բաքու), «Արձագանգ Փարիզի» (Փարիզ), «Բանբեր Հայաստանի արխիվների», (Երևան), «Գաղափար», «Գիւղատնտես» (Թիֆլիս), «Գործ» (Բաքու), «Դրօշակ» (Փարիզ), «Երկիր», (Սթանպոլ), «Էջմիածին» (Էջմիածին), «Ժողովուրդ» (Ղալաթիա, Կ. Պոլիս), «Ժողովուրդի ձայնը» (Կ. Պոլիս), «ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների» (Երևան), «Համբաւաբեր» (Թիֆլիս), «Հայ գինվոր» (Երևան), «Հայկազեան Հայագիտական Հանդէս» (Բեյրութ), «Հայկական բանակ» (Երևան), «Հայրենիք» (Բոստոն), «Հանդես» (Երևան), «Հովիտ», «Հորիզոն», «Մշակ» (Թիֆլիս), «Պատմաբանասիրական հանդես» (Երևան), «Վան-Տոսպ» (Թիֆլիս), «Վէմ» (Փարիզ, Երևան), "Армянский вестник" (Москва), „Кавказ" (Тифлис), „Кавказское слово" (Тифлис), "Новая и новейшая история", "Обозреватель-Observer" „Русский сборник" (Москва).

Հիմնահարցի լուսաբանման համար օգտվել ենք համացանցի մի շարք կայքէջերից:

# ԳԼՈՒԽ Ի.

# ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ (ԿՈՎԿԱՍՅԱՆ) ՌԱՁՄԱՃԱԿԱՏՈՒՄ (1914 թ. օգոստոս – 1916 թ. սեպտեմբեր), ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1915 –1916 ԹԹ.

## ա) Կամավորական շարժումը (1914 թ. օգոստոս – 1916 թ. սեպտեմբեր)

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում հակամարտ ռազմաքաղաքական խմբավորումները՝ Անտանտը և Քառյակ միության երկրները, իրենց և հակառակորդ տերությունների քաղաքացիներից կազմակերպում են կամավորական-աշխարհազորային ստորաբաժանումներ: Միաժամանակ կապեր են հաստատվում արտասահմանում գտնվող վտարանդի քաղաքական գործիչների ու կուսակցությունների ղեկավարների հետ: Այդ քայլով տերությունները ցանկանում էին նրանց ևս ընդգրկել թշնամու նկատմամբ իրականացվող ոչ միայն մարտական, այլև քայքայիչ քարոզչական և դիվերսիոն գործողություններում:

Կամավորական շարժման խնդրին անդրադարձել է 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ը էրզրումում կայացած ՀՅԴ Ը. (VIII) Ընդհանուր ժողովը: Վերջինիս աշխատանքների վերաբերյալ բավականին մանրամասն տեղեկություններ են պահպանվել ռու-

սական պահնորդական բաժանմունքում[1]: Ըստ այդ նյութերի, Ընդհանուր ժողովը հայտարարում է հարաբերությունները խզված երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ, պատճառաբանելով, որ լինելով տիրապետող կուսակցություն, «Միություն և առաջադիմությունը» չի կատարել վաղօրոք ձեռք բերված պայմանավորվածությունները: Ինքնապաշտպանության կազմակերպման հետ կապված աշխատանքների ղեկավարումը հանձնարարվել է Վռամյանին (Օնիկ Դերձակյան), որն այդ նպատակի համար լինելով Ռուսաստանում, կատարել է հանգանակություններ:

Ընդհանուր ժողովը կազմում է երեք հոգուց բաղկացած հանձնաժողով, որի անդամներն էին՝ Ռոստոմը (Ստեփան Զորյան), Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան) և Վռամյանը: Որոշվում է Արմեն Գարոյին գործուղել Պետրոգրադ[2]՝ «պարզելու համար ռուսական կառավարության դիրքորոշումն ու նպատակները Թուրքահայաստանի նկատմամբ»[3]: Իսկ Ռոստոմը մեկնում է Եվրոպա՝ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին ՀՅԴ դիրքորոշումը ներկայացնելու և Հայկական հարցի նկատմամբ նրանց վերաբերմունքը պարզելու համար: Պահնորդական վարչության

---

[1] Այդ խիստ կարևոր վավերագրերը հայտնաբերել է Ա. Ամուրյանը Կալիֆորնիայի «Հուվըր ինստիտուշընի» արխիվում: Նա նշում է, որ համագումարի վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել ՀՅԴ Բոստոնի արխիվում: Ըստ Ա. Ամուրյանի, տեղեկությունները ոստիկանությանը հայտնել է "Leboue" և «Ազատյան» ծածկանունները կրող հայ գործակալը, որը եղել է էսէռական կուսակցության անդամ, տե՛ս *Ա. Ամուրեան,* Յ. Յ. Դաշնակցութեան Ը. (Երզրումի) Ընդհ. Ժողովի մասին (Գումարուած 1914 թուի Յուլիսի 25-ից մինչև Օգոստոս 17), «Ազդակ Շաբաթօրեակ», Բէյրութ, 1980, թիւ 2, 27 յունուար, էջ 22–25, թիւ 3, 3 փետրուար, էջ 43–47, թիւ 4, 10 փետրուար, էջ 68–70, թիւ 5, 17 փետրուար, էջ 91–93, թիւ 6, 24 փետրուար, էջ 115–116: Դեռևս 1914 թ. ապրիլի 2-ին Կարինից Ս. Վրացյանին գրված նամակում Ռոստոմը տեղեկացնում է, որ քայլեր են ձեռնարկվում բնակչության ինքնապաշտպանությունն ապահովելու համար: Ռոստոմը կշտամբում է Ս. Վրացյանին, որ իրենց կողմից որևէ քայլ չի կատարվում բնակչության անվտանգության համար: Նա ափսոսանքով փաստում է, որ առկա միջոցները բավարար չեն, «մեր հարուստը հոգին կը տայ, բայց փող չի տայ. չեն մտածում, որ վաղը թշնամին հոգին էլ կառնէ, փողն էլ», տե՛ս *Ռոստոմ.* Նամականի. Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 613:

[2] 1914 թ. օգոստոսի 18-ից Ս. Պետերբուրգը վերանվանվել է Պետրոգրադ:

[3] *Գալոյան Գ.,* Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 639:

կարծիքով ՀՅԴ-ն որոշել է «օգնել Ռուսաստանին Թուրքիայի դեմ մղվող պատերազմում, հուսալով, որ ռուսական կառավարությունն ապագա խաղաղության կոնֆերանսում կպաշտպանի Թուրքահայաստանի ինքնավարության հարցը...»[1]: Ժողովը գտնում է, որ պատերազմի պարագայում պետք է պահպանել «չէզոք և օրինապահ դիրք»[2]:

Ի թիվս մյուս պետությունների, ռուսական կայսրությունը ևս ձեռնամուխ եղավ կամավորական-աշխարհազորային ստորաբաժանումների ձևավորմանը: 1914 թ. հուլիսի 31-ին Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Նիկոլայ Յուդենիչը հայտարարում է կամավորներ ընդունելու Նիկոլայ II-ի հրամանագրի մասին[3]: Փոխարքայությունում իշխանությունները աշխարհազորային-կամավորական ստորաբաժանումներ են կազմավորում տեղաբնիկներից: Դեռևս մարտական գործողությունների նախօրյակին ռուսական դիվանագիտությունը նախատեսում էր զինել և թուրքերի դեմ օգտագործել Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում բնակվող քրիստոնյաներին[4]: 1914 թ. օգոստոսի 9-ին Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատար, գեներալ Ի. Վորոնցով-Դաշկովի հրամանով թույլ է տրվում փոխարքայության տեղաբնիկներից կազմակերպել կամավորական զորամասեր[5]: Փաստորեն, ռուսական կայսե-

---

[1] *Գալոյան Գ.,* Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), էջ 639: Ինչպես նշում է Ա. Համբարյանը, ՀՅԴ-ը «դրական վերաբերվեց պատերազմին, գտնելով, որ իրական պայմաններ են ստեղծվում Ռուսաստանի օգնությամբ հայկական հարցի լուծման համար», տե՛ս *Համբարյան Ա. Ս.,* Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990, էջ 7:

[2] *Ամուրեան Ա.,* Հ. Յ., նշվ. հոդվածը, «Ազդակ Շաբաթօրեակ», Բէյրութ, 1980, թիւ 6, 24 փետրուար, էջ 115:

[3] "Кавказ", Тифлис, 1914, 12 августа, N 182.

[4] *Саргизов Л. М.,* Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. Первая четверть XX века, Ереван, 1979, с. 34, 36, Նազարյան Ա. Ս., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ռազմաճակատում (1914-1918 թվականներ), Երևան, 1999, էջ 24:

[5] *Масловский Е. В.,* Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк, Париж, 1933, с. 39. Այդ հրամանից առաջ, դեռևս հուլիսի 31-ին, Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Ն. Յուդենիչի հրամանով սկսել էր կամավորների (охотники) ցուցակագրումը ցամաքային զորքերում, տե՛ս „Кавказ", Тифлис, N 182, 12 августа 1914.

րական կառավարությունը, հանձին փոխարքայի, նախածեռնում է կովկասյան հպատակներից, այդ թվում հայերից, կազմավորել աշխարհազորային-կամավորական ստորաբաժանումներ:

Փոխարքայությունում առաջինը կազմակերպվում են հայկական, Հյուսիսային Կովկասի լեռնցիների, իսկ ավելի ուշ՝ վրացական աշխարհազորային ստորաբաժանումներ[1]: Հայ կամավորական խմբերում զինվորագրվել ցանկացողների ցուցակագրումը սկսվում է 1914 թ. սեպտեմբերի սկզբին[2]:

Հայ հասարակական-քաղաքական շրջանակների մեծ մասը ողջունում է կամավորական խմբերի կազմակերպումը: Շարժումը սկսվում է հախուռն և տարերային[3]: Այն որ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև պատերազմ է սկսվելու, չէին կասկածում ոչ միայն զինվորականները, այլև բնակչության մեծ մասը: ՀՅԴ Արևմտյան բյուրոն վճռել էր, որ պատերազմի դեպքում Դաշնակցությունը ձեռնպահ պետք է լինի և չմասնակցի որևէ գործողության, քանի դեռ ռուսական կառավարությունը պաշտոնապես չհայտարարի, որ խոստանում է «Հայկական հարցը լուծել հօգուտ հայ ժողովուրդի և անջատ ինքնավար Հայաստան ստեղծել»[4]: Վարդանը նշում է. «Պոլսու ընկերները այս բովանդակությամբ ծածկագիր նամակ են գրում Տփղիսի բյուրոյին, որը ես անձամբ բերում և հանձնում եմ ընկերներին»[5]:

Կ. Սասունին պարզաբանում է խմբերի կազմակերպման բուն նպատակները.

---

[1] *Масловский Е. В.,* указ. соч., с. 38. Լեռնականների հեծյալ դիվիզիան ուղարկվում է Արևելյան ռազմաճակատ: Բաթումի մարզում վրացիներից կազմվում է երկու կամավորական դրուժինա, որոնք 1915 թ. ուղարկվում են Պարսկաստան: Այստեղ նրանք վերակազմավորվում են վրացական հրաձգային գումարտակի, տե՛ս *Масловский Е. В.,* указ. соч., с. 40. Ըստ «Արև» թերթի հաղորդագրության, վրացական կամավորական երկու խմբերը կազմվում են Քութայիսիում, տե՛ս «Արեւ», Բաքու, 1914, N 190, 23 նոյեմբերի:

[2] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 9:

[3] Պաշտոնապես հայ կամավորական շարժման սկիզբը համարվում է 1914 թ. սեպտեմբերի 10-ը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 87, թ. 2:

[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 66–67:

[5] Նույն տեղում:

«ա) Որքան կարելի է շուտ մտնել հայաշատ նահանգներէն ներս՝ ֆիզիքական վտանգէ փրկելու համար տեղի հայերը:

բ) Ուղղակի (եթէ կարելի է) կամ անուղղակի (եթէ ռուսական ձեռքը արգելք չհանդիսանայ) միջոցներով ստեղծել ազգային վարչութիւնը եւ *երկիրը* վերածել *հայրենիքի*» (ընդգծումը՝ հեղինակինն է – Ռ. Ս.) [1]:

Ս. Վրացյանի վկայությամբ, ենթադրվում էր, որ խմբերի արագ առաջացումը հնարավորություն կտա արևմտահայությանը փրկել կոտորածից և նպաստել նրա ինքնապաշտպանությանը[2]: ԿՀԲԸ-ի նախագահ Ս. Հարությունյանի բնորոշմամբ. «Կամավորական շարժումը Բյուրոն չի հարուցել: Դա եղել է ժողովրդական տարրերային շարժում, որին ընդառաջ է գնացել Բյուրոն, մանավանդ, որ կառավարությունն ասում էր, թե դուք արժանի եք ստանալու ավտոնոմիա (ինքնավարություն – Ռ. Ս.), միայն կազմակերպեցեք կամավորական խմբեր»[3]: Խորհրդային տարիներին կամավորական շարժումը և այն գլխավորող ՀՅԴ-ին քննադատող Լեոն ևս ստիպված էր ընդունել, որ շարժումը համաժողովրդական բնույթ էր կրում[4]: Ինչպես նշում է գեներալ Ե. Մասլովսկին, դրուժինաների կազմակերպումն ուներ բացառապես քաղաքական նշանակություն[5]:

1914 թ. սեպտեմբերի 10-ին կամավորական շարժումը ղեկավարելու, խմբերը կազմակերպելու և հանդերձավորելու նպատակով ստեղծվում է Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմինը (Կարգադրիչ մարմին): Այն գլխավորում է իշխան Հովսեփ Արղությանը: Անդամներն էին՝ Ռոստոմը, Յ. Զավրիևը, Սիմոն Վրացյանը,

---

[1] ***Սասունի Կ.,*** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, 1966, էջ 43:

[2] ***Վրացեան Ս.,*** Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1930, էջ 10:

[3] Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), էջ 216: Պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի կարծիքով, արևելահայերն «Իրենց մեջ խեղդելով Ռոմանովների հայատյաց քաղաքականության մասին հիշողությունը» համաձայնվում են կազմել կամավորական խմբեր, տե՛ս ***Հովհաննիսյան Ռ. Գ.,*** Հայաստանի Հանրապետություն. Հատոր I, Առաջին Տարին, 1918–1919, Երևան, 2005, էջ 9:

[4] ***Լեո,*** Անցյալից. Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 299:

[5] ***Տե՛ս Масловский Е. В.,*** указ. соч., с. 40.

Աբրահամ Գյուլխանդանյանը, Նիկոլ Աղբալյանը և Արմեն Գարոն: Փոխարքայի հետ անմիջական կապը պահպանում էր Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը[1], իսկ բանակային հրամանատարության հետ՝ Ս. Հարությունյանը և Ա. Խատիսյանը[2]:

Կարգադրիչ մարմինն սկզբնապես որոշել էր աշխարհազորային ստորաբաժանումներում ընդգրկել միայն արևմտահայերին և Օսմանյան կայսրության հետ սահմանամերձ շրջաններում բնակվողներին: Այս ընտրությունը բացատրվում էր մարտական գործողությունների ապագա թատերաբեմին նրանց քաջատեղյակությամբ: Այլ վայրերից ժամանածներից նախատեսվում էր կազմել պահեստազոր:

ԱՄՆ-ում մի խումբ հայեր դիմում են Նյու Յորքում Մեծ Բրիտանիայի հյուպատոսին, ցանկություն հայտնելով զինվորագրվել այդ տերության զինված ուժերում: Դիվանագետը մերժում է, պատճառաբանելով, որ իրենց բանակում չի թույլատրվում ծառայել օտարերկրացիներին[3]:

1914 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին տարբեր երկրներից Թիֆլիս են գալիս կամավորներ: Կիպրոսի ռուսական դեսպանորդին են դիմում 800-ից 1000 հայեր: Նրանք տեղի հնչակյան կոմիտեի երաշխավորությամբ պետք է անցնեին Ռուսաստան՝ կամավորական խմբերում ընդգրկվելու համար[4]: Մարսելի 300 հոգանոց հայ համայնքում 20 հոգի ցանկություն են հայտնում մասնակցել կամավորական շարժմանը[5]: Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով), Եկատերինոդարի (Կրասնոդար), Ախալցխայի և Ախալքալաքի հայությունն իր միջոցներով ֆինանսավորում և հանդերձավորում է հետևակ ու հեծյալ մարտիկների խմբեր[6]: Կամավորներ են ժամա-

---

[1] *Լեո,* Անցյալից, էջ 295:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 70:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 412.
[4] Տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 297; Մելիքեան Ս., Հայ կամաւորի յուշերից, Թիֆլիս, 1917, էջ 4, *Կարապետյան Մ.,* Հայ կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, 1999, էջ 33–40, Համահայկական խորհրդակցություններ, էջ 32–33:
[5] *Թիւրապեան Ա.,* Հայ ժողովրդի դատաստանին առջեւ, Մարսէյլ, 1915, էջ 5:
[6] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 102, թ. 48, նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 113, թ. 48:

նում Բուլղարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և այլ երկրներից[1]: Կարգադրիչ մարմինը ցանկանում էր փուլ առ փուլ ձևավորել, մարզել, հանդերձավորել, զինել, ապա նոր միայն մարտիկներին ուղարկել գործող բանակ: Սակայն, 1914 թ. հոկտեմբերի 16-ի լույս 17-ի գիշերը թուրքական «անսպասելի» հարձակումը հարկադրում է ռուսական հրամանատարությանը բոլոր ուժերը, առանց պատշաճ հանդերձավորման և նախապատրաստությունների հապճեպ, ուղարկել ռազմաճակատ: Այդ հրամանը վերաբերում էր նաև հայ կամավորներին:

Եթե կամավորական խմբերում ընդգրկվողների թվաքանակը նախատեսվածից ավելի էր[2], ապա նույնը չէր կարելի ասել կամավորների սպառազինության և հանդերձանքի մասին: Զենքի սուր կարիք զգում էր ողջ ռուսական բանակը: Ուստի, Ազգային բյուրոն, ԿՀԲԸ-ը և Կարգադրիչ մարմինն իրենց ողջ ուժն ու եռանդը գործի են դնում խմբերը սպառազինելու համար:

Շնորհիվ հայության նվիրատվությունների, որոնք շարունակվում էին հայ կամավորական խմբերի ողջ գոյության ընթացքում, 1915 թ. մարտական գործողությունների ընթացքում, մարտիկները որոշ չափով ապահովվեցին անհրաժեշտ զենքով և հանդերձանքով: Անդրկասպյան կազակային բրիգադի (Բայազետի ջոկատի)

---

[1] ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 42, թ. 1: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռուսական կայսրությունում բնակվող 2,054 միլիոն հայությունից 1914–1917 թթ. զորակոչվել է 13 տոկոսը: Անտանտի տերությունների բանակներում ծառայել են 50 հազար հայեր: Անդրկովկասում բնակվող 1,8 միլիոն հայերից նույն ժամանակահատվածում զորակոչվել են 147344 հոգի: Նրանցից իսկական զինվորական ծառայության համար պիտանի են եղել 121921 հոգի՝ զորահավաքի ենթարկվածների մոտ 83 տոկոսը, տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 317. Լ. Լիսիցյանը նշում է նույն տոկոսը, սակայն մասնակիցների թվաքանակը նշում է մոտ 200 հազար, տե՛ս ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 8:

[2] *Վրացեան Ս.,* Հայաստանի Հանրապետութիւն, Փարիզ, 1928, էջ 9: Անհրաժեշտ է նշել, որ անդամագրվողների մի մասը իր ֆիզիկական և մարտական պատրաստականության մակարդակով չէր համապատասխանում ներկայացվող պահանջներին: 1915 թ. փետրվարի 21-ի նամակում Ռոստոմը պահանջում է խմբերում ընդգրկել որոշակի պատրաստվածություն ունեցողներին: Որպես օրինակ նա վկայակոչում է այն փաստը, որ Անդրանիկը հարկադրված էր հրաժարվել 150 հոգուց: Ռոստոմը գրում է. «կանչեցէք գլխաւորապէս այնպիսիներին, որոնք մասնակցել են կռիւներին, զինւորութիւն են արել, առնուազն մարզուել են...», տե՛ս *Ռոստոմ.* Նամականի, էջ 625:

խորունժի Ֆ. Ելիսեևն իր հուշերում այսպես է նկարագրում կամավորների հանդերձանքն ու սպառազինությունը. «Դրուժիննիկները գերազանց էին հանդերձավորված: Նրանք կրում էին պաշտպանական գույնի, մեծ գրպաններով կիտելներ, տաբատներ: Բոլորը գերազանց որակի»[1]:

Կովկասյան բանակի հրամանատարությունը և Ազգային բյուրոն սկզբնապես ծրագրել էին կազմել հինգ կամավորական խումբ: Առաջին խմբի մարտիկների թվաքանակը լինելու էր 1500, իսկ մնացած երեքինը՝ 400-ական: Տարբեր պատճառներով I խմբում կամավորների թիվը 1200 էր, II-ում՝ 382, III-ում՝ 430, IV-ում՝ 470, ընդամենը՝ 2482 մարտիկ: Պահեստազորում մնում են մոտ 600 հոգի[2]: 1914 թ. դեկտեմբերին V խումբը պատրաստ էր ռազմաճակատ մեկնել, սակայն, զենք չլինելու պատճառով, հետաձգվեց: IV բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պյոտր Օգանովսկին համաձայնվում է Ազգային բյուրոյի առաջարկին՝ կազմավորելու պահեստային դրուժինա[3]: Խմբերը, սակայն, չմիավորվեցին մեկ զորամասում: Նրանք գործում էին ռուսական տարբեր զորամիավորումներում և ռազմաճակատի տարբեր հատվածներում: Կամավորները գլխավորապես օգտագործվում էին հետախուզության համար:

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Կարսում կազմավորվում են երկու խումբ սպա Գեղամյանի և հնչակյան կուսակցության անդամ Հարություն Գասպարյանի հրամանատարությամբ: Հ. Գասպարյանի գլխավորությամբ, թվով 500 մարտիկ, մարտական գործողություններին մասնակցեցին Օլթիի շրջանում: 1915 թ. հունվարի 20-ից 23-ը խումբը ծանր մարտեր է մղել[4]: Մարտական գործողությունների ավարտից հետո նշված երկու խմբերը լուծարվում են: Ռուսական բանակի սպա Ա. Ջանփոլադյանին հանձնարարվում է այս խմբերից կազմակերպել նոր ստորաբաժանում: Նրա խմբին են

---

[1] Տե՛ս *Елисеев Ф. И.,* указ. соч., с. 85–86.
[2] ՀԱԱ, ֆ. 818, g. 1, գ. 533, թ. 9, տե՛ս նաև *Ղորղանեան Գ.,* Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (Նիւթեր պատմութեան համար), Հայրենիք, Բոստոն 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 68, ՀԱԱ, ֆ. 43, g. 1, գ. 83, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 113, թ. 68:
[4] Նույն տեղում, ֆ. 282, g. 1, գ. 7, թ. 1:

միանում Պանդուխտի (Միքայել Սեֆերյան) գլխավորած 350 մարտիկները: Այսպես կազմավորվում է հնչակյան VI կամավորական խումբը[1]:

Կամավորական շարժմանը մասնակցում են նաև վերակազմյալ հնչակյանները: Այն առավել ծավալ է ստանում 1915 թ. հունիսին ԱՄՆ-ում: Կազմվում է 45 հոգուց բաղկացած խումբ ամերիկյան բանակի կապիտան Ջիմ Չանգալյանի հրամանատարությամբ: Սեպտեմբերին նրանք և սահմանադիր-ռամկավարները՝ Անուշավան Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ, գալիս են Թիֆլիս[2]:

I խումբը տեղակայվում է Սալմաստում: Նրա հրամանատարն էր Անդրանիկը (Օզանյան), որի օգնականները կամ տեղակալներն էին Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Սմբատը (Բորոյան): Խմբի բժիշկն էր Յ. Զավրիևը[3]: Շտաբի կառավարիչն (շտաբի պետ) էր Արշակ Ջամալյանը: II խումբը ձևավորվում է Իգդիրում՝ Դրոյի (Դրաստամատ Կանայան) հրամանատարությամբ: Նրա օգնականն էր Խեչոն (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան), իսկ շտաբի կառավարիչը՝ (շտաբի պետ) Արմեն Գարոն: Քաղաքական մասի կառավարիչն էր Սիրական Տիգրանյանը:

Գեներալ Մովսես Սիլիկյանի բնորոշմամբ «Դրոյի դրուժինան՝ փառահեղ դրուժինա է, Հայաստանի հպարտությունն ու գեղեցկությունն է» („Дружина Дро-это славная дружина, гордость и краса Армении")[4]: III խումբը տեղակայվում է Կաղզվանում: Նրա հրամանատարն էր Համազասպը, իսկ օգնականը՝ Վալադ Վալադյանը (Մկրտիչ Վանցյան): IV խումբը կազմավորվում է Սարիղամիշում, որը գլխավորում է Քեռին (Արշակ Գավաֆյան): Նրա օգնականն էր Միքայել Արզումանյանը: III և IV խմբերի քաղաքական մասի վարիչն էր Նիկոլ Աղբալյանը:

---

[1] *Նազարյան Ա. Ս.*, Հայկական զորամասերի կազմավորումը, էջ 46–47, ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 7, թ. 2, *Սիմոնյան Հ. Ռ.*, Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Երևան, 1996, էջ 388:

[2] *Յովհաննիսյան Գ.*, Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, 2003, ԲՀԱ, N 1, էջ 186:

[3] Գեներալ Թ. Նազարբեկյանի բնորոշմամբ. «Այդ դրուժինան նրա (Յ. Զավրիևի-Ռ. Ս.) զավակն էր», տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 15:

[4] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 9:

Սարիղամիշյան ճակատամարտի օրերին V խումբն ուղարկվում է Ալեքսանդրապոլ: Մարտիկների թվաքանակը մոտ 700 էր[1]: Բացի վերը նշված խմբերից, IV բանակային կորպուսին կից կազմակերպվում է հատուկ հետախուզական ստորաբաժանում: Հայ հետախույզներն ուղարկվում էին Օսմանյան կայսրության խորքերը, ընդհուպ մինչև Կ. Պոլիս[2]:

Գեներալ Թ. Նազարբեկյանի բնորոշմամբ, կամավորական խմբերի հրամանատարներն էին «ժողովրդի սիրելի առաջնորդները»[3]: Իսկ գեներալ Ե. Մասլովսկու գնահատմամբ՝ նրանք իրենց ամբողջությամբ նվիրել էին հայրենիքի ազատագրության գործին[4]: Դրուժինաների կազմակերպման և համակարգման գործում զգալի օժանդակություն է ցույց տալիս կապիտան Վլադիմիր Օզոլը (Վոլդեմար-Օսկար Օզոլս)[5]:

Կամավորական խմբերը չէին հասցրել ավարտել համալրումը, սպառազինումը և մարտական ուսուցումը, երբ Կովկասյան բանակի հրամանատարությունը հրամայեց շտապ, արագացված երթով, մեկնել ռազմաճակատ: Ստորաբաժանումներում առկա թերությունները հրամանատարները և Ազգային բյուրոն հարկադրված էին շտկել մարտական գործողությունների ընթացքում: Կ. Սասունին նշում է. «Կամաւորական գունդերը կովկասեան Հայաստանի գաւառներու եւ գրաւուած վայրերու մէջ զինուորական դպրոցի մը դեր կը կատարէին, որ սակայն միայն չափուած ծեւուած զինուորութեան մը ոգիի մը արտայայտութիւն չէր, այլ ներշնչուած էր հայերու ազատագրական իտէալին»[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 70:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 45: Խմբերում ընդգրկված մարտիկների ընդհանուր թվաքանակը 2400 հոգի էր, տե՛ս *Կարապետյան Մ. Լ.,* Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայկական բանակ, Երևան, 1999, N 2, էջ 67:
[3] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 14–15:
[4] Տե՛ս *Масловский Е. В.,* указ. соч., с. 38.
[5] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 536, թ. 31:
[6] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 43:

1914 թ. հոկտեմբերի 23-ին ռազմաճակատ է մեկնում I խումբը (1200 հոգի), հոկտեմբերի 24-ին՝ II-ը (382 հոգի), նոյեմբերի 1-ին՝ III-ը (430 հոգի) և նոյեմբերի 6-ին՝ IV-ը (470 հոգի)[1]:

Անդրանիկի հրամանատարությամբ I խումբը Ջուլֆայից շարժվում է Խոյ, ուր միանում է գեներալ Ֆեոդոր Չեռնոզուբովի Ադրբեջանական[2] ջոկատին: Նոյեմբերի 5-ին I խումբը մարտական առաջին մկրտությունն ունեցավ Աշնակ գյուղի համար մղված մարտում[3]: Հայ կամավորներն արժանանում են գեներալ Ֆ. Չեռնոզուբովի բարձր գնահատականին[4]:

Նոյեմբերի 17-ի մղած մարտական գործողությունների արդյունքում կամավորները կռիվներով անցան 15 վերստ դժվարանցանելի լեռնային տեղանքով: Կոթուրի կիրճի գրավումից հետո, նոյեմբերի 18-ին ռուսները գրավում են Շարապխանե գյուղը, ապա՝ Սարայը: Սարայում I խումբը համալրվում է Ա. Ջամալյանի հրամանատարությամբ ժամանած մոտ 100 հեծյալ կամավորներով[5]: Նոյեմբերի 29-ին կամավորները մարտեր են մղում Կարկալու գյուղի համար, սակայն հանդիպելով հակառակորդի ուժեղ դիմադրությանը՝ նահանջում են Ասուրլի: Այստեղ I խումբը մնում է մինչև դեկտեմբերի 1-ը[6]: Գյուղից մինչև Վան ընդամենը երկու անցում էր: Կամավոր-

---

[1] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 9, տե՛ս նաև *Ղորղանեան Գ.,* Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (Նիւթեր պատմութեան համար), Հայրենիք, 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 69:

[2] Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 30: Ջոկատը կոչվում էր «Ադրբեջանական» հյուսիսային Պարսկաստանի Ատրպատական անվան աղավաղված ձևից:

[3] Գեներալ Թ. Նազարբեկյանի վկայությամբ, «Հայկական I դրուժինան Պարսկաստանում գտնվող զորքերից առաջինն էր, որ մարտական մկրտություն ստացավ», տե՛ս նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 17 շրջ.:

[4] Ջօրաւար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914–1917: Օրագրուած զօրավարին թիկնապահ զինուորէն (Երվանդ Փափազյան), Երևան, 2000, էջ 10: Ըստ Հր. Սիմոնյանի՝ 11 սպանված և 15 վիրավոր, տե՛ս *Սիմոնյան Հ. Ռ.,* Անդրանիկի ժամանակը, էջ 398:

[5] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 34: 1915 թ. դեկտեմբերի 20-ի նամակում Ս. Վրացյանը դժգոհություն է հայտնում ԱՄՆ-ից ժամանած կամավորների պահվածքի մասին: Նրանց թվում կային արկածախնդիրներ, որոնք նույնիսկ Թիֆլիս չհասան, որպեսզի ընդգրկվեն կամավորական խմբերում, տե՛ս նույն տեղում, ֆ. 1267, ց. 4, գ. 14, թ. 7:

[6] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 17: Ջօրաւար Անդրանիկի Կովկասեան ճակատի օրագրութիւնը, էջ 12:

վորներն անհամբեր սպասում էին, թե երբ է տրվելու Վան արշավելու հրամանը: Ավելին, գեներալ Ֆ. Չեռնոզուբովը նույնիսկ ցանկանում էր երկու լեռնային թնդանոթ տալ I խմբին՝ Վան արշավելու համար[1]: Սակայն թուրքական լայնածավալ հարձակումը Սարիղամիշի ուղղությամբ հնարավորություն չի տալիս իրականացնել Վանի ազատագրումը:

Դժվար է ենթադրել, թե ինչ արդյունքի կհասնեին կամավորները, եթե վերը նշված առաջարկությունն իրագործվեր: Կարծում ենք, որ կամավորները զգալի արգելքների կհանդիպեին, քանի որ առաջացումն ընթանալու էր առանց մանրազննին հետախուզության: Հայտնի չէր հակառակորդի ուժերի թվաքանակը և սպառազինությունը, տեղաբաշխման վայրերը: Ինքնին հասկանալի է, որ առանց Ադրբեջանական ջոկատի առաջացման և աջակցության հնարավոր չէր լինի Անդրանիկի խմբին ճեղքել հակառակորդի ուժերը: Նման գործողությունը հնարավոր կլիներ, եթե ռազմաճակատում ռուսական ուժերը շարունակեին լայնածավալ հարձակումը: Բացի այդ, անհասկանալի էր, թե ինչպես էր խումբն ապահովվելու զինամթերքով և պարենով: Կարելի է ենթադրել, որ Կովկասյան բանակի հարձակումը ծավալվելու դեպքում, I խումբը հնարավոր է, որ հասներ որոշակի արդյունքի և նպաստեր Վանի ազատագրմանը: Ֆ. Չեռնոզուբովի առաջարկած օպերացիան բավականին հանդուգն ծրագիր էր և հնարավոր է, որ դրական արդյունք ունենար, սակայն հղի էր բազմաթիվ անորոշություններով ու բարդություններով:

1915 թ. հունվարի 2-ին I խումբը տեղակայվում է Ջուլֆայում, իսկ հունվարի 17-ին Մարանդում[2]:

Այսպիսով, 1914 թ. նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 23-ը մղած մարտական գործողությունների ընթացքում I խմբի կորուստը կազմել է 17 սպանված և 9 վիրավոր: Հիվանդացել և ապաքինվելուց հետո դրուժինա են վերադարձել ավելի քան 530 մարտիկ:

---

[1] ՀԱԱ, գ. 1, թ. 34:
[2] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 8: Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 2 շրջ.:

Խումբը նշված ժամանակահատվածում համալրվել է 231 կամավորով[1]:

1915 թ. փետրվարի 1-ին Անդրանիկը հատուկ հրամանով ազդարարում է I խմբում ոստիկանություն հիմնելու մասին: Հայոց զինուժի պատմության մեջ առաջին անգամ ծնունդ է առնում ռազմական ոստիկանությունը: Կարգուկանոն հաստատելու նպատակով, Անդրանիկը մարտիկներին ներկայացնում է տաս կետից բաղկացած պահանջներ: Առավել կարևոր և ուշագրավ են IX և X հոդվածները: IX հոդվածով ազդարարվում է, որ I խմբում կազմակերպվել է «Երդուեալ Ոստիկանութիւն»[2]: Հոդված X-ը ներկայացնում է ոստիկանի և կալանվածի իրավունքներն ու պարտականությունները: Կալանվածին իրավունք է տրվում բողոքարկել ձերբակալման հրամանը խմբի ոստիկանապետի և շտաբի պետի մոտ: Գործել է դատարան, որը քննել է կամավորականի կատարած հանցանքը և կայացրել դատավճիռ:

Հր. Սիմոնյանը նշում է. «...Անդրանիկը հատկապես առաջին գիծ էր մղում կամավորների կողմից զինվորական պարտքի գիտակցման և անթերի կատարման խնդիրը»[3]: Խմբի մարտիկներից ընտրվում են ինը ոստիկաններ: Փետրվարի 4-ին Մարանդում տեղի է ունենում ոստիկանների երդման արարողությունը: Ոստիկանապետ է նշանակվում Միքայել Մովսիսյանցը[4]: I խմբում գործել է զինվորական դատարան[5]:

1915 թ. ապրիլի 15-ին դրուժինային հրամայվում է ուղղվել Դիլման[6]: I խմբի առավել նշանավոր մարտը՝ Դիլմանի ճակատա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 29–30, տե՛ս նաև՝ նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 63, թ. 5: 1915 թ. հունվարի 5-ին Ա. Սահակյանին ուղղված հեռագրում Անդրանիկն իր զայրույթն է հայտնում, որ չնայած իր բազմաթիվ նախազգուշացումներին, այնուամենայնիվ Գ. Նժդեհին թույլատրվել է անդամագրվել կամավորական շարժմանը, տե՛ս նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 27, թ. 11:

[2] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 149, թ. 3 շրջ., տե՛ս *Սահակյան Ռ. Օ.*, Ռազմական ոստիկանության կազմակերպումը հայկական առաջին կամավորական ջոկատում, 2004, Հայկական բանակ, N 1, էջ 36–41:

[3] *Սիմոնյան Հ.*, նշվ. աշխ., էջ 498:

[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 154, թ. 1:

[5] Նույն տեղում, գ. 155, թ. 3:

[6] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 30:

մարտն էր, որն ավարտվում է ռուսների հաղթանակով, որից հետո, ապրիլի 19-ին Թ. Նազարբեկյանը հրամայում է սկսել Խալիլ բեյի դիվիզիայի հետապնդումը:

Մայիսի 2-ին I խումբն ու կազակական ջոկատը կարճատև մարտի բռնվելով մոտ 700 ոստիկանների հետ, հարկադրում են նահանջել: Հայ-կազակական ուժերը մայիսի 5-ին մտնում են Բաշկալե, ուր ընդհարում են ունենում թուրքերի հետ և գերում են Խալիլի սպայական հետախուզական հեծելախմբին: Նրանց հարցաքննությունից պարզվում է, որ Դիլմանի տակ կրած պարտությունից հետո Խալիլը ցանկացել է շարժվել Վան: Դրան խանգարել է Թ. Նազարբեկյանի բրիգադի կողմից Բաշկալեի գրավումը[1]:

Փաստորեն, սկզբնապես Վանի ուղղությամբ շարժվելով և իր վրա ուղղելով ռուսական զորամասերը, Խալիլն ակամա նպաստում է, որ ռուսական հրամանատարության ուշադրության կենտրոնում հայտնվի Վանի ուղղությամբ շարժվելու հնարավորությունը: Հայ կամավորներին հաջողվում է պարզել Խալիլի դիվիզիայի տեղակայման վայրը, որից հետո բրիգադի զորամասերը մոտենում են հակառակորդին և դիրքեր գրավելով՝ նախապատրաստվում են հարձակման:

Խալիլը ռուսներին մոլորեցնելու և իրական փախուստի ուղին քողարկելու նպատակով իր հիմնական ուժերից առանձնացնում է մի քանի զորասյուն, որոնց հանձնարարվում է տարբեր ուղղություններով նահանջել: Հայ հետախույզները պարզում են, որ Խալիլի նահանջի իրական ուղղությունը՝ Մոսուլն է: Թ. Նազարբեկյանն ապարդյուն փորձում էր հրամանատարությանն ապացուցել, որ Անդրանիկի հայթայթած տեղեկությունն առավել հավաստի է, քան բանակային հետախուզությանը և հակառակորդը կարողանում է խուսափել շրջապատումից: Ճիշտ է, ռուսներին չհաջողվեց իրականացնել իրենց մտահաղացումը, սակայն Խալիլն էլ իր հերթին չկարողացավ օգնության հասնել Վանը պաշարած Զևդեթին: Մայիսի 25-ին գեներալ Ի. Տրուխինը հրաման է ստանում՝ շարժվել Վան: Նրա հետ Վան է ուղղվում նաև Հայկական I խումբը: Մայիսի

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 51:

31-ին I դրուժինան հասնում է Վանից տաս վերստ հեռավորության վրա գտնվող Վարագա վանք, իսկ հունիսի 3-ին՝ Արտամետ. հունիսի 4-ին խմբին ջերմ ընդունելություն են ցույց տալիս Վանում, որից հետո, հունիսի 10-ից հետո մարտիկներն ուղղվում են Ոստան ու Աղթամար և հունիսի 14-ին սուրբ Հակոբի մոտ միանում է Արարատյան ջոկատին[1]:

1914 թ. հոկտեմբերի 23-ին II կամավորական խումբը[2] Դրոյի հրամանատարությամբ դուրս գալով Իգդիրից, անցավ գեներալ Անդրեյ Նիկոլաևի Բայազետի ջոկատի կազմի մեջ: Խմբին հանձնարարվում է անցնել Թափարիզի լեռնանցքը և գրավել քրդական ուժերի հսկողության ներքո գտնվող Գյավրի-Շամե գյուղը: Կամավորներն ու կազակները երկօրյա ծանր մարտերից հետո գրավում են բնակավայրը[3]: Հոկտեմբերի 30-ին Թափարիզի լեռնանցքի համար մղած մարտերից մեկի ժամանակ վիրավորվեց Դրոն[4]: Մարտի մասնակից, խորունժի Ֆ. Ելիսեևը գրում է. «Այդ ժամանակ վիրավորվեց Դրոն, որը համարվում էր բոլորից քաջը: Մենք նրան պատվով ուղարկեցինք Իգդիր՝ ապաքինվելու»[5]: Պ. Օգանովսկին հատուկ հեռագրով հանձնարարում է գեներալ Դրագիրին՝ Դրոյին տեղավորել Բայազետի հիվանդանոցում[6]: II խմբի հրամանատարությունն ստանձնում է Արմեն Գարոն:

Գյավրի-Շամեն գրաված կամավորները սպասում էին ռուսական օգնական ուժերի ժամանմանը, որոնք այդպես էլ չեկան: Հակառակորդը, համալրելով ուժերը, ավելի ու ավելի է ուժեղացնում ճնշումը: Վերլուծելով ստեղծված իրավիճակը, Արմեն Գարոն որոշում է նահանջել Կըզըլ-Կայա[7]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 20:
[2] Խումբը կազմված էր 387 հոգուց: Ավելի ուշ խումբը համալրվում է 82 մարտիկով, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 16, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 15, թ. 9 շրջ.: Մայիսի դրությամբ դրուժինայի մարտիկների ընդհանուր թվաքանակը 978 էր, տե՛ս նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 163, թ. 158:
[4] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 114, թ. 1:
[5] Տե՛ս Елисеев Ф. И., указ. соч., с. 85.
[6] *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատուն (1914–1917 թթ.), Երևան, 1999, էջ 173:
[7] *Ավետիսյան Մ.,* էջեր հայկական կամավորական շարժման պատմությունից, 2005, ԲՀԱ, N 1, էջ 84:

Հոկտեմբերի 30-ին II խումբը հրաման է ստանում շարժվել Ալաշկերտ՝ Ղարաքիլիսա, ուր նրանք անցնում են գեներալ Դմիտրի Աբացիևի հրամանատարության ներքո, որի հրամանով խումբը տեղափոխվում է Դուտախ, դիրքեր զբաղեցնում Կլիչ-Գյադուկի հարավում: Խումբը հիմնականում կատարում է պարեկապահակային ծառայություն: Նոյեմբերի 23-ից մինչև 28-ը կամավորները ռուս զինվորների հետ մասնակցում են տեղական բնույթի մի շարք մարտերին: Նրան հաջողությամբ ետ են մղում հակառակորդի գերակշիռ ուժերի հարձակումները:

Դեկտեմբերի 11-ից մինչև 18-ը II խումբը մասնակցում է յոթ մարտերի, կատարում հետախուզություն և պարեկապահակային ծառայություն[1], «որոնց ժամանակ ցույց է տալիս առանձին հանդգնություն և ռազմական կորով, ապա ամբողջ ռուս բանակի հետ ետ է քաշվում մինչև Իգդիր»[2], ապա՝ Երևան: Նահանջի ժամանակ խումբը ոչ միայն իրականացնում էր փախստականների պաշտպանությունը, այլև օգնում էր նրանց[3]:

1914 թ. նոյեմբերի 1-ին III կամավորական խումբը Համազասպի հրամանատարությամբ դուրս գալով Կաղզվանից, նոյեմբերի 4-ին հասավ Դելի-Բաբա[4]: Այդտեղ խումբը համալրեց գնդապետ (հետագայում՝ գեներալ) Ալեքսանդր Կուլեբյակինի[5] Կարադերբենդյան ջոկատը[6]: Վերջինս տեղակայված էր Սարիղամիշյան ջոկատի

---

[1] ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 30: ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 30:

[2] *Ավետիսյան Մ.,* Էջեր հայկական կամավորական շարժման պատմությունից, 2005, ԲՀԱ, N 1, էջ 84:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 87, թ. 29–30:

[4] Խմբի հետ ռազմաճակատ են մեկնում նաև մոտ 160 ալաշկերտցիներ, որոնք զինված էին «Բերդան» տեսակի հրացաններով. «Թուրքիա մտնելուն պես՝ նրանք ցրիւ եկան դէպի իրենց վայրերը», տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 87, թ. 25, նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 27:

[5] Լևոն Լիսիցյանը հետևյալ կերպ է գնահատել Ա. Կուլեբյակինին, նա «հայտնի էր իբրև բանաստեղծ ու վիպական գրող, հրապարակված ուներ արդեն մի քանի բանաստեղծական գրվածքներ Հայաստանի մասին: Ջորաւար Կուլիբեակինը ինքը Թերեքի կազակ լինելով հանդերձ, մեծ համակրանք ու հետաքրքրութիւն էր տածում միշտ դեպի հայ ժողովուրդը, զգում ու հարգում նրա ձգտումներն ու ցավերը և հայտնի էր իբրև անաչառ մտքի ու պայծառ հոգու տեր մարդ», տե՛ս նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 77, թ. 2:

[6] *Закарян Ан.,* Александр Кулебякин и Армения, Ереван, 2003, с. 8.

ձախ թևում: III խումբը դիրքավորվեց էնդեկ գյուղում՝ Տիկ դաղ լեռից հարավ: Սարիղամիշյան օպերացիայի ընթացքում պաշտպանվում էր Կարադերբենդյան կիրճը[1]: Այստեղով էր անցնում Ալաշկերտի հովիտ տանող ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը:

Նոյեմբերի 6-ին կամավորներն առաջին մարտական մկրտությունն են ստանում Ալագյոզ գյուղի համար մղված մարտում: Նրանք, աստիճանաբար հետ մղելով գերակշիռ քրդական ուժերը, գրավում են Պիրհասան, Քափանակ և Խոսրովերան գյուղերը: Գնդապետ Ա. Կուլեբյակինը հաշվի առնելով, որ կամավորները չափից շատ են առաջացել և հայտնվել են մեկուսացված վիճակում, որի պատճառով կարող են հայտնվել շրջապատման մեջ, հրամայում է դադարեցնել հարձակումը և նոյեմբերի 11-ին նահանջել Ալագյոզ[2]:

1914 թ. դեկտեմբերի սկզբին III խումբը և Մոզդոկյան I կազակային գնդի երկու հարյուրյակները՝ գնդապետ Վասիլի Խետագուրովի հրամանատարությամբ տեղակայվում են Ալագյոզ գյուղում: Դեկտեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը Ալագյոզում տեղակայված կամավորներն ու կազակները ծանր կորուստներ են կրում: Թուրք զինվորներն, օգտվելով ժամապահների անփույթ ծառայությունից[3], աննկատ մտնում են գյուղ: Հարձակման հետևանքով սպանվում են 30 և վիրավորվում 40 կամավոր: Կազակներից զոհվում են 14 հոգի և վիրավորվում են 32 հոգի[4]: Դեկտեմբերի 6-ի առավոտյան կամավորներն ու կազակներն անցնում են հարձակման և վերագրավում Ալագյոզը:

Չնայած ծանր կորուստներին, III խումբը շարունակում է մասնակցել մարտական գործողություններին: Գեներալ Իվան Գուլիգայի կողմից կազմված զեկուցագրում հիշատակվում էր, որ վիրավոր կամավորները հրաժարվում էին թիկունք գնալ և շարունակում էին

---

[1] Լ. Լիսիցյանը նշում է, որ այդ կիրճով էր, որ 1877 թ. գեներալ Ա. Տեր-Ղուկասովն օգնության շտապեց թուրքերի կողմից պաշարված Բայազետին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 15:
[2] ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 27:
[3] «Հորիզոն», 1915, N 14, 20 յունուարի:
[4] ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, թ. 28: Նույն տեղում, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 14:

կռվել հակառակորդի դեմ[1]: III խմբի ունեցած կորուստների պատճառով նրան ուղարկում են թիկունք՝ համալրման և հանգստի: Մարտական գործողությունների ընթացքում խմբի կորուստները կազմել են 31 սպանված, 41 վիրավոր և 90 հիվանդ[2]:

Դեկտեմբերի 25-ին Ա. Կուլեբյակինը I բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Միխայիլ Պրժևալսկուն ուղված զեկուցագրում հայտնում է, որ III դրուժինան վերակազմավորման և համալրման նպատակով տեղափոխվում է Կաղզվան: Գնդապետն իր պարտքն է համարում վկայել կամավորների անմնացորդ նվիրվածության և բարեխիղճ ծառայության մասին: Ա. Կուլեբյակինը նշում է. «Բոլոր մարտերում դրուժիննիկները անձնուրաց գնում էին բացահայտ մահի և հաճախ մահանում էին ինչպես իսկական հերոսներ»[3]:

1914 թ. նոյեմբերի 6-ին IV խումբը համալրեց Թուրքեստանյան II բանակային կորպուսը: Նոյեմբերի 6-ին կամավորներն առաջին բախումն ունեցան թուրքական III բանակային կորպուսի առաջավոր ուժերի հետ: IV խումբը գրավեց Լևասոր և Կըզըլ-Քիլիսա գյուղերը[4]: Այս հաղթանակներից հետո խումբը շարունակեց առաջխաղացումը Իդ (Նարիման), որտեղ նրանք պետք է միանային գեներալ Ն. Իստոմինի ջոկատին:

Դեկտեմբերի 8-ին Վերինթաբի շրջանում IV խումբը ենթարկվում է հակառակորդի գերակշիռ ուժերի հարձակմանը: Քեռին հարկադրված նահանջում է, զեկուցելով Գ. Բերխմանին, որ իր խմբի դեմ գործում են թուրքական երկու գումարտակ: Գեներալն անուշադրության է մատնում Քեռու և հետախուզության հայտնած տեղեկությունները: Ինչպես նշում է գեներալ Նիկոլայ Կորսունը, «Իրակա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 43:
[2] Նույն տեղում, գ. 87, թ. 29–30:
[3] *Ներսիսյան Մ. Գ.,* Խրիմյան Հայրիկի դիմումը Նիկոլայ Երկրորդին (1907 թ.) և արխիվային նյութեր հայկական հարցի ու հայ կամավորական շարժման մասին (1912–1915 թթ.), 1993, ՊԲՀ, N 1–2, էջ 179: Տե՛ս *Закарян Ан.,* Александр Кулебякин и Армения, с. 9.
[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 12:

նում դրանք թուրքական 28-րդ հետևակային դիվիզիայի ուժերն էին, որոնք հարձակվում էին Կոչգանսի վրա»[1]:

Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու նպատակով Օլթիի ջոկատի հրամանատար գեներալ Ն. Իստոմինի հրամանով Իդի մոտ կազմվում է վերջապահ՝ բաղկացած մեկ և կես գումարտակից, 4 թնդանոթից և Հայկական IV խմբից: Վերջապահի հրամանատարն էր փոխգնդապետ Քութատելաձեն[2]: Նրան հաջողվում է վերջապահը դուրս բերել Օլթի-չայ գետի հովիտը՝ Նարիման գյուղի մոտ և բանակել: Սակայն հրամանատարը կոպիտ սխալ է թույլ տալիս: Նա շրջակա բարձրունքների վրա պահակակետեր չի նշանակում, որից օգտվում է հակառակորդը և շրջապատում է վերջապահը:

Քութատելաձեն, 750 զինվորով և 5 գնդացրով հանձնվում է թշնամուն[3]: Վերջապահի մեծ մասին, այդ թվում IV խմբին և հրետանուն, հաջողվում է ճեղքել շրջապատումը: Նահանջը ղեկավարում էր Քեռին: Նա հմտորեն օգտագործելով լեռնային կածանները և թանձր մառախուղը, կարողանում է փրկել ոչ միայն խումբը, այլև մնացած ռուս զինվորներին[4]: 1914 թ. դեկտեմբերի 10-ին կամավորները և ռուս զինվորները միանում են Օլթիի ջոկատի գլխավոր ուժերին և մասնակցում Օլթիի համար մղած մարտերին, սակայն թուրքերի ճնշման ներքո ստիպված են լինում նահանջել: Ռ. Շաթիրյանի համոզմամբ, IV խումբը և ռուս զինվորները խուսափեցին գերվելուց շնորհիվ «60 ամյա չեթնիկի (Քեռու – Ռ. Ս.) անխորտակելի քաջության և ռազմական տաղանդի և հայդուկների խիստ կարգապահության»[5]: Հետագայում, երբ Քեռուն խնդրեցին որոշ մանրամասներ պատմել նահանջի, թուրքական հետապնդման և շրջապատումից դուրս գալու մասին, նա իրեն հատուկ լակոնիկ

---

[1] Տե՛ս *Корсун Н. Г.,* Сарыкамышская операция, с. 39, տե՛ս *Масловский Е. В.,* указ. соч., с. 82.
[2] Նույն տեղում, էջ 40–41, տե՛ս նաև *Масловский Е. В.,* указ. соч., с. 59.
[3] Նույն տեղում, էջ 41:
[4] Տե՛ս *Масловский Е. В.,* указ. соч., с. 61.
[5] Տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, 12 марта, N 10–11, с. 14.

ոճով և հումորով ասաց. «Գնացինք, կռուեցինք, Օլթիի տակ հաղթուեցինք և փախանք»[1]:

Ռուսական հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց IV խմբին ցուցաբերած հերոսության և հակառակորդի զգալի ուժերին դիմակայելու համար: Սարիղամիշյան օպերացիայի ավարտից հետո IV խումբն ուղարկվում է Երևան համալրման և հանգստի: Մարտական գործողությունների ընթացքում խմբի կորուստը հաշվվում է 106 սպանված և 44 վիրավոր[2]:

Այսպիսով, հայ կամավորական շարժման առաջին փուլը, որը պաշտոնապես սկսվեց 1914 թ. սեպտեմբերի 10-ին և տևեց մինչև 1915 թ. հունվարի սկզբները, չնայած բացառիկ ծանր պայմաններին, դրական արդյունք ունեցավ: Կամավորների զգալի մասը ձեռք բերեց ժամանակակից պատերազմ մղելու որոշակի մարտական փորձ: Կ. Սասունին իրավացիորեն նշում է. «Պարտիզանական կռուի ձեւերը՝ կանոնաւոր կռուի ձեւերուն տեղի կուտային: Անհատական հերոսութիւնը՝ հավաքական կռուին ու կարգապահութեան առջեւ կը նսեմանար, բայց սերունդը նոյնը կը մնար և բարեփոխութիւնը կը դժուարանար»[3]:

I և II խմբերը գործուն մասնակցություն ունեցան հայ և ասորի փախստականներին ռուսական սահմաններ ուղեկցելու և պաշտպանելու գործին: Խմբերի ներկայությունը և մասնակցությունը Կովկասյան բանակի կազմում, տեղի հայ և ասորի բնակչության շրջանում ամրապնդում էր համակրանքը ռուսների նկատմամբ: Միաժամանակ հետ էր պահում, զսպում քուրդ և թուրք բնակչությանը հայերի նկատմամբ որևէ ոտնձգություն իրականացնելուց: Հայ և ասորի բնակչությունն օժանդակում էր ռուսներին, տրամադրելով անհրաժեշտ պարեն, փոխադրամիջոցներ, հանդես էին գալիս որպես ուղեկցողներ:

Ինչպես նշում է Ս. Վրացյանը, երբ սկսվեց կամավորական շարժումը. «Հայ գործիչները ներքին երկյուղով ու անհանգստու-

---

[1] «Արեւ», 1916, N 116, 26 մայիսի:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 29–30:
[3] *Սասունի Կ.,* Ինչու ինկավ Կարսը, («Հայ-թրքական պատերազմի» վերջաբանը), Հայրենիք, 1926, Դ տարի, թիւ 11, սեպտեմբեր, էջ 105:

թեամբ էին ձեռնարկում զօրաշարժին, որտեղից առնել հազարաւոր մարտիկներ՝ վարժ պատերազմելու արհեստին՝ մի ժողովրդի մէջ, որի ձեռքից սիստեմատիկ կերպով խլւել է զէնքը:... Տաճկահայաստանի սարերում ու հովիտներում հայդուկի թափած արիւնը ուռճացրել է այդ հողը, Գէորգ Չաւուշները, Սերոբները, Եփրեմները թողել էին իրենց արժանաւոր յաջորդները»[1]:

Կամավորական շարժման առաջին փուլը միաժամանակ վեր է հանում բազմաթիվ թերություններ, ինչպես կազմակերպչական, այնպես էլ առօրյա, որոնք քայլ առ քայլ վերացվում էին Հայոց ազգային բյուրոյի և Կարգադրիչ մարմնի կողմից:

Հայ կամավորների մարտական հաջողությունների և քաջության մասին են վկայում ռուս զորահրամանատարների շնորհակալական հեռագրերն Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին: Ռուսական պաշտոնական ռազմական հանդես "Военный вестник"-ի թղթակիցը վկայակոչելով հրամանատարության կարծիքը հայ կամավորների մասին, գրում է. «Կռվում են գերազանց, ինչպես առյուծները և մեր ընդհանուր գործին մեծ օգուտ են բերում»[2]: 1914 թ. դեկտեմբերի 10-ին գեներալ Պ. Օգանովսկին բանակի շտաբին ուղղված հեռագրում բարձր է գնահատում հայկական խմբերի, հատկապես Անդրանիկի I խմբի մարտական ծառայությունը: Նա առաջարկում է հրամանատարությանը կազմավորել հայկական նոր ստորաբաժանումներ[3]:

Մարտական գործողությունների ընթացքում չորս խմբերի կորուստը կազմում է 156 սպանված և 743 վիրավոր, հիվանդ և ցրտահարված[4]: Դա 2482 հոգուց բաղկացած մարտակազմի 36%-ը, որն ըստ գեներալ Գաբրիել Ղորղանյանի «պերճախօս վկայութիւն մըն է իրենց մարտական ոգիին եւ կատարած աշխատանքին»[5]:

---

[1] «Հորիզոն», 1915, N 1, 10 յունւար:

[2] ***А-Тъ***, Из дневника участника Кавказского фронта, Военный вестник, Петроград, 1916, июль, N 7, с. 141.

[3] ***Նազարյան Ա. Ս.,*** նշվ. աշխ., էջ 44–45:

[4] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 12, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 32:

[5] ***Ղորղանեան Գ.,*** նշվ. հոդվածը, Հայրենիք, Բոստոն, 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 11, տե՛ս նաև ***Սահակյան Ռ.,*** Հայ Յեղափոխական Դաշնակցությունը և հայ կամավորական շարժումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

Ռուսական հրամանատարությունը հաշվի առնելով զորամասերի հրամանատարների կարծիքը, որոշում է ավելացնել կամավորական խմբերի մարտակազմը: Նման որոշումը համընկնում է Ազգային բյուրոյի և հայ հասարակության ցանկությանը: Փոխարքայի կողմից կազմվում է կամավորական դրուժինաները վերակազմավորելու նախագիծ: Նախատեսվում էր 4 խմբից յուրաքանչյուրի մարտակազմը հասցնել հազար հոգու[1]:

1915 թ. ապրիլի 6-ի N 255 հրամանով, Գերագույն գլխավոր հրամանատար Նիկոլայ Ռոմանովը (կրտսեր) հրամայում է լուծարված համարել N 65 հրամանով ձևավորված հայկական դրուժինաները: Հրամանի երկրորդ կետով կազմավորվելու են հայկական չորս խումբ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր լինելու 952 հոգուց: Ընդ որում հրամանատարական կազմն ընտրվելու էր կամավորներից[2]: Դրուժինաներից յուրաքանչյուրը բաղկացած էր լինելու չորս վաշտից: Վաշտերից յուրաքանչյուրում զինծառայողների թվաքանակը սահմանվում էր 237 հոգի[3]:

Մի խումբ հայասեր անգլիացիներ որոշում են օժանդակել ոչ միայն հայ փախստականներին, այլև հայ կամավորական խմբերին: Էմիլիա Ռոբինզոնը կազմակերպում է Անգլո-հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդ, որի նախագահն էր լորդ Ջեյմս Բրայսը: Փոխնախագահների թվում էր «Լոնդոնի հայոց միացյալ ընկերության» նախագահ, գնդապետ Մարգար Գրեկըբին (Գրեգըր)[4]:

---

(1914–1916 թթ.).-Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, Երևան, 2011, էջ 40:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 58, թ. 1 և շրջ., տե՛ս նաև ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 13:

[2] Նույն տեղում, գ. 50, թ. 3: ***Կարապետյան Մ.,*** Հայկական կամավորական խմբերը, էջ 170–172:

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 58, թ. 4:

[4] «Յորիզոն», Թիֆլիս, 1915, N 12, 17 յունուարի: ***Տերոյան Վ.,*** Իմպերիալիստական ծիծեռնակները. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում. Առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյանի, Երևան, 2008, էջ 11:

1915 թ. հունվարի 18-ին V խումբը Ալեքսանդրապոլից[1] տեղափոխվում է Երևան և տեղակայվում Նորքում: Վարդանը նշում է, որ ալեքսանդրապոլցի կանանց նվիրած դրոշը պահվում էր առանձին տեղում և ժամապահի հսկողության ներքո: Նորք են գալիս մեծ թվով աշակերտներ և աշակերտուհիներ իրենց ուսուցիչների ուղեկցությամբ: Վարդանը հուշագրում է. «Դրոշակը նոցա շատ էր ոգևորում, շատերն էին ցանկանում կամավորական շարքերը մտնել: Ոգևորության շրջան էր»[2]:

Վարդանի կողմից քայլեր են ձեռնարկվում խմբերում կարգապահությունն ամրապնդելու նպատակով: Կամավորների մի մասը ստանալով շինել, կոշիկ և այլն, որոշ ժամանակ մնալով՝ հեռանում էին: Վարդանի գնահատմամբ. «Դրուժինաները դարձել էին մի քարվանսարա, մի ապաստարան՝ գան ուտեն, հագնվեն՝ թողնեն հեռանան»[3]:

Վարդանը դիմում է խիստ միջոցների: Առավել հանդուգն և զինվորական կարգապահությունը խախտողներ ծերբակալվում են: Դասալիքները հետապնդվում, կալանվում և բերվում են Երևան: Կամավորների վրա հոգեբանական մեծ ազդեցություն է ունենում դասալիքների հայտնաբերումը և նրանց պատժելը: Վարդանի հրամանով դասալիքները 30-օրյա կալանքի են ենթարկվում Երևանի զինվորական բանտում: Եվ ինչպես նշում է իր հուշերում Վարդանը. «Այդ փախածները իրենցից առանձին բան չէին ներկայացնում, կարևոր ոյժեր չէին, բայց կարգը պահպանելու և ուրիշներին վատ օրինակ չծառայելու համար, չէի կարող չպատժել»[4]:

Վարդանը ցավով փաստում է. «Մեր զենքերը տակավին «Գրա» հրացաններն էին, որոնց պետք է փոխարինեին երեք գծանի հրացաններով, բայց դեռևս չէին տվել»[5]:

---

[1] Խմբի բժիշկն ու սանիտարները զգալի օգնություն են ցույց տալիս Ալեքսանդրապոլ հասած հայ փախստականներին, տե՛ս *Հարությունյան Ա. Հմ.*, Հայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, «Էջմիածին», 2006, թիվ Դ, էջ 77:

[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 80:

[3] Նույն տեղում, թ. 81:

[4] Նույն տեղում, թ. 81–82:

[5] Նույն տեղում, թ. 80:

Կամավորական շարժման հետ կապված զանազան բնույթի հարցեր քննարկելու նպատակով 1915 թ. փետրվարի 15-ից 18-ը Թիֆլիսում հրավիրվել է համագումար: Ներկա են եղել Ռուսաստանի հայաբնակ վայրերից ժամանած 120 պատգամավորներ, «Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմնի» անդամները և կամավորական խմբերի հրամանատարները:

Համագումարում նախատեսվում էր քննարկել հետևյալ հարցերը.

1. Հաշվի և նախահաշվի քննություն:
2. Բյուրոյի անցյալ գործունեության տեղեկագիրը:
3. Ինքնապաշտպանության հարցը:
4. Թուրքահայաստանի ապագա քաղաքական կազմակերպության հարցը:
5. Բյուրոյի անդամների ընտրությունը:

1915 թ. փետրվարի 17-ին ներկայացվում է «Հայ կամավոր խմբերի կարգադրիչ մարմնի» հաշվետվությունը, որտեղ նշվում է պատերազմի սկզբնական փուլում առաջացած բազմաթիվ դժվարությունների մասին, որոնք «Կարող են վկայել, որ Ղարաբաղի շարժումներից ի վեր (XVIII դար) Հայութիւնը առիթ չէր ունեցած այսպիսի ընդարձակ զինւորական գործ կազմակերպելու»[1]:

Համագումարն ընտրում է նորակազմ Ազգային բյուրո, որը բաղկացած էր տասնհինգ անդամից և հինգ փոխանդամից: Բյուրոյի պատվավոր նախագահն էր Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, առաջին փոխնախագահը՝ Ա. Խատիսյանը, երկրորդ փոխնախագահը՝ Հովս. Ամիրխանյանը[2]:

Կովկասյան բանակի հրամանատարության որոշմամբ II, III և IV խմբերը միացան V-ին: Վերջինս ստացավ Արարատյան անվանումը: Նրա հրամանատար է նշանակվում Վարդանը: I խումբը Անդրանիկի հրամանատարությամբ շարունակեց մնալ «Ադրբեջանական» ջոկատում:

---

[1] *Սահակյան Ռ.,* Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, ԲՀԱ, 2008, N 1, էջ 46–47, ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 36, տե՛ս նաև *Լեո,* Նշվ. աշխ., էջ 319:

[2] *Նազարյան Ա. Ս.*, Հայկական զորամասերի կազմավորումը, էջ 49, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 67, թ. 38:

V խմբի կամավորական Ս. Չենտիկյանը նշում է ամենօրյա զինվորական պարապմունքների մասին: Նա ջերմությամբ և ակնածանքով վկայում է իր վաշտի հրամանատար Գ. Նժդեհի կատարած զգալի աշխատանքի մասին: Ս. Չենտիկյանը նշում է. «Նժդեն սովորական մեր տեսած զինվորական չէր, շատ ու շատ առավելություն ուներ իր զինվորին հետ վարվելակերպով, իր զինվորական դաստիարակությամբ ամենահասարակ մի մարդ նրա ձեռքի տակ կարող էր կատարյալ զինվորական դաստիարակություն ստանալ, կռվի մեջ ալ քաջ էր»[1]:

1915 թ. մարտի 5-ի Ազգային բյուրոն հատուկ կոչով դիմում է հայրենակիցներին, խնդրելով կամավորների համար ուղարկել հագուստ և դրամ: Դրանք անհրաժեշտ է ուղարկել Վրաստանի և Իմերեթի հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին: Խնդրվում է նաև ուղարկված դրամի և իրերի մասին առանձին նամակով տեղեկացնել Ազգային բյուրոյին: Կոչում թվարկվում են առավել անհրաժեշտ իրերը: Միաժամանակ պահվում է ի գիտություն, որ այլևս նոր կամավորներ չուղարկեն, մինչև համապատասխան դիմումի: Տեղեկացվում է, որ հատկապես մեծ կարիք է զգացվում «Մաուզեր» ատրճանակների և նրանց փամփուշտների[2]:

Ազգային բյուրոն առանձին ցուցակով կցում է կամավորների համար անհրաժեշտ հանդերձանքի ցուցակը, ուր թվարկված են 41 անուն իրեր՝ շինել, վարտիք, թաղիքե և մորթու կիսամուշտակներ, տափաշիշ, դաշույն, ծի և այլն[3]: Միայն 11 անուն իրեր ձեռք բերե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 13: Կամավորականը մի հետաքրքիր փաստ է հիշում. Սոֆիայում Գ. Նժդեհի կողքին մշտապես գտնվում էր «փոքր (փոքրահասակ – Ռ. Ս.), կանացի կազմվածքով, ակնոցավոր մի երիտասարդ»: Այդ անձը Ավիս Նուրիջանյանն էր: Վերջինիս մասին Ս. Չենտիկյանը հետևյալն է վկայում. «Ավիսի համար կասեյին, թե Գերմանիայ կուսանի եղիր, փող չունենալուն՝ իկէր է Պուլկարիյա և Նժտեհն էր պահում, մենք ալ կօգնեյինք: Շատ էինք հարգում, կասեյինք գառան պես տղայ է: Երբ որ (19 – Ռ. Ս.) 20 թվականին թերթերում նկարը տեսա և ժողովուրդին կողմէ լսեցի ըրած գազանութիւնները, զարմացա, թէ գառնուկի արտաքին ունեցողը գայլի սիրտ կունենա», տե՛ս ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 9–10:

[2] *Սահակյան Ռ.*, Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, ԲՀԱ, N 1, 2008, էջ 46: ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 34 և շրջ.:

[3] *Նույն տեղում*, էջ 47: ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 87, թ. 37:

լու համար անհրաժեշտ էր մոտավորապես 102 ռուբլի 40 կոպեկ[1]: Նշված գումարն անհրաժեշտ էր միայն մեկ կամավորի հանդերձավորման համար:

Հայ կամավորական խմբերի կազադրիչ մարմինը մշակում է խմբերի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման հրահանգ: Պարտադիր է համարվում ստացված բոլոր դրամական փոխանցումների արձանագրումը: Յուրաքանչյուր ամիս հրամանատարները պետք է ներկայացնեին հաշվետվություն, թե ինչ նպատակների համար են ծախսվել ստացված գումարները և այլն[2]:

1915 թ. ապրիլի 1-ի դրությամբ II, III և IV հայկական դրուժինաների մարտակազմը 3120 հոգի էր, որոնցից 55-ը՝ հրամանատար և 2628-ը՝ շարքային[3]: Դրուժինաները բաժանված էին երեք վաշտերի, որոնցից յուրաքանչյուրում մարտիկների թվաքանակը 280 էր: Յուրաքանչյուր խմբում կար մեկական հեծյալ հարյուրյակ[4]:

Արարատյան գնդի հրամկազմը հետևյալն էր.

1. Ջոկատի պետ Վարդան
2. Տեղակալ Խեչո (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան, Դաշնակցական Խեչո)[5]:
3. Ջոկատի հրահանգիչ՝ կապիտան Մ. Հովսեփյան[6], II դրուժինա: Գործուղվել է Կովկասյան 9-րդ հրաձգային գնդից:
4. II դրուժինայի հրամանատար Դրաստամատ Կանայան (Դրո):

---

[1] *Սահակյան Ռ.,* Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, էջ 56:

[2] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 149, թ. 8:

[3] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 6: Վարդանն իր հուշերում նշում է, որ գնդի մարտակազմը մոտ երեք հազար էր, տե՛ս ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 86:

[4] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 34: 1915 թ. մայիսի 19-ին կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղված նամակում Հ. Խունունցը հայտնում է, որ հայ կամավորների ընդհանուր թվաքանակը հասնում էր հինգ հազարի: Նրանք ընդգրկված էին հինգ խմբերում, տե՛ս *Կիրիմյան Ա.,* Հայոց ազգային բյուրոյի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, ԲՀԱ, 2008, N 2, էջ 17:

[5] Խեչոն միաժամանակ հեծելավաշտի հրամանատարն էր: Կամավորական Ս. Չենթիկյանի գնահատմամբ, Խեչոն «սակավախոս, մի համեստ մարդ էր», տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 45:

[6] Վարդանն իր հուշերում նշում է, որ կապիտան Մ. Հովսեփյանը ջոկատի շտաբի պետն էր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 91:

5. Գարեգին Տեր-Հարությունյան (Գարեգին Նժդեհ)։ Դրուժինայի հրամանատարի օգնական (տեղակալ)։
6. Պարույր Լևոնյան՝ II դրուժինայի հրամանատարի համհարզ։
7. Հովհաննես Կարապետի Մելքոնյան՝ 1-ին վաշտի հրամանատար։
8. Միքայել Բաբալ(քյոխվյան)՝ կրտսեր սպա։
9. Բենիամին Հայրապետյան՝ կրտսեր սպա։
10. Հովհաննես Պարոնյան՝ 2-րդ վաշտի հրամանատար։
11. Մարտիրոս Աբրահամյան՝ կրտսեր սպա։
12. Ղազար Ղազարյան՝ կրտսեր սպա։
13. Մեսրոպ Ավետիսյան՝ 3-րդ վաշտի հրամանատար։
14. Տիգրան Օհանյան՝ կրտսեր սպա։
15. Կարապետ Փորթուգալյան՝ կրտսեր սպա։
16. Արտեմ Նանումյան (Ջեմլյակ)՝ հեծյալ հարյուրյակի հրամանատար։
17. Խոսրով Եղիազարյան՝ հեծյալ հարյուրյակի կրտսեր սպա։
18. Հովհաննես Գրիգորյան՝ ոչ շարային ծառայության պետ[1]։
19. Էդուարդ Տեր-Ստեփանյան[2]՝ դրուժինայի բժիշկ։
20. Արշակ Պողոսյանց՝ դրուժինայի բժիշկ[3]։

III դրուժինա
21. III դրուժինայի հրամանատար Համազասպ Սրվանձտյան։
22. Տեր-Ավետիսով՝ հրամանատարի օգնական (տեղակալ)։ Գործուղվել է 118-րդ պահեստային գումարտակից։
23. Վալադ Վալադյան (Մկրտիչ Վանցյան)՝ դրուժինայի հրամանատարի կրտսեր օգնական։

---

[1] II դրուժինայի գումակում ծառայում էին իգդիրցի եզդիներ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 22, թ. 28։
[2] Նա ծնվել է Խարբերդում։ Ավարտել է Սանասարյան վարժարանը։ Շվեյցարիայում ուսանել է բժշկություն։ Պատերազմը սկսվելուց հետո գալիս է Կովկաս և անդամագրվում կամավորական շարժմանը։ Մահացել է 1918 թ. փետրվարին տիֆից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 24։
[3] Ս. Չենթիկյանն իր հուշերում ջերմորեն է խոսում բժշկի կատարած աշխատանքի մասին, հիշատակելով, որ նա ծնունդով Սեբաստիայից էր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 21։

24. Միհրան Խոջամիրյան՝ դրուժինայի համհարզ:
25. Կոնստանտին Տարիանյան՝ կվարտիրմեյստեր (թիկունքի կամ գումակի պետ):
26. Մակար Խոջամիրյան՝ գանձապահ:
27. Հովհաննես Թաթոսյան՝ 1-ին վաշտի հրամանատար:
28. Գրիգոր Խլղաթյան՝ կրտսեր սպա:
29. Սերգեյ Մանուչարյան՝ 2-րդ վաշտի հրամանատար:
30. Հայկ Թորոսյան՝ կրտսեր սպա:
31. Սաֆար Վարդանյան՝ 3-րդ վաշտի հրամանատար:
32. Հովսեփ Դանիելյան՝ կրտսեր սպա:
33. Հրաչյա Ավետիսյան՝ հեծյալ հարյուրյակի հրամանատար:
34. (անունն ընթեռնելի չէ) Սարգսյան՝ կրտսեր սպա:
35. Լևոն Մկրտումյան՝ ոչ շարային ծառայության պետ:
36. Սմբատ Դանիելյանց՝ ոչ շարային ծառայության պետի օգնական:
37. Երվանդ Տեր-Ջանյան՝ կրտսեր սպա:
38. Կարապետ Գյուգյուզյան՝ կրտսեր սպա:

IV դրուժինա
39. Դրուժինայի հրամանատար Քեռի:
40. Միքայել Արզումանյան՝ դրուժինայի հրամանատարի օգնական:
41. Սարգիս Շահնազարյան՝ դրուժինայի համհարզ:
42. Վաղարշակ Սարուխանբեկ՝ դրուժինայի զենքի վարիչ:
43. Շերամ Տեր-Անդրեասյան՝ 1-ին վաշտի հրամանատար (պարսկական բանակի կապիտան):
44. Սարգիս Նասկիդյան՝ կրտսեր սպա:
45. Ջալաթ Երվանդ Բաբերյան՝ 2-րդ վաշտի հրամանատար:
46. Խաչատուր Տեր-Կարապետյան՝ կրտսեր սպա:
47. Արամայիս Ազնավուրյան՝ 3-րդ վաշտի հրամանատար:
48. Ուսուլ Գրիգոր Դուրգարյան՝ կրտսեր սպա:
49. Համիկ Ջանջիլգարյան՝ կրտսեր սպա:
50. Արամ Սարգսյան՝ կրտսեր սպա:
51. Սեդրակ Անանյան՝ ոչ շարային ծառայության պետ:

52. Մկրտիչ Լոռեցյան՝ կրտսեր սպա:

53. դրուժինայի բժիշկ[1]:

Արարտյան գնդի շտաբի պետն էր Ս. Արարատյանը, իսկ մատակարարման պետը՝ ինժեներ Կոստանդին Համբարձումյանը[2]:

Գեներալ Պ. Օգանովսկու ապրիլի 11-ի N 30 հրամանով, II, III և IV խմբերը, ապրիլի 1-ից համարվում են իր ենթակայության ներքո գտնվող ստորաբաժանումներ[3]: Այսինքն՝ Արարատյան գնդի վերջնական կազմակերպման օրը համարվում է ապրիլի 1-ը: Այդ օրը Վարդանը պաշտոնապես ստանձնում է խմբի կամ գնդի հրամանատարությունը[4]:

Ապրիլի 5-ին դրուժինայի կազմը լրացվում են 24 կամավորով[5]: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբից ստացվում է 30 հազար ռուբլի կամավորների պարենի և ձիերի պահպանության և կերի համար[6]: Դրուժինա են գործուղվում երկու կրտսեր անասնաբույժեր՝ Ալեքսանդր Դեգտյարենկոն և Նիկիտա Սուպրունը[7]:

1915 թ. ապրիլի 15-ին Արարատյան գունդը Երևանից մեծ հանդիսավորությամբ շարժվեց ռազմաճակատ: Քանաքեռ գյուղի մոտ գեներալ Պ. Օգանովսկու հրամանով զորահանդես է կատարվում: Վարդանը վկայում է. «Ամբողջ Երևանը ոտքի վրա է: Բոլոր խանութները փակ են, ժողովուրդը կամավորական բանակը ճանապարհ է ձգում դեպի Երկիր, որտեղ իրենց եղբայրները և քույրերը, իրենց նմանները տանջվում, կոտորվում են, գնան օգնության, իրենց մարդկային սրբազան պարտքը կատարելու: Ժողովրդական հոծ բազմությունը ուղեկցում է շարժվող բանակին: Զանգվի (Հրազդանի – Ռ. Ս.) ափերի բարձրունքները լեցված են ժողովուրդով»[8]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 4–10: Բժշկի անունը և ազգանունն ընթեռնելի չէ:

[2] ***Шатирян Р.,*** Краткий очерк деятельности армянских добровольческих дружин 1914 – 1916 гг., "Армянский вестник", N 13, 26 марта 1917, с. 5.

[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 1:

[4] Նույն տեղում, թ. 6: ***Ավետիսյան Մ.,*** Էջեր հայկական կամավորական շարժման պատմությունից, ԲՀԱ, 2005, N 1, էջ 77:

[5] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 12:

[6] Նույն տեղում, թ. 14:

[7] Նույն տեղում, թ. 24:

[8] Նույն տեղում, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 89:

Երևանի Հայ կանանց կոմիտեն Դրոյի խմբին հանձնում է իրենց կողմից ասեղնագործված դրոշ: Վարդանը հավաքվածներին և մարտիկներին դիմում է հետևյալ ճառով. «Հայերի դարավոր ձգտումն է եղել ունենալ այնպիսի մի ուժ, որով կարողանա կռվել իրեն կեղեքողների դեմ, այդ ձգտումը ահա իրականանում, կազմակերպվում է»: Իր խոսքը Վարդանը եզրափակում է հետևյալով. «Մենք կմեռնենք, բայց կիրագործենք մեր վրա դրված պատգամավորությունը: Թո՛ղ հայ ժողովուրդը վստահ լինի այդ բանում»:

Վարդանից հետո ժողովրդին դիմում է Դրոն: Նա շնորհակալություն է հայտնում Երևանի հայ կանանց կոմիտեին՝ արված նվերի համար, ապա դիմելով մարտիկներին, ասում. «Մենք կռիվը կռվի համար սիրողներից չենք, մենք չենք գնում մեռնելու, այլ հաղթելու»[1]:

Արարատյան գնդին դիմում է դարալագյազցի քահանա Տեր-Գրիգորը: Նա օրհնեց կամավորներին նույն մաղթանքներով, ինչպես օրհնել էր Վարդանին իր զինակիցների հետ Խանասորի արշավանքի նախօրյակին:

Էջմիածնի հոգևոր սինոդի պրոկուրոր, պրոֆ. Պլետնյովը խոսեց հայ և ռուս ժողովուրդների համերաշխության մասին: Նա շեշտեց, որ ներկա պատերազմը չարիք լինելով հանդերձ, ունեցավ մի լավ կողմ՝ խորտակեց այն պատնեշը, որ բաժանում էր երկու ժողովուրդներին[2]:

Երևանից գունդը շարժվում է Էջմիածին: Հռչակավոր դերասան Հովհաննես Աբելյանը կառքով ուղեկցում է կամավորներին, որոնց դիմավորում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն, բոլոր հոգևորականները, քաղաքի և շրջակա գյուղերի բնակչությունը: Հանդիսավոր պատարագ է մատուցվում:

Վարդանը գրում է. «Գնում են կռվի դաշտ իրենց գերմարդկային սրբազան պարտքը կատարելու, զոհաբերելով իրենց կյանքը, օգնելու, փրկելու այնտեղ՝ բռնակալության իշխանության մեջ տանջվող, բռնաբարվող, սրախողող լինող, նահատակվող ժողովրդյան: Ո՞վ ասես չկար այդ բանակի (Արարատյան գնդի – Ռ. Ս.) մեջ: Հայ ժո-

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 53, թ. 3:
[2] Նույն տեղում, թ. 3:

ղովրդյան անխտիր բոլոր խավերից, բոլոր կուսակցություններից: Այդտեղ էին և հարուստների, բուրժուաների փափկասուն զավակները, որոնք թողնելով բոլոր հարմարությունները, նետվել էին զրկանքների դաշտը և մինչև վերջ պատվով, առանց տրտունջի, ուրախությամբ տանում էին բոլոր զոհաբերությունները: Հետագայում ես նկատեցի և հաճոյք էի զգում, երբ տեսնում էի, թե ինչպես են իրենց պահում այդ փափուկ ապրած հարուստների որդիները, ինչքա՜ն պարտաճանաչ էին իրենց պարտականությունների մեջ, ինչպես էին կատարում յուրաքանչյուր ամենավտանգավոր հրամանը»[1]:

Ապրիլի 15-ին Արարատյան գունդը մեծ հանդիսավորությամբ շարժվեց ռազմաճակատ: Գունդը գործելու էր գեներալ Ա. Նիկոլաևի Բայազետի ջոկատի կազմում[2]:

Ս. Վրացյանը վկայություն է. «Արարատեան դաշտի գիւղերի ժողովուրդը աղ ու հացով, խաչ ու խաչվառով էր դիմաւորում: Երևանից մինչև Իգդիր գունդը ցոյցերով անցաւ»[3]: Իգդիրի մոտ Հ. Աբելյանի գլխավորությամբ դերասանները պատրաստել էին հաղթական կամար՝ «Բարի ճանապարհ և հաղթական վերադարձ» մակագրությամբ[4]: Կ. Սասունին գնահատում է. *«Հայ ժողովուրդը, 1915-ի գարնան, կամաւորական շարժման բովին մէջ, գինւորական ազգ կը դառնար* (ընդգծումը հեղինակինն է՝ Ռ. Ս.)»[5]: Վարդանը հպարտությամբ արձանագրում է. «Ալեազարդ Մասիսը, որ դարերի ընթացքում շատ դեպքերի է վկա եղել, վկա եղավ և այս պատմական օրերին»[6]:

1915 թ. ապրիլի 17-ին Արարատյան գունդը Ղզըլդիզա գյուղում միանում է Բայազետի ջոկատին, իսկ ապրիլի 24-ին Բայազետի ջոկատը երեք զորասյուներով նախաձեռնում է Թափարիզի լեռնանցքի գրավումը[7]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 90:
[2] ***Корсун Н.,*** Алашкертская и Хамаданская операции, с. 39.
[3] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 1:
[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 90:
[5] ***Սասունի Կ.,*** Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 74:
[6] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 91:
[7] ***Корсун Н.,*** Алашкертская и Хамаданская операции, с. 39; Елисеев Ф. И., указ. соч., с. 85.

Ապրիլի 26-ին Բայազետի ջոկատը կարողանում է հաղթահարել Թափարիզի լեռնանցքը, որի համար մղած մարտերում Արարատյան գունդը ստացավ իր առաջին մարտական մկրտությունը: Ճանապարհին հանդիպում են թուրքերի կատարած գազանություններին՝ սպանված հայերի դիակների և ավերված բնակավայրերի[1]:

Վարդանն իր հուշերում գրում է. «Հիշում եմ մի սիրելի ուսանողի՝ Շաթիրյան Ռուբենին, որին ինչ պայմաններում էլ հարցնեի, թե ինչպե՞ս ես Ռուբեն, միշտ սիրալիր պատասխան կստանայի, թե լավ եմ: Այդտեղ էին հարուստներ Մելիքյանի, Դովլաթյանի, Ադամյանի և Հյուսիսային Կովկասցի Կրասիլնիկովի և ուրիշների որդիները»[2]:

Ապրիլի 17-ին Արարատյան գունդը Ղզըլդիգա գյուղում միանում է Բայազետի ջոկատին[3]:

Մարտիկների զգալի մասը տառապում է ծնային հիվանդությամբ: Ինչ որ կերպ դրա դեմ պայքարելու համար, գյուղացիների խորհրդով մոխիր էին շաղ տալիս կոպերին և դեմքին: Վերհիշում է Ս. Չենտիկյանը. «Ամենքնուս ալ երեսը այլանդակվեցավ, մանավանդ Պարոյրին (Լևոնյան – Ռ. Ս.) շեկ սպիտակ դիմագիծը այլանդակվեցավ»[4]:

Ապրիլի 28-ին Բայազետի ջոկատը շարունակում է առաջխաղացումը: Այն դժվարանում է ոչ այնքան թուրք-քրդական ուժերի դիմադրության, այլ կլիմայական ծանր պայմանների պատճառով: Հալչող ձյան հետևանքով վարարել էին գետերն ու գետակները: Ռուս

---

[1] Վարդանի վկայությամբ. «Մեր զինվորները շատ էին գրգռված այդ կոտորածներից և ճանապարհներին, եթե պատահում էին թշնամու կողմից մարդիկ, թեկուզ ընտանիքներ, չէին խնայում», տես ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 93:

[2] Նույն տեղում, թ. 90: Կամավորական շարժումը ոգևորում է նաև Մարտիրոս Սարյանին: Նրա կտավներից մեկը նվիրված էր կամավորներին և կոչվում էր «Զինվորներ», տես "Армянский вестник", Москва, 1916, N 5, 28 февраля.

[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 92: Վերջինս կազմված էր Էրիվանյան սահմանապահ հետևակ գումարտակից (չորս հետևակային և մեկ հեծյալ հարյուրյակներ), 1-ին հեծյալ մարտկոցից և Թերեքյան կազակային զորքի երկու գնդերից: Ապրիլի 17-ին Հայ կամավորների կարգադրիչ մարմինը հատուկ ազդով տեղեկացնում է հայրենակիցներին, որ Թիֆլիսում վերսկսվել է կամավորների անդամագրումը: Զինվորագրվողները պարտավոր են ներկայացնել առողջական վիճակի մասին բժշկական տեղեկանք, տես «Հորիզոն», 1915, N 85, 21 ապրիլի:

[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 14:

զինվորներն ու կամավորները հարկադրված էին գետանցումը կատարել մինչև գոտկատեղը հասնող սառը ջրի միջով:

Ապրիլի 30-ին Բայազետի ջոկատը մտնում է Բերկրիի կիրճը: Այստեղ կամավորները և կազակները կրկին ականատես են լինում թուրք–քրդական գազանություններին[1]:

Մայիսի 1-ին Արարատյան գունդ է ուղարկվում 66-րդ հետևակային գնդի ենթասպա Արսեն Շահմազյանը, որը ծառայության է անցնում IV խմբում[2]: Նույն օրը, թիվ 31 հրամանով Պ. Լևոնյանն ազատվում է II խմբի հրամանատարի համհարզի պաշտոնից քանի որ գործուղվում է կազմակերպվող Վանի նահանգապետությունում պաշտոնավարելու համար: Այս նշանակումը վկայում է այն մասին, որ փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը ցանկանում էր կազմակերպել Վանի նահանգապետությունը և համապատասխան անձանց առաջնացնում էր պաշտոնավարելու:

Ազատագրված Կործոտ գյուղում կամավորներն կրկին ականատես եղան թուրք և քուրդ ոճրագործների կողմից կատարած եղեռնագործությանը: Սպանվածների դիակները թափված էին ամենուր՝ գյուղի փողոցներում, տներում և եկեղեցում: Վերջինիս տանիքում հայտնաբերվում են սպանված երեխաների դիակներ: Նրանք, հավանաբար, փորձել էին այնտեղ թաքնվել, սակայն ջարդարարները նրանց գտել և սպանել էին[3]: Իսկ կամավորական Կ. Թարփողյանը իր հուշերում նկարագրում է ճանապարհին հանդիպած սարսափազդու տեսարաններից մեկը՝ ինչպես սպանված մայրերը շարունակում էին կրծքին սեղմած պահել իրենց երեխաներին, «այլանդակված մարդիկ, ոմանց ստինքները կտրած, ոմանց քիթն ու ականջները, ոմանց ձեռքն ու ոտքը և այլն այլանդակությունները...»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 15:

[2] Նույն տեղում, ֆ. 1457, ց. 2, գ. 50, թ. 48: 1915 թ. մայիսի 20-ի թիվ 50 հրամանով Ա. Շահմազյանը նշանակվում է IV խմբի II վաշտի հրամանատար, տե՛ս նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 81:

[3] ***Шатирян Р.,*** Краткий очерк деятельности армянских добровольческих дружин 1914–1916 гг., "Армянский вестник", 1917, N 13, 26 марта, с. 6. ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 57:

[4] Նույն տեղում, 402, ց. 1, գ. 15, թ. 11:

Հակոբ քահանա Սառիկյանի վկայությամբ, կամավորներին անհանգստացնում էին Վանից ստացվող տեղեկությունները[1]: Սակայն, Բերկրի Կալեում գեներալ Ա. Նիկոլաևը տեղեկացնում է, որ ջոկատն այլևս չի առաջանալու: Վարդանը վերհիշում է. «Անսպասելի և մեծ եղավ զարմանքս, երբ գեներալ Նիկոլաևը ինձ հայտարարեց, թե մեզ կարգադրված է Բերկրի Կալայում մնալ և առաջ չշարժվել՝ "Наша задача только до Беркрикале"[2]: Փաստորեն, ռուսները նպատակ չունեին օգնության հասնել պաշարված Վանին: Նշվածը հաստատում է Դ. Մարտիրոսյանը՝ վկայակոչելով ռուսական արխիվից հայտնաբերված մի շարք փաստաթղթեր: Նրա համոզմամբ՝ լրագրողների, պատմաբանների և պարզապես ժամանակակիցների ջանքերով, այդ իրադարձությունները վերածվել են առասպելի: Խորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ փոխարքան տեղեկանալով Վանի կռիվների մասին, հրամայել է շտապ օգնություն ուղարկել: Իրականում նման հրաման չի եղել[3]: Այդ դեպքում, ինչու՞ էր գեներալ Ա. Նիկոլաևի ջոկատը շարժվում Վանի ուղղությամբ:

---

[1] Առաջիններից մեկն այդ մասին ահազանգել էր Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը: 1915 թ. ապրիլի 17-ին կաթողիկոսին գրած նամակում նա հայտնում էր. «Եթե շուտափույթ օգնություն չհասցնեն ռուսական զորքերը, հայ կամավորները, Հայաստանի այդ մասերում բոլորովին հայ չի մնա», տե՛ս Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով. Կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան, Գոհար Ավագյան. Պատասխանատու խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, 2005, էջ 9:

[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 93: Ինչպես պնդում է գեներալ Ն. Կորսունը՝ գեներալ Ա. Նիկոլաևի Բայազետի ջոկատին հանձնարարված էր աջակցել Վան քաղաքի հայերին, տե՛ս ***Корсун Н.,*** Алашкертская и Хамаданская операции, с. 39. Կովկասյան հեծյալ դիվիզիայում ծառայող, հետագայում Խորհրդային Միության մարշալ, Ս. Մ. Բուդյոննին իր հուշերում թույլ է տալիս անճշտություն, գրելով, որ իրենց դիվիզիան ջախջախում է Վան քաղաքի թուրքական կայազորը, տե՛ս ***Буденный С. М.,*** Пройденный путь, Москва, 1959, с. 22.

[3] 2006 թ. պաշտպանած թեկնածուական ատենախոսությունում Դ. Մարտիրոսյանը հակառակն է պնդում. «Նրան (գեներալ Ա. Նիկոլաևին – Ռ. Ս.) առաջադրանք էր տրված աջակցել Վանի հայկական ապստամբությանը: Հաջողությամբ հարձակվելով, 1915 թ. մայիսի 6-ին Արարատյան ջոկատի զորամասերը գրավում են Վանը», տե՛ս ***Мартиросян Д.,*** Российско-турецкий фронт Первой мировой войны. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, 2006, с. 87 http://dilib.rsl.ru/load.php?path=/rsl01002000000/rsl 0100294800/rsl01002948516. pdf. Կարելի է ենթադրել, որ Դ.

Բայազետի ջոկատի առջև դրված էր այլ մարտական առաջադրանք՝ Թ. Նազարբեկյանի բրիգադի հետ միասին ջախջախել Դիլմանի ճակատամարտում պարտություն կրած և հապճեպ նահանջող գնդապետ Խալիլ բեյի դիվիզիային: Գեներալ Ա. Նիկոլաևին հրամայված էր փակել Խալիլ բեյի նահանջի ճանապարհը դեպի Վան: Միայն դրանով է բացատրվում Բայազետի ջոկատի առաջխաղացումը Վանի ուղղությամբ[1]: Ճեղքելով թուրք-քրդական պաշարումը, կամավորներին են հասնում Կայծակ Առաքելը, Տեղտրիկենց Թևոսը և Բերբերբաշյանը: Կայծակ Առաքելը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է պաշարված քաղաքի դրությունը[2]:

Վարդանը շտապ հրավիրում է դրուժինաների հրամանատարների խորհրդակցություն: Դրոն, Համազասպը և Քեռին միաբերան որոշում են օգնության հասնել օրհասական դրության մեջ գտնվող Վանի և նահանգի բնակչությանը: Վարդանը վկայում է. «Գնանք, Վարդան, ասաց Քեռին, պաշարվածների աչքը մեզ է մնում: Գնանք, ասացին Դրոն ու Համազասպը, ռուսները չեն ուզում, թող չգան»[3]:

Ֆ. Ելիսեևն իր հուշերում նմանապես հիշատակում է Վանից եկած սուրհանդակների մասին: Բայազետի ջոկատի, անմիջապես Վանի ուղղությամբ չշարժվելը, կազակը բացատրում է հետևյալով. «Հեծյալ գնդերը չէին կարող գիշերը շարժվել: Գիշերով հեծելազորին մոտենալ այդ մեծ, գրեթե եվրոպական քաղաքին, ինչպիսին հանդիսանում էր Վանը, վտանգավոր էր: Այդպես էին ասում շտաբերում»[4]:

---

Մարտիրոսյանը հիշատակած փաստաթղթերն ավելի ուշ է հայտնաբերել և դրել շրջանառության մեջ:

[1] Տե՛ս *Мартиросян Д.*, Ванская операция-эпизоды армянской и русской истории http://www.regnum.ru/news/1161786.html. Գեներալ Ե. Մասլովսկին նմանապես նշում է, որ Վանում տեղի ունեցող կռիվների մասին բանակի հրամանատարը տեղեկանում է 1915 թ. ապրիլի կեսերին և «հրամայում է անհրաժեշտ զորամասերն ուղարկել դեպի Վան՝ հայերին աջակցելու և նրանց ազատագրելու համար», տե՛ս *Масловский Е. В.*, указ. соч., с. 158.

[2] Տե՛ս *Шатирян Р.*, указ. статья, Армянский вестник, Москва, N 13, 26 марта 1917, с. 6, տե՛ս նաև Елисеев Ф. И., указ. соч., с. 94.

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 14, թ. 177:

[4] Տե՛ս *Елисеев Ф. И.*, указ. соч., с. 94.

Այնուամենայնիվ, Վարդանի հրամանով յուրաքանչյուր դրուժինայից առանձնացվում են 50-ական հեծյալ, ընդհանուր թվով 150 հոգի: Հեծելավաշտի հրամանատար է նշանակվում Խեչոն: Նրան է միանում կապիտան Վ. Օզոլը[1]: Հեծելավաշտը հանդիսանալու էր Արարատյան գնդի առաջապահը և հետախուզելու էր Վան տանող ճանապարհը: Նրա հետևից շարժվելու էր Արարատյան գունդը: Խեչոն հմտորեն վարում էր հետախուզական-առաջապահ հեծելավաշտի գործողությունները և մանրամասն զեկուցագրեր ուղարկում Վարդանին: Դա էր պատճառը, որ Արարատյան գունդը Վան հասավ առանց որևէ լուրջ ընդհարում ունենալով հակառակորդի հետ[2]:

Վարդանը գիտակցելով, որ իրենց ինքնագլուխ գործողությունը կարող է առաջացնել ռուսական հրամանատարության բացասական և նույնիսկ թշնամական վերաբերմունքը, այն մեղմելու համար այցելում է Բայազետի ջոկատի հրամանատար, գեներալ Ա. Նիկոլաևին և նրա շտաբի պետ գեներալ Շումիլինին: Նա հետևյալ կերպ է հիմնավորում իրենց որոշումը. «Ձերդ Մեծություն՛: Մենք գնում ենք առաջ: Հայ ժողովուրդը ռուսաց զենքի, ոյժի կարիքը մինչև այժմ այնքան չի զգացել, ինչպես ներկայիս: Մի օր շուտ կհասնենք Վան՝ կփրկենք ժողովրդին, մի օր ուշ կհասնենք՝ կոտորված ժողովրդին կթաղենք: Մենք առաջ գնալով՝ հեռախոսի կապը կպահպանեմ Ձեզ հետ, միշտ Ձեզ իրազեկ կպահեմ ճանապարհին պատահած կռիվների մասին, ես հույս ունեմ, որ եթե մեծ ոյժերի հանդիպենք և Ձեր օգնության կարիքը զգանք՝ չեք մերժի մեզ օգնության հասնել»: Սորան պատասխան ստացա, թե «Կաշխատեմ»[3]:

Արարատյան գնդին, ետ չպահեցին արգելքներն ու դժվարությունները, հակառակորդի վերաբերյալ հետախուզական տեղեկութ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 1: Տ. Դևոյանը ջերմությամբ է հիշում ազգությամբ լատիշ սպա Վ. Օզոլին: Նա բարյացակամ էր տրամադրված հայերի նկատմամբ և զգալի օժանդակություն է ցուցաբերում հայ կամավորներին ու գաղթականներին: Վ. Օզոլին տեղափոխում են Արևմտյան ռազմաճակատ, քանի որ Վանում համարձակվել էր առաջարկել խմել «հայ ազատատենչ ժողովրդի եւ անկախ Հայաստանի կենացը», տե՛ս *Դեոյեանց Տ.,* Հետախոյզի մը յուշերը, Վեմ, Փարիզ, 1938, թիւ 2, էջ 51:

[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 46:

[3] Նույն տեղում, ց. 2, գ. 10, թ. 93 շրջ.-94:

յունների սակավ լինելը: Ինչպես նշում է Ֆ. Ելիսեևը, կամավորները շարժվեցին «Ավետյաց քաղաք»՝ Վան: Բացի մի քանի աննշան բախումներից, գունդը որևէ լուրջ դիմադրության չհանդիպեց և առանց կորուստների հասավ Ջանիկ:

Մեծագույն զգուշությամբ Արարատյան գունդը հետևում էր Խեչոյի հեծելավաշտին: Վարդանն անընդհատ աջ և ձախ թևերը հետախույզներ էր ուղարկում: Բացի մի քանի աննշան բախումներից, գունդը որևէ լուրջ դիմադրության չհանդիպեց և առանց կորուստների հասնում է Ջանիկ: Ինչպես նա գրում է հուշերում. «Եվ գնում եմ և վախենում, չլինի թե հանկարծ հանդիպենք կանոնավոր զորքի, թնդանոթների, գնդացիրների, թվով էլ գերազանց ոյժի, խայտառակ դրություն կստեղծվի»[1]:

Կամավորական Ռ. Շաթիրյանի վկայության համաձայն, հետախուզությունը զեկուցում է Վանից երևացող հրդեհի մասին: Հետախույզները սխալմամբ կարծում են, որ հրդեհվել են քաղաքի հայկական թաղամասերը և դրանից եզրակացնում են, որ հայերը հանձնվել են: Սակայն, կարճ ժամանակ անց պարզվում է, որ թուրքերը հրդեհել են միայն արվարձանների տները, իսկ թաղամասերը շարունակում են դիմադրությունը[2]:

Փաստորեն, Արարատյան գունդը Բայազետի ջոկատի հիմնական ուժերից առաջ էր անցել 40 վերստ (մոտ 43 կիլոմետր)[3] և գրավել Վանա լճի արևելյան ափին գտնվող Ջանիկը: Ա. Նիկոլաևը տեղեկանալով Ջանիկի գրավման մասին, ինքը ևս շտապում է այնտեղ[4]: 1915 թ. մայիսի 5-ի երեկոյան Խեչոյի հեծելավաշտը հասնում է Վան: Նրանց դիմավորում է Արամը[5]: 1915 թ. մայիսի 6-ին, առա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 94:

[2] ***Шатирян Р.,*** указ. ст., N 13, 26 марта 1917, с. 6.

[3] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 19:

[4] Նույն տեղում, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 93–94:

[5] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 57 շրջ.: Ս. Մ. Ստեփանյանցն իր հոդվածում նշում է, որ ապրիլի 5-ին ռուսական հետախուզական ջոկատը և հայ կամավորները ռուս սպա Օզոլի և Խեչոյի հրամանատարությամբ մտնում են Վան: Հեղինակը սխալվում է երկու դեպքում էլ: Ինչպես տեսանք, Վլ. Օզոլը «կամավոր» միացավ Խեչոյի հեծելավաշտին և բացի այդ, առաջապահ ջոկատը Վան է հասնում ոչ թե ապրիլի, այլ մայիսի 5-ին, տե՛ս ***Степанянц С. М.,*** Сопротивление армян геноциду в годы Первой мировой войны, Новая и новейшая история,

վոտյան ժամը 6-ին, քաղաք են մտնում II, իսկ ժամը 12-ին՝ IV խմբերը, ապա Բայազետի ջոկատի հիմնական ուժերը: Վանեցիներն ազատարարներին ջերմ ընդունելություն են ցույց տալիս[1]:

Վարդանը հետևյալն է հիշում. «Երբ քաղաք էինք մտնում, Արամը ձի նստած մեզ դիմավորելու եկավ: Հենց ձիու վրա գրկախառնվեցինք, ես նոցա առաջուց գիտեի և ճանաչում էի»[2]:

Գեներալ Ա. Նիկոլաևը խնդրում է, որպեսզի բերեն Վան քաղաքի բանալիները, որպեսզի դրանք ուղարկի Կովկաս՝ բարձրագույն ղեկավարությանը[3]: Եվ ինչպես վկայում է Վարդանը. «Արամն էլ մի քանի մեծ բանալիներ ժողովելով քաղաքացիներից, որպես բերդի բանալիներ՝ հանձնեց Նիկոլաևին, նա էլ յուր հերթին այդ մի խուրձ բանալիները որպես հաղթության նշան, ուղարկեց կովկասյան զինվորական իշխանության: Բերդը բանալիներ չուներ, որ տրվեր Նիկոլաևին»[4]:

Ռուս սպաներին հիացրել էին Այգեստանի պաշտպանական ամրությունները, որոնք կառուցվել էին ռազմական ճարտարագիտության բոլոր կանոնների համաձայն: Խորունժի Ֆ. Ի. Ելիսեևը վկայում է. «Հայկական այգիների եզրերն ամբողջությամբ պաշտպանված էին մարդահասակ խրմատներով, հրակնատներով և խրամուղինե-

---

Москва, N 1, 2007, с. 224. Այս հեղինակին հատուկ է նաև այլ սխալ: Իր համահեղինակից Ա. Ս. Պուշկարյովի հետ գրած հոդվածում՝ արևմտահայերին կոչել են «հիմգերորդ շարասյուն», որի պատճառով էլ թուրքերը կոտորել են հայերին, տե՛ս *Пушкарев А. С., Степанянц С. М.,* Помощь россиийских благотворительных организаций армянам–жертвам геноцида в годы I мировой войны. Научные ведомости Белгородского государственного Университета. Серия "История. Политология. Экономика". Белгород, 2008, N 5, Вып., 7, с. 42–45, http://dspace. bsu. edu. ru/bitstream/1234567 89/631/1/Pushkarev% 20A.S.% 20Help%20from %20russian. pdf

[1] Վարդանն իր հուշերում խոստովանում է, որ այդ պահին ինքն աննկարագրելի հրճվանք ապրեց: Նա վկայում է. «Երբ քաղաքի պաշտպան զինվորների միջից անցնում էինք, ես երեխայի պես արտասվեցի, չկարողացա ոչ մի ուրախության խոսք ասել և միայն երբ մի քիչ հեռացա, Կոստյա Համբարձումյանին հետ ուղարկեցի զինվորներին հայտնելու իմ անսահման ուրախությունը և շնորհակալությունը, որ վերջապես ժողովրդին փրկված գտանք: Կյանքիս մեջ ես ինձ այդ օրը երջանիկ համարեցի», տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 1 շրջ.-2:

[2] Նույն տեղում, թ. 2:

[3] *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 13, 26 марта, с. 6.

[4] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 4:

րով: Ամեն ինչ կառուցված էր ռազմական գիտության կանոններով»[1]:

Վանեցիները ռուսական հրամանատարությանն են հանձնում թուրքերի լքած ողորկափող թնդանոթները, մոտ երեք հազար փութ վառոդ, տարբեր տեսակի զենք և այլն[2]:

Բայազետի ջոկատի հրամանատարության պատվին հանդիսավոր ճաշկերույթ է տրվում: Վերջինիս ժամանակ ճառով հանդես է գալիս Ա. Մանուկյանը և վերջում խնդրում է գեներալ Ա. Նիկոլաևից, կայսր Նիկոլայ II-ի անունով հեռագիր ուղարկել: Արամի ճառը թարգմանում էր Դրոն: Արամը Վասպուրականի հայության անունից խնդրում էր թույլատրել ընդունել ռուսական հպատակություն[3]:

Գեներալ Ն. Գ. Կորսունը առանձնացնում է Վան քաղաքի ռազմավարական դիրքը: Քաղաքը գտնվում էր Վանից Պարսկաստան տանող ճանապարհների հանգույցում, որտեղ գործում էր Ադրբեջանական ջոկատը: Նշված հանգույցից հարավ բնակվում էին ռուսների նկատմամբ բարեկամաբար տրամադրված ասորիները, որոնք ծանր մարտեր էին մղում թուրքերի և քրդերի դեմ: Վանով էր անցնում Բիթլիս տանող ճանապարհը: Միաժամանակ հնարավորություն էր ստեղծվում Վանից զորքեր տեղափոխել Միջագետք: Եվ ինչպես փաստում է Ն. Կորսունը, Վանի գրավումը «շատ ծանր դրության մեջ էր դնում Խալիլ բեյի թուրքական զորքերի խմբավորմանը, որը գործում էր Ֆ. Չեռնոզուբովի Ադրբեջանական ջոկատի դեմ այն առումով, որ այդ խմբավորման հաղորդակցության լավագույն ուղին անցնում էր հենց Վանով»[4]:

Կարճ ժամանակով Վանում բանակելուց հետո, Բայազետի ջոկատի զորամասերը, որոնց թվում հայկական խմբերը, շարունակում են մարտական գործողությունները: 1915 թ. մայիսի 5-ին III դրուժինան գրավեց Ալյուր, II-ը՝ Գյասպենդ, իսկ IV-ը՝ Փիրղարիբ գյուղերը: Նույն օրը III դրուժինան ծանր մարտեր է մղում Կասիմ օղլի գյուղի

---

[1] *Елисеев Ф. И.,* указ. соч., с. 99.
[2] *А-Т-ь,* указ. статья, "Военный сборник", 1917, N 1, с. 144.
[3] *Елисеев Ф. И.,* указ. соч., с. 99.
[4] *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, с. 39.

մոտ, ուր կենտրոնացել էին հակառակորդի զգալի ուժեր՝ մոտ երկու հազար, որոնք ծանր կորուստներ կրելով՝ փախուստի են դիմում[1]:

Դրոյի դրուժինան հաղթահարելով տեղանքի բարդ ռելիեֆը և մինչև ծնկները հասնող ձյունը, հասնում է Շատախ և փրկում մեկ ամսից ավելի անհավասար մարտեր մղող տեղի հայությանը[2]: Վանում Ա. Նիկոլաևն իր ջոկատի կազմից առանձնացնում է II, III և IV դրուժինաները, որոնք սկսեցին առաջանալ Վանա լճի հարավային ափով: Այստեղ կամավորները կարողանում են հակառակորդից գրավել շոգենավակ, որն օգտագործվեց անհրաժեշտ իրեր, զենք և զինամթերք փոխադրելու համար[3]:

Ինչպես հուշագրում է Կովկասյան 2-րդ հրածգային բրիգադի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը, մինչև Վան հասնելը I դրուժինան ծանր մարտեր է մղում: Մայիսի 16-ի մարտական գործողությանն ականատես է եղել Ադրբեջանական ջոկատում գտնվող ամերիկյան Ասոշեյթեդ Փրես լրատվական գործակալության թղթակից Դ. Բ. Մաքգոան (D. B. Macgowan)[4]: Նրա գնահատմամբ, այդ մարտում առավել աչքի ընկան պլաստունները, երկրորդն իրենց մարտական հատկություններով և քաջությամբ կամավորներն էին, իսկ երրորդը՝ հրածիգները: Թ. Նազարբեկյանը պարզաբանում է թղթակցի նման տպավորության իրական պատճառը: Դա պլաստունների առաջին մարտն էր, հրածիգները հոգնել էին երկարատև մարտերից, իսկ հայերը կռվում էին գիտակցաբար[5]: Ամերիկացի թղթակցի վկայությամբ, գեներալ Ի. Տրուխինը «հաճախ էր գովում իր քաջարի և կարող հայկական ջոկատներին»[6]:

Հայկական չորս խմբերին հանձնարարված էր պաշտպանական դիրքեր գրավել Մոկսում և Շատախում[7]: Մոկսի հայությունը

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 32, թ. 46:
[2] Ա. Հարությունյանի գնահատմամբ, Դրոն գերազանց կատարեց մարտական առաջադրանքները, տե՛ս *Арутюнян А. О.*, указ. соч., с. 300.
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 4 շրջ.:
[4] ***Ussher C. D., Knapp G.H.,*** An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, p. 293.
[5] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 4, թ. 7:
[6] ***Ussher C. D., Knapp G. H.,*** op. cit., p. 293.
[7] Տե՛ս *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, с. 56.

փրկվում է շնորհիվ Մուրթուլլա բեյի պաշտպանության: Սակայն Վանը գրավելուց հետո քուրդ ցեղապետն ու իր ցեղակիցները հեռանում են[1]:

Մայիսի 23-ին մղած կռիվների ժամանակ IV դրուժինայից սպանվում են վեց մարտիկ և վիրավորվում է մեկ հոգի[2]:

1915 թ. հունիսի սկզբին Վանում կազմավորվում է գեներալ Իվան Տրուխինի ջոկատը, որը բաղկացած էր Երևանյան սահմանապահ գումարտակից, Ջաբայկալյան II առանձին կազակային բրիգադի 12 հարյուրյակից, Կովկասյան լեռնահեծելազորային մարտկոցից, Արարատյան և I դրուժինաներից[3]:

Միավորումից հետո դրուժինաների ընդհանուր մարտակազմը հասավ 5500 հոգու[4]: Ի. Տրուխինի ջոկատը շարժվելով Վանի հարավային ափով մոտենում է Ուռքափ և Կոտոմ գյուղերին: Հունիսի 12-ից 17-ը ջոկատը համառ մարտերից հետո գրավում է Զևին գյուղը[5]:

Գ. Ղորղանյանը նշում է. «Այսպէսով յունիս 13-ին ռուսական ճակատի գիծը Վանի լիճէն դէպի հարաւ կ'անցնէր Նորքսէն, Մոկսէն և Շատախէն ու դիտելի էր, որ այդ գիծը գրաւուած էր բացառապէս հայ մարտիկներու և տեղացի հայ կամաւորներու կողմէն»[6]:

Հուլիսի 6-ին Դատվանի համար մղած մարտում զոհվում է Արարատյան գնդի հրամանատարի օգնական Դաշնակցական Խեչոն[7]: III

---

[1] 1917 թ. նոյեմբերի 27-ի ռուսական հակահետախուզության կազմած զեկույցում Մուրթուլլա բեյը հիշատակվում է որպես հակառակորդի կողմն անցած և ռուսական զորքերի դեմ կռվող քուրդ ցեղապետ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 6:

[2] Նույն տեղում, գ. 50, թ. 83:

[3] ***Корсун Н.,*** Армянская и Хамаданская операции, с. 61, 69. Ինչպես նշում է Աշոտ Հարությունյանը, սա միակ դեպքն էր, երբ կամավորական դրուժինաները միավորվեցին: Հետագայում, սակայն ռուսական հրամանատարությունը նախընտրեց նրանց կրկին առանձնացնել «հավանաբար քաղաքական դրդապատճառներով», տե՛ս ***Арутюнян А. О.,*** указ. соч., с. 318–319.

[4] ***Նազարյան Ա. Ս.,*** նշվ. աշխ., էջ 52:

[5] ***Масловский Е. В.,*** указ. соч., с. 170.

[6] ***Ղորղանեան Գ.,*** նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 76:

[7] Գ. Նժդեհը վերհիշում է, որ Քեռին շատ ծանր տարավ Խեչոյի զոհվելու լուրը: Աղթամար կղզում եղած ժամանակ, այդ քչախոս մարդը հանկարծ ազատություն տվեց իր զգացմունքներին, ասելով, թե Խեչոն «առանց ինձ ինչպե՞ս է դադարել (այդպես է գրքում – Ռ. Ս.) գերեզմանոցում...Մենք չափազանց ուժեղ էինք

III խումբը տալիս է հինգ զոհ[1]: Ինչպես նկատել է Ս. Վրացյանը, «Խեչօի մահը, կարծես, խորհրդանիշ եղաւ: Նրանից հետո մենք ուրախ օրեր չտեսանք»[2]:

1915 թ. հունիսի 23-ին ժնև ուղարկած նամակում Ռոստոմը բարձր է գնահատում կամավորների մարտական ունակությունները: Նա գրում է. «Զինուորները լաւ են: Անպայման քաջ են, մանաւանդ յարձակողական կռիւներում: Գրոհի են գնում քիչ թուով, բազմաթիւ եւ լաւ դիրքերում ամրացած թշնամու դէմ, նոյնիսկ երբ թշնամին կանոնաւոր զինուորներ են»[3]: Ռոստոմը միայն դժգոհում է, որ կամավորներն անկարգապահ են, երբեմն չեն ենթարկվում զինվորական կարգապահությանը[4]:

Վարդանի հուլիսի 10-ի թիվ 110 հրամանի համաձայն, Արարատյան ջոկատի ավագ համիարզ է նշանակվում Նիկոլ Աղբալյանը[5]:

Ռուսական հրամանատարությունը նախատեսում էր գրավել Բիթլիսը: Մինչև քաղաք մնում էր չորս ժամվա ճանապարհ: Գեներալ Ի. Տրուխինին իր ջոկատից առանձնացրեց Հայկական I և II դրուժինաները, Չիտայի կազակային գունդը զորային ավագ Վասիլևի ընդհանուր հրամանատարությամբ: Ստորաբաժանմանը հանձնարարվում է առաջանալ Մշո դաշտ՝ Վարդենիս գյուղը[6]: Հնարավորություն էր ստեղծվում Մուշի և գավառի, ինչպես նաև Սասունի հայությանը փրկել զանգվածային ջարդերից: Սակայն, 1915 թ. հուլիսի 11-ին անսպասելի ստացվում է նահանջի հրամանը[7]:

Կարծում ենք, որ Մուշի գրավումն իրական էր, քանի որ օսմանյան հրամանատարությունը չուներ զգալի ուժեր: Ինչ վերաբերում է քրդերին, ապա Սարիղամիշի ճակատամարտի օրինակն ակնառու

---

սիրում միմյանց, որ կարողանայինք անջատ ապրել ու մեռնել», տե՛ս *Սժդեհ Գարեգին*, Երկեր, երկու հատորով, հատոր 1, Երևան, 2002, էջ 12:

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 109:

[2] «Հորիզոն», 1916, N 2, 3 յունուարի:

[3] *Ռոստոմ*. Նամականի, էջ 627:

[4] Նույն տեղում:

[5] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 111:

[6] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 536, թ. 34:

[7] Անդրանիկը նահանջի հրամանը ստանում է հուլիսի 13-ին, տե՛ս Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914–1917. Օրագրուած զօրավարին թիկնապահ զինուորէն, Երևան, 2000, էջ 34:

ցույց տվեց, որ նրանք ռուսական զորքերի մարտական հաջողությունից հետո գերադասում էին լքել ռազմաթատերաբեմը, հեռանալ լեռներ և սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը: Իսկ այդ ժամանակ Տարոնում բարենպաստ պահ էր ստեղծվել: 1915 թ. մայիսի վերջից մինչև հունիսի 12-ը հայ ինքնապաշտպանական ուժերը Մուշ-Սասունում մարտեր մղելով թուրքական զորքի դեմ կարողացել էին զգալի կորուստներ պատճառել: Հավանաբար, Վանի գրավումը և ռուսական զորքերի առաջխաղացումը խուճապի է մատնում օսմանյան իշխանություններին: Նրանք ենթադրում են, որ ռուսները կշարունակեն հարձակումը, ուստի սկսում են դուրս բերել Մուշից արխիվը, պարենը, զինամթերքը և այլն[1]: Այսպիսով, բացառիկ հնարավորություն էր ստեղծվում գրավել Մուշը և փրկել քաղաքի և դաշտավայրի, նաև Սասունի հայ բնակչությանը, որը սակայն չիրականացվեց: Գեներալ Պ. Օգանովսկու ունեցած տվյալների համաձայն, հակառակորդն իր կորպուսի դեմ կենտրոնացրել էր 70 հազար զինվոր և սպա: Նա ենթադրելով, որ ի վիճակի չի լինելու դիմագրավել թուրքական գերակշիռ ուժերին, որոշում է նահանջել[2]: Նման հիմնավորմամբ է բացատրվում կորպուսի նահանջը:

Նահանջի հրամանը փաստորեն կազմալուծում է հայ կամավորական ջոկատները: Թ. Նազարբեկյանն իր հուշերում վկայում է, որ կամավորներին խորապես վշտացրել էր նահանջի հրամանը: Նա նշում է. «7-րդ գնդից հետո եկավ Հայկական 2-րդ դրուժինան բավականին կարգին վիճակում: Այստեղ ես առաջին անգամ տեսա Դրոյին, որն իր եռանդով ինձ վրա լավ տպավորություն թողեց: 2-րդ դրուժինայից հետո եկավ Անդրանիկի 1-ին դրուժինան ոչ այնքան կարգին վիճակում: Մարդիկ շատ ճնշված էին: Դա հասկանալի էր: 1-ին դրուժինայի կազմը գլխավորապես Մշո դաշտից էր»[3]:

Ինչպես նշում է Ա. Հարությունյանը, նահանջի ժամանակ փախստականների մի մեծ խումբ ընկնում է թշնամու կազմակերպած թակարդը, «Սակայն 2-րդ դրուժինայի հմուտ գործողությունների և օգնության հասած ռուսական զորամասերի շնորհիվ, չափազանց

[1] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 536, թ. 20:
[2] Տե՛ս *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, с. 105.
[3] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, թ. 147 և շրջ.:

ծանր պայմաններում հնարավոր եղավ փրկել փախստականներին...»[1]: Նահանջը տեղի էր ունենում անկազմակերպ և շատ անկանոն, քանի որ բոլորին համակել էր խուճապը:

Իր հերթին գեներալ Թ. Նազարբեկյանը, տեղեկանալով նահանջի մասին, խիստ տարակուսում է նման հրամանի նպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, նա ստիպված է լինում ենթարկվել: Ռուսական զորամասերի նահանջն անիմաստ, ավելի ստույգ, հանցավոր գործողություն էր: Պ. Օգանովսկու հրամանն արժանանում է Ի. Վորոնցով-Դաշկովի խիստ քննադատությանը: Կորպուսի հրամանատարին ուղղված հեռագրում փոխարքան առաջարկեց հեռացնել այն հրամանատարներին, որոնք չեն համապատասխանում իրենց զբաղեցրած պաշտոններին[2]: Օսմանյան 70 հազարանոց զորքի հայտնվելը ռուս-թուրքական ռազմաճակատում անհնար էր, քանի որ հակառակորդի հրամանատարության ողջ ուշադրությունը կենտրոնացված էր նեղուցների շրջանում բրիտանաֆրանսիական դեսանտային ուժերի դեմ պայքարին: Նշված թվաքանակը՝ 70 հազար, կրկնում է նաև Դ. Մարտիրոսյանը[3]:

Թ. Նազարբեկյանն իր հուշերում կարևոր փաստ է հաղորդում այդ «գերակշիռ» ուժերի մասին: Նա գրում է. «Ջոկատի շտաբ կապի համար գործուղվել էր Լաբինսկյան կազ(ակային – Ռ. Ս.) գնդի խորունժի (ազգանունը չեմ հիշում): Նա հետագայում իմ շտաբի սպաներին պատմել է, երբ Մուշի դաշտից (1915 թ. – Ռ. Ս.) հուլիսի 9-ին Լաբինսկյան գնդի հրամանատարն ինձ համար զեկուցագիր էր պատրաստում՝ դիմեց սպաներին և ասաց, որ պետք է հարկադրել գեներալ Թ. Նազարբեկյանին նահանջել: Հարցրեց, թե որքան թռչուն կա ծառի վրա: Ինչ որ մեկը հաշվեց և ասաց՝ 12: Դե այդպես էլ զեկուցեք, որ Մշո դաշտից հարձակվում են 12 թաբուրներ (գումարտակներ – Ռ. Ս.)»[4]: Օսմանյան զորքի այս թվաքանակն առ այսօր օգտագործվում է ռուսական պատմագրության մեջ՝ որպես արդա-

---

[1] Տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 301.
[2] Տե՛ս *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, с. 121–122.
[3] *Мартиросян Д.,* Российско-турецкий фронт Первой мировой войны, с. 95–96; *Шишов А. В.,* Полководцы Кавказских войн, Москва, 2001, с. 527.
[4] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 48 շրջ.-49:

րացում 1915 թ. հուլիսի 11-ի անիմաստ և հանցավոր նահանջի: Թ. Նազարբեկյանը նահանջի հրամանը համարում է անիմաստ և հանցավոր[1]:

Նահանջը կարող է ունենալ երկու պատճառ.

1. Դրդել հակառակորդին խորանալ արդեն իր իսկ կողմից ավերված, պարենից և անասնակերից գրեթե զուրկ շրջանը և ապա անակնկալ հարձակումով ջախջախել նրան:
2. Վերջ տալ Վանում օրըստօրե ամրապնդվող և թափ առնող հայկական ինքնավարությանը, որն առաջացնում էր ռուսական հետադեմ շրջանների ոչ թե դժգոհությունը, այլ բացահայտ ատելությունը:

Հուլիսի 20-ին Թ. Նազարբեկյանն իր զորամասով նահանջում է Առնիս գյուղից: Նա առանձնացնում է մեկ գումարտակ, հայկական I և II դրուժինաները և հրետանային մեկ մարտկոց, հրամայելով նրանց մնալ Առնիսում այնքան ժամանակ, մինչև որ Արճեշի շրջանի և Վանի փախստականները չանցնեն Բերկրի Կալեն[2]: Սակայն ուժերն անբավարար էին գաղթականներին պաշտպանելու համար: Բերկրի Կալեում փախստականները հարձակման են ենթարկվում քրդերի և թուրքերի կողմից[3]: Ք. Աշըրի վկայությամբ «Հայրերը և մայրերը սպանում էին իրենց երեխաներին, որպեսզի նրանց փրկեն թուրքերից»[4]:

1915 թ. հոկտեմբերի 29-ին կազմված գրությունում, որն ուղղված էր Կովկասի նորանշանակ փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ն. Ռոմանովին, Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Ա. Խատիսյանը և Ս. Հարությունյանը ռուսական իշխանությունների ուշադրությունը կենտրոնացնում են այն հանգամանքի վրա, որ հուլիսյան նահանջը որևէ ռազմական հիմք չուներ: Բացի այդ, ռուսական հրամանատարությունը որևէ քայլ չի կատարում նահանջող բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Իսկ դրա համար կային բոլոր հնարավորությունները և միջոցները: Ձենք

---

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 5, թ. 25:
[2] Նույն տեղում, գ. 3, թ. 24:
[3] Նույն տեղում, ֆ. 402, ց. 1, գ. 22, թ. 40 :
[4] Տե՛ս ***Ussher Clarence. D., Knapp Grace H.,*** op. cit ., p. 311.

և զինամթերք տրամադրելու դեպքում չէին լինի ահռելի զոհեր, որոնք վանեցիները տվեցին նահանջի ժամանակ[1]:

Ռ. Շաթիրյանի կարծիքով նահանջի պատասխանատվությունը կրում է հատկապես գեներալ Դ. Աբացիևը: Կամավորականի գնահատմամբ, անկազմակերպ և հապճեպ նահանջի հետևանքով զոհվում են 50 հազարից ավելի հայ[2]: Կարծում ենք, որ նշված թվաքանակը չափազանցված է: Զոհերի թիվը տատանվում է 10 հազարից[3] մինչև 40 հազար[4]: Ռուսական հրամանատարությունը որևէ հետաքննություն չի կատարում նահանջի իրական պատճառները պարզելու համար: Հրամանատարները շարունակում են զբաղեցնել իրենց պաշտոնները: Միայն Պ. Օգանովսկին 1915 թ. հոկտեմբերին տեղափոխվում է ռուս-ավստրիական ռազմաճակատ:

Կ. Թարփողյանի հուշերի համաձայն, նահանջի հրամանը տրվել է Գլխավոր գերագույն հրամանատար, գեներալ Ն. Ռոմանովի կողմից: Ըստ կամավորականի՝ «Նահանջի մասին պատմում էին, որ իբր թե (հայերը – Ռ. Ս.) հայկական դրոշակ էին բարձրացրել Վանի բերդի վրա, որի մասին հաղորդել էին Նիկոլա Նիկոլաևիչին (Ն. Ռոմանովին – Ռ. Ս.) և վերջինս էլ հայերին բնաջնջելու համար Հայաստանն առանց հայերի ահավոր ծրագիրն էր իրագործում»[5]:

Հայտնի է նաև նահանջի մասին Անդրանիկի գնահատականը: Նա գտնում է. «Այս նահանջը կատարեալ կեղծիք մըն է, դուք (ռուսական իշխանությունները – Ռ. Ս.) կ'ուզէք որ Հայաստանը առանց Հայու մնայ, ահա ձեր մտապատկերը»[6]: Անդրանիկի համոզմամբ, կարելի էր օգտագործել շրջակա լեռները, որոնք հնարավորություն կտային հաջողությամբ դիմագրավել հակառակորդին: Սակայն,

---

[1] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 29:
[2] *Արզումանյան Մ.,* Հայաստան. 1914-1917, Երևան, 1969, էջ 275:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 21 շրջ.:
[4] Ամերիկացի միսիոներները մեկ տարի անց լինելով Բերկրիի կիրճում, հաշվել էին մոտ յոթ հազար մարդկային կմախքներ, տե՛ս ***Ussher Clarence. D., Knapp Grace H.,*** op. cit ., p. 312.
[5] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 15, թ. 2:
[6] Տե՛ս Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 35:

նշանավոր հայդուկի բազմամյա մարտական փորձը և կարծիքը հաշվի չի առնվում[1]:

Մ. Արզումանյանի կարծիքով, հուլիսյան «աղետի գլխավոր հանցագործը ռուսական ցարիզմն էր, որի ռեակցիոն հրամանատարությունը ժողովրդին մատնեց ահավոր զրկանքների ու կորուստների»[2]:

Հետագայում Հ. քահանա Սառիկյանը Վարդանից խնդրում է պարզաբանել 1915 թ. Վանի հուլիսյան նահանջի պատճառները: Վարդանը վկայակոչում է կապիտան Վլ. Օզոլին: Նա դեռևս Իգդիրում նախազգուշացրել էր Վարդանին, որ ռուսական զորքերն «անշուշտ կգրավեն Վանը, բայց ի նկատի ունեցիր, որ նրանք այնտեղ երկար չեն մնալու, նահանջելու են, ուրեմն տեղական ազգաբնակչության պաշտպանության հոգսը Ձեզ վրա է մնալու, աշխատեցեք որքան կարելի է, Ձեզ ապահովել թնդանոթներով և ռազմամթերքով»[3]:

Վանի նահանջի մեջ ամբաստանվում էր նաև IV բանակային կորպուսի հետախուզական ծառայության աշխատակից Տ. Դևոյանը: Նա 1919 թ. Երևանում ՀՅԴ Դատական մարմնին ներկայացրած բացատրություններում հերքում է իր դեմ ներկայացված ամբաստանությունները: Ինչպես նշում է Տ. Դևոյանը, համադրելով և վերլուծելով ստացված հետախուզական տեղեկությունները, հանգել է այն եզրակացության, որ կորպուսի դեմ գործել են հակառակորդի 24200-ի հասնող ուժեր[4]:

Տ. Դևոյանի ամբաստանության «հեղինակը» Պ. Օգանովսկին էր: Նա Վ. Փափազյանի և Ռ. Տեր-Մինասյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ իբր կատակով «մեղադրել» է Տ. Դևոյանին, որից հե-

---

[1] Տե՛ս Ձօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 35:

[2] *Արզումանյան Մ.,* Հայաստան, էջ 283:

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 11, թ. 177:

[4] Նույն տեղում, թ. 14 շրջ.: Տ. Դևոյանը հավատ չի ընծայել Ռուբենի և Կոմսի 1915 թ. հունիսի 6-ի գաղտնի նամակին, ուր նրանք չափազանցված են ներկայացրել էին I բանակային կորպուսի դեմ եղած թուրքական ուժերը, տե՛ս *Միրզոյան Ա.,* էջեր արևմտահայ գործիչների և հայ կամավորների հրամանատարության 1915 թ. նամակագրությունից, ԲՀԱ, 2006, N 1, էջ 66–73, տե՛ս նաև *Վիրաբյան Վ. Հ.,* Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ, ԼՀԳ, 2011, N 1–2, էջ 325–330:

տո նշված փաստը տարածվել է, որ Դևոյանն է եղել այդ նահանջի պատճառը: Հետագայում այդ տեղեկությունը բազմիցս հերքվեց: Առավել հիմնավոր հերքումը կատարվում է Դրոյի կողմից[1]:

Պատմագրության մեջ երկար ժամանակ շարունակ գերիշխում է վերը նշված տեսակետը: Սակայն վերջին տարիներին հայտնաբերված արխիվային փաստաթղթերը այլ բան են վկայում: Հ. քահանա Սառիկյանի հետ ունեցած զրույցի ժամանակ Վարդանը հետևյալ եզրակացությանն է հանգել. «Մեզ համար պարզ էր, որ հայերի նկատմամբ անօրինակ սրիկայություն էր կատարվում: Տաճկական կորպուսների լուրը մտացածին էր, Դևոյանը նման տեղեկություններ չէր տվել: Նույն խաղի զոհ դարձավ նաև Ալաշկերտի հայությունը 1914 թ. ծմռանը»[2]:

Ինքնին հասկանալի է, որ հետախուզական բաժանմունքի ոչ պատասխանատու աշխատակցի նույնիսկ նման զեկուցագիրը չէր կարող հիմք հանդիսանալ մի ամբողջ կորպուսի նահանջի համար: Այդ ինչպես պատահեց, որ նույն կորպուսի հրամանատար Պ. Օգանովսկին Սարիղամիշի ճակատամարտի նման ճակատագրական և բեկումնային նշանակություն ունեցող օպերացիայի ժամանակ չենթարկվեց տվյալ պահին Կովկասյան բանակի փաստական հրամանատար գեներալ Ա. Միշլաևսկու հրամանին և չնահանջեց, իսկ 1915 թ. հուլիսին հետախուզական բաժանմունքի աշխատակցի զեկույցը «բավական» եղավ, որպեսզի նա նահանջի հրաման տա: Հարկ ենք համարում նշել, որ նման հրաման, առանց բանակի գլխավոր հրամանատարության հետ համաձայնեցնելու, չէր տրվում: Բացի այդ, նման կարգի հետախուզական զեկույցը պարտադիր ճշտվում էր Կովկասյան բանակի դաշտային շտաբի համապատասխան ծառայության կողմից:

Ըստ է. Էրիկսոնի՝ 1915 թ. մարտի 24-ի դրությամբ օսմանյան III բանակի մարտակազմը հետևյալն էր.

| Զորամասեր | Սպա | Զինվոր |
|---|---|---|
| 9-րդ բանակային կորպուս | 261 | 7806 |

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 28, թ. 16 շրջ.-17:
[2] Նույն տեղում, գ. 11, թ. 178–179:

| | | |
|---|---|---|
| 10–րդ բանակային կորպուս | 235 | 3513 |
| 11-րդ բանակային կորպուս | 251 | 4206 |
| 5-րդ ռազմարշավային դիվիզիա | 113 | 8944 |
| Ընդամենը | 860 | 24469[1] |

Պատմաբան Մակիչ Արզումանյանի գնահատմամբ Վանի նահանջը արդյունք էր «ցարիզմի հայահալած քաղաքականության»[2]: Նրա համոզմամբ հուլիսյան նահանջը ծրագրավորվել էր ցարիզմի կողմից, և վանեցիներն ընկնելով քրդերի ու թուրքերի հարվածների տակ ահռելի զոհեր են տալիս[3]:

Վանի հուլիսյան նահանջով ավարտվում է կամավորական շարժման երկրորդ փուլը: Այսպիսով, 1914 թ. հոկտեմբերից մինչև 1915 թ. հուլիս տեղի ունեցած մարտական գործողություններում կամավորների կորուստը կազմել է 485 սպանված և 1260 վիրավոր, հիվանդ և անհայտ կորած: Ստորաբաժանումների հանդերձավորման համար ծախսվել էր 1 միլիոն 390 հազար ռուբլի և 400 հազար ռուբլի զանազան իրեր գնելու համար: Նշված 1 միլիոն 395 հազար ռուբլուց ռուսական կառավարությունը հատկացրել էր 245 հազար ռուբլի: Մնացած գումարը հայթայթվել էր ՀՅԴ զանազան կառույցների կողմից հայ բնակչության շրջանում կատարված հանգանակություններից[4]:

Հուլիսյան նահանջը խորը հիասթափություն է առաջացնում հայ հասարակության տարբեր շերտերում: Այդ տրամադրություններն իրենց հերթին հրահրում էին ռուսական իշխանությունները: Դրանք հատկապես ուժեղանում են Ի. Վորոնցով-Դաշկովին փոխարքայի պաշտոնից ազատելուց հետո[5]:

1915 թ. հուլիսի 7-ին Կարգադրիչ մարմինն իր հայտարարությունում կոչ է անում հայրենակիցներին՝ տրամադրել նյութական մի-

---

[1] ***Erickson E. J.,*** Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War. Foreword by General Hüseyn Kivrikoğlu, Greenwood Press, 2000, p. 64 http://www.tc-america.org/media/Ericson_militarypolicy1915.pdf.

[2] ***Արզումանյան Մ.,*** Հայաստան, էջ 275:

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 29:

[5] Տես ***Шатирян Р.,*** указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 8.

ջոցներ կամավորական խմբերի համար: Կարգադրիչ մարմինը հայտնում է, որ դրամական միջոցների զգալի մասը տրամադրել է հայ գյուղացիությունը[1]:

Ստեղծված վիճակը կարճ ժամանակ անց հաղթահարվում է: Առաջին գնդի մարտիկներին ուղղված Անդրանիկի կոչում ասված էր. «Կոչ եմ անում ձեզ, շտապ ճանապարհել Երևան, Քանաքեռ գիւղը, միանալու Ա. Գնդին, որ պետք է վերակազմւի մինչև ամսիս (սեպտեմբերի-Ռ.Ս.) 10-ը»[2]: Ունկնդրելով իրենց հրամանատարների, Ազգային բյուրոյի և Կարգադրիչ մարմնի կոչերին, վերսկսվում է կամավորների անդամագրումը: ԱՄՆ-ից ժամանում են 156 հոգի: Նրանց մեծ մասը վանեցիներ էին, կային նաև խարբերդցիներ, բիթլիսցիներ, կարինցիներ և աղանացիներ: Նրանց թվում էր մեկ բժիշկ և ամերիկյան "New York Call" թերթի թղթակից[3]:

Ազգային բյուրոն կամավորականների ընտանիքներին օգնելու համար որոշում է հրատարակել կամավորներին նվիրված լուսանկարչական ալբոմը: Նշված աշխատանքները կատարվում է Մարտին Շաթիրյանի նյութական օժանդակությամբ: Վաճառքից ստացված գումարը տրամադրվելու էր կամավորականների ընտանիքներին[4]:

Ինչպես նշվեց, նահանջը և վանեցիների կրած մարդկային ու նյութական ահռելի կորուստները, բարոյալքող ազդեցություն ունեցավ հայ հասարակության տարբեր խավերի և շերտերի վրա: Պատերազմի սկզբում բնակչության, հասարակական-քաղաքական և հոգևոր շրջանների ճնշող մեծամասնության միասնությունը սկսեց ճեղք տալ: Կրկին ու կրկին փորձ էր արվում գտնել մեղավորի կամ մեղավորների այս կամ այն անհաջողությունն արդարացնելու համար: Կամավորական շարժման ընդդիմախոսների կամ ՀՅԴ-ի հակառակորդների համար հարձակումների հիմնական թիրախ դարձավ Ազգային բյուրոն, որին քննադատելով, ընդդիմախոսներն անուղղակի կերպով հարվածում էին կամավորական շարժումը ղեկավարող ՀՅԴ-ին: Դժգոհությունն արտահայտվում էր տարբեր

[1] «Մշակ», Թիֆլիս, 1915, N 145, 7 յուլիսի:
[2] «Հորիզոն», 1915, N 197, 2 սեպտեմբերի:
[3] «Մշակ», 1915, N 166, 31 յուլիսի:
[4] «Հորիզոն», 1916, N 282, 16 դեկտեմբերի:

կերպ: Այսպես, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը, դժգոհ էր, որ կամավորական շարժումը ղեկավարում է հիմնականում ՀՅԴ-ը[1]:

1915 թ. դեկտեմբերի 20-ի նամակում Ս. Վրացյանը ԱՄՆ-ում գտնվող իր ծանոթին հայտնում է. «Ես ուրախ եմ միայն այն բանում, որ այդ քաոսում ոչ միայն պահպանեցինք մեր դրուժինաների գոյությունը, այլև (նրանք – Ռ. Ս.) ամրացան որպես մարտական զորամասեր»[2]: Ամռան ընթացքում ՀՅԴ ջանքերով կազմակերպվում է VII դրուժինան իշխան Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ:

Ռուսական հրամանատարության և Ազգային բյուրոյի բանակցությունների արդյունքում որոշվում է III և IV դրուժինաներից 750 մարտիկ տեղափոխել I և II խմբերը: Նշված աշխատանքները տևում են շուրջ երեք ամիս՝ 1915 թ. օգոստոսից մինչև հոկտեմբեր[3]:

1915 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ VII դրուժինայի մարտիկների ընդհանուր թվաքանակը կազմում էր 23 սպա և 862 զինվոր[4]: Խումբն ուներ նաև իր փողային նվագախումբը: Միսակ Թոռլաքյանի վկայության համաձայն «Տղաները կանոնաւոր կը մասնակցէին զինավարժութեան...Ամերիկայէն եկան քանի մը հարիւր հոգիէն աւելի կամաւոր տղաներ և մտան Իշխանի գունդը»[5]:

Դեկտեմբերի 14-ից մինչև 1916 թ. հունվարի 10-ը Ուրմիա լճի հարավ-արևմտյան մասում մղված մարտական գործողությունների ընթացքում VII խմբի կորուստը, ըստ դրուժինայի հրամանատարի օգնական Գ. Բալայանի, կազմել է չորս վիրավոր և 33 սպանված[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 42, թ. 1:
[2] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 4, գ. 14, թ. 8:
[3] *Ղորղանեան Գ.,* նշվ. հոդվածը, Հայրենիք, 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 78:
[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 2, թ. 4ա-17ա: "Армянский вестник", 1916, N 11, 10 апреля, с.1.
[5] *Թորլաքեան Մ.,* Օրերուս հետ, Լոս Անճէլըս, Քալիֆ., 1953, էջ 206:
[6] «Հորիզոն», 1916, N 49, 3 մարտի: 1915 թ. հոկտեմբերի դրությամբ, հայկական բոլոր խմբերի կորուստը կազմել է 485 սպանված և 1260 հոգի վիրավոր, հիվանդ և անհայտ կորած: Ազգային բյուրոն խմբերի հանդերձավորման և կազմակերպման համար ծախսել է 1795000 ռուբլի: Կառավարությունը Բյուրոյին տրամադրել է սկզբնական ծախսերի համար 245000 ռուբլի, իսկ մնացած 1150000 ռուբլին և զանազան իրերը ստացվել են հայ ժողովրդի կատարած նվիրաբերումներից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 30:

Ապրիլի 26-ից մինչև մայիսի 20-ը մղված մարտական գործողությունների ընթացքում խմբի կորուստը կազմել է 14 սպանված, 20 թեթև և 37 ծանր վիրավոր[1]:

1916 թ. սկզբին Վարդանի դրուժինան տեղափոխվում է Ջուլֆա: Նրա մարտիկները տեղեկանալով, որ ռուսական հրամանատարությունը մտադիր է լուծարել կամավորական խմբերը, սկսում են հեռանալ: Հայդարաբադում Վարդանը ստորաբաժանման հրամանատարությունը հանձնում է կապիտան Ա. Հովսեփյանին: Իր հուշերում Վարդանն անդրադառնում է կամավորական խմբերի լուծարմանը, ափսոսանքով և ցավով նշում է. «...ռուս կառավարության վերաբերմունքը դեպի մեր գործունեությունը, դեպի մեր այնքան զոհաբերությունը, աջակցությունը, միայն անտարբերության և արհամարհանքի արժանացան: Քրդերին ավելի էին սիրաշահում»[2]: Վարդանի համոզմամբ, չնայած վերը նշված վերաբերմունքին, այնուամենայնիվ կամավորական շարժումն իր դերն ունեցավ: Նա համոզված էր. «Եթե ուրիշ բան չանեինք...ամբողջ Վանի և շրջանի ժողովրդյան փրկության պատճառը կամավորներն էին»[3]: Վ. Վալադյանն իր «Ինտելիգենցիայի կոչումը» հոդվածում, անդրադառնալով 1915 թ. հուլիսյան նահանջին, գրում է. «Ափսոս, չլինե՞ր յուլիսեան նահանջը: Վանի գրաւումը մենակ հերիք էր՝ ցրիւ տալու համար բոլոր այն թերութիւններն ու անբարեացակամ կասկածները, որ կան մեր հասարակութեան մէջ՝ կամաւորական խմբերի rasion d'étre-ի (ֆրանսերեն՝ գոյության իմաստը – Ռ.Ս.) հանդէպ»[4]:

1915 թ. օգոստոսի 3-ին գեներալ Պ. Օգանովսկու N 61 հրամանով հայկական դրուժինաներն համալրելու են գեներալ Պյոտր Յուրկևիչի Կովկասյան աշխարհազորային I բրիգադը[5]: Այդ հրամանը, սակայն, մնաց թղթի վրա:

---

[1] «Արեւ», 1916, N 129, 15 յունիս: "Армянский вестник", 1916, N 21, 19 июня, с. 18, տե՛ս նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆոնդ, գ. 3125–3148[II], թ. 3130:
[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 3 շրջ.:
[3] Նույն տեղում, թ. 3:
[4] «Հորիզոն», 1915, N 292, 27 դեկտեմբերի:
[5] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 1:

Ռուսական հրամանատարությունը կասկածանքով էր վերաբերվում ազգային ռազմական կազմավորումների և մասնավորապես հայկականի նկատմամբ, որը ռուս-թուրքական ռազմաճակատում առկա ազգային ստորաբաժանումներից ամենամեծն էր և առավել մարտունակը: Իշխանությունները խուսափում էին ազգային ուժերը կենտրոնացնել մեկ զորամասում, ուստի նախընտրեցին նրանց տեղակայել ռուս-թուրքական ռազմաճակատի տարբեր տեղամասերում: Այս հանգամանքը, փաստորեն զրկում էր դրուժինաները ինքնուրույն «գործողություններ ծեռնարկելու իրավունքից և հնարավորությունից»[1]:

Մայիսի 7-ին VI դրուժինան մեկնեց ռազմաճակատ: Կամավորները գործելու էին գեներալ Ն. Բարաթովի[2] բանակային կորպուսի կազմում: VI դրուժինան տեղակայված էր Վերին Բասենում, Շարյան գետի ափին: Գրիգոր Ավշարյանի վերջին մարտի մասին տեղեկություններ է հաղորդում Հ. Բժշկյանը[3]:

Հոկտեմբերի 23-ի վաղ առավոտյան սկսված մարտի ժամանակ վիրավորվում են Գ. Ավշարյանը և Հ. Բժշկյանը: Հրամանատարին տեղափոխում են մոտակա Ավբեղա գյուղը, որտեղ և նա կնքում է իր մահկանացուն: VI դրուժինայի հրամանատարի պաշտոնում Գ. Ավշարյանին փոխարինում է Հ. Բժշկյանը: Դրուժինան I բանակային

---

[1] *Սիմոնյան Հ.,* նշվ. աշխ., էջ 479:

[2] Ի թիվս մի քանի ռուս զորահրամանատարների, գեներալ Ն. Բարաթովը վայելում էր զինվորների հարգանքն ու սերը: Նրանք, այդ թվում հայերը, մի շարք պատմություններ և նույնիսկ ոտանավորներ են հորինում նրա պատվին.
«Գեներալ, դու ակտիվ կռվող Բար(ա)տով,
Քո զորքը ծախված է, մենք չենք մեղավոր,
Հերոսներից մեկն ես, ազնիվ Բարատով
Քո զորքը ծախվել է, մենք չենք մեղավոր...»:
«Գեներալ Բարատով հավաքեց զորքեր
Դրուժին կազակներ, պեխոտնի պոլկեր (հետևակային գնդեր-Ռ.Ս.)
Չորս կողմից արծակեց թոփի գնդակներ,
Էնվեր փաշի գլխին թափեց կրակներ», տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 30, թ. 75, 99:

[3] «Գաղափար», Թիֆլիս, 1916, N 55, 3 յուլիսի: Հ. Բժշկյանը հասցրել էր վայելել հայ հասարակության հարգանքը: «Մշակ»-ն իր համարներից մեկում նկարագրում է, թե ինչպիսի հանդիսությամբ են ընդունել VI խմբի վերադարձը ռազմաճակատից: Թղթակիցը նշում է. «Բժշկեանը թողնում է դաստիարակված մարդու տպաւորութիւն, խօսում ու դատում է կրթված զինուորականի պէս, թէև զինուորական չէ եղել բնաւ», տե՛ս «Մշակ», 1915, N 146, յուլիսի:

կորպուսի կազմում մասնակցում է էրզրումի նշանավոր օպերացիային՝ գտնվելով ամրոցը գրոհող ձախ զորասյունում[1]: Էրզրումի գրավումից հետո VI դրուժինան մասնակցում է Մամախաթունի համար մղված մարտերին: Դրանցից մեկի ժամանակ վիրավորվում է Հ. Բժշկյանը, որին հրամանատարական պաշտոնում փոխարինում է Պանդուխտը (Միքայել Սեֆերյան):

1915 թ. հոկտեմբերի 9-ին Վան է գալիս Հայկական VII կամավորական խումբը Հ. Արղությանի հրամանատարությամբ[2]: Որոշ ժամանակ Վանում մնալուց հետո, խումբը դեկտեմբերին հրաման է ստանում շարժվել Ուրմիայի շրջան[3]: Նոյեմբերի 21-ին ռազմաճակատից ստացված հաղորդագրության համաձայն, VII խումբը շարունակում էր մարտական գործողություններ մղել Վանա լճի հարավում[4]:

VII խմբում էր "Manchester Gardian" թերթի թղթակից Ֆիլիպ Բրայսը՝ լորդ Ջ. Բրայսի եղբայրը: Նա հետաքրքիր թղթակցություն է թողել խմբի մարտական գործողությունների մասին: Թղթակիցը նշում է, որ կամավորները և կազակները առաջ էին շարժվում երգելով ազգային երգեր: Վանին մոտենալիս, հետախուզությունը տեղեկացնում է, որ մոտակա բլուրները զբաղեցված են հակառակորդի կողմից: Ֆ. Բրայսը նշում է. «Հայերը դարձան նւազ խօսող և կազակները ձի նստելիս խաչ հանեցին իրենց երեսներին»[5]: Դրուժինայի վաշտերից մեկը ծյունածածկ տարածքով գրոհում է թուրքական դիրքը և հակառակորդին դուրս մղում այնտեղից:

1916 թ. ապրիլի 25-ին VII խումբը մարտեր է մղում թուրք-պարսկական սահմանի մոտ գտնվող Շահ-Գեադուկ լեռնանցքին տիրելու

---

[1] *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, с. 112, 171.

[2] Ռ. Շաթիրյանի գնահատմամբ, դրուժինան աչքի էր ընկնում իր մարտական բարձր կարգապահությամբ, տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 7.

[3] *Ղորղանեան Գ.,* նշվ. հոդվածը, Հայրենիք, 1927, թիւ 11, սեպտեմբեր, էջ 79: Խումբն առաջին մարտական մկրտությունն է ստանում Ուստանի մոտ, տե՛ս «Յորիզոն», Թիֆլիս, 1916, N 2, 3 յունւարի:

[4] Տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 7.

[5] «Յորիզոն», 1916 N 64, 20 մարտի: Խումբը մասնակցում է նաև մի շարք այլ մարտական գործողությունների: 1916 թ. հուլիս-օգոստոս ամիսներին VII և IV խմբերը լուծարվում են ռուսական հրամանատարության կողմից, տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 7.

համար: Հինգ ժամ տևած կռիվներից հետո կամավորները գրավում են լեռնանցքը, ապա գեներալ Ն. Բարաթովի ջոկատի կազմում մասնակցում են Ռևանդուզի գրավմանը[1]:

Ռուսական հրամանատարությունը վճռում է Վանի նահանգն ապահովել քրդերի հարձակումներից: Այդ նպատակով կազմվում է հատուկ զորախումբ: 1915 թ. սեպտեմբերի 7-ից սկսած Արճեշի զորախմբում գործում են II և III խմբերը: Զորախմբին հանձնարարված էր հսկել Ոստանի արևմտյան մասը և Բաղեշ-Վան ուղղությունը:

1916 թ. հունվարի 13-ին II դրուժինան II հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցում է Խնուս քաղաքի գրավմանը: Քաղաքի գրավումից հետո Դ. Աբացիևը հրաման է ստանում շարժվել Բիթլիսի, իսկ Թ. Նազարբեկյանը՝ Մուշի ուղղությամբ, որոնց վերջնական նպատակը նշված քաղաքների գրավումն էր: Հունվարի 28-ին II դիվիզիան սկսում է հարձակումը: Թուրքերը իրենց նահանջի ճանապարհին ընկած բոլոր բնակավայրերը հրդեհում են[2]:

Ինչպես նշում է Ն. Կորսունը, գեներալ Թ. Նազարբեկյանը հաշվի առնելով պայմանները, հարձակումն իրականացնում է երեք զորասյուներով[3]: Փետրվարի 3-ին հայկական II կամավորական խումբը և Լաբինսկյան կազակական գունդը գրավում են Մուշը: Հ. Բժշկյանի գնահատմամբ, Մուշի գրավումը ծանր դրության մեջ է դնում թուրքերին և նույնիսկ կարող էր ճակատագրական լինել նրանց համար, քանի որ «մեր զօրքերի առաջ բացւել են դէպի Փոքր Ասիայի խորքերը տանող ճանապարհները»[4]: Նա հույս է հայտնում, որ շատ կարճ ժամանակում ռուսական և Միջագետքում գործող բրիտանական ուժերը կմիավորվեն, «որը կը լինի թուրք պետութեան կործանման վերջին գրաւականը»[5]:

Փետրվարի 7-ին I խումբը գնդապետ Ֆիլիպովի զորասյան կազմում մասնակցեց Դատվանի գրավմանը: Իսկ փետրվարի 15-ին մղած մարտական գործողությունների ընթացքում հայ կամավորնե-

---

[1] «Հորիզոն», 1916, N 113, 24 մայիսի:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 9, թ. 13:
[3] *Корсун Н.,* Эрзерумская операция, с. 134.
[4] «Գաղափար», 1916, N 4, 24 փետրւարի:
[5] Նույն տեղում:

րը գրավում են մի շարք գյուղեր և Բիթլիսի հարևանությամբ գտնվող բարձրունքները: Կռիվների ընթացքում կամավորների կորուստը կազմում է 15 սպանված և 55 վիրավոր[1]:

Մուշի գրավումից հետո գեներալ Դ. Աբացիևի Մանազկերտի ջոկատին հանձնարարվում է նախապատրաստել Բիթլիսի գրավումը: Հարձակումն սկսվում է փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը, ժամը 3-ին: I դրուժինան գրավում է հակառակորդի խրամատները, որից հետո հայ-ռուսական ուժերը ներխուժում են Բիթլիսի հյուսիսային մասում գտնվող Կոմանց թաղը: Թուրք զինվորները խուճապահար լքում են քաղաքը: Գերությունից ազատվում են 300 հայ կանայք ու երեխաներ: Հրաչիկ Սիմոնյանի գնահատությամբ. «Բիթլիսը Անդրանիկի երկրորդ մեծ հաղթանակն էր՝ Դիլմանից հետո»[2]:

1916 թ. մարտին հայտնի է դառնում ռուսական հրամանատարության մտադրությունը՝ հայկական կամավորական խմբերի լուծարման մասին[3]: Մարտի 6-ին գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղված զեկուցագրում գնդապետ Օբրազցովը հայտնում է, որ Անդրանիկը հրաժարական է տվել դրուժինայի հրամանատարությունից[4]: Այդ պաշտոնում նրան փոխարինում է Սմբատը:

Օսմանյան կանոնավոր ուժերի դեմ մղված մարտական գործողությունների ընթացքում II դրուժինայի մարտիկները գերում են Գալիպոլիից տեղափոխված և ռուս-թուրքական ռազմաճակատում կռվող մոտ հիսուն զինվոր[5]: Կամավորական Ս. Մելիքյանի գնահատմամբ, թուրք զինվորներն իրենց մարտական պատրաստակա-

---

[1] *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները, էջ 80–81:

[2] *Սիմոնյան Հ.,* նշվ. աշխ., էջ 509:

[3] Ռ. Շաթիրյանի հաղորդման համաձայն, առաջինը լուծարվում է Դրոյի խումբը՝ 1916 թ. մարտ-ապրիլ ամիսներին, տես *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 6.

[4] *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները, էջ 182:

[5] Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը, էջ 44, 81:

նությամբ տարբերվում էին իրենց նախորդներից: Նրանց մարզել էին գերմանացի սպաները[1]:

Ռուսական հրամանատարությունը նախապատրաստում է Խիզանի գրավման օպերացիան: Այն պաշտպանում են հազար ժանդարմ, երկու հազար քուրդ և չորս թնդանոթ: Մարտի 11-ի լույս 12-ի գիշերը Խիզանը գրավվում է: Համազասպը հեծելաջոկատի և առաջին վաշտի գլուխն անցած առաջինը մտավ Խիզան[2]:

1916 թ. ապրիլին III և IV դրուժինաները գեներալ Ն. Բարաթովի ռազմարշավային բանակային կորպուսի կազմում մասնակցում են Ուրմիա լճից հարավ մղած մարտական գործողություններին: Այս շրջանում մղած ծանր մարտերի մասին վկայում է այն փաստը, որ միայն վիրավոր կամավորների թիվը հասնում է 46-ի: Մայիսի 14-ի լույս 15-ի գիշերը գեներալ Ն. Բարաթովի մոտ կայացած խորհրդակցությունում Քեռուն հանձնարարվում է օգտագործել բոլոր հնարավորությունները զբաղեցրած դիրքերը պաշտպանելու համար:

Քեռու զինակիցները վկայում են, որ նա Վանի 1915 թ. հուլիսյան նահանջից և հայության անպատմելի զրկանքները տեսնելուց հետո դարձել էր ինքնամփոփ: «Նա (Քեռին – Ռ. Ս.) դարձել էր աւելի խոհուն ու մտածկոտ, չէր կատակում առաջուայ նման, սիրում էր մենակութիւն...: Նա խնայում էր տղաներին՝ վերջին ընդհարումների ժամանակ, քաջալերում էր նրանց նախածեռնութիւնը»[3]: Մայիսի 15-ին տեղի ունեցած մարտի ժամանակ զոհվում է Քեռին[4]:

Ռազմագերիների հարցաքննությունից պարզվում է, որ թուրքական հրամանատարությունը տեղյակ էր, որ Ռևանդուզի մոտ գտնվող

---

[1] ***Մելիքեան Ս.,*** նշվ. աշխ., էջ 63: Ա. Գարոյի գնահատականի համաձայն. «Թուրքը զինվոր է և գիտե կռվել: Հրացանաձգության մեջ կան վիրտուոզներ, որոնք կարող են մարդու ականջը թռցնել առանց գլխին վնաս տալու: Մի բանից է թուրքը վախենում – սրամարտից: Այստեղ արդեն առաջնության դափնին ռուս կազակին է պատկանում, ինչպես և սուսերամարտերի մեջ ռուս հետևակ զինվորին», տե՛ս ***Զաքարյան Ս.,*** Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.), Երևան, 2006, էջ 62–63:

[2] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 10, թ. 1: III դրուժինան 1916 թ. ձմռանը հիմնականում մասնակցում է Վանի և Ուստանի պաշտպանությանը, միաժամանակ կատարելով հետախուզական ծառայություն, տե՛ս ***Шатирян Р.,*** указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 6.

[3] «Արեւ», 1916, N 167, 24 յունիսի:

[4] ***Елисеев Ф. И.,*** указ. соч., с. 164.

ռուսական ուժերը և զինամթերքը սակավ են: Միայն դրանով էր բացատրվում թուրքական անընդմեջ և համառ չորսօրյա գրոհները: Գերիների խոստովանությամբ. «Բայց մեր ծրագիրը ջուրն ընկաւ գլխաւորապէս ձեր Քեռիի, այդ երիտասարդ ծերուկի շնորհիւ»: Նշանավոր հայդուկի և ռազմիկի մահը ողբում էին բոլորը: Գարեգին Նժդեհը հերոսի հիշատակին ձոնեց հետևյալ տողերը.

«Չկա Քեռին...

Լռէց կովկասեան զորաճակատի անպարտելի ու անգուգական Ռազմիկը...

Չկար ալեւոր Առյուծը...»[1]:

IV դրուժինան մարտական գործողություններն սկսելով 1914 թ. նոյեմբերի 16-ից մինչև 1916 թ. հունիսի 11-ը, որոշ ընդմիջումներով, մասնակցում է վաթսուն մարտերի: Նշված ժամանակահատվածում զոհվում է 411 և վիրավորվել 822 մարտիկ: Իսկ աշնանը սկսվում է խմբի լուծարումը: Ստորաբաժանումը ռազմաճակատից ուղարկվում է թիկունք[2]: Ռուսական բարձրագույն պետական, քաղաքական շրջանակների և զինվորական հրամանատարության մի մասի մոտ հասունանում է հայ կամավորական խմբերը լուծարելու գաղափարը: Նշված տրամադրությունների արտահայտիչներից էր փոխարքա Ն. Ռոմանովը: Դեռևս 1915 թ. օգոստոսին փոխարքան միջնորդում է Գերագույն գլխավոր հրամանատարությանը «ցրել հայկական կամավորական ջոկատները և ստեղծել կադրային վեց գումարտակներ»[3]:

Դեռևս 1915 թ. մայիսի 15-ին Ռուսաստանի ՆԳ նախարարությունը Գերագույն գլխավոր շտաբին ներկայացնում է զեկուցագիր, ուր խեղաթյուրելով փաստերը, փորձում է վարկաբեկել հայ կամավորականներին և անգամ փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին:

---

[1] «Արեւ», 1916, N 137, 24 յունիսի: *Նժդեհ Գարեգին,* Երկեր, երկու հատորով, հատոր 1: Խմբ. խորհուրդ՝ Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Սիմոնյան Ա., Վիրաբյան Ա., Երևան, 2002, էջ 11:

[2] Տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 6–7. Երևանում տեղակայված VIII խումբը լուծարվել էր դեռևս 1916 թ. մայիսին:

[3] *Հարությունյան Ա. Հ.,* Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 68:

ՆԳ նախարարությունը հատկապես «անհանգստացած» էր, որ «դրուժինաների կազմակերպումը և հատուկ հովանավորությունը սրել էին հայերի և Կովկասի մյուս ժողովուրդների հարաբերությունները»: Ուստի ՆԳ նախարարությունը ելնելով «պետական շահերից» և կայսրության ժողովուրդների «բարեկամական» հարաբերությունները պահպանելու ցանկությունից, կասկածի տակ է դնում հայկական խմբերի գոյության անհրաժեշտությունը[1]:

Ա. Հարությունյանի կարծիքով, հայկական մարտական ստորաբաժանումների և նրանց հրամանատարների մասին զանազան սադրիչ և կեղծ լուրեր տարածելով, ՆԳ նախարարությունը փաստորեն օժանդակում էր ռուսական կառավարության այն անդամներին, որոնք պայքար էին մղում փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի դեմ: Զրպարտելով կամավորական շարժումը՝ ոստիկանությունն անուղղակի կերպով հարված էր հասցնում փոխարքային, որը, ինչպես նշել էինք, ռուսական պետական շահերից ելնելով աջակցում էր հայ կամավորական խմբերին[2]:

Հայկական խմբերի վերաբերյալ տարածվող սադրիչ լուրերը ստուգելու նպատակով Վան են գալիս Հովսեփ Խունունցը և Հովհաննես Թումանյանը: Նրանք հանդիպում են Բայազետի ջոկատի հրամանատար գեներալ Ա. Նիկոլաևի հետ, որը զրույցի ընթացքում բարձր է գնահատում կամավորների մարտական ունակությունները: Նա կտրականապես ժխտում է կամավորների կողմից ռուս զինվորների վրա կրակ բացելու և թալանի դեպքերը: Ավելին, 1915 թ. հունիսին Ա. Նիկոլաևը Ալ. Խատիսյանին ուղված նամակում վերահաստատում է Հ. Թումանյանին և Հ. Խունունցին իր ասածները[3]: Հուլիսի 19-ի նամակում Ի. Վորոնցով-Դաշկովը հայտնում է Մեսրոպ եպիսկոպոսին, որ ինքը հրամայել է հետաքննել գեներալ Ա. Նիկոլաևի երկակի տեսակետը հայ կամավորների մասին[4]:

---

[1] Տե՛ս *Корсун Н.,* Алашкертская и Хамаданская операции, Приложение 4, с. 189.
[2] *Арутюнян А. О.,* указ. соч., с. 316.
[3] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 229, թ. 1 և շրջ.:
[4] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 134, թ. 1 և շրջ.:

1915 թ. հուլիսի 30-ի ռուսական կառավարության նիստում քննարկվում է ռուս-թուրքական ռազմաճակատում ստեղծված «իրավիճակը»: Մասնակիցների մեծամասնության կարծիքով, մարտական գործողությունները զարգանում են փոխարքայի՝ հայերի նկատմամբ ունեցած քաղաքական համակրանքի համաձայն: Սենատոր և Պետական հսկիչ Պյոտր Խարիտոնովի կարծիքով, «նույնիսկ քարտեզին հպանցիկ դիտելուց երևում է, որ զորքերի գործողությունները հիմնականում ուղղվում են հայկական հողերի վրա: Առանց այդ էլ իրադրությունն ամենուր ծանր է, իսկ այստեղ մենք կվտանգվենք հանուն Հայաստանի ստեղծման»[1]:

Պ. Խարիտոնովը Նախարարների խորհրդի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Պետական դուման բացասաբար է վերաբերում զորքերի առաջխաղացմանը հայ բնակչության շահերի համար: Դումայի պատգամավոր, սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ) Նիկոլայ Չխեիձեն մեղադրում է Կովկասի իշխանություններին հայերի պահանջները չափից դուրս կատարելու համար: Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Իվան Գորեմիկինի կարծիքով, Հայաստանի ստեղծումը հետպատերազմյան շրջանում կարող է Արևելքում տարբեր բարդությունների առիթ հանդիսանալ:

1915 թ. օգոստոսի 4-ին Նախարարների խորհուրդը կրկին վերադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատում ստեղծված «վտանգավոր իրադրությանը», քանի որ ռուսական զորքերի հարձակումը շարունակվում էր:

Պ. Խարիտոնովը ցանկանալով նկարագրել Դումայում ստեղծված մթնոլորտը, վկայակոչում է Ն. Չխեիձեի պահվածքը: Վերջինս հիստերիայի մեջ ընկնելով սպառնում էր անուղղելի դժբախտություններով: «Իմ ներկայությամբ նա գոռում էր Դումայում, որ Կովկասյան բանակը ղեկավարում է ոչ թե Գերագույն գլխավոր հրամանատարը և ոչ էլ փոխարքան, այլ կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան՝

[1] Տե՛ս *Бахтурина А. Ю.,* Окраины российской империи: Государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914–1917 гг.), Москва, 2004, с. 217–218. Տե՛ս նաև *Исмаил-Заде Д. И.,* Граф И. И. Воронцов-Дашков. Наместник Кавказский. Москва, 2005, с. 161. (Россия забытая и неизвестная). Книга на сайте http://militera.lib.ru/

պատված հայկական ցանցով»[1]: Դումայի պատգամավոր, սահմանադիր-ժողովրդավարական կուսակցության անդամ (Ժողովրդական ազատության կուսակցություն, կադետ) Վասիլի Խարլամովի այն հարցին, թե ինչ նպատակի համար են ռուսական զորքերն առաջանում ռուս-թուրքական ռազմաճակատում, հետևում է զինվորական նախարար Ալեքսեյ Պոլիվանովի պատասխանը. «Հայտնի է թե ուր՝ մեծ Հայաստանի ստեղծմանը»[2]: Նրա հավաստիացմամբ, կայսր Նիկոլայ II-ը կիսում է համընդհանուր տրամադրությունները: Կայսրը գտնում է, որ ռուս-թուրքական ռազմաճակատում ստեղծվել է այնպիսի իրադրություն, որ կարող է հանգեցնել Հայաստանի երկու մասերի միավորման[3]:

Յ. Զավրիևն իր անտիպ գրառումներում արձանագրում էր, որ Կովկասում կազմվել էր վրաց-թաթարական միություն՝ ուղղված հայերի դեմ: Այդ միությունը քայլեր էր ձեռնարկում Կովկասում հայերի ազդեցությունը թուլացնելու և հայերին ռուսների աչքում վարկաբեկելու համար[4]:

Հատկապես ակտիվ գործում են վրացական հասարակական և քաղաքական շրջանակները: Նրանց համար հասել էր հարմար պահը, որպեսզի փորձեն վարկաբեկել և թուլացնել հայ հասարակական-քաղաքական շրջանակների ազդեցությունը երկրամասում: Ինքնին հասկանալի է, որ վրացիների և թաթարների նման տրամադրությունների տոն տվողը ռուսական իշխանություններն էին[5]: Այդ հանգամանքն ընդգծում է նաև Լեոն: Նա վկայում է, որ վրացիների և

---

[1] *Бахтурина А. Ю.,* указ. соч., с. 217–218. Դեռևս 1914 թ. մայիսի 14-ի Ա. Չխենկելիի Պետական դումայում Հայկական հարցի կապակցությամբ ունեցած ելույթում կոչ է անում գործընկերներին թույլ չտալ, որպեսզի Ռուսաստանի սահմանամերձ շրջանում հիմնվի ինքնավար Հայաստան, տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 61, թ. 13–14:

[2] *Бахтурина А. Ю.,* указ. соч., с. 217–218.

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 74, թ. 27:

[5] Նրանց՝ կովկասյան թաթարներին, վրացիներին և ռուս ազգայնականներին անհանգստացնում էր միացյալ Հայաստան ստեղծելու հնարավորությունը: Միայն դրանով կարելի է բացատրել նրանց միասնական թշնամական դիրքորոշումը հայ կամավորական շարժման դեմ, տե՛ս *Գալոյան Գ.,* Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում (XVI դարից – 1917 թ.), Երևան, 2004, էջ 665:

կովկասյան թաթարների միությունը կայացել էր դեռևս 1905 թ.: Լեոն նշում է, որ նրանց միջև «գոյություն ուներ մի տեսակ պաշտպանողական և հարձակողական դաշնակցություն ուղղված հայերի դեմ»[1]: Պատմաբանը միաժամանակ ավելացնում է. «Իսկ ռուսական բյուրոկրատիան ամեն խնամք թափում էր, վոր հայ-վրացական հարաբերությունները միշտ լարված լինեն»[2]:

Յ. Զավրիևը նշում էր, որ ռուսական կառավարության անդամների մի մասը ծնացնում է, թե իրենց անհանգստացնում և վախեցնում է այն հանգամանքը, որ հայերը կհրաժարվեն Ռուսաստանին հավատարիմ մնալու խոստումից: Յ. Զավրիևի դիտարկմամբ, իշխանությունները ճարպկորեն օգտագործում էին հայ հասարակական-քաղաքական գործիչների անզգույշ արտահայտությունները հակահայ քարոզչություններում[3]:

Ռուսական իշխանությունները չէին խորշում նույնիսկ բացահայտ կեղծիքներից: Նման կեղծիքներից մեկի մասին բարձրաձայնում է Պետական դումայում իր ունեցած ելույթում Միքայել Պապաջանյանը (Պապաջանով): Նա հերքում է տարածվող այն անհիմն տեղեկատվությունը, որ «իբր թե Սարիղամիշի անտառներում հայերը հաւաքում էին ռազմամթերքը թիւրքերի համար: Այս բանն ասւում էր այն ժամանակ, երբ առաջատար դիրքերի վրայ ռուս գնդերի հետ կողքկողքի կռւում էին հայկական դրուժինաները, իսկ սահմանից այն կողմ հայերը զէնք էին առել իրենց կեանքը փրկելու համար»[4]:

Ինքնին հասկանալի, որ «Սարիղամիշի անտառներում թուրքերի համար փամփուշտներ հավաքող» հայերի մասին տեղեկատվությունը կեղծ էր և չէր համապատասխանում իրականությանը: Այն ուժերը, որոնք նպատակ են ունեցել տարածել նշված ապատեղեկատվությունը, ցանկացել էին պարզապես վարկաբեկել հայերին: Եվ կարևոր չէ, որ սուտը հերքվել է Դումայում, դա երկրորդական հարց է: Կարևորն այն է, որ կեղծիքը հնչել է և հայտնի չէ, թե Ռուսաս-

[1] *Լեո*, Անցյալից, էջ 304:
[2] *Լեո*, Անցյալից, էջ 304:
[3] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 74, թ. 2-3:
[4] «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 12, 13 մարտի, էջ 360:

տանի բնակչության որ մասը ծանոթացավ կամ տեղեկացավ այդ ապատեղեկատվությանը: Կարելի է ենթադրել, որ այդ և այլ կեղծիքների գլխավոր հեղինակը կարող էր լինել միայն ու միայն ժանդարմական (պահնորդական) ծառայությունը, քանի որ նրա իսկողության ներքո էին գտնվում տեղեկատվական գլխավոր միջոցները:

1916 թ. հունիսի 29-ին զինվորական Ռ. ավագ քահանա Բեկգուլյանցը գեներալ Թ. Նազարբեկյանին ցավով տեղեկացնում է հայ կամավորների վերաբերյալ տարածվող և աստիճանաբար թափ առնող ստահոդ լուրերի մասին: Հայերին մեղադրում են մահմեդականների զանգվածային կոտորածների մեջ: Թիֆլիսում գտնվող Գևորգ Ե-ին այդ մասին հայտնել է փոխարքան: Մեծ իշխանն ամբաստանել է հայերին Վանի շրջանում անկարգություններ կատարելու համար: Դրանք այնքան նողկալի են եղել, որ ինքը չի համարձակվել դրանց մանրամասները հայտնել կաթողիկոսին:

Ռ. ավագ քահանա Բեկգուլյանցն իր վրդովմունքն է հայտնում նմանօրինակ սադրիչ լուրերի մասին: Նա վկայակոչում մի քանի դեպքեր, որոնք հաստատում են՝ մահմեդականների կոտորածները կատարել են ոչ թե հայերը, այլ կանոնավոր զորամասեր, ինչպես օրինակ Սոուջբուլաղում մեծ թվով քրդերի կոտորածը: Նրա բնորոշմամբ. «Զարմանալի է, ճիշտ բոլոր չար ուժերն են հավաքվել մեր ժողովրդի կործանման համար»[1]: Նամակում Ռ. Բեկգուլյանցը խնդրում է գեներալից միջամտել, որպեսզի հայերի վրայից հանվեն նման անհիմն ու սադրիչ ամբաստանությունները:

Տեր հայրն ընդունում է, որ հայերի կողմից տեղի են ունեցել քրդերի և թուրքերի սպանությունների մասնակի դեպքեր, որոնք եղել են հիմնականում փոխվրեժներ՝ սպանված, առևանգված կամ բռնաբարված հարազատների «արյան գինը»: Սակայն նա ցավով նշում է, որ փոխարքային՝ Ն. Ռոմանովին նախընտրում են զեկուցել միայն հայերի մասնակցությամբ կատարված դեպքերի մասին: Իսկ այն, որ ողջ Թուրքիան թալանվել է, բոլոր գորգերը տեղափոխվել են

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 7 և շրջ.:

Կովկաս, իսկ մետաքսյա զգեստները կրում են թեթևաբարո կանայք՝ ոչ ոք ուշադրություն չի դարձնում[1]:

Լ. Լիսիցյանը նշում է, որ մարտական գործողությունների ողջ ընթացքում հայ կամավորական խմբերը կարիք ունեին ամեն ինչի: Նրանք, սակայն, խորթ զավակներ էին, որոնցից հրաժարվում էին զորամասերի պետերը, բայց դողում էին նրանց համար գլխավորապես մարտերի ժամանակ: Իսկ կռիվներից ազատ ժամանակ չգիտեին, ինչպես նրանց հետ վարվեն, ինչպես ազատվեն նրանց խնդրանքներից[2]:

1916 թ. հունվարի 22-ի ոստիկանական զեկուցագրում նշվում է, որ հայ կամավորական խմբերի լուծարումը վշտացրել է հայերին: «Հայերը շատ էին սիրում կամավորներին և սովորել էին կամավորական դրուժինաներին նայել որպես իրենց զորքի, որ դրուժինաների գլուխ կանգնած էին ժողովրդական հերոսներ Անդրոնիկը (Անդրանիկ – Ռ. Ս.), իշխան Արղութինսկի-Դոլգորուկին (Արղության-Երկայնաբազուկը – Ռ. Ս.),...Քեռին, Համազասպ Սեվաստյանը (Սրվանձտյանը – Ռ. Ս.), Վարդանը՝ «Դաշնակցություն» կուսակցության նշանավոր ահաբեկիչները»[3]:

Վանի ջոկատի հրամանատար գեներալ Ի. Տրուխինի վկայությամբ, իր կողմից Անդրանիկը մի քանի անգամ ներկայացվել է մարտական պարգևների, սակայն Կովկասյան բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկին հիմնականում անուշադրության է մատնել դրանք[4]:

Համաձայն փաստ է վկայում է գեներալ Մ. Սիլիկյանը: Արդեն խորհրդային տարիներին գեներալ Թ. Նազարբեկյանին գրած նամակներից մեկում, նա հայտնում է, որ Դրոյի դրուժինայի կատարած

---

[1] Նույն տեղում:

[2] ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 13:

[3] Նույն տեղում, ֆ. 1168, ց. 1, գ. 323, թ. 204:

[4] ***Андраник Озанян,*** Документы и материалы, էջ 176: Կովկասի ռուսալեզու մամուլն իր հերթին չէր տպագրում հոդվածներ, որտեղ ներկայացվում էին կամավորների մարտական գործողությունները: Հ. Թումանյանի վկայությամբ, "Каквазское слово" թերթի խմբագիրն ուղղակիորեն հայտարարում է. "Все нам интересно, кроме дружинников" («Մեզ ամեն ինչ հետաքրքրում է, բացի դրուժինիկներից»), տե՛ս ***Զաքարյան Ա.,*** Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.), Երևան, 2006, էջ 30:

քաջագործությունների մասին ինքը գրել է Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատարությանը, Դրոյին ու աչքի ընկած մարտիկներին ներկայացրել է Գեորգիևյան խաչով պարգևատրելու: Մ. Սիլիկյանը վկայում է. «Հետագայում ես իմացա, որ նրանք (կորպուսի հրամանատարությունը – Ռ. Ս.) մերժել են այդ պարգևները և խնդրել այլևս ներկայացումներ չանել»[1]: Ինչպես երևում է գեներալ Թ. Նազարբեկյանի դաշտային գրքույկից, նա էլ իր հերթին, 1916 թ. ապրիլի 21-ին, դիմել է գեներալ Ֆ. Չեռնոզուբովին, խնդրելով հայտնել, թե I դրուժինայի հրամանատարական կազմը՝ Անդրանիկը, Սմբատը և մյուսները ստացել են արդյո՞ք Դիլմանի ճակատամարտի համար ներկայացված բարձրագույն զինվորական պարգևները[2]:

Իրադրությունը կտրուկ փոխվում է, երբ Կովկասի փոխարքա և բանակի գլխավոր հրամանատար է նշանակվում մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովը: Նրա օրոք հասունանում է դրուժինաները լուծարելու գաղափարը, որը փուլ առ փուլ կյանքի է կոչվում: Բանն այն է, որ 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին իրադրությունը ռազմաճակատում կայունացել էր և վերացել էր փոխարքայությանն անմիջականորեն սպառնացող թուրքական ներխուժման վտանգը: Ռուսական հրամանատարությունն այլևս կարիք չուներ հայկական ազգային մարտական խմբերի: Ռիչարդ Հովհաննիսյանը իրավացիորեն նշում է. «1916 թ. ամառնամուտին, երբ հայկական լեռնաշխարհի մեծ մասում հաստատվել էր ռուսական բանակների վերահսկողությունը, հայերին սիրաշահելու կարիք այլևս չկար»[3]:

Հայ կամավորներին բազմիցս դրվատած գեներալ Պ. Օգանովսկին գաղտնի զեկուցագրերում անհրաժեշտ էր համարում կամավորների զինաթափումը և նրանց ռուսական կանոնավոր ստորաբաժանումների կազմում ընդգրկելը: Գեներալն իր տեսակետը բացատրում է հետևյալով. «Որպեսզի պատերազմի ավարտից հետո հնարավորություն ունենանք անհապաղ և արագ զինաթափել հայերին...Ռուսական կառավարության համար ցանկալի է, որպեսզի հա-

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. , գ. 22, թ. 9 շրջ.:
[2] Նույն տեղում, գ. 23, թ. 17:
[3] *Հովհաննիսյան Ռ. Գ.*, նշվ. աշխ., էջ 15:

յերը Թուրքական Հայաստանում (Արևմտյան Հայաստանում – Ռ.Ս.) նվազագույն տոկոս կազմեն»[1]:

Նույնիսկ որոշ ռուս զորահրամանատարներ, ինչպես գեներալ Ե. Մասլովսկին, վտարանդիության շրջանում գրած իրենց արժեքավոր հուշերում, աշխատում են թերագանահատել հայ կամավորական խմբերի թեկուզ փոքր, սակայն որոշ տեղերում կարևոր դերը: Գեներալը փորձում է քաքցնել ազգային կազմավորումների՝ հայկական, հյուսիսկովկասյան լեռնականների, վրացական, հետագա չծավալվելու իրական պատճառները: Նա որպես օրինակ բերում է հայերին, նշելով, որ կամավորները հիմնականում զբաղված էին քրդերի հետ հաշիվ մաքրելով. «Մարտերում տոկունություն չէին ցուցաբերում, ահա թե ինչու մեծ մասամբ զորամասերը (խմբերը – Ռ. Ս.) օգտագործվում էին որպես հետախույզներ կամ էլ ուղեկցողներ, որում նրանք անփոխարինելի էին»[2]: Եվ որպեսզի հայերը «հաշիվ չմաքրեն» քրդերի հետ, որոշվում է խմբերն ուղարկել Ադրբեջանական ջոկատ՝ Պարսկաստան[3]:

Ցանկանում ենք ընդգծել, որ գեներալ Ե. Մասլովսկին լինելով Կովկասյան բանակի գեներալ-կվարտիրմեյստեր (թիկունքի, այդ թվում հետախուզական ծառայության պետ), պետք է գիտենար, որ հայ կամավորական չորս խմբերը չեն եղել Ադրբեջանական ջոկատում: Գեներալ Ֆ. Չեռնոզուբովի Ադրբեջանական ջոկատում գտնվել է միայն Անդրանիկի խումբը: Բացի այդ, գեներալ Ե. Մասլովսկին, որպես թիկունքը, այդ թվում նաև հետախուզությունը տնօրինող բարձրաստիճան սպա, պետք է գիտենար, որ հայկական խմբերի ընդհանուր թիվն ութն էր: Եթե հայ կամավորներն իսկապես ցուցադրել են ցածր մարտունակություն, ապա ինչու էր Կովկասյան բանակի հրամանատարությունը խմբերի թիվը չորսից հասցնում ութի: Բացի այդ, հրամանատարները չէին խնդրի, որպեսզի հայկական ստորաբաժանումները չտեղափոխեն այլ զորամասեր, այլ շարունակեն մնալ իրենց ենթակայության ներքո:

---

[1] *Борьян Б. А.,* Армения, международная дипломатия и СССР, часть I, Москва-Ленинград., 1928, с. 361:

[2] *Масловский Е. В.,* указ. соч., с. 39.

[3] Там же.

Վերաբերմունքը հայ ազգային զինվորական կազմավորումների նկատմամբ չփոխվեց նույնիսկ այն բանից հետո, երբ խմբերի հիմքի վրա ստեղծվեցին վեց հրաձգային գումարտակներ: Գեներալ Գ. Ղորղանյանի կարծիքով, ռուսական հրամանատարությունը խուսափեց նշված գումարտակներից կազմել մեկ զորամաս: Դա արվեց այն պատճառով, որ «խոշոր ազգային զինուորական միութիւնները վտանգաւոր են պետութեան համար: Այսպէսով հայկական վաշտերը եւս, ինչպէս իրենցմէ առաջ խումբերը, դատապարտուած էին յածելու կովկասեան ռազմաճակատի ամբողջ տարածութեան վրայ, անցնելով ջոկատէ ջոկատ եւ շարունակ նոր հրամանատարներու ենթարկուելով»[1]:

Հայ կամավորների և կամավորական շարժման դեմ ուղղված վերջին գործողության հեղինակը գեներալ Ֆ. Չեռնոզուբովն էր: Նրա հրամանով բանակային կորպուսի դատարանը գեներալ Իգնատի Կլիմաշևսկու նախագահությամբ վերաքննում է ութ կամավորների գործը, որոնք ամբաստանվում էին քուրդ կանանց ու երեխաների սպանության մեջ: Սկզբնապես ռազմադաշտային դատարանը կամավորներին դատապարտում է տաժանակրության: Սակայն Ֆ. Չեռնոզուբովի կարգադրությամբ կորպուսային դատարանը վերաքննելով գործը, 1916 թ. սեպտեմբերի 10-ին, վեց[2] կամավորի դատապարտում է մահվան: Այս գործողությամբ անհրաժեշտ էր վերջնականապես վարկաբեկել կամավորական շարժումը և ցույց տալ ապագա «դաշնակից» քրդերին, որ ռուսական իշխանությունները ցանկանում են բարեկամական հարաբերություններ հաստատել իրենց հետ:

Հայ հասարակական-քաղաքական շրջանակների մի մասի մոտ ևս նկատվում է կրավորական վերաբերմունք կամավորական շարժ-

---

[1] *Ղորղանեան Գ.*, նշվ. հոդվածը, Հայրենիք, 1927, թիւ 12, հոկտեմբեր, էջ 110:

[2] Ըստ այլ աղբյուրի՝ չորս հոգու: Մահապատիժն ի կատար է ածվել 1916 թ. հոկտեմբերի 13-ին, տե՛ս «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916, N 47, 20 նոյեմբերի, էջ 1492: Այս դեպքը առիթ է տվել որոշ թուրք հեղինակների, ինչպես օրինակ Մեհմեդ Փերինչեքին հայտարարելու, որ իբր հայերն իրականացրել են քրդերի և թուրքերի զանգվածային կոտորածներ, տե՛ս *Перинчек М.*, Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов, Москва, 2011, с. 124–128.

ման նկատմամբ: Ռուսական իշխանությունները շտապեցին օգտվել այդ տրամադրություններից և օգտագործել իրենց ծրագրերում[1]:

Մ. Ներսիսյանի համոզմամբ «...Անդրանիկի և մյուս խմբերի կամավորները, մեր ժողովուրդը, կենաց ու մահու կռիվ էր մղում գերմանա-թուրքական իմպերիալիստների դեմ, ոչ թե Անտանտի, <u>այլ իր ազգային շահերի, իր գոյության, իր լավ ապագայի համար</u> (ընդգծումը հեղինակինն է՝ Ռ. Ս.)»[2]:

Պատմաբան Գ. Գալոյանի բնորոշմամբ, իշխանությունների աչքում կամավորական շարժումը «վեր էր ածվում ազգային մեծ ուժի և գնալով հակադրվում էր ցարական իշխանությունների քաղաքական նկրտումներին»[3]: Որպես ապացույց իր եզրակացության, պատմաբանը վկայակոչում է ռուսական պահնորդական վարչության ղեկավարի կարծիքը, եթե «Ռուսաստանը հրաժարվեր Հայաստանին (Արևմտյան – Ռ. Ս.) ինքնավարություն շնորհելուց, այդ նույն կամավորները վերածվելու էին պատրաստի զինական ուժի՝ ռուսական կառավարության դեմ պայքարելու և զենքը ձեռքներին «ազատ Հայաստան» նվաճելու համար»[4]: Ինքնին հասկանալի է, որ հայ ազգային, քաղաքական և կրոնական շրջանակներում նման տրամադրություններ չկային: Նման կեղծ տեղեկատվություն տարածվում էր, որպեսզի արդարացվի խմբերի լուծարումը:

Ռ. Շաթիրյանի համոզմամբ, իրենց չէր սարսափեցնում ռուսական իշխանության և բարձրագույն հրամանատարության մի մասի թշնամական վերաբերմունքն ոչ այնքան կամավորների, այլ ողջ հայ ժողովրդի նկատմամբ: Կամավորների համար առավել կարևոր էր ռուսական բանակի միջին հրամանատարական կազմի, կազակների և զինվորների համակրանքը հայ ժողովրդի և մասնավորապես հայ կամավորների նկատմամբ[5]:

Այսպիսով, 1914 թ. սեպտեմբերի 10-ին սկսած և մի քանի փուլ անցած (կազմավորման և մարտական գործողությունների) հայ կա-

---

[1] Տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 8.
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 97, թ. 11–12:
[3] *Գալոյան Գ.,* Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում, էջ 667:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս *Шатирян Р.,* указ. статья, 1917, N 14, 9 апреля, с. 8.

մավորական շարժումը պաշտոնապես ավարտվեց 1916 թ. սեպտեմբերին[1]: Շարժումն ընթացավ միջազգային և ներքաղաքական բարդ ու հակասական պայմաններում: Կամավորական ստորաբաժանումների ձևավորման, հանդերձավորման, ուսուցման ու ֆինանսավորման գրեթե ողջ ծանրությունը կրեց ՀՅԴ-ը: Կուսակցությունը հարկադրված է եղել անցնել ծանր փորձությունների ճանապարհ, որը լի էր բազմաթիվ տեսանելի և անտեսանելի արգելքներով ու խութերով: Եվ դա հասկանալի էր: Հայությունը XVIII դարի Սյունիքի և Արցախի ազատագրական շարժումներից գրեթե երկու դար անց ծեռնամուխ եղավ նման թվաքանակ և մարտակազմ ունեցող զինվորական ստորաբաժանումների կազմավորմանը: Կուտակվեց զգալի մարտական փորձ: Գլխավորապես հայդուկային պայքարի փորձ ունեցող մարտիկները կոփվեցին մարտական բազմաբնույթ գործողությունների ընթացքում: Նրանք անմիջականորեն ծանոթացան ռուսական և թուրքական ռազմարվեստին: Կամավորները գործում էին ռուս-թուրքական ռազմաճակատի գրեթե բոլոր կարևոր տեղամասերում, կլիմայական տարբեր պայմաններում և լեռնային ռելիեֆի բարդ տեղամասերում: Հաճախ նրանք զրկված են եղել ամենատարրական հանդերձանքից, սակայն շարունակել են մասնակցել մարտական գործողություններին, արժանանալով ռուս զինվորականության հարգանքին ու բարձր գնահատականին:

Կամավորական շարժման առաջին փուլում՝ 1914 թ. հոկտեմբեր – 1915 թ. հունվար, երբ խմբերը մասնակցում են մարտական գործողություններին, առավել ծանր փորձությունների ենթարկվեց Քեռու հրամանատարության ներքո գտնվող IV դրուժինան, հայտնվելով թուրքական գերակշիռ ուժի՝ հետևակային դիվիզիայի հարձակման տեղամասում: Դրուժինայի հրամանատարի հմուտ ղեկավարության շնորհիվ կամավորները և ռուս զինվորները, ճիշտ է ծանր կորուստներ տալով, այնուամենայնիվ փրկվեցին վերջնական ջախջախումից և գերումից: Սարիղամիշյան օպերացիայից հետո

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 213: Ն. Աղբալյանի կարծիքով, կամավորական շարժումն անցել է երկու փուլ. «սկզբից մինչև ապրիլի 1-ը և մինչև կամավորական գնդերի լուծարումը», տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 214:

խմբերն ուղարկվեցին թիկունք՝ հանգստի և համալրման: Այս ժամանակահատվածն օգտագործվում է խմբերի հրամանատարների և Ազգային բյուրոյի կողմից առկա թերությունները ու վրիպումները վերացնելու համար:

1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. մարտ անցկացված պարապմունքներն իրենց արդյունքն ունեցան: Ապրիլ-հուլիս ամիսներին տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում կամավորները ցուցադրեցին ոչ միայն քաջության բազմաթիվ օրինակներ, այլև ժամանակակից մարտ մղելու կարողություն: Այս խնդրում զգալի էր ռուսական կանոնավոր բանակի տարբեր զորամասերից գործուղված հայ ենթասպաների դերը, որոնք ևս իրենց ավանդը ներդրեցին մարտիկների ուսուցման գործում:

Կամավորների մղած առավել նշանավոր մարտը Դիլմանի ճակատամարտն էր: Անդրանիկի հրամանատարությամբ գործող I խումբը, շնորհիվ հրամանատարի հեռատեսության, կարողացավ ժամանակին հասնել և լուրջ լումա ունենալ ոչ միայն Արևելյան Հայաստանի, Կովկասի, այլև ողջ ռուս-թուրքական ռազմաճակատի համար բախտորոշ այդ ճակատամարտում: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ տեղի կունենար, եթե Խալիլի դիվիզիային հաջողվեր իրականացնել մտահաղացումը և դուրս գալ մահմեդականներով բնակեցված Անդրկովկաս, ապա Հյուսիսային Կովկաս: Ռուսաստանը հարկադրված կլիներ պայքարել ոչ միայն կովկասյան թաթարների, այլև Հյուսիսային Կովկասի լեռնականների դեմ: Կամավորների մասնակցությունը մարտական գործողություններին հնարավորություն տվեցին թուրք-քրդական գերությունից ազատել զգալի թվով հայ կանանց ու երեխաների: Ըստ Կ. Սասունու, շնորհիվ ինքնապաշտպանության և կամավորների, Վանում և Նահանգում ազատվում են 110 հազար և Մուշ-Սասուն շրջաններում՝ մոտ 20 հազար հայեր[1], ինչպես նաև ասորիներ ու եզդիներ: Ն. Աղբալյանի բնորոշմամբ «Հայ կամավորական շարժումը հայկական հարցի հրապարակ նետվելուն և դաշնակիցների կողմից պաշտպանվելու գործում

[1] *Սասունի Կ.,* Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (Ժե դարէն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, 1969, էջ 217:

ունեցել է իր մեծ նշանակությունը: Նա ցույց տվեց, որ հայ ցեղը կարող է կազմակերպված պաշտպանել իր երկիրը, ցուցադրեց ռազմական ոգին և ուժեղացրեց հայ ինքնազգացումը»[1]:

Երկրորդ փուլում Արարատյան գնդի առավել կարևոր մարտական հաջողությունը Վանի ազատագրումն էր: Կամավորական խմբերի հրամանատարները չնայած գեներալ Ա. Նիկոլաևի մերժմանը, որոշում են օգնության հասնել օրհասական պայքար մղող Վանի և նահանգի բնակչությանը: Շնորհիվ համարձակ այդ որոշման, փրկվեց հայ և ասորի բնակչության մեծ մասը:

Բայազետի ջոկատում հայ կամավորական խմբերի գտնվելը և մասնակցությունը մարտական գործողություններին սթափեցնող նշանակություն ունեցավ հակառակորդի վրա: Ռուս պետական գործիչների համար խորթ երևույթ էր այն հանգամանքը, որ հայ կամավորական խմբերից բացի, Վանում ստեղծվել էր հայկական ժամանակավոր իշխանություն:

Ռուսական կառավարությունը երկյուղում էր, որ Վանի նահանգապետությունը կարող է հիմք հանդիսանալ ինքնավար Հայաստանի ստեղծմանը: Իսկ նման պետական կազմավորում ոչ Նիկոլայ II-ը և ոչ էլ ռուսական իշխանությունը չէին ծրագրում և երբեք էլ նպատակ չունեին իրականացնել:

Կամավորական շարժման վերջին փուլն ընդգրկում է 1915 թ. օգոստոսից մինչև 1916 թ. սեպտեմբեր: Հայ աշխարհազորայինները մասնակցում են Էրզրումի օպերացիային, Մուշի և Բիթլիսի գրավմանը, որից հետո հայ կամավորական խմբերը դուրս են բերվում մարտադաշտից և լուծարվում:

1914–1916 թթ. կամավորական շարժումը հայ հասարակական-քաղաքական շրջանակների կողմից արժանացել է տարբեր գնահատականների: Մի մասը խորապես հիասթափված ռուսական կառավարության վերաբերմունքից, հանգեց եզրակացության, որ կամավորական շարժումը պատճառ դարձավ հայերի զանգվածային կոտորածների և բռնագաղթի: Այդ ամենին ավելանում է ռուսական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 214:

կազակ և ռուս վերաբնակիչներով բնակեցնելու ցանկությունը և դրան ուղղված առաջին գործնական քայլերը: Միաժամանակ, կամավորական շարժման ձախողումն օգտագործվում էր հակադաշնակցական հայացքներ և տրամադրություններ ունեցող հասարակական-քաղաքական գործիչների կողմից ՀՅԴ-ի դեմ իրենց քարոզչությունն ուժեղացնելու նպատակով: Նրանց համար պահը հարմար էր նշված «հարձակումը» կատարելու համար:

Նման պայմաններում հայ հասարակությունը հայտնվել էր երկակի, անորոշ վիճակում: Նրան անհասկանալի էր ռուսական իշխանությունների կրավորական դիրքորոշումը հայերի նկատմամբ, որոնք ամբողջապես նվիրվեցին կամավորական շարժմանը, տրամադրելով զգալի միջոցներ: Անհասկանալի էր, թե ինչու այսքան զոհողություններ ցուցաբերած հայությունն արժանացավ նման վերաբերմունքի:

Մ. Ներսիսյանը իրավացիորեն նշում է. «Պատմության կեղծարարները, ինչպես հայտնի է, պնդում են, որ հայոց Մեծ Եղեռնի հիմնական պատճառը իբր եղել է 1914 թ. կազմակերպված հայ կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը և Վանի հայության 1915 թ. ապստամբությունը: Միանգամայն անհիմն ու շինծու պատճառաբանություններ»[1]:

Ցավոք հայ կամավորների մարտական ունակությունները գնահատվեցին միայն 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական իշխանությունները ելնելով ռուս-թուրքական ռազմաճակատում ստեղծված իրադրությունից, թույլատրեցին հայերին կազմակերպել ազգային զինվորական կազմավորումներ:

Հայկական կամավորական խմբերի լուծարումից հետո Կովկասյան բանակի հրամանատարությունը նրանց հենքի հիման վրա կազմավորում է հրաձգային վեց գումարտակ: Յուրաքանչյուր գումարտակ կազմված էր լինելու չորս վաշտից, հետախուզական դասակից (34 մարտիկ) և հեծյալ ջոկից (9 մարտիկ): Ընդհանուր թվա-

[1] *Ներսիսյան Մ. Գ.*, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 83, տե՛ս նաև *Սահակյան Ռ.*, Արևմտահայ ինքնապաշտպանական կռիվները Մ. Գ. Ներսիսյանի գնահատմամբ (1890-ական թվականներին և 1915 թվին), Հանդես, (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2011, գիրք 12, էջ 190:

քանակը նախատեսվում էր հազար մարտիկից ավելի: Ն. Յուդենիչի 1916 թ. մարտի 13-ի N 179 հրամանով սկսվում է դրուժինաների վերակազմավորումը[1]: II դրուժինան վերակազմավորվում է հրածգային 1-ին գումարտակի, III-ը՝ 2-րդ, IV-ը՝ 5-րդ, V-ը՝ 4-րդ, VI-ը՝ 3-րդ, VII-ը՝ 6-րդի: Իսկ I և VIII խմբերն ամբողջությամբ լուծարվում են:

1916–1917 թթ. հայկական հրածգային գումարտակները ռուսական զանազան զորամասերի կազմում մասնակցում են տարբեր մարտական գործողությունների[2]: 1914 թ. հոկտեմբերի 23-ից մինչև հունիսի 1-ը մարտական գործողությունների ընթացքում զոհվում են ավելի քան 700 կամավորական[3]: Մարտիկներից մոտ 500-ը պարգևատրվում են Գեորգիևյան խաչերով և մեդալներով[4]:

Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ սկսվեց հասարակության ժողովրդավարացման գործընթացը, բանակն ու նավատորմն անմաս չմնացին «վերափոխումներից», որոնք քայքայիչ և բարոյալքող ազդեցություն ունեցան զինծառայողների վրա: Կովկասյան բանակում և Սև ծովյան նավատորմում ծայր է առնում ռազմաճակատը լքելու և ծննդավայր վերադառնալու բուռն ցանկությունը: Այդ ամենին նպաստում են նաև ժամանակավոր կառավարության մի շարք «հեղափոխական» որոշումներն ու հրամանները, որոնց հետևանքով զինվորական կարգապահությունն ավելի է թուլանում:

---

[1] *Նազարյան Ա. Ս.,* Հայկական զորամասերի կազմավորումը, էջ 67: 1916 թ. ամռանը մամուլը հայտնում է ռուսական հրամանատարությունը թույլատրել է Վանում կազմել ասորական կամավորական երկու գնդեր: Նրանցից յուրաքանչյուրում ներգրավվում են հազար հոգի: Ասորիների հոգևոր առաջնորդ Մար Շիմունի Բենիամինի գլխավորությամբ կազմակերպվում է կոմիտե՝ ստորաբաժանումների ֆինանսավորման հետ կապված խնդիրները լուծելու համար: Սակայն տարբեր պատճառներով կազմվում է միայն մեկը: Թղթակիցը հաղորդման վերջում գրում է. «Յաջողութիւն մեր բաղդակից ասօրիներին, բայց և միևնոյն ժամանակ մեծ զգուշութիւն և հեռատեսութիւն», տե՛ս «Արեւ», 1916, N 124, 21 օգոստոսի: Թղթակցի վերջին մաղթանքը հասկանալի է լինում կարճ ժամանակ անց: Քրդերի հետ բանակցությունների ուղարկված իշխան Շախովսկու հրամանով ասորական գունդը զինաթափ է արվում, տե՛ս «Արեւ», 1917, N 69, 7 ապրիլի:

[2] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), էջ 273–316:

[3] Նույն տեղում, էջ 91:

[4] Նույն տեղում, էջ 64:

Սկսած 1917 թ. ամռանից և հատկապես աշնանից Կովկասյան ռազմաճակատից սկսում են զանգվածաբար հեռանալ ռուս զինվորները: Ռազմաճակատի պաշտպանության թուլացումը կարող էր հնարավորություն տալ օսմանյան բանակին անցնել լայնածավալ հարձակման, ուստի Կովկասյան բանակի հրամանատարությունը կրկին անդրադառնում է հայկական մարտական ստորաբաժանումներին: Դա բացատրվում էր նրանով, որ հայերը հակված էին շարունակել կռիվը հակառակորդի դեմ, և հայկական ստորաբաժանումները չէին ենթարկվել բոլշևիկյան հակապատերազմական քարոզչության[1]:

Հայ հասարակական-քաղաքական և կրոնական ղեկավարության ճնշող մեծամասնությունը Հայաստանի ազատագրման և հայ ժողովրդի հետագա բախտը շարունակում էր կապել Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ[2]: Նրա հույսերն ամրացան այն բանից հետո, երբ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը վերացրեց ինքնակալությունը և Ռուսաստանում հաստատվեց ժողովրդավարություն:

Ռուսական ժամանակավոր կառավարությունը գնահատեց հայերի դերը ռուս-թուրքական ռազմաճակատում և քայլեր ձեռնարկեց վերականգնելու իշխանության նկատմամբ հայերի խաթարված վերաբերմունքը: Այդ քայլերից մեկը՝ հայկական ազգային խոշոր զորամիավորումների ստեղծումն էր, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի կառավարման մեջ մեծ թվով հայերի ընդգրկելը, քրդերի նկատմամբ նախկին կառավարության որդեգրած քաղաքականությունից հրաժարվելը և այլն: Ինքնին հասկանալի է, որ հայերից կազմված զորամիավորումը՝ Հայկական կորպուսն իր թվաքանակով զիջում էր ռուսական բանակին, սակայն դա փոխհատուցվում էր ռազմաճակատի յուրահատկություններով: Դրանք են՝ տեղանքի գերազանց իմացու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 204[1], թ. 40–41 շրջ.: Արտաշես Չիլինգարյանի բնութագրմամբ «Ռուս պետութիւնը անդամահատւում է դրսից և տարալուծւում է ներսից անընդհատ, սպառնական թափով ու չափերով», տե՛ս *Չիլինգարեան Ա.,* Քաղաքական վերածնութեան ճանապարհին,Գործ, Բագու, 1917, մայիս-հունիս, N 7–8, էջ 134:

[2] Դավիթ Անանունը վերլուծելով փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված բարդ իրավիճակը եզրակացնում է. «դրութիւնը այնպէս է, որ մենք չենք կարող բաց թողնել ռուսի փեշը», տե՛ս *Անանուն Դ.,* Ազատութիւն եւ շինարարութիւն, Գործ, 1917, մայիս-հունիս, N 5–6, էջ 150:

թյունը, լեռնային պայմաններում մարտական գործողություններ մղելու ունակությունը, գաղափարական համոզվածությունը՝ պայքարի արդարացիության մեջ և այլն:

Հայկական զինուժի մարտունակությունը դրսևորվեց 1918 թ. մայիսյան հերոսամարտերի, 1918 թ. Բաքվի հայության ինքնապաշտպանության, Պարսկաստանում ու Միջագետքում բրիտանական և ֆրանսիական զորքերի կազմում թուրքերի դեմ մղած մարտերի ժամանակ: Նշված մարտական գործողություններին մասնակցում էին զգալի թվով կամավորներ և նրանց հրամանատարները:

## բ) Ցեղասպանության իրագործումը

Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն անցնելով իշխանության գլուխ, ամրագրեց պանթուրքիզմի ազգայնամոլ քաղաքականությունը: Այն ուղղված էր կայսրության ազգային փոքրամասնությունների, առաջին հերթին՝ հայերի դեմ: Հայաստանը և հայերը խոչնդոտ էին «Մեծ Թուրան» երևակայական կայսրության ստեղծման համար: Երիտթուրքերը ցանկանում էին զավթել Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասը, Ղրիմը, Պովոլժիեն, Միջին Ասիան և այն տարածքները, որտեղ բնակվում էին թյուրքալեզու ժողովուրդները: Միաժամանակ վերացվելու էր Հայկական հարցը, որն օգտագործվում էր մեծ տերությունների կողմից Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Թուրք կառավարողները նպատակ էին դրել ստեղծել միատարր Թուրքիա՝ «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով: Այդ մտայնությունն իր արտահայտությունն էր գտել տակավին 1910–1911 թթ. Սալոնիկում կայացած երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի համագումարների հատուկ որոշումների մեջ, որը նախատեսում էր կայսրության տարածքում բնակվող ոչ թուրք մահմեդականների թուրքացում, քրիստոնյաների ոչնչացում:

Օգտագործելով պատերազմական իրադրությունը, երիտթուրքերը հնարավորություն էին ստանում իրականացնել օսմանահպա-

տակ հայերի ոչնչացումը: Միաժամանակ իշխանությունները հնարավորություն էին ստանում տիրել հայերի ունեցվածքին, վերացնելով իրենց համար անցանկալի տնտեսական մրցակիցներին: Արևմտահայերի ոչնչացման ծրագրի հեղինակներն ու իրագործողներն էին՝ ներքին գործերի նախարար և մեծ վեզիր (1917–1918 թթ.) Թալեաթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, ծովային նախարար և Պաղեստինյան ճակատի հրամանատար Ջեմալ փաշան, ֆինանսների նախարար Ջավիդ բեյը, երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ, մասնագիտությամբ բժիշկներ, Բեհաէդդին Շաքիր և Նազըմ բեյերն ու ուրիշները[1]: Միաժամանակ Օսմանյան կառավարությունը փորձում էր սիրաշահել կայսրության ազգային փոքրամասնություններին, աշխատելով օգտագործել նրանց ուժերն ու հնարավորություններն առաջիկա պատերազմում: Այսպես, երբ 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ը էրզրումում տեղի ունեցած ՀՅԴ-ն VIII ընդհանուր ժողովը որոշեց. «Պատերազմի պարագային, յուրաքանչյուր պետության քաղաքացի պետք է կատարե իր պարտականությունները՝ իր պետության նկատմամբ», այնտեղ շտապեցին Բեհաէդդին և Նաճի բեյերը: Նրանք փորձում են համոզել դաշնակցականներին, որպեսզի վերջիններս դրդեն ապստամբել Կովկասի իրենց հայրենակիցներին և կազմեն կամավորական ստորաբաժանումներ[2]: Երիտթուրքական գործիչները, սակայն, հարկադրված են լինում ձեռնունայն հեռանալ, երբ բանակցություններ վարող Ռոստոմը, Վռամյանը և

---

[1] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը, թարգմ. և ծանոթագր. Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 14–18, տե՛ս նաև *Սաֆրաստյան Ռ. Ա.*, Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը. Թուրքական երեք փաստաթղթերի համեմատական վերլուծություն, Վէմ, Երևան, 2009, թիվ 1, ապրիլ-հունիս, էջ 49–50:

[2] Երիտթուրք գործիչները խոստանում են ինքնավարություն տալ հայերին և վրացիներին, իսկ թաթարներին տեղափոխել Թուրքիայի խորքերը: Նրանք ուղղակի հայտարարում են. «Մեզ ձեռնտու է Թուրքիայի և Ռուսաստանի միջև ունենալ հայկական և վրացական ինքնավար երկրամասեր, որպեսզի ապահովենք մեր սահմանները Ռուսաստանի ոտնձգություններից», տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 7–8:

Ակնունին (Խաչատուր Մալումյան) վկայակոչում են ժողովի որոշումները[1]:

1914 թ. հոկտեմբերի սկզբներին ասորիների առաջնորդ Մար-Շիմուն Բենիամինին օսմանյան պաշտոնյաներն առատ խոստումներ տվեցին այն պայմանով, որ ասորիներն աջակցեն իշխանություններին[2]: Նույն ամսին Թալեաթի նախագահությամբ հրավիրվեց գաղտնի խորհրդակցություն: Կազմավորվեց հատուկ մարմին՝ երեքի գործադիր կոմիտե: Նրանում ընդգրկվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար Նազըմը, լուսավորության նախարար Շյուքրին և կուսակցության գաղափարախոս Բեհաէդդին Շաքիրը: Եռյակն օժտվեց արտակարգ լիազորություններով: Նրանց հանձնարարվեց իրականացնել օսմանահպատակ հայերի բռնագաղթն ու կոտորածները:

Բեհաէդդին Շաքիրի անմիջական գլխավորությամբ կազմվեց «Թեշքիլաթը մահսուսե» («Հատուկ կազմակերպություն», թուրքերեն՝ „Teşkilat-ı Mahsûsa“): Այստեղ հիմնականում ընդգրկվեցին բանտերից ազատված հանցագործներ[3]: 1914 թ. նոյեմբերին միայն Յոզղատի

---

[1] Նման որոշումն Ուիլհստոն Չերչիլը հետևյալ կերպ է որակում. «Հայերը նախընտրեցին թշնամի երկու բանակներուն մեջ ծառայելով եղբայրասպան կռիվ մղել, քան դավաճանել թուրք և ռուս քաղաքացիի իրենց պարտականությանց», տե՛ս *Տասնապետեան Հ.*, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութիւնեն մինչեւ Ժ. Ընդ. ժողովը (1890–1924), Աթէնք, 1988, էջ 108: Վ. Ե. Շամբարովի գնահատմամբ, ՀՅԴ-ի մերժումը լոկ քարոզչական առիթ դարձավ երիտթուրքերի հակահայ գործողությունների համար, տե՛ս *Шамбаров В. Е.*, указ. соч., с. 371.

[2] Տե՛ս *Саргизов Л. М.*, указ соч., с. 26.

[3] *Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ.*, Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Երևան, 1995, էջ 23: «Թեշքիլաթը մահսուսեի» կազմակերպման թվականի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Ըստ Ռ. Գասպարյանի՝ 1914 թ. օգոստոս, տե՛ս *Գասպարյան Ռ. Հ.*, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005, էջ 98: Մեկ այլ տեղեկության համաձայն, կազմակերպությունը գործել է 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ և հիմնվել է Էնվեր փաշայի կողմից քաղաքական հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու համար, տե՛ս *Ушаков А. Г.*, Феномен Ататюрка. Турецкий правитель, творец и диктатор, Москва, 2002, с. 80: Պրոֆեսոր Վ. Տատրյանի վկայակոչած մեկ այլ փաստից կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունը գործել է դեռևս 1910 թ., տե՛ս *Dadrian V. N.*, Documentation of the Armenian Genocide in the Turkish Sources, pp. 119–120; See Genocide: A Critical Bibliographic Review, vol. 2, London, 1991.

բանտից ազատ արձակվեց 124, 1915 թ. մարտին՝ 249 հոգի[1]: Նմանօրինակ «մարդասիրական» վերաբերմունքը կասկածելի է թվում Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վռամյանին: 1915 թ. մարտի 5-ին ՆԳ նախարարությանն ուղղված հեռագրում նա իր վրդովմունքն է հայտնում այդ առթիվ և պահանջում է համաձնման մոտեցում հայ բանտարկյալների նկատմամբ[2]: Ընդհանուր առմամբ «Թեշքիլաթը մահսուսե»-ի կազմում գործում էին մոտ 40 հազար հոգի[3]: Փաստորեն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն իրականացնում էր Սալոնիկում կայացած գաղտնի որոշումները: Հայերի ցեղասպանությունը դյուրացնելու նպատակով ողջ կայսրությունը բաժանվում է երեք տարածաշրջանների.

1. Կիլիկիա և Սիրիա, 2. Արևելյան Անատոլիա (Արևմտյան Հայաստան) և 3. Արևմտյան Անատոլիա:

1914 թ. սեպտեմբերին հրդեհվում են 30 հայկական և ասորական գյուղ Ուրմիայի շրջանում: Սեպտեմբերի 18-ի զեկուցագրում Ուրմիայի ռուսական փոխհյուպատոս Պավել Վվեդենսկին հաղորդում է, որ պարսկահպատակ քրդերն աստիճանաբար կողմնորոշվում են դեպի թուրքերը: Նրանց շրջանում սադրիչ գործունեություն են ծավալել գերմանական և թուրքական հետախուզությունները[4]: Հոկտեմբերի 16-ին, ռուս-թուրքական պատերազմն սկսելու օրը,

---

[1] *Գրիկէր,* Եօզղատի հայասպանութեան վավերագրական պատմութիւնը, Նիւ-Յորք, 1918, էջ 215, տե՛ս նաև ***Davis L. A.,*** The Slaughterhouse Province: An American Diplomats Report on the Armenian Genocide, 1915–1917, Edited with an Introduction and Notes by S. K. Blair, New Rochelle, New York, 1989, p. 58.

[2] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 416, թ. 35:

[3] *Գասպարյան Ռ. Հ.,* նշվ. աշխ., էջ 98–99: Թուրքիայի պարտությունից հետո, 1919 թ. հունվարի 8-ին Կ. Պոլսում կազմվում են Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական ատյաններ: Դատավարության ընթացքում բացահայտվեց, որ հայերի ցեղասպանության հրամանները տրվել են բանավոր և գրավոր, տե՛ս *Ներսիսյան Մ.,* Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 101: Հետաքննության ժամանակ պարզվեց, որ «Թեշքիլաթը մահսուսե»-ի անվան տակ գործել են երկու գաղտնի կազմակերպություններ: Առաջինը հիմնվել է ռազմական նախարարությունում և գլխավորել է Սուլեյման Ասքերի բեյը: Երկրորդը կազմավորվել և գործել է ՆԳ նախարարության ենթակայության ներքո, որը գլխավորել է Բեհաէդդին Շաքիր բեյը (տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության, էջ 18):

[4] ***Саргизов Л. М.,*** указ. соч., с. 26.

թուրք ժանդարմների կողմից սպանվում է Ալաշկերտի առաջնորդական փոխանորդի տեղակալ, քահանա Հովսեփը[1]:

Ինչպես նշում է Դ. Մարտիրոսյանը ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել 1914 թ. վերջին և 1915 թ. սկզբին Բաթումի նահանգում տեղի ունեցած իրադարձությունները: Պատմաբանի համոզմամբ, վերջին հարյուր տարվա ընթացքում, բացի որոշ առանձին, հատվածաբար տեղեկություններից, որոնք կարելի է գտնել ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունների մասնակիցներ գեներալներ Ե. Մասլովսկու և Ն. Կորսունի աշխատություններում, հիմնականում այս ուղղությամբ չեն կատարվել հետազոտություններ[2]: Դ. Մարտիրոսյանի համար տարօրինակ է թվում, որ երկու հեղինակներն էլ իրենց աշխատություններում հիշատակում են «աջարական ապստամբության» մասին, սակայն այդ ուղղությամբ որևէ ուսումնասիրություն չեն կատարում պարզաբանելու ապստամբության պատճառները և հետևանքները քրիստոնյա ժողովուրդների, գլխավորապես հայերի համար[3]:

Պատմաբանի համոզմամբ, Բաթումի նահանգում տեղի ունեցած իրադարձություններն ուղղակիորեն առնչվում են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացված հայոց ցեղասպանության հետ: Խռովարարները հայերի նկատմամբ իրականացրել են աննկարագրելի դաժանություններ, որոնք ուղեկցվել են բնակչության թալանով, կողոպուտով, սպանություններով, բռնի մահմեդականացմամբ և առևանգմամբ: Ոճրագործություններին անմիջական մասնակցություն է ունեցել «Հատուկ կազմակերպությունը»[4]:

---

[1] "Армянский вестник", 1916, 3 июля, N 23, с. 5.

[2] *Мартиросян Д.,* Трагедия батумских армян: просто "резня" или предвестник армянского геноцида ? http://regnum.ru/news/1236705.html

[3] Նշենք, որ պատերազմի տարիներին, ԿՀԲԸ-ը իր լիազորներին ուղարկում է տարբեր վայրեր հայերի նկատմամբ ոճրագործությունները արձանագրելու և ողջ մնացած բնակիչների կեցությունը կազմակերպելու, նաև իրավաբանական օգնություն ցույց տալու համար, տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 45–46:

[4] Է. Էրիկսոնը մերժում է «թեշքիլաթը մահսուսեի» մասնակցությունը կոտորածներին, տե՛ս ***Erickson Edward J.,*** New Records Undercut Old Blame Reexamining History, „Middle East Quarterly", Summer 2006, pp. 67–75, http://www.meforum.org/991/armenian-massacres-new-records-undercut-old-blame: Նրա մերժողական կեցվածքը հերքում է թուրքական VIII գնդի հրամանատար, Շտաբգեն: 1915 թ. օգոստո-

Մարտական գործողությունների սկզբում փոքրաքանակ Կուբանյան I գումարտակը՝ գնդապետ Գ. Ռոստորգուևի հրամանատարությամբ չկարողանալով դիմագրավել գերազանց թվով թուրքական զորքերին և տեղական մահմեդական բնակչության դիմադրությանը, ի զորու չեղավ կազմակերպել պաշտպանություն և 1914 թ. նոյեմբերի 5-ին (18-ին) թողեց Արդվին քաղաքը, նահանջեց Բաթումի ուղղությամբ[1]: Փաստորեն, 1914 թ. նոյեմբերի կեսին խռովարարների և նրանց աջակցող թուրք սահմանապահների ու ժանդարմների ձեռքն անցավ ողջ Բաթումի նահանգը, բացառությամբ Միխայլովսկյան ամրոցի (ամրոցային շրջանի) և Բաթումի օկրուգի Վերին Աջարիայի տեղամասի:

Բաթումի նահանգի ռուսահպատակ մահմեդական բնակչության զինված խռովությունն անակնկալ անախորժություն է դառնում ռուսական իշխանությունների համար: Արդվինում սպանվում են 27 տղամարդ, իսկ 15 հոգու նահանջելիս գերեվարում են թուրքերը[2]: Արդվինում գործող չեթեները և տեղական մահմեդականներն ուսեցել են քաղաքի հայերի անվանացուցակը և խուզարկությունները, թալանը կատարել են ըստ այդ ցուցակի[3]: Շրջակա գյուղերի թուրքերը սայլերով և ձիերով «շտապում» են Արդվին՝ հայերի գույքը կողոպտելու համար[4]:

Ինչպես երևում է հետպատերազմյան տարիներին թուրքական Գլխավոր շտաբի կողմից հրատարակված «Առաջին համաշխարհային պատերազմի թուրքական Կովկասյան ռազմաճակատում III

---

սի 23-ի գաղտնի զեկուցագրում նա ուղղակիորեն նշում է, որ «Հատուկ կազմակերպությունը» կազմված էր քրեական հանցագործներից, տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и материалы. Ред. и сост. Ю. Г. Барсегов, в 2 т., т. 1, Москва, 2002, с. 262.

[1] Տե՛ս *Мартиросян Д.*, Трагедия батумских армян, http://regnum.ru/news/1236705.html. Ըստ տանծոտցի Վ. Մազմանյանի, ռուս-թուրքական պատերազմն սկսելուց հետո, Տանծոտ են գալիս քարոզիչներ ոչ միայն Թուրքիայից, այլև Բաքվից ու Թիֆլիսից, տե՛ս *Կիրիմյան Ա.*, Վարդան Մազմանյանի վկայությունները Բաթումի մարզի Տանծոտ գյուղի բնակչության կոտորածների մասին, 2005, ԲՀԱ, N 1, էջ 4, տե՛ս նաև *Арутюнян А. О.*, указ. соч., с. 160-161.

[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 117, թ. 29 շրջ.:

[3] Նույն տեղում, թ. 73:

[4] Նույն տեղում, գ. 115, թ. 67:

բանակի օպերացիաները» գրքից, միակ կիսազինվորական կազմավորումը, որը գործել է Բաթումի մարզում, եղել է «Գաղտնի կազմակերպությունը»[1]:

Ծանր կորուստներ է կրում Արդանուջի և Տաճձոտի հայ բնակչությունը: Դաժանաբար սպանվում են արական սեռի գրեթե բոլոր ներկայացուցիչները, սկսած տաս տարեկանից: Ազատվում են միայն կանայք և մանկահասակ երեխաները: Միայն Տաճձոտում 24 կին ինքնասպանություն է գործում, որպեսզի չտրվեն բարբարոսների վայրագ կրքերին[2]: 1914 թ. նոյեմբերի 16-ի լույս 17-ի գիշերը սկսվում է Արդանուջի հայ բնակչության կողոպուտը և սպանությունները, որոնք շարունակվում են մինչև նոյեմբերի 22-ը[3]:

Չեթեներն իրենցից ներկայացնում էին պանթյուրքիստներից և պանիսլամիստներից հավաքագրված, կիսառազմականացված կազմավորում՝ իսլամական միլիցիա: Վերը հիշատակած թուրքական Գլխավոր շտաբի հրատարակած գրքում Բաթումի օկրուգում չեթեների գործողությունները բնութագրվում են որպես հայրենասիրական, իսկ ղեկավարներին՝ գաղափարական առաջնորդներ[4]:

Բաթումի նահանգի մահմեդական բնակչությունը 1915 թ. փետրվարին իրենց բողոքն են հայտնել ռուսական իշխանություններին, որ իրենց հավատակիցների մի մասի դավաճանության հետևանքով իրենք հայտնվել են ծանր վիճակում: Նրանք իրենց դիմումում մի շատ հետաքրքիր և կարևոր փաստ են հայտնել՝ Բաթումի մարզ խուժած չեթեները կազմված են եղել «Աջարիայի բնակչության տականքներից և թուրքական բանտերի տաժանակիրներից (ընդգծումը մերն է – Ռ. Ս.)»[5]:

---

[1] Տես *Мартиросян Д.,* Трагедия батумских армян, http://regnum.ru/news/1236705.html

[2] ՀԱԱ, ֆ. 502, ց. 1, գ. 145, թ. 4:

[3] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 115, թ. 78:

[4] Տես *Мартиросян Д.,* Трагедия батумских армян, http://regnum.ru/news/1236705.html

[5] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 3, գ. 1595, թ. 1: Համանման ավազակախմբեր կազմվում են Տրապիզոնի նահանգում բնակվող լազերից, տե՛ս „Кавказ", 1916, N 98, 1 мая.

Կարսի մարզում, բացի հայերից, տուժում են նաև հույները: Կողոպտվում և ավերվում են հունական 50 գյուղեր, պղծվում կամ վնասվում են ուղղափառ եկեղեցիները[1]:

Այս փաստը մեկ անգամ ևս մատնանշում և ապացուցում է, որ Կարսի մարզի ու Բաթումի նահանգի հայ բնակչության դեմ գործել են տխրահռչակ «Թեշքիլաթը մահսուսե» կազմակերպության ստորաբաժանումները, որոնք որոշ ժամանակ անց «աչքի ընկան» Արևմտյան Հայաստանում: Արդեն Բեհաէդդին Շաքիր բեյի ներկայությունը կրկին ու կրկին վկայում է, որ կազմակերպությունը հատուկ տեղափոխվել էր ռազմաճակատի այդ հատվածը զուտ դիվերսիոն նպատակների համար: Զանգվածային կողոպուտը և սպանությունները նպատակ ունեին Անդրկովկասի քրիստոնյա բնակչությանն ահաբեկել, թիկունքում խուճապ սերմանել և ապակայունացնել իրադրությունը:

Ռուս-թուրքական ռազմաճակատի այլ հատվածներում, մարտական գործողությունների սկզբնական փուլում՝ 1914 թ. հոկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներին, «Թեշքիլաթը մահսուսեի» խմբերը, որքան մեզ հայտնի է, նման զանգվածային գործողություններ չէին ծավալել: Հավանաբար, Բաթումի նահանգում և Կարսի մարզում նշված ստորաբաժանումները ձեռք էին բերում «մարտական» փորձ՝ հետագայում խաղաղ բնակչության դեմ լայնածավալ գործողություններ կատարելու համար[2]:

Գեներալ Ն. Խստոմինի ջոկատի կողմից Բաթումի նահանգի մեծ մասի ազատագրումից հետո իշխանությունները կազմակերպում են ռազմադաշտային դատարաններ, որոնք սկսում են իրականացնել հետաքննություն՝ բացահայտելու թուրքական բռնազավթման և աջարական խռովության հետևանքով տեղական

---

[1] „Кавказ", 1915, N 18, 23 января.

[2] Բիթլիսցի Հայկ Կոնդակչյանը պատերազմի սկզբում գտնվում էր Ղարաքիլիսայում (Ալաշկերտի), վկայում է, որ Կ.Պոլսից և Էրզրումից գալիս են 50 հոգուց բաղկացած ավազակային խմբեր: Նրանք լրացնում են իրենց շարքերը տեղացիներով, մոտ 100 հոգով, և սկսում են հարձակվել ռուսական սահամանամերձ հայկական գյուղերի վրա, առևանգելով ընտանի կենդանիներ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1086, ց. 3, գ. 156, թ. 17:

բնակչությանը հասցված մարդկային և նյութական վնասները[1]: 1914 թ. դեկտեմբերի 12-ից 13-ը Կարսի մարզի քրիստոնյա բնակչության մի մասը՝ հայեր, հույներ և մասամբ ռուսներ, ենթարկվում են թուրքական բռնությունների: Հակառակորդի չարագործություններից տուժում են մարզի 74 գյուղից 50-ը[2]:

Արդվինից, Արդանուջից և Օլթիից եկող փախստականների թվաքանակը 12 հազար էր[3], որոնց օգնության գործն իրենց վրա են վերցնում ԿՀԲԸ-ն Բաթումի և Կարսի մասնաճյուղերը[4]: ԿՀԲԸ-ը Բաթումի նահանգի Ճորոխի շրջան գործուղում է Խ. Կարճիկյանին՝ դեպքերին ծանոթանալու և հայ բնակչությանն օգնություն հասցնելու համար: Նա իր հետաքննության արդյունքում եկել է եզրակացության, որ «Ջարդերը կազմակերպել են և գործադրել տաճկաց զօրքը և չեթաներ, իսկ ղեկավարները եղել են միշտ զօրքի սպաները: Ինձ թւում է, որ այդ շրջանի հայկական ջարդերը հետևանք են որոշ քաղաքական ծրագրի, որ դրւած է եղել վերևից»[5]: Կովկասի փոխարքայության գրասենյակում մշակվում են հատուկ միջոցառումներ՝ ուղղված հակառակորդի հետ համագործակցած, ռուսական զորքերի դեմ մարտնչած և տեղական քրիստոնյա բնակչության դեմ թալան և սպանություններ իրագործած ռուսահպատակ մահմեդականների դեմ:

Հյուսիսային Պարսկաստանում հայ և ասորի[6] բնակչությունը ենթարկվում է թուրքական կանոնավոր բանակի, ոստիկանական ստորաբաժանումների, քրդական ու տեղի մահմեդական բնակչությունից կազմված ջոկատների հարձակմանն ու կոտորածին:

---

[1] Արդահանի և Օլթիի գավառների հայ բնակչության կրած նյութական կորուստը կազմել է մոտ 3 միլիոն 464174 ռուբլի 92 կոպեկ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 108 և շրջ.:

[2] „Кавказ", Тифлис, 1915, 16 января, N 12.

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 111, թ. 22:

[4] Նույն տեղում, գ. 117, թ. 29 շրջ.:

[5] Նույն տեղում, թ. 30:

[6] Դեռևս 1914 թ. հոկտեմբերին Թալեաթի հրամանով սկսվում է ասորիների բռնագաղթը: Նրա կարգադրությամբ զանգվածային ձերբակալություններ են կատարվում Ջուլամերիկում և փակվում է ասորիների պատրիարքի նստավայրը, տե՛ս A guestion of Genocide: Armenians and Turks at the end of the Ottoman Empire. Edited by R. G. Suny, F. Müge Göçek, Norman M. Naimark, New York, 2011, p. 248 books.google.am/books?isbn=0199792763

1915 թ. փետրվարի 23-ին Դիլման մտած ռուսական զորամասերի և հայ կամավորների առջև բացվում է ահավոր մի պատկեր: Ամենուրեք թափված էին կացնահարված և գլխատված հայերի դիակներ: Տեղացի պարսիկների վկայությամբ մինչև փետրվարի 14-ը հայերը ոչ մի զոհ չէին տվել, քանի որ նրանք և ասորիները թաքնվել էին պարսիկների տներում: Թուրք զինվորներն ու քրդերը զենքի ուժով դուրս են բերել թաքնվածներին և հաշվեհարդար տեսել[1]: Սարայի և Բաշկալեի շրջանում թուրք և քուրդ կանոնավոր և անկանոն ստորաբաժանումների կողմից սրի է քաշվում մինչև տաս հազար հայ[2]: Թուրքական կանոնավոր բանակը և զանազան ավազակախմբեր հարձակվում են նաև ասորիների վրա: Ասորիների կոտորածներ են տեղի ունենում ոչ միայն Հյուսիսային Պարսկաստանում, այլև «Դիարբեքիրում, Վանում, Բիթլիսում, Ուրֆայում, Ադանայում և այլուր»[3]:

Միաժամանակ, օսմանյան իշխանությունները պատերազմական կարիքների պատրվակով, բռնագրավում էին հայերի ունեցվածքը: Ամերիկացի միսիոներ Գ. Կնապի (G. Knapp) վկայությամբ՝ «Զորահավաքի ընթացքում, աշնանը և ձմռանը (1914–1915 թթ. – Ռ. Ս.) հայերն անողոքաբար թալանվեցին...հարուստ մարդիկ սնանկացան ու աղքատ մարդիկ կողպտվեցին»[4]: Համանման վկայություն է հաղորդում Մուշի գերմանական որբանոցի տնօրենուհի Ալմա Յոհանսոնը[5]: 1915 թ. մայիսի 12-ին Երզնկայի հոգևոր առաջնորդը Զավեն պատրիարքին հղած նամակում հայտնվում է, որ պատերազմական կարիքների անվան տակ իշխանությունները հայերից բռնագրավում են տասնապատիկ անգամ ավել[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 153, թ. 1–4:

[2] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 17:

[3] *Խոսրոևա Ա. Ա.,* Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 61:

[4] **Bryce J.,** The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, London, 1916, p. 33, տե՛ս նաև ***Ussher C. D., Knapp G. H.,*** An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, Boston, 1917, p. 274.

[5] ***Յոհանսոն Ա.,*** Աքսորեալ ժողովուրդ մը, Սթոքհոլմ, 1980, էջ 4, տե՛ս նաև ***Eckart B.,*** Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1922, S. 7; ***Glockler H. W.,*** Interned in Turkey, 1914–1918, Lebanon, 1969, p. 27.

[6] Տե՛ս http://arfarchives.org/wp-content/uploads/2009/10/ARF_00882_009a_p0001w.jpg.

Հայկական նահանգներում և հայաբնակ շրջաններում կատարվող անօրինականությունները գաղտնի պահելու նպատակով, օսմանյան իշխանությունները խոչնդոտներ և արգելքներ էին հարուցում դաշնակից և չեզոք տերությունների քաղաքացիներին Արևմտյան Հայաստան և Փոքր Ասիա ուղևորվելիս: Արգելվում է թշնամի տերությունների լեզուներով, այդ թվում նաև հայերեն, նամակագրությունը:

1915 թ. ապրիլի 18-ին օսմանյան կառավարությունը հատուկ օրենքով արգելում է թուրքահպատակ քաղաքացիների մուտքն ու ելքը կայսրություն: Փակվում են հայկական դպրոցները: Գավառներում արգելվում է հայալեզու մամուլը: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսի կարծիքով, հայկական ուսումնական հաստատությունների փակումը սկիզբն էր հայկական արհավիրքների[1]:

Կայսրության հայ բնակչության բնաջնջումը դյուրացնելու նպատակով, մեկուսացվում, ապա ոչնչացվում է հայ տղամարդկանց մեծ մասը: Զորահավաքի ընթացքում օսմանյան բանակ զորակոչվեցին 18–45 տարեկան ավելի քան 60 հազար հայ[2]: Տարբեր ռազմաճակատներում նրանք մասնակցում են մարտական գործողությունների: Հայ զինվորներն արժանանում են թուրքական հրամանատարության դրվատանքին և նույնիսկ շնորհակալական հեռագիր են հղում Վանի վալի (նահանգապետ) Ջևդեթ բեյին, նահանգից զորակոչված հայերի սխրագործությունների համար[3]:

1915 թ. փետրվարի 25-ի հրամանով օսմանյան գլխավոր հրամանատարությունն արգելում է հայ զինծառայողներին նշանակել հրամանատարական պաշտոններում և ծառայել զորամասերի շտաբներում[4]: Փաստորեն, այս հրամանը հիմք դարձավ, որպեսզի

---

[1] ***Davis L. A.,*** Op. cit., p. 117.

[2] ***Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ.,*** նշվ. աշխ., էջ 23:

[3] Տե՛ս ***Ussher C. D., Knapp G. H.,*** Op. cit., p. 217.

[4] Օսմանյան ռազմական նավատորմում ծառայած գերմանացի սպա Հերման Լորեյը նշում է, որ զինվորական թարգմանիչների մեծ մասը հայեր էին՝ նրանց թարգմանած հրամանները թուրք ծովային սպաները հրաժարվում էին կատարել, տե՛ս ***Лорей Г.,*** Операции германо-турецких морских сил в 1914–1918 гг. Перевод с немецкого Е. Шведе, с предисловием Е. Лудри и с примечаниями Н. Новикова, Москва, 1934, с. 81.

սկսվի հայ զինվորների ճնշող մեծամասնության զինաթափումը: Նրանց ներգրավում են բանվորական գումարտակներում, այսպես կոչված թիկունքային աշխատանքներ կատարելու համար[1]:

Կան բազմաթիվ վկայություններ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորների ծանր և անմարդկային պայմանների մասին. «Թուրք սպաները մեզ՝ հայ զինվորներուս, չարաչար կաշխատեցնեին, մեր դրամները մեզմե կը խլեին, չարաչար կը ծեծեին և կը հայհոյեին»[2]: Թիկունքային աշխատանքներ կատարող հայերին և հույներին հանձնարարվում էին առավել ծանր գործերը՝ բեռների տեղափոխումը, ճանապարհների և խրամատների կառուցումը: Սնունդն անկանոն էր և անորակ:

Ըստ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի՝ հայ զինվորների զինաթափումն սկսվում է 1915 թ. սկզբներին[3]: Արծեշում կայմակամի հրամանով 3 հազար հայ զինվորի բանտարկեցին զորանոցում՝ չապահովելով սննդով: Այն բանից հետո, երբ 100 հոգու դուրս բերեցին ու գնդակահարեցին, մյուսները հարձակվելով զինաթափեցին պահակախմբին և փախան[4]:

Այս և նման բազմաթիվ դեպքերից հետո, երբ Վանի վիլայեթի վալի Ջևդեթ բեյը քաղաքի հայերից պահանջեց 4 հազար զորակոչիկ, վանեցիները «չհամարձակվեցին մերժել...որովհետև չմտածված մերժումը կարող էր առաջացնել բնակչության կոտորածը»[5], իսկ Մուշում սպանվում են զինաթափ արված հինգ հարյուր հայ զինվոր[6]: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը վկայում է, որ հայ զինվորները, որոնք պարեն էին տեղափոխում Բիթլիս և Մուշ, տեղեկանալով բռնագաղթի և հայ զինվորների կոտորածի մասին, ապստամբում և հարձակվում են պահակախմբի վրա: Հայ

---

[1] 1915 թ. նոյեմբերի 1-ին Կովկասի փոխարքայի քաղաքացիական հարցերի գծով օգնական իշխան Վ. Օրլովին հղած ծավալուն նամակում Ռ. Տեր-Մինասյանը նշում է, որ հայ զինվորների զինաթափումը սկսվել է 1914 թ. դեկտեմբերի վերջից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 536, թ. 19:

[2] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 426, թ. 3, 8:

[3] ***Morgenthau H.,*** Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 302.

[4] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 438, թ. 2:

[5] Տե՛ս ***Ussher C. D., Knapp G. H.,*** op. cit., p. 239.

[6] ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 536, թ. 20:

զինվորներին հաջողվում է փախչել: Հրամանատարությունը կազմակերպում է նրանց հետապնդումը, որի ընթացքում հայերի մեծ մասը սպանվում է[1]:

Յոհաննես Լեփսիուսը վկայում է. «Համարյա բոլոր գավառներից լուրեր են ստացվել, որ ոչ միայն հարկադիր աշխատանքի մեջ գտնվող հայերը տարվեցին խուլ տեղեր և սպանվեցին իրենց ընկեր-մուսուլմանների ձեռքով, *այլև ամբողջ խմբեր՝ 80, 100 և ավելի մարդուց բաղկացած, գնդակահարվում էին զինվորների և զինվորական ժանդարմերիայի ձեռքով՝ իրենց սպաների հրամանի համաձայն»* (ընգծումը տեքստում – Ռ. Ս.)[2]:

Ամենօրյա նախճիրի վտանգը հարկադրում է հայ զինվորների մի մասին դասալքել: Օսմանյան իշխանությունները դա բնութագրում են որպես «դավաճանություն», որն իբր նպատակ ուներ «թուլացնելու» թուրքական բանակը: Ինչ վերաբերում է մահմեդական դասալիքներին, ապա թուրքական իշխանությունները գերադասում էին լռել այդ մասին: Գերմանացի և ամերիկացի միսիոներները վկայում էին, որ դասալիքների մեջ թուրքերն ավելի մեծ թիվ էին կազմում, քան հայերը[3]: Ըստ գեներալ Լիման ֆոն Զանդերսի՝ դասալիքների թիվը հասնում էր 300 հազարի, որոնք թիկունքում զբաղվում էին հիմնականում կողոպուտով և թալանով[4]: Լինում էին դեպքեր, երբ որոշ թուրք սպաներ նախազգուշացնում էին հայ զինվորներին՝ խորհուրդ տալով դասալքել: Հայերը, սակայն, գիտակցելով, որ դասալքումը կարող է ողբերգական հետևանքներ ունե-

---

[1] Տե՛ս ***Davis L. A.,*** op. cit., pp. 94–95; ***Morgenthau H.,*** op. cit., p. 302.

[2] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ կազմ. Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Երևան, 1991, էջ 470:

[3] Տե՛ս ***Ussher C. D., Knapp G. H.,*** op. cit., p. 217; ***Bryce J.,*** op. cit., p. 33, ***Davis L. A.,*** op. cit., pp. 94–95.

[4] ***Լիման ֆոն Զանդերս, Լիման ֆոն Զանդերս, Դրօշակ, Փարիզ, 1929 սեպտեմբեր, էջ 179,*** տե՛ս նաև Геноцид армян: Официальные документы из германских архивов, публекуемые впервые. Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов). Под редакцией, с предисловием и примечаниями С. Степаняна, Ереван, 2005, с. 65–66.

նալ իրենց հարազատների համար, գերադասում էին մնալ, քան փախչել[1]:

Օսմանյան իշխանությունները ողջ կայսրությունով տարածում էին ապատեղեկատվություն այն մասին, թե իբր թուրքահպատակ հայերն օգնում են ռուսներին[2], որի համար անհրաժեշտ է նրանց բոլորին խստորեն պատժել: Թուրք բնակչության ճնշող մեծամասնությունը չունենալով տեղեկատվության այլ աղբյուր, միաժամանակ հավատ ընծայելով կառավարությանը, աջակցում և մասնակցում էր իշխանություններին՝ հայերի նկատմամբ իրականացվող ոճրագործություններին: Հաջորդ քայլով երիտթուրքական իշխանությունները սկսում են հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները: Հայկական նահանգներ և հայաբնակ շրջաններ են ուղարկվում «Թեշքիլաթը մահսուսե»-ի անդամներ, որոնք պետք է ղեկավարեին տեղական իշխանությունների հայերի դեմ ուղղված գործողությունները:

Առաջին ձերբակալությունները տեղի են ունենում Զեյթունում: 1914 թ. հոկտեմբերի 16-ի զեկուցագրում Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռոսլերը հաղորդում է, որ Զեյթունում ձերբակալվել և դաժանորեն խոշտանգվելով սպանվել է Նազարեթ Չաուշը[3]: Կալանվում են գյուղաքաղաքի ևս 60 և շրջակա գյուղերի 30 հայ աչքի ընկնող ներկայացուցիչներ[4]: Դեկտեմբերի 18-ին սպանվում է Սեբաստիայի վիլայեթի առաջնորդական տեղապահ Սահակ ծայրագույն վարդապետ Օդապաշյանը[5]:

Նահանգապետ Ջևդեթ բեյը 1915 թ. ապրիլի սկզբներին դավադրորեն հաշվեհարդար է տեսնում Վասպուրականում մեծ հեղինակություն վայելող, ՀՅԴ գործիչներ Իշխանի և Վռամյանի հետ: Վանում իտալական հյուպատոսական գործակալ Սբորդոնին այս քաղաքական սպանությունների վերաբերյալ հետևյալ կարծիքն է հայտնում. «Որպեսզի ազատորեն հաշվեհարդար տեսնի հայերի

[1] ՀԱԱ, ֆ. 1086, ց. 3, գ. 156, թ. 3:
[2] Նույն տեղում, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 8:
[3] ***Lepsiusus Joh.,*** Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919, s. 21.
[4] ***Պողոսյան Հ. Մ.,*** Զեյթունի պատմություն, 1409–1921 թթ., Երևան, 1969, էջ 386:
[5] «Ժողովուրդ», Ղալաթիա (Կ. Պոլիս), 1918, 14/27 դեկտեմբեր:

հետ, Զևդեթն անհրաժեշտ է համարում կանխավ ոչնչացնել նրա երեք գլխավոր առաջնորդներին՝ հայրենի գործին նվիրված և շնորհաշատ մարդկանց՝ Վռամյանին, Արամին և Իշխանին»[1]:

Զևդեթի լարած որոգայթից փրկվեց Արամ Մանուկյանը: Ձերբակալվեցին և Վանի բանտում խեղդամահ արվեցին հնչակյաններ Ասոն, Աբրահամ Բրուտյանը, Արտաշես Սոլախյանը և Կարապետ Տանթյանը[2]: Դիարբեքիրի բանտում խեղդամահ արվեց քաղաքում հեղինակություն ունեցող Թորոս Ալեքսանյանը: Ոստիկանները պահանջեցին սպանվածի հարազատներից դին թաղել իրենց մատնանշած վայրում: Երբ հողը փորում էին, «հայտնաբերվեց» զենք և զինամթերք, որն առիթ դարձավ հայկական «դավաճանությունը» ապացուցելու և նոր ձերբակալություններ կատարելու համար[3]: Ամերիկյան միսիոներուհի Մերի Գրաֆմանի հաղորդման համաձայն, Սեբաստիայում կալանվում են տեղի հայության աչքի ընկնող ներկայացուցիչները[4]:

Հայ մտավորականությանը հիմնական հարվածը հասցվեց Կ. Պոլսում 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերում: Վաղօրոք կազմված ցուցակների համաձայն ոստիկանությունը կալանեց 800-ից ավելի[5], իսկ այլ աղբյուրի համաձայն 2800 հայերի[6]: Նրանց Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը, բանաստեղծներ Սիամանթոն, Ռուբեն Սևակը, երգահան Կոմիտասը, դերասան Ենովք Շահենը, նկարիչ Հրանտ Աստվածատրյանը, հրապարակախոսներ Նազարեթ Թագվորյանը, Տիգրան Չոքյուրյանը, Սմբատ Բյուրատը, բժիշկ

---

[1] Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, 2-е доп. изд., Е., 1983, с. 285, տե՛ս նաև Lepsius Joh., Deutschland und Armenien, S. 52, 475.

[2] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 447: Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երևան, 1990, էջ 20–41:

[3] ՀԱԱ, ֆ. 1086, g. 3, գ. 156, թ. 4–5:

[4] ***Moranian S. E.,*** Bearing Witness: The Missionary Archives as Evidence of the Armenian Genocide, p. 111. See The Armenian Genocide. History. Politics. Ethics. Edited by R. G. Hovannisian, New Brunswick, 1991.

[5] ***Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ.,*** նշվ. աշխ., էջ 24:

[6] ***Beylerian A.,*** Les Grandes Puissances L' Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises, 1914–1918, Paris, 1983, p. 21.

Նազարեթ Տաղավարյանը, գիտնականներ Տիգրան Քելեքյանը, Գագիկ Օզանյանը և ուրիշներ:

Մայրաքաղաքից աքսորված հայ մտավորականների մեծամասնությունը դաժանորեն սպանվեց տարագրման ճանապարհին: Քչերին հաջողվեց փրկվել, որոնցից էին՝ նկարիչ Արամ Անտոնյանը, հրատարակիչ Թեոդիկը, երգահան Կոմիտասը, երգիծաբան Երվանդ Օտյանը և ուրիշներ:

1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսում հրապարակավ կախաղան բարձրացվեցին հնչակյան կուսակցության 20 նշանավոր գործիչներ՝ Փարամազը (Մատթեոս Սարգսյան), Վանիկը (Գեղամ Վանիկյան), Ռուբեն Կարապետյանը և ուրիշներ: Նրանք մահապատժի ենթարկվեցին երիտթուրքական իշխանությունների կողմից ներկայացված կեղծ ամբաստանությունների հիման վրա[1]:

Յոհ. Լեփսիուսն, անդրադառնալով օսմանյան կառավարության կողմից հայ մտավորականության զանգվածային ձերբակալություններին, գրում է. «Բոլոր այդ ձերբակալությունները կատարվեցին առանց որևէ մի դատաքննության: Ոչ մի անգամ և ոչ մի դեպքում նրանց հանդեպ մեղադրանք չի հարուցված եղել պետության դեմ որևէ թշնամական գործողության մեջ կամ նման մտադրության մեջ: Պարզապես նրանք ուզում էին *գլխատել հայ ժողովրդի՝ նախքան նրա առանձին մասերի ջախջախմանն անցնելը* (ընդգծ. տեքստում – Ռ. Ս.)»[2]: Հայ հասարակական, քաղաքական և կրոնական գործիչների ձերբակալությունները տևում են հիմնականում չորս շաբաթ՝ 1915 թ. ապրիլի 21-ից մինչև մայիսի 19-ը[3]:

Ուրֆայում հայ մտավորականության սպանություններն իրականացնում են «Թեշքիլաթը մահսուսե»-ի անդամներ Չերքեզ Ահմեդը և Խալիլը: Նրանց կողմից ձերբակալվում և սպանվում են 200-ից ավելի հայ և ասորի[4]: Մայիսի 9-ին Մալաթիայում տեղի ունեցան զանգվա-

---

[1] *Թեոդիկ,* Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, խմբագրեց Արայ Գալայճեան, Նիւ Եորք, 1985, էջ 15:

[2] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 470:

[3] Նույն տեղում, էջ 469:

[4] ***Künzler J.,*** Dreißig Jahre Dienst am Orient, Basel, 1933, s. 54–55; նույնի՝ Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien wärend des Weltkrieges, Potsdam, 1921, s. 28.

վածային ծերբակալություններ: Կալանվեցին առաջնորդական փոխանորդը, գավառական ժողովի անդամները, կուսակցական աչքի ընկնող ներկայացուցիչներ և այլք, թվով 1300 հոգի[1]:

Ուրֆա հասած բռնագաղթվածների առաջին քարավանը կազմված էր բացառապես զեյթունցիներից: Քաղաքում ներկալված անգլիացի ականատեսը վկայում է. «Դրանք (տարագիրները – Ռ. Ս.) ծեր մարդիկ, կանայք և երեխաներ էին, թվով երկու հարյուր կամ ավելի: Ոմանք քայլում էին սայլերի կամ ավանակների կողքին, որոնց վրա մի քանի խղճուկ տնային իրեր կային: Բոլորը հագած էին ցնցոտիներ...Կային կանայք՝ կրծքերին սեղմած լուռ, փոքրիկ երեխաներին, խղճահարություն հարուցող լուռ հեծեծանքով...»[2]:

Ուրֆահայության վրա ճնշող տպավորություն է թողնում ոչ միայն բռնագաղթվածների վիճակը, այլև այն, որ եթե հաջողվել է ընկճել զեյթուցիներին, ապա դրությունն իսկապես ծանր է: Փաստորեն, Զեյթունի տարագրությամբ սկսվեց օսմանահպատակ հայերի զանգվածային բռնագաղթն ու կոտորածը: Վանում Ջևդեթը ելույթ ունեցավ ազդեցիկ թուրք քաղաքացիների առջև, պարզորոշ հայտարարեց, որ Իրանական Ատրպատականում հայերի և ասորիների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, պետք է նույն կերպ վարվեն նահանգի հայության հետ[3]: Նահանգապետի հրամանով կազմակերպվում է Վասպուրականի 24 հազար հայերի կոտորածը: Ավերվում են մոտ 400 հայկական գյուղ[4]: Իրանական Ատրպատականից Ռուսաստան են փախչում 33 հազար ասորի և 30 հազար հայ: Միայն Հեքարիի շրջանում կոտորվեցին մոտ 60 հազար ասորի[5]: Գ. Սբորդոնիի վկայությամբ «Բոլոր այդ կոտորածներն իրականացվեցին արտակարգ դաժանությամբ: Տղաների փորերն էին պատռում, կանանց և աղջիկներին մերկացնում և մերկ քշում էին լեռները, ինչպես վայրի գազաններին»[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 453, թ. 7-8:
[2] ***Glockler H. W.,*** op. cit., p. 17.
[3] ***Lepsius Joh.,*** Deutschland und Armenien, S. XVI; Nansen F., Armenia and the Near East, N. Y., 1928, p. 300.
[4] ***Morgenthau H.,*** op. cit., p. 297; ***Beylerian A.,*** op. cit., p. 250.
[5] ***Сергизов А. М.,*** указ. соч., с. 22–23. ***Խորհրդա Ա. Ա.,*** նշվ. աշխ., էջ 65–66:
[6] Геноцид армян в Османской империи, с. 285.

Խլաթի 19 հայկական գյուղերի տղամարդիկ սպանվում են թուրք և քուրդ հրոսակների կողմից: 9 հազարից ավելի կանայք ու երեխաներ քշվում են Բաղեշ, ապա Սղերդ, որտեղ բոլորին կոտորում են: Նույն բախտին են արժանանում Խնուսի 26 հայկական գյուղերի բնակիչները: Քչերին է հաջողվում փրկվել[1]: Սակայն, ելուզակներին միշտ չէր հաջողվում դատաստան տեսնել հայերի նկատմամբ: 1915 թ. ապրիլի 17-ին ամերիկացի միսիոներ Քլ. Աշըրի կինը՝ էլիզաբեթը, ականատես է լինում, թե ինչպես ստվարաթիվ քրդական հեծելազորը գրոհում է 2 հազարի հասնող հայ կանանց ու երեխաների վրա: Նրանց պաշտպանող փոքրաթիվ զինված տղամարդիկ անվախ մարտի են բռնվում հրոսակների հետ և սպանելով քրդերից 16-ին՝ հարկադրում են փախուստի դիմել[2]:

Ա. Աթանասյանը լինելով Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում, որպես Քաղաքների միության, կամ Գյուղատնտեսական ընկերության, կամ էլ ԿՀԲԸ-ն լիազոր, բացի իր հիմնական աշխատանքից՝ բնակչությանն օգնություն հասցնելուց և տեղում գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելուց, միաժամանակ փաստեր էր հավաքում թուրք և քուրդ ջարդարարների կողմից կատարած վայրագությունների մասին: Նյութերի մի մասը նրան տրամադրում է գեներալ Թ. Նազարբեկյանը[3]: Հատկապես կարևոր տեղեկություններ է տալիս Մուշ քաղաքի մեծահարուստ թուրք Ջաֆար աղան: Նա հայտնում է, որ 1915 թ. հուլիսի 28-ին քաղաք են գալիս չեթեական առաջնորդներ Ֆարմազ աղա Ռաշիդը, Մահմուդ Չավուշը, Մստո Ազո օղլին, Իզաթ (կամ Իզեթ) աղան: Նրանցից յուրաքանչյուրն ուներ երկու հարյուր զինված մարդիկ: Ջաֆար աղան շեշտում է այն հանգամանքը, որ նրանք եկել էին միաժամանակ և նույն օրը[4][5]: Նշված տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Մու-Մուշում գործել է «Թեշքիլաթը մահսուսեի» ոճրագործների խումբը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 101:
[2] *Barrows J. O.*, In the Land of Ararat, London, Edinburgh, 1916, p. 135.
[3] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 6 շրջ.:
[4] Նույն տեղում, թ. 8:
[5] «Համբաւաբեր», 1916, N 12, 13 մարտի, էջ 377:

Ջանգվածային ջարդերից փրկվելու համար արևմտահայերի մի մասն ապաստանում է Բուլղարիայում: Ֆիլիպոպոլիսի բրիտանական փոխհյուպատոսի հաղորդման համաձայն, փախստականների 90%-ը կանայք և երեխաներ էին[1]:

1915 թ. մայիսի 9-ի հաղորդման մեջ էրզրումի գերմանական փոխհյուպատոս էրվին Շոյբներ-Ռիխտերը դեսպանատուն է հայտնում քաղաքում կատարվող ձերբակալությունների մասին: Համաձայն իշխանությունների հայտարարության, ձերբակալվածները պետք է աքսորվեն: Դիվանագետը չի բացառում նրանց սպանությունը տարագրման ճանապարհին[2]:

Հունիսի 13-ին Տրապիզոն նահանգի իշխանությունները պաշտոնապես հայտարարում են հայ բնակչության բռնագաղթի մասին: Նրանց հանձնարարվում է հինգ օրվա ընթացքում պատրաստ լինել լքելու նահանգը: Արգելվում է վաճառել կամ որևէ մեկին հանձնել ունեցած անշարժ գույքը: Իշխանությունները հավաստիացնում են տարագիրներին, որ կձեռնարկվեն բոլոր ջանքերը նրանց ճանապարհին «պաշտպանելու» համար[3]:

Հունիսի զեկուցագրերից մեկում հյուպատոս Լ. Դևիսը դեսպան Հ. Մորգենթաուին հայտնում է, որ չնայած թուրքական իշխանությունների հավաստիացումներին, թե աքսորականները տեղափոխվում են Ուրֆա, իրականում նրանց քշում են Միջագետքի անապատային շրջանները: Հյուպատոսը նշում է, որ տարագիրներն ի վիճակի չեն լինելու 15–20 օր տևողությամբ ճանապարհ անցնել, քանի որ ամբողջ ճանապարհին միայն երկու քաղաք և երեք գյուղ կա[4]:

Տրապիզոնի իտալական հյուպատոս Կորինիի հաղորդմամբ, քաղաքի հայության բռնագաղթի համար իշխանությունները բերեցին 15 հազար զինվոր: Դիվանագետը վկայում է. «Երևակայեցեք, պատուհանիս առջևեն քշելով կտանեին խումբ-խումբ հայեր, որոնք օգնություն կաղաղակեին, կողբային, ոմանք փողոցի մեջ ինքնա-

[1] ***Nassibian A.,*** Britain and Armenian Question 1915–1923, New York, 1984, p. 72.
[2] ***Lepsius Joh.,*** Deutschland und Armenien, S. 65.
[3] «Համբաւաբեր», 1916, N 19, 8 մայիսի, էջ 600:
[4] Տե՛ս ***Davis L. A.,*** op. cit., p. 144.

սպանություն գործեցին և շատ կանայք խենթացան»[1]: Ամերիկյան հյուպատոսարանում ապաստան գտան 15 հոգի: Հայերի մի մասն էլ թաքնվեցին հույն համաքաղաքացիների տներում[2]:

1915 թ. դեկտեմբերի 20-ին Տրապիզոնի նահանգից ուղարկված նամակում, անհայտ նամակագիրը հայտնում է, որ «Յունիսի 23էն սկսած աքսորեցին (որպէս թէ) առհասարակ բոլոր հայերին. մինչդեռ իրականին մէջ ճանապարհին մորթոտեցին, կտրտեցին, ականատեսները սարսափելի դէպքեր կը պատմեն...»[3]:

Տրապիզոնի նահանգի հայության բռնագաղթի ժամանակ, Շանահ գյուղի 400 հայ բնակիչ, վճռեցին չենթարկվել: Հունիսին ուտելիքի, զենքի և զինամթերքի պաշարով նրանք բարձրացան Եմուրի կոչվող լեռը: Թուրքական հրամանատարությունը 9 ամիս շարունակ ապարդյուն գրոհներ է կազմակերպում: Հակառակորդը փորձեց ինքնապաշտպանների դեմ օգտագործել մարտական ինքնաթիռներ: Նրանցից մեկը մառախուղի պատճառով բախվեց ժայռերին, իսկ մյուսը, շեղվելով իր ուղուց, հայտնվեց ռուսական զորքերի դիրքերի շրջանում, ուր և խփվեց նրանց կողմից: 1916 թ. ապրիլին ռուսների կողմից Տրապիզոնի գրավումը փրկեց լեռան վրա ապաստանածներին[4]:

Էրզրումի վիլայեթի աքսորականների մի մասը նույնիսկ տարագրման վայր չհասավ: Նրանց շրջափակեցին ամայի մի վայրում, թողեցին առանց ջրի ու պարենի և դատապարտեցին սովամահության: Օրական մահանում էր 50–60 հոգի: Բուլղարական դիվանագիտական փաստաթղթի համաձայն, բռնագաղթվել էր 15 հազարից

---

[1] «Մշակ», 1915, 27 սեպտեմբերի: Ա. Բարբին հիշատակում է տրապիզոնցի էշադիր օղլուն, որը փորձել է զենքով պաշտպանել հայերին, սակայն զոհվել է նրանց հետ միասին, տե՛ս *Պօղոսեան Վ.*, Հայոց ցեղասպանութեան ընկալումը Անրի Բարբիի կողմից, «Հանդէս ամսօրեայ», 2007, Վիեննա-Երեւան, էջ 346–348:

[2] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 453, թ. 9–10, տե՛ս նաև Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–18 թթ.), (փաստաթղթերի ժողովածու). Կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ա. Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց Վ. Մարտիրոսյանը, Երևան, 2004, էջ 33–34:

[3] Տրապիզոնի անտառները ապաստանած փախստական հայերու նամակը (20 Դեկտ., 1915) http:// arfarchives.org/?p=412

[4] «Յորիզոն», 1916, 4 մայիսի: Էրզրումի կուսակալ Թահսին բեյի վկայությամբ, Տրապիզոնի և վիլայեթի բռնագաղթի և կոտորածի հեղինակը Բեհաէդդին Շաքիր բեյն էր, տե՛ս «Ժողովուրդի ձայն», 1919, Կ. Պոլիս, 17 մարտի:

ավելի հայ[1]: Նրանց մի մասին Բալուի և Քղիի ճանապարհով տանում են Խարբերդ: Աքսորականները ենթարկվում են քրդական ելուզակախմբերի հարձակմանը: Հայերից մի քանիսն իրենք են նախահարձակ լինում, ջարդարարներից խլում զենքը, սակայն զոհվում են անհավասար կռվում[2]:

Էրզրումում իշխանությունները չտարագրեցին մոտ 50 հայ արհեստավորի: Նրանք անհրաժեշտ էին բանակի համար հագուստ և կոշիկ կարելու համար: 1916 թ. փետրվարին թուրքերի նահանջի ժամանակ արհեստավորներն սպանվեցին թուրքերի կողմից[3]:

Վանում և վիլայեթում ոճիրներ գործելուց հետո, Ջևդեթ բեյը իրականացնում է Բիթլիսի 15 հազար հայության ջարդը: Ահավոր վայրագություններ և զանգվածային սպանություններ են տեղի ունենում Մուշում և համանուն դաշտի հայկական գյուղերում: Դրանց ևս մասնակցություն է ունենում Ջևդեթը[4]:

Երբ Սեբաստիայի վիլայեթում սկսվում է հայերի տեղահանությունը, Դենդիլ հայկական գյուղի բնակիչները վճռում են չենթարկվել: Նրանք բարձրանում են մոտակա լեռը և դիրքեր գրավում: Ժամանած թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները մոտ վեց շաբաթ ապարդյուն գրոհում են: Նույնիսկ հրետանին չի կարողանում կոտրել հայերի դիմադրությունը: Միայն այն բանից հետո, երբ փակվում է դեպի ինքնապաշտպանները հոսող ջրի ճանապարհը, հայերը հարկադրված են լինում տեղի տալ և դիմադրությունը ճնշվում է[5]: Ամերիկացի միսիոներ Փարթրիդջի հաղորդման համաձայն Սեբաստիայի 25 հազար հայերի բռնագաղթեցրել են Մոսուլ[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 96, թ. 41: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, կազմող Հ. Կիլիկյան, բուլղարերենից թարգմանեցին Զ. Մ. Ղասաբյանը, Կ. Հ. Ճինգոզյանը, Ե., 1996, էջ 15:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 138, թ. 1:

[3] Նույն տեղում, գ. 56, թ. 38:

[4] Геноцид армян в Османской империи, с. 498. *Nogales R. de*, op. cit., p. 135.

[5] History of the First World War, vol. 3, № 16, London, 1970, p. 1326, տե՛ս նաև *Գալուստյան Կ., Գաբիկյան Մ.*, Ագ-Տաղի քառամյա գոյամարտը, Մարսել, 1932, էջ 35:

[6] *Պողոսյան Վ.*, Մեծ եղեռնին նվիրված մի նոր կարևոր սկզբնաղբյուր, Էջմիածին, 2007, թիվ Դ, էջ 100:

Կառավարության հրամանի համաձայն՝ հայ տարագիրները քշվում էին Միջագետքի և Սիրիայի՝ Ռաս ուլ-Այնի, Դեյր էլ-Զորի, Մեսքենեի, Ռաքքայի և այլ համակենտրոնացման ճամբարները: Ուրֆա քաղաքը դարձել էր հայ տարագիրների վերջին հանգրվաններից մեկը, որտեղ երկարատև ճանապարհի ընթացքում նոսրացած քարավանները լրացվում և շարունակում էին իրենց մահերթը:

Օսմանահպատակ հույների մեծ մասը պարենով, հագուստով օգնում և հնարավորության դեպքում թաքցնում էր աքսորականերին: Սամսուն քաղաքում նրանց մոտ ապաստանում են 200-ից ավելի աղջիկ, 70 երիտասարդ և 10 ընտանիք[1]:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին հաջողվում է ռուսական և ամերիկյան կառավարությունների միջնորդությամբ Կ. Պոլսի պատրիարքին և Կիլիկիո կաթողիկոսին փոխանցել հիսուն հազար ռուբլի (20242 դոլար)[2]: Նշված գումարը նախատեսվում է Կ. Պոլսի և շրջակայքի, Բաղդադի մոտ ու Միջագետքում գտնվող բռնագաղթվածների օգնության համար[3]:

Օսմանյան ծառայության մեջ գտնվող գերմանացի գնդապետ, հետագայում գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնը հիշատակում է իր այցելության մասին թուրքական որբանոց: Այստեղ իշխանությունները հավաքել էին մոտ 500 հայ երեխա: Նրանց հավաքել էին մի եկեղեցում, որ չուներ ո՛չ դռներ, ո՛չ էլ պատուհաններ: Գնդապետը վկայում է. «Խեղճ երեխաները ցրտից դողում էին: Նրանք օրական երեսուն գրամ հաց և մի թաս ջրիկ ապուր էին ստանում: Ամենահուզիչն այն էր, որ նրանք բոլորը լուռ և անտարբեր էին: Չէր լսվում ո՛չ գանգատ, ո՛չ տրտունջ՝ միայն հիվանդների զուսպ տնքոց»[4]: Տեղեկանալով, որ Բաղդադի երկաթգծի վրա աշխատող օտարերկրացի մասնագետները և գերմանացի սպաները լուսանկարում են հայ աքսորականների քարավանները, թուրքական իշխանությունները դեկտեմբերի 13-ի հեռագրով պահանջում են տեղական մարմիննե-

---

[1] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, 15 հունվարի:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1272, թ. 47 և շրջ.:
[3] Նույն տեղում, թ. 53:
[4] Տե՛ս ***Ohandjanian A.,*** Armenien: Der Verschwiegene völkermord, Wien, 1989, s. 109.

րից լուսանկարումներն արգելել, իսկ ժապավենները հանձնել Հալեպի պարետատուն[1]:

Հայերի նկատմամբ իրականացվող ոճրագործությունները հարկադրում են Օսմանյան կայսրության դաշնակից երկրների՝ Ադրիանապոլսի ավստրո-հունգարական հյուպատոս Արթուր Նադամլենցկին և նրա բուլղարացի գործընկերոջը 1915 թ. նոյեմբերի 6-ին հանդես գալ հատուկ հայտարարությամբ (Procés-Verbal): Նրանք նշում են, որ իրենց քաղաքում տեղի ունեցող դեպքերը լրջորեն ազդում են Թուրքիայի դաշնակից տերությունների ներկայացուցիչների վրա:

Հյուպատոսները համոզված հայտարարում են, որ Ադրիանապոլսում տեղի ունեցող դեպքերը «հմտորեն մտածված ծրագրի իրականացումն է, ծրագիր, որի նպատակը Թուրքիայում քրիստոնյա տարրի ոչնչացումն է...պետք է ազնվորեն խոստովանել. այն եղանակը, որով տեղի է ունենում հայերի արտաքսումը, հակասում է բոլոր մարդասիրական սկզբունքներին: Այս գործելակերպը, որ ներքոստորագրյալներս տեսել ենք այստեղ, ցույց է տալիս, որ գործ ունենք ամբողջ ժողովրդի ... բնաջնջման հետ»[2]:

Օսմանյան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան ֆոն Պալլավիչինին Վիեննա ուղարկած հաղորդման մեջ հայտնում է, որ հանդիպել է արտաքին գործերի նախարար Հալիլ բեյի հետ: Վերջինս ընդունել է, որ Թալեաթը «ձգտում է Հայկական հարցն իր ձևով լուծել պատերազմի ժամանակ և տերություններին կանգնեցնել կատարված փաստի առաջ»[3]:

Հայերի ցեղասպանությունը չավարտվեց 1915 թ.: Տեղեկանալով, որ աքսորավայրերում ողջ են մնացել հայ տարագիրներ, օսմանյան կառավարության հրամանով սկսվեց նրանց ոչնչացումը:

---

[1] Germany, Turkey and Armenia. A Selection of Documentary Evidence Relating to the Armenian Atrocities from German and Other Sources, London, 1917, p. 75; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Новые документы. Отв. ред. В. А. Микаелян, Ереван, 1995, с. 230.

[2] Տե՛ս *Ohandjanian A.*, op. cit., s. 112; Օհանջանյան Ա., 1915 թ., Անհերքելի վկայություններ, թարգմանիչ՝ Լ. Սարգսյան, Երևան, 1997, էջ 112–113:

[3] Նույն տեղում էջ 111:

1916 թ. ձեռնարկվում է Դեյր էլ-Զորում և Եփրատի երկայնքով ծվարած 200 հազար հայերի սպանդը[1]:

Օսմանյան կայսրությունում բնակվող մահմեդական ժողովուրդների կողմից միանշանակ չընդունվեց հայերի զանգվածային ոչնչացման երիտթուրքերի կառավարության ծրագիրը: Մեծ թվով հայերի փրկեցին Հյուսիսային Սիրիայի արաբական մի շարք ցեղախմբեր[2]: Քրդական որոշ ցեղեր ևս պաշտպանեցին հայերին: Երիտթուրքերի ոճրագործությունը դատապարտեց մահմեդական բարձրագույն հոգևորականությունը: Դրա վկայությունն են Մեքքայի շերիֆ և էմիր Հուսեյն իբն Ալիի 1916 թ. հունիսի և 1917 թ. մարտի մանիֆեստները:

Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարությունները տեղյակ լինելով իրականացվող ջարդերի մասին, որևէ եական գործողության չդիմեցին սաստելու դաշնակցին: Հատկապես ազդեցիկ կարող էր լինել Գերմանիայի միջամտությունը: Սակայն, գերմանական պետական և քաղաքական շրջանակները, չնչին բացառություններով համերաշխ էին Օսմանյան կայսրության հետ: Գերմանական մամուլը տպագրում էր հակահայ բնույթի հոդվածներ, քողարկելով հայության զանգվածային բռնագաղթն ու կոտորածները: Ճիշտ է, Օսմանյան կայսրությունում ծառայող առանձին զինվորականներ և դիվանագետներ, օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը, մի շարք դեպքերում միջամտում և փրկում էին տարաբախտ հայերին:

Այն, որ գերմանացիները չէին ցանկանում սաստել երիտթուրքերին, պայմանավորված էր նրանով, որ թուրքերն իրենց վրա էին գրավել Անտանտի ուժերի մի մասը: Դրա վառ վկայությունն է Գերմանիայի պետական քարտուղար Արթուր Ցիմմերմանի խոստովանությունը. «Հայկական հարցի պատճառով խզել կապերը Թուրքիայի հետ, մենք հարմար չենք գտել և չենք գտնում: Որքան ցավալի է քրիստոնեական տեսանկյունից, որ անմեղ մարդիկ էլ պետք է տուժեն թուրքական միջոցառումներից, հայերը վերջապես այնքան էլ մեզ մոտ չեն, ինչքան մեր սեփական տղաներն ու եղբայրնե-

[1] *Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ.*, նշվ. աշխ., էջ 29–30:
[2] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 10:

րը, որոնց սրբազան արյունալի պայքարը Ֆրանսիայում և Ռուսաստանում անուղղակի պաշտպանություն է գտնում Թուրքիայի ռազմական օգնությամբ»[1]: Այնուամենայնիվ, գերմանական կառավարությունը հասկանում էր, որ անհրաժեշտ է սահմանազատվել Օսմանյան կայսրությունից, ուստի իր դիվանագիտական ներկայացուցչությանը հրահանգում է չեզոք տերությունների դիվանագետներից ստանալ գրավոր ապացույցներ, որ գերմանացիները չեն մասնակցել հայկական կոտորածներին: Նման խնդրանքով Հալեպի ամերիկյան հյուպատոսին դիմած նրա գերմանացի գործընկերը մերժում է ստանում[2]:

Օսմանյան կառավարությանը լրջորեն անհանգստացնում է Ռուսաստանի նախաձեռնությամբ և Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մասնակցությամբ 1915 թ. մայիսի 11-ին (նոր տոմարով՝ 24-ին) արված համատեղ հայտարարությունը: Անտանտի տերությունները նախազգուշացնում են, որ պատասխանատվության են կանչելու հայերի նկատմամբ ոճրագործություններ իրականացրած թուրքական կառավարության անդամներին և պաշտոնյաներին: Երիտթուրքերը զգուշանալով հետպատերազմյան բարդություններից, շտապում են նշված հայտարարությունից երեք օր անց՝ 1915 թ. մայիսի 14-ին (նոր տոմարով՝ մայիսի 27-ին) ընդունել տեղահանության մասին օրենքը: Դրանով օսմանյան կառավարողները փորձում էին քողարկել դեռևս 1914 թ. աշնանից սկսած հայերի կոտորածները[3]: Իրականում օսմանահպատակ հայերի տեղահանության հրամանը տրվել է 1914 թ. հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում: Այս փաստը 1935 թ. թուրքական

---

[1] *Սահակյան Ռ. Գ.,* Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 97: Նույն տեսակետն է հայտնել Գերմանիայի կանցլեր Բետման Հոլվեգը, տե՛ս Геноцид армян: Официальные документы из германских архивов, с. 293.

[2] Տե՛ս "Armenian Review", 1984, Spring, Boston, vol. 37, N 37, p. 128.

[3] Ինչպես նշում է Ռ. Սաֆրաստյանը տեղահանության մասին օրենքն ունեցել է չորս հոդված, «որն ընդունվել է 1915 թ. մայիսի 27-ին, գործողության մեջ է մտել 1915 թ. հունիսի 1-ին և նրա իրագործման պատասխանատվությունը դրվել է անձամբ էնվերի վրա»: Օրենքը ստորագրել են սուլթան Մեհմեդ Ռեշադը, սադրազամ (Նախարարների խորհրդի նախագահ) Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշան և ռազմական նախարար էնվեր փաշան, տե՛ս *Սաֆրաստյան Ռ.,* Օսմանյան կայսրության 1915 թ. «տեղահանության օրենքը», ՊԲՀ, 2007, N 2, էջ 79:

«Քուրուն» թերթին տված հարցազրույցում հայտնել է Թուրքիայի ռազմական նախարարության պատմության բաժանմունքի ղեկավար Ազիզ Սամիհը[1]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիան հայկական արհավիրքների վերաբերյալ փաստերը լայնորեն օգտագործում էր ԱՄՆ-ի կառավարության և ամերիկյան հասարակայնության կարծիքը Թուրքիայի դեմ ուղղելու համար: Այդ նպատակով հրատարակվում և տարածվում են դաժանությունների մանրամասնությունները: Բաթումի անգլիական հյուպատոսին հանձնարարվում է Թիֆլիսում հրատարակվող լրագրերից տեղեկություններ քաղել Կովկասում ապաստանած հայ և ասորի գաղթականների մասին, ինչպես նաև նրանց լուսանկարները[2]:

Մեծ Բրիտանիան պատրաստակամորեն զանազան նյութեր է մատուցում ամերիկյան մամուլին: Արշակ Սաֆրաստյանը կոչով դիմում է հայրենակիցներին՝ տեղեկություններ հայտնել թուրքական վայրագությունների մասին, քանի որ «Մեր մեծահռչակ բարեկամ Լորդ Բրայս կրկին նամակներով կուզի տեղեկութիւն: Նա շուտով լոյս կ'ընծայէ հայոց ջարդերի ամբողջական պատմութիւնը...[3]»: Ստանալով համապատասխան նյութերը, բրիտանական կառավարությունը շտապ կարգով հրատարակում է լորդ Ջ. Բրայսի փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, ուր ընդգրկվում են նաև Թուրքիայում աշխատած ամերիկյան միսիոներների վկայությունները: Նաև այդ քարոզչության արդյունքում, 1916 թ. փետրվարին ՄՄՆ-ի կառավարությունն իր բողոքը հայտնեց հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների դեմ[4]:

---

[1] *Киракосян Дж. С.,* Младотурки перед судом истории, Ереван, 1986, с. 177–178; Walker Chr., Armenia: Survival of a Nation, London, 1980, p. 200.

[2] Տե՛ս *Nassibian A.,* op. cit., pp. 73-74.

[3] «Համբաւաբեր», 1916, N 31, 31 յուլիսի, էջ 971–972:

[4] 1916 թ. դեկտեմբերի 14-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը Սպիտակ տանն ընդունեց մի խումբ ամերիկահայերի՝ Ա. վարդապետ Վեհունու գլխավորությամբ: Նախագահն իր զորակցությունն է հայտնում և ցավով նշում է, որ ի զորու չեն եղել ամբողջական օգնություն ցուցաբերել տառապյալ հայերին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 104–105:

Բրիտանական կառավարությունը հայերի ողբերգությունն օգտագործում էր նաև Բուլղարիայում և բրիտանական գաղութներում մահմեդական հպատակների համակրանքը գրավելու համար: Հատկապես կարևոր էր վերջիններիս շրջանում տարվող քարոզչությունը: Անգլիական իշխանությունները ցանկանում էին ցույց տալ, որ իրենք պատերազմում են ոչ թե մահմեդական պետության և ընդհանրապես մահմեդականության, այլ հանցագործ կառավարության դեմ[1]:

Պատմական ճշմարտությունը պահանջում է, որպեսզի նշվի Մեծ Բրիտանիայի անուղղակի մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ: Դրա վկայությունն է այդ պետության նախկին վարչապետ Լլոյդ Ջորջի խոստովանությունը. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ բերեց 1895–1896 և 1909 թթ. սարսափելի ջարդերին ու 1915 թ. ահավոր կոտորածին»[2]:

Ռուսաստանցի պատմաբան Վադիմ Միխայլովին զարմացրել է ռուսական կառավարության դիրքորոշումը արևմտահայաության նկատմամբ: Ռուսաստանը, սկսած XIX դարի 70-ական թթ., նախաձեռնելով հայկական նահանգների բարենորոգումները, հետևողական չեղավ դրանք իրականացնելու գործում: Նա գրում է «Հետագոտողին առաջին հերթին ապշեցնում է Ռուսաստանի անհետևողականությունը Հայկական հարցում»[3]: Վ. Միխայլովին զարմացրել էր նաև այն փաստը, որ երբ հասարակայնությանը հայտնի են դառնում թուրքերի կողմից հայերի զանգվածային կոտորածների մասին, Ռուսաստանը որևէ քաղաքական կամ ուղղակի զինվորական գործողության չի դիմում բռնությունները խոչընդոտելու համար:

---

[1] «Համբաւաբեր», 1916, N 31, 31 յուլիսի, էջ 983–984, տե՛ս նաև *Օհանջանյան Ա.*, Մեծ Բրիտանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը, ԲՀԱ, 2008, N 1, էջ 244–252:

[2] *Лойд Дж.*, Правда о мирных договорах, том 2, Москва, 1957, с. 390.

[3] *Михайлов В. В.*, Восточный вопрос и позиции Великобритании и России в Первой мировой войне, Автореферат диссертации на соискание учёной степени доктора исторических наук, Санкт-Петербург, 2010, с. 36, http://oldvak.ed.gov.ru/common/img/uploaded/files/vak/2010/announcements/istorich/31-05/MikhaylovVV.pdf

Նրա համոզմամբ, հանձին հայերի ռուսները կարող էին ունենալ դաշնակիցներ, որոնք ի զորու էին օգնել Օսմանյան կայսրության դեմ կռվելու համար: Եվ այդ դաշնակիցները, հանձին հայ կամավորական խմբերի կային, սակայն անհետևողական քաղաքականության հետևանքով այդ ուժերը լիարժեք չեն օգտագործվում[1]:

Աքսորելով և ոչնչացնելով հայ բնակչությանը՝ երիտթուրքական իշխանությունները զրկվեցին որակյալ և հմուտ մասնագետներից, որը բացասաբար անդրադարձավ պատերազմող երկրի տնտեսական վիճակի վրա: Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեսի Ջեկսոնը վկայում է, որ ականատեսը, 1915 թ. դեկտեմբերին լինելով Ուրֆայում, քաղաքը գտել է առանց դեղագործների, կաշեգործների, ջուլհակների, թիթեղագործների և այլոց: Քաղաքի կազմալուծված և կաթվածահար տնտեսությունը վերականգնելու նպատակով իշխանությունները հարկադրված էին տարբեր մասնագիտություններ ունեցող 2500 հայերի թույլատրել աքսորից վերադառնալ Ուրֆա[2]: Լ. Դևիսի վկայությամբ նույնը կրկնվեց Խարբերդում[3]:

1916 թ. մարտի կեսերին Մուշի թուրք բնակչությունը դիմում է ռուսական հրամանատարությանը, խնդրելով թույլ տալ սկսել դաշտային աշխատանքները: Ռուսները տալիս են իրենց համաձայնությունը: Որոշ ժամանակ անց, թուրքերը կրկին դիմում են ռուսներին, խնդրելով, որպեսզի հայերը կատարեն հողագործական աշխատանքները, քանի որ «իրենք երբեք ցանքս չեն կատարել, իսկ այդ բոլորն արել են հայերը»[4]:

Էրզրումի գերմանական փոխհյուպատոս է. Շոյբներ-Ռիխտերը 1915 թ. օգոստոսի 10-ի հաղորդման մեջ նշում է, որ չնայած թուրքերն իրենց առևտրական հմտությամբ չեն զիջում հայերին, սակայն վերջիններս նրանց գերազանցում են իրենց կրթական բարձր մակարդակով: Անընդհատ տեղահանումների հետևանքով Օսմանյան կայսրության արևելյան նահանգները՝ Արևմտյան Հայաստանը

---

[1] *Михайлов В. В.*, указ. соч., с. 36.
[2] Տե՛ս Armenian Review, Boston, 1984, Spring, vol. 37, N 1, p. 142.
[3] Տե՛ս *Davis L. A.*, op. cit., p. 58-59.
[4] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 12, թ. 10:

դատարկվում է հայերից: Պակասում է նաև թուրքերի թիվը, որոնք զորակոչվում են բանակ: Դիվանագետի համոզմամբ, մինչև որ քրդերն ի վիճակի կլինեն փոխարինել հայերին, կանցնեն տասնամյակներ[1]:

Հայերի տեղահանության ընթացքում օսմանյան իշխանությունները պաշտոնապես պարտավորվեցին պահպանել հայերի ունեցվածքը, որը վերադարձվելու էր պատերազմի ավարտից հետո. դրանք, սակայն, լոկ խոստումներ էին: Հայերի բռնագաղթից հետո նրանց շարժական և անշարժ գույքն անցնում էր տեղական իշխանություններին և թալանվում թուրքերի և քրդերի կողմից: Ամերիկյան միսիոներուհի էլիզաբեթ Վեբբի վկայությամբ, Ադանայի հայության տարագրությունից հետո, նրանց գույքը վաճառվեց տեղի թուրքերին[2]: Կողոպտվեց հայ առաքելական եկեղեցուն պատկանող գույքը: Այսպես, կողոպտվեց Մշո Ս. Առաքելոց, Ս. Աստվածածին եկեղեցիների ոսկյա և արծաթե եկեղեցական սպասքեղենը[3]:

Յոզղաթի մութասարիֆի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյին և Յոզղաթի ժանդարմական պետ մայոր Թևֆիկ բեյին օսմանյան Ռազմական ատյանը մեղադրեց նաև հայերի ունեցվածքը և դրամը կողոպտելու մեջ[4]: Գեներալ Լ. ֆոն Զանդերսի անձնական թարգմանիչ Հենրիխ Ֆիրբյուխերը վկայում է. «Թուրքերը 1915 թ. ոչ միայն սպանում, այլև թալանում էին հայերին:.. 1916 թ. թուրքերը Բեռլին են ուղարկում իրենց թալանած փողերից 100 միլիոն ոսկյա մարկ...»[5]: Իսկ Թալեաթի լկտիությունը հասնում է այնտեղ, որ Հ. Մորգենթաուին առաջարկում է հանձնել ԱՄՆ-ի բանկերում պահվող օսմանահպատակ հայերի ավանդները[6]:

---

[1] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции, с. 312.
[2] Տե՛ս *Moranian S. E.*, op. cit., p. 113.
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 69–71:
[4] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության, էջ 164:
[5] *Фирбюхер Г.*, Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа (отв. ред. В. Микаелян), Ереван, 1991, с. 71–72; տե՛ս Германские источники о геноциде армян, с. 25. Նշված գումարը պատերազմի ավարտից հետո յուրացվեցին Անտանտի տերությունների կողմից, տե՛ս *Կիրակոսյան Զ. Ս.*, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ., Երևան, 1965, էջ 448:
[6] *Morgenthau H.*, op. cit., p. 332.

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո, թուրքական մամուլում տպագրվում են մի շարք հոդվածներ, որոնք հայտնում են երիտթուրքերի կողմից հայերին պատկանող գեղարվեստական զանազան արժեքների յուրացման մասին: Ըստ «Սաբահ»-ի, էրզրումի «Սանասարյան» վարժարանից հափշտակված գույքի թվում էր նաև Հովհաննես Այվազովսկու կտավը, որն ուղարկել էին Կ. Պոլիս[1]:

Տրապիզոնում երիտթուրք հանցագործների դատավարության ժամանակ բացահայտվեց նրանց կողմից իրականացված մի նոր ոճրագործություն ևս, որին մասնակցել էին մի քանի թուրք բժիշկներ: Նրանք թունավորել էին հիվանդ հայերին[2]: Մեկ այլ բժիշկ, Սուլեյման Նումանը տիֆի հարուցիչ էր ներարկել հայերի[3]: Թուրք բժիշկների ոճրագործությունների մասին են վկայում բրիտանական, գերմանական, ամերիկյան և այլ աղբյուրներ: Վահագն Տատրյանի կարծիքով, նման «գիտափորձերի դրդողները եղել են մասնագիտությամբ բժիշկներ Բեհաէդդին Շաքիր և Նազըմ բեյերը»[4]:

Ինչպես նշում է խորհրդային նշանավոր պատմաբան Եվգենի Տարլեն, հայերի բնաջնջումը ոչ այնքան վերաբերում էր Անգլիային, որքան Ռուսաստանին: Վերջինս կորցնում էր իր որոշ հենարանը Թուրքիայում: Իսկ ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային, ապա նա հետաքրքրված էր բացառապես Միջագետքով և Պաղեստինով[5]:

---

[1] «Արիամարտ», Կ. Պոլիս, 1918, 14 դեկտեմբեր:
[2] «Աշխատաւոր», Թիֆլիս, 1919, 26 ապրիլի:
[3] «Ժողովուրդի ձայնը», Կ. Պոլիս, 1919, 14/27 մարտի:
[4] ***Dadrian V.,*** The Role of Turkish Physicians in the World War 1 Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, Oxford, 1986, vol. 1, № 2, p. 169.
[5] ***Тарле Е. В.,*** Сочинения, том V, Москва, 1958, с. 403.

## գ) Ինքնապաշտպանական կռիվները Վան-Վասպուրականում, Մուշ-Սասունում և Շապին-Կարահիսարում

Օսմանահպատակ հայերի ցեղասպանությունը ծրագրած երիտթուրքական կառավարության կողմից առանձնացվել էին կանոնավոր բանակի զորամասեր, ոստիկանական ստորաբաժանումներ, թուրք և քուրդ քաղաքացիական բնակչությունից կազմված զինված ջոկատներ: Տղամարդկանց մի մասը զորակոչվել էր բանակ, իսկ հասարակական, հոգևոր և կուսակցական ազդեցիկ դեմքերի մեծ մասը կամ սպանվել, կամ էլ աքսորվել էր երիտթուրքական իշխանությունների կողմից: Հայերը հայտնվել էին ծանր վիճակում: Այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք և քուրդ ջարդարարներին: Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վանի վիլայեթի հայկական գյուղերում:

*Վան-Վասպուրականի ինքնապաշտպանական մարտերը:* 1915 թ. փետրվարի 13-ին քրդական ջոկատը գրոհում է Արծեշի կազայի (գավառի) Առեն գյուղը: Կռվի ժամանակ սպանվում է հայտնի ելուզակ Բըշարե Չաթոյի որդին, եղբայրը և 18 քուրդ: Իշխանություններն առ ժամանակ ձեռնպահ են մնում պատասխան գործողություններից[1]: Մարտի 10-ին երեք թնդանոթներով Առենին է մոտենում 500 հոգուց բաղկացած թուրքական և քրդական զորաջոկատը: Մարտը տեղի է ունենում ամբողջ օրը և դադարում է միայն գիշերը: Հակառակորդը կորցնում է 20, իսկ հայերը՝ 3 հոգի: Բախումը դադարեցվում է միայն Ա. Մանուկյանի և Վաֆիկ բեյի միջնորդությամբ[2]: Անգղ և Քերծ գյուղերի բնակիչները համատեղ ինքնապաշտպանություն են կազմակերպում: Ապրիլի 5-ին հակառակորդը ստվար ուժերով

---

[1] *Կոսոյեան Հ.,* Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսամարտը, Թեհրան, 1966, էջ 39:

[2] *Ա-Դօ,* Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երևան, 1917, էջ 143–145:

անցնում է հարձակման և կարողանում է ճեղքել հայերի պաշտպանությունը: Բնակիչների մեծ մասը սրի է քաշվում[1]:

Արճակ գավառում տեղի բնակչությունը Շիրին Եղիազարյանի հրամանատարությամբ դիմադրություն է կազմակերպում: Դա հնարավորություն է տալիս փրկել մոտ 10 հազար հոգու: Ինքնապաշտպանական ուժերը Շ. Եղիազարյանի գլխավորությամբ կենտրոնանում են Խառակոնիս գյուղում: Ապրիլի 6-ից 7-ը թուրքական 150 զինվոր և քրդական ջոկատը, թնդանոթի կրակի տակ մի քանի անգամ գրոհում են հայերի դիրքերը: Թշնամուն դիմագրավում են 100 հայ: Նրանց պաշտպանական մարտերը հնարավորություն տվին բնակչությանը հեռանալ[2]:

Համառ դիմադրական մարտեր են տեղի ունենում Վարագա վանքի շրջակայքում: Վանքը գտնվում էր համանուն լեռան վրա, նրա երկու գագաթների միջև և ուներ ռազմավարական նշանակություն: Լավ գիտակցելով դա, Զևդեթ բեյն այդտեղ ժանդարմական ջոկատ էր ուղարկել: 1915 թ. ապրիլի 7-ին Շուշանցի, Կուռուպաշի և Նոր-գյուղի ինքնապաշտպանական ուժերը միավորվելով, վանքից քշում են ժանդարմներին: Կարճ ժամանակում Վարագա վանքում ապաստանում է 6 հազարից ավելի հայ[3]:

Ինքնապաշտպանական կատաղի մարտեր են ընթանում Շատախ գավառի կենտրոն Թաղում, որը բաժանվում էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին և Ջրաղացի: Արմենակ Եկարյանի վկայությամբ, Շատախը հայտնի էր օսմանյան բռնատիրության դեմ իր ընդվզումներով: Նկատի ունենալով տեղի հայության համառ և անզիջում պայքարը թուրք և քուրդ հարստահարողների դեմ, Ա. Եկարյանը գավառը համեմատում է Զեյթունի հետ[4]: Ստեղծվում է Ջինվորական մարմին, որի ղեկավար է ընտրվում Բաղդիկ (Ազատ) Սիմոնյանը: Թաղը բաժանվում է ութ դիրքի՝ 114 մարտիկով: Միաժամանակ Սահակ Չոլոյանի հրամանատարությամբ կազմվում է 30 հո-

---

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 473, թ. 22:

[2] Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնևհինգամյակի առթիվ. 1915–1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, էջ 191, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 426, թ. 5:

[3] *Ա-Դո,* Մեծ դեպքերը, էջ 217–218:

[4] *Յուշեր Արմենակ Եկարեանի.* Խմբագրեց Լ. Աճէմեան, Գահիրէ, 1947, էջ 185:

գուց բաղկացած պահեստազոր: Ինքնապաշտպաններն ունեին բավարար քանակությամբ սև վառոդ, որը հնարավորություն էր տալիս լիցքավորել հրացանները[1]: Սկզբնական շրջանում թուրքական իշխանությունները հայերի դեմ կենտրոնացրել էին 150 զինվոր և երկու թնդանոթ: Հետագայում զգալի համալրում ստացվեց Վանից: Ավարի և կողոպուտի ակնկալությամբ հավաքվեցին մոտ երկու հազար քուրդ[2]:

1915 թ. ապրիլի 1-ին սկսվեց Թաղի ինքնապաշտպանությունը: Ունենալով ռազմամթերքի մեծ պաշար, հակառակորդն անընդհատ գնդակոծում էր հայկական դիրքերը, իսկ հայերը խնայելով զինամթերքը, հարկադրված էին պատասխանել հատուկենտ կրակոցներով: Ջևդեթն անչափ զայրացած էր Թաղի հայերի դիմադրությունից: Նա ճգնում էր վերջ տալ շատախցիներին, որպեսզի ազատված ուժերն ուղղի Վանի վրա: Շատախ ուղարկվեցին լազերի մեկ գումարտակ և քրդական 300 հոգիանոց ջոկատ[3]: Մայիսի 2-ին քրդական բազմաքանակ ուժերը նոր հարձակում են ձեռնարկում: Ինքնապաշտպաններին հաջողվում է ուժերի գերագույն լարումով ետ մղել նրանց:

Մայիսի 8-ից 9-ը Թաղ են շտապում ինքնապաշտպանական խմբեր գավառի զանազան մասերից: Դա հնարավորություն է տալիս լրացնել մարտիկների շարքերը և կասեցնել հակառակորդի անընդմեջ գրոհները: Մայիսի 14-ին Հայկական II դրուժինան Դրոյի հրամանատարությամբ մտնում է Թաղ: Մոտ մեկ և կես ամիս տևած մարտերի ընթացքում հայերի կորուստը կազմել է 150-160, իսկ հակառակորդինը՝ 500–600 հոգի[4]:

Առավել ծանր ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում Վան քաղաքում: 1914 թ. սկզբներին Վանում բնակիչների թիվը հասնում էր 41 հազարի, որից 23 հազարը հայ, իսկ 18 հազարը՝

---

[1] «Վան-Տոսպ», 1916, ապրիլ 28, էջ 8: Տե՛ս նաև *Ա-Դո*, նշվ. աշխ., էջ 380:

[2] *Ա-Դո*, Մեծ դէպքերը, էջ 375, 377, Վան-Վասպուրականի հերոսամարտը-75 (նյութերի ժողովածու), կազմող՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1990, էջ 66:

[3] Տե՛ս *Ussher C. D., Knapp G. H.,* op. cit., p. 265; *Nogales R. de,* Four Years Beneath the Crescent, (Trans. from Spanish by M. Lee, with an Introduction by Lietenant-Colonel E. Davis), N. Y.- London, 1926, p. 82.

[4] «Վան-Տոսպ», 1916, 12 հունիսի, էջ 7:

մահմեդական: Քաղաքի հայությունը բնակվում էր Այգեստան (20 հազար հոգի) և Քաղաքամեջ (2500 հոգի) թաղամասերում: Նրանք գտնվում էին միմյանցից 5–6 կմ հեռավորության վրա: Այդ միջանկյալ տարածքում բնակվում էին հիմնականում թուրքեր[1]: Նահանգում տիրող վիճակը, Վռամյանի և Իշխանի սպանությունները հարկադրում են հայությանն ուղիներ փնտրել՝ ջարդից փրկվելու համար: Ապրիլի 5-ից քաղաքի արվարձաններում և թուրքական թաղամասի հարևանությամբ բնակվող հայկական ընտանիքները տեղափոխվում են Այգեստան: Հայկական թաղամասերը շրջապատվում են օսմանյան զորքի կողմից:

Հայերը հույսեր էին փայփայում, որ կհաջողվի խուսափել բախումից: Նրանք դիմեցին ամերիկյան միսիոներներ Քլ. Աշըրին և Էռնեստ Յարոուոյին՝ տեսակցել նահանգապետի հետ և գործը չհասցնել արյունահեղության: Հանդիպման ժամանակ Ջևդեթն ամբաստանում է վանեցիներին խռովության մեջ՝ սպառնալով կոտորել բոլորին, չխնայելով նույնիսկ երեխաներին[2]: Նա միսիոներներին առաջարկում է «ապահովության» 50 զինվոր և մեկ թնդանոթ՝ հայերի և քրդերի հնարավոր «հարձակումներից» պաշտպանվելու համար: Ամերիկացիները մերժում են[3]: Սպառելով հույսը, մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ վանեցիները որոշում են համախմբվել և դիմել ինքնապաշտպանության:

1915 թ. ապրիլի 5-ին Այգեստանում կազմվում է «Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին», կարճ՝ Զինվորական մարմին: Նրա կազմում սկզբնապես մտնում են Արմենակ Եկարյանը (սահմանադիր ռամկավար, ռազմական ղեկավար), Կայծակ Առաքելը, Գրիգոր Բուլղարացին (երկուսն էլ դաշնակցականներ): Հետագայում Զինվորական մարմնի կազմում ընդգրկվում են Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցական), Արամ Մանուկյանը (դաշնակցական): Ինքնապաշտպանության կազմակերպման աշխատանքներին գոր-

[1] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 45, *Ա-Դո*, նշվ. աշխ., էջ 222:
[2] Տե՛ս ***Knapp G. H.,*** op. cit., p. 16; ***Bryce J.,*** op. cit., p. 34.
[3] Տե՛ս ***Ussher C. D., Knapp G. H.,*** op. cit., pp. 239–240; Lepsius Joh., Deutschland und Armenien, s. 476.

ծուն մասնակցություն են ունենում Գաբրիել Սեմերջյանը, Հմայակ Մանուկյանը, Օնիկ Մխիթարյանը և ուրիշներ[1]:

Զինվորական մարմնի կազմում ընտրվում են Այգեստանի հեղինակավոր, հարգանք ու վստահություն վայելող կուսակցական և անկուսակցական գործիչներ, որոնք իրենց անձով և կազմակերպչական ունակություններով կարող էին համախմբել և օրինակ ծառայել համաքաղաքացիներին: Փ. Թերլեմեզյանն իր հուշերում գրում է, որ Ա. Եկարյանն ընտրվեց ռազմական ղեկավար, որովհետև անվախ կռվող էր[2]: Իսկ ժամանակակիցները, ինչպես նաև հակառակորդը, Վանի ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչը և ոգին համարում էին Արամ Մանուկյանին[3]: Զինվորական մարմնին կից ստեղծվում են նաև այլ ստորաբաժանումներ, որոնք պետք է ապահովեին հաջող ինքնապաշտպանությունը: Քլ. Աշըրը ինքնապաշտպաններին է տրամադրում ամերիկյան հիվանդանոցի դեղատունը, մերժելով այն հանձնել թուրքերին: Այգեստանի ներքին կարգ ու կանոնը վերահսկելու համար կազմակերպվում են ոստիկանություն և դատարան: Թաղամասի ինքնապաշտպանական մարմինների կազմակերպմանն աջակցում է է. Յարոուն: Այդ ծառայությունների ստեղծումը տևում է երեք օր[4]:

Այգեստանը բաժանվում է յոթ պաշտպանական շրջանների՝ 79 դիրքով և 1053 մարտիկով: Օսմանյան ուժերի թվաքանակը 5-ից 12 հազար էր: Թուրքական բանակը զինված էր մի քանի տասնյակ թնդանոթներով: Հետագայում էրզրումից ուղարկվում են երկու գումարտակ և չորս լեռնային թնդանոթ[5]: Վանի պաշտպաններն ապավինեցին սեփական ուժերին և առկա էր «կուսակցական իրավատե-

---

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 192:

[2] Հայաստանի պետական պատկերասրահ, հուշածեռագրային բաժին, ֆոնդ 30, ինվենտար 423, Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 408 (այսուհետև՝ ՀՊՊ):

[3] Տե՛ս Геноцид армян в Османской империи, с. 288; տե՛ս նաև *Nogales R. de,* Four Years Beneath the Crescent, p. 27.

[4] Տե՛ս *Ussher C. D., Knapp G. H.,* op. cit., p. 251, *Համբարյան Ա. Ս.,* Վանի 1915 թվականի հերոսամարտը, ՊԲՀ, 1985, N 2, էջ 33:

[5] Տե՛ս *Bryce J.,* op. cit., p. 40; *Lepsius Joh.*, Deutschland und Armenien, S. 484; *Nogales R. de,* Memoirs of Soldier of Fortune, N. Y., 1932, pp. 268, 271; Геноцид армян в Османской империи, с. 287, ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 19:

սական համերաշխություն, բացակայում էր կուսակցամոլությունն ու դրա անցանկալի ազդեցությունը»[1]:

Քաղաքի ինքնապաշտպանությունն սկսվում է 1915 թ. ապրիլի 7-ի վաղ առավոտյան, թուրքական հարձակումով: Հրետանին սկսում է ռմբակոծել Այգեստանը: Հակառակորդը մի շարք շրջաններում հարձակումներ է ձեռնարկում, սակայն զգալի կորուստներ կրելով՝ ետ է քաշվում: Թուրքական գրոհի ծախողման հիմնական պատճառը հայ մարտիկների կազմակերպած հակահարվածն էր, որ խուճապ է առաջացնում նման դիմադրության չսպասող հակառակորդի մոտ: Զինվորական մարմինը հատուկ կոչով դիմում է թուրք համաքաղաքացիներին՝ ընդգծելով, որ իրենց թշնամին Ջևդեթն է, ոչ թե թուրք ժողովուրդը[2]:

Օսմանյան կանոնավոր բանակի և հայ մարտիկների միջև մղվող մարտերի մասին ուշագրավ տեղեկություններ է թողել Վանի մարտերին մասնակցած, կապիտան Ռաֆայել դե Նոգալեսը: Նա վկայում է հայերի դիպուկ նշանառության և հատուկ շաղափների մասին, որոնցով նրանք թշնամու համար անակնկալ անցքեր էին բացում տների պատերի մեջ՝ դրանք օգտագործելով որպես հրակնատներ[3]:

Չնայած լուրջ հաջողություններին, իրադրությունը հայերի համար շարունակում էր մնալ օրհասական: Մայիսի սկզբներին Այգեստանում մնացել էր 7-ից 8 օրվա պարենի պաշար: Քլ. Աշըրն առաջարկում է սովի դեպքում սնվել նույնիսկ շներով և կատուներով, որը հնարավորություն կտա մի քանի օր ևս դիմանալ: Ինքնապաշտպանության մասնակիցներից Ա. Սարգսյանը վկայում է ասորի մի քահանայի քաջության մասին, որը զոհվում է մարտերից մեկի ժամանակ[4]:

---

[1] *Սարգսյան Ս.* – Արամ Մանուկյանը 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար, տե՛ս Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, 2010, էջ 23:

[2] Յուշեր Ա. Եկարեանի, էջ 199, ***Bryce J.,*** op. cit., p. 35.

[3] Տե՛ս ***Nogales R. de,*** Four years Beneath the Crescent, p. 68.

[4] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 176, թ. 78: Այգեստանում ապաստանել էր նաև շրջակա գյուղերի մոտ 25 հազար հայ և ասորի բնակչություն, տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 14:

Ապրիլի 30-ին պաշտպանական տարբեր շրջաններից լուրեր են ստացվում, որ հակառակորդի դիրքերում սովորականից քիչ թվով զինվորներ են մնացել: Իսկ մայիսի 1-ից երևում է թե ինչպես մահմեդական բնակչությունը հեռանում է Վանից: Մայիսի 3-ին հրետանակոծության են ենթարկվում ամերիկյան միսիոներական հաստատությունները: Ռ. դե Նոգալեսի վկայությամբ, շինությունները ռմբակոծվում են Զևդեթ բեյի հրամանով[1]: Երեկոյան ժամը 18-ին հայ մարտիկները հարձակվում են Թոփրակ Կալե և Հաջի Բեքր զորանոցների վրա, որոնք լքվել էին հակառակորդի կողմից: Զորանոցները հրդեհվում են, որովհետև դրանք վանեցիների համար «բռնության սիմվոլներ էին»[2]:

1915 թ. ապրիլի 4-ին՝ կեսօրից հետո ընդհատվում են Այգեստանի բոլոր հարաբերությունները Քաղաքամեջի հետ: Դա հարկադրում է թաղամասի հայությանը դիմել նախազգուշական քայլերի: Կազմվում է Զինվորական մարմին: Նրա անդամներն էին՝ Լևոն Գալճյանը, Միհրան Թորոմանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարգիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը, Հայկակ Կոսոյանը (ղեկավար) և Հարություն (Հարո) Ներկարարյանը (բոլորն էլ ՀՅԴ անդամներ)[3]:

Զինվորական մարմնի աշխատանքներին մասնակցում է նաև եզնիկ վարդապետ Ներկարարյանը: Քաղաքամեջի հայությունն ուներ 101 տարբեր սիստեմի մարտական և 120 որսորդական հրացան, 90 «Մաուզեր» և 120 այլ սիստեմի ատրճանակ: Մարտերի ընթացքում հակառակորդից խլվեց և լիցքավորվեց 12 հազարից ավել փամփուշտ[4]:

Քաղաքամեջը բաժանվում է պաշտպանական չորս շրջանի՝ 25 դիրքով: Ինքնապաշտպանությունը սկսվում է ապրիլի 7-ին, ժամը 14-ին: Հակառակորդի հարձակումը ետ է մղվում, Հարություն Ներկարարյանի գլխավորությամբ հայերին հաջողվում է գրավել Թեքալիֆի Հարպիյե կոչվող երկհարկանի տունը: Զինվորական մարմ-

---

[1] Տե՛ս *Nogales R. de,* Memoirs of Soldier of fortune, pp. 271, 274.
[2] *Ա-Դո,* Մեծ դեպքերը, էջ 358:
[3] Կոսոյեան Հ., նշվ. աշխ., էջ 54:
[4] Նույն տեղում, էջ 54–57: *Ա-Դո,* նշվ. աշխ., էջ 271:

ևի որոշմամբ ոչնչացվում են հակառակորդի ամրացված մի քանի շինություններ՝ դատարանի շենքը, Թերզիբաշյան խանը, ոստիկանատունը և Թեքալիֆի Հարպիեյի ամբարը: Հ. Կոսոյանը վկայում է. «Սույն հաջողությունները բարձրացրին ժողովրդի տրամադրությունը, կռվողներու կորովը»[1]:

Ապրիլի 21-ի երեկոյան Ջևդեթը երկու բանագնացների միջոցով հայերին առաջարկում է հանձնվել: Ռ. դե Նոգալեսի խոստովանությամբ, նահանգապետի նպատակն էր հայերին խաբեությամբ դուրս բերել քաղաքից և ոչնչացնել[2]: Հայերը մերժում են անձնատուր լինելու առաջարկությունը:

Ապրիլի 25-ից 26-ը Ջևդեթի հրամանով Քաղաքամեջ են քշում Վանի շրջակա գյուղերի ողջ մնացած հայ կանանց ու երեխաներին, նպատակ ունենալով ուժեղացնել սննդամթերքի ճգնաժամը:

Ապրիլի 27-ին հակառակորդը սկսում է տեղափոխել հիվանդանոցի գույքն ու հիվանդներին: Մայիսի 3-ին թուրքերի կրակը մեղմանում է և երեկոյան ժամը 22-ին դադարում է: Մայիսի 4-ի առավոտյան տեղի է ունենում երկու թաղամասերի բնակիչների հանդիպումը: Էրզրումի փոխհյուպատոս է. Շոյբներ-Ռիխտերի տվյալներով թուրքական կորուստները կազմել են 1000, իսկ հայերինը՝ 300 սպանված[3]: Պաշարման ընթացքում Այգեստանի վրա է արձակվել 10 հազարից ավելի արկ[4]:

Այսպիսով, 1915 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 4-ը տևած Վան քաղաքի երկու թաղամասերի ինքնապաշտպանությունն ավարտվում է հայ բնակչության հաղթանակով: Հաղթանակի գրավականը հայ ազգային կուսակցությունների և հասարակության գրեթե բոլոր խավերի միասնականությունն էր: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս համախմբել բոլոր ուժերը և դիմագրավել հակառակորդին: Հաղթանակին նպաստում է ինքնապաշտպանության ընտրած պաշտպանահարձակողական մարտավարությունը, որը հնարավորություն է տալիս խուսափել զգալի կորուստներից և հար-

---

[1] Նույն տեղում, էջ 82:
[2] *Nogales R. de*, Four Years Beneath the Crescent, p. 90.
[3] *Lepsius Joh.*, Deutschland und Armenien, s. 65.
[4] *Bryce J.*, op. cit., p. 38; տե՛ս նաև Nogales R. de, Memoirs of Soldier of Fortune, p. 271.

կադրել թուրք-քրդական գերազանց ուժերին հրաժարվել ակտիվ մարտական գործողություններից: Կազմակերպվում են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք ապահովում են ինքնապաշտպանության հաջող ընթացքը:

Վանի հայության հաջող դիմադրությունը նպաստում է նաև գավառների հայության ինքնապաշտպանությանը, քանի որ իր վրա է գրավում թուրքական կանոնավոր բանակի և քրդական ջոկատների մեծ մասին:

*Տարոնի ինքնապաշտպանական մարտերը:* 1915 թ. գարնանը սկսվում է Տարոնի հայ բնակչության մասնակի կոտորածը, որը գնալով ահագնանում է: Դաժանություններով հատկապես աչքի են ընկնում Մուսա բեյը և շեյխ Հազրաթը:

Վանում անհաջողության մատնվելուց հետո, երիտթուրքական իշխանությունները գործում էին չափազանց զգույշ: Նրանք զբաղված էին ռուսական բանակի առաջխաղացումը կասեցնելով և չէին շտապում իրականացնել Տարոնի հայության ջարդը: Երիտթուրքերը գիտեին, որ քրդական անկանոն ստորաբաժանումներն առանց օսմանյան կանոնավոր զորամասերի և հրետանու աջակցության, ի զորու չէին կոտրել հայերի դիմադրությունը: Իշխանությունների գնահատմամբ, տարոնցիներն ունեին երկու հազար մարտիկ[1]: Իրականում ինքնապաշտպանների ուժերն անհամեմատ քիչ էին:

Մուշում և շրջակայքում ստեղծված սպառնալից վիճակը և քրդերի կասկածելի ակտիվությունը չէին կարող չանհանգստացնել հայությանը: Հունիսի կեսերին Մուշում հրավիրվում է տեղի հայության ներկայացուցչական ժողով: Մասնակիցները չեն կարողանում համաձայնության գալ, թե ե՞րբ և որտե՞ղ պետք է սկսել զինված ելույթը: Ռ. Տեր-Մինասյանի կարծիքով դիմադրության հիմնական կենտրոնը պետք է լիներ Սասունը, ուր կենտրոնացվելու էին Մուշի և դաշտի զինված ուժերը: Փաստորեն, Մուշն իր շրջակա հայկական գյուղերով մատնվում էր բախտի քմահաճույքին[2]: Սասուն բարձրացած ուժերը մեկ ամիս շարունակ չնախաձեռնեցին որևէ

[1] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 401:
[2] *Փափազեան Վ.*, Իմ Յուշերը, Պէյրութ, հատոր 2, 1952, էջ 321:

նախապատրաստական գործողություն: Առաջին հարվածը հասցվեց Մուշ քաղաքի հայկական թաղամասերին և դաշտի հայկական գյուղերին: 1915 թ. հունիսի 26-ին Մուշի կառավարիչ Սերվեթը հրամայում է քաղաքի հայությանը գաղթել Ուրֆա[1], չենթարկվելու դեպքում սպառնում է դաժան հաշվեհարդարով:

1915 թ. հունիսի 27-ին Սերվեթն իր մոտ է հրավիրում Մշո առաջնորդական տեղապահ Վարդան վարդապետին և հայտնում, որ քաղաքի հայության տարագրման համար տրվում է երկու ժամ: Վարդան վարդապետին հավաստիացնում են, որ տարագրության ընթացքում կձեռնարկվեն բոլոր միջոցները հայերի անվտանգությունն ապահովելու համար[2]: Ստանալով նման «հավաստիացումներ»՝ Վարդան վարդապետն առաջնորդարանում ժողով է գումարում, ինքնապաշտպանության կողմնակիցներից պահանջում է չդիմադրել և ենթարկվել իշխանությունների հրամանին: Նրա առաջարկը, սակայն, հանդիպում է Հաջի Հակոբ Կոտոյանի, Տիգրան Սկրտչյանի, Դերձակ Ավոյի, Լևոն Ասլանյանի և այլոց մերժումին, որոնք վճռում են դիմադրել[3]:

Ա. Յոհաննսոնի տեղեկությամբ, հայկական թաղամասերն ամուր օղակվում են զորքերով և քրդական զինված ջոկատներով: Բերվում են լրացուցիչ 11 թնդանոթ և երկու հազար զինվոր: Հունիսի 28-ին սկսվում է Մուշի հայության ինքնապաշտպանությունը[4]: Հրետանին անընդմեջ հրետանակոծության է ենթարկում հայկական հինգ թաղամասը:

Ռ. Տեր-Մինասյանի տեղեկության համաձայն, Մուշ էր բերվել մինչև 20 հազար զորք[5]: Այստեղ, տեղի 12 հազար բնակչից բացի, ապաստան էին գտել նաև շրջակա հայկական գյուղերի 10 հազար

---

[1] ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 533, թ. 26:

[2] *Սահակյան Ռ. Օ.,* Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915, էջ 275: Ռ. Տեր-Մինասյանը նշում է, որ Քյազիմ բեյի ստորաբաժանումը Մուշ էր ժամանել 1915 թ. մայիսի կեսերին, տե՛ս ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 536, թ. 20:

[3] *Սասունի Կ.,* Պատմութիւն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1957, էջ 890–891:

[4] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян, с. 258.

[5] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 536, թ. 20:

բնակիչ[1]: Ա. Յոհաննսոնի վկայությամբ՝ «Հայերը իրենց տուներն դուրս չէին ելլեր, անոնք բոլորովին անշարժ կը սպասեին, միայն երբ զինվորները կը խուժեին ռմբակոծումներե ավերակի վերածած տուներե ներս, այն ատեն է, որ կը փորձեին դիմադրություն ցույց տալ կարելին եղածի չափ ողջ մնալու համար»[2]:

Մինչև 1915 թ. հունիսի 29-ը հակառակորդը որևէ շոշափելի արդյունքի չի հասնում: Անզեն տղամարդիկ ուշադրություն չդարձնելով թուրքական կրակին, արագորեն վերականգնում են ռմբակոծությունից վնասված կամ քանդված դիրքերը: Իրադրությունը կտրուկ փոխվում է, երբ թուրքերը չորս թնդանոթների կրակը կենտրոնացնում են Վերին թաղի վրա: Դրա հետևանքով դիրքերի մեծ մասն այն աստիճանի է ավերվում, որ մարտիկները նահանջում և կենտրոնանում են Թաղի վերին մասում: Այստեղ, գիշերը տեղի է ունենում դիմադրական ուժերի հրամանատարների՝ Լ. Ասլանյանի և Հ. Կոտոյանի խորհրդակցությունը: Նրանք վճռում են ուժերը կենտրոնացնել Չորի թաղում, որը դառնալու էր դիմադրության կենտրոնը:

Հունիսի 29-ին մարտեր են տեղի ունենում Բրտի թաղում: Այստեղ, հայերն ունենալով սակավաթիվ ուժեր, ամրանում են երկու տներում և կռվում մինչև ուշ երեկո: Թուրքական հրետանին ամբողջությամբ քարուքանդ է անում տները՝ փլատակների տակ թողնելով հայ մարտիկներին[3]: Պաշտպանական հիմնական մարտերը տեղի են ունենում Չորի թաղում: Հակառակորդն այս ուղղությամբ կենտրոնացնում է գլխավոր ուժերը: Հունիսի 30-ին թուրքերն ու քրդերն ավելի մեծ ուժերով վերսկսում են հարձակումը և ի վերջո ճնշում են մշեցիների դիմադրությունը: Հայ մարտիկները Հ. Կոտոյանի գլխավորությամբ արիաբար մարտնչում են մինչև վերջին փամփուշտը և կնքում իրենց մահկանացուն: Բացի Մուշ քաղաքից,

---

[1] «Վան-Տոսպ», 1916, 23 հոկտեմբերի, էջ 7:

[2] *Յոհաննսոն Ա.,* նշվ. աշխ., էջ 8:

[3] *Սասունի Կ.,* Պատմութիւն Տարոնի աշխարհի, էջ 900: Ավելի մանրամասն տե՛ս *Սահակյան Ռ.,* Ականատեսի վկայությունները Մուշ քաղաքի հայության կոտորածի մասին, ԼՀԳ, 2010, թիվ 1, էջ 460–469:

ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում շրջակա հայկական գյուղերում:

1915 թ. մարտից սկսած՝ թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները և քրդական ջոկատները հարավից ուղղվում են Սասուն: Այդտեղ կար մոտ 50 հազար հայ բնակչություն, ներառյալ այլ վայրերից ապաստանածները[1]: Սասունի ինքնապաշտպանությունն իրականացնում էին 600 մարտիկ[2]: Հայերն ունեին մոտ 800 որսորդական և 150–200 մարտական հրացան[3]: Սկզբնապես բախումները տեղի են ունենում ապրիլ-մայիս ամիսներին Խուլփի և Խիանքի շրջաններում:

Օգտագործելով թվային և կրակային գերակշռությունը՝ հակառակորդը հարկադրում է ինքնապաշտպաններին նահանջել Անդոկ, և Սասունը դանդաղորեն օղակվում է: Ինչպես նշում է Ռ. Տեր-Մինասյանը, հարձակումները շարունակվում են մինչև հունիսի 12-ը: Հակառակորդն զգալի կորուստներ է ունենում[4]: Մուշի հայության հետ հաշվեհարդար տեսնելուց հետո թուրքական հրամանատարությունն ազատված ուժերը տեղափոխում է Սասուն՝ ուժերի թիվը հասցնելով 30 հազարի[5]: Հուլիսի կեսերին ժամանում է թուրքական մեկ դիվիզիա Բեքիր Սամիրի հրամանատարությամբ[6]:

Հուլիսի 19-ին օսմանյան ուժերն անցնում են լայնածավալ հարձակման: Կենտրոնացնելով զգալի ուժեր՝ հուլիսի 23-ին թշնամին համառ մարտերից հետո գրավում է Անդոկ լեռան ստորոտին գտնվող Հրմոյի գոմերը, սրի քաշում բնակչությանը: Նման օրհասական և ծանր պայմաններում սասունցիները մարտնչում էին կատաղի հուսահատությամբ: Իրենց եղբայրների և ամուսինների հետ կռվում էին կանայք և աղջիկները՝ թշնամու վրա բարձրունքից ժայռաբեկորներ նետելով: Նման վճռական հակահարվածը հարկա-

---

[1] *Պողոսյան Հ. Մ.,* Սասունի պատմություն (1750–1918), Երևան, 1985, էջ 333: Սասունի բնակչության թվաքանակը հասնում էր մոտ երեսուն հազարի, տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 10 շրջ.:

[2] «Վան-Տոսպ», 1916, 13 նոյեմբերի, էջ 8:

[3] *Փափազեան Վ.,* Իմ Յուշերը, էջ 337:

[4] ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 536, թ. 20:

[5] *Արզումանյան Մ. Վ.,* Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 376:

[6] ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 536, թ. 21:

դրում է թուրք-քրդական ուժերին նահանջել և նույնիսկ զինադադար խնդրել՝ մարտադաշտից սպանված ու վիրավորված յուրայիններին հավաքելու համար:

Ա. Յոհաննսոնի վկայությամբ, սասունցիների դիմադրությունից գազազած թուրքական հրամանատարությունն սկսում է խաղաղ հայ բնակչության զանգվածային կոտորածները, մինչ այդ չտեսնված ու չլսված դաժանությամբ: Հուլիսի 19-ին անցնելով լայնածավալ հարձակման թուրքերը գրավում են Գեբինն ու Անդոկը[1]:

Չնայած սասունցիների համառ դիմադրությանը՝ հակառակորդը պաշարման օղակն օրեցօր ավելի ու ավելի է սեղմում: Սասունի ինքնապաշտպանության ղեկավարությունը վճռում է: «Յուրաքանչյուրը իր զենքն ու փամփուշտը միասին առնե և տեր կանգնի իր ընտանիքին: Անոնք, որ կը հաջողին պատսպարվել, թերևս հետագային բախտ ունենան վերադարձող Կովկասյան ուժերը դիմավորելու»[2]: Այլ համոզման էր Կողբեցի Տիգրանը. «Եթե մենք հայրենիքը և ժողովուրդը սիրողներ ենք, պետք է, որ մնանք իրենց (ժողովրդի – Ռ. Ս.) հետ և մինչև վերջին շունչներս մեռնինք կամ ապրինք, բայց միշտ ժողովրդի հետ, անոր ճակատագրով»[3]: Կողբեցի Տիգրանը հավատարիմ է մնում երդմանը և չի լքում ժողովրդին: Նա իր մահկանացուն կնքում է ջարդարարների դեմ մղած անհավասար պայքարում: Անդոկի, Ծովասարի և Գեբինի լեռներում մարտերը շարունակվում են մինչև 1915 թ. օգոստոսի 3-ը: Հակառակորդին հաջողվում է ճնշել դիմադրության հիմնական օջախները և բնակչության մեծ մասին սրի քաշել:

Սասունի 98 գյուղերի ճնշող մեծամասնությունն ավերվում է: Ռուսական բանակի կողմից 1916 թ. փետրվարին Մուշը գրավելուց և թուրքական բանակի նահանջելուց հետո, ողջ մնացած սասունցիները լեռներից իջնում են դաշտավայր: Նրանք կարճ ժամանակում կազմում են 400 հոգուց բաղկացած մարտական ջոկատ, որն իր անընդհատ հարձակումներով զգալի կորուստներ է պատճառում հակառակորդի դետքերին և քրդական ջոկատներին: Այս մար-

---

[1] ՀԱԱ, ֆ, 818, ց. 1, գ. 536, թ. 21:
[2] *Ռուբեն,* Հայ հեղափոխականի մը հիշատակները, է հատոր, Երևան, 1990, էջ 85:
[3] *Պողոսյան Հ. Մ.,* Սասունի պատմություն, էջ 340:

տական ստորաբաժանումը կարևոր հետախուզական տեղեկություններ է հաղորդում ռուսական հրամանատարությանը[1]:

*Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանական մարտերը:* 1915 թ. հունիսի 3-ին սկսվում Շապին-Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի հայության ինքնապաշտպանությունը[2]: Թուրքերից կազմված ջոկատը շտապում է գրավել քաղաքի հարևանությամբ գտնվող հինավուրց բերդը: Հայերը կրակ են բացում և քշում թուրքերին: Գ. Պարոնվարդյանի գլխավորությամբ զինված հայերի մի խումբ գրավում է բերդը[3]: Ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմակերպվում է Զինվորական խորհուրդ, որը գլխավորում է Ղուկաս Տեովլեթյանը (Ղուկաս Ախպար): Անդամներն էին՝ Վ. Հյուսիսյանը, Հ. Գարակյոզյանը, Գ. Պարոնվարդյանը, Ա. Տագեսյանը և Խ. Մեծատուրյանը[4]: Հաշվի առնելով, որ քաղաքում ինքնապաշտպանության համար նպաստավոր պայմաններ չկան, որոշվում է դիմադրության օջախ ընտրել Շապին-Գարահիսարից ոչ հեռու գտնվող բերդը: Բնակչությունը՝ 5062 հոգի սկսում է տեղափոխվել բերդ: Նրանց են միանում քաղաքի մոտ գտնվող Ծիպեռ հայկական գյուղի բնակիչները[5]: Զինվորական խորհուրդը բերդը բաժանում է յոթ պաշտպանական դիրքերի, յուրաքանչյուրում 8–25 մարտիկ: Կար փոքրաթիվ պահեստազոր:

Հունիսի 5-ի վաղ առավոտյան, երբ բերդը շրջապատված էր թուրքական 2500 զինվորներով, Սեբաստիայի վալիին առաջարկում է հանձնվել և բռնագաղթվել: Մերժում ստանալով, հակառակորդը սկսում է հրետանակոծությունը, որը ճնշիչ տպավորություն է թողնում բնակչության վրա: Այն փարատելու համար դպրոցական երգչախումբն ուսուցչի ղեկավարությամբ սկսում է հայրենասիրական

---

[1] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 11:

[2] *Հայկազ Ա.,* Շապին-Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիւ-Յորք, 1957, էջ 115:

[3] *Տօվլէթեան Ս. Խ.,* Յուշեր Շապին Գարահիսարէն, Փարիզ, 1954, էջ 137 http://webaram.com//sites/webaram.com/files/ARAM-PDF/ARM_50/index.html#/139/zoomed

[4] Նույն տեղում, էջ 184: *Տեր-Հարությունյան Հ.,* Շապին-Գարահիսարի ապստամբութիւնը, Թիֆլիս, 1917, էջ 79:

[5] Նույն տեղում, էջ 192: Ըստ այլ տեղեկության, բերդ են բարձրանում 7 հազար հոգի, տե՛ս *Տեր-Հարությունյան Հ.,* նշվ. աշխ., էջ 78:

երգեր երգել: Նրանց է միանում ողջ բերդը, իսկ դիրքերից լսվում են «Կեցցե՛ Անդրանիկը» և «Կեցցե՛ Շապին-Գարահիսարի փառքը» բացականչությունները: Միաժամանակ Ղ. Տեովլեթյանը շրջում է դիրքից դիրք, խրախուսում մարտիկներին, հրահանգում նրանց՝ խնայել փամփուշտները, իսկ ինքնաշեն նռնակներն օգտագործել միայն ծայրահեղ դեպքում:

Բնակչությունը, հիմնականում կանայք, վտանգելով իրենց կյանքը, գիշերներով գաղտագողի իջնում էին քաղաք, հայկական թաղամասից հավաքում պարեն և բերդ բարձրացնում: Այն բանից հետո, երբ հակառակորդն ամուր օղակում է բերդը, այլևս հնարավոր չի լինում իջնել հայկական թաղամաս:

Հունիսի 20-ին օսմանյան ուժերն անցնում են լայնածավալ հարձակման: Դա նպատակ ուներ հնարավորություն չտալ հայերին պաշտպանական այլ տեղամասերից ուժեր կենտրոնացնել առավել վտանգված դիրքերում: Հակառակորդին՝ թվով 200 զինվորներին, հաջողվում է ճեղքել հայերի պաշտպանությունը և մոտենալ բերդի դռանը: Այդ ծանր պահին, 14-ամյա Հմայակ Թևեքելյանի նետած նռնակը կասեցնում է թշնամու առաջխաղացումը: Օգնության հասած մարտիկները կրակ են բացում հակառակորդի վրա: Ինքնապաշտպանների կորուստը 50 սպանված էր, որոնց թվում քաջարի Հ. Թևեքելյանը: Չնայած հաղթանակին, իրադրությունը մնում էր սպառնալից: Հունիսի 23-ի դրությամբ, պարենը կբավականեցներ միայն երեք օր: Զինվորական խորհուրդը վճռում է՝ քանի դեռ սովը ուժասպառ չի արել մարդկանց՝ ճեղքել հակառակորդի պաշարումը: Միաժամանակ ընդունվում է չափազանց ծանր որոշում. ովքեր ի վիճակի չեն մասնակցելու գործողությանը, պետք է մնան բերդում:

Հունիսի 26-ին տեղի է ունենում պաշարումը ճեղքելու առաջին փորձը, որն ավարտվում է անհաջողությամբ: Երեք օր անց, հունիսի 29-ի ուշ գիշերը, մոտ 1000 հոգուց բաղկացած հայերի ջոկատը, մի քանի ուղղություններով գրոհում է բերդը շրջափակած թուրքական ուժերի վրա: Ծանր մարտերով ինքնապաշտպաններին հաջողվում է անցնել հակառակորդի երկու արգելափակիչ գոտիները: Երրորդին մոտենալիս, հայերն զգում են, որ թշնամին վերախմբա-

վորել է ուժերը և ավելի կազմակերպված դիմադրություն է ցույց տալիս: Օգտագործելով ինքնաշեն նռնակները, 870 հայերի հաջողվում է ճեղքել թուրքական շրջապատումը:

Գազազած շապինգարահիսարցիների հաջող ձեռնարկումից՝ թուրքական հրամանատարությունն իր ողջ կատաղությունը թափում է բերդում գտնվող բնակչության վրա: Միաժամանակ խուզարկվում են Շապին-Գարահիսարի հունական թաղամասը՝ փնտրելով թաքնված հայերին: Հույների տներից դուրս են բերում 600 հայ կանանց ու երեխաների: Նրանք, իրենց թաքցրած հույների հետ մահապատժի են ենթարկվում: Ողջ են մնում միայն մի քանի երեխա[1]:

1916 թ. ապրիլին Շապին-Գարահիսար այցելած գերմանացի կապիտան Վերներ ֆոն Շուլենբուրգի վկայությամբ, ինքնապաշտպանությունից գրեթե մեկ տարի անց բերդում կարելի էր տեսնել «Շորերի պատառիկներ, գանգեր և մարդկային այլ մնացորդներ: Տեսարանն այնքան տհաճ էր, որ իմ մահմեդական ծառան խնդրեց հեռանալ ամրոցից, քանի որ այդ ամենին այլևս չի կարող դիմանալ»[2]:

## դ) Սուետիայի հայության հերոսամարտը: Ֆընտըճագի և Ուրֆայի գոյամարտերը

*Սուետիայի հայության գոյամարտը:* 1915 թ. հուլիսի վերջերին երիտթուրքական իշխանությունները Սուետիայի հայությանը տարագրվել: Սուետիան գտնվում էր Միջերկրական ծովի առափնյա շրջանում, բաղկացած էր վեց հայկական գյուղերից՝ Քեպուսիե, Վագըֆ, Հաճի Հապիպլի, Յողունճօլուք և Բիթիաս: Բնակիչների մեծ մասը վճռում են չենթարկվել, այլ բարձրանալ մոտակա Մուսա լեռը՝ իրենց հետ տանելով անհրաժեշտ իրեր և տնային կենդանիներ[3]:

---

[1] «Արձագանգ Փարիզի», Փարիզ, 1926, 5 սեպտեմբերի, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 88, թ. 36:

[2] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции, с. 333.

[3] *Փաշինյան Ռ. Հ.*, Մուսա լեռան հերոսամարտը և հայ կանայք, ԼՀԳ, 2009, N 2, էջ 56:

Միայն Քեսապի 8–10 ընտանիքներ, Բիթիասի և Հաճի Հապիպլիի բնակիչների զգալի մասը խաբվելով իշխանությունների սին խոստումներից, ենթարկվում են տարագրության: Հալեպի ավստրո-հունգարական հյուպատոս Դանդինին հոկտեմբերի 25-ին հայտնում է, որ Սուետիայից աքսորվածները՝ թվով 3 հազար հոգի, կոտորվում են օսմանյան զորքերի կողմց[1]:

Մինչև օգոստոսի 3-ը օսմանյան իշխանությունները մի քանի անգամ «հիշեցնում» են սուետիահայությանը, որ պետք է տեղահանվեն: Սակայն, հայերը ուշադրություն չեն դարձնում և տենդագին նախապատրաստվում են ինքնապաշտպանության: Լեռ էին բարձրացել Սուետիայի հայկական վեց գյուղերի 6311 բնակիչներից՝ 4231 հոգի[2]:

Հայերը ճամբարում են Մուսա լեռան երեք տարբեր շրջաններում: Նրանցից յուրաքանչյուրում ընտրվում են առանձին զինվորական մարմին[3]: Փաստորեն, սկզբնական շրջանում սուետիահայերի զինական ուժը մասնատված էր, չկար պաշտպանական գործողությունները կարգավորող և ղեկավարող մեկ միասնական մարմին: Այդ ամենը հղի էր լուրջ հետևանքներով և կարող էր վտանգել ինքնապաշտպանությունը:

Օգոստոսի 7-ին, իսկ ըստ Հաբեթ Իսկենտերյանի՝ 8-ին[4], տեղի է ունենում առաջին մարտը: Թուրք զինվորները, մոտ 200 հոգի, առանց պատշաճ հետախուզության, առաջանում են դեպի հայկական դիրքերը: Թուրք սպաները պարծեցել էին, որ մեկ օրում հաշվեհարդար կտեսնեն հայերի հետ: Սակայն, հակառակորդի ճակատային գրոհը հետ է մղվում սուետիահայերի թևային և ճակատային կրակով:

Օգոստոսի 10-ին՝ վաղ առավոտյան, 1500-ից ավելի թուրք զինվոր, օգտվելով մառախուղից, աննկատ մոտենում են հայկական դիրքերին և անակնկալ հարձակումով գրավում են դիրքերը: Հայերը նահանջում և ամրանում են պաշտպանական երկրորդ գծում:

---

[1] The Armenian Genocide, S. 255.
[2] *Գասպարյան Ռ. Հ.*, նշվ. աշխ., էջ 126:
[3] *Մնդրեասեան Տ.*, Զեյթունի տարագրությունը և Սուետիո ապստամբությունը, Հալեպ, 1935, էջ 69:
[4] *Իսկենտերեան Հ.*, Սուետիո ապստամբութիւնը, Կահիրե, 1915, էջ 14:

Հակառակորդի հետագա առաջխաղացումը ծախողելու գործում բացառիկ էր Պետրոս Գալստյանի քաջությունը: Նրան հաջողվում է դիպուկ կրակոցներով ոչնչացնել թուրք հինգ հրետանավորներից չորսին, ապա անցնելով հարձակման, ստիպում են թուրքերին նահանջել[1]:

Առաջին ընդհարումների վերլուծությունը բացահայտեց հայկական պաշտպանության մեջ տեղ գտած թերությունները, որոնցից առաջինը և ամենագլխավորը՝ միասնական հրամանատարության բացակայությունն էր և ուժերի ցրվածությունը: Ուստի, օգոստոսի 11-ին բնակչությունը և ամբողջ ուժերը կենտրոնացվում են մեկ վայրում՝ Տամալճըգում: Այն գերիշխող և դիմադրության համար առավել հարմար դիրք ուներ: Կազմվում է վարչական մարմին, որի անդամներն էին՝ Տիգրան Անդրեասյանը (նախագահ), Հեթում Ֆիլյանը, Սահակ Անտեքյանը, Միքայել Կեկեճյանը, Խաչեր Մարտիրոսյանը, Հաբեթ Իսկենտերյանը, Մովսես Տեր-Գալուստյանը և ուրիշներ, թվով 16 հոգի: Ռազմական «ճանաչված ղեկավար դարձավ Եսայի Յաղուբյանը»[2]:

Ինքնապաշտպանական ուժերը բաժանվում են 43 տասնյակի, իրենց հրամանատարներով: 10–12 տարեկան երեխաները կատարում են կապավորի դեր: Առանձնացվում է պահեստազորը:

Օգոստոսի 19-ին հակառակորդը մի քանի ուղղություններով անցնում է լայնածավալ հարձակման: Թուրքական հրետանու կրակը զգալիորեն նպաստում է նրանց առաջխաղացմանը: Ծանր կորուստների գնով թշնամուն հաջողվում է ընդհուպ մոտենալ հայկական դիրքերին և տեղ-տեղ ձեռնամարտի բռնվել: Կռվին մասնակցում էին նաև հայ կանայք, որոնք թշնամու վրա գլորում են ժայռաբեկորներ:

---

[1] ***Lepsius Joh.,*** Deutschland und Armenien, S. 461; Անդրեասեան Տ., Զեյթունի անձնատուութիւնը և Սուետիո ինքնապաշտպանութիւնը, Կահիրե, 1915, էջ 38:

[2] ***Գասպարյան Ռ. Հ.,*** նշվ. աշխ., էջ 131: Եսայի Յաղուբյանը 1946 թ. հայրենադարձվում է Հայաստան, բնակվում Երևանում: Նա աշխատում է «Մալաթիա» թաղամասի թիվ 90 դպրոցում որպես պահակ: Մահացել է 1955 թ.: Սույն վկայության հեղինակն է ՍԴՀԿ նշանավոր գործիչ Սմբատ Բյուրատի որդին՝ Վաղինակը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 7, գ. 2, թ. 106:

Կատաղի և երկարատև մարտերից հետո զգալի կորուստներ կրած հակառակորդի սպաները որոշում են դադարեցնել հարձակումը և վերսկսել օգոստոսի 20-ին: Դա հնարավորություն տվեց սուետիահայերին վերախմբավորել ուժերը, օգտագործել մթությունը և անակնկալ գրոհել: Հայերի հանդուգն ձեռնարկն ավարտվեց հաջողությամբ: Թշնամին չդիմանալով, փախուստի դիմեց: Մարտադաշտից հայերը հավաքեցին «Մաուզեր» սիստեմի յոթ հրացան և 2500 պահունակ փամփուշտ[1]:

Օգոստոսի 19-ին Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեկսոնը հաղորդում է, որ Սուետիայի հայերն արդյունավետ դիմադրություն են ցույց տալիս թուրքերին[2]: Իսկ Հալեպի գերմանական հյուպատոս Վ. Ռյոսլերը սեպտեմբերի 3-ին հաղորդում է, որ Անտիոքի երիտթուրքական իշխանությունները եռանդում միջոցների են դիմում Մուսա լեռան վրա ապաստանած հայերին պատժելու համար: Քանի որ տեղանքը դժվարամատչելի էր և զորքերը վատ էին մարզված, այդ իսկ պատճառով էական հաջողություն չի գրանցվում: Միայն առաջին օրը մղված մարտի ընթացքում թուրքերն ունենում են 30 վիրավոր[3]:

Չնայած մարտական հաջողություններին, իրադրությունը մնում էր սպառնալի: Լեռան վրա ապաստանած հայերին սպասվում էր սովամահություն: Բացի այդ, հակառակորդը լրացուցիչ ուժեր էր բերել, զորքի թվաքանակը հասցրել էր 15 հազարի[4]: Սուետիահայերի համար փրկության միակ ելքը՝ Միջերկրական ծովն էր, որտեղ պարեկություն էին կատարում բրիտանական և ֆրանսիական ռազմանավերը: Նրանց ուշադրությունը գրավելու նպատակով, հայերը պատրաստում են երկու դրոշակ: Առաջինի վրա ասեղնագործված էր մեծ կարմիր խաչ, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»: Երկու դրոշակներն ամրացվում են այնպիսի տեղերում, որպեսզի նկատելի լինեին ծովից: Անհաջողությամբ է ավարտվում մի խումբ լողորդների Ալեքսանդրետ հասնելը: Արհես-

---

[1] *Իսկենտերեան Հ.*, նշվ. աշխ., էջ 23, տե՛ս նաև Геноцид армян в Османской империи, с. 465.
[2] "Armenian Review", Spring 1984, Vol. 37, № 1, p. 116.
[3] Армянский вопрос и геноцид армян в Турции, с. 222.
[4] *Գասպարյան Ռ. Հ.*, նշվ. աշխ., էջ 136:

տավորներին հանձնարարվում է լաստեր պատրաստել՝ սպառնալից իրավիճակի դեպքում դրանցով բնակչությանը Կիպրոս տեղափոխելու համար:

Սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հածանավն անսպասելիորեն հայտնվում է Մուսա լեռան ափամերձ ջրերում: Նկատելով հայերի ազդանշանները, 2-րդ կարգի կապիտան Բրիսոնը հրամայում է կապ հաստատել նրանց հետ: Ռազմանավ բարձրացած Խաչեր Տումանյանը նավապետից օգնություն է խնդրում: Բրիսոնն առաջարկում է սպասել ութ օր, որպեսզի ինքը կարողանա կապվել հրամանատարության հետ և հայերին հայտնել որոշումը :

Նավապետը տեղեկանալով, որ Քեպուսիեում գտնվում են թուրքական զորամասեր և զինապահեստ, հրետանակոծության է ենթարկում դրանք: Ֆրանսիական հածանավի անսպասելի հայտնվելը հարկադրում է թուրքական հրամանատարությանը շտապ գործողությունների դիմել: Նրանց մտահոգում է, որ Միջերկրական ծովի ափամերձ շրջանում Անտանտը կարող է հենակետ ձեռք բերել, ուստի թուրքերը վճռում են վերջնականապես հաշվեհարդար տեսնել հայերի հետ:

Սեպտեմբերի 7-ին հակառակորդը ձեռնարկում է լայնածավալ և հուժկու հարձակում, որը շարունակվում է մինչև երեկո: Սակայն, թուրքերը ոչ մի արդյունքի չեն հասնում: Այդ մարտի ժամանակ սուետիահայերը, «երգելով ու իրար հետ կատակելով մարտնչում էին կատաղած թշնամու դեմ»[1]:

Սեպտեմբերի 10-ին հասնում է բաղձալի օգնությունը: Անտանտի ռազմանավերը կրկին հրետանակոծության են ենթարկում հակառակորդի դիրքերը: Դրանից օգտվելով, Ե. Յաղուբյանի հրամանատարությամբ մի խումբ մարտիկներ, հարձակվում և ջախջախում են թուրքական մի զորաջոկատ:

Տ. Անդրեասյանը հանդիպում է փոխծովակալ Դարտրինգ դյու Ֆուրնեի հետ: Վերջինս, «չունենալով իր կառավարության համաձայնությունը, ստացած լինելով անգլիացիների մերժումը՝ մուսալեռ-

[1] *Սահակյան Ռ. Գ.*, նշվ. աշխ., էջ 185:

ցիներին Կիպրոս տեղափոխելու»[1], սեպտեմբերի 12-ից սկսում է հայերի տարահանումը: Այդ աշխատանքները ղեկավարում է «Դեզե» հածանավի հայազգի սպա Տիգրան Թեքեյանը:

Երկու օրվա ընթացքում կանայք, երեխաները և ծերունիները տեղափոխվում են նավերը: Տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով յուրայինների անվտանգ տարհանումը: Ընդհանուր առմամբ փրկվում են 4058 սուետիահայեր, որոնք տեղափոխվում են Եգիպտոսի Պորտ-Սաիդ քաղաքը[2]:

***Ֆընտըճագի ինքնապաշտպանությունը:*** Ֆընտըճագ հայկական գյուղը գտնվում էր Տավշան լեռան ստորոտին, Բազարճըգ կոչված հովտում, Մարաշից մոտ 23 կմ հարավ-արևմուտք: Գյուղը բաղկացած էր 550 տնից, ուներ 3 հազար բնակիչ, որոնցից 2200 հայ[3]: Ֆընտըճագն իր անառիկ դիրքի համար կոչվում էր նաև Փոքր Զեյթուն: Այստեղ էին գտնվում 22 զեյթունցի՝ Նշան Նորաշխարհյանի և Փանոս Հաճընյանի գլխավորությամբ:

Ֆընտըճագի վրա առաջին հարձակումը տեղի է ունենում հուլիսի 6-ին: Հայերը ջախջախում են ոստիկանական ջոկատը, որը նահանջում է, մարտադաշտում թողնելով 30 հրացան և զգալի քանակությամբ փամփուշտ[4]: Այդ ընդհարումից հետո Ֆընտըճագ են տեղափոխվում հայկական երկու գյուղերի՝ Տերե-Քեօյի (850 բնակիչ) և Քիշիֆլիի (450 բնակիչ) հայությունը:

Ֆընտըճագի պաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվում է ինքնապաշտպանական մարմին, որի անդամներն էին Մինաս և Խաչիկ Գալայճյանները, Վարդավար Քեահեեյանը, Հովսեփ և Նազարեթ Գոճանյանները: Մշակվում է գործողությունների հետագա ծրա-

---

[1] *Գասպարյան Ռ. Հ.,* նշվ. աշխ., էջ 138: ***Nassibian A.,*** op. cit., p. 92–93.

[2] ***Bryce J.,*** op. cit., p. 521; ***Lepsius Joh.,*** Deutschland und Armenien, S. 467. Հայ բնակչության ինքնապաշտպանությունն իր արտացոլումն է գտել ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գեղարվեստական բարձրարժեք վեպում:

[3] Ֆընտըճագ, Մոնթեվիդեո, 1949, էջ 14, 23:

[4] ***Ադամեան Դ. Մ.,*** Կիլիկիեան դրուագներ, ֆընտըճագի հերոսամարտը (Յուշատետրես քանի մը էջ), Փարիզ, 1921, էջ 16: Հ. Երամյանը Պորտ-Սաիդից ուղարկած թղթակցությունում հայտնում է, որ մուսալեռցի 1200 երեխաներ հաճախելու են հիմնված «Սիսուան» վարժարանը, որի տեսչի պաշտոնը վստահվել է իրեն, տե՛ս «Վան-Տոսպ», N 19, 3 ապրիլի 1916:

գիր: Առաջին հերթին ոչնչացվում է հարևան թուրքաբնակ գյուղերի ռազմական հենակետերը: Մարտական ուժերը բաժանվում են երեք մասի: Առաջինը մնում է գյուղում, երկրորդը պետք է հսկեր Ֆընտըճագի մատույցները, իսկ երրորդը փորձելու էր անցնել Մարաշ: Վերջին մտադրությունը չի հաջողվում իրականացնել ուժերի անբավարարության պատճառով: Անզեն բնակչությանը հանձնարարվում է կառուցել պաշտպանական ամրություններ և փորել խրամատներ: Չի հաջողվում կապ հաստատել Մարաշի հնչակյանների հետ:

Հուլիսի 31-ին տեղեկություն է ստացվում, որ Կալիպ բեյը, մոտ երեք հազարանոց զորքով շարժվում է Ֆընտըճագ:

Կռվից առաջ պատարագ է մատուցվում, որից հետո համագյուղացիներին է դիմում ուսուցիչ Խաչիկ Գալայճյանը. « ...հայ ազգը դարեր ի վեր ամեն օր կը փճանար, բայց այս անգամ անոր գոյութեան սպառնացող վտանգը շատ ավել մեծ է, և մենք՝ այս մարտիրոս ցեղի զավակներս, ուխտած ենք կռվել և մեռնել հոս, մեր հայրենի բունի մեջ: ...ինքնապաշտպանութեան պիտի դիմենք, մենակ ենք և մեզ օգնութեան գալիք ոչ մի հայ մնացեր է: Հայրենիքի անշեջ սերը և ազատութեան վեհ ու ևվիրական գաղափարն է, որ մեզ կը հարկադրե մղել վաղվա օրհասական պայքարը, ճակատամարտը»[1]: Մարտիկները վերջին հրաժեշտն են տալիս մերձավորներին և հարազատներին, գրավում մարտական դիրքերը:

Ֆընտըճագը բաժանվում է վեց պաշտպանական շրջանների: Հարավարևմտյան դիրքերը զբաղեցնում են տերեքեօյցիները՝ Հովհաննես Տեր-Վարդանյանի և Եսայի Քեհյանի գլխավորությամբ: Ֆընտըճագցիները և զեյթունցիների մի մասը դիրքավորվում են գյուղի հարավային կողմում: Զեյթունցիների մի խումբ՝ Փանոս Չագրյանի հրամանատարությամբ ամրանում է դպրոցում և եկեղեցու մատույցներում, իսկ Մեսրոպ Չոլագյանի խումբը՝ նրանց միջև: Օսմանյան կանոնավոր բանակի զորամասերին և թուրքական անկանոն ստորաբաժանումներին դիմգրավում էին 500 հայ մարտիկ, զինված 250 հրացանով և այլ զենքերով[2]:

---

[1] Ֆընտըճագ, էջ 53:

[2] *Գասպարյան Ռ. Հ.*, նշվ. աշխ., էջ 142: *Նորաշխարհյան Լ.*, նշվ. աշխ., էջ 64: *Պողոսյան Հ. Մ.*, Ֆընտըճագի 1915 թվականի ինքնապաշտպանական կռիվնե-

Ինքնապաշտպանական կռիվներն սկսվում են հուլիսի 31-ին (ըստ Լ. Նորաշխարհյանի՝ հուլիսի 26-ին): Հիմնական մարտական գործողությունները ծավալվում են օգոստոսի 1-ից: Հակառակորդը հարձակվում է երկու ուղղությամբ՝ արևմտյան և հարավային: Թուրքական հրետանին անընդմեջ ռմբակոծում է հայկական դիրքերը: Մարտի ընթացքում կանայք և երեխաները յուրայիններին մատակարարում էին զինամթերք և ջուր:

Ֆընտըճագի ինքնապաշտպանության կարևոր տեղամասերից էր Չեշիր-տօր կամ Չարշը-տար լեռան գագաթի վրա գտնվող դիրքը: Այստեղ ամրացել էր 35 մարտիկ՝ Խ. Գալայճյանի հրամանատարությամբ: Գիտակցելով այդ դիրքի նշանակությունը, հակառակորդը հրետանու և գնդացիրների ողջ կրակն ուղղում է նրա վրա: Հայ մարտիկները յոթ ժամ դիմագրավում են, սակայն զգալի կորուստները նրանց ստիպում են նահանջել:

Օսմանյան զորքը զարգացնելով հաջողությունը, կարողանում է ինքնապաշտպաններին մեկը մյուսի ետևից դուրս մղել դիրքերից: Մարտիկները և բնակչությունը ամրանում են եկեղեցում և հարակից տներում: Զինելով բնակչությանը կացիններով, դանակներով և նույնիսկ քարերով, փորձ է արվում ճեղքել օղակումը, սակայն՝ ապարդյուն: Զինվորները և անկանոն ջոկատները ոչ միայն ետ են մղում հայերին, այլև սկսում են բնակչության կոտորածը: Սպանդը դադարեցվում է միայն Կալիպ բեյի հրամանով[1]:

Ջարդարարներին դիմադրություն են ցույց տալիս դպրոցում և եկեղեցում ամրացած զեյթունցիները: Նրանք ծանր կորուստներ են պատճառում հակառակորդին: Թուրքերը չցանկանալով նոր զոհեր տալ, հրդեհում են շինությունները: Հայ քաջորդիները կրակի բոցերում կնքում են իրենց մահկանացուն: Ի վերջո օգոստոսի 2-ին ավարտվում է Ֆընտըճագի ինքնապաշտպանությունը: 91 երիտասարդներ գնդակահարվեցին, 100-ից ավելի տղամարդիկ տարվեցին Մարաշ, ուր ողջ-ողջ այրվեցին: Հայերի կորուստը կազմում է 2050 հոգի: Մի խումբ զեյթունցիներ Արամ Չոլագյանի գլխավորությամբ

---

րը, Սովետական մանկավարժ, 1988, N 6, էջ 38: *Պալեան Ն.,* Ֆընտըճագի հերոսական դիմադրութիւնը, Հայրենիք, 1938, մայիս, էջ 72:

[1] Ֆընտըճագ, էջ 64:

ծեղքում են շրջապատումը և հեռանում Ամանոսի լեռները[1]: Ողջ մնացած բնակչությունը աքսորվեց: 1918 թ. վերջերին միայն 674 հոգի, հիմնականում կանայք և երեխաներ, վերադարձան Ֆընտըճագ[2]:

Նոյեմբերի 8-ին Գերմանիայի ռայխսկանցլեր Բ. Հոլվեգին ուղղված զեկուցագրում Հալեպի գերմանական հյուպատոս Վ. Ռոսլերը հայտնում է, որ Ֆընտըճագի հայության դիմադրության հիմնական պատճառը իշխանությունների դաժանություններն էին[3]:

*Ուրֆայի հայության գոյամարտը:* Երիտթուրք ջարդարարների դեմ հերոսական ինքնապաշտպանության է դիմում Ուրֆա քաղաքի հայկական թաղամասի բնակչությունը: Քաղաքի 100 հազար բնակչից 35 հազարը հայեր էին[4]:

Սեպտեմբերի 29-ի առավոտյան թուրքական ոստիկանության հետ ընդհարումն առիթ է դառնում սկսելու Ուրֆայի հերոսամարտը: Հայերին ի զեն կոչելով ղողանջում են հայ առաքելական եկեղեցու զանգերը[5]:

Թաղամասն արագորեն պատվում է բարիկադներով: Տներն ու պատուհանները փակվում են, պատերում հրակնատներ են բացվում[6]: Քաղաքամասը բաժանվում է վեց պաշտպանական շրջաններիի՝ 32 դիրքով. փակվում են թաղամաս տանող 12 փողոցների մուտքերը[7]:

Ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվում է Զինվորական խորհուրդ, որի մեջ մտնում են Մկրտիչ Յոթնեղբայրյանը, Հարություն Ռասթկելենյանը, Հովհաննես Իմիրզյանը, Լևոն Էղբերլերյանը, Արմենակ Աթթարյանը, Հարություն Սիմյանը և Խորեն Քյուփելյանը: Խորհրդի ղեկավար է ընտրվում Մ. Յոթնեղբայրյանը՝ Ուրֆայի ինքնապաշտպանության ոգին, ինչպես

---

[1] *Գասպարյան Ռ. Հ.,* նշվ. աշխ., էջ 143:
[2] *Ադամեան Դ. Մ.,* նշվ. աշխ., էջ 34-37:
[3] Геноцид армян: Официальные документы из германских архивов, с. 261.
[4] ՀԱԱ, ֆ. 314, ց. 8, գ. 4, թ. 4: Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 578:
[5] *Glockler H. W.,* op. cit., p. 39.
[6] Армянский вопрос и геноцид армян в Турции, с. 254.
[7] *Sick I. M.,* Karren Jeppe im Kampf um cin Volk in Not, Stuttgart, 1929, S. 134; Սահակյան Ա., Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պեյրութ, 1955, էջ 917:

նրան է բնութագրել միսիոներ Յ. Քյունցլերը[1]: Կազմակերպվում է պարենամթերքի հայթայթման ծառայություն, զենքի վերանորոգման և զինամթերքի պատրաստման արհեստանոց և բուժօգնություն: Տարիքավորներին հանձնարարվում է հետևել թաղամասի ներքին կարգ ու կանոնին:

Ինքնապաշտպանների թիվը, ըստ գերմանական հյուպատոսական աղբյուրի կազմել է 2 հազար, ըստ մեկ այլ աղբյուրի՝ 800 հոգի[2]: Նրանց զգալի մասը պատանիներ և աղջիկներ էին:

Մ. Յոթնեղբայրյանի և զինակիցների եռանդուն գործունեության շնորհիվ ուրֆացիներն ապահովված էին բավարար քանակությամբ զենք և զինամթերքով: Մ. Յոթնեղբայրյանը, որ նախքան պատերազմը Ուրֆայի ՀՅԴ զինական հարցերի պատասխանատուն էր, իր ընկերների հետ Հալեպի օսմանյան զորանոցից հափշտակել էին 103 հրացան[3]:

Ինքնապաշտպանության համար բացառիկ նշանակություն ուներ այն, որ հայկական թաղամասն ավելի բարձր դիրք ուներ թուրքականից: Գրեթե յուրաքանչյուր տուն ուներ ջրհոր: Այս ամենը, ինչպես նշում է Յ. Քյունցլերը, հայերին հնարավորություն էր տալիս երկար ժամանակ դիմագրավել թուրքերին[4]:

Մինչև կանոնավոր բանակի գալը, տեղական իշխանությունները ոտքի են հանում շրջակայքի թուրք և քուրդ բնակչությանը, որը թալանի ակնկալիքով պատրաստակամությամբ արձագանքում է:

Հոկտեմբերի 1-ին ամբոխն անցնում է հարձակման: Ուրֆացիները կեղծ նահանջ են կատարում, թշնամուն հնարավորություն տալով մտնել թաղամաս, ապա անսպասելի գրոհով՝ ջախջախում: Նույն գործողությունը կրկնվում է հոկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը և կրկին խառնամբոխը ծանր կորուստներով փախուստի է դիմում:

---

[1] *Սահակեան Ա.,* նշվ. աշխ., էջ 823: *Künzler J.,* Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges, Potsdam, 1921, S. 46.

[2] *Lepsius Joh.,* Deutschland und Armenien, S. 177; *Степанян Ст.,* указ. соч., с. 131; Германские источники о геноциде армян, с. 226 Армянский вопрос и геноцид армян в Турции, с. 254.

[3] *Հիսայեան Հ.,* Դիւցազնական հայորդին, Մկրտիչ Յոթնեղբայրեան, Աթենք, 1937, էջ 79:

[4] *Künzler J.,* Dreißig Jahre Dienst am Orient, s. 64.

Մարտերին մասնակցում են նաև կանայք և աղջիկները, որոնցից առավել աչքի ընկածներին՝ Խանում Քեթենճյանին և Մարիամ Չիլինկիրյանին, հանձնվում են ռազմավարային զենքեր: Հետագայում կանանցից և աղջիկներից կազմվում է մարտական ջոկատ, թվով 200 հոգի[1]:

Ինքնապաշտպաններին հայտնի է դառնում, որ Հալեպից Ուրֆա է բերվում զորք և հրետանի: Զինվորական խորհուրդը որոշում է հանդուգն հարձակումով փորձել վնասել թնդանոթները: Այդ մարտական առաջադրանքը հանձնարարվում է Սարգիս Յոթնեղբայրյանին և մի խումբ մարտիկների: Նրանք դարանակալում են Ուրֆա մտնող ճանապարհի մոտ: Հրետանու մոտենալու պահին, հայերն անվրեպ կրակոցներով ոչնչացնում են հսկող զինվորներին, իսկ Ս. Յոթնեղբայրյանը և Գևորգ Ալահայտոյանը քանդում են թնդանոթներից մեկի փակաղակը: Նույնը չի հաջողվում կատարել մյուս թնդանոթի հետ: Հակառակորդի բացած կրակը հարկադրում է հայերին նահանջել:

Ուրֆայի հայության դեմ կենտրոնացվեց մոտ 11 հազար հոգի, որից 6 հազարը՝ կանոնավոր բանակ և չորս թնդանոթ: Այդ ուժերը գլխավորում էր Հալեպի ռազմական պարետ Ֆահրի փաշան և նրա տեղակալ, գերմանացի գնդապետ Վոլֆսկեհլ ֆոն Ռայխենբերգը: Ֆահրի փաշան այդ տարածաշրջանում Ջեմալ փաշայից հետո համարվում էր երկրորդ բարձրաստիճան սպան[2]:

Հոկտեմբերի 7-ին թուրքական հրամանատարությունն հայերին առաջարկում է հանձնվել, սակայն Զինվորական խորհուրդը մերժում է: Դրանից հետո սկսվում է հայկական թաղամասի ուժգին և անընդմեջ հրետանակոծությունը, որին հետևում հակառակորդի լայնածավալ հարձակումը: Ինքնապաշտպանները հաջողությամբ հետ են մղում թուրքական հետևակի և քրդական անկանոն ջոկատների

---

[1] ՀԱԱ, ֆ. 314, ց. 8, գ. 4, թ. 5:

[2] ***Bryce J.,*** op. cit., p. 532; "Armenian Review", Spring 1984, vol. 37, № 1, p. 134; ***Lepsiusu Joh.***, Deutschland und Armenien, S. 177–178; The Armenian Genocide, s. 255; ***Nogales R. de,*** Four Years Beneath the Crescent, p. 153; ***Künzler J.,*** Im Lande des Blutes und der Tränen, s. 42; Германские источники о геноциде армян, с. 318.

գրոհը: Անհաջողությամբ է ավարտվում նաև հոկտեմբերի 8-ի լայնածավալ հարձակումը:

Հոկտեմբերի 9-ի հարձակման ժամանակ հակառակորդին հաջողվում է գրավել Թըլֆըտուր կոչվող բլուրը, որը գերիշխող դիրք ուներ հայկական թաղամասի վրա: Թշնամին այժմ հնարավորություն ուներ հրետանային կրակի տակ պահել հայկական թաղամասի ցանկացած կետ:

Ծանր կորուստները հարկադրում են Ֆահրի փաշային կրկին դիմել բանակցությունների: Նա խոստանում է կյանքի և գույքի ապահովություն: Սակայն, ինքնապաշտպանները մերժում են: Յ. Քյունցլերի վկայությամբ, անձնատուր լինելու դեմ էին հատկապես կանայք և աղջիկները: Նրանք գերադասում էին «ավելի շուտ կռվելով զոհվել, քան կորցնել պատիվը և սովից մեռնել»[1]:

Թաղամասը պաշարող զորքերի թվում էին օսմանահպատակ, ազգությամբ արաբ զինվորներ: Նրանք դժկամությամբ էին մասնակցում, հաճախ խուսափում էին իրեն համար տհաճ և անցանկալի կռիվներից, ուստի կարճ ժամանակ անց նրանց փոխարինեցին ռազմաճակատից բերված թուրք զինվորներով[2]:

Աստիճանաբար թշնամին սեղմում է պաշարման օղակումը և գրավում հայկական մի քանի դիրքեր: Զգացնել է տալիս հակառակորդի թվային և կրակային գերազանցությունը: Այնուամենայնիվ, թուրքերն ու քրդերը շարունակում էին ծանր կորուստներ կրել: Ցանկացած առաջխաղացում նրանց տրվում էր զգալի զոհերի գնով:

Հոկտեմբերի 20-ին հայերը շարունակում են դիմագրավել ամեն կողմից հարձակվող թուրք-քրդական ուժերին: Ի վերջո, ինքնապաշտպանները հարկադրված են լինում տեղի տալ: Հոկտեմբերի 23-ին ավարտվում է Ուրֆայի 25-օրյա հերոսական մաքառումը: Թաքնվելով տների նկուղներում, փլատակներում և թաքստոցներում՝ ուրֆացիները դիմադրում են մինչև նոյեմբերի կեսերը:

Զգալի թվով հայեր թաքնվել էին հրետանակոծությունից քանդված տների փլատակներում և տարբեր թաքստոցներում: Միսիոնե-

---

[1] ***Künzler J.,*** Dreißig Jahre Dienst am Orient, s. 60.
[2] ***Glockler H. W.,*** Interned in Turkey 1914–1918, Lebanon, 1969, p. 44–45.

րուհի Կարեն Եպպեն իր տան գաղտնի թաքստոցում, իսկ Յ. Քյուսցլերը գերմանական հիվանդանոցում ապաստան էին տվել ուրֆացիների: Տեղեկանալով այս մասին, թուրքական հրամանատարությունը և հատկապես Ուրֆայի ոստիկանապետ Շաքիր բեյը հրամայում է խուզարկել հայկական թաղամասը և հատկապես Կ. Եպպեի տունը: Թուրքերին հաջողվում է գտնել թաքնվածների մի մասին[1]:

Ներխուժելով հայկական թաղամաս, թուրքերն ու քրդերը անգթաբար սպանում են ողջ մնացած բնակիչների մի մասին: 300-ից ավելի տղամարդկանց և կանանց քարափից ցած են նետում, 42 հոգու կախաղան են բարձրացնում: Ինքնապաշտպանության գործուն մասնակիցներից մեկին՝ հայ բողոքականների պաստոր Սողոմոն Աքելյանին կախելիս պարանը կտրվում է: Արիասիրտ մարդը հեգնանքով ասում է. «Ո՛վ թուրքեր, ձեզի պես ձեր չվանն ալ փտած է, ավելի ամուրը բերեք»[2]:

Երբ կախում էին վիրավոր Սարգիս Յոթնեղբայրյանին, Ֆահրի փաշայի այն հարցին, թե նա ինչ կաներ, եթե ազատ արձակվեր, Սարգիսը պատասխանում է. «Առաջին հերթին քեզ կսատկացնեմ»[3]:

## ե) Ինքնապաշտպանական մարտերը Տրապիզոնի նահանգում

Տրապիզոնի և նահանգի ողջ մնացած բնակչությունը, գտնվելով բարոյահոգեբանական ծանր վիճակում, այնուամենայնիվ, իր մեջ ուժ է գտնում վրեժխնդիր լինել ջարդարարներից և փրկել թուրքերի տներում բռնի պահվող հայ կանանց, աղջիկներին և երեխաներին: Կազմվում է 40 հոգուց բաղկացած խումբ, որը հարձակումներ է գործում հակառակորդի վրա: 12-ից 15 տարեկան ութ պատանիներ

---

[1] *Չոլաքեան Յ.,* Քարէն Եփփէ. Հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալէպ, 2001, էջ 26–27:
[2] *Ուռհայեցի Գ. Ա.,* Ուրֆայի հերոսամարտը, Հայրենիք, 1926 դեկտեմբեր, էջ 106:
[3] Նույն տեղում, էջ 101:

ևս կազմել էին իրենց մարտախումբը, որը շարունակաբար հարձակվում էր հակառակորդի վրա[1]:

1915 թ. հունիսին մի խումբ երիտասարդների պաշտպանության ներքո կոտորածներից փրկված 200-ից ավելի բնակչությունը բարձրանում է Եոմուրայի մոտ գտնվող Ուզդաղի լեռը: Հունիսի 18-ին նրանցից մի քանի հոգի գալիս են Տերեպաշի գյուղը, հավանաբար ուտելիք հայթայթելու համար, ընկնում են թուրք ժանդարմների կողմից կազմակերպած դարանը: Սկսվում է փոխհրաձգություն, որի ժամանակ հայերը որևէ կորուստ չեն կրում: Նրանց հաջողվում է մարտի ժամանակ սպանել երկու ժանդարմի և նահանջել:

Տեղեկանալով Ուզդաղի լեռան ապաստանած հայերի մասին, իշխանություններն այնտեղ են ուղարկում ժանդարմական մեկ վաշտ: Հունիսի 19-ին տեղի է ունենում առաջին ընդհարումը: Հայկական կողմը ունենում է երեք, իսկ ժանդարմները 60 սպանված և վիրավոր: Սակայն ուժերն անհավասար էին: Որոշվում է մթության քողի ներքո հեռանալ լեռից և ցրվել տարբեր ուղղություններով[2]: Դա, հավանաբար արվում է, որպեսզի շփոթմունքի մեջ գցի ժանդարմներին և հնարավորություն տա մարդկանց փրկվել:

Տրապիզոնի հայերը նույնիսկ կարողանում են աջակցել ռուսական հրամանատարությանը թուրքական զորքերի դեմ մղվող մարտական գործողություններում: Նրանք, լինելով տեղացիներ, լավ գիտեին նահանգը և հաճախ կատարում էին հետախուզական բնույթի առաջադրանքներ:

1915 թ. դեկտեմբերին ռուսական Պրիմորսկյան ջոկատի (Կովկասյան 1-ին բանակային կորպուս) գեներալ Վլադիմիր Լյախովը հանձնարարում է մի խումբ հայերի անցնել Տրապիզոն և հետախուզական տեղեկություններ հավաքել հակառակորդի զինուժի, սպառազինության և այլնի մասին[3]:

---

[1] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 225, թ. 8:

[2] ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 34, թ. 3 և շրջ.: *Սարգսյան Հասմիկ,* Տրապիզոնի նահանգի հայության ինքնապաշտպանության պատմությունից, «Ջայն համշենական», Երևան, 2012, N 1–2:

[3] *Թորլաքեան Մ.,* Օրերուս հետ, Բ հրատարակութիւն, Պէյրութ, 1963, էջ 212:

Սամսունի կոտորածներից փրկված վաթսուն հայեր Տեր Խորեն քահանայի և Աբրահամ Խաչատրյանի գլխավորությամբ ապաստանելով լեռներում մարտեր էին մղում թուրքական կանոնավոր ստորաբաժանումների դեմ: Տեղեկանալով Տրապիզոնի գրավման մասին, նրանք կարողանում են կապ հաստատել ռուսական հրամանատարության հետ: Ռուսները նրանց տալիս են 120 միավոր զենք և 92 ռռնակ: Օսմանյան հրամանատարությունը տեղեկանալով հայերի ստացած զենքի և զինամթերքի մասին, նրանց դեմ է ուղարկում 700 զինվորից կազմված ջոկատ: Հակառակորդը հայերին առաջարկվում է հանձնվել, խոստանալով խնայել նրանց, սակայն մերժում ստանալուց հետո, անցնում է հարձակման: Հայերն իրենց ուժերը բաժանում են երեք մասի և կազմակերպում են պաշտպանություն: Աջ պաշտպանական տեղամասի հրամանատարն էր Ջիլ Հովհաննեսը, կենտրոնականինը՝ Միքայել Զեյթունյանը, իսկ ձախինը՝ Խաչիկ Կարակեոզյանը: Հայերի կազմակերպված դիմադրությունը հարկադում է թուրքերին նահանջել[1]:

Պրիմորսկյան ջոկատի հրամանատարությունը նախաձեռնում է հակառակորդի կուտակած պարենի պաշարների ոչնչացումը: Տեղեկանալով, որ Թերմե գյուղի պահեստներում և համանուն գետի գետաբերանում գտնվող առագաստանավերում կա զգալի քանակությամբ ցորեն, ռուսները որոշում են դրանք ոչնչացնել: Մի խումբ տրապիզոնաբնակ հայ հետախույզներ ափ են հանվում Թերմեի գետաբերանում: Նրանք պարզում են, որ գետում կան 50-ից ավելի առագաստանավ բեռնված ցորենով: Բացի այդ, Թերմե գյուղում կային ցորենի խոշոր պաշարներ: Նշված ցորենը նախապատրաստվում էր ուղարկել գործող բանակ: 1916 թ. հոկտեմբերի 20-ին ռուսական երեք ականակիր և մեկ բեռնանավ մոտենալով Թերմեի գետաբերանին ափ են իջեցնում 40 աշխարհազորային և տեղացի 150 հայ կամավորի: Նրանց են միանում նաև հայ հետախույզները: Թերմե գյուղը գրոհում են նաև հայկական ուժերը: Նրանք առաջին հերթին կտրում են հեռագրաթելերը և հեռախոսաթելերը: Գրոհի ազդանա-

[1] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 225, թ. 12–13:

շանը լինում է նրանց կողմից պարզված դրոշակներ: Դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումը կարողանում է կոտրել հակառակորդի պաշտպանությունը և ոչնչացնել Թերմե գյուղի հացահատիկի պահեստները և նույնիսկ ցորենով բեռնված 20 առագաստանավ, բերել Տրապիզոն[1]:

Միսակ Թոռլաքյանի ուժերի հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմի բեյը 2500 զինվորից և ժանդարմներից կազմված ուժ է ուղարկում: Հակառակորդը հարձակվում է երկու ուղղությամբ՝ Շանա և Տրապիզոնից հարավ-արևմուտք գտնվող մյուս խմբի վրա: Վերջիններս երեքօրյա մարտերից հետո մոտ 30 սպանված տալով նահանջում են: Ազատված ուժերը հակառակորդն ուղղում է Մ. Թոռլաքյանի ջոկատի վրա: Հայ մարտիկները դիրքեր են գրավում Գալաֆկա սարի վրա[2]: Հակառակորդը չկարողանալով հաջողության հասնել, փորձում է հայերին վախեցնել մարտական ինքնաթիռի գրոհով: Վերջինս, հավանաբար, անսարքության կամ օդաչուի անփորձության պատճառով վթարի է ենթարկվում և ընկնում ծովը[3]:

Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը, հակառակորդը հրդեհում է անտառը, հուսալով կրակի բոցերի մեջ ոչնչացնել նրանց: Մարտիկները կարողանում են գրեթե առանց կորստի դուրս գալ և փրկել իրենց հետ եղող աղջիկներին: Մ. Թոռլաքյանը վերհիշում է. «Խումբը մութին մէջ կամաց-կամաց անտառէն կ'ելլէ, ամէն մէկ հայ աղջիկ մը իր կողքին, որպէսզի նեղ պարագային գնդակահար ընէ: Բարեբախտաբար անվնաս դուրս կուգան ու կը հասնին մեզ»[4]:

Տրապիզոնցի հայության կազմակերպած դիմադրության մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել 1915 թ. դեկտեմբերի 20-ին, Տրապիզոնի նահանգից ուղարկած նամակում: Նրանում անանուն երիտասարդը հաղորդում է տեղահանությունից փրկված

---

[1] Боевая летопись русского флота, Москва, 1948, с. 418; Флот в первой мировой войне. Том 1, Москва, 1964, с. 483; История первой мировой войны. 1914—1918, в двух томах, том 2, Москва, 1975, с. 278. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ֆ. 1, g. 1, գ. 225, թ. 14:

[2] *Թոռլաքեան Միսաք,* նշվ. աշխ., էջ 241–242:

[3] Նույն տեղում, էջ 248:

[4] Նույն տեղում, էջ 250:

հայերի կազմակերպած դիմադրության մասին: Շանայի շրջանում մոտ 300-ից 500 հայեր, որոնց զգալի մասը կանայք ու աղջիկներ էին, ապաստանում են շրջակա անտառներում: Տեղեկանալով այդ մասին, իշխանությունները քաղաքացիական բնակչության դեմ ուղարկում են ժանդարմական ստորաբաժանում: Հայերը կազմակերպված դիմադրություն են ցույց տալիս: Ժանդարմները, չնայած կորուստներին, շարունակում են համառորեն գրոհել, սակայն նրանց բոլոր հարձակումները ետ մղվում: Հայերի մոտ զգացվում է ռազմամթերքի պակաս: Ինչպես նշում է նամակագիրը, «15–20 հոգին կարգին զենք ունին, մնացածները անզէն են, արդէն գրեթէ բոլորը գիւղացիներ են ու խեղճուկրակ»[1]:

Անհայտ նամակագիրը նշում է իրենց օգնող վրացու և հույների մասին: Հայերն օգնության խնդրանքով դիմում են նահանգում բնակվող մի քանի եվրոպացիներին, որոնք միայն մի փոքր գումար են ուղարկում: Դրամը հնարավորություն կտար կանանց ու երեխաներին տեղավորել հունական գյուղերում: Բանն այն է, որ «վերջերս գիւղացիք շատ կը դժուարանան, որովհետեւ հոդ բաւական տնտեսական տագնապ գոյութիւն ունի. ամէն ոք ինքզինքը կը հոգայ»[2]:

Անտառում թաքնվում են մոտ 100 հոգի: Նրանցից տասը չդիմանալով զրկանքներին, վերադառնում են Տրապիզոն և կրոնափոխ լինում[3]:

Ըստ որոշ տեղեկությունների, Տրապիզոնի նահանգում դիմադրական կռիվները շարունակվում են ընդհուպ մինչև 1918 թ. զինադադարը, ապա նաև քեմալական շարժման տարիներին:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ շրջաններում հայ բնակչությունը ենթարկվեց զանգվածային բռնագաղթի և կոտորածների: Հայերի ցեղասպանությունը պայմանավորված էր օսմանյան իշխանությունների ագրեսիվ ազգայնականությամբ, որն իր արտահայտությունն էր գտնում պանիսլամիզմի, օսմանիզմի և պանթուրքիզմի

[1] http://arfarchives.org/?p=412
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

քաղաքականության մեջ. պակաս նշանակություն չունեին թուրքական բուրժուազիայի զավթողական ձգտումները: Այդ առումով Հայաստանը, որը յուրովի կամուրջ էր Արևելքի և Արևմուտքի միջև, անհաղթահարելի խոչընդոտ էր երիտթուրքերի առաջխաղացման ճանապարհին դեպի իրենց երազած հայրենիքը՝ «Թուրան»: Թուրքական կառավարության կողմից կազմակերպվեց մի ոճրագործություն, որի զոհ դարձավ կայսրության գրեթե ողջ հայ բնակչությունը, անկախ սեռից, տարիքից, մասնագիտությունից, կուսակցական և դավանական պատկանելիությունից: Հետագայում նույն բախտին արժանացան ասորի, հույն և մասամբ արաբ հպատակները:

Իրենց հանցագործությունները թաքցնելու միտումով թուրքական իշխանությունները կեղծ հայտարարություններ էին տարածում այն մասին, որ հայերը տեղափոխվում են միայն մերձռազմաճակատային շրջաններից: Իրականում բռնագաղթի էր ենթարկվում խոր թիկունքում ապրող հայ բնակչությունը ևս:

Համաշխարհային հասարակայնությունից իրենց ոճրագործությունները թաքցնելու, բռնագաղթի իրական նպատակները քողարկելու նպատակով, երիտթուրքական կառավարությունը բացատրում էր «ապստամբություն բարձրացրած գյուղերի և քաղաքների հայ բնակչության նկատմամբ հարկադրական միջոցների դիմելու անհրաժեշտությամբ»: Սինչդեռ տեղի է ունեցել ճիշտ հակառակը: Հայ բնակչության այն հատվածները, որոնք կանխազգալով մոտալուտ կոտորածները, կարողացել էին որոշ քանակությամբ զենք և զինամթերք հայթայթել և դիմում էին ինքնապաշտպանության, փորձելով պաշտպանել *իրենց հարազատներին*: Ինչպես նշում է Մ. Ներսիսյանը, 1915 թ. դիմադրական կռիվները «ունեին բացառապես ինքնապաշտպանական բնույթ և միանգամայն օրինաչափ էին, պարտադրված և անհրաժեշտ»[1]:

Հայերի ցեղասպանությունը միայն 1915–1916 թթ. չսահմանափակվեց: Թուրքական կառավարությունը հետագա տարիներին՝ 1918 թ. և 1920–1923 թթ. շարունակեց հայության զանգվածային կոտորածները: Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի

[1] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 300, թ. 26:

զանգվածային կոտորածները մարդկության դեմ կազմակերպված առաջին և ամենամեծ հանցագործությունն է՝ ցեղասպանությունը, որին զոհ գնաց ավելի քան 1,5 միլիոն մարդ:

Ցեղասպանության հետևանքով հայությունը զրկվեց իր հայրենիքի մեծ մասից: Ոչնչացվեցին կամ յուրացվեցին հայության ստեղծած պատմամշակութային հուշարձանները, քանի որ դրանք նյութական վկաներն էին այդտեղ հազարամյակներ բնակված հայ ժողովրդի: Մշակութային ցեղասպանությունը շարունակվեց նաև հետագա տասնամյակներում: Թուրքական կառավարությունն իր առջև նպատակ էր դրել Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի տարածքում ոչնչացնել հայերի ներկայությունն ապացուցող ցանկացած պատմական հուշարձան: Հայերի ցեղասպանությունն անմիջական և հեռակա հետևանքներ է ունեցել հայ ժողովրդի կենսագործունեության, հոգեկան կերպարի և ազգային բնավորության, նրա հետագա ազգային ձգտումների և նպատակների վրա: Ցեղասպանության հետևանքներից էր հայկական սփյուռքի ձևավորումը, երբ հարյուր հազարավոր հայեր ստիպված եղան բնակություն հաստատել աշխարհի տարբեր երկրներում, չունենալով գոյատևման տարրական միջոցներ և հնարավորություններ: Թուրքական կառավարությունը մեր օրերում շարունակում է հայերի ցեղասպանության ժխտման քաղաքականությունը:

# ԳԼՈՒԽ II.

## ՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1915 թ. մայիսի 7 – հուլիսի 27) ԵՎ ԳԵՆԵՐԱԼ–ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ

### ա) Վարչակազմակերպչական աշխատանքներ: Փախստականների վերադարձի, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը և բնակավայրերի վերականգնումը: Վան նահանգի բնակչության նահանջը

Ռուսական կովկասյան իշխանությունների և հրամանատարության առջև դրված էր Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքների կառավարման խնդիրը: Այն հրատապ դարձավ Վանի ազատագրումից հետո: Գեներալ Ն. Յուդենիչը փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին առաջարկում էր Վանի նահանգ գործուղել փորձառու աստիճանավորներ և ոստիկաններ՝ նվաճված տարածքում ռուսական վարչակարգ հաստատելու նպատակով: Նրա առաջարկը մերժվեց, քանի որ պատերազմի հետևանքով հնարավոր չէր գտնել անհրաժեշտ թվով ոստիկաններ և աստիճանավորներ[1]: 1915 թ. մայիսի 7-ին ռուսական հրամանատարությունը Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակում հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Այգեստանի ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանին, կամ էլ

[1] Տե՛ս *Арутюнян А. О.*, указ. соч., с. 353.

ինչպես նրան է որակել Վ. Տերոյանը՝ «Վանի հասարակական հսկան»[1]:

Արամի նշանակումը հաստատվում է IV բանակային կորպուսի, իսկ մայիսի 18-ին՝ Կովկասյան բանակի հրամանատարության կողմից[2]: Ա-Դոն նշում է. «Ռուս բանակի հրամանատարը գնահատեց հայ ժողովրդի մղած պայքարը ու տարած հաղթանակը և հրավիրեց Վասպուրականը կառավարելու համար Վանի կռիվները ղեկավարող Արամին, լիազորելով նրան կազմել հայկական ժամանակավոր կառավարություն»[3]:

Մայիսի 8-ին Արամը դիմում է Վանի և նահանգի բնակչությանը հատուկ կոչով. «Ռուս զօրքերու հրամանատարը՝ գեներալ Նիկոլաևը...բարեհաճեցաւ 7 մայիսի 1915 թ. N 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործ իւր ծիւղերով»[4]: Վասպուրականում հայկական իշխանության հիմնումը պատահական չէր: Դա արդյունք էր մի քանի սերունդների հետևողական գործունեության: Նրանք կաթիլ-կաթիլ, դարեր շարունակ, բնակչության շրջանում սերմանել էին պետականության գաղափարը: Արամի՝ նահանգապետի կամ ժամանակավոր կառավարչի պաշտոնում հաջող գործունեության հիմնական գրավականներից մեկը՝ կրթված ներուժի առկայությունն էր, որի վրա հենվելով նա կարողացավ ղեկավարել Վան քաղաքը և ազատագրված գավառներն ու գավառակները:

Հայրենասիրական գաղափարների քարոզչությանը նպաստում են Վասպուրականի նշանավոր կրթական հաստատությունները՝ Հայկազյան դպրոցը և Սանդխտյան իգական վարժարանը, Կեդրոնական վարժարանը և հռչակավոր Վարագա վանքը և այլ ուսումնական հաստատությունները: Նշված վարժարաններում կրթվել է վասպուրականցիների մի ողջ սերունդ: Նրանցից շատերը գործուն մասնակցություն են ունենում ազգային-ազատագրական շարժման

---

[1] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 93:
[2] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 44:
[3] Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի պատմության ֆոնդ, Ա-Դոյի ֆոնդ, գ. 839/195 (դ), թ. 30:
[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4:

կենտրոններ հիմնելու և ազատագրական գաղափարները տարածելու մեջ: Ուստի պատահական չէ, որ XIX դարի 70–80-ական թվականներին Վանում են հիմնվում «Միություն ի փրկություն», «Զինակիր» և «Սև խաչ» ընդհատակյա կազմակերպությունները, իսկ 1885 թ.՝ հայ իրականության մեջ առաջին ազգային կուսակցությունը՝ Արմենականը: Հետագայում Վանում և նահանգում իրենց գործունեությունն են ծավալում Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան, ապա Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունները:

Ազգային-ազատագրական գաղափարների տարածմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ զգալի թվով վանեցի երիտասարդներ ուսում էին ստացել Գևորգյան ճեմարանում: Նրանց մի մասն էլ կրթություն էր ստանում Եվրոպայի՝ Գերմանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի և այլ երկրների նշանավոր համալսարաններում: Նրանց թվում էին՝ Համազասպ Բաղեշցյանը, Արտակ Դարբինյանը, Միսակ Խոստիկյանը, Վարազդատ Տերոյանը, Արմենակ Մաքսապետյանը և ուրիշներ:

1915 թ. մայիսի 8-ին կազմակերպվում են ազատագրված գավառների և Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը և վարչությունը, կրթական և ոստիկանական տեսչությունները, քաղաքապետարանը, գավառային վարչությունը, դատարանը և այլն:

Հունիսի 23-ի, Վանից ժնև ուղարկած նամակում Ռոստոմը հետևյալն է գրում. «Սա (Վանի հայկական իշխանությունը – Ռ. Ս.) մի փորձ է, քննութիւն, թէ արդէօք հայերը ընդունակ կը լինե՞ն կառավարելու երկիրը»[1]:

Կ. Սասունու բնորոշմամբ «Հայոց ճակատագիրը գործնական կեանքի մէջ տնօրինող հաւաքական կամքը Թիֆլիսէն եւ Երեւանէն փոխադրուած էր Վան: Պատգամը Վանեն կու գար»[2]:

Իշխանության մարմիններում ընդգրկվում են բացառապես հայեր, Վանի մտավորականության լավագույն ներկայացուցիչները,

---

[1] *Ռոստոմ*, Նամականի, էջ 627:

[2] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Պէյրութ, 1966, էջ 81:

անկախ կուսակցական պատկանելությունից և սոցիալական ծագումից: Նշված մարմիններում պաշտոնավարելու համար հրավիրվում են վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող ռուսահպատակ հայեր: Ճիշտ է, վանեցիների շրջանում առկա էին կուսակցական տարաձայնությունները, սակայն առավել ծանր և պատասխանատու պահերին նրանք կարողանում էին մի կողմ դնել տարակարծությունները, միանալ և արժանի հակահարված տալ հակառակորդին: Նրանց համախմբվածությունը փայլուն կերպով դրսևորվում է 1896 թ. քաղաքի ինքնապաշտպանության ժամանակ: Փաստորեն հայ ազատագրական շարժման գործիչների ցանած սերմերը տալիս են իրենց սպասված արդյունքը: Կ. Սասունու բնորոշմամբ. «Վանը, լռելեայն, բոլորի մտքի մէջ կը դառնայ հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կայ հայ իշխանութիւն, հայ բանակ, հայ վարչական կազմ: Յենարան անորէ յաղթական ժողովուրդ մը: *Հայոց անկախութեան առաջին ճառագայթն է այս* (ընդգծումը հեղինակինն է – Ռ. Ս.)[1]:

Նահանգապետարանի առաջնահերթ խնդիրներից էր.

1. Ազատագրված գավառներում և գավառակներում կառավարման մարմինների կազմակերպումը:
2. Ռուսական հրամանատարության հետ կանոնավոր հարաբերությունների և գործունեության շրջանակների հաստատումը
3. Գաղթականների և փախստականների տեղաբաշխումն իրենց կամ լքյալ բնակավայրերում:
4. Գյուղատնտեսական աշխատանքների շտապ վերսկսումը: Հողագործներին անհրաժեշտ երկրագործական գործիքների, սերմացուի և լծկանների հայթայթումը:
5. Գյուղերը վերադարձած բնակչության կյանքի և գույքի ապահովումը:
6. Բնակչությանը տարրական բուժօգնությամբ ապահովումը:
7. Հողային և գույքային այլ սեփականության հետ կապված խնդիրների լուծումը:

[1] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 77:

8. Քրդերի և թուրքերի կողմից լքված բնակավայրերի, շարժական և անշարժ գույքի, ցանքսերի հետ կապված խնդիրների շուտափույթ լուծումը և այլն:

1915 թ. գարնանը թուրք և քուրդ հրոսակների կողմից ավերված, կողոպտված Վասպուրականն աստիճանաբար բնականոն հունի մեջ է մտնում: Արևելահայ զանազան հասարակական-բարեգործական կազմակերպությունները և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V սկսում են կազմակերպել անհրաժեշտ օգնության առաքումը Վան: Նահանգային խորհուրդը մշակում է զանազան ծրագրեր ոչ միայն նահանգի տնտեսությունը վերականգնելու, այլև զարգացնելու ուղղությամբ: Հունիսի 28-ին Վան է գալիս Սահակ արքեպիսկոպոս Այվատյանը, որին տրվել էր 25 հազար ռուբլի տեղում օգնությունը կազմակերպելու համար[1]: Նահանգային վարչությունը կազմում է 1915 թ. մայիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նահանգապետարանի բյուջեն, որը կազմում է 178340 ռուբլի[2]: Ներքին կարգ ու կանոնը պահպանելու և գավառներ վերադարձող հայ և ասորի բնակչությանը քրդերից պաշտպանելու նպատակով կազմակերպվում է ոստիկանություն: Վան քաղաքը բաժանվում է ոստիկանական հինգ տեղամասերի կամ շրջանների: Նրանցից յուրաքանչյուրում նշանակվում է շրջանապետ կամ կոմիսար[3]:

Վանի նահանգը բաժանվում է 4 գավառների և 12 գավառակների[4]: Նշանակվում են գավառապետեր, սահմանվում է պաշտոնյանե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 7 և շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 59, թ. 13:
[3] 1915 թ. ապրիլ-մայիս ամիսների ինքնապաշտպանության ժամանակ Կենտրոնական թաղի ոստիկանապետ Գր. Ջոնյանը գլխավորել է Այգեստանի ոստիկանությունը: Նրա ենթակայության ներքո կային 50 ոստիկան: Ամերիկացի միսիոների վկայությամբ «Մինչ այդ քաղաքն այդքան լավ չէր ապահովվել ոստիկանությամբ», տե՛ս *Bryce J.*, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916, London, 1916, p. 37.
[4] *Ա-Դո,* Մեծ դէպքերը Վասպուրականում, էջ 444–450, տե՛ս նաև *Ասրյան Ա.,* Արամ Մանուկյանի կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005, էջ 123–124, նույնի՝ Արամ Մանուկյանի տեղեկագիրը Վանի նահանգապետության կառավարության գործունեության մասին, ԲՀԱ, 2006, N 2, էջ 11–13, տե՛ս *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 326–328:

րի թվաքանակը: Բնակչությանը տրվում են զենք կրելու արտոնագրեր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով[1]:

Իշխանության ղեկավար մարմիններում պակասում էին վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող պաշտոնյաներ: Այս հարցում աջակցելու նպատակով, Վանի վարչակազմին օգնության են հասնում արևելահայերը: Նրանցից ոմանք ոչ միայն վարչական, այլև քաղաքական ու պետական աշխատանքի զգալի փորձ ունեին: Ռուսական Դումայի նախկին անդամ, Սիրական Տիգրանյանը դեռևս 1914 թ. աշնանը եղել էր IV բանակային կորպուսի կողմից գրավված տարածքներում հրամանատարի քաղաքացիական մասի լիազոր[2]: Նա ստանձնում է փոխնահանգապետի պաշտոնը: Պարույր Լևոնյանը որպես իրավաբան, աշխատել էր Պետրոգրադի քաղաքապետարանում, այդ ժամանակ նշանակվում է նահանգապետի օգնական[3]: Իսկ Արարատյան գնդի կամավորներից նշանակվում են գավառների և գավառակների պետերի օգնականներ (տեղակալներ) և թարգմանիչներ: ԿՀԲԸ-ը Վան է գործուղում լիազոր Աբովյանին, բժիշկներ Համազասպ Օհանջանյանին ու Քոչարյանին, նրանց հետ նաև երեք բուժակ և մեկ սանիտար[4]:

Նահանգապետության մարմիններում ընդգրկվում են հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները՝ անկախ սոցիալական ծագումից և կուսակցական պատկանելությունից:

---

[1] *Սահակյան Ռ.,* Ոստիկանական ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, ԲՀԱ, 2003, N 2, էջ 158: Նույնի՝ Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, 2006, ԲՀԱ, N 1, էջ 48–65:

[2] Տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 354.

[3] 1915 թ. հուլիսի 2-ի զեկուցագրում Ա. Մանուկյանը գեներալ Ա. Նիկոլաևին հայտնում է, որ Պ. Լևոնյանը Վանի օկրուգի (վարչության) փոխնահանգապետն է, տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14 մաս II, թ. 138: Մեկ այլ փաստաթղթում, թվագրված 1915 թ. մայիսի 6-ին, նշվում է, որ Պ. Լևոնյանը վարել է նահանգապետարանի գրասենյակի քարտուղարի պաշտոնը, տե՛ս նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 2: Իսկ ըստ Օ. Մխիթարյանի՝ եղել է նահանգապետի օգնականը, տե՛ս Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 98: Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնևհինգամեակին առթիւ. 1915–1930, Վենետիկ, Ս. Ղազար, 1930, էջ 80: ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 5. թ. 4:

[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 47:

Արամ Մանուկյանի ապակուսակցական կադրային քաղաքականության մասին վկայում են հետևյալ փաստերը. նահանգապետարանի դիվանապետ է նշանակվում սահմանադիր-ռամկավար կուսակցության անդամ Արտակ Դարբինյանը[1]: ՍԴՀԿ անդամ Հրանտ Գալիկյանին վստահվեց դատախազի պաշտոնը: Վանի ոստիկանապետ է նշանակվում ՀՅԴ անդամ Վահան Փափազյանը, իսկ նրա օգնականն (տեղակալ) էր սահմանադիր-ռամկավար Ղևոնդ Խանջյանը: Այգեստանի Զինվորական մարմնի ղեկավար, իր քաջությամբ հայտնի սահմանադիր-ռամկավար Ա. Եկարյանին վստահվում է գավառային ոստիկանության «ղեկավար կազմակերպիչ-քննիչի» պաշտոնը: Այս պաշտոնը նշանակում էր, որ նահանգային ոստիկանությունն անցնում էր Ա. Եկարյանի ենթակայության ներքո:

1915 թ. հունիսի 22-ին դատարանին, դատախազությանը, Տնտեսական մարմնին, քաղաքապետարանին, ոստիկանապետին, ընդհանուր քննիչին, Երկրագործական մարմնին, Ելմտական վարչությանն է դիմում նահանգապետության դիվանապետ Ա. Դարբինյանը, պահանջելով իրականացնել Շրջանային վարչության հրամանը՝ օսմանյան օրենքների հիման վրա կազմել իրենց մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրություն՝ թարգմանելով հայերեն: Օրենքները պետք է ունենան լրացումներ, ի նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ մի շարք օրենքներ չեղյալ են համարվել ռուսական զորքի կողմից նահանգը գրավելուց հետո[2]:

Հաշվի առնելով, որ հայ, ասորի, եզդի, ինչպես նաև քուրդ ու թուրք բնակչությունը քիչ թե շատ վարժված է օսմանյան օրենքներին և նրա վրա հիմնված դատահիրավական համակարգին, նահանգապետարանը չգնաց կտրուկ և արմատական փոփոխությունների: Նահանգի ղեկավարությունը և գլխավորապես Արամը, գիտակցում էին, որ օրենսդրության արմատական վերանայումը կարող է հանգեցնել օրենսդրական խառնաշփոթի, ուստի հրահանգվեց ժամանակավորապես առաջնորդվել օսմանյան օրենքներով, իհարկե, դրանց որոշ դրույթներ վերանայելով և հարմարեցնելով ներկա պայ-

---

[1] *Դարբինեան Ա.,* Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 331:
[2] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 57, թ. 9:

մաններին: Օրենքների նախագծերը կամ տարբերակները պետք է համապատասխան քննարկումներ և փոփոխություններ կատարելուց և ամբողջությամբ հավանություն ստանալուց հետո միայն դրվեին շրջանառության մեջ:

Գործել է Նպաստից հանձնաժողովը, որը քննել է դիմողների խնդիրները և դրանք ներկայացրել նահանգապետարանին: Վերջինիս թույլատրվել է կարիքավոր քաղաքացիներին տրամադրել է պարենային օժանդակություն: Սակայն միշտ չէ, որ հանձնաժողովը հնարավորություն ուներ օգնել կարիք ունեցողներին: Մի շարք դեպքերում էլ մերժվել է օգնության խնդրանքը, գտնելով, որ այն չի համապատասխանում իրականությանը[1]:

Վանի ոստիկանությունը դեռևս չուներ համազգեստ և որպեսզի ծառայություն կատարող ոստիկանը տարբերվեր քաղաքացուց, որոշվեց իրավապահների համար սահմանել տարբերիչ նշաններ՝ թևկապներ: Քաղաքային ոստիկանությունը կրում էր սպիտակ կտորի վրա կարմիր գույնի տառերով գրված «Ոստիկան» մակագրությամբ թևկապ: Գավառական ոստիկանները կրում էին նույն թևկապերը, սակայն "В. Д." ("Ванская Дружина") մակագրությամբ[2], ինչը արված էր ռուսական զինվորականների համար, որպեսզի նրանք կարողանան զանազանել ծառայողական պարտականությունը կատարող հայ ոստիկանին զինված քրդից: Ոստիկանների ընդհանուր թվաքանակը լինելու էր 410 հոգի[3]:

1915 թ. հունիսի 25-ին կազմվում է ոստիկանական ծառայության ներքին կանոնադրությունը: Այն բաղկացած էր յոթ բաժնից և 53 հոդվածից: Հոդված I-ը սահմանում էր. «Ոստիկանը հանրային ապահովության և խաղաղության շարունակումը ապահովող և մարդկանց կյանքը, ինչքը և պատիվը պահպանող և հանրային հանգստությունը ամբողջացնելու պարտականությամբ օժտված պաշտոնյան է»[4]: Նշված կանոնադրությունը, հավանաբար, չէր համապա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 15, թ. 3:
[2] *Ա-Դօ,* Մեծ դէպքերը Վասպուրականում, էջ 462: ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 15, թ. 18:
[3] Նույն տեղում, էջ 460:
[4] *Սահակյան Ռ.,* Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, ԲՀԱ, 2006, N 1, էջ 53:

տասխանում ստեղծված պայմաններին, ուստի նահանգապետարանը 1915 թ. հուլիսի 4-ին պաշտոնապես դիմում է ոստիկանապետի ժամանակավոր պաշտոնակատար Ղ. Խանջյանին, առաջարկելով շտապ պատրաստել և ներկայացնել նոր կանոնադրություն[1]:

Հուլիսի 10-ին Ղ. Խանջյանը ներկայացնում է ոստիկանական ժամանակավոր կանոնադրության համառոտ օրինակը: Ըստ այդ կանոնադրության, ոստիկանությունը բաժանվում է երկու մասի՝ վարչական և դատարանական: Առաջինի պարտականությունն էր հասարակական կարգի պահպանությունը, իսկ երկրորդինը՝ հանցագործների հետապնդումը, կալանումը, նախնական հետաքննության կատարումը և քրեական գործի նախապատրաստությունից հետո դատախազությանը հանձնելը[2]: Ռուսական ներկայությունը Վանում և նահանգում առաջնահերթ է դարձնում ռուսերենի ուսուցումը: Սկսած մայիսի 26-ից Վանում կազմակերպվում են ռուսերեն լեզվի դասընթացներ[3]:

Քաղաքի բնակիչներից ոմանք, չունենալով իշխանությունների թույլտվությունը, ձեռնամուխ են լինում նոր շինությունների կառուցմանը: Նահանգապետարանը նախազգուշացնում է նրանց, հայտարարելով, որ օրենքը խախտողները կտուգանվեն 100-ից մինչև 200 ղուրուշ գումարով[4]: Մայիսի 8-ի հրամանով Արամն արգելում է հյուրընկալել այն կամավորներին, որոնք չունեն իրենց հրամանատարների կողմից տրված համապատասխան գրություն: Հրամանը չկատարողները կենթարկվեն բանտարկության և տուգանքի[5]: Մայիսի 16-ի հրամանով Արամն արգելում է բնակիչներին ռուս զինվորներից և հայ կամավորներից գնել ցանկացած իր կամ ընտանի կենդանի, քանի որ դրանք բոլորն էլ գողոն են[6]:

Միաժամանակ նահանգապետարանն աշխատանքներ է տանում երթևեկությունը կանոնավորելու և փոխադրամիջոցները հարկային դաշտ բերելու համար: Հանձնարարվում է յուրաքանչյուր կա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14 մաս II, թ. 175:
[2] Նույն տեղում, գ. 62, թ. 51-53:
[3] Նույն տեղում, ց. 1, գ. 18, թ. 6:
[4] Նույն տեղում, գ. 76, թ. 8:
[5] Նույն տեղում, գ. 39, թ. 25:
[6] Նույն տեղում, թ. 16:

ռապանի հինգ օրվա ընթացքում դիմել քաղաքապետարան, գրանցել փոխադրամիջոցը, այն վարողին և կառքի համարը: Արգելվում է կառք վարել քսան տարեկանից ցածր տարիք ունեցողներին և արտոնագիր չունեցողներին: Հայտարարության մեջ տեղեկացվում է, որ օրենքը խախտողները կտուգանվեն 100-ից 200 ղուրուշ գումարով, իսկ կրկնվելու դեպքում կարգելվի գործունեությունը[1]: Վերը նշված նպատակն էր հետապնդում նաև սայլապանների արձանագրումը և հաշվառումը[2]: Միաժամանակ նահանգապետարանը հաստատում է կառքերի սակացույցը[3]:

Հունիսի 28-ին քաղաքապետարանը դիմում է համաքաղաքացիներին, տեղեկացնելով, որ յուրաքանչյուր տանտեր պարտավոր է հետևել իր տան, նրա շրջապատի և փողոցով անցնող առուների մաքրությանը: Միաժամանակ արգելվում է օշարակի վաճառականներին առանց Առողջապահական մարմնի կողմից տրված արտոնագրի օշարակ վաճառել:

Հունիսի 25-ին ոստիկանապետ Դ. Փափազյանը դիմում է Վանի շրջանային վարչությանը, խնդրելով ոստիկանության համար բժիշկ նշանակել, որը համապատասխան քննությունից հետո կվկայի ոստիկանի հիվանդ լինելը և կտա նրան անաշխատունակության մասին տեղեկանք[4]: Ի պատասխան ոստիկանապետի խնդրանքի, Ա. Մանուկյանը տեղեկացնում է, որ պաշտոնապես դիմել է բժիշկ Համազասպ Օհանջանյանին, խնդրելով օրական մեկ ժամ տրամադրել ոչ միայն ոստիկանության, այլև դատարանի և քաղաքապետարանի հետ կապված զանազան բնույթի հարցերը լուծելու համար[5]:

Նահանգապետարանի հանձնարարությամբ 1915 թ. հուլիսի 1-ից 8-ը քաղաքային ոստիկանության ծառայությունը, Քաղաքապետարանի և Տնտեսական մարմնի աշխատանքներն ստուգում է քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանը[6]: Ինչպես Ա.

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 30:
[2] Նույն տեղում, գ. 76, թ. 1:
[3] Նույն տեղում, թ. 19:
[4] Նույն տեղում, գ. 54, թ. 5–6:
[5] Նույն տեղում, գ. 14 մաս I, թ. 16, 18:
[6] Ի. Տեր-Ղազարյանն այդ պաշտոնում նշանակվել էր հուլիսի 1-ից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14, թ. 21:

Եկարյանը, այնպես էլ Ի. Տեր-Ղազարյանը, առաջնահերթը համարում է ոստիկանական ներքին կանոնադրության ընդունումը: Վերահսկիչի համոզմամբ այդ բացը կարող էր լրացնել կրթված և պատրաստված ոստիկանապետն ու շրջանապետը, «որոնք կկարողանան պատրաստել, կրթել ոստիկաններին, հասկացնել իրենց պարտականությունները»[1]:

Ի. Տեր-Ղազարյանը նշում է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք հնարավորություն չեն տալիս ոստիկանությանը լիարժեք իրականացնել պարտականությունները: Նրա կարծիքով ոստիկանությունը թույլ է վերահսկվում: Բացի այդ, ոստիկանները չունեն զենք և համազգեստ, «առանց որոնց թե ժողովուրդը, թե մանավանդ ռուս զինվորները նրանց ոստիկան չեն համարում, չեն լսում: Ոստիկանների ռուսերեն չիմանալը ևս բացասաբար էր անդրադառնում նրա ծառայողական պարտականությունների կատարման վրա: Անհրաժեշտ է օր առաջ նրանց համազգեստ և զենք տալ, որոշ տեղերում պահակներ նշանակել և հսկողությունն ուժեղացնել նրանց վրա»[2]:

Վերահսկիչը, բացի ոստիկանությունից, քննում է նաև Քաղաքապետարանի և Տնտեսական մարմնի գործունեությունը: Իր զեկուցագրի «Ընդհանուր դիտողություններ» ներածական բաժնում, վերահսկիչը հարկ է համարում նշել, որ իր համար հասկանալի էր, որ նշված մարմինները «ծնունդ են առել ու գործում են բացառիկ պայմաններում, Վանի շրջանային վարչությունը իր ստորադաս աջակից մարմիններով նոր է կազմակերպվում, որ պատրաստված, հմուտ պաշտոնյաների մեծ կարիք կա, որ գործը օրեցօր մեծանում, բարդանում է, որ պատերազմի արհավիրքներն այս երկրում կրկնապատիկ են և ժողովրդին օգնելու, նրան հանգստացնելու, կյանքին ընթացք տալու պայմանները ավելի բացառիկ են»[3]:

---

[1] *Սահակյան Ռ.*, Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, ԲՀԱ, 2004, N 1, էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 42–43:
[3] Նույն տեղում, էջ 38:

Սկզբնական շրջանում՝ Քաղաքապետարանը, Տնտեսական մարմինը և ոստիկանությունը շարունակում են գործել առանց իրենց գործունեությունը որոշող օրինագծի: Չեն ընդունվել աշխատակիցների իրավասությունների, նաև պարտականությունների սահմանները և ինչպես են հարաբերվելու մյուս մարմինների հետ:

Ինչպես նշում է Ի. Տեր-Ղազարյանը, այդ ամենը պատճառ է հանդիսացել, որ «մարմիններից մեկը իր գործունեությունը չափազանց ընդլայնել է ի հաշիվ մյուսի (տնտեսական մարմինը), երկրորդը գրեթե չեզոքացրել է (քաղաքապետարան), երրորդը դարձել է առաջին երկուսի և մնացյալ մարմինների գործակատար և իր բուն գործունեությունը գրեթե թողել է (ոստիկանություն)»[1]: Երեք մարմիններին կարգադրված է եղել առաջնորդվել օսմանյան օրենքներով, դրանք ենթարկել որոշակի փոփոխությունների: Սակայն, ինչպես պարզում է քննությունը, ո՛չ Քաղաքապետարանի, ո՛չ Տնտեսական մարմինը, ոչ էլ ոստիկանության աշխատակիցներն այնքան էլ ծանոթ չեն եղել թուրքական օրենքներին, ուստի մի շարք որոշումներ ընդունելիս, նրանք առաջնորդվել են միայն այնպես ինչպես իրենք են հասկացել օրենքը, որի հետևանքով «առաջացել է քաոսային վիճակ»[2]:

Ի. Տեր-Ղազարյանը Քաղաքապետարանի գործունեությունը ներկայացնելիս առաջին հերթին նշել է այն հանգամանքը, որ նա չի ունեցել ժողովների արձանագրության մատյան: Այն ունեցել է միայն վարչական որոշումների մատյան, որից հետևում է, որ սակացույցից ավելի է տուգանքներ և հարկեր գանձել վաճառականներից:

Վերահսկիչը քննել է նաև քաղաքապետարանի հարկերից ստացվող գումարը և եկել եզրակացության, որ շահույթը ավելի մեծ կլինի «եթե թե՛ տուրքերի գանձումը կանոնավոր լինի և թե՛ խլած կալվածների շահագործումը վերսկսելու միջոցներ ձեռք առնվեն»[3]:

Անդրադառնալով Տնտեսական մարմնի գործունեությանը, Ի. Տեր-Ղազարյանն առանձնացնում է այն հանգամանքը, որ մարմնի

---

[1] *Սահակյան Ռ.*, Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, էջ 38:
[2] Նույն տեղում, էջ 39:
[3] Նույն տեղում, էջ 39–40:

նախագահը չի հրավիրել ժողով և գործել է զուտ իր պատասխանատվությամբ: Տնտեսական մարմինը ևս չունի իր կանոնադրությունը և ղեկավարվել է հիմնականում մարմնի նախագահի հրահանգներով: Մայիսի 9-ից սկսած Տնտեսական մարմինն ունեցել է եկամուտ, որը ստացել է ծառերը հատելու թույլտվություններ, տարբեր խնդրագրեր և այլ թույլտվություններ տալուց: Սակայն գրանցումների մատյանում գրառումները կանոնավոր չեն կատարվել:

Ի. Տեր-Ղազարյանի կարծիքով Տնտեսական մարմնի համար առավել դժվարը՝ ածուրդների խնդիրն էր: Թեև ածուրդները վարելու և գինը որոշելու համար եղել է հատուկ մարմին, որի անդամներն են եղել քաղաքապետ Պետրոս Մոզեյանը և Երկրագործական մարմնի նախագահ (տեսուչ) Խաչիկ Զենոբյանը: Սակայն, նրանք ներկա չեն եղել ածուրդներին: Ըստ որոշ տեղեկությունների «1000 ղուրուշանոց ծառերը մի քանի հարյուրով են վաճառվում, կամ եթե վաճառում են 20 ծառ, գնողը կտրում է 40–50: Հնարավորություն չկա լավ հսկելու»[1]:

Վերահսկիչը նշում է, որ ոստիկանների ճնշող մեծամասնությունը տեղյակ չէ իր պարտականություններին և իրավունքներին: Ի. Տեր-Ղազարյանի կարծիքով, ստեղծված իրավիճակը կարող է արմատապես փոխել «լավ պատրաստված և պահանջկոտ» ոստիկանապետն ու շրջանապետը, որոնք կկարողանան «հետզհետե պատրաստել, կրթել ոստիկաններին, հասկացնել իրենց պարտականությունները»[2]: Քաղաքի տարբեր շրջանների ոստիկանապետերը սահմանել էին տուգանքների տարբեր չափեր նույն իրավախախտման համար: Շրջանների ոստիկանապետերի ուշադրությունից դուրս են մնացել սանիտարական վիճակը, մանավանդ սպանդանոցների դրությունը:

1915 թ. մայիսի 19-ի և 20-ի եղբայրական օգնության Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը որոշում է Ս. Տիգրանյանին հատկացված հինգ հազար ռուբլին թույլատրել ծախսել Վան քաղաքի կա-

---

[1] *Սահակյան Ռ.,* Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, էջ 41–42:
[2] Նույն տեղում, էջ 42:

րիքների համար[1]: Կաթողիկոսի հրամանով Վանում բացվում է հիվանդանոց՝ հիսուն մահճակալով[2]:

Գլխավոր կարգադրիչ հանձնաժողովը որոշում է շտապ Վան ուղարկել 30 հազար ռուբլի, ինչպես նաև հագուստ, շաքար և թեյ[3]: Իսկ հունիսի 12-ին Վանի և նահանգի վերաշինության նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուբար փաշան կարգադրում է Եգիպտոսի մասնաճյուղին Վան փոխանցել 15 հազար ռուբլի[4]:

Նահանգի ազատագրումը հնարավորություն է տալիս մարդկանց փնտրել կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի ժամանակ կորցրած հարազատներին: Նման դեպքերում նահանգապետարանի կողմից, առանց որևէ առարկության, տրվում էին անցագրեր՝ նահանգի գյուղերում ազատորեն շրջելու համար[5]:

Հուլիսի 6-ին բնակչությանն է դիմում Արամը, հայտարարելով, որ որևէ պաշտոնյա իրավունք չունի դրամ գանձել՝ առանց դրա դիմաց ստացական տալու: Նահանգապետը հայտնում է, որ քաղաքացիներն իրավունք ունեն չվճարել դրամը, եթե պաշտոնյան իրենց չի տալիս գումարը ստանալու ստացական: Ա. Մանուկյանը միաժամանակ ընդգծում է, որ այն քաղաքացիները, որոնք մինչև իր հայտարարությունը կատարել են դրամական մուծումներ և չեն ստացել ստացագիր, ապա ինքն արտոնում է նրանց այդ մասին տեղեկացնել նահանգային դիվանատանը, նշելով մուծման ժամկետը և պաշտոնյային, որին իրենք վճարել են դրամը[6]:

Վանում և նահանգում որոշակի ծավալ է ստանում ռազմավարային զենքի անօրինական առքն ու վաճառքը: Զենքն ու զինամթերքը վաճառում էին հիմնականում կամավորները: Այդ անօրինական գործունեությունը կասեցնելու նպատակով, հունիսի 9-ի հրամանով

---

[1] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 17:
[2] Նույն տեղում, թ. 9:
[3] Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 13, թ. 22: *Հարությունյան Ա. Հ.*, Վանի նահանգապետության պարենային քաղաքականությունը (1915 թ. մայիս-հուլիս), Էջմիածին, 2010, Դ, էջ 57:
[4] «Մշակ», 1915, N 141, 2 յուլիսի:
[5] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 5, թ. 70:
[6] Նույն տեղում, գ. 39, թ. 29:

Արամը հայտնում է Վանի բնակչությանը, որ արգելվում է I խմբի կամավորներից զենք գնել: Նա միաժամանակ տեղեկացնում է I խմբի կամավորներին, որ նրանք պարտավոր են մինչև հունիսի 10-ի ժամը 12-ը վերադառնալ իրենց ստորաբաժանումը: Հրամանը չկատարողները ենթարկվելու են ամենախիստ պատժի[1]:

Հունիսի 10-ի հայտարարությունում նահանգապետարանը տեղեկացնում է գավառային բնակչությանն այն մասին, որ դյուրացվում է նահանգապետարանում նրանց դիմումների ընդունումը: Այլևս անհրաժեշտ չէ դիմել նահանգապետարանին, քանի որ վերջինս տեղական խնդիրների հետ կապված դիմումներն ուղարկում է տվյալ գավառի գավառապետին: Գյուղացիները կարող են անմիջապես դիմումը հանձնել գավառապետերին[2]:

Նահանգապետի հատուկ հրահանգով գավառապետերին հանձնարարվեց հետաքննել և ցուցակագրել թուրք և քուրդ հրոսակների կատարած բարբարոսությունները: Ա. Մանուկյանի կողմից Ա. Նիկոլաևին ներկայացվեց հայերի զանգվածային կոտորածները գլխավորած քուրդ ցեղապետերի ցուցակը[3]:

Ոստիկանական ծառայությանը հրապարակայնություն տալու միտումով, Ա. Մանուկյանը հուլիսի 2-ին քաղաքային երկու թերթերի՝ «Վան-Տոսպ» և «Աշխատանք» լրագրողներին արտոնում է առանց որևէ սահմանափակման շրջել քաղաքում և գավառներում: Նահանգապետի հրամանում ասված էր. «Կը յանձնարարէնք ոստիկանութեան և գավառի մեր պաշտոնեաներուն ամեն կերպ աջակցութիւն տալ իրենց (լրագրողներին – Ռ. Ս.)»[4]:

Ինքնապաշտպանական մարտերն ավարտվելուց հետո, քաղաքի բնակչությունը, որպեսզի որոշ չափով հատուցի թուրքական իշխանությունների կողմից զորահավաքի և մարտերի ընթացքում հարուցած վնասները, կողոպտում է թուրքական լքյալ տներն ու խանութները: Հետագայում ոմանք ամբաստանում են Արամին, որ նա թույլ գտնվեց և չարգելեց կողոպուտը: Դրանք համարվում են օրի-

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 26:
[2] Նույն տեղում, գ. 43, թ. 8:
[3] Նույն տեղում, ֆ, 818, ց. 1, գ. 533, թ. 25:
[4] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 14 մաս I, թ. 22:

նական՝ որպես հարուցված կորուստների հատուցում: Սակայն, բնակչության որոշ մասը, ոգևորված նման հնարավորությունից, թալանում է նաև Քաղաքամեջում գտնվող հայ վաճառականների ապրանքները: Հատկապես տուժում է «Գափամաճյան ընկերությունը»:

Ա. Մանուկյանի հրամանով ոստիկանապետ Դ. Փափազյանը սկսում է հետաքննել գործը, որը հիմնվելով հավաքված փաստերի և վկայությունների վրա, եզրակացնում է, որ գողոնի մեծ մասը յուրացրել են Քաղաքամեջի Զինվորական մարմնի անդամների՝ Լ. Գալճյանի, Ս. Շահինյանի, Հ. Կոսոյանի, Ա. Թորոսյանի և այլոց կողմից, որոնք կալանվում են, սակայն չեն խոստովանում իրենց մեղսակցությունը:

1915 թ. հունիսի 22-ի նահանգապետին ուղղված դիմումում Քաղաքամեջի ՀՅԴ անդամների ներկայացուցիչները, որոնց թվում Ա. Կեորկիզյանը, Մ. Սարոյանը և Վ. Հովհաննիսյանը, իրենց բողոքն են ներկայացնում: Նրանում մասնավորապես ասվում է հունիսի 21-ին սկսած լայնածավալ խուզարկությունների մասին: Նրանք պահանջում են անձնական հանդիպում վաճառականների հանձնախմբի հետ[1]:

Վերը նկարագրված փաստը մեկ անգամ ևս գալիս է ապացուցելու Արամի և նրա համախոհների մեծ մասի ազնվությունը և նվիրվածությունը հայրենի գործին: Արամը կանգ չի առնում այն հանգամանքի վրա, որ կասկածյալները ոչ միայն իր կուսակցական, այլև մարտական ընկերներն են: Նրանց հետ նա անցել է բավական երկար, ծանր ու պատասխանատու ճանապարհ, այնուամենայնիվ, Արամի համար գոյություն չունեին կուսակցական պատկանելությամբ կասկածյալի կամ հանցագործի տարբերակում: Այդ իսկ պատճառով նա վայելել և առ այսօր վայելում է հայության սերն ու հարգանքը: Հավանաբար այս և այլ հարցեր ի նկատի ունենալով, Վարդանը վկայում է, որ Արամը «Մեծ համակրանք էր վայելում ժողովրդյան կողմից և որպես հարգանքի նշան, նրան փաշա կոչումն էին տվել: Արամը մաքուր, գործունյա, դրական, կտրուկ մարդ էր»[2]: Իր հուշերում Ա.

---

[1] *Սահակյան Ռ.,* Հայկական ոստիկանության կազմակերպումը, ԲՀԱ, 2003, N 2, էջ 54:

[2] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 2 շրջ.-3:

Դարբինյանը ևս բարձր է գնահատում Արամին, փաստելով, որ նա «ճանչցուած էր ժողովրդին մէջ իբրև անշահախնդիր անձ մը»[1]: Ինչպես նշում է Ա. Ասրյանը, «Արամին բնորոշող, նրա մեծությունն ընդգծող և պայմանավորող գծերից էր նաև նրա համեստությունը, ազնվությունն ու անշահախնդրությունը»[2]:

Աստիճանաբար կանոնավորվում է նաև Վանի կյանքը: Ապահով վիճակը հնարավորություն է տալիս ոչ միայն վերանորոգել մարտական գործողություններից վնասված կամ քանդված շինությունները, այլև բացել նոր հաստատություններ, ինչպես՝ հյուրանոցներ, թեյատներ և ճաշարաններ: Մի խումբ քաղաքացիների կողմից Վանում կազմակերպվում է «Օթել Վասպուրական» անունը կրող հյուրանոցը[3]: Հետզհետե սկսում են կարգավորվել առևտրական հարաբերությունները Ռուսաստանի հետ: Ճիշտ է, դրանք դեռևս աշխույժ չէին, սակայն առաջին քայլերն էին և կարող էին կանոնավորել տնտեսական հարաբերություններն առաջին հերթին Կովկասի հետ: 1915 թ. մայիսի 22-ին Արամին ուղված խնդրագրում իգդիրցի առևտրական Հովհաննես Վարդանյանը խնդրում է թույլատրել իրեն առևտրական գործունեություն ծավալել Բերկրիի և Աբաղայի գյուղերում: Նրա խնդրանքը բավարարվում է նահանգապետարանի կողմից[4]: Միաժամանակ զգալի թվով վանեցի վաճառականներ գալիս են Կովկաս՝ երկրագործական գործիքներ գնելու և Վան տեղափոխելու համար[5]:

Նահանգի ասորի բնակչության մի մասը, որը կարողացել էր փրկվել կոտորածներից և ապաստանել Վանում, սկսում են ոչ միայն աստիճանաբար վերադառնալ իրենց ծննդավայրերը, այլև Ռուսաստանում գտնվող հարազատներին տեղափոխել հարազատ վայրերը: Այդ նպատակով Արամին են դիմում Դանո Հունանը (Յունան) և

---

[1] *Դարբինեան Ա.,* նշվ. աշխ., էջ 331:
[2] *Ասրյան Ա.,* Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր, տե՛ս Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչ (ողովածների ժողովածու), էջ 73:
[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 14 մաս I, թ. 23:
[4] Նույն տեղում, թ. 9:
[5] «Հովիտ», Թիֆլիս, 1915, N 22, 14 յունիսի, էջ 345:

Չարքազ (Չերքեզ) Ռաշոն: Նրանց տրվում են անցագրեր՝ Երևանից իրենց ընտանիքները Վան տեղափոխելու համար[1]:

Խոշաբի գավառ սկսում են վերադառնալ ողջ մնացած գյուղացիները: Հայկական և քրդական գյուղերն իրենց ամբողջությամբ մնացել էին անվնաս, սակայն քանդվում են վառելիքի համար տների փայտյա մասերը: Հայ գյուղացիների մեծ մասը չի կատարում երկրագործական աշխատանքներ, այլ զբաղված էր քրդական գյուղերում եղած հացահատիկն իրենց տները փոխադրելով: Հայ և ասորի գյուղացիների մի մասը ստանալով զենք կրելու արտոնություն, այդ հանգամանքն օգտագործում են նաև համագյուղացիներին կողոպտելու համար[2]:

Իշխանությունների առաջնահերթ խնդիրներից էր երկրագործական աշխատանքների շտապ վերսկսումը, որովհետև 1915 թ. ապրիլից մինչև մայիսի կեսերը դրանք դադարեցվել էին հայերի զանգվածային կոտորածների հետևանքով: Կովկասում պատվիրվեցին 3 հազար ռուբլու արժողությամբ հնձող և կալսող մեքենաներ: Ա. Մանուկյանի նախաձեռնությամբ, տուժած բնակչության համար հանգանակվեց հազար փութ ցորեն, ութից տաս հազար ոչխար, ավելի քան երկու հազար գլուխ խոշոր եղջրավոր անասուն[3]:

Միայն ոստիկանության սակավ թիվը չէր պատճառը իրավապահների ծառայության ոչ լիարժեք գործունեության համար: Գավառներում տարածված էին համաճարակային զանազան հիվանդություններ, որոնցով տառապում էին նաև ոստիկանության զգալի թվով աշխատակիցները: Այսպես, Գործոթի գավառապետության ոստիկաններից ծառայություն կարող էին կատարել միայն յոթը: Գավառապետը խնդրում էր շտապ ուղարկել 6-ից 8 ոստիկան՝ տեղական ուժերը համալրելու համար: Ինչ վերաբերում է ոստիկանությունը տեղացիներով համալրելուն, ապա գավառապետ Գագիկ Թոխմախյանը պարզաբանում է, որ «տղամարդկանց թվաքանակը քիչ է, նրանք հազիւ կարողանում են իրենց արտերը մշակել»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 214:
[2] Նույն տեղում, գ. 13, թ. 4–5:
[3] *Ասրյան Ա. Ս.*, նշվ. աշխ., էջ 127–128:
[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 15, թ. 13:

Գավառներում անապահով վիճակը՝ և հատկապես թուրք-քրդական հարձակումների վտանգը հարկադրում է գավառապետերին փորձել ներգրավել տեղական բնակիչներին, ոստիկանության հետ համատեղ ավազակների դեմ պայքարելու համար: Մայիսի 16-ին Գործոթի գավառապետ Գ. Թոխմախյանը գավառական դիվանին տեղեկացնում է, որ գավառի 10-ից 15 ոստիկաններն ի զորու չեն ապահովել բնակչության անվտանգությունը: Նա առաջարկում է հասարակական կարգի ապահովման և պարեկապահակային ծառայության համար բնակիչներից կազմակերպել ոստիկանությանն օժանդակող կամավորական խմբեր ու նրանց ևս թույլատրել զենք կրել: Նույն կարծիքն էր հայտնում Ա. Եկարյանը: Նա, սակայն, առաջարկում էր տեղական բնակչությանն ընդգրկել պահակային ծառայությունում: Նրանց պարտականությունն էր լինելու միայն բնակավայրի հսկողությունը[1]:

Հաշվի առնելով նահանգում ստեղծված իրադրությունը և ֆինանսների սղությունը, պետք է ընդունել, որ Գ. Թոխմախյանի և Ա. Եկարյանի առաջարկությունները ճիշտ էին: Իրավապահների հետ պարեկապահակային ծառայություն կատարող բնակիչների ներկայությունն ու մասնակցությունը հնարավորություն կտային համատեղ ուժերով, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ վերջ տալ օրեցօր ահագնացող թուրք-քրդական հարձակումներին: Բացի այդ, ոստիկանության հետ գործող բնակիչն ինքը կհետևեր իր բնակավայրի կարգուկանոնին: Դա նաև հնարավորություն կտար օգտագործել անհատների ունեցած զենքն ու զինամթերքը, որի կարիքն այնքան շատ էր զգում ոստիկանությունը:

Արքեպիսկոպոս Սահակ Այվատյանի նախագահությամբ կազմվում է «Վասպուրականի Եղբայրական օգնության հանձնաժողովը»: Նրա կազմում ընդգրկվում են Ա. Մանուկյանը, Ս. Տիգրանյանը, Մ. Նալբանդյանը, Փ. Թերլեմեզյանը և Հ. Մկրտչյանը: Հանձնաժողովի առաջնահերթ գործը եղել է բուժարան բացել բժիշկ Թաշճյանի գլխավորությամբ: Հեռագրվում է էջմիածին, խնդրելով շտապ կարգով Վան ուղարկել բժիշկ, դեղեր և հիվանդանոց բացել 55 մահճա-

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 123 շրջ.:

կալով[1]: Մայիսի 26-ին «Դեղագործական ապրանքներ վաճառող կովկասյան ընկերությունը» Վանի սանիտարական ջոկատի համար նախատեսված դեղերը հասցնում է ԿԽԲԸ-ն Կենտրոնական կոմիտեին[2]:

Հայ հասարակայնությունը մտահոգված էր ոչ միայն նահանգի բնակչության համար, այլև քայլեր էր ձեռնարկում տեղի մշակութային արժեքների փրկության մասին: Տեղեկանալով, որ Վարագա վանքի հրկիզման ժամանակ ոչնչացվել են 300 ձեռագրեր[3], Հայոց ազգագրական ընկերությունն արտակարգ նիստ է գումարում և հեռագրով դիմում է կաթողիկոս Գևորգ Ե-ին, խնդրելով Վասպուրականում փրկված 2 հազար ձեռագրերը էջմիածին փոխադրել[4]:

Վանի նահանգապետության ղեկավարությունը խորապես գիտակցում էր, որ ոստիկանության ծառայության կանոնավորումը մեծապես կնպաստեր գավառային բնակչության ապահովությանը: Ուստի անում էր իրենից կախված ամեն բան, և հնարավորության դեպքում աշխատում էր ապահովել ոստիկանությանն անհրաժեշտ ամեն ինչով: Ոստիկանության կանոնավոր և լիարժեք ծառայությանը մեծապես խոչնդոտում էր համազգեստի բացակայության հանգամանքը: Քաղաքում և հատկապես գավառներում տեղակայված Բայազետի ռուսական ջոկատի զինծառայողները չէին կարողանում զանազանել ոստիկանին քաղաքացուց կամ գյուղացուց: Այդ պատճառով հաճախ ցավալի թյուրիմացություններ էին առաջանում և անհարկի բռնագրավվում էր հայ ոստիկանների զենքը: Այդ էր պատճառը, որ մայիսի 27-ին գեներալ Ա. Նիկոլաևը մեկ անգամ ևս հրամայում է ենթականերին հայերից չբռնագրավել զենքը[5]:

Նահանգային իշխանությունները և անձամբ Ա. Մանուկյանը մտահոգված էին հայկական ոստիկանական համակարգի վերջնական ձևավորման և լիարժեք ծառայության իրականացման հարցով: Փաստորեն հայկական ոստիկանությունը, բացի իրավապահ գոր-

---

[1] «Մշակ», 1915, N 142, 3 յուլիսի: ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 17 և շրջ.:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 384, թ. 122:
[3] Նրանց ցուցակը կազմել էր Երվանդ Լալայանը դեռևս 1914 թ., տե՛ս «Մշակ», 1915, N 127, 14 յունիսի:
[4] «Մշակ», 1915, N 131, 19 յունիսի:
[5] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 133, թ. 9:

ծառույթներից իրականացնում էր նաև ոստիկանական զորքերին հատուկ պարտականություններ: Արամը գերազանց ըմբռնում էր ոստիկանության կարևորությունը, քանի որ այն կարգուկանոնը պահպանելուց բացի, նաև պետականության առաջին խորհրդանիշներից էր: Կարելի է ենթադրել, որ Ա. Մանուկյանը հետագայում ցանկանում էր ոստիկանական ուժերի հիմքի վրա ստեղծել նաև կանոնավոր բանակի ստորաբաժանումներ: Դա հնարավորություն կտար այդ ուժերն օգտագործել քրդական ավազակախմբերի դեմ, որոնք լուրջ վտանգ էին ներկայացնում[1]: Գերազանց կողմնորոշվելով լեռնային տեղանքում և վարժված լինելով նման պայմաններում կռվելուն, նրանք հարձակվում էին ոչ միայն հայերի, ասորիների ու եզդիների, այլև ռուսական թիկունքային ստորաբաժանումների վրա, խաթարելով զորքերի կանոնավոր մատակարարումը և կապը: Այսպես, 1915 թ. հունիսի 20-ին, Արճեշի մոտ քրդերը հարձակվում են ռուսական գումակի վրա և գողանում բոլոր ձիերը[2]: Ճիշտ է, ռուսական հրամանատարությունը կազմակերպում էր պատժիչ արշավախմբեր, սակայն, բավական էր, որ զորքը հեռանար, քրդերը կրկին վերսկսում էին հարձակումները:

Ռուսական հրամանատարությունը փորձում էր համաձայնության գալ և սիրաշահել քրդերին, որն էական և լուրջ արդյունք չի տալիս: Քրդերը բազմիցս հայտնում էին իրենց հպատակության մասին, բայց գաղտնի շարունակում էին հարձակումները ռուսական զինծառայողների վրա: Ռուսներին կարող էին լուրջ օժանդակություն ցույց տալ հայկական ոստիկանական ուժերը, եթե հրամանատարությունն իր վրա վերցներ նրանց զինումը և ֆինանսական որոշ ծախսերը: Վանեցիները, գերազանց կողմնորոշվում էին տեղանքում, քաջատեղյակ էին քրդերի մարտավարությանը, բացի այդ հոգեբանորեն պատրաստ էին նրանց դեմ կռվելու, քանի որ ապրիլ-մայիս ամիսներին կարողացել էին դիմակայել և հաղթել օսմանյան զորքերին: Բացի այդ, հայերը շահագրգռված էին պաշտպանել իրենց հարազատներին, բնակավայրերը և գույքը:

---

[1] Նրանց թիվը 150 հազար էր, տե՛ս *Նանսեն Ֆ.,* Հայաստանը և Մերձավոր Արևելքը, անգլերենից թարգմանեց Ս. Ալեմյանը, Երևան, 1991, էջ 149:
[2] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 14, տե՛ս նաև նույն տեղում, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 83:

Երկրորդ տարբերակը, որ կարող էին օգտագործել ռուսները՝ հայ կամավորներն էին, որոնք հայկական ոստիկանությունից և բնակչությունից կազմված ուժերի հետ կարող էին վերահսկել թիկունքը, իրականացնել պարեկապահակային ծառայություն և պաշտպանել հայ, ասորի և եզդի ազգաբնակչությանը: 1915 թ. մայիսի 16-ի հրամանով գեներալ Պ. Օգանովսկին թույլատրել էր Արամին օգտագործել հայ կամավորական խմբերը[1]: Սակայն, մարտական գործողությունների հետագա ծավալումը և կամավորական չորս խմբերին Մշո դաշտ ուղարկելու մտադրությունը, հնարավորություն չտվեց օգտվել կամավորների ուժերից ու հնարավորություններից:

Ցավոք, ռուսական կառավարության և Պետական դումայի որոշ անդամներ թշնամաբար էին տրամադրված Վանի հայկական իշխանության դեմ: Ռուսական կառավարող շրջանները կտրականապես դեմ էին Օսմանյան կայսրությունից գրավված տարածքներում հայկական ինքնավարությանը: Ցարական իշխանություններն Արևմտյան Հայաստանը դիտում էին որպես նվաճված տարածք՝ գաղութ և մտադիր չէին այնտեղ ունենալ որևէ ազգային պետական կազմավորում: Նրանք փորձում էին քրդերին հակադրել հայերին: Դա բացատրվում է նրանով, որ ռուսները հայերից նախընտրում էին տնտեսապես և քաղաքականապես թույլ զարգացած և հետամնաց, միմյանց դեմ թշնամաբար տրամադրված և հեշտ «կառավարելի» քրդերին: Այս հանգամանքով է բացատրվում զինվորական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը քրդերի նկատմամբ:

1915 թ. հունիսի 8-ի նամակում Վարդանը հաղորդում է մի միջադեպի մասին, որն ապացուցում է վերն ասվածը: Բերկրիի մոտ քրդերը հարձակվում են մի քանի կամավորների վրա: Մարտի ընթացքում հայերը սպանում են չորս քրդի և որպես ռազմավար վերցնում են նրանց զենքերը: Կամավորները, սակայն, ձերբակալվում և ամբաստանվում են «խաղաղ» քրդերի վրա հարձակվելու մեջ[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 19, թ. 44:

[2] Տե՛ս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 219, թ. 11: Քրդերը հարձակվում են Կարկառ գավառակի Հարբենց գյուղ վերադարձող 27 գյուղացիների վրա և սպանում են նրանցից 26-ին, տե՛ս «Մշակ», 1915, N 142, 3 յուլիսի:

Ռուսական քաղաքականության իրական նպատակները հասկանալով, Ա. Մանուկյանը հնարավոր քայլեր է ձեռնարկում ոստիկանության ծառայությունը կանոնավորելու համար: Արամը նախընտրում է գավառակներում ունենալ փոքրաթիվ, բայց մարտունակ, կազմակերպված և հնարավորինս լավ սպառազինված ոստիկանություն, որի ներկայությունը և պատասխան գործողությունները զսպող ազդեցություն կունենան թուրք-քրդական զինված ջոկատների վրա: Նահանգի ղեկավարությունը ձգտում էր օր առաջ հայտնաբերել և վերացնել ոստիկանության ծառայության մեջ տեղ գտած թերությունները, պարզել նրա կարիքները: Ուստի նահանգապետի հանձնարարությամբ ստուգվում է քաղաքային և նահանգային ոստիկանության ծառայությունը, որպեսզի որքան հնարավոր է արագ բացահայտվեն և վերացվեն տեղ գտած թերությունները:

Պետք է ընդգծել, որ բացի Վան քաղաքի մի քանի ոստիկաններից, որոնք նախկինում ծառայել էին օսմանյան ոստիկանությունում, մյուսներն իրավապահ մարմինների հետ որևէ առնչություն չէին ունեցել: Ոստիկանների ճնշող մեծամասնությունը նախկին հողագործներ և արհեստավորներ էին: Այս ամենն, իհարկե անդրադառնում էր ոստիկանության ծառայության վրա: Ոստիկանության աշխատակիցների կողմից տեղի էին ունենում օրինականության ոտնահարման որոշ դեպքեր, որը հարուցում էր քաղաքացիների արդարացի դժգոհությունը:

Նահանգային իշխանություններն իրենց հերթին քայլեր էին ձեռնարկում, որպեսզի վերացվեին քաղաքացիների իրավունքների ոտնահարման ցանկացած դեպք: 1915 թ. հունիսի 30-ին Ա. Դարբինյանը նահանգային վարչության անունից հատուկ դիմում է հղում հայրենակիցներին, խնդրելով և կոչ անելով ոստիկանության ցանկացած աշխատակցի գործողությունից դժգոհ քաղաքացիներին գրավոր դիմել նահանգային դիվանին, խոստանալով իրականացնել համապատասխան հետաքննություն, և փաստերի հաստատվելու դեպքում պատժել մեղավորին կամ մեղավորներին: Միաժամանակ Ա.

Դարբինյանը նահանգային վարչության անունից առաջարկում է հայրենակիցներին անդամագրվել ոստիկանությանը[1]:

Ոստիկանության ղեկավարությունը միաժամանակ հետևում է, որպեսզի պաշտոնական դիրքը չարաշահող անձը պատասխանատվություն կրի: Դեռևս 1915 թ. մայիսի 20-ին ոստիկանապետ Դ. Փափազյանը Ա. Մանուկյանին ուղված զեկուցագրում հայտնում է Ոստանի կառավարչի օգնական Զավենի և «ինքզինք Գաւաշի ոստիկանապետ յայտարարող Գրիգոր Պազիկեանի»[2] կողմից կողոպուտի փաստը քողարկելու համար կաշառք վերցնելու մասին: Նա խնդրում է նահանգապետի թույլտվությունը նշված անձանց ձերբակալության համար[3]:

Նահանգապետարանի հանձնարարությամբ, 1915 թ. հունիսի 23-ից մինչև հուլիսի 10-ը, նահանգային ոստիկանության տեսչական ստուգումը կատարում է Ա. Եկարյանը[4]: Նա հունիսի 11-ի հրամանագրով նշանակվել էր «նահանգային գավառական ոստիկանության շրջուն քննիչի և կազմակերպիչի պաշտոնին»[5]: Ա. Եկարյանը շրջելով գավառներով, արձանագրում է առկա թերությունները ու բացթողումները[6]: Հաշվետվության վերջում նա ներկայացնում է առաջարկություններ, որոնք հնարավորություն կտային շտկել թերությունները.

1. Ծառայության ընդունել այն գյուղացիներին, որոնք ներգրավված չեն գյուղատնտեսական աշխատանքներում:
3. Ոստիկանությանն ապահովել համազգեստով:
4. Յուրաքանչյուր գավառում ունենալ զինվորական հրահանգիչներ, ոստիկանների հետ ռազմական պատրաստականության դասընթացներ անցկացնելու համար:
5. Ոստիկանությանը զինել արդիական զենքերով և ապահովել ծիերով:

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 15: Կոչը տպագրվում է Վանում լույս տեսնող «Վան-Տոսպ» և «Աշխատանք» թերթերում, տե՛ս նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 14 մաս I, թ. 18 շրջ.-19:
[2] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 41, թ. 45:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, գ. 6, թ. 135:
[5] Նույն տեղում, գ. 14 մաս I, թ. 4 շրջ.:
[6] Նույն տեղում, գ. 14 մաս II, թ. 127-128:

6. Կազմել ոստիկանական ներքին կանոնագիրք: Դա հնարավորություն կտա ոստիկաններին իմանալ իրենց իրավունքներն ու պարտականությունները[1]:

Ինչպես նշվեց, առաջնահերթ խնդիրներից էր ոստիկանությանը զենքով ապահովելը: Նահանգապետարանի ունեցած տվյալների համաձայն հայ բնակչությունն ուներ հազարից ավելի զենք, սակայն տարբեր սիստեմների և տրամաչափերի, որը դժվարեցնում էր փամփուշտի հայթայթումը: Զենքի պաշարը լրացնելու միակ աղբյուրը՝ կամավորներն էին: Նրանց մոտ կար զգալի քանակությամբ ռազմավարային զենք: Կամավորները լավագույն դեպքում հրացանները փոխանակում էին «Մաուզեր» ատրճանակների հետ[2]:

Բնակչության շրջանում ոստիկանությունն իրականացնում էր նաև հնարավոր իրավախախտումների կանխարգելման աշխատանքներ: Այսպես, երբ Վան քաղաքում հաճախակի դարձան լքված և ավերված տների դռների, պատուհանների փեղկերի՝ անչափահասների կողմից կատարվող հափշտակությունները, ինչպես նաև տնկիների հատումը, ոստիկանությունը հանդես եկավ հայտարարությամբ: Հունիսի 20-ին ոստիկանապետ Դ. Փափազյանը դիմելով համաքաղաքացիներին, նախազգուշացնում է, որ նման դեպքերում պատասխանատվության են ենթարկվելու երեխաների ծնողները[3]:

Մեծ քանակությամբ մարդկանց կուտակումը Վանում սրում է քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակը: Հունիսի 7-ին Պ. Լևոնյանը հետևյալն էր գրում. «Համաճարակը սաստկանում է: Անհրաժեշտ են բժիշկներ, ֆելդշերներ, դեղորայք: Սով է սկսւում: Պետք է միջոցներ ձեռք առնել օգնութիւն հասցնելու համար: Արամի վարչութիւնը անում է նոյն իսկ անհնարինը: Խիստ կարիք կայ ինտելիգենտ ոյժերի»[4]: 1915 թ. հունիսի 19-ից մինչև հուլիսի 3-ը Արճեշի գավառում

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, թ. 129–130: Ա. Եկարյանը հավանաբար տեղյակ չէր, որ հունիսի 25-ին ոստիկանական ներքին կանոնադրությունն արդեն պատրաստ էր, տե՛ս *Սահակյան Ռ.*, Վանի նահանգի դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, ԲՀԱ, 2006, N 1, էջ 53–58:

[2] *Ասրյան Ա. Ս.*, Ա. Մանուկյանի տեղեկագիրը Վանի նահանգապետության կառավարության գործունեության մասին, ԲՀԱ, 2006, N 2, էջ 11–12:

[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 58:

[4] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, N 127, 10 յունիսի 1915:

նահանգապետարանի հանձնարարությամբ հետազոտություններ կատարած Հ. Տեր-Հակոբյանը վկայում է. «Արճեշից դեպի հյուսիս գտնված ամբողջ շրջանը, արևմուտքից արևելք, իր մեջ պարունակած բազմաթիվ հայկական գյուղերով այդ քրդերի (Զիլանի ծորում գտնվող – Ռ. Ս.) իշխանության և երկյուղի ներքո են գտնվում»[1]:

Ոստիկանությունը հետաքննում է հունիսի 20-ին Խոշաբ գավառակի Կասր գյուղի մոտ չորս ասորիների վրա քրդերի կատարած ավազակային հարձակման դեպքը: Այս մասին հաղորդելով նահանգապետին, գավառապետ Արմենակ Տեր-Պողոսյանը զեկուցում է, որ ելուզակներին հետապնդելու և պատժելու համար ուղարկել է ոստիկանական ջոկատ[2]:

Ոստիկանությունը հետաքննում է քուրդ «առաջնորդ», ապագա «Քրդստանի տիրակալ» Աբդուլ Ռզակի (Աբդուրրեզակ) և նրա 200 հոգուց բաղկացած ջոկատի կողմից Եզդի խանե շրջանի Չիբուխլու գյուղում եզդի բնակչության նկատմամբ կատարված բռնություններն ու կողոպուտը[3]: Դրան մասնակից են եղել Աբդուլ Ռզակին ուղեկցող 46 կազակ: Քրդերը եզդիներից խլել են մոտ երկու հազար ոչխար և հինգ հարյուր գլուխ խոշոր եղջրավոր անասուն[4]: Չերբակալվել է եզդի խանե շրջանի պետ Ջհանգիր աղան իր երեք համագյուղացիների հետ[5]: Կալանումը կատարվել է գեներալ Ֆ. Չեռնոզուբովի հրամանով[6]:

Իրենց կամայականություններով աչքի են ընկնում կազակները: Նրանք ոչ միայն արգելում էին հայ գյուղացիներին քրդերից վերցնել իրենցից թալանած գույքը, կենցաղային իրերն ու ընտանի կենդանիները, այլև բռնագրավում էին դրանք: Մայիսի 18-ին Ալյուրի գավառապետ Հարություն Հյուսյանը հաղորդում է. «Ռուս կազակներու

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 14:
[2] Նույն տեղում, գ. 14, մաս II, թ. 150:
[3] Նույն տեղում, թ. 120-121: Գեներալ Ա. Նիկոլաևը դիմում է հրամանատարությանը՝ խնդրելով հեռացնել Աբդուլ Ռզակին, որի ջոկատը ահաբեկում էր բնակիչներին, տե՛ս *Սահակյան Ռ.*, Ռուսական բանակի և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ԲՀԱ, 2010, N 1, էջ 30:
[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 6, թ. 157:
[5] Նույն տեղում, գ. 14 մաս II, թ. 145:
[6] Նույն տեղում, թ. 120:

շահարկութիւնները ... կշատանայ...զենքի խուզարկութեան պատրվակով կկողոպտեն իրենց դէմ ելնող անհատներին...»[1]: Մայիսի 25-ին նման մի դեպքի մասին է հաղորդում Գործոթի գավառակապետը: Ռուս զինվորականներն «այդ կերպ իրենց մօտ են հավաքել 3000-ից աւելի խոշոր և մանր եղջրաւոր անասուններ»[2]:

Վերը նշված հարցի լուծմանն էր նվիրված 1915 թ. մայիսի 26-ի Ա. Մանուկյանի նամակը ԿՀԲԸ-ն նախագահ Ս. Հարությունյանին: Ներկայացնելով Վասպուրականի ծանր տնտեսական վիճակը և բնակչության աղետալի դրությունը, նահանգապետն աջակցություն էր խնդրում: Միաժամանակ Արամը դիմում է Ս. Հարությունյանին, օգտագործելու իր հնարավորությունները և հեղինակությունը, «որպէսզի վերջ տրուի պաշտօնապէս և անպաշտօն կերպով այս կամ այն կօզակի ձեռքով հայ գիւղերու կողոպտման և զինաթափման գործին: Հաճախ ուղղակի կմտնէն գիւղեր, ամբողջ հացը, տաւար, ոչխար, մալ և այլն կքշեն կտանեն: Լավագոյն դէպքին, երբ կբարեհաճէն բացատրութիւն տալ, կառարկեն, որ «հայերը այդպէս թալանւած էին արդէն, անոնք որտեղե՞ն ձեռք բէրին, այդ բոլորը քիւրդերու մալն է: Այս բոլորը մեզի կպատկանեն»: Չենք կարող հասկցնել այս մարդոց, որ հայերու մալերու մի մասը չի թալանուած, թէ հայերն իրենց ապրանքներն է, որ ետ են խլած կռուով՝ քիւրդերեն: Այս շարժումը աղետներու պատճառ կդառնայ»[3]: Վարդանը նմանապես հիշատակում է ռուսական զորքի կողմից կատարվող անօրինականությունների մասին, չնայած այն հանգամանքին, որ նահանգապետարանն աշխատում էր բավարարել նրանց պահանջները[4]:

Բանը հասավ նրան, որ անհիմն ամբաստանությունների հիման վրա մահապատժի ենթարկվեցին երեք հայ գյուղացիներ: Նրանք նախազգուշական կրակ էին բացել սարից իջնող զինված քրդերի վրա, որոնց հետ եղել էին մի քանի կազակ և որոնց գյուղացիները չէին նկատել: Չնայած այն հանգամանքին, որ տուժողներ չեն եղել,

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 23, թ. 1:
[2] Նույն տեղում, գ. 12, թ. 3:
[3] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 384, թ. 105:
[4] Նույն տեղում, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 3:

այնուամենայնիվ վաշտի հրամանատար Գեգենդորֆի հրամանով գյուղացիները մահապատժի են ենթարկվում[1]:

Հայկական ոստիկանությունը պաշտպանում էր ոչ միայն հայ, ասորի, եզդի, այլև թուրք և քուրդ խաղաղ բնակչության անձը, գույքը և քաղաքացիական իրավունքները: Երբ օսմանյան զորքը և քրդական ջոկատները հեռացան Վանից, քաղաքի մահմեդական թաղամասում մնացել էին թուրք և քուրդ կանայք երեխաներ: Օսմանյան տիրապետության տակ դարեր տառապած և ջարդերից փրկված հայերն իրենց համաքաղաքացիների նկատմամբ որևէ բռնություն չգործադրեցին: Ավելին, հայ մարտիկները նրանց բոլորին հավաքեցին և հանձնեցին ամերիկյան և շվեյցարական (գերմանական) միսիոներներին[2]:

1915 թ. մայիսի 20-ին գեներալ Ա. Նիկոլաևը հրամայեց իր ջոկատին հանձնված և պատանդ վերցված բոլոր թուրքերին և քրդերին տեղավորել շվեյցարական (գերմանական) և ամերիկյան միսիոներական հաստատություններում[3]: Բացի այդ, Վանի նահանգում տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում ռուսներին էին հանձնվել մեծ թվով քրդեր, հիմնականում կանայք, երեխաներ և ծերունիներ: Ռուսական հրամանատարությունը տեսնելով վաներիների մարդկային վերաբերմունքը մահմեդական բնակչության նկատմամբ, որոշում է ազատ արձակել նաև վերը նշված քրդերին և ուղարկել իրենց բնակավայրերը: Ք. Աշըրի հուշերի համաձայն, քրդական ցեղերի մեծ մասն արագորեն ընդունելով ռուսական հպա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 48:

[2] Ամերիկացի միսիոների վկայությամբ. «Այդ տեսակետից հայերը ցույց տվեցին, որ իրենք շատ ավելի մարդկային են, քան թուրքերը...Մենք հիշում ենք, թե ինչպես նրանք համբերությամբ տարել են թուրքերին իրենց ողջ կյանքում:..Եվ շատերը չէին վնասում մահմեդականներին և մյուսներից ավելի զուսպ էին, որովհետև նրանք ասում էին. «Մենք քրիստոնյաներ ենք», տե՛ս ***Ussher C.D., Knapp G. H.,*** op. cit., p. 331.

[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 15, թ. 47: Ինչպես վկայում է Ք. Աշըրը, կազակները թուրք կանանց դիտում էին որպես օրինական ռազմավար և երբեմն ոտնձգություններ էին կատարում նրանց պատվի նկատմամբ, տե՛ս ***Ussher C. D., Knapp Grace H.,*** op. cit., p. 291.

տակություն, հարմար պահը չէր կորցնում հայերի վրա հարձակվելու համար[1]:

Աղբակի առաջնորդական փոխանորդ Վահրամ վարդապետ Կանաչյանը Գավաշի աշխարհազորայինների հետ պաշտպանության տակ վերցնելով բնակչության անվտանգությունը, ապահովում է նրանց անցումը Փեսանդաշտ: «Վարդապետը... խաչն ու Աւետարանը գետին դրած մօսինն է վերցնում և աջող կռիւ մղում թշնամու դէմ, փրկելով Կավաշի հայ բնակչութեան մեծ մասը»[2]:

1915 թ. հունիսի 22-ին գեներալ Ա. Նիկոլաևը Ա. Մանուկյանին ուղված թիվ 34 հրամանում հայտնում է ընդունված որոշման մասին և պահանջում է հայ բնակչությանը տեղեկացնել քրդերի ազատ արձակման մասին: Հրամանում թվարկվում են այն բնակավայրերը, որտեղ պետք է բնակվեն քրդերը: Ա. Նիկոլաևը հայտնում է, որ քրդերը խստագույնս զգուշացվել են, որ ցանկացած հակաօրինական գործողության դեպքում նրանց պատանդները մահապատժի կենթարկվեն, իսկ գյուղերը կոչնչացվեն: Քրդերի կյանքի և գույքի պատասխանատուն համարվում է նահանգապետը: Գեներալը միաժամանակ տեղեկացնում է, որ հունիսի 23-ից թույլատրվելու է միսիոներների մոտ ապաստանած թուրք և քուրդ կանանց ու երեխաներին վերադառնալ իրենց տները[3]: Նրանց թվաքանակը 865 հոգի էր[1]:

---

[1] Տե՛ս *Ussher C.D., Knapp G. H.*, op. cit., p. 288:

[2] «Մշակ», N 142, 3 յուլիսի 1915:

[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 153: Թուրք և քուրդ քաղաքացիական բնակչությունը գտնվում էր ռուս նշանավոր գրող Լև Տոլստոյի դստեր՝ Ալեքսանդրայի հովանավորության ներքո: Կոմսուհին կամավոր ծառայում էր Վանում տեղակայված Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի ենթակայության ներքո գտնվող Կարմիր խաչի լազարեթում: Նրանք վկայում են, որ կոմսուհին անչափ աշխույժ և հումորի տեր կին էր և չէր խորշում ցանկացած աշխատանքից, տե՛ս *Ussher C. D., Knapp Grace H.*, op. cit., p. 292-293; ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 26: Վանի նահանգապետությունը իր վրա է վերցնում նաև միսիոներների մոտ ապաստանած թրքուհիների սննդի մի մասի հոգածությունը: Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է ամերիկյան միսիոներներ Քլ. Աշըրի և է. Յարոուի 1915 թ. հունիսի 8-ին գրված նամակը, ուր նրանք խնդրում էին Արամին պարենով ապահովել իրենց հաստատություններում գտնվող թուրք և քուրդ կանանց ու երեխաներին: Նրանց կարիքների համար տրամադրվում է տաս ոչխար, տե՛ս նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 13: Միաժամանակ կոմսուհի Ա. Տոլստայայի խնդրանքով տրամադրվում է 199 ոչխար, որոնց համար նա պետք է վճարեր 597 ռուբլի, տե՛ս նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 62, թ. 17: Ինչպես վկայում է Ք. Աշըրը, Ալ. Տոլս-

Այս հրամանը միանշանակ չի ընդունվում Արամի կողմից: Նա ոչ մի առարկություն չուներ քաղաքում գտնվող թուրք կանանց և երեխաների՝ իրենց տներում բնակվելու մասին: Նրանք իրենց համաքաղաքացիներն էին, որոնց մեծ մասին ճանաչում էին և որևէ խնդիր կամ պահանջ նրանց նկատմամբ չունեին: Ավելին, նահանգապետարանի կողմից ամենայն մանրամասնությամբ հաշվառվում և գույքագրվում է նրանց ունեցվածքը՝ տունը, այգին, ցանքատարածությունը և այլն[2]:

Արամը կտրականապես դեմ էր, որ քրդական ցեղերը վերադառնան իրենց բնակավայրերը: Նա ուներ քրդերի հետ հարաբերվելու, նրանց իրական մտադրությունները կանխատեսելու ունակություն, որը ձեռք էր բերել Վանի նահանգում գտնվելու երկար տարիներին: Քրդերի հպատակությունը կեղծ էր և նպատակ ուներ միայն ժամանակ շահել: Նրանք ենթարկվում էին միայն այն ժամանակ, երբ հայերը սպառազինված էին և ի զորու էին ոչ միայն պաշտպանվել, այլև համարժեք, պատասխան հարված հասցնել[3]:

Ռուսական Պետական դումայի պատգամավոր, նշանավոր քաղաքական, պետական և հասարակական գործիչ Պյոտր Միլյուկովը ևս քննադատեց ռուսական հրամանատարության վերը նշված որոշումը[4]: Այնուամենայնիվ, նահանգապետը ստիպված է լինում ենթարկվել հրամանին: 1915 թ. հունիսի 25-ին Արամը ոստիկանությանը հայտնում է գեներալ Նիկոլաևի հրամանի բովանդակությունը և ազատ արձակված բնակչության կյանքի և գույքի անվտանգության ապահովումը դնում է ոստիկանության վրա[5]:

---

տայան էր առաջարկել գեներալ Ա. Նիկոլաևին թրքուհիներին և նրանց երեխաներին ուղարկել գյուղեր, տե՛ս ***Ussher Clarence. D., Knapp Grace H.,*** op. cit., p. 299.

[1] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 26:

[2] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, թ. 2-31:

[3] ***Ներսիսյան Ա.,*** Արամ Մանուկյանը և հայոց նոր պետականության արարումը, էջմիածին, 2007, ե, էջ 143:

[4] Տե՛ս ***Арутюнян А. О.,*** указ. соч., с. 369. ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 43: Ավելի մանրամասն տե՛ս Ասրյան Ա., Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, ԲՀԱ, 2006, N 1–2, էջ 31–36:

[5] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 163:

1915 թ. հունիսի 27-ին ոստիկանությունը հատուկ կոչով դիմում է համաքաղաքացիներին, տեղեկացնելով գեներալ Ա. Նիկոլաևի հունիսի 22-ի հրամանի մասին: Ոստիկանությունը հորդորում է հայրենակիցներին մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել «և Հայ (ըդգծումը փաստաթղթինն է- Ռ.Ս.) անուան վայել անյիշաչար և վեհանձն վերաբերմունք»[1]: Ինչպես վկայում է Ք. Աշըրը, հունիսին թուրք պատանդների մոտ լայն ծավալ է ստանում տիֆի համաճարակը[2]:

Ռուսական հրամանատարության «մեղմ» վերաբերմունքի արդյունքը երկար սպասեցնել չտվեց: 1915 թ. հուլիսի 8-ին Գործոթի (Բերկրի Կալե) գավառակապետ Հակոբ Տեր-Գրիգորյանը տագնապով հայտնում է, որ Աբաղայի դաշտի 5-6 հայկական գյուղերի դրությունը շարունակում է մնալ վտանգված, քանի որ «անձնատուր» եղած քրդերը շարունակ հարձակումներ են գործում և կողոպտում[3]:

Նահանգապետարանը ձեռնամուխ է լինում վերսկսելու հողագործական աշխատանքները: Անհրաժեշտ էր հավաքել արդեն հասած ցորենը և հացահատակային այլ կուլտուրաները: Վանի նահանգը, հատկապես Արճեշի գավառը հարուստ էր ցորենով: Թ. Նազարբեկյանը վկայում է, որ Արճեշ տանող ճանապարհին հանդիպում են ցորենի հարուստ ցանքատարածություններ: Դրանք նույնիսկ զարմացնում են կուբանցի զինվորներին, որոնք ընդունում են, որ Վանի շրջանը հացաբույսերով ավելի հարուստ է, քան Կուբանը[4]:

Հունիսի 24-ի շրջաբերական նամակում նկարագրելով նահանգում ստեղծված վիճակը, Արամը հայտնում է. «Ամբողջ Վասպուրականը հիւանդանոցի է վերածւած: Տուն չկայ, որ մէկէ աւելի հիւանդ չունենայ»[5]: Նրա ունցած տեղեկությունների համաձայն, հատկապես ծանր է իրադրությունը Աղթամարի շրջանում, ուր կուտակվել է 15 հազարից 20 հազար մարդ: Նրանցից առնվազն երկուսից երեք

---

[1] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 75:
[2] Տե՛ս *Ussher Clarence. D., Knapp Grace H.,* op. cit ., p. 296.
[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 26, թ. 12: Հ. Տեր Գրիգորյանը գավառակապետ էր նշանակվել հունիսի 17-ին, տե՛ս նույն տեղում, գ. 14 մաս II, թ. 47 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 16:
[5] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 219, թ. 9, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 101 շրջ.:

հազարը տառապում են զանազան հիվանդություններով, գլխավորապես տիֆով:

Թիմարի բնակչությունը ևս գտնվում է անտանելի կացության մեջ: Իսկ Արճեշում «մօտ 5 հազար ժողովուրդ կայ անտէր, անտիրական ու հիւանդ»: Արամն անհրաժեշտ է գտնում ուղարկել ոչ միայն բժիշկներ, այլև կազմակերպել բնակչության պարենի ապահովումը[1]: Հունիսի 23-ին նահանգապետը և շրջանային վարչությունը հատուկ կոչով դիմում են հայրենակիցներին, խնդրելով օժանդակել Վասպուրականի բնակչությանը:

Հաշվառվում են քաղաքում հայերին պատկանող մրգատու այգիները: Նրանց թվաքանակը հասնում է 1400-ի, սակայն մշակվում են միայն 625-ը: Քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում, որպեսզի անխնամ մնացած այգիները ևս մշակվեն և այդ նպատակով առաջարկում է վարձակալման ցածր սակագներ: Անխնամ են մնում նաև թուրք բնակչությանը պատկանող երկու հազարից ավելի այգիները[2]:

Մայիսի 28-ին Վանի առաջնորդական փոխանորդ Ե. վարդապետ Ներկարարյանը կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղված նամակում նկարագրում է քաղաքի և նահանգի եկեղեցիների անմխիթար վիճակը: Նրանց ճնշող մեծամասնությունը ավերվել և հրկիզվել էր թուրքերի և քրդերի կողմից: Վարդապետը հայտնում է, որ կա բավական քանակությամբ շինանյութ, սակայն չկա գումար, որպեսզի վճարվի եկեղեցիները վերականգնող և վերանորոգող վարպետներին: Խնդրում է տրամադրել որոշ գումար այդ նպատակի համար: Բացի այդ խնդրում է ուղարկել եկեղեցական արարողությունների համար ժամագիրք, եկեղեցական անոթներ և ամենակարևորը՝ մյուռոն[3]:

Ա. Ասրյանի գնահատմամբ «Արամի մտածված, հետևողական միջոցառումների շնորհիվ Վանի նահանգապետությունը օր-օրի ոտքի էր կանգնում. կյանքը Վան-Վասպուրականում զարթոնք էր ապրում:... Հաջողություններն այնքան ակնհայտ էին, որ առանց չափազանցության կարելի է Վանի նահանգապետությունն անվանել հա-

[1] Նույն տեղում, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 101 շրջ.:
[2] Վան-Տոսպ, 1916, N 30, 19 յունիսի, էջ 14:
[3] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 534, թ. 73–74:

յոց նորագույն պետականության նախատիպ»[1]: Կարծում ենք, որ միայն Արամով չէր պայմանավորված վերը նշվածը: Նրանում դեր ունեին վանեցիները և հատկապես նահանգային իշխանական մարմիններում ծառայության անցած արևելահայերը, որոնցից շատերն ունեին վարչական աշխատանքի փորձ և նվիրյալներ էին:

Ա-Դոն հետևյալ կերպ է նկարագրում Վանի հայկական իշխանության գործունեությունից ստացած տպավորությունը. «Ամենքը – այդ տեղի (նահանգապետարանի – Ռ. Ս.) աշխատողները՝ ծանրաբեռնված աշխատանքներով գրում էին, հաշվում, լսում, պատասխանում, բավարարում էին բազմաթիվ դիմողներին ու խնդրատուներին և այդ բոլորը կատարում էին անձանձրույթ, անտրտունջ և այն գիտակցությամբ, որ իրենք կոչված էին ծառայելու մեկ վեհ գաղափարի»[2]:

Սակայն Վանի հայկական իշխանությանը վիճակված չէր շարունակել իր գործունեությունը: Հուլիսի 11-ին սկսում է IV կորպուսի զորամասերի նահանջը: Դա պատճառաբանվում է օսմանյան գերակշիռ ուժերի լայնածավալ հարձակումով: Հուլիսի 14-ին Ա. Մանուկյանը դիմում է գեներալ Ա. Նիկոլաևին, խնդրելով քաղաքի պաշտպանության համար թողնել որոշակի քանակությամբ զենք, զինամթերք և հրետանի: Գեներալը հավաստիացնում է նահանգապետին, որ բանակը մտադրություն չունի նահանջել Վանից: Նա, սակայն, խորհուրդ է տալիս Արամին՝ կանանց ու երեխաներին տեղափոխել Կովկաս[3]: Այնուամենայնիվ, Արամը փորձում է դիմել նախազգուշական միջոցների: Հուլիսի 14-ին ժամը 16-ին Երամյան դպրոցում հրավիրվում է ապրիլ-մայիս ամիսների ինքնապաշտպանական կռիվների մասնակիցների և տղամարդկանց ժողով[4]: Արամի հրամանով սկս-

---

[1] *Ասլյան Ա.*- Արամ Մանուկյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 11:

[2] Հիշողություններ, էջ 190: «Հովիտ» թերթի թղթակիցը լինելով Վանում, ձեռնպահ է մնում հերոսամարտի նկարագրությունից, քանի որ դեպքերի բոլոր մանրամասներն արձանագրվում էին Ա-Դոյի կողմից, պատճառաբանելով, որ «Այս ամբողջ անցքի մանրամասն նկարագիրը գրի էր առնում հրատարակելու Ա-Դօն, ուստի եւ ավելորդ եմ համարում հատուկտոր տեղեկութիւններ տալ», տե՛ս «Հովիտ», Թիֆլիս, 1915, N 39, 11 հոկտեմբերի, էջ 609:

[3] *Հարությունյան Ա. Հ.*, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ԼՀԳ, 2002, N, 2, էջ 47–48:

[4] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 22:

վում է նահանգապետարանի ունեցած զենքի բաժանումը բնակչությանը[1]:

Այդ օրերին Վանում գտնվող Ա-Դոն իր ծառայությունն է առաջարկում Նիկոլ Աղբալյանին, որը նրան հանձնարարում է Վանի եկեղեցիներից և վանքերից հավաքված ձեռագրերի մի մասը տեղափոխել էջմիածին: Ա-Դոն, Հակոբ Տեր-Հակոբյանը և Իսահակ Տեր-Ղազարյանը շտապում են նավահանգիստ, որտեղ կայանված նավից սայլ են տեղափոխում Աղթամարից բերված մոտ 200 ձեռագրեր և երկարատև ճանապարհորդությունից հետո հուլիսի 24-ին քանկագին բեռը հասցնում են էջմիածին[2]:

Հուլիսի 18-ին գեներալ Ա. Նիկոլաևը պաշտոնապես հայտարարեց, որ Բերկրիի գիծը տարհանվողներին տրվում է երեք օր[3], որից հետո, հավանաբար, զորքերն էին անցնելու: Դա էլ ավելի ուժեղացրեց խուճապը:

Արամը հեռագրով դիմում է Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Ն. Յուդենիչին, խնդրելով Վանի պաշտպանության համար թողնել անհրաժեշտ քանակությամբ զենք և զինամթերք: Հեռագիրը մնում է անպատասխան[4]: Տեղեկանալով նահանջի մասին, Վարդանը դիմում է Ա. Նիկոլաևին, խնդրելով պարզաբանել, թե ինչու՞ է նա առանց հայտնելու՝ նահանջում: Վերջինս պատճառաբանում է, որ բնակչությունը տեղեկանալով նահանջի մասին, կխանգարի զորքին անարգել հեռանալ, քանի որ գաղթականների զանգվածը կփակի միակ ճանապարհը[5]:

Ինչպես վերհիշում է Ս. Չենտիկյանը, նահանջի հրամանը խուճապի է մատնում բնակչությանը. «Ժողովուրդը բոլորովին անակնկալի եկավ: Հիշում եմ, մի մարդ (Համազասպի եղբայրը՝ Հրաչյան – Ռ. Ս.) կպոռար. «Ժողովու՛րդ, մենք Ռուսաստան երթանք մուրացկան

---

[1] «Վան-Տոսպ», 1915, N 5, դեկտեմբեր 27, էջ 3:
[2] *Ա-Դո*, Իմ հիշողությունները, Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ, էջ 210:
[3] «Վան-Տոսպ», 1915, N 5, դեկտեմբեր 27, էջ 2:
[4] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 27:
[5] Նույն տեղում, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 5 շրջ.:

պիտի դառնանք, լավ է մեր տան մեջ պատվով մեռնենք, քան թե գաղթական սոված մեռնենք»[1]:

Ինչպես նշեցինք, նահանջի վերաբերյալ հրամանը տրվել է 1915 թ. հուլիսի 11-ին, իսկ Վանի հայկական ղեկավարությունը այդ մասին պաշտոնապես տեղեկացվեց միայն հուլիսի 18-ին[2]: Նշված ժամանակահատվածը՝ յոթ օր, բավական էր, որպեսզի քաղաքի հայությունը որոշակի քայլեր ձեռնարկեր Վանի պաշտպանության համար: Արարատյան և I դրուժինաները կարող էին լուրջ աջակցություն ցույց տալ: Սակայն ռուսական հրամանատարությունը չէր ցանկանում որևէ կերպ աջակցել հայ բնակչությանը: Ավելին, քաղաքում թողնված ռազմամթերքի և հանդերձանքի մի մասը, որը Բայազետի ջոկատը չկարողացավ իր հետ տանել՝ ոչնչացվեց, իսկ մի մասն էլ ընկավ թշնամու ձեռքը: Միայն այն բանից հետո, երբ Բայազետի ջոկատը և կամավորներն անցան Բերկրին, տրվեց բանավոր հրաման Վանի պաշտպանությունը կազմակերպելու մասին[3]: Նահանջի հրամանը տարակուսանք և շփոթություն է առաջացնում նաև ռուս զինվորականների շրջանում:

Ինչպես նշում է Աշոտ Մելքոնյանը, արդեն հիշատակված Ֆ. Ելիսեևի հուշերը նոր լույս են սփռում «այնպիսի մի կնճռոտ խնդրի վրա, որպիսին 1915 թ. հուլիսի սկզբին Վանից ռուսական զորքերի նահանջն էր, որի արդյունքում Վասպուրականի հայությունը բռնեց գաղթի աղետալի ուղին և ունեցավ հսկայական կորուստներ»[4]: Լեռյի գնահատմամբ, Վանի նահանջը առեղծվածային էր և «վո՛չ վոք չէր տեսնում իրական, ճշմարիտ լուրջ հիմքեր և այդ պատճառով ամեն-

---

[1] Նույն տեղում, գ. 22, թ. 37:

[2] Հուլիսի 14-ին քաղաքի Երամեան վարժարանում հրավիրվում է խորհրդակցություն: Մասնակցում էին ապրիլյան ինքնապաշտպանության հազարից ավելի մասնակիցներ: Նրանցից կազմվում է 100 հոգուց բաղկացած խումբ: Վերջինս ուղղվում է Մոկս և Շատախ՝ տեղի բնակչությանն օժանդակելու համար: Դա, սակայն, չի հաջողվում, քանի որ բնակչությունը հեռանում էր իրենց բնակավայրերից, տե՛ս *Յարությունյան Ա. Հ.*, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ԼՀԳ, 2002, N 2, էջ 47:

[3] Տե՛ս *Шатирян Р.*, указ. статья, N 13, 26 марта 1917, с. 7.

[4] *Մելքոնյան Ա.*, Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեև, «Կազակները Կովկասյան ճակատում 1914-1917», ԲՀԱ, 2004, N 1, էջ 176:

քի համար այդ շարժումը կասկածելի յեր...»[1]: Ավետիս Հարությունյանի բնորոշմամբ. «Արամ Մանուկյանն իր ժամանակի քաղաքական այն հեռատես և բանիմաց գործիչներից էր, որ զգում էր ցարիզմի հետադիմական զինվորական հրամանատարության քաղաքականությունը: Նա լավ էր հասկանում, թե ինչ նպատակ էր հետապնդում ռուսական նահանջը, և թե այն ինչ հետևանքներ կունենար արևմտահայերի և մասնավորապես վասպուրականցիների համար»[2]:

Վարդանի վկայությամբ. «Խեղճ Արամը ամբողջ ժամանակ ծին քշում էր այս ու այն կողմը: Շատերը կային և՛ ջահել և՛ առողջ, ծիով էին գնում կամ մի ուրիշ գրաստի վրա նստած և շատ ծերունիներ, պառավներ ու հոգնածներ կային, որոնք չէին կարողանում գնալ: Արամը առողջներին, ջահելներին իջեցնում և հոգնածներին, պառավներին էր նստեցնում»[3]: Գեներալ Իվան Տրուխինի կազակները, չնայած ստեղծված ծանր իրավիճակին, օգնում էին գաղթականներին, հատկապես երեխաներին[4]:

Ռուսական հրամանատարությունը չաջակցեց քաղաքը պաշտպանելու ցանկություն հայտնած հայերին: Վանի հայությունը, որը մեկ ամիս պայքարել էր թշնամու զգալի ուժերի դեմ, չստացավ որևէ օժանդակություն: Հայերին տրամադրելով անհրաժեշտ քանակությամբ զենք և զինամթերք, ռուսական հրամանատարությունը Վանը կվերածեր ուժեղ ամրացված պաշտպանական ամրության: Քաղաքում կարող էին մնալ կամավորական որոշ քանակությամբ ուժեր: Վանն իր վրա կգրավեր հակառակորդի զգալի ուժեր: Դա հնարավորություն կտար ռուսներին կանոնավոր կերպով նահանջել, զերծ մնալ ավելորդ մարդկային ու նյութական կորուստներից և վերախմբավորել զորամասերը, իրականացնել թուրքական ուժերի շրջապատումը և ջախջախումը:

Ռ. Շաթիրյանի համոզմամբ, խմբերի և վանեցիների ուժերով հնարավոր էր կազմակերպել քաղաքի պաշտպանությունը: Նա

---

[1] *Լեո,* Անցյալից, էջ 335:
[2] *Հարությունյան Ա. Հ.,* Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, ԼՀԳ, 2002, N 2, էջ 50:
[3] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 8:
[4] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 27:

գտնում էր, որ հինգ հազար հոգուց կազմված ջոկատն ի զորու էր դիմագրավել հակառակորդին[1]: Իսկ գեներալ Ե. Մասլովսկին ամբաստանում է վասպուրականցի գաղթականներին, որ նրանց հսկայական զանգվածը հնարավորություն չտվեց IV բանակային կորպուսի զորամասերին դիրքեր գրավել Կլիչ-Գյադուկ լեռնանցքի շրջանում[2]:

Կարելի է ենթադրել, որ Վանի հայկական իշխանությունը տեղյակ էր ռուսների հնարավոր նահանջի մտադրության մասին, ուստի Արամն աշխատում էր ամրապնդել տեղի ոստիկանական ուժերը, փորձելով աստիճանաբար հիմք դնել հայկական զինված կազմավորումների ստեղծմանը: Վանում հայերը չէին կարող բացահայտ ծեռնամուխ լինել զինվորական ստորաբաժանումների ստեղծմանը, ուստի այն ճանապարհը, որով նրանք կարող էին նշվածը իրականացնել՝ ոստիկանությունն էր: Աստիճանաբար, քայլ առ քայլ, Արամը ձեռնամուխ էր լինում կանոնավոր բանակային ստորաբաժանումների ստեղծմանը: Ցավոք, նրա ունեցած ժամանակը քիչ էր. Ա. Մանուկյանը և նահանգապետության մյուս գործիչները չհասցրեցին իրականացնել իրենց մտադրությունը: Ապարդյուն անցան Արամի ջանքերը քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար: Խուճապը համակել էր բոլորին: Հայ բնակչության նահանջի ապահովումն իրականացնում էին հիմնականում հայ կամավորները և ռուսական որոշ զորամասեր[3]: Գաղթականները հատկապես ծանր կորուստներ ունեցան հուլիսի 24-ից 25-ը Բերկրիի ձորում: Քրդական հրոսակախմբերը հարձակվեցին անպաշտպան և անկազմակերպ գաղթականների վրա:

Պատմաբան Էդվարդ Դանիլյանը հետևյալ փաստն է առանձնացրել. ռուս-ավստրիական ռազմաճակատում հրամանատարությունը վաղօրոք զգուշացնում էր բնակչությանը նահանջի մասին և հոգում էր, որպեսզի ճանապարհին նրանց համար կազմակերպվեն համապատասխան ծառայություններ՝ սննդակայաններ, բժշկական

---

[1] Տե՛ս *Шатирян Р.*, указ. статья, 1917, N 13, 26 марта, с. 7.
[2] Տե՛ս *Масловский Е. В.*, указ. соч., с. 176–177.
[3] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, թ. 158: *Հարությունյան Ա. Հ.*, Վան-Վասպուրականի 1915 թ. հուլիսյան գաղթը, ԼՀԳ, 2002, N, 2, էջ 54:

կետեր և այլն: Իսկ ինչ վերաբերվում է ռուս-թուրքական ռազմաճակատին, ապա այստեղ նահանջը կատարվում էր գաղտնի և բնակչությունը չէր տեղեկացվում այդ մասին: Պատմաբանը հետևյալն է գրում. «Մինչդեռ ում ում, գոնե ցարական իշխանություններին քաջ հայտնի էր թե ինչ է սպասելու հայերին նահանջից հետո ...»[1]:

Վանի հայկական իշխանությունը հայոց պետականության վերականգնման առաջին փորձն էր XVIII դարում Սյունիքում և Արցախում հայկական մելիքությունների կորստից հետո: Վասպուրականի նահանգապետության փորձն ապարդյուն չանցավ: Այն օգտագործվեց Ա. Մանուկյանի կողմից, երբ նա 1917 թ. վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավարն էր, 1918 թ. մայիսին Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից և նույն թվականի հուլիսի 24-ից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի առաջին նախարար:

## բ. Գեներալ-նահանգապետության հիմնումը: Ռուսական զորքի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի գաղութացման խնդիրը

Պատերազմական շրջանում ռուսական զորքերի դաշտային ղեկավարման կանոնադրությամբ նախատեսված էր՝ պատերազմի իրավունքով գրավված տարածքներում, անհրաժեշտության դեպքում կազմակերպել զինվորական գեներալ-նահանգապետություն: Վերջինիսի վարչությունը կազմավորվելու էր ռազմական հաստիքների հիման վրա և ունենալու էր իր հատուկ տնտեսական մասի վարիչ՝ գանձապահ և հատուկ հաստատություն՝ քաղաքացիական բնակչության հետ հարաբերվելու, հարկերը հավաքելու, տեղական վարչակարգը, նաև զանազան պարհակների կատարումը վերահսկելու համար: Գրավված տարածքները ղեկավարելու համար նշա-

[1] *Դանիելյան Է. Լ.,* Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914–1922 թթ. (Շարժը, կացությունը, թվակազմը). Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996, էջ 43:

նակվում են գեներալ-նահանգապետեր, նահանգապետեր, զինվորական քաղաքապետեր, մարզերի (обласmu), օկրուգների (գավառակների) և տեղամասերի (участки) պետեր:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում ռուսական հրամանատարության կողմից վերը նշված հաստատությունները կազմակերպվում են Ավստրո-Հունգարիայից, իսկ 1916 թ.՝ Օսմանյան կայսրությունից գրավված տարածքներում: 1915 թ. ապրիլի 5-ի նամակում Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Յուդենիչը մի շարք գործնական առաջարկներ է անում Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին Արևմտյան Հայաստանի գաղութացման վերաբերյալ, որին փոխարքան տալիս է իր համաձայնությունը: Գեներալի ուշադրության կենտրոնում հայտնվել էր Ալաշկերտի հովիտը, որը հարուստ էր խոտհարքերով: Նա առաջարկում է Ռուսաստանի կենտրոնական նահանգներից հովիտ ուղարկել հնձվորների խմբեր, որոնք կհնձեն ոչ միայն խոտհարքերը, այլև հացահատիկի արտերը: Ն. Յուդենիչը գտնում է, որ հնձվորները կարող են լինել իրենց նահանգների ներկայացուցիչներ, որոնք վերադառնալուց հետո կկազմակերպեն վերաբնակիչների տեղափոխումը Ալաշկերտի հովիտ[1]:

Վանի նահանջից հետո ռուսական իշխանությունների առջև խնդիր է առաջանում, թե ինչպես և ինչ ձևերով պետք է կառավարվեն նորանվաճ տարածքները: Իշխանություններն այլևս որևէ ցանկություն չունեին բացառապես հայերից բաղկացած կառավարման մարմին կազմելու: Ռուսական կառավարությունը չի շտապում Արևմտյան Հայաստանի գրավված վայրերում ռուսական վարչակարգ հիմնելու: Նման քաղաքականությունն ուներ իր պատճառները.

1. Ռուսները դեռևս վստահ չէին, թե կարող են նույն հաջողությամբ շարունակել առաջխաղացումը, քանի որ Կովկասյան բանակի սակավ մարտակազմն ի վիճակի չէր նման տարածք վերցնել իր հսկողության ներքո:
2. Հայտնի չէր, թե ինչպիսին կլիներ դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումը ռուսական հետագա

[1] *Նույն*, նշվ. աշխ., էջ 321–323, տե՛ս նաև *Арутюнян А. О.*, указ. соч., с. 341.

առաջխաղացման և տեղում իշխանության մարմինների կազմակերպման վերաբերյալ:

1915 և 1916 թթ. հողաշինարարության և երկրագործության գլխավոր կառավարիչ Ալեքսանդր Կրիվոշեյինը պաշտոնապես դիմում է արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին, իր առաջարկներն է ներկայացնում Օսմանյան կայսրությունից գրավված հողերի հետագա ճակատագրի մասին: Նա օկուպացված շրջանները բաժանում է չորս գոտիների.

1. Սևծովյան ափ:
2. Արաքսի և Եփրատի վերին հոսանք, որն Ա. Կրիվոշեյինի բնութագրմամբ. «սովորաբար կոչվում է Հայաստան»:
3. Պարսկական սահմանի երկայնքով գտնվող շրջաններ:
4. Կասպից ծովի հարավային ափ, Գիլան և Մազանդարան[1]:

Էրզրումի գրավումը որոշակի հստակեցնում է իրադրությունը: Հողագործության նախարար Ալեքսեյ Բոբրինսկին իր ենթակաների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նոր հնարավորություններ են ստեղծվել ռուս ժողովրդի համար դեպի Արևելք առաջանալու: Նա միաժամանակ նշում է, որ պետք է հաշվի առնվեն տեղաբնիկների հողային խնդիրները: Նախարարը, շտապում է ավելացնել, որ ռուսական զենքով և արյունով գրավված տարածքները չեն կարող ամբողջությամբ տրվել տեղաբնիկներին: Այդ տարածքների զգալի մասը անհրաժեշտ է տրամադրել ռուս մարդկանց և առաջին հերթին պատերազմի մասնակիցներին: Ա. Բոբրինսկին տեղեկացնում է, որ պատրաստվում է դիմել Կովկասի փոխարքային, որպեսզի վերջինս արտոնի Օսմանյան կայսրությունից գրավված տարածքներում հետազոտություններ կատարել՝ պարզելու, թե որ մասերում կարող են բնակեցնել վերաբնակիչներին[2]:

1916 թ. փետրվարի 26-ին Ա. Բոբրինսկուն ուղղված զեկուցագրում նույն նախարարության լիազոր Պոտապովսկին հայտնում է, որ ռուսական զորքերի գրավված տարածքներում ոչնչացվել է տեղաբնիկ հայությունը և որոշ անձինք քայլեր են ձեռնարկում այդ շրջան-

[1] Տե՛ս *Арутюнян А. О.*, указ. соч., с. 339-340.
[2] ՀԱԱ, ֆ. Հավաքածու, CA-74, ֆ. 391, g. 6, գ. 305, թ. 6–7:

ներում հողեր ձեռք բերելու: Լիազորն առաջարկում է շտապ հսկողության տակ վերցնել էրզրումի, Վանի և Բաղեշի նահանգների հողերը, որոնք հնարավորություն կտան հիմնել «գաղութացման հիանալի ֆոնդ»[1]:

Մարտի 10-ին փոխարքան Հողագործության նախարարին ուղղված գրությունում հայտնում է, որ ինքը տալիս է իր համաձայնությունը նվաճված շրջանները նախարարության աշխատակից գործուղելու մասին: Սակայն գտնում է, որ տարածքների հետազոտումը պետք է սկսել միայն ռազմաքաղաքացիական վարչության հիմնումից հետո: Ն. Ռոմանովը միաժամանակ տեղեկացնում է, որ հրամայել է թույլ չտալ նվաճված տարածքներում հողի տիրապետման ցանկացած փորձ[2]:

Մայիսի 10-ին Կովկասում Հողագործության նախարարի լիազորի օգնական Ֆեոդոր Շիմանովսկին կազմում է երկու հրահանգ: Առաջինը նախատեսում էր հետազոտել ռուսական բանակի կողմից Օսմանյան կայսրությունից գրավված տարածքների հովիտները՝ պարզելու նրանց գյուղատնտեսական հնարավորությունները[3] և երկրորդը՝ թե ինչ կերպ պետք է ուսումնասիրել և ինչ կարգով անցկացնել քարտեզի վրա հողագործության և անասնապահության համար պիտանի հողերն ու արոտավայրերը[4]:

Հողագործության նախարարությունը ռուս-թուրքական ռազմաճակատ է գործուղում վերաբնակեցման վարչության պետի օգնական Ալեքսեյ Տատիշչևին[5]: Որպեսզի նման պատասխանատու աշ-

---

[1] ՀԱԱ, ֆ. Հավաքածու, CA-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 39:
[2] Նույն տեղում, թ. 8:
[3] Նույն տեղում, թ. 135–136:
[4] Նույն տեղում, թ. 134 և շրջ.:
[5] Հետագայում՝ վտարանդիությունում Ա. Տատիշչևը գրում է հուշեր, որտեղ անդրադառնում է նաև Արևմտյան Հայաստանի գաղութացման խնդիրներին: Նա խելահեղություն է համարում պատերազմի պայմաններում գաղութացման խնդիրը օրակարգի մեջ դնելը: Ա. Տատիշչևը գրում է. «Հայաստանի (Արևմտյան Հայաստանի-Ռ.Ս.) հետ կապված, ինչ որ մեկը նետեց նույնիսկ մի միտք՝ «եփրատյան կազակության» կազակերպման մասին, տե՛ս *Татищев А. А.*, Земли и люди. В гуще переселенческого движения (1906–1921), Москва, 2001 (ВМБ. Серия "Наше недавнее". Вып. 9.), с. 234. Աստիճանավորի կարծիքով, գաղութացման համար առավել հարմարը Ալաշկերտի հովիտն էր, տե՛ս նույն տեղում, էջ 237: Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ այս տողերը չեն

խատակցի հայտնվելը գրավված տարածքներում ասեկոսների առիթ չտա, որոշվում է, որ նա կներկայանա որպես Կարմիր խաչի ռուսական ընկերության լիազոր[1]:

Ռուսական իշխանությունները սկսում են գործել այն բանից հետո, երբ հայտնի է դառնում 1916 թ. մայիսի 16-ին բրիտանա-ֆրանսիական համաձայնագրի մասին, ըստ որի երկու տերությունները Օսմանյան կայսրությունը բաժանում են ազդեցության գոտիների: Դրանից անմիջապես հետո, մայիսի 22-ին հիմնվում է «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրաված Թուրքական Հայաստանի և այլ մարզերի զինվորական գեներալ-նահանգապետի վարչությունը» (Արևմտյան Հայաստանի գեներալ-նահանգապետություն), որը գործում է մինչև 1917 թ. ապրիլի 27-ը: Նահանգապետն անմիջականորեն ենթարկվում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին: Սկզբնապես գրավված տարածքները բաժանվում են տասնմեկ վարչական միավորի, որոնք իրենց հերթին կազմված էին երկու մարզից և ինը օկրուգից: Իսկ 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին Օսմանյան կայսրությունից գրավված Արևմտյան Հայաստանի շրջանները բաժանվում են 29 օկրուգի[2]: Բացի այդ, գեներալ-նահանգապետի վարչությունը կազմված էր՝ շտաբից, գրասենյակից, ռազմաոստիկանական,[3] պահակային, ռազմասանիտարական, ռազ-

---

համապատասխանում իրականությանը: Փաստաթղթերը վկայում են, որ կար ռուսական կառավարության, այդ թվում ցար Նիկոլայ II-ի հստակ հրամանը՝ Արևմտյան Հայաստանը ռուսներով ու կազակներով վերաբնակեցնելու մասին: Ա-Դոյի գնահատմամբ, 1915-1916 թթ. ռուսական կառավարությունն իրականացնում էր Լոբանով-Ռոստովսկու տխրահռչակ ծրագիրը՝ «Հայաստանն առանց հայերի», տե՛ս *Ա-Դո,* Ռուսական ցարերը և հայկական հարցը, էջ 149:

[1] ՀԱԱ, ֆ. Հավաքածու, CA-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 11: Հարկ ենք համարում նշել, որ հայ հասարակությունից աննկատ չմնաց Ա. Տատիշչևի գործուղման իրական նպատակները: Կադետական "Речъ" թերթի թղթակիցն ընթերցողներին տեղեկացնելով պաշտոնյայի ժամանման մասին, գրում է, որ նա գաղթականական վարչության պետի օգնական և ժամանել է Արևմտյան Հայաստանի հողային խնդիրներին ծանոթանալու նպատակով, տե՛ս «Արև», 1916, N 170, 4 օգոստոսի:

[2] Տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 359.

[3] Ավելի մանրամասն տե՛ս *Хутарев-Гарнишевский В. В.,* Отдельный корпус жандармов и Департамент полиции МВД: органы политического сыска накануне и в годы Первой мировой войны, 1913-1917 гг. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук,

մասնասնաբուժական, վարչություններից և տեխնիկական բաժանմունքից, հարկային և հսկիչի վարչություններից:

1916 թ. հունիսի 5-ին Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ-համհարզ Միխայիլ Ալեքսեևը ստորագրում է թիվ 739 գաղտնի հրամանը՝ «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի ժամանակավոր վարչության կանոնադրությունը»[1]:

Ըստ կանոնադրության, գրավված վայրերում հիմնվում է.

1. ժամանակավոր գեներալ - նահանգապետություն՝ զինվորական-գեներալ նահանգապետի գլխավորությամբ:
2. Գեներալ-նահանգապետի վարչության ենթակայության ներքո անցնում են ռուսական պետական սահմանից մինչև բանակային կորպուսների գրաված տարածքները, որը սահմանվում է Կովկասյան բանակի հրամանատարի կողմից:
3. Գեներալ-նահանգապետությունը բաժանվելու է մարզերի և օկրուգների, որոնք ղեկավարելու են զինվորական նահանգապետները և կորպուսների հրամանատարները:

ժամանակավոր վարչության հիմնական նպատակն էր գրավված տարածքներում պատշաճ կարգուկանոնի հաստատումը, տեղաբնիկների կյանքի, գույքի պաշտպանությունը, կրոնական և քաղաքացիական ազատությունների ապահովումը, հնարավոր պայմանների ստեղծումը խաղաղ աշխատանքի համար և այլն[2]:

Հաստատվում են նահանգապետության զանազան հաստատությունների աստիճանավորների ժամանակավոր հաստիքները և բյուջեն[3]: Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, ժամանակի

---

Москва, 2011, с. 10 http://www.hist.msu.ru/Science/Disser/Hutarew Garnis hevski .htm

[1] ***Азнаурян С.,*** Политика Временного правительства на Кавказе, Обозреватель-Observer, Москва, 2007, N 5, с. 119 www.su/observer/N5_2007/index.htm Հրամանն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ. 502, ց. 1, գ. 108, թ.1-15:

[2] Տե՛ս ***Азнаурян С.,*** указ. статья, с. 120.

[3] ՀԱԱ, ֆ. 502, ց. 1, գ. 108, թ.15 շրջ.-19 շրջ.: 1916 թ. սեպտեմբերի 17-ին Կովկասի փոխարքայի զինվորական հարցերով օգնական գեներալ Նիկոլայ Յանուշկևիչը փոխարքային ուղղված զեկուցագրում առաջարկում է որոշ փոփոխություններ մտցնել «ժամանակավոր կանոնադրության» մի շարք հոդվածներում,

մամուլը, ժամանակակիցների հուշերը, մի շարք պատմաբանների հետազոտությունները, ռուսական գեներալ-նահանգապետությունն իրականացնում էր ընդգծված գաղութային քաղաքականություն[1]:

1916 թ. հունիսի 8-ին Նիկոլայ II-ը հաստատում է Արևմտյան Հայաստանի կառավարման ժամանակավոր կանոնադրությունը[2]: Զինվորական գեներալ- նահանգապետ է նշանակվում գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պեշկովը: Գեներալ- նահանգապետության վարչության շտաբի պետն էր գեներալ Ռիչարդ Տերմենը:

Ն. Պեշկովին պատահական չէին ընտրել: Նա մասնակցել էր 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, աչքի էր ընկել մարտական գործողությունների ժամանակ: 1883 թ. եղել է Ռիզեյի ռուսական փոխհյուպատոսը, իսկ 1886–1889 թթ. Կ. Պոլսի ռուսական դեսպանատան զինվորական գործակալը (ռազմական կցորդ): Սա նշանակում է, որ նա կատարել է հետախուզական ծառայություն և ամենայն մանրամասնությամբ գիտեր տարածաշրջանը, այնտեղ բնակվող ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայերի ծանր դրության մասին: Հետագայում Ն. Պեշկովն զբաղեցրել է տարբեր պաշտոններ, որոնցից կառանձնացնենք 1906 թ. փետրվարից մինչև 1908 թ. հոկտեմբերի 6-ը Խարկովի նահանգապետի պաշտոնը: Այդ նշանակումը կատարվեց այն ժամանակ, երբ Ռուսաստանում ընթանում էր Առաջին հեղափոխությունը և տեղում հարկավոր էր հավատարիմ մի անձնավորություն, որը կկարողանար ճնշել ժողովրդական ելույթները: Ն. Պեշկովն ակտիվ մասնակցություն է ունեցել միապետական շարժմանը: 1912-ից մինչև 1913 թթ. վարել է «Ռուս ժողովրդի միություն» միապետական կազմակերպության նախագահի պաշտոնը:

Ինքնին հասկանալի է, որ Ն. Պեշկովին նման պատասխանատու պաշտոն վստահելը նշանակում էր, որ նա պետք է տեղում իրականացնի ընդգծված հակահայկական քաղաքականություն և պայմաններ ստեղծի Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքներում, ինչ-

---

որը բխում է Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի պետ Մ. Ալեքսեևի հրամանից, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 28:

[1] *Արզումանյան Մ.,* Հայաստան, էջ 288:

[2] Ավելի մանրամասն տե՛ս *Арутюнян А. О.,* указ. соч., с. 357-360.

պես օրինակ Ալաշկերտի հովիտը ռուս վերաբնակիչներով բնակեցնելու համար[1]: Սկսած 1916 թ. փետրվարից, Ռուսաստանի տարբեր գավառներից ստացվում են դիմումներ Դիադինի օկրուգում բնակություն հաստատելու համար: Ցանկացողների սոցիալական կազմը տարբեր էր, սկսած ազնվականներից, աստիճանավորներից մինչև գյուղացիներ ու կազակներ[2]:

Սկզբնական շրջանում Կովկասի փոխարքայությունը փորձում է սեփական ուժերով ուսումնասիրել գրավված Արևմտյան Հայաստանը: 1916 թ. սկզբին Թիֆլիս է հրավիրվում Գանձակի նահանգի գյուղատնտես Ստեփան Կամսարականը: Փոխարքայության հողային բաժանմունքի գործերի վարիչ Վ. Սոկոլովը փոխարքայի անունից առաջարկում է ուսումնասիրություններ կատարել սահմանամերձ շրջաններում՝ Բասենում, Բայազետում և Ալաշկերտում, պարզելու նրանց տնտեսական վիճակը: Պաշտոնյան, որպես գաղտնիք, հայտնում է, որ նշված տարածքները նախատեսվում են բնակեցնել ռուս վերաբնակիչներով[3]:

Կովկասյան IV բանակային կորպուսի 1916 թ. հունիսի 19-ի N 177 հրամանի §9-ի համաձայն թույլ է տրվում Դիադինի օկրուգում զինծառայող ռուսներին ստանալ հողաբաժին՝ այգու, բանջարանոցի և տուն կառուցելու համար[4]: Իսկ հուլիսի 24-ի N 549 հրամանով գեներալ-նահանգապետն արգելեց Արճեշի օկրուգի պետին թույլատրել անցաթուղթ ունեցող հայ փախստականներին վերադառնալ հարազատ վայրերը: Նման արգելքը պատճառաբանվում է նրանով, թե իբր փախստականների անվան տակ նորանվաճ հողերն են անց-

---

[1] Նման առաջարկ եղել էր դեռևս 1877 թ.: Կազակային հարյուրապետ Նասլեդիշևն ուսումնասիրելով նորանվաճ Կարսի և Էրզրումի նահանգները, եկել էր այն եզրակացության, որ նշված տարածքները պետք է շտապ բնակեցնել կազակներով, քանի որ չարժեր այդքան արյուն թափել, որպեսզի հպատակեցնեն թուրքերին և քրդերին, որոնք թշնամաբար են վերաբերվում ռուսներին: Որպես օրինակ, նա վկայակոչում է Կովկասի տեղաբնիկներին, որոնք անընդհատ ըմբոստանում են ռուսական իշխանությունների դեմ: Հարյուրապետը գտնում է, որ ռուսական իշխանությունները կարող են հիմնվել հատկապես էրզրումցի հայերի վրա, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 1, թ. 1-8:

[2] ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 152:

[3] ***Ա-Դո,*** Ռուսական ցարերը և Հայկական հարցը, Երևան, 2013, էջ 147-148:

[4] ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 143:

նում նաև ռուսահպատակ հայեր: Ն. Պեշկովը տեղեկացնում է, որ նման թույլտվություն կունենան միայն այն հայերը, որոնց անցագրերը ստորագրված և կնքված կլինի անձամբ իր կողմից[1]:

Իրականում, ինչպես արդեն նշել ենք, ռուսական իշխանությունների կողմից նախատեսվում էր բնակեցնել հայկական տարածքները ռուս վերաբնակիչներով և կազակներով, ուստի հարուցվում էր ցանկացած արգելք՝ թույլ չտալու հայերին վերադառնալ իրենց հարազատ բնակավայրերը: Որպես ակնառու օրինակ, վկայակոչենք Դիադինի օկրուգի պետ, փոխգնդապետ, բարոն Խովենի 1916 թ. հուլիսի 17-ի N 1417 գաղտնի զեկուցագիրը գեներալ-նահանգապետի գրասենյակի պետին: Նա հայտնում է, որ Դիադինի օկրուգի բնակեցման խնդիրն ինքը բարձրացրել է դեռևս 1915 թ.: Փոխգնդապետը տեղեկացնում է, որ օկրուգում կա 10200 դեսյատին[2] վարելահող, որի կեսը ոռոգվում է Եփրատի ջրերով[3]: Նա գտնում է, որ օրինական հիմունքների հիման վրա կարելի է վտարել տեղաբնիկներին և հողերը հատկացնել ռուս վերաբնակիչներին: Խովենը տեղեկացնում է, որ ինքը նման փորձ ձեռք է բերել Սիբիրում:

Օկրուգի պետի կարծիքով, կարելի է որոշ ժամանակ թույլ տալ տեղաբնիկներին մշակել հողը, որը հնարավորություն կտա նախապատրաստել հողատարածությունները ռուս վերաբնակիչների համար[4]: 1917 թ. փետրվարի 18-ի զեկուցագրում Խովենը հայտնում է, որ հայերին հողակտորներ են տրամադրվել առանց սեփականության իրավունքի[5]:

Բարոն Խովենը դժգոհում է, որ Վանից, Մուշից և այլ վայրերից հայերը գալիս և բնակվում են Դիադինի այն գյուղերում, որոնք նախատեսված են ռուս վերաբնակիչների համար: Փոխգնդապետը

---

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ.1:
[2] Մեկ դեսյատինան հավասար է 1,0925 հեկտարի:
[3] Տե՛ս *Արզումանյան Մ.,* Հայաստան. 1914–1917, Երևան, 1969, էջ 272:
[4] ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 138: 1916 թ. փետրվարին բարոնը տեղեկացնում է Հայոց գյուղատնտեսական ընկերությանը, որ մտադիր է գարնանացանի համար տրամադրել ութ հազար ռուբլու սերմացու, տե՛ս «Մշակ», 1916, N 40, 23 փետրվարի: Փաստորեն Խովենը նման կերպ ցանկանում էր նախապատրաստել ռուս վերաբնակիչների բնակությունը՝ նրանց հրամցնելով հայ գյուղացու կողմից արդեն մշակված հողերը:
[5] *Արզումանյան Մ.,* նշվ. աշխ., էջ 274:

հնարավոր է համարում նույնիսկ զենքի կիրառումը հայերի դեմ, եթե Վանի օկրուգը նրանց չընդունի[1]:

Հայ հասարակությանը խորը հիասթափություն է պատճառում ռուսական կառավարության կրավորական վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ: Պատերազմի նախօրյակին և մինչև 1915 թ. ամառ ռուսական իշխանությունների քաղաքականությունը հիմնականում հայանպաստ էր: Դա պայմանավորված էր Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի համեմատաբար հավասարակշռված քաղաքականությամբ: Նա գերազանց գիտեր երկրամասի բնակչության ազգային առանձնահատկությունները և փորձում էր դրանք օգտագործել ի նպաստ ռուսական պետականության: Փոխարքան, լինելով ռուսական միապետության ջերմ ջատագով, խորապես գիտակցում էր տեղաբնիկների մասնակցության անհրաժեշտությունը պետական կառավարման համակարգում, գլխավորապես նրա ստորին ստորաբաժանումներում: Դրանով նրանք ոչ թե օտարվում, այլ դառնում էին այդ համակարգի մասնիկներից մեկը և կամա թե ակամա պաշտպանում էին այդ համակարգը: Նրա հեռանալուց հետո իրավիճակը կտրուկ փոխվում է: Նոր փոխարքան՝ մեծ իշխան Ն. Ռոմանովը վարում էր ընդգծված ոչ հայանպաստ, իսկ մի շարք դեպքերում թուրքամետ և քրդամետ քաղաքականություն, որոնք իբր բխում են ռուսական պետական շահերից:

Մեծ իշխանի կառավարման տարիներին՝ 1915 թ. սեպտեմբերից մինչև 1917 թ. մարտ, հայկական կազմակերպությունները հարկադրված էին հաղթահարել բազմաթիվ արգելքներ և արհեստական դժվարություններ, որոնք հարուցվում էին փոխարքայի և նրա ենթակաների կողմից: Տարբեր խոչնդոտներ էին հարուցվում հայ գաղթականներին՝ նրանց պատկանող գույքի, հողերի, տնային կենդանիների վերադարձի և այլնի հետ կապված: Տեղերում նշանակված ռուս պաշտոնյաների մի մասն արգելում էր հայերին ոչ միայն վերադառնալ հարազատ վայրերը, այլև վերականգնել իրենց տնտեսությունները և կատարել հողագործական աշխատանքներ, նախապատվությունը տալով քրդական զանազան ցեղերին:

[1] ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 140:

Կովկասյան ռուսական իշխանությունները մի շարք դեպքերում բացահայտորեն հովանավորում էին թուրքերին ու քրդերին: Կար Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և փոխարքա Ն. Ռոմանովի հրամանը՝ մեղմ վերաբերվել քրդական ցեղերի նկատմամբ[1]: Նրանց հնարավորություն էր տրվում վերադառնալ իրենց բնակավայրերը, տիրապետել իրենց գույքին և զենք կրել: Նման քաղաքականությամբ ռուսական զինվորական իշխանությունները հույս ունեին քրդերին գրավել իրենց կողմը: Եվ դա այն դեպքում, երբ քրդերի ճնշող մեծամասնությունը պատերազմի առաջին իսկ օրից հանդես եկան որպես ռուսների անհաշտ թշնամիներ:

Օգտվելով նահանգապետության և տեղական օկրուգների պետերից ոմանց բարեհաճ վերաբերմունքից, քրդերը կարողանում են կազմակերպել կամ վերականգնել իրենց մարտական խմբերը, հարձակումներ գործել հայերի, իսկ որոշ ժամանակ անց նաև ռուսական զորամասերի վրա: Հարկ ենք համարում ընդգծել, որ ռուս-թուրքական պատերազմների ողջ պատմության ընթացքում ռուսներին այդպես էլ չի հաջողվում ամբողջապես իրենց կողմը գրավել քրդերին: Ռուսները կարողանում են գրանցել միայն աննշան քանակությամբ քրդական ուժերի բարեկամական՝ չեզոք վերաբերմունքն իրենց նկատմամբ: Տիգրան Դևոյանի պատկերավոր արտահայտությամբ,

---

[1] Գեներալ Թ. Նազարբեկյանը վկայում է, որ 1915 թ. դեկտեմբերի 19-ին զորքերում ընթերցվում է փոխարքայի հրամանը՝ քրդերին իրենց կողմը գրավելու անհրաժեշտության մասին: Գեներալը գտնում է, որ հրամանը սխալ էր: Քրդերի գիտակցական մակարդակն այնքան ցածր էր, որ նրանց հնարավոր չէր ոչ միայն իրենց կողմը գրավել, այլև նպաստել բարեկամական հարաբերությունների հաստատմանը հայերի հետ, տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 7, թ. 22 շրջ.-23: Ռուսաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակած "История Курдистана" աշխատությունում ուղղակիորեն ասվում է, որ 1915-1916 թթ., երբ ռուսական բանակը խորանում է հակառակորդի տարածքում՝ Արևմտյան Հայաստանում և գրավում է մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերը, «Քրդերը ռուսական բանակին ոչ մի դիմադրություն ցույց չեն տալիս», տե՛ս Исторuя Курдистана. Авторы: М.С.Лазарев, Ш.Х.Мгои, Е.И. Васильева, М.А.Гасратян, О.И.Жигалина, Москва, 1999, с. 224. Փաստերի նման խեղաթյուրմամբ փորձ է արվում դրական ներկայացնել հայերի ցեղասպանությանը մասնակցած և ռուսական բանակի դեմ կռիվներ մղած քրդական ցեղախմբերին:

քրդերը «Մեր թիկունքի (ռուսական բանակի-Ռ.Ս.) պատուհասներ դարձան»[1]:

1916 թ. գարնանից ռուսական կառավարության հրամանով Արևմտյան Հայաստանում սկսում են գործել այսպես կոչված անզեն բանվորական հինգ գումարտակներ, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվում են մոտ հազարական հոգի՝ հիմնականում ռուսներ[2]: Նշված գումարտակների գործունեությունը նպատակ ուներ նախապատրաստել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների գաղութացումը ռուսների և կազակների կողմից: Գումարտակների համար առանձնացվում են առավել բարեբեր հողերը, որտեղ և նրանք սկսում են իրենց հողագործական աշխատանքները: Միաժամանակ ռուսական հրամանատարությունը, հանձին գեներալ Դոբրովոլսկու, արգելում է «հրապարակել յոդուածներ և տեղեկութիւններ ապագայ Հայաստանի կազմաւորման մասին»[3]:

Հարկ ենք համարում նշել, որ բանվորական գումարտակները չեն կարողանում կատարել իրենց վրա դրված առաջադրանքը, քանի որ գործում էին չափազանց անփույթ, չէին ապահովված անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական գույքով և լծկաններով: Ի վերջո ռուսական իշխանությունները ստիպված էին դիմել հայկական կազմակերպություններին, ինչպես օրինակ Գյուղատնտեսական ընկերությանը, առաջարկելով կատարել գյուղատնտեսական համապատասխան աշխատանքները, տրամադրելով սերմացու, աշխատանքային գործիքներ և լծկաններ: Ցավոք, դա արվեց բավականին ուշ, երբ սկսել էր կազմալուծվել Կովկասյան բանակը և ռուսական զորքերը սկսել էին լքել ռազմաճակատը: Հետագայում Ն. Պեշկովին փոխարինած գեներալ Միխայիլ Դրյագինի, ապա գեներալ Բորիս Ռոմանկո-Ռոմանովսկին որոշակի քայլեր են կատարում իրենց նախորդի կատարած սխալներն ուղղելու համար:

1916 թ. մինչև 1917 թ. հոկտեմբեր ռուսական իշխանություններն իրականացնում են Արևմտյան Հայաստանում համապատասխան հետազոտություններ՝ գյուղատնտեսության զարգացման հնա-

---

[1] «Հորիզոն», 1917, N 218, 11 հոկտեմբերի:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1313, թ. 7 և շրջ.: «Արև», 1916, N 171, 5 օգոստոսի:
[3] «Աշխատանք», Երևան, 1916, N 57, 16 նոյեմբերի:

րավորությունները պարզելու համար: Այդ նպատակի համար կազմվում է հատուկ ծրագիր[1]: Բուսաբան, աշխարահագրագետ և ճանապարհորդ, Տոմսկի համալսարանի նախկին ռեկտոր, պրոֆեսոր Վասիլի Սապոժնիկովին[2] հանձնարարվում է ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի հողատեսակները և բույսերը, որոնց վերաբերյալ նա կազմում է համապատասխան հաշվետվություն[3]:

Պրոֆեսորի արշավախումբն իր ուսումնասիրություններն սկսում է 1916 թ. հունիսի 22-ին: Նրանք լինում են է Բայազետի, Դիադինի, Ալաշկերտի, Բասենի հովիտներում, Մշո դաշտում, Վանա լճից արևելք ընկած շրջաններում և Էրզրումի հովտում: Ընդհանուր առմամբ նրանք անցնում են մոտ 750 վերստ (մոտ 800 կմ): Օգոստոսի 16-ին Վ. Սապոժնիկովը ներկայացնում է կատարած աշխատանքների վերաբերյալ համառոտ և նախնական հաշվետվություն: Նրա կարծիքով, նորանվաճ հողերի գաղութացման համար առավել նպաստավորը Մշո դաշտն է, որտեղ հողը բերրի է և առատ ջուր կա[4]: Առավել հետաքրքրական է Վ. Սապոժնիկովի այն հետևությունը, որը վերաբերվում է Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը: Ըստ նրա, քանի որ հայերի և քրդերի միջև առկա են լարված հարաբերություններ, ուստի ընտրված տարածքներում բնակեցվող ռուսները պետք է իրենց թվաքանակով գերակշռեն երկու ժողովուրդներին, որը հնարավորություն կտա ոչ միայն հողատարածություններն ինտենսիվ օգտագործել, այլև զսպել հայերի և քրդերի միջև եղած հնարավոր բախումները[5]:

1916 թ. ամռանը Ռուսաստանի Հողագործության նախարարությունն Անդրկովկաս է գործուղում Պետրոգրադի կայսերական համալսարանի իրավաբանական բաժնի պրիվատ-դոցենտ Նիկոլայ Լենսկոյին՝ «նոր գրաված Տաճկական Հայաստանի հողային խնդիրները և դորա հետ կապված զանազան հարցերն ուսումնասիրե-

[1] ՀԱԱ, Հավաքածու 1, CA-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 10, 37–38, 41–45, 55–67.
[2] Նույն տեղում, թ. 21:
[3] Նույն տեղում, թ. 146–150:
[4] Նույն տեղում, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 148 շրջ.:
[5] Նույն տեղում, ֆ. Հավաքածու, CA-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 150 շրջ.: Պրոֆեսորի ուսումնասիրության արդյունքները տե՛ս Растительность Турецкой Армении. Исследование 1916 г., Томск, Переселенческое управление, 1917, 72 с.

լու»[1]: Իրականում նա Ռուսաստանի Հողագործության նախարարության վերաբնակեցման վարչության հատուկ աստիճանավոր էր[2]:

Ն. Լենսկոյն այցելելում է էջմիածին և տեսակցում կաթողիկոս Գևորգ Ե-ին: Պրիվատ-դոցենտը մեկնում է Վան, Մուշ և այլ շրջաններ: Ն. Լենսկոյն իր ուսումնասիրությունների վերաբերյալ հրատարակում է մի գրքույկ[3], ուր հստակ նշում է, որ ռուսական զենքը պայքարել է հայերի ազատագրության, այլ ոչ թե հայկական տարածք հիմնելու համար[4]: Սա փաստորեն նշանակում է, որ Արևմտյան Հայաստանում հայերի համար չի ստեղծվելու որևէ հնարավորություն ինքնավարություն հիմնելու և արհեստական խոչընդոտներ են հարուցվելու գաղթականությանը՝ հարազատ վայրեր վերադառնալու համար: Միաժամանակ սադրիչ լուրեր են տարածվում Կովկասի փոխարքայության տարածքում ապաստանած հայ գաղթականների մասին, որոնց իբր թե տեղական իշխանությունները հատուկ նպատակներով բնակեցնում են երկրամասում[5]:

Ռուսաստանցի պատմաբան Ալեքսանդրա Բախտուրինան, քննարկելով ցարական կառավարության՝ Արևմտյան Հայաստանում իրականացրած ազգային քաղաքականությունը, եզրակացնում է, որ դաշնակիցների հետ Ասիական Թուրքիայի բաժանման մասին համաձայնագրի կնքումը «հարկադրեց կառավարությանը (ռուսական – Ռ. Ս.) վերջնականապես հրաժարվել Հայաստանի միավորմանն աջակցելուց կամ էլ նրան (Արևմտյան Հայաստանին – Ռ. Ս.) Ռուսական կայսրության կազմում ինքնավարություն տալուց: Սկսվեց նախապատրաստվել Հայաստանի մի մասի միացումը Ռուսաստանին և, հնարավոր է անբնակ հողերի բնակեցումը՝ ռուս վերաբնակիչներով: Պատերազմի վերջում հայերի հիասթափությունը ռուսական քաղաքականության նկատմամբ լիակատար էր»[6]:

---

[1] «Վան-Տոսպ», N 30, 19 յունիս 1916, էջ 16:
[2] ՀԱԱ, Հավաքածու 1, ՀԱ-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 56:
[3] Գրքույկը վերնագրված է՝ О правовом положении землевладения в Турецкой Армении. На правах рукописи, Петроград, 1916, տե՛ս ՀԱԱ, Հավաքածու 1, ՀԱ-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 56-67:
[4] ՀԱԱ, ֆ. Հավաքածու 1, ՀԱ-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 67:
[5] «Հորիզոն», 1915, N 246, 1 նոյեմբերի:
[6] Տե՛ս *Бахтурина А. Ю.*, указ. соч., с. 223.

Նման մեկնաբանությամբ Ա. Բախտուրինան փորձում է քողարկել ռուսական կառավարության գաղութային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում: Ըստ պատմաբանի, «մեղավորը» Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան են, որոնք համաձայնագիր են կնքում Օսմանյան կայսրության բաժանման մասին: Ինքնին հասկանալի է, որ նման մեկնաբանությունը չի համապատասխանում իրականությանը: Պարզապես իշխանությունների համար հարմար առիթ էր, որպեսզի գաղութացնեն իր բնիկ բնակչությունից՝ հայերից դատարկված Արևմտյան Հայաստանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ռուսական իշխանությունները կանխամտածված կերպով զանազան խոչնդոտներ և արգելքներ են հարուցում հայ հասարակական կազմակերպությունների և հայ գաղթականության առջև՝ չթույլատրելու նրանց մուտքը այն տարածքները, որոնք նախատեսվում են ռուս և կազակ վերաբնակիչների համար: Իշխանությունները հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ հայությունը զգալի ներդրում է ունեցել ռուս-թուրքական ռազմաճակատում՝ կազմակերպելով կամավորական ստորաբաժանումներ, կրել է նյութական և մարդկային ահռելի վնաս, թիկունքում հիմնել է զինվորական հիվանդանոցներ, ապաստարաններ և այլն: Իշխանությունների համար հասել էր հարմար պահը, երբ հայությունը գլխավորապես կենտրոնացված լինելով իր հիմնախնդիրների լուծման վրա, ի զորու չի լինի որևէ կերպ դիմագրավել հայկական մի շարք տարածքներ ռուսներով և կազակներով վերաբնակեցնելու քաղաքականությանը: Գեներալ-նահանգապետության հիմնումը պարզորոշ ասում էր հայությանը, որ ռուսական իշխանությունները որևէ ցանկություն չունեն թույլատրել Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավար մարմին կազմել[1]: Կարծում ենք, որ իշխանությունները չարաչար սխալվում են:

Հարկավ, ռուսական քաղաքական դաշտում դաշտում կային սառը դատող քաղաքագետներ, ինչպես օրինակ Պետական դումայի պատգամավոր, կադետական կուսակցության նշանավոր ներկայացուցիչ Պյոտր Միլյուկովը, որն իր ելույթներում դատապարտում էր

[1] *Уткин А. И.,* Забытая трагедия. Россия в первой мировой войне, Смоленск, 2000, с. 220.

սեփական կառավարության գաղութային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում: Նրա համար տարօրինակ էր, որ փախստական և բռնագաղթված հայերի գույքը իշխանությունները համարում են պետական սեփականություն: Պ. Միլյուկովը կտրականապես դեմ էր Նոր Եփրատյան կազակություն հիմնելու գաղափարին: Նա Դումայում կոչ էր արել հրաժարվել. «նացիոնալիստական էգոիզմի ծրագրերից[1]»: Ցավոք, նման ողջախոհ քաղաքագետների թիվն այնքան էլ շատ չէր:

Փաստորեն ռուսական կառավարությունը հստակ ցույց է տալիս, որ նա որևէ ցանկություն չունի Արևմտյան Հայաստանին ոչ միայն ինքնավարություն շնորհելու, այլև ծրագրեր է մշակում գրավված հայկական տարածքները ոչ միայն գաղութացնելու, այլև ռուսներով և կազակներով բնակեցնելու համար: Այդ ամենն առաջացնում է հայ հասարակության խորը հիասթափությունը: Հայության նյութական և մարդկային զգալի ներդրումները հաշվի չեն առնվում ռուսական իշխանությունների կողմից: Հայկական կազմակերպությունների և գաղթականության առջև հարուցվում են տարաբնույթ խոչնդոտներ, որոնց նպատակն էր թույլ չտալ նրանց վերադառալ և վերականգնել պատերազմի և թուրք քրդական հարձակումների հետևանքով ավերված տնտեսությունը: Դրա արդյունքում հայ բնակչությունը հայտնվում է անասելի բարդ իրավիճակում: Կովկասի փոխարքայությունում նա ենթարկվում է վրացի ազգայնականների անհիմն մեղադրանքներին, որի հետևանքով սրվում են հայ-վրացական հարաբերությունները: Վրացիները հայերին ամբաստանում են Կովկասը «գաղութացնելու» մեջ: Նման անհիմն մեղադրանքներին միանում են նաև կովկասյան թաթար ազգայնամոլները: Նրանց անուղղակի աջակցում են ռուսական իշխանությունները: Այնուամենայնիվ, հայկական կազմակերպությունները, չնայած բազմաթիվ արգելքների, շարունակում են իրենց աշխատանքները:

[1] «Հորիզոն», 1916, N 62, 18 մարտի:

# ԳԼՈՒԽ III.

# ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՎՎԱԾ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 1915–1917 ԹԹ.

## ա. Ալաշկերտի և Բասենի գաղթական բնակչության վերադարձի կազմակերպումը: Բնակավայրերի վերականգնումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը

Ալաշկերտի և Բասենի հայության գաղթն սկսվում է 1914 թ. հոկտեմբերի 23-ին, երբ ռուսական զորքը նահանջում է Քյոփրիքյոյից: Երկրորդ գաղթը տեղի է ունենում դեկտեմբերի 21-ին և ծանր հարված է հասցնում բնակչությանը[1]: Բացի ճանապարհին կրած զրկանքներից, նրանք ենթարկվում են քրդական հարձակումների: Առևանգվում են կանայք ու երեխաներ[2]: Ռուսական զորամասերի

---

[1] «Համբաւաբեր», 1916, N 25, 19 յունիսի, էջ 775, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 425, թ. 4: Դեռևս 1914 թ. դեկտեմբերի 14-ի գրությունում գեներալ Պ. Օգանովսկին տեղեկացնում է զորամասերի հրամանատարներ, գեներալներ Դ. Աբացիևին, Ա. Նիկոլաևին, Մ. Դրյագինին և գնդապետ Պերեպելովսկուն, որ Գլխավոր հրամանատարի հրամանով Պետական դումայի նախկին անդամ Սիրական Տիգրանյանը գործուղվել է Ալաշկերտ: Նրան և իր օգնականներին պետք է ցույց տրվի հնարավոր օգնություն, որպեսզի Ս. Տիգրանյանը կարողանա տեղերում լուծել հետևյալ հարցերը՝

1. Նշանակել գյուղերի ավագների (գյուղապետերի), որոնք պատասխանատու են լինելու իրենց գյուղերում կարգուկանոնի պահպանման համար:
2. Ռուսական բանակի մերձակա թիկունքում քրդերի և հայերի զինաթափումը:
3. Հաշվառել թիկունքում առկա պարենի, վառելիքի և նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ առարկաների քանակը:
4. Պայքարը պանիսլամիզմի և թուրքական գործակալների դեմ:
5. «Բերդան» սիստեմի հրացաններով գյուղերի ավագների և վստահություն ներշնչող բնակիչների զինումը և այլն, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 49, թ. 7 և շրջ., նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 57, թ. 1 և շրջ.:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց.17, գ. 301, թ. 3:

հետ, նրանց պաշտպանությունն իրականացնում էր II դրուժինան[1]: Ալեքսանդր Շիրվանզադեի վկայութամբ. «Սկսվեց մի գաղթականություն, որի նմանը Շահ-Աբասի օրերն էին միայն տեսել»[2]: Նա նաև հետևյալն է հաղորդում. «Կազակներն ահագին օգնություն էին ցույց տվել կանանց և մանավանդ երեխաներին, տալով նրանց իրենց ծիերը, տաք վերնազգեստները և շատերին կերակրելով: Մի շարք կազակներ երեք, չորս օր պահել ու կերակրել էին երեխաներին մինչև նրանց ծնողների գտնվելը»[3]: Սկսած 1914 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1915 թ. փետրվար, ԿՀԲԸ-ը օգնություն է տրամադրում փախստականներին[4]:

Ալաշկերտի 24 հազար և Բասենի 20 հազար բնակչությունն ազատվել էր կոտորածից[5]: Ամբողջովին ոչնչացվել էին Զեդկան, Մոլլա-Սուլեյման, Խաստուր և այլ գյուղերի բնակիչները: Նրանց կեցության հետ կապված խնդիրները հոգում է նպատակով եղբայրական օգնության կոմիտեն[6]: 1914 թ. դեկտեմբերի 23-ին սկսում է գաղթականության հոսքը Ալաշկերտից, Ղարաքիլիսայից և Դիադինից[7]:

Ռուսական զորքերի կողմից Ալաշկերտը գրավելուց հետո, Ս. Տիգրանյանի գլխավորությամբ այնտեղ են գալիս մի խումբ երիտասարդ գործիչներ: Ինչպես նշում է Կ. Սասունին, այդ ժամանակ դեռևս գաղթականներ չկային: Մարտական գործողությունների սկզբնական փուլում միայն մի քանի գյուղերի բնակիչներ հեռացել էին[8]:

Քսան օրից ավելի Ս. Տիգրանյանը շարունակ կատարում է ուսումնասիրություններ, պարզելու հայկական գյուղերին հասցված

---

[1] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 13:
[2] *Զաքարյան Ա.,* Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից, էջ 61:
[3] Նույն տեղում, էջ 68:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 39:
[5] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 40:
[6] *Հարությունյան Ա. Հմ.,* Հայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, Էջմիածին, 2006, թիվ Դ, էջ 62:
[7] Նույն տեղում, էջ 62–63: 1915 թ. մարտի 1-ից մինև 3-ը Էջմիածնում տեղի ունեցած գաղթականների հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների համագումարում նշվեց, որ գաղթականների ընդհանուր թվաքանակը հասնում է 60 հազարի, տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 117, թ. 12:
[8] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 44–45:

մարդկային և նյութական կորուստները: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ալաշկերտի մոտ 23 հայկական գյուղերի մեծ մասը կողոպտվել և քարուքանդ է արվել[1]: Ինչպես վկայում է Կ. Սասունին, Ս. Տիգրանյանի գլխավորած խումբը «ե՛ւ օգնության մարմին էր, ե՛ւ կառավարչական դեր կը խաղար (անշուշտ քօղարկուած կերպով), ե՛ւ տեղաւորման ու հողային բաշխման գործերը կը կարգաւորէր»[2]: 1914 թ. նոյեմբերի 20-ին Ազգային բյուրոն[3] Բասեն է ուղարկում վեց հոգուց բաղկացած նոր խումբ, որը կոչվեց Բասենի քաղաքացիական մարմին: Նրա անդամներն էին՝ Կ. Ղազազյանը, Մ. Մակարյանը, Տ. Ավետիսյանը, Ծատուրը (բժիշկ Բ. Բաղդասարյան), Վ. Խատուտյանը և Կ. Սասունին[4]: Սակայն Սարիղամիշյան իրադարձությունները հարկադրում են խմբին որոշ ժամանակով դադարեցնել աշխատանքները: Խումբն սկսում է գործել 1915 թ. մարտի 15-ից[5]:

Կ. Սասունին սխալ էր համարում վեց հոգուց բաղկացած խմբին հանձնարարել նման մեծածավալ աշխատանք: Նրանք միաժամանակ կատարում էին ողջ վարչական աշխատանքը և բնակչությունից կազմակերպում տեղի ինքնապաշտպանական ուժերը՝ միլիցիան: Ռուսական իշխանությունը Բասենում և Ալաշկերտում դեռևս թույլ էր: Ըստ Կ. Սասունու՝ իրական իշխանությունը գտնվում էր վերը հիշատակած երկու խմբերի ձեռքում:

Կազմակերպվում է հավաքական մարմին, որը հայտնի էր մի քանի անուններով՝ Ինքնապաշտպանության մարմին, Գաղթականական լիազոր, Ազգային Բյուրոյի հանձնախումբ: Իսկ Բասենի և Ալաշկերտի բնակչությունը մարմինն անվանում էր շտաբ[6]: Կ. Սասունին նշում է, որ բնակչությունը շտաբ բառն օգտագործելով, նրա անվան տակ ենթագիտակցորեն տալիս էր հայկական իշխանություն

---

[1] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 25 շրջ.:
[2] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 45: ՀԱԱ, ֆ. 28, ց: 1, գ. 379, թ. 20:
[3] *Գալոյան Գ.,* Հայաստանը մեծ տերությունների աշխարհաքաղաքական առճակատումներում, էջ 668:
[4] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 45–46:
[5] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 20:
[6] Նույն տեղում:

իմաստը[1]: Գյուղատնտեսական ընկերության Ալաշկերտի լիազոր Արշակ Թադևոսյանը նշում է. «Ժողովրդի տնտեսական ապահովութիւնը, նրա վիճակի բարելաւումը ինքն ըստ ինքնեան մեծ գործ է, բայց նրանից աւելի գնահատելի է այն յեղաշրջումը, որ առաջ է բերւած տաճկահայերի (արևմտահայերի – Ռ. Ս.) պէս յետամնաց և տաճկական ռեժիմից այլանդակւած մեր ժողովրդի մէջ, որի մէջ յաջողւել է մարմնացնել հասարակական սկզբունքները և կարգերը»[2]:

Բասենում առաջին հերթին ցուցակագրվում է բնակչությունը, կազմակերպվում են գյուղական նոր վարչություններ: Ցուցակագրվում և ստուգվում է բասենցիների ունեցած սակավաթիվ զենքը: «Ձեռնարկուեցաւ պրօպականտի, գիւղական յետամնաց շրջանը քաղաքական եւ ազգային խնդիրներու շուրջ լուսաբանելու համար»[3]: Առաջնահերթ խնդիրներից էր բնակչության տեղավորումը քրդական և թուրքական լքյալ գյուղերում[4]: Հայկական գյուղերի մեծ մեծ մասը քարուքանդ էր արված: Կ. Սասունու համոզմամբ. «Տեղաւորումը կը նշանակէր հայացնել շրջանը»[5]: Նման խնդիր էր հետապնդում նաև Գյուղատնտեսական ընկերությանը կից հիմնված Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն[6]:

Սակայն նախատեսված ծրագրերը չի հաջողվում իրականացնել: Սարիղամիշի ճակատամարտի ժամանակ ռուսական զորքը չկարողանալով դիմագրավել թուրքական լայնածավալ հարձակմանը, ստիպված նահանջում է: Ալաշկերտի և Բասենի բնակչությունը ևս հարկադրված անցնում է Կովկաս[7]: Նրանց պաշտպանությունն իրականացնում են ռուսական զորամասերը և II կամավորական խմբի մարտիկները: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ փրկվում է 50 հազարի հասնող հայությունը[8]: Սարիղամիշի ճակատամարտում թուրքական III բանակի պարտությունը հնարավորութ-

---

[1] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 46–47:
[2] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 77 շրջ.:
[3] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 48:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 21:
[5] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 49:
[6] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33:
[7] Նույն տեղում, թ. 21:
[8] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 52:

յուն է տալիս Բասենի և Ալաշկերտի բնակչությանը վերադառնալ հայրենի օջախները: Ալաշկերտ վերադարձողների խնդիրներով գլխավորապես զբաղվում էր Գյուղատնտեսական ընկերությունը, իսկ Բասենում՝ Ազգային բյուրոն:

Բասենում օգնության գործի կազմակերպումը իրականացնում է Ազգային բյուրոյի կողմից այնտեղ գործուղված Ալեքսանդր Շարաֆյանը: Այստեղ գործում էր նաև Կ. Սասունու և գործընկերների հինգ հոգուց բաղկացած խումբը: Նրանց հանձնարարված էր տեղավորել տեղի 20 հազար բնակչությանը[1]: ԿՀԲԸ-ն կողմից քայլեր են ձեռնարկվում Ալաշկերտ վերադարձող գաղթականների անվտանգությունն ապահովելու համար: Ենթադրվում է կազմել պահակախումբ, որը բաղկացած էր լինելու հարյուր հոգուց: Կազմվում է նաև նախահաշիվը: Ղարաքիլիսա է գալիս Քաղաքների միության խումբը Ռոստոմի գլխավորությամբ[2]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, տեղի բնակչության ինքնապաշտպանության խնդիրն առաջնահերթն էր: Եթե 1914 թ. աշնանը կամավորական խմբերի ներկայությունը զգալիորեն նպաստում էր բնակչության ապահովությանը, ապա 1915 թ. սկզբներին, երբ կամավորական դրուժինաները առաջացել էին հակառակորդի տարածքը, պետք էր շտապ հոգալ բնակիչների ինքնապաշտպանության համար զենքի հայթայթումը: Դրա համար անհրաժեշտ էր կամ փոխարքայության կամ էլ IV կորպուսի հրամանատարի թույլտվությունը: Սակայն, տեղական զորամասերի հրամանատարությունը, մեղմ ասած, չէր ողջունում նման ցանկությունը: Բանն այն է, որ շրջակայքում դեռևս գտնվում էին զինված քրդական ջոկատներ, որոնք հարմար պահի կփորձեին հարձակվել գյուղացիների վրա: Դրանով է բացատրվում տեղերում ինքնապաշտպանական խմբեր կազմելու անհրաժեշտությունը[3]:

Այնուամենայնիվ ռուսական հրամանատարական կազմում կային ողջախոհ զինվորականներ, որոնք հասկանում էին, որ նման թույլտվություն տալով, իրենք որոշ չափով ապահովում են թիկունքը

---

[1] Նույն տեղում, էջ 58–59:
[2] «Գաղափար», 1916, N 4, 24 փետրուարի:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 116, թ. 87:

և պարտադրված չէին լինի զգալի ուժեր թողնել՝ հաղորդակցության ուղիները և մատակարարումը ապահովելու համար: Նման զորահրամանատարներից էր Ն. Բարաթովը: Նա թույլատրեց հայերին կրել 400 «Բերդան» հրացանը, որը տրամադրել էր Քեռին[1]:

Ինքնապաշտպանական ջոկատը բաղկացած էր մոտ 300 հոգուց, որոնց հինգ ամիս շարունակ կազմակերպել և վարժեցրել էր Կ. Սասունու խումբը: Խմբերը բաժանված էին տասնյակների, որոնք հսկում էին կարևոր ճանապարհները[2]: Կ. Սասունին նշում է. «Այժմ մեր կարծիքը դրական է այդ վայրի զինուորական ընդունակութեան մասին, հակառակ անոր, որ սկզբնական շրջանին մենք յուսահատուում էինք»[3]:

ԿՀԲԸ-ն կողմից քայլեր են ձեռնարկվում Ալաշկերտ վերադարձող գաղթականների անվտանգությունն ապահովելու համար: Ենթադրվում է կազմել պահակախումբ, որը բաղկացած էր լինելու հարյուր հոգուց: Կազմվում է նաև նախահաշիվը:

| | Միանուագ ծախսեր | |
|---|---|---|
| 1 | Հագուստեղէն 100 հոգու համար | 4000 ռ(ուբլի) |
| 2 | 30 ձի, թամբ, սանձ | 6000 ռ(ուբլի) |
| 3 | Հրացան և փամփուշտներ | 5000 ռ(ուբլի) |
| 4 | Կազմի հաւաքումն ու տեղափոխումը | 500 (ռուբլի) |
| . | (Ընդամենը) | 15500 ռ(ուբլի) |
| | Ամսեկան | |
| 1 | 70 զինուոր 30-ական ռուբլի | 2100 ռ(ուբլի) |
| . | 30 ձիաւոր-զինուոր 55-ական ռուբլի | 1650 ռ(ուբլի) |
| . | Խմբապետ | 100 ռ(ուբլի) |
| 4 | 2 յիսնապետ, 50-ական ռուբլի | 100 ռ(ուբլի) |
| 5 | 4 քսանհինգապետներ, 30 ական ռուբլի | 120 ռ(ուբլի) |
| 6 | Չնախատեսուած ծախսեր 15% | 60 ռ(ուբլի) |
| | (Ընդամենը) | 4130 ռ(ուբլի)[4] |

1915 թ. հունվարին Գյուղատնտեսական ընկերության աշխատակից Սահակ Մատինյանը կատարում է Ալաշկերտի, Ղարաքիլի-

[1] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 62:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 23:
[3] Նույն տեղում, թ. 26:
[4] Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 60, թ. 8, 13:

սայի և Դիադինի շրջանների հայկական բնակավայրերի մոտավոր վիճակագրություն.

## Ալաշկերտի շրջան

| | Բնակավայրի անվանումը | Տների քանակը |
|---|---|---|
| 1. | Ջետկան | 100 |
| 2. | Խոշիան | 15 |
| 3. | Մոլլա-Սուլեյման | 170 |
| 4. | Խաստուր | 250 |
| 5. | Չլկանի | 100 |
| 6. | Խազլո | 60 |
| 7. | Թոփրակ-Կալե | 600 |
| 8. | Դայաբեկ | 70 |
| 9. | Իրիցուգյուղ | 70 |
| 10. | Էղնիթափա | 150 |
| 11. | Համադ | 200 |
| 12. | Դարաքիլիսա | 35 |
| | Ընդամենը | 1840 |

## Դարաքիլիսայի շրջան

| | Բնակավայրի անվանումը | Տների քանակը |
|---|---|---|
| 1. | Էրանոս | 20 |
| 2. | Դարաքիլիսա | 400 |
| 3. | Իրիցուգյուղ | 150 |
| 4. | Էոնղալի | 170 |
| 5. | Դազի գյուղ | 80 |
| 6. | Ջիրո | 12 |
| 7. | Մանգասար | 150 |
| 8. | Խըդըր | 10 |
| 9. | Չամրլի | 8 |
| 10. | Դարասու | 20 |
| 11. | Մազրա | 150 |
| | Ընդամենը | 1170 |

## Դիադինի շրջան

| | Բնակավայրի անվանումը | Տների քանակը |
|---|---|---|
| 1. | Դարաբազար | 35 |

| | | |
|---|---|---|
| 2. | Սեյդու | 4 |
| 3. | Շուշան | 50 |
| 4. | Ղուժլի-Բուջախ | 40 |
| | Ընդամենը | 129[1] |

Ս. Մատինյանը կատարում է մոտավոր հաշվարկ, հիմք ընդունելով, որ յուրաքանչյուր տանը բնակվել է միջինը տաս հոգի: Դրանից հետևում է, որ Ալաշկերտի շրջանի հայ բնակչության թիվը եղել է 18400, Ղարաքիլիսայինը՝ 11700, Դիադինինը՝ 1940, իսկ ողջ հայությանը՝ 30 հազար հոգի[2]:

Իր զեկուցագրում Ս. Մատինյանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ ալաշկերտցիների վկայության համաձայն, իրենց ընտանիքներն ավելի բազմամարդ են՝ 12-ից 15 հոգի: Սակայն Ս. Մատինյանը նպատակահարմար է գտնում վերջնական թիվն ընդունել 30 հազար հոգի[3]:

1915 թ. մարտին Գյուղատնտեսական ընկերությունն Ալաշկերտում հիմնում է իր մասնաճյուղը, որը պետք է գյուղացիներին օժանդակեր երկրագործական աշխատանքներում[4]: Գեներալ Ն. Բարաթովին ուղված դիմումում Բասենի քաղաքացիական մարմինը խնդրում է թույլատրել փախստականներին բնակվել թուրքերի և քրդերի կողմից լքված գյուղերում: Գեներալը տալիս է իր համաձայնությունը, սակայն արտոնում է բնակվել միայն լքված երեք գյուղերում և մարտի 20-ից սկսվում է բնակեցումը[5]: Սակայն կացարանի կարիք ունեցողների թվաքանակն այնքան շատ էր, որ հնարավորություն է լինում բնակեցնել միայն շատ քչերին՝ մինչև 1/3-ին[6]: Կ. Սասունին իր զեկուցագրում նշում է. «...մենք շարունակե-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 301, թ. 3 -4:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 17, գ. 301, թ. 3–4: Նույն տեղում, ց. 2, գ. 1313, թ. 6 շրջ.-7:
[3] Նույն տեղում, ց. 17, գ. 301, թ. 4 և շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 42:
[5] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 21: Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի հրամանի համաձայն քրդերի կողմից լքված գյուղերը, գույքը համարվում էր բանակի սեփականությունը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 135, թ. 1 շրջ.:
[6] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 21:

ցինք զետեղել հայ գաղթականներին շրջակայ միւս գիւղերում, թէև առանց իրաւունքի»[1]:

Կարծում ենք, Կ. Սասունին չափազանցնում է, նշելով, որ չեն ունեցել գեներալի թույլտվությունը: Իրականում գեներալ Ն. Բարաթովը պատկանում էր այն ռուս զորահրամանատարների թվին, որոնք գիտակցում էին ամուր և ապահով թիկունք ունենալու անհրաժեշտությունը, ուստի ուշադրություն չէին դարձնում «չթույլատրված» գյուղերի բնակեցման փաստերի վրա: Դրանով նա նաև հնարավորություն էր ունենում ապագայում ապահովել ռուսական զորամասերը ցորենով, գարիով, ալյուրով և անհրաժեշտ այլ պարագաներով ու մթերքներով: Տ. Դևոյանն իր հերթին փորձում է օգտակար լինել գաղթականներին: Նա իր կապերի շնորհիվ կարողանում է վերադարձնել կազակների կամ զինվորների կողմից հայ գյուղացիներից բռնագրավված տնային կենդանիները[2]:

Ինչպես նշում է Կ. Սասունին 1915 թ. մայիսի 17-ի զեկուցագրում, գեներալ Ն. Բարաթովը նրանց տվել է համապատասխան փաստաթղթեր, որը թույլ է տալիս. «ա) ամէն կերպ օգնելու և <u>վարելու</u> (ընդգծումը փաստաթղթինն են – Ռ. Ս.) գաղթականներին, բ) Չինելու թէ գաղթականներին և թէ Ռուսական Բասէնի հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան համար»[3]: Մայիսի 20-ին կայացած եղբայրական օգնության կոմիտեի նիստում հաստատվում է Ալաշկերտի բնակչության օգնության նախահաշիվը, որը պետք է ներկայացվեր կաթողիկոս Գևորգ Ե-ի հաստատմանը[4]:

Մայիսի 17-ի զեկուցագրում Կ. Սասունին ներկայացնում է նորաբնակ և նախկին բնակավայրերում տեղավորված հայ ընտանիքների թվաքանակը.

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 22:

[2] *Դևոյեանց Տ.*, Հետախոյզի մը յուշերը, Վէմ, Փարիզ, 1938, թիւ 3, էջ 62: 1915 թ. մայիսի 26-ի նամակում Մուշեղ Թումանյանը հայտնում է, որ Տ. Դևոյանի ղեկավարությամբ կազմվել է մի խումբ, որը կարգավորում է հարաբերությունները տեղի ռուսական իշխանությունների: Խումբը գաղթականների համար հայթայթում է անցագրեր, զբաղվում նրանց դատական, հավանաբար ունեցվածքի հետ կապված խնդիրները կարգավորելով, տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 14 շրջ.:

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 22:

[4] Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 26 շրջ.:

| | | |
|---|---|---|
| «1. Ղարաքիլիսէ | 155 տուն, | 1445 շունչ* |
| 2. Մաղարաճըղ | 22 -,,- | 190 -,,-* |
| 3. Թէքնէճըղ | 25 -,,- | 210 -,,-* |
| 4. Արփաչայ | 50 -,,- | 435 -,,-* |
| 5. Փորիկ | 64 -,,- | 503 -,,-* |
| 6. Ղարափուղար | 30 -,,- | 273 -,,-* |
| 7. Այղրան | 6 -,,- | 53 -,,-* |
| 8. Փիրալի | 45 -,,- | 383 -,,-* |
| 9. Ախքէրուն | 7 -,,- | 60 -,,-* |
| 10. Մասարճուղ | 30 -,,- | 284 -,,-** |
| 11. Թավշան ճուղ | 20 -,,- | 199 -,,-** |
| 12. Իսլամճոր | 40 -,,- | 365 -,,-** |
| 13. Ախքուղար | 22 -,,- | 193-,,-*[1] |
| | 516 | 4593»[2]: |

Միաժամանակ կարգադրիչ մարմինը կազմում է Ալաշկերտում գործող մարմնի անդամների կազմը և նրանց գործունեության համար անհրաժեշտ գումարը: Նախատեսվում է Ալաշկերտում ունենալ Գործադիր մարմնի վարչություն, որոնք գլխավորելու են լիազորները: Վարչության լիազորների թիվը սահմանվում է հինգ հոգի, դրանք էին՝ Արսեն վարդապետ Ղլտճյանը, Ա. Աթանասյանը, Ա. Թադևոսյանը: Մնացած երկու լիազորների ընտրությունը կատարվելու էր ավելի ուշ:

1915 թ. մայիսի 24-ին Մանազկերտ են ժամանում Գյուղատնտեսական ընկերության ներկայացուցիչները: Նրանց թվում էր Հ. Թումանյանի որդին՝ Մուշեղը: Մայիսի 26-ին Գյուղատնտեսական ընկերության Ալաշկերտի լիազոր Ա. Թադևոսյանին ուղղված նամակում Մ. Թումանյանը հայտնում է. «Տիֆ հիւանդութիւնը սարսափելի չափերի է հասէ՝ չէնք կարող մի հիւանդանոց հիմնել, վասն զի

[1] Մեկ աստղանիշ ունեցող գյուղերի դիմաց արված է մակագրություն՝ «Արազի աջ ափին»: Երկու աստղանիշով նշված բնակավայրերի դիմաց արված է մակագրություն՝ «Արազի ձախ ափին», տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 22, տե՛ս նաև «Գիւղատնտես», Թիֆլիս, N 2, 1 փետրուարի 1916, էջ 27:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 22:

անհնար է 100-200 հիւանդների համար տեղ գտնել և որ ամենագլխաւորն է՝ խնամել»[1]: Այդ նպատակով անհրաժեշտ է համարվում Ալաշկերտ-Ղարաքիլիսա սանիտարական ջոկատ ուղարկելը[2]:

Ռուսական բանակի մի շարք բարձրաստիճան սպաներ, որոնց թվում II կազակային դիվիզիայի հրամանատար գեներալ Դ. Աբացիևը, Գրոզնենսկայան 262-րդ գնդի հրամանատար գնդապետ Սուլեյմանովը, բացահայտ հովանավորում էին թուրքերին և քրդերին[3]: Գնդապետն օգտվելով իր բարձր պաշտոնից, հայերի մասին զանազան կեղծ տեղեկություններ՝ զրպարտություններ էր տարածում: Նա այդ կերպ փորձում էր Ռուսաստանի հեռավոր վայրերից եկած և հայերի մասին նույնիսկ չլսած սպայությանը տրամադրել Ալաշկերտի և ընդհանարապես հայերի դեմ[4]: Հակահայ տրամադրություններ ունեցող սպաները կեղծ տեղեկություններով փորձում են հայերին ամբաստանել հօգուտ Թուրքիայի կատարած լրտեսության մեջ[5]: Այդ երկու բարձրաստիճան սպաների «աշխատանքի» արդյունքում հայ բնակչության նկատմամբ ստեղծվում են եթե ոչ թշնամական, սակայն ընդգծված աննպաստ իրադրություն:

Սկզբանպես չի արտոնվում գյուղատնտես Աշոտ Աթանասյանի մուտքը Ալաշկերտ: Նա շրջան էր բերելու գյուղատնտեսական գործիքներ, որոնք նախատեսվում էր բաժանել բնակիչներին: Տեղական իշխանություններն առաջարկում են գործիքները բաժանել ոս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 14: Մ. Թումանյանի հաշվետվությունը տե՛ս ***Սահակյան Ռ. Օ.,*** Մուշեղ Թումանյանի 1915 թ. մայիսի 26-ի նամակ-զեկուցագիրը Ալաշկերտի հայության վիճակի մասին, Վէմ, Երևան, 2009, հոկտեմբեր-նոյեմբեր, թիվ 3, էջ 186–190:

[2] Նույն տեղում, թ. 153:

[3] ***Դեոյեանց Տ.,*** Հետախոյզի մը յուշերը, Վէմ, Փարիզ, 1938, թիւ 3, էջ 58, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 14:

[4] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 219, թ. 1: Տ. Դևոյանցը վկայում է, որ գեներալ Դ. Աբացիևը հավատալով քուրդ ցեղապետերի խոստումներին, թույլատրում են նրանց իրենց ցեղակիցների հետ միասին անցնել Ղարաքիլիսա: Քրդերն, օգտվելով հարմար առիթից, հարձակվում են գնդապետ Տուսկաևի կազակային գնդի վրա և հասցնում են զգալի կորուստներ, տե՛ս «Յորիզոն», Թիֆլիս, 1917, N 218, 11 հոկտեմբերի:

[5] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 28, թ. 12: Դրա համար բավական էր եղել ռազմագերի թուրք սպայի «վկայությունը», տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 534, թ. 70:

տիկանների միջոցով[1]: Սակայն, ի վերջո հաջողվում է հասնել նրան, որ Ա. Աթանասյանը կարողանում է գալ Ալաշկերտ և անցնել իր պարտականությունների կատարմանը[2]:

Մանազկերտում գնդապետ Սուլեյմանովը հրամայում է հեռացնել տներից մեկում գտնվող մոտ 50 հիվանդ հայերի, նրանց փոխարեն այնտեղ տեղավորելով հինգ թրքուհու[3]: Իսկ Դ. Աբացիևը կարգադրել էր հայ փախստականներին արգելել Մանազկերտ մտնել[4]: Այդ հրամանի համաձայն հայերը ստիպված են լինում լքել նաև Ղարաքիլիսան, իսկ փախստականներին օգնություն ցույց տվող կազմակերպություններին թույլատրվում է մնալ մինչև մայիսի 20-ը[5]: Այդ երկու սպաների «աշխատանքի» արդյունքում հայ բնակչության նկատմամբ ստեղծվել էր եթե ոչ թշնամական, սակայն ընդգծված աննպաստ վերաբերմունք: Մ. Թումանյանը նշում է. «Սպաների մեծագոյն մասի մէջ տիրում է հայատեաց տրամադրութիւն և երբ մտնում ես դատողութեան մէջ գտնելու դրա հիմքը՝ ոչինչ շոշափելի չես գտնում, իսկ այդ ատելութեան դառնութիւնը զգում ես»[6]:

Մ. Թումանյանի վկայությամբ. «էտպիսի կասկածների հիմքը հայատեաց օֆիցերները աշխատում են հաստատել ամէն մի պատահական դէպքով: Բարեբախտաբար էստեղ կան մի քանի հայ օֆիցերներ ևս, որոնք իրանց ազգասիրական տրամադրութեամբ մի противовядие-էն (հակաթույն – Ռ. Ս.) ստեղծում»[7]: Նշված սպաների թվում Մ. Թումանյանն ի նկատի ուներ նաև Տ. Դևոյանին:

Ռուսական իշխանությունները թույլատրելով քրդերին վերադառնալ իրենց բնակավայրերը, հույս ունեին գոնե այդ կերպ հասնել նրանց չեզոքությանը: Իրականում, սակայն, քրդական բոլոր հավաստիացումները, թե իրենք կզբաղվեն իրենց առօրյա աշխատանքներով, չէր համապատասխանում իրականությանը: Նրանք

---

[1] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 17:
[2] Նույն տեղում, թ. 24:
[3] Նույն տեղում, ֆ. 428, ց. 1, գ. 66, թ. 1:
[4] *Դեյեանց Տ.,* Հետախոյզի մը յուշերը, Վէմ, 1938, թիւ 3, էջ 58:
[5] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 15:
[6] Նույն տեղում, թ. 15:
[7] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 16:

առաջին հերթին վերականգնում էին սեփականատիրական իրավունքները իրենց հողերի նկատմամբ: Արդյունքում կրկին տուժում էր հայ գյուղացին, քանի որ նա արդեն ցանել էր քրդերի կողմից լքված հողերը և փաստորեն բերքը հնձելու էր քուրդը[1]:

Իրավական տեսակետից ռուսական իշխանությունները պարտավոր էին վերականգնել քուրդ սեփականատիրոջ իրավունքը հողի նկատմամբ, սակայն գործնականում քրդերը ոչ միայն տիրանում էին հայերի կողմից ցանված բերքին, այլև հնարավորություն էին ստանում հացով ապահովել լեռներում գտնվող և ռուսների դեմ կռվող իրենց ցեղակիցներին: Բացի այդ, նրանք յուրայիններին հետախուզական տեղեկություններ էին հաղորդում: Փաստորեն, ռուսական իշխանություններն իրենց թիկունքում տեղավորում են վտանգավոր մի տարրի՝ քրդերի, որոնք հարմար առիթի դեպքում պետք է կրկին զենք վերցնեին և կռվեին ռուսների դեմ:

Տ. Դևոյանի հուշերի համաձայն, նրան հաջողվում է ռուս բարձրաստիճան սպաների՝ գնդապետներ Վ. Կոբլիցկու և (հետագայում՝ գեներալ) Դանիիլ Դրացենկոյի միջոցով իրավիճակը շտկել[2]: Հարկավ, նշված վերաբերմունքը պատճառ է դառնում, որպեսզի 1915 թ. հունիսի 4-ին կաթողիկոս Գևորգ Ե-ն պաշտոնապես դիմի փոխարքային, ներկայացնելով Մանազկերտում կատարվող դեպքերը[3]:

Մ. Թումանյանը վկայում է, որ իրենց զգալի օգնություն են ցույց տալիս շրջանում տեղակայված 66-րդ հետևակային դիվիզիայի հրամանատար գեներալ Նիկոլայ Վորոպանովը, Մանազկերտի զինվորական պարետ ենթասպա Ուշկովը, որին Մ. Թումանյանը բնութագրում է որպես «մի աննման մարդ»: Նա հետևյալն է գրում. «սրանք (վերը նշված ռուս սպաները – Ռ. Ս.) են ստեղծում էտ լաւը՝ կազմակերպել են տեղական ոստիկանութիւն, աշխատում են գիւղացիներին դիւրութիւն տալ: Վօրօպանովը երբ իմացաւ, որ բժիշկն ու ես եկել ենք, ակնարկել էր, որ լաւ կը լինէր, որ մենք այցելեինք իրան»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 25 շրջ.:
[2] *Դևոյեանց Տ.,* Հետախոյզի մը յուշերը, Վէմ, 1938, թիւ 3, էջ 58:
[3] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 25:
[4] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 15 շրջ.:

Կազմակերպվում են ինքնապաշտպանական և պահակային ծառայություն կատարող խմբեր: Ջենքը բաժանվում է գյուղերի երիտասարդներին: Յուրաքանչյուր գյուղ ուներ տաս հոգուց բաղկացած զինված խումբ: Այդ կերպ Բասենում կազմակերպվում է 400 հոգուց բաղկացած աշխարհազորային-պահակային (միլիցիոն) ստորաբաժանում[1]: Գյուղերում կազմակերպվում են 3-ից 7 հոգուց բաղկացած տեղական ինքնավարության մարմիններ, իսկ առավել լուրջ խնդիրներ առաջանալու դեպքում դիմում են Բասենի ազգային մարմնին[2]:

1915 թ. հունիսի 1-ից սկսում է գործել Բասենի քաղաքացիական խմբի երեք հոգուց կազմված խումբը, որի անդամներն էին՝ Ա. Ասլանյանը, Ս. Հովհաննիսյանը և Մ. Նահիկյանը: Նրանք առաջին հերթին հաշվառում են Բասենում բնակվող գաղթականությանը, որոնց թվաքանակը մոտավոր հաշվուներով կազմում է 844 ընտանիք կամ 6235 հոգի: Խմբի կարծիքով. «...այդ թիւն անշուշտ աւելի բարձրանալու է և թերևս արդէն իսկ բարձրացած էլ լինի, որովհետև Կովկասից, մանաւանդ Ղարսի շրջանից, շատերն են գալիս մեր կողմերը, որտեղ նրանց համար համեմատաբար դիւրին է ապրել»[3]: Ինչպես նշում է ժամանակակիցը, Վանը և Վասպուրականն իրենց վրա էին գրավել ողջ հայության ուշադրությունը և Մանազկերտ համեմատաբար քիչ օգնություն էր ուղարկվում:

Ըստ Մ. Թումանյանի, կազմվում են երեք հանձնաժողովներ, կամ աշխատանքային խմբեր: Առաջինը պետք է հարաբերվեր տեղական իշխանությունների հետ, երկրորդը՝ բժշկական: Նա պետք է բուժօգնություն ցույց տար հիվանդներին, հետևեր փողոցների և տների սանիտարահիգիենիկ մաքրությանը: Երրորդը, որը գլխավորելու էր Մ. Թումանյանը, կենտրոնանալու էր «զուտ փախստականական գործով, տնտեսական, բնակարանային, հագուստի և այլն,

---

[1] *Սասունցի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 63:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 25-26:
[3] «Գիւղատնտես», 1916, N 2, 1 փետրուարի, էջ 26: Կազմակերպությունը կոչվել է նաև Բասենի քաղաքացիական մարմին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 5:

մի խօսքով այն բոլորով ինչ որ չի մտնում վերը յիշած երկու յանձնաժողովների գործունէութեան սահմանը»[1]:

Ալաշկերտի շրջանում հնարավոր է լինում ցանել մոտ 2700 սոմար[2], իսկ Ղարաքիլիսայի շրջանում 1300 սոմար ցորեն: Բացի այդ, բնակչությունը կարողանում է հայտնաբերել քրդերի թաքցրած ցորենն, օգտագործել սեփական կարիքների համար և նույնիսկ մի մասը վաճառել շրջանում տեղակայված ռուսական զորամասերին: Ենթադրվում էր, որ ցորենի բերքը կստացվի մեկը ութի հարաբերությամբ, որը հնարավորություն կտա բնակչությանն ապահովել հացով մեկ տարի[3]: Համեմատաբար բարվոք վիճակում էր Դիադինի շրջանը, որը բաղկացած էր յոթ գյուղերից: Այն բանից հետո, երբ հայ կամավորները և ռուսական զորքերը հարկադրում են քրդական անկանոն ջոկատներին հեռանալ Դիադինի շրջանից, հայ գյուղացիների անվտանգությունը դառնում է ավելի ապահով[4]:

1915 թ. հունիսի 2-ին Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հ. Տեր-Ավետիսյանը կաթողիկոսին ներկայացնում է Խնուսի հայության վիճակագրությունը, ըստ որի գավառի 27 հայկական գյուղերի 3322 տներից փրկվել են 128, Ներքին Բուլանըխի 15 հայկական գյուղերի 2225 տներից՝ 423 հոգի[5]:

Հունիսի 4-ին Մանազկերտի առաջնորդական տեղապահ Հ. ծ. վարդապետ Վարդանյանը հայտնում է կաթողիկոս Գևորգ Ե-ին, որ բնակչությունը գտնվում է ծայրահեղ կարիքի մեջ: Վարդապետը նշում է, որ Խլաթից գալիս են հազարից ավելի փախստական կանայք ու երեխաներ, և «Զեմսկի սոյուզը» տրամադրել է երկու հազար ռուբլի նրանց համար պարեն ու զգեստ գնելու համար[6]:

1915 թ. Վանի հուլիսյան նահանջը նոր խնդիրներ է հարուցում Ալաշկերտի հովտում գտնվող հայկական կազմակերպությունների համար: Նրանք, օգտագործելով իրենց համեստ հնարավորությունները և միջոցները, հարկադրված են լինում նվազագույն օգնութ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 14 շրջ.:
[2] Մեկ սոմարը հավասար է մոտ 7,5 փթի:
[3] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 7 շրջ.-8:
[4] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 33 շրջ.:
[5] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 534, թ. 68:
[6] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1275, թ. 1-2:

յուն ցուցաբերել փախստականներին, որոնց զգալի մասը կենտրոնանում է Մանազկերտում[1]: Ռուսական զորքի հակահարձակումից և օսմանյան զորքի նահանջից հետո հնարավորություն է ստեղծվում ալաշկերտցիների մի մասին վերադառնալ հայրենի շենները: Նրանք սկսում են վերականգնել քայքայված տնտեսությունը և ձեռնամուխ լինել երկրագործական աշխատանքներին: Ընդհանրապես հայ գաղթականության համար կարևոր նշանակություն է ունենում 1915 թ. օգոստոսի 30-ին ռուսական կառավարության ընդունած որոշումը, որով հայ փախստականները կարող են օգտվել պետական նպաստներից: Անաշխատունակներին տրվում էր օրական 15 կոպեկ նպաստ[2]:

1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին Կովկասյան բանակի հրամանատարության կողմից նախաձեռնած էրզրումի օպերացիան և ռուսական զորքերի առաջխաղացումը հնարավորություն է տալիս Երկրի տարբեր շրջաններում գտնվող հայերի, հիմնականում կանանց ու երեխաներին գալ Ալաշկերտի հովիտ: 1916 թ. հունվարի 20-ին Ղարաքիլիսայից Աբոյանի ուղարկած հեռագրից տեղեկանում ենք, որ Ղարաքիլիսա են գալիս մեծ թվով փախստականներ: Ըստ տեղեկությունների, մեծ թվով կանայք ու երեխաներ բռնի կերպով պահվում են քրդերի և չերքեզների մոտ[3]: Փետրվարի 20-ին Բասենի Քաղաքացիական կոմիտեի անդամ Միքայել Նանիկյանը Գյուղատնտեսական ընկերության նախագահ Ա. Սահակյանին ուղված նամակում հայտնում է, որ կոմիտեն երկու ամիս շարունակ զբաղված է եղել Բասենի բնակչության և գույքի վիճակագրությամբ[4]:

1916 թ. փետրվարի 28-ին Մ. Նանիկյանը Ավետիք Սահակյանին ուղված նամակում տագնապով հայտնում է, որ եղանակներն անսովոր տաք են և գարնանացանն ավելի վաղ է սկսվելու: Այդ իսկ պատճառով «գիւղացիք արդէն սկսել են անհանգստանալ գարնա-

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 172:
[2] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 39:
[3] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 186:
[4] Նույն տեղում, 186:

նացանի համար, և ամեն օր դիմում են մեզ հարցնելով՝ արդեօք պիտի ստանան սերմացու և երբ»[1]:

Ղարաքիլիսա–Ալաշկերտ շրջանի բնակչությանն օգնելու և տեղում նրանց նվազագույն կարիքները բավարարելու համար Եղբայրական օգնությունը Ալաշկերտի լիազոր Նիկոլայ Օթարյանին հատկացնում է 20 հազար ռուբլի, որը նախատեսված էր Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի գյուղական բնակչության համար երկրագործական գործիքներ գնելու համար: Իսկ Դիադինի շրջանի կառավարիչ, բարոն ֆոն Խովենը ռուսական իշխանությունների անունից հանձնում է 11500 ռուբլի՝ Դիադինի շրջանի գյուղացիների համար սերմացու գնելու[2]:

Մարտի 9-ի նամակում Բասենի քաղաքացիական մարմնի անդամներ Սամսոն Հովհաննիսյանը և Արտաշես Ասլանյանը հայտնում են Ս. Հարությունյանին, որ էրզրումի գրավումից հետո Բասենում սկսվել է գաղթականության մեծ հոսք: Ռազմաճակատում իրադրությունը կայունանալուց հետո, 60-ից 70 գյուղերում բնակություն են հաստատում մոտ տաս հազար հոգի:

Բասենի քաղաքացիական մարմնի հաղորդումից հետևում է, որ Բասենի բնակչությունը գտնվում է սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Բացի այդ, տեղ չի հասցվել սերմացու, որի պատճառով բնակչությունը հայտնվել է անելանելի դրության մեջ: Այդ ամենին ավելանում է տարբեր հիվանդությունների, հատկապես տիֆի, տարածման վտանգը: Քաղաքների միությունը հիմնում է բժշկական կայան, որը չի կարող բավարարել բոլորի կարիքները[3]:

1916 թ. ապրիլից Բասենում սկսում է գործել Քաղաքների միությունը, իսկ հունիսի վերջերից՝ ԿՀԲԸ-ը: Քաղաքների միության Բասենի ներկայացուցիչ Սարգիս Օհանջանյանը նշում է. «ստիպւած եմ խոստովանելու, որ ութ ամսւայ ընթացքում, Միութիւնը (նկատի ունի Քաղաքների միությունը – Ռ.Ս.) շատ սահմանափակ օգնութիւն կարողացաւ հասցնել գաղթականին: Առանց պատճառների մէջ մտնելու, այսքանը կարելի է ասել, որ սննդի մատակարա-

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 3 շրջ.:
[2] «Գիւղատնտես», 1916, N 3, 15 փետրուարի, էջ 47:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 9 և շրջ.:

րումը և բժշկական օգնութիւնը հայթայթւեց հնարաւոր սահմաններում»[1]:

Ապրիլին Ղարաքիլիսայում բացվում է հիվանդանոց, որի ֆինանսավորումն իրականացնում է Ամերիկահայ բժշկական հանձնաժողովը: Վերջինս Ղարաքիլիսա է գործուղում բժիշկ Կրեսին: Նա պետք է Ալաշկերտում հիմներ հիվանդանոց: Նյու Յորքից ժամանում է բժիշկ Վ. Հարդվելը, որն իր հետ բերել էր հինգ արկղ դեղորայք՝ Ղարաքիլիսայում հիմնվելիք հիվանդանոցի համար[2]:

Իր հերթին Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն, որի հիմնական պարտականությունը տեղում երկրագործական աշխատանքների կազմակերպումն էր, տեսնելով բնակչության շրջանում տարածված հիվանդությունները, որոնց հետևանքով կարող են ձախողվել հողագործական աշխատանքները, քայլեր է ձեռնարկում 20 մահճակալանոց հիվանդանոց բացելու համար: Լիազոր Արշակ Թադևոսյանը նշում է. «Եթէ վաղօրոք միջոցներ ձեռք չառնուէին, կանանց և երեխաների վերադարձով ճարակը կարող էր ընդունել ահռելի չափեր»[3]: ԿՀԲԸ-ին կից Հայկական կենտրոնական կոմիտեն Ալաշկերտ է ուղարկում բժշկական խումբ, որի կազմում էին մեկ բժիշկ, բուժակ և սանիտար[4]: Մայիսի 23-ին Ս. Հարությունյանին ուղարկված հեռագրում հայտնվում է, որ Խնուսի շրջանում գտնվող մշեցի գաղթականները սովահար են լինում և զանգվածորեն շարժվում են Ալաշկերտ: Տեղեկացվում է, որ Սարիղամիշ են ուղարկվել 67 որբ[5]:

1916 թ. հունիսին Ալաշկերտից վերադարձած ԿՀԲԸ-ն և Քաղաքների միության լիազոր Ն. Օթարյանը ներկայացնում է զեկուցագիր իր կատարած աշխատանքների մասին: Նա նշում է, որ Ալաշկերտի հայությունը բացի մարդկային կորստից, կրել է ահռելի նյութական կորուստ: Մարտական գործողությունների ընթացքում տեղի ունեցած մի քանի ճահանջներից, բազմաթիվ գաղթերից հե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 582, թ. 1 շրջ.:
[2] «Համբաւաբեր», 1916, N 17, 24 ապրիլի, էջ 531:
[3] «Գիւղատնտես», 1916, N 1, 15 յունուարի, էջ 5:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 34:
[5] Նույն տեղում, գ. 404, թ. 453:

տո, բնակչությունը կորցրել է նաև տների ու ցանքսերի մեծ մասը: Գյուղերի մի մասն ամբողջությամբ ոչնչացվել է: Հաշվի առնելով հնարավոր նահանջների հավանականությունը, որի ժամանակ առավել շատ տուժում են կանայք ու երեխաները, Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն որոշում է աջակցել միայն երկրագործական աշխատանքներ կատարելու ունակություն ունեցող տղամարդկանց վերադարձին[1]: Բացի Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեից, Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջանում գործում էին ԿԽԲԸ-ի կից Հայկական կենտրոնական կոմիտեն, էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովը, որոնք բավականին աշխատանքներ են կատարում փախստականների վերաբնակցումը կազմակերպելու համար[2]:

Ռուս-թուրքական ռազմաճակատի որոշ կայունացումը հնարավորություն է տալիս փախստականներին վերադառնալ, վերականգնել ավերված տները և նախաձեռնել գյուղատնտեսական աշխատանքները: Ալաշկերտ են գալիս հիմնականում տղամարդիկ, որոնց թիվը հասնում է վեց հազարի[3]: Կանայք ու երեխաները մնում են Կովկասում: Նրանք կվերադառնան այն ժամանակ, երբ հնարավոր կլինի ապահովել պարենով և բնակարանով:

Ալաշկերտում վերաբնակեցվում են 25 գյուղեր, որոնց մեծ մասը գտնվում էր ավերակ վիճակում: Այնուամենայնիվ, գյուղացիները ձեռնամուխ են լինում երկրագործական աշխատանքներին: Նրանք ցանում են մոտ 400 հազար փութ հացահատիկ: Հնարավոր էր ավելի շատ ցանել, եթե լիներ սերմացու և գյուղատնտեսական գործիքներ: Դա հնարավորություն կտար միայն 1916 թ. ամռանը հավաքել մի քանի միլիոն փութ հացահատիկ: Փախստականների վերադարձին և կանոնավոր գյուղատնտեսական աշխատանքների վերսկսմանը խանգարում է ստեղծված իրավական անորոշ դրությունը: Նրանց վերադարձը կատարվում է գաղտնի և «ոչ ոք վստահ չէ, որ կարող է մնալ իր տանը և մշակել իր հողը»[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33:
[2] «Գիւղատնտես», 1916,N 1, 15 յունուարի, էջ 4:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33: «Գիւղատնտես», 1916, N 1, 15 յունուարի, էջ 4:
[4] «Համբաւաբեր», 1916, N 26, 26 յունիսի, էջ 817:

Քաղաքների միության Բասենի լիազոր Ս. Օհանջանյանն առաջնահերթ է համարում ծնողազուրկ երեխաների հավաքումը և տեղավորումը ապաստարաններում: Նրա հաշվարկների համաձայն որբերի թիվը հասնում է 300-ից 400-ի: Ս. Օհանջանյանը հայտնում է, որ «Քաղաքների միությունը» որոշել է երեխաներին տեղավորել իրենց սննդակայաններին կից և կերակրել: Սակայն, նախահաշվով նախատեսված չէ նրանց համար հագուստ հայթայթել, ուստի Ս. Օհանջանյանը խնդրում է ԿԽԲԸ-ից՝ ապահովել երեխաներին հագուստով[1]:

Մ. Նանիկյանի տվյալների համաձայն, Բասենում բնակվում է մոտ 11 հազար հոգի: Նրանք գտնվում են անմխիթար վիճակում: Տեղի բնակչության խնդիրներով գրեթե չեն հետաքրքրվում: Այդ ամենի պատճառով «այսօր Բասենի գաղթականութիւնը կանգնած է մօտալուտ սովի վտանգի առաջ»[2]: Բասենի մի խումբ գյուղացիներ դիմում են ԿԽԲԸ-ը աջակցության խնդրանքով: Նրանք հետևյալն են գրում. «Շրջանիս գաղթականութիւնը՝ ներկայումս գտնուում է ամենածայրահեղ կարիքի մէջ: Ալիւր չունինք և հնար էլ չունինք մի տեղից ձեռք բերելու: Բաշգիւղում գտնուած Բարեգործ. Ընկ. միակ պահեստը իր ներկայ գործունէութեամբ անկարող է բաւարարելու Բասենի գաղթականութեան նւազագոյն պահանջի մի տասերրորդին անգամ»[3]:

1916 թ. հունիսի 7-ի Մանազկերտից ուղարկված հեռագրում Ս. Հարությունյանը տեղեկացնում է, որ ամեն օր քաղաք են գալիս մեծ թվով հայ գաղթականներ: Նրանք բոլորը զուրկ են տարրական իրերից և պարենից: Գաղթականները կարիք ունեն բուժօգնության: Անհրաժեշտ է կազմակերպել սանիտարական և սննդային կայաններ: Միաժամանակ տեղեկացվում է, որ Գյուղատնտեսական ընկերությունը ապրիլի 29-ից մինչև հունիսի 7-ն ընկած ժամանակաշրջանը 2768 գյուղացիների բաժանել է ցորեն[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 582, թ. 2 շրջ.:
[2] Նույն տեղում, գ. 379, թ. 33:
[3] Նույն տեղում, գ. 582, թ. 5:
[4] Նույն տեղում, գ. 404, թ. 438:

Աշնանը, Բասենի շրջանում ստեղծվում է ծայրահեղ ծանր վիճակ: Բնակչությանն սպառնում է սովը: Այդ մասին ահազանգում է Քաղաքների միության էրզրումի փախստականների սննդակայանի գլխավոր կառավարիչ Սարգիս Օհանջանյանը: Ս. Հարությունյանին ուղղված նամակում Ս. Օհանջանյանը հայտնում է. «Ցորեն կամ ալիւր բոլորովին չկայ (ընդգծումը փաստաղթինն է – Ռ. Ս.): ... Շրջանիս գաղթականութեան կարող անհատը, դրամը ձեռքին, անկարող է լինում մի բուռն անգամ ալիւր ձեռք բերելու: Էլ չենք խօսում անկարող և նիւթական միջոցներից զուրկ որբերի և այրիների մասին»[1]:

1916 թ. օգոստոսի 4-ին, Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գ. Փարաջանյանը զեկուցագիր է ներկայացնում Ալաշկերտի ընդհանուր վիճակի մասին: Նա տեղեկացնում է, որ որբանոցում կան բարձր տարիքի, թվով 25 որբեր, որոնց անհրաժեշտ է փոխադրել այլ վայր, որտեղ կլինեն «կազմակերպած արհեստանոցներ կամ երկդասեան դպրոցներ, որպէսզի դոցա ժամանակը անօգուտ և աննպատակ չանցնի»[2]: Լիազորը հայտնում է, որ առանձին ուշադրություն է դարձրել որբանոցի սանիտարահիգիենիկ դրության և սննդի վրա: Նա տեղեկացնում է, որ որբանոցի աշխատակցուհի Հ. Սաֆարյանին թողել է Նոր Բայազետում, իսկ Իգդիրից հրավիրում է որբանոցում աշխատելու Վահանդուխտ Ավագյանին, որը «շատ օգտակար և պիտանի պաշտօնեայ է և ծանօթ է որբանոցի կեանքին»[3]:

Բասենի գաղթականներին պարենային և բժշկական օգնություն էր ցույց տալիս Քաղաքների միության մասնաճյուղը: Նրա կողմից ուտելիք էր բաժանվում Ղարաքիլիսայի և Ալիջակրակի մոտ 30 գյուղերի բնակիչներին[4]: Հոկտեմբերի 16-ի հեռագրում Գ. Փարաջանյանը տեղեկացնում է ԿՀԲԸ-ին, որ բերքն անբավարար է բնակչությանը հացով ապահովելու համար: Խնդրվում է շտապ ուղար-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 582, թ. 1:
[2] Նույն տեղում, գ. 896, թ. 20:
[3] Նույն տեղում, թ. 21 շրջ.:
[4] *Հարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, էջմիածին, 2007, թիվ Դ, էջ 68:

կել ամսեկան հինգ հազար փութ ալյուր: Նշված քանակն անհրաժեշտ է, որպեսզի բնակչությունը չտեղափոխվի այլ վայրեր[1]:

1916 թ. գարնանը Բասենի բնակչության միայն 80%-ն էր կարողանում մշակել հողերը և ցանքս կատարել: Ինչպես նշում է Բասենի քաղաքացիական մարմնի անդամ Ս. Հովհաննիսյանը, մնացած 20%-ը «ծայր (աստիճան-Ռ.Ս.) չքաւորներ են, որոնք զուրկ են թէ աշխատողներից և թէ լծկաններից, որոնց համար պիտի օր առաջ մտածել»[2]:

Մարտի 1-ին փոխարքայի գրասենյակից Ղարաքիլիսայի սննդակայանի փետրվար-մարտ ամիսների համար փոխանցվում է 1200 ռուբլի: Իրավիճակը փոքր ինչ կարգավորվելուց հետո, Գյուղատնտեսական ընկերությունը նախատեսում է Ալաշկերտում հիմնել գյուղատնտեսական վարժարան: Վերջինս ունենալու էր երկու դասարան: Վարժարանի հիմնման համար անհրաժեշտ էր 14750 ռուբլի[3]: Սակայն հետագա իրադարձությունները հնարավորություն չտվին ավարտել Ալաշկերտի և շրջանի հայության վերադարձի և վերաշինության հետ կապված խնդիրները:

1916 թ. նոյեմբերի 24-ին Բասենի շրջանի Քաղաքների միության լիազոր Ս. Օհանջանյանը հայտնում է Ա. Սահակյանին, որ Բասենի 65 գյուղերում բնակվում են շուրջ 12 հազար հոգի: Նա ցավով նշում է, որ տեղի հայությունը «Բոլոր նպաստաբաշխ մարմինների կողմից մատնւած է կատարեալ անուշադրութեան»: Միակ իրական օգնությունը ցուցաբերում է Քաղաքների միության բժշկական-սննդատու կայանը, որի հնարավորություններն այնքան էլ շատ չեն: Ստեղծված իրադրության միակ լուծումը՝ սերմացուի ներկրումն է, որն էլ առաջարկում էր Ս. Օհանջանյանը: Բնակչության մոտ կան բավարար քանակությամբ լծկաններ, որը թույլ կտա կատարել երկրագործական աշխատանքները սեփական ուժերով: Նա խնդրում է օր առաջ ուղարկել սերմացու, որպեսզի հնարավոր լինի կատարել 1917 թ. գարնանացանը և բնակչությանն ապահովել հացահատիկի սերմով: Ս. Օհանջանյանը միաժամանակ նկարագրում

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 895, թ. 7:
[2] Նույն տեղում, թ. 5 շրջ.:
[3] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 104:

է տեղի կլիմաև և խնդրում է հնարավորության դեպքում ուղարկել «ցուրտ կլիմաներին յատուկ հացաբոյս՝ ցորեն և գարի միայն: Հողը անջրտի է, հերկը և դրան կից ցանքսը սկսւում է մարտ ամսից»[1]: Նա միաժամանակ առաջարկում է իր օգնությունը նշված աշխատանքներն կատարելու համար:

1916 թ. վերջից Բասեն են գալիս Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում ապաստանածներ, թվով 5 հազար հոգի: Վերադառնում են նաև տարբեր ժամանակներում թուրքական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով հեռացած բասենցիները: Վերադարձողները բնակություն են հաստատում ինչպես իրենց, այնպես լքյալ բնակավայրերում: Ավետիս Հարությունյանի կատարած հաշվարկի համաձայն, Բասենի շրջանում կային 2 հազար տուն գաղթական, որոնց թվաքանակը կազմում է 11290 հոգի[2]: Աստիճանաբար սկսում են ավելանալ բնակիչները: 1917 թ. հուլիսին բնակչության թիվը 15 հազար էր[3]:

Այսպիսով, 1914 թ. դեկտեմբերից մինչև 1917 թ. ընկած ժամանակահատվածը հայկական կազմակերպությունները զգալի աշխատանքներ են կատարում Ալաշկերտի հովտում: Տեղի բնակչությունը հիմնականում ֆիզիկապես չէր տուժել թուրքական հարձակումների հետևանքով, սակայն կորցրել էր անշարժ գույքի և ընտանի կենդանիների մեծ մասը: Այդ հանգամանքը չէր կարող բացասաբար չանդրադառնալ բնակչության ընդհանուր կեցության և հետագա գործունեության վրա:

Հայկական կազմակերպությունները, գլխավորապես Գյուղատնտեսական ընկերությունը զգալի վերականգնողական աշխատանքներ է նախաձեռնում Ալաշկերտի հովտում, սակայն Կովկասյան բանակի՝ IV բանակային կորպուսի մի քանի նահանջներն ի չիք են դարձնում կատարված աշխատանքները և ներդրված մարդկային ու նյութական զգալի միջոցները: Դա էր պատճառներից մե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 14, թ. 28-29:

[2] *Հարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, էջմիածին, 2007, թիվ Դ, էջ 67:

[3] Նույն տեղում, էջ 68:

կը, որ Ալաշկերտի հայ բնակչության հիմնական մասը չէր ցանկանում վերադառնալ հայրենի վայրերը, այլ նախընտրում էր մնալ գլխավորապես Երևանի նահանգում: Այնուամենայնիվ, հայկական կազմակերպությունները շարունակում են վերականգնողական աշխատանքները, վերադարձողներին տրամադրելով կենսագործունեության համար անհրաժեշտ պարագաները՝ երկրագործական գործիքներ, սերմացու, ընտանի կենդանիներ, հիմնելով սննդակայաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն: Բացի այդ, ռուս-թուրքական ռազմաճակատի կայունությունը ևս բարերար կերպով է ազդում իրադրության վրա: Աստիճանաբար հայությունը սկսում է վերադառնալ հայրենի օջախները և ավելի վստահ ու համեմատաբար ապահով իրականացնել վերականգնողական և հողագործական աշխատանքները:

## բ. Վան-Վասպուրականի բնակչության վերադարձի կազմակերպումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը (1915 թ. աշուն-1917 թ. փետրվար)

1915 թ. հուլիսյան նահանջից և Վանի վերագրավումից հետո Վասպուրականի բնակչության մի մասն սկսում է վերադառնալ: Օգոստոսի 13-ի հեռագրում Ս. Վրացյանը հայտնում է Ա. Սահակյանին, որ Եփրատի շրջանում հասունացել է միլիոնավոր փթերի հասնող ցորենի բերքը: Անհրաժեշտ է կազմակերպել բերքահավաքը: Նման խնդրանքով դիմել է գեներալ Պ. Օգանովսկին: Միաժամանակ նա անհրաժեշտ է համարել արագացնել փախստականների վերադարձը Վան: Քաղաքների միությունը Վանի հայությանը հատկացնում է 46 հազար ռուբլի, որից 13 հազարը՝ որբ երեխաների համար մեկ ամսվա ընթացքում որբանոց հիմնելու, իսկ 33 հազարը՝ նահանգի գաղթականության համար տաք շորեր գնելու համար[1]: Վանի և օկրուգի պետ փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենը խնդրում է բոլոր որբանոցների տնօրինություններից, հայտնել իրենց հաստատությու-

[1] «Հորիզոն», 1915, N 255, 12 նոյեմբերի:

ներում գտնվող վասպուրականցի որբերի անունը, ազգանունը, որ բնակավայրերից են և ծնողների ունեցած գույքի մասին տեղեկություններ, որպեսզի կարողանա «պահպանել այդ որբերի ժառանգութիւնը և խնամակալութիւն կարգել նրանց գոյքերի վրայ...»[1]:

1915 թ. աշնանը Ա. Տերմենը Վանում կազմակերպում է քաղաքապետարան[2], դատարան, ոստիկանություն և երկրապահ գունդ (միլիցիա): Դատարանի նախագահն էր Ա. Համբարյանը, իսկ անդամներն էին՝ իրավաբան Եղիա Քաջունին և երամյան դպրոցի փոխտեսուչ Մ. Նալբանդյանը[3]: Միլիցիան գլխավորում է սահմանադիր-ռամկավար Ա. Եկարյանը, որի տեղակալն էր ամերիկյան բանակի կապիտան, վերակազմյալ հնչակյան Ջիմ Չանգալյանը: Գունդն բաղկացած էր 120 հոգուց, որոնց մի մասն ամերիկահայեր էին[4]: Պողոս Նուբար փաշան միլիցիայի գործունեության համար տրամադրում է չորս հազար ռուբլի[5]: 1915 թ. դեկտեմբերի 13-ի դրությամբ մարտիկների թվաքանակը հասնում է 222 հոգու[6]:

Միլիցիայի ներկայությունը խիստ անհրաժեշտ էր: Բանն այն է, որ թուրքական բանակի հետ հեռացած քրդական ցեղերի մի մասը, հիմնականում կանայք և երեխաներ, վերադառնում էր իրենց գյուղերը: Տղամարդկանց հիմնական մասը շարունակում էր մնալ լեռներում: Ընտանիքներն ուղարկելով տները, նրանք դրանով ձեռք էին բերում արագ տեղաշարժվելու հնարավորություն և ռուսների հետապնդման դեպքում կարող էին առանց դժվարության հեռանալ: Այդ էր պատճառը, որ Վանի հայությունը մեծ տեղ էր տալիս միլիցիային, քանի որ նրա ներկայությունը կարող էր զսպող դեր ունենալ:

---

[1] «Հորիզոն», 1915, N 267, 27 նոյեմբերի:

[2] Սկզբնապես քաղաքապետն էր Ռուբեն Շատվորյանը, որն այդ պաշտոնում աշխատում է ութ ամիս: Նրան փոխարինում է Ավետիս Թերզիբաշյանը, տե՛ս «Վան-Տոսպ», 1916, N 36, 31 յուլիսի:

[3] «Աշխատանք», 1916, N 11, 8 յունիս:

[4] «Հորիզոն», 1915, N 200, 7 սեպտեմբերի, տե՛ս նաև *Յովհաննիսյան Գ.,* Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը, էջ 187: Ջ. Չանգալյանը ԱՄՆ է վերադառնում 1916 թ. հոկտեմբերի 7-ին, տե՛ս նույն տեղում, 1916, N 210, 21 սեպտեմբերի:

[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 610, թ. 95, 107 շրջ.:

[6] *Կարապետյան Մ.,* Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները, էջ 150-157:

«Հորիզոնը» հայտնում է, որ Ոստանի գավառ են վերադարձել քրդերը, որոնք սկսել են զբաղվել այգիների մշակմամբ: Թերթը միաժամանակ գրում է. «Հայ ազգաբնակչութեան յարատեւութիւնը կախւած է մեր զինւած ուժի շատութիւնից, այլապէս եղածներն էլ ահաբեկւած փախչում են»[1]: Տեղեկանալով Բերկրիին սպառնացող քրդական վտանգի մասին, Ա. Տերմենի հրամանով այնտեղ են շտապում մոտ հիսուն միլիցիոներ՝ բնակչության հետ միասին հակառակորդին հակահարվածելու համար: Որոշ ժամանակ անց այնտեղ են ուղարկվում Դանիել վարդապետը և Ջհանգիր աղան: Հոկտեմբերի 15-ի դրությամբ Վասպուրականում բնակվում են 12639 հայ, 817 ասորի և 191 թուրք[2]:

Ասորիները բնակություն են հաստատում Այգեստանում: Նրանց բնակության վայրը՝ Խաչ փողոցից մինչև Պստիկ Քյանդրչի՝ տեղացիները կոչում են «Ասորեստան»: Նրանք, ինչպես և հայերը, գտնվում են ծանր սոցիալ-տնտեսական և սանիտարական անտանելի պայմաններում: 10-ից 15 տուն ասորիներ են բնակվում Սղգայում: Ռուսական հրամանատարությունը նրանցից կազմել էր 60-ից 70 հոգուց կազմած հետախուզական խումբ, որին ժամանակ առ ժամանակ ուղարկում էր հակառակորդի՝ հիմնականում քրդերի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու[3]:

Հաստատվում է Տնտեսական նպաստաբաշխ մարմնի կազմը: Նրա նախագահն էր Ա. Տերմենը, իսկ անդամները՝ Կ. Կարախանյանը, Ռ. Հովնանյանը, Ռ. Շատվորյանը, Ջ. Չանկալեանը և Ռ. Տեր-Գրիգորյանը: Նահանգապետը մարմնի սկզբնական գործունեության համար տալիս է հազար ռուբլի: Նպաստաբաշխ մարմինը ձեռնամուխ է լինում քաղաքի և շրջանի օգնության կարիք զգող բնակիչների հաշվառմամբ: Պարզվում է, որ Վանի 1317 և նահանգի մոտ 5500 հոգի կարիք ունեն օգնության[4]: Կարիքավորներին տրվում է միայն հաց: Նախատեսվում է Վանում բացել նաև թեյարաններ ու ճաշարա-

[1] «Հորիզոն», 1915, N 213, 22 սեպտեմբերի:
[2] «Աշխատանք», 1917, Երևան, N 71, 11 յունուարի:
[3] Նույն տեղում, 1917, N 83, 14 փետրուարի:
[4] «Վան-Տոսպ», 1916, N 7, 10 յունուարի, էջ 13:

ներ, քանի որ Նահանգի բնակիչները համեմատաբար լավ են ապահովված հացով:

Գևորգ Ե-ի հանձնարարությամբ Վան է գալիս Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետը: Նա պետք է հավաքեր Վարագա վանքի, Աղթամարի, Լիմ և Կտուց անապատների, ինչպես նաև Վանի եկեղեցիների ձեռագրերը և տեղափոխեր էջմիածին: Հովհաննես վարդապետը և Սմբատ Տեր-Ավետիքյանը էջմիածին են բերում գտնված ձեռագրերը[1]:

1915 թ. դեկտեմբերի 23-ին Վան է ժամանում Քաղաքների միության բժշկասանիտարական ջոկատը (կազմված էր 20 ֆուրգոնից[2]) լիազոր Ա. Աթանասյանի գլխավորությամբ: Վերջինս հիմնում է որբանոց, ուր ապաստան են գտնում մոտ 70 որբ: Նրանց որոշ ժամանակ անց ուղարկում են Դիլիջան: Բացվում է նաև հիվանդանոց՝ 50 մահճակալով: Միաժամանակ Քաղաքների միությունը նախատեսում է բացել երեք սննդակայաններ Վանում և երեքն էլ գյուղերում: Նույն կազմակերպության կողմից Վանում հիմնվում են յոթ թեյատուն, մեկական խանութ, բաղնիք և լվացքատուն: Կովկաս են ուղարկվում 44 որբ՝ ասորիներ, քրդեր և թուրքեր[3]:

Ա. Աթանասյանը գովեստով է խոսում Ա. Տերմենի մասին. «Թէ ինքը և թէ իր տիկինը ծնողական գուրգուրանքով վերաբերում են դէպի տեղական բնակչութիւնը, և պ. Տէրմէն ինքը թաղէ թաղ պտտելով անձամբ հաւաքել է որբերը և իր կառքին մէջ դնելով է տարել որբանոց: Այդ պատճառով էլ վարակուել է տիֆով, որից առողջացել է բարեբաղդաբար: Նրա ամբողջ փափագն է Վանը իր հրաշալի ծովակով դարձնել մի երկրորդ Շվէյցարիա»[4]: Ա. Եկարյանը վկայում է, որ Ա. Տերմենը մտադիր էր ոչ միայն օժանդակել գյուղացիությանը երկրագործական գործիքներով, այլև տնկել ծառեր և զարգացնել ձկնաբուծությունը[5]:

---

[1] «Վան-Տոսպ», 1916, N 10, 31 յունուարի, էջ 15:
[2] Նույն տեղում, 1916, N 7, 10 յունուարի, էջ 13:
[3] «Մշակ», 1916, N 15, 14 յունվարի:
[4] «Վան-Տոսպ», 1916, N 18, 27 մարտի, էջ 10:
[5] *Եկարեան Ա.*, նշվ. աշխ., էջ 267:

Թիմարի գավառում կատարվում է վերաբնակիչների հաշվառում: Գավառում բնակեցված էին 37 գյուղեր, որոնցում ապրում էին 3493 հոգի: Յոթ գյուղեր ունեին իրենց քահանաները: Գյուղացիներն ունեին 442 եզ, 111 գոմեշ, 94 մատակ, 210 կով, 298 ավանակ, 61 ձի, 79 այծ, 318 ոչխար[1]: Ենթադրվում էր, որ գարնանը բնակչության թիվը կհասնի 15 հազարի, ի հաշիվ վերադարձողների: Նրանց նվազագույն կարիքները հոգալու համար անհրաժեշտ է 250 հազար ռուբլի: Նշված գումարի մեջ մտնում են գյուղացիական տնտեսությունների համար ձեռք բերվելիք լծկան կենդանիները, սերմացուն և գյուղատնտեսական գործիքները[2]:

Փոքր ինչ կանոնավորվում է Վանի ներքին կյանքը: Զինվորական իշխանությունների ձեռնարկած խիստ միջոցների հետևանքով գրեթե դադարում են շարքային զինծառայողների կողմից կատարվող անկարգությունները, ինչպես տներ ներխուժելը, գինի ու կին պահանջելը, լքյալ տների խուզարկությունները գանձ փնտրելու համար և այլն[3]:

1916 թ. փետրվարին Կովկասյան բանակի զորամասերի կողմից Մուշի և Էրզրումի գրավումից հետո առավել հրատապ է դառնում գաղթականների վերադարձն իրենց բնակավայրերը: Բնակչության վերադարձի համար ստեղծվում են համեմատաբար ապահով պայմաններ:

Կարևորագույն խնդիրներից էր քաղաքի ջրամատակարարման վերականգնումը: Հայտնի է, որ Վանը սնուցող աղբյուրների հուների մաքրումն իրականացնում էին հայ վարպետները, սակայն 1915 թ. հուլիսից հետո, երբ բնակչության մեծ մասը հարկադրված էր թողնել քաղաքը, աղբյուրների հուների մաքրման աշխատանքներ չէին կատարվել: Այժմ, երբ հնարավորություն էր ստեղծվում բնակչության վերադարձի համար, անհրաժեշտ էր շտապ լուծել ջրի հիմնահարցը: Միայն Այգեստան թաղամասը սնուցում էին տասնմեկ աղբյուր, որոնցից հինգը 1916 թ. փետրվարի դրությամբ ամբողջությամբ ցամաքել էին, իսկ մեկը կիսով չափ էր ցամաքել: Թղթակցությունում

[1] «Վան-Տոսպ», 1916, N 10, 31 յունուարի, էջ 15:
[2] Նույն տեղում, 1916, N 12, 14 փետրուարի, էջ 16:
[3] Նույն տեղում, 1916, N 7, 10 յունուարի, էջ 13:

նշվում է. «Աղբիւրները, եթէ ներկայ վիճակին մէջ մնան, առաջիկայ գարնան Այգեստանի այգիները և ծառաստանները պիտի չորանան, բանջարամշակութիւնը պիտի դադրի և ներկայ բնակչութիւնը դժուար թէ կարողանայ նոյն իսկ խմելու ջուր գտնել»: Ենթադրվում է, որ աղբյուրների հունը մաքրելու և Այգեստանի ջրամատակարարումը վերականգնելու համար անհրաժեշտ է հինգ հազար ռուբլի[1]:

Աղբյուրների սանիտարական ստուգումը կատարվում է մեծ իշխանուհի Տատյանայի կոմիտեի կողմից գործուղված, Պետրոգրադի համալսարանի մանրէաբաններ՝ պրիվատ-դոցենտ Ա. Ֆ. Սուլիմա-Սոլինյանը և նրա օգնական, տիկին Մ. Տուպինսկայան: Նրանց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Քաղաքամէջի աղբիւրները իրենց որակով աւելի ցածր են, քան Այգեստանի ջրերը, ինչ որ կը բացատրուի տներու խիստ կուտակումով և անոնց աղտոտութիւններով»[2]:

Կարևորագույն խնդիրներից էր Վանում կաթողիկոսի առաջնորդական փոխանորդի վերահաստատումը: Դարեր շարունակ հայ առաքելական եկեղեցին ոչ միայն բավարարել է վասպուրականցիների հոգևոր պահանջմունքները, այլև հանդիսացել է դաստիարակող և համերշխող մարմին: Եկեղեցու առաջնորդի ներկայությունը կարևոր էր նաև այն պատճառով, որ նյութական ծանր վիճակում գտնվող հայությունը կարիք ուներ հոգևոր մխիթարանքի: Բացի այդ, օրեցօր հոռիացող բարքերը բացասական էին ազդում բնակչության բարոյահոգեբանական կերպարի վրա: Հաշվի առնելով այդ ամենը, նաև Վասպուրականից ստանալով բազմաթիվ դիմումներ, որտեղ խնդրվում էր տեղում ունենալ հայ եկեղեցին ներկայացնող և գլխավորող հոգևորականի, Գևորգ Ե-ն որոշում է Վասպուրական ուղարկել առաջնորդական տեղապահ Ե. վարդապետ Ներկարարյանին: 1916 թ. փետրվարի 26-ին համանման բովանդակությամբ հրաման է ուղարկվում վարդապետին: Նրան հանձնարարվում էր ներկայանալ ս. էջմիածին, որտեղից նա մեկնելու էր Վան: Տրվելու էր ճանապարհածախս և աշխատավարձ մինչև ապրիլի 1-ը[3]: Մարտի 3-ի նամա-

[1] «Վան-Տոսպ», 1916, N 12, 14 փետրուարի, էջ 5:
[2] «Աշխատանք», 1917, N 71, 11 յունուարի:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 11:

կում Եզնիկ վարդապետը հայտնում է, որ առողջական վիճակն իրեն թույլ չի տալիս անմիջապես կատարել կաթողիկոսի հրամանը, քանի որ ի վիճակի չէ ոչ ձի հեծնել, ոչ էլ կառք նստել: Մարտի 11-ի Գևորգ Ե-ի հրամանով արտոնվում է Եզնիկ վարդապետին մնալ Թիֆլիսում և ապաքինվելուց հետո անմիջապես մեկնել Վան[1]:

Ապրիլի 16-ի նամակում Եզնիկ վարդապետը հայտնում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի դիվանապետ Տիրայր ծայրագույն վարդապետին, որ պատրաստ է վերադառնալ Վան և անցնել իր պարտականությունների կատարմանը[2]: Հավանաբար կաթողիկոսը հաշվի առնելով վարդապետի առողջական վիճակը Վասպուրականի հոգևոր թեմը հանձնում է արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանին, որը միաժամանակ Ատրպատականի հոգևոր առաջնորդն էր:

1916 թ. փետրվարին Մուշի և Էրզրումի գրավումից հետո առավել հրատապ է դառնում գաղթականների վերադարձն իրենց բնակավայրերը: Բնակչության վերադարձի համար ստեղծվում են համեմատաբար ապահով պայմաններ: Վանում և նահանգում գործող ընկերություններն իրենց առաջնահերթ խնդիրներից էին համարում դպրոցահասակ երեխաներին դպրոցներում ներգրավելը: Նախատեսվում է հիմնել դպրոցներ Թիմար գավառի Խժիշկ և Էրէրին գյուղերում: Նրանց բացումը հանձնարարվում է Դանիել վարդապետին:

Ռուսական իշխանությունները դժկամությամբ են թույլատրում հայ գյուղացիներին բնակություն հաստատել Հայոց ձորի գյուղերում: Իսկ Թիմար գավառի հայկական գյուղերի բնակիչները, որպեսզի կարողանան ապահովել են իրենց գոյությունը, ստիպված են լինում ցորեն վաճառել Զիլանի ձորի քրդերին: Դրանով նրանք նպաստում են, որ հացի կարիք զգացող քրդերը ոչ միայն շարունակեն մնալ իրենց տեղում, այլև ամեն վայրկյան հարձակվեն այդ նույն ցորեն վաճառող գյուղացու վրա:

Արևմտահայ փախստականները կենտրոնացել էին ոչ միայն Երևանի, այլև Կովկասի փոխարքայության այլ նահանգներում: Ճիշտ է, ռուսական կառավարական և հասարակական ու հատկա-

[1] ԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1979, թ. 14–15:
[2] Նույն տեղում, թ. 20:

պես հայկական կազմակերպությունները փորձում էին նրանց օգնել, տրամադրելով զանազան օժանդակություններ, այնուամենայնիվ արևմտահայերի դրությունը շարունակում էր մնալ չափազանց ծանր, քանի որ տրամադրվող օգնությունը հասու չէր բոլորին և չէր բավարարում նրանց ամենատարրական կարիքները:

Այդ ամենին գումարվել էին վրացական մամուլում հրատարակվող հոդվածները, որոնք հայերին ամբաստանում էին Կովկասի «գաղութացման» մեջ: Նմանապես վրաց հասարակայնության մի մասը դեմ էր գաղթականներին պետության կողմից վարկեր հատկացնելուն[1]: "Закавказская Речь" թերթում տպագրվում է հոդված, ըստ որի հայ գաղթականությունը հաստատվում է Անդրկովկասում ռուսական իշխանությունների հովանավորությամբ և «ուղղված է Կովկասի բնիկ ժողովուրդների դէմ»[2]: Թերթը բնիկ ժողովուրդ է համարում միայն վրացիներին ու թուրքերին (կովկասյան թաթարներին): Հ. Թումանյանը հարկադրված էր հատուկ հոդվածով հերքել նման անհեթեթությունները և բացահայտել հայ գաղթականության հետ կապված խնդիրները: Նա հետևյալն է գրում. «Ամօթալի է ես վէճը, որ վարում ենք էսօր, ապացուցանելու՝ թէ հայերը նոր, երրորդ ժողովուրդը չեն Կովկասում, թէ տաճկահայերը ետին մտքով չի, ոչ էլ իրենց հայրենիքի բնութեան դաժանութիւնից ու աղքատութիւնից, որ Տաճկահայաստանից փախչում՝ գալիս են Կովկասում դռնէ դուռ ընկնում ու կոտորւում...»[3]:

Նման բարոյահոգեբանական և ծանր տնտեսական դրությունը հարկադրում են արևմտահայերին քայլեր ձեռնարկել օր առաջ վերադառնալ հայրենի բնակավայրերը և վերականգնել ավերված և քանդված օջախները: ՆԳ նախարարության կից գործող առանձին խորհրդակցությունը Կովկասում գտնվող գաղթականությանը տրամադրում է 900 հազար ռուբլի: Գումարը նախատեսվում է մթերքի պահեստներ հիմնելու և բեռնատար ավտոմեքենաներով պարենը փոխադրելու համար: Հայտնելով այս մասին Ս. Հարությունյանին,

---

[1] «Մշակ», 1915, N 163, 28 յուլիսի:
[2] «Հորիզոն», 1915, N 238, 23 հոկտեմբերի:
[3] Նույն տեղում, տե՛ս նաև „Армянский вестник", 1916, N 9, с. 15.

գեներալ Վասիլի Թամամշևը (Թամամշյան) նրան առաջարկում է սկսել պահեստների հիմնման աշխատանքները[1]:

1916 թ. մարտի 17-ին Երևանի արևմտահայ փախստականների հանձնաժողովի ներկայացուցիչներ Արմենակ Մաքսապետյանը, Հմայակ Մանուկյանը և Ղևոնդ Խանջյանը Գյուղատնտեսական ընկերության նախագահ Ա. Սահակյանին ներկայացնում են իրենց կողմից կազմած ծրագիրը՝ Վասպուրականի վերաշինության և փախստականների վերադարձը ապահովելու մասին: Նրանք հայտնում են, որ նման առաջարկով դիմել են նաև կաթողիկոս Գևորգ Ե-ին: Վերջինս իր համաձայնությունն ու աջակցությունն է հայտնել նախագծի մի շարք առաջարկությունների վերաբերյալ[2]:

Ինչու՞ էր հայ հասարակայնությունը, և մասնավորապես վանեցիները, օր առաջ շտապում վերադառնալ իրենց լքված և ավերված բնակավայրերը: Նման շտապողականությունն ուներ իր պատճառները: Արևելյան Հայաստանը, Կովկասը և Ռուսաստանի մյուս քաղաքները նրանց օտար էին: Օտար էին նրանց համար տեղի բարքերն ու սովորույթները: Անորոշ վիճակին նրանք նախընտրում էին իրենց քարուքանդ եղած ծննդավայրը: Անհանգստություն էր պատճառում հատկապես ռուսական կառավարության որոշումը՝ Ալաշկերտի հովիտը բնակեցնել ռուսներով:

Կադետական "Речь" թերթի կարծիքով, կառավարությունը ցանկանում է «Ռուսաստանի և Թուրքիայի սահմանի վրա ստեղծել մի բաւական լայն հողաշերտ ռուս բնակչութեամբ, որպէսզի այդ հողաշերտն անջատի ռուսահայերին թիւրքահայերից»[3]: Ելույթ ունենալով Պետական դումայում Պ. Միլյուկովը քննադատում է իշխանություններին այն բանի համար, որ պետականացնում է հայերի կողմից գաղթի հետևանքով լքված հողերը: Նա կոչ է անում հրաժարվել քրդերին պաշտպանելու քաղաքականությունից[4]: Պ. Միլյուկովն իր ելույթներից մեկում հայտարարում է, որ ռուսական բանակի վերջին

[1] «Համբաւաբեր», 1916, N 14, 27 մարտի, էջ 431:
[2] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 2, թ. 32 շրջ.:
[3] «Արեւ», 1916, N 171, 5 օգոստոսի:
[4] «Հորիզոն», 1916, N 62, 18 մարտ:

երկու ճահանջների հետևանքով հայ բնակչությունից սպանվել է 40 հազար մարդ[1]:

Բացի ռուսական կառավարության, հայկական և ռուսական հասարակական ու բարեգործական կազմակերպություններից Արևմտյան Հայաստանի վերաշինությանը մասնակցում են նաև ամերիկյան կազմակերպությունները: Դեռևս 1915 թ. Հ. Մորգենթաուն դիմել էր ամերիկյան հասարակությանը՝ կոչ անելով օգնել փախստականներին:

Մի խումբ ամերիկացի մանկավարժներ, միսիոներներ, արդյունաբերողներ հիմնում են Հայկական Նպաստամատույց կոմիտե և կարողանում են հավաքել 100 հազար դոլար: Նույն թվականի վերջին հիմնվում է «Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեն»[2]: Վերջինս Վանում իր աշխատանքներն սկսում է 1916 թ. մարտին[3]: Կոմիտեն իր ներկայությունը Վանում «ապահովել» էր ավելի վաղ: Մինչև նրա հիմնական անդամների քաղաք գալը, այնտեղ էր գործուղվել բուժակ Կ. Թորգոմյանը: Նա պետք է քաղաքում կազմակերպեր բուժական գործը և լիներ ամերիկյան միսիոներների ներկայացուցիչը, մինչև նրանց Վան ժամանելը[4]:

1916 թ. մարտի 29-ին Քաղաքների միության Գլխավոր կոմիտեի ներկայացրած հաշվետվությունում, նույն կոմիտեի լիազոր Ա. Աբաճասյանը ներկայացնում է զեկուցում «Վանի շրջանի փախստականների հերթական կարիքների մասին»: Նրա կատարած ուսումնասիրությունների և հաշվարկների համաձայն, քաղաքի և վիլայեթի մարդկային կորուստները կազմել են 28 հազար, իսկ նյութականը՝ 100 միլիոն ռուբլի: Նշված ժամանակահատվածում նահանգում բնակվում են 50 հազար հոգի: Տնտեսությունը՝ գլխավորապես գյուղատնտեսությունը կարգավորելու համար նվազագույնն անհրաժեշտ էր 30 հազար խոշոր և 40 հազար մանր եղջրավոր անասուններ, հինգ հազար ձի և ավանակ: 20 հազար դեսյատին հողը ցանելու համար պետք էր 200 հազար փութ սերմացու:

---

[1] «Արեւ», 1916, N 63, 22 մարտի:
[2] *Յովհաննիսյան Ռ. Գ.*, նշվ. աշխ., էջ 143:
[3] ՀԱԱ, ֆ. 221, g. 1, գ. 6, թ. 4 շրջ.:
[4] "Армянский вестник", 1916, N 3, с. 17; «Աշխատանք», 1916, N 39, 14 սեպտեմբերի:

Ա. Աթանասյանը մի շարք առաջարկություններ է անում նահանգում վերաշինությունն իրականացնելու համար: Այսպես, նա գտնում էր, որ պետք է թույլատրել Վան վերադառնալ 25 հազարից ոչ ավելի հոգու: Անհրաժեշտ է Ջուլֆա-Խոյ-Վան ճանապարհի վրա հիմնել տաս սննդակայաններ՝ Վան վերադարձողներին սննդով ապահովելու համար: Ա. Աթանասյանը կարծում է, որ բանջարաբուծությունը զարգացնելու համար, պետք է հայթայթել ութ հազար ռուբլու սերմ: Թիմար գավառի 20 հազար բնակիչների կարիքները բավարարելու համար պետք է 255 հազար ռուբլի: Միաժամանակ, Քաղաքների միության լիազորն ընդգծում է, որ նշված միջոցառումներն հրատապ են, քանի որ «ուշացումը ծանր է նստելու այն ազգաբնակչութեան համար, որն առանց այդ էլ չափից դուրս զոհեր է տալ ներկա պատերազմում»[1]:

1916 թ. ապրիլի 12-ին Հայաստանի վերաշինության կենտրոնական հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Հ. Առաքելյանը դիմում է կաթողիկոսական դիվանապետ Տիրայր վարդապետին, խնդրելով Վանի միլիցիային հատկացնել Պողոս Նուբար փաշայի տրամադրած չորս հազար ռուբլին, որն ստացվել է 1915 թ. նոյեմբերի 11-ին[2]:

ԿՀԲԸ-ի կից Հայկական կենտրոնական կոմիտեն Կովկասյան ռազմաճակատի փախստականների գծով գլխավոր լիազոր, գեներալ Վ. Թամամշևից ստանում է 60 հազար ռուբլի Վանի շրջանի համար լծկաններ և սերմացու գնելու համար[3]: Ամերիկացիներն իրենց գործունեության համար ընտրում են Հայոց ձորի հովիտը: Այստեղ, հունիսի 1-ի դրությամբ գտնվում էին մոտ երեք հազար փախստական: Մեկ ամսվա ընթացքում նրանց տրվում է ութ հարյուր լծկան և կաթնատու կենդանիներ[4]: Կոմիտեի անդամները Հայոց ձորի 35 գյուղում բաժանում են 400 եզ, 100 կով, 50 գոմեշ և 10 հազար ռուբ-

[1] «Արեւ», 1916, N 74, 4 ապրիլի:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1296, թ. 31 և շրջ.:
[3] «Համբաւաբեր», 1916, N 22, 29 մայիսի, էջ 687:
[4] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 4 շրջ.:

լու սերմացու: Յուրաքանչյուր երեք ընտանիքին տրվում է մեկ զույգ եզ, իսկ կովերը՝ այրիներին[1]:

Հունիսի 7-ի Ս. Հարությունյանին ուղված հեռագրում Ս. Մալխասյանը և Կ. Համբարձումյանը հայտնում են, որ չի ստացվել խոստացված 40 հազար ռուբլին և գութանները: Նրանք խնդրում են արագացնել գութանների և մանգաղների առաքումը, քանի որ կկորցնեն ժամանակը և չեն հասցնի կատարել հողի աշնանային հերկը: Միաժամանակ տեղեկացվում է, որ շուտով կստացվեն լծկանները, ուստի չպետք է հապաղել, քանի որ հակառակ դեպքում ձմռանը բնակչությունը սովահար կլինի: Ս. Մալխասյանը և Կ. Համբարձումյանը խնդրում են շտապեցնել գումարի առաքումը գեներալ Վ. Թամամշևի և փոխգնդապետ Ա. Տերմենի միջոցով[2]:

Պարսկաստանից Վան է ժամանում Ա. Սահակյանը տեղում իրավիճակին ծանոթանալու համար և համակարգելու ԿՀԲԸ-ը, Նպաստամատույց և Գյուղատնտեսական ընկերության աշխատանքները: Նա միաժամանակ հանդիսանում է «լիազօր Կովկասեան զօրագծի փախստական-գաղթականների հոգատարութեան գլխաւոր Լիազօրի»[3]: Հավանաբար նրա գալը պայմանավորված էր Վանից օգնություն ողարկելու Սալմաստում և հարակից շրջաններում ծանր դրության մեջ գտնվող հայ և ասորի գաղթականությանը[4]:

1916 թ. հուլիսի 26-ին ներկայացրած հաշվետվությունում Ա. Աթանասյանը նշում է, որ տեղում զգալի աշխատանքներ է իրականացրել Տատյանայի կոմիտեն և նույն թվականի մարտից Վանում գործունեություն ծավալած «Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեն»: Վերջինս մեկ ամսվա ընթացքում՝ մինչև մայիսի 1-ը երեք հազար փախստականի բաժանել էին մինչև երեք հազար գլուխ խոշոր եղջրավոր անասուն և մինչև հազար փութ ցորեն և այլն: Բացի այդ, ամերիկացիները Վանում կազմակերպում են քաղաքի փողոցների, բակերի և տների, աղբյուրների և առվակների մաքրումը աղբից: Նրանք արհեստավորներին տալիս են վարկ սե-

---

[1] «Մշակ», 1916, N 106, 11 մայիսի:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 436:
[3] «Գիւղատնտես», 1916, N 10, 5 յունիսի, էջ 157:
[4] «Համբաւաբեր», 1916, N 24 12 յունիսի, էջ 751-752:

փական գործը հիմնելու համար[1]: Ամերիկացիներին զարմացրել էր, որ հայ գյուղացին նման աղետներից և ողբերգություններից հետո ոչ միայն չէր հուսահատվել, այլև շարունակում էր քրտնաջան աշխատել[2]:

Գլխավոր խնդիրը՝ վերաշինողներին սննդամթերքով ապահովելն էր: Ճիշտ է, վերը նշված կազմակերպությունները որոշ չափով փորձում էին մեղմել պարենի տագնապը, սակայն հիմնական գյուղատնտեսական աշխատանքն իրականացնում էին հայ փախստականները: Նրանք դաշտերից հավաքում էին նախորդ տարվա գրեթե փտած ցորենը և այդ կերպ փորձում իրենց ապահովել հացով[3]: Կովկասում գործում էր ԱՄՆ-ի հայանպաստ կոմիտեն, որի նախագահն էր Թիֆլիսում ամերիկյան հյուպատոս Սմիթը: Անդամներից էր Մաքկալըմը, որը Բորդի[4] միսիոներ էր:

1915 թ. նոյեմբերի 9-ի նամակում ԱՄՆ-ի հայոց թեմի առաջնորդ Սուրեն վարդապետ Վեհունին ամերիկյան բողոքական քարոզիչների իրական նպատակների մասին հետևյալն է հայտնում կաթողիկոսին. «միսիոնարները տարիներէ ի վեր Ամերիկայի ժողովուրդին քարոզած էին, թէ իրենք կռապաշտ հայերին քրիստոնեա դարձնելու առաքելական ծանր պաշտօնը ստանձնած են և այդ կերպով միլիոններ էին հաւաքած ամերիկացիներից և դեռ շարունակում են հաւա-

---

[1] *Սահակյան Ռ.,* Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, ԲՀԱ, N 1-2, 2007, էջ 41, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 4 շրջ.:

[2] «Համբաւաբեր», 1916, N 21, 22 մայիսի, էջ 651-652:

[3] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 4 շրջ.:

[4] Կազմակերպությունը հիմնվել է 1810 թ. սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ի Կոնեկտիկուտ նահանգի Ֆարմինգտոն քաղաքում մի խումբ բողոքական հոգևորականների կողմից: Կազմակերպությունը կոչվել է «Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդ» (“American Board of Commissioners for Foreign Missions”), որն արևմտահայ մամուլում անվանվում էր «Ամերիկյան Պօրտ ընկերություն», իսկ կարճ՝ Պօրտ կամ Բորդ, տե՛ս *Փայասլյան Ս.,* Ամերիկացի բողոքական միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի առաջին կեսին, ԲՀԱ, 2005, N 1, էջ 120, տե՛ս նաև *Зинина Н. Г.,* Американские миссионеры в Османской империи (XX-начало XIX века). Известия Саратовского государственного университета. Серия История. Международные отношения, выпуск 2, том 2, Саратов, 2009, с. 48-51 http://www.sgu.ru/massmedia/izvestia_hmo/210

քել»[1]: Կարելի է ենթադրել, որ նման կերպ ամերիկացի քարոզիչները ցանկանում էին ոչ միայն արդարացնել տասնյակ տարիներ ծախսված գումարները, այլև փորձել «համալրել» բողոքականության շարքերը: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել այն հսկայածավալ աշխատանքները, որ կատարեցին ամերիկյան կազմակերպությունները Արևմտյան Հայաստանում, իսկ 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունում, ապա՝ Խորհրդային Հայաստանում:

Քաղաքների միությունը բացի Վանի շրջանում օգնություն հասցնելուց, երկու հիվանդանոց է հիմնում Խոյում և Վանում, որբերի համար ապաստարաններ, Ջուլֆա–Խոյ–Վան ճանապարհի վրա սննդակայաններ վերադարձողների համար, մի շարք արհեստանոցներ Վանում, կառուցել է երեք նավ: Ա. Աթանասյանի գնահատմամբ, Վանում և շրջանում ծավալած աշխատանքներով Քաղաքների միությունն առաջին տեղն է զբաղեցնում[2]: Իսկ Պետրոգրադի Հայոց ընկերության լիազոր Ս. Տիգրանյանը Վանում բացվող արհեստանոցի և գյուղացիների համար գնում է համապատասխան գործիքներ: Տատյանայի կոմիտեի տրամադրած միջոցներով Սալմաստում հիմնվում է բուժկետ և սննդակայան[3]:

1915–1917 թթ. և հետագա տարիներին արևմտահայ գաղթականներին օժանդակում են անգլիական մի շարք բարեգործական կազմակերպություններ: Նրանք հիմնականում միավորվում են և հիմնում Անգլիան հայ փախստականներին լոնդոնյան կոմիտեն կամ Անգլկոմը: Նշված կազմակերպությունների թվում էին էմիլիա Ռոբինզոնի հիմնած Հայկական ընկերությունը ("Armenian Society"), Լորդ Մերի ֆոնդը ("Lord Mayor's Fund"– Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդը), Մանչեստրի կանանց ընկերությունը, «Անգլիայի կանանց հայանպաստ ֆոնդը» և այլն:

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1272, թ. 81: 1915 թ. դեկտեմբերին էջմիածին է ժամանում պատվելի Սամուել Գրահամ Ուիլսոնը: Նա եկել էր ծանոթանալու և տեղեկություններ հավաքելու գաղթականների դրության մասին: Պատվելին, սակայն, իր այցելությունն օգտագործում է բողոքական քարոզչություն կատարելու համար: Այդ փաստը «շատ ծանր տպաւորու(թյուն-Ռ.Ս.) թողեց Ն. Ս. Օծութեան վրայ», տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 72:
[2] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 5:
[3] «Համբաւաբեր», 1916, N 25, 19 յունիսի, էջ 781:

է. Ռոբինզոնին բարեգործության մղել էր հայրը՝ Ջոն Ռոբինզոնը: Նա եղել էր "Daily News" թերթի խմբագիրը, հետաքրքրվել է արևմտահայերի վիճակով և մի շարք հոդվածներ էր տպագրել 1890-ական թվականների հայերի կոտորածների մասին: Իր հերթին օրիորդ է. Ռոբինզոնը տեղեկանալով հայ կամավորական խմբերի կազմակերպման և հայ փախստականների ծանր դրության մասին, Հայկական ընկերության գանձապահ, երդվյալ հավատարմատար Կատսը Բոնի հետ, որոշում են կազմակերպել Անգլո-հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդ՝ հագուստ, դրամ և դեղորայք հավաքել վիրավոր կամավորների և գաղթականների համար: Ֆոնդի նախագահությունն է ստանձնել լորդ Ջեյմս Բրայսը[1]:

Հայ գաղթականությանն աջակցելու նպատակով 1916 թ. գարնանը լորդ Հարոլդ Բաքստոնը կազմակերպում է բժշկական խումբ, որն ապրիլին ժամանում է Կովկաս: Խումբը կազմված էր մեկ բժշկից, երեք գթության քույրերից և գաղթականական գործի երկու կազմակերպիչներից: Նրանց թվում էր Արշակ Սաֆրաստյանը[2]: Նրանք այցելում են Էրզրում, Վան և Պարսկաստանի մի շարք շրջաններ և հունիսի 21-ին վերադառնում Թիֆլիս[3]: Իհարկե, Ամերկոմի համեմատ Անգլկոմը համեստ դերակատարություն ուներ, այնուամենայնիվ այս կազմակերպությունը ևս որոշակի աշխատանքներ կատարեց հայ որբերի և գաղթականության փրկության գործում[4]: Հայկական կազմակերպությունները սկսած 1916 թ. մարտից և հատկապես ապրիլից, սկսում են Վանի և շրջակա գավառների վերաշինության կազմակերպումը:

Աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով յուրաքանչյուր կազմակերպությանն ամրագրվում է որոշակի գավառ: Այսպես, Հայաստանի վերաշինության հանձնաժողովը և Նպաստամատույց ընկերությունը գործում էին Թիմարի գավառի մի մասում և Արճակում: Ամերիկյան միսիոներներ Մաք-Կալըմը և Գրեյ-

---

[1] «Հորիզոն», 1915, 17 հունվարի, N 12:
[2] «Արեւ», 1916, 14 ապրիլի, N 78: «Համբաւաբեր», 1916, N 17, 24 ապրիլի:
[3] «Վան-Տոսպ», 1916, N 31, 26 հունիսի:
[4] Մանրամասն տե՛ս *Մարտիրոսյան Մ.,* Փաստաթղթեր Հայաստանում Անգլիական օգնության (Անգլկոմ) կոմիտեի գործունեության մասին, ԲՀԱ, 2005, N 2, էջ 74-86:

սը՝ Հայոց ձորում, Գյուղատնտեսական ընկերությունը՝ Վերին Թիմարի մի քանի գյուղերում և Գավաշում: Վերջինիս ներկայացուցիչներն էին Կոստի (Կոստանդին) Համբարձումյանը[1], Ա. Մաքսապետյանը և Տաճատ Թերլեմեզյանը[2]: Նրանք, ի տարբերություն մյուս կազմակերպությունների, աշխատում էին տեղում հայթայթել անհրաժեշտ պետքերը: Նրանց հաջողվում է ձեռք բերել 110 գլուխ ընտանի կենդանի, մոտ 40 փութ զանազան սերմացու, 200 խոփ և 150 մանգաղ[3]: Ինչպես նշում է Վանում ԿՀԲԸ-ն լիազոր Վ. Փափազյանը, վերը նշված ընկերությունները ոչ միշտ էին համաձայնեցնում իրենց աշխատանքները, որի հետևանքով տուժում էր գործը[4]:

Վանում գործող մեծ իշխանուհի Տատյանայի կոմիտեի ներկայացուցիչ Ս. Տիգրանյանը ցանկանում էր քաղաքում արհեստանոց հիմնել: Կոմիտեն 40 հազար ռուբլի է հատկացնում գարնանացանի սերմի պաշար կուտակելու համար[5]: Բացի հայ բնակչությունից, նահանգ էին վերադարձել նաև եզդիները, որոնք հարկադրված էին անընդհատ մարտեր մղել քրդական զանազան ավազակախմբերի դեմ: Վան քաղաքում ապաստան էին գտել նաև մոտ 500 ասորի, որոնք փախել էին Բոհտանից և գտնվում են սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ[6]:

1916 թ. մայիսի 31-ին ԿՀԲԸ-ն նախագահ Ս. Հարությունյանը լիազորում է Վահան Փափազյանին (Կոմս) ղեկավարել Վանում և Պարսկաստանում գտնվող փախստականներին պարենով մատակարարելու գործը[7]: Նա միաժամանակ պետք է բնակչության համար մար գներ և բաժաներ գյուղատնտեսական գործիքներ և սերմացուներ[8]:

---

[1] 1916 թ. փետրվարից Կ. Համբարձումյանը Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան մասնաճյուղի Վանի շրջանի լիազորն էր, տե՛ս «Վան-Տոսպ», 1916, N 13, 21 փետրուարի:
[2] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 15, թ. 7:
[3] «Հորիզոն», 1916, N 106, 14 մայիսի:
[4] *Փափազեան Վ.*, Իմ Յուշերը, հատոր երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 428:
[5] «Վան-Տոսպ», 1916, N 5, 30 հոկտեմբերի, էջ 12:
[6] «Հորիզոն», 1916, N 119, 31 մայիսի:
[7] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 154, թ. 4:
[8] «Համբաւաբեր», 1916, N 24, 12 յունիսի, էջ 753:

Հունիսի 22-ի հեռագրում Վ. Փափազյանը տեղեկացնում է, որ Վասպուրականում ցորենի սուր կարիք կա, քանի որ օրեցօր ավելանում են փախստականները: Նա նշում է, որ Խոյից ցորեն գնելու համար գումար է անհրաժեշտ[1]: Նրան տրվում է համապատասխան վկայական, որով նա իրավունք ուներ Վան քաղաքում և շրջանում կազմակերպել պահեստներ և կրպակներ՝ բնակչությանը պարեն մատակարարելու համար[2]: Հունիսի 28-ի հեռագրում Վ. Փափազյանը ԿՀԲԸ-ը հայտնում է, որ Վանը և շրջանը հատկապես մեծ կարիք ունի շաքարի, նավթի և ալյուրի: Բեռներն ապահով տեղ հասնելու համար, նա խորհուրդ է տալիս գումակն ուղարկել զինվորականի հետ միասին: Վ. Փափազյանը հայտնում է, որ ստացել է փոխանցված 35 հազար ռուբլի: Նա իր ունեցած 50 հազարի հետ միասին վերցնելով վերը նշված գումարը, պատրաստվում է մեկնել Խոյ՝ Վան պարեն տեղափոխելու համար[3]:

Ռուսական կառավարության կից գործող Հատուկ խորհրդակցությունը 1916 թ. ամռանը Վանի և Դիադինի 30 հազար դեսյատին ցանքատարածությունների մշակման համար հատկացնում է 700 հազար ռուբլի[4]: Հուլիսի 28-ին Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման գլխավոր լիազորի գրասենյակից Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին տեղեկացվում է, որ Գյուղատնտեսական ընկերության լիազոր Ս. Տեր-Մկրտչյանին տրվելու է 50 հազար ռուբլի՝ Վանի նահանգի համար Պարսկաստանում սերմացու գնելու նպատակով[5]: Ընդհանուր առմամբ Վանում և շրջանում իրենց գործունեությունն էին ծավալել յոթ ընկերություն: Հմայակ Մանուկյանը վկայում է. «Սոյն ընկերութիւնները մեծ եռանդով եւ մրցակցութեամբ ձեռնարկած էին Վասպուրականի վերաշինութեան գործին եւ ժողովուրդը հետզհետէ աւելի մեծ թափով կը լեցուէր Վասպուրական՝ վե-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 496, թ. 6:
[2] Նույն տեղում, թ. 3 շրջ.:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 496, թ. 11:
[4] «Համբաւաբեր», 1916, N 29, 17 յուլիսի, էջ 918: Մինչև պատերազմը Վանի նահանգում հավաքվել է 3 միլիոն 600 հազար փութ ցորեն և 2 միլիոն 700 հազար փութ գարի, տե՛ս „Армянский вестник“, N 12–13, 1916, с 13.
[5] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 5:

րադառնալով Կովկասէն եւ Պարսկաստանէն»[1]: Ըստ նրա, 1916 թ. ամռանը Վանում և գյուղերում հաստատվել էր 50 հազար բնակչություն[2]:

Ռուսական բանակի հրամանատարությունը Վանի նահանգապետ էր նշանակել գեներալ Պ. Վորոնովին: Ինչպես նշում է Վանում և Պարսկաստանում Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգոր Օհանջանյանը. «Հայը՝ Վօրօնօվի[3] և Տէրմէնի օրով ամենասարսափելի տարրն էր: Տէրմէնի անզոր համակրանքը դէպի հայերը՝ աւելի բորբոքում էր Վօրօնօվի ատելութիւնը դէպի վասպուրականցին»[4]: Այն բանից հետո, երբ նահանգից հեռանում է գեներալ Վորոնովը, վերաբերմունքը դեպի հայերը փոխվեց: Իշխանությունները, բացառությամբ մի քանի գյուղերի պարետների, հասկացան, որ «քրդերի հետ բարեկամանալն անկարելի բան է»[5]:

Գ. Օհանջանյանի կարծիքով, գեներալ Վլադիմիր Բուրկովսկուն[6] Վանի նահանգապետ նշանակելը որոշակի հույսեր է առաջացնում տեղի հայության շրջանում: Նրա համոզմամբ, գեներալ Բուրկովսկին «եկել է ոչ թէ իշխելու, այլ կառավարելու...»[7]: Հուսադրող էին նահանգապետի գործնական առաջին քայլերը: Նա առաջին հերթին կատարում է նահանգի վարչական բաժանումը և նշանակում է գավառների կառավարիչներ և պաշտոնյաներ:

---

[1] Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի յիշատակարանը), Վէմ, 1937, Փարիզ, թիւ 1, էջ 59:

[2] Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի յիշատակարանը), Վէմ, 1937, Փարիզ, թիւ 1, էջ 59:

[3] Գեներալ Հ. Հախվերդյանը Վորոնովի մասին հետևյալն է հաղորդում. «Նրա անունը համարժեք էր վախկոտությանը: Վորոնովն իրեն խայտառակել էր 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ: Պատերազմի մասնակիցների համոզմամբ Պրիմորսկյան դրագունյան գունդը պետք է ղեկավարեր ոչ թե Վորոնովը, այլ նրա կինը: Վերջինս սանիտարական թռուցիկ ջոկատի պետն էր և իր ենթակաների հետ հաճախ գտնվում էր առաջավոր դիրքերում», տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 51 շրջ.:

[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 3:

[5] Նույն տեղում, գ. 171, թ. 9 շրջ.: Ա. Եկարյանը հետևյալ կերպ է գնահատել Ա. Տերմենի գործունեությունը. «Գնդ. Տէրմէնի բարեացակամ վերաբերումը դէպի հայերս, կարելի է ըսել անսահման էր», տե՛ս Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 263:

[6] Գեներալը նահանգապետ է նշանակվել 1916 թ. հոկտեմբերին, տե՛ս «Աշխատանք», 1916, N 48, 15 հոկտեմբերի:

[7] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 10:

Լիազորն առաջարկում է Հայկական կենտրոնական կոմիտեին թարգմանիչ նշանակել նահանգապետարանում, քանի որ վերջինիս հաստիքներում նման պաշտոն նախատեսված չէ: Բացի այդ, անհրաժեշտ է ունենալ գաղթականներին օգնող իրավաբանական ծառայություն: Դա հնարավորություն կտար ոչ միայն իրավաբանական խորհրդատվություն կազմակերպել, այլև արագորեն լուծել ծագող բոլոր խնդիրները:

Գ. Օհանջանյանն առաջնահերթ է համարում հասնել նրան, որ իշխանությունները թույլատրեն հայ բնակչությանը ևս զենք կրել: Միաժամանակ անհրաժեշտ է իշխանությունների թույլտվությամբ Վասպուրականում բնակվողների թիվը հասցնել 40-ից 50 հազարի: Դա հնարավորություն կտար ունենալ զենք կրելու ընդունակ մինչև 20 հազար տղամարդ: Նման ուժերի ներկայությունը զսպող ազդեցություն կունենար քրդերի համար և անհրաժեշտության դեպքում համարժեք գործողություններով կհարկադրեր քրդերին ձեռնպահ մնալ հայկական բնակավայրերի վրա հարձակվելուց[1]:

1916 թ. հունվարին Ազգային բյուրոն Բուլղարացի Գրիգորի ղեկավարությամբ 12 հոգուց բաղկացած հեծյալ խումբ է ուղարկում Վան: Նրանք հիմնականում մասնակցում են ռուսական զորքերի հետախուզական գործողություններին[2]:

Փետրվարի 28-ին Ա. Աթանասյանը Վանից հայտնում է, որ օրեցօր ավելանում է վերադարձողների թիվը: Այս հանգամանքն անհանգստացնում է տեղական իշխանություններին, քանի որ նրա վրա են ծանրանում վերադարձողների կեցության հետ կապված խնդիրները: Ա. Տերմենի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում Ա. Աթանասյանը նշել է, որ առաջնահերթ օգնության կարիք ունեն գլխավորապես Ներքին Թիմարի 36 գյուղերը, որտեղ հիմնականում կենտրոնանալու էին վերադարձող վասպուրականցիները: Նրանց կեցության համար անհրաժեշտ էր առնվազն 131500 ռուբլու սերմա-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 13 շրջ.:

[2] Դէպքերը Վասպուրականում (Հմ. Մանուկեանի յիշատակարանը), Վէմ, 1937, Փարիզ, թիւ 1, էջ 59: Տ. Բաղդասարյանը և ընկերները Վան էին եկել 1916 թ. փետրվարի 17-ին, տես ***Բաղդասարեան Տ.,*** Վանի երկրորդ կռիւները եւ վերջին իշխանութիւն, Վէմ, 1938, Փարիզ, թիւ 3, էջ 15:

ցու, 48 հազար ռուբլու լծկան, 44 հազար ռուբլու կաթնատու անասուններ ու 25000 ռուբլու երկրագործական գործիքներ գնելու համար: Նշված պետքերն ապահովելու դեպքում, բնակչությունը կարող է մշակել 9050 դեսյատին հող, որը բավարար կլիներ 25 հազար հոգու կեցությունն ապահովելու համար: Ներդրված գումարը բնակչությանն կապահովի մեկ միլիոն ռուբլու եկամուտ: Խորհրդաժողովում որոշվեց անհրաժեշտ գումարը խնդրել կառավարությունից՝ երկուսից երեք տարվա ընթացքում մարելու պարտավորությամբ:

Փախստականներին նպաստող Թիֆլիսի հայ ընկերությունների միությունը նախատեսում էր Վան ուղարկել հազար գութան, հինգ հազար գերանդի, 1300-ից ավելի մանգաղ, մեծ քանակությամբ կացին, բահ, թիեր և այլն: Այդ ամենի համար տրամադրվել է 100 հազար ռուբլի, 150 հազար ռուբլի էլ հատկացվել է Պարսկաստանից լծկաններ գնելու համար: Իր հերթին Ամերկոմը Պարսկաստանի և Վանի շրջանի հայերի համար գնում է ընտանի կենդանիներ, որոնց թվում նաև լծկաններ 350 հազար ռուբլի արժողությամբ[1]: Կովկասի փոխարքայի գրասենյակից Գյուղատնտեսական ընկերության լիազոր Ս. Տեր-Մկրտչյանին փոխանցվում է հիսուն հազար ռուբլի «սերմացու գնելու և ուղարկելու Վանի շրջանը տեղական ազգաբնակութեան համար արտերը սերմանելու»[2]:

Առաջնահերթ խնդիրներից էր բնակչության տեղավորումը Հայոց ձորի գյուղերում: Երկու նպատակ կար՝ գյուղացիներին «քաղաքէն հանել եւ հողին կապել՝ հոգալով իրեն լծկան եւ սերմացու»: Գավառը համարվում էր վտանգավոր տարածք, քանի որ ենթակա էր թուրք-քրդական հարձակումներին: Բնակչությունն ստանալով աջակցություն, հնարավորություն կունենա կազմակերպել սեփական ինքնապաշտպանությունը[3]:

Անհրաժեշտ էր վերականգնել քարուքանդ եղած և ավերակի վերածված տները: Աշխատանքները դժվար էր կատարել, քանի որ մարդիկ մշտական թերսնումից և զանազան հիվանդություններից հյուծված, դժվարանում էին իրականացնել շինարարական աշխա-

---

[1] «Համբաւաբեր», 1916, N 16, 10 ապիլի, էջ 497:
[2] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 19 և շրջ.:
[3] *Բաղդասարեան Տ.,* նշվ. հոդվածը, Վեմ, 1938, Փարիզ, թիւ 3, էջ 18–19:

տանքները: Այդ ամենին պետք է ավելացնել պարենի պակասը: Այսինքն, մինչև մարդկանց տեղափոխելը, անհրաժեշտ էր նրանց ապահովել նվազագույն մթերքով, որպեսզի գյուղացիներն ի վիճակի լինեին աշխատել: Արագ կարգով սկսում են տեղափոխել ընտանի կենդանիներ: Համազասպի մարտիկները մոտ երեք հարյուր լծկաններ են բերում Հայոց ձորի բնակչությանը բաժանելու համար[1]:

Վ. Փափազյանն իր հուշերում նշում է. «Ամենեն սիրուած ժողովրդական դեմքը Կոստին էր:

Կազմակերպչական տաղանդով օժտուած, խիստ մատչելի և մանավանդ հոգածու և պատրաստակամ այդ ընկերը, իրավամբ զգայուն հայր մը դարձած էր ժողովուրդին: Նոյնպիսի նախախնամական դեր կը կատարեր Գյուղատնտեսական ընկերութեան ներկայացուցիչ Ավետիս (Ավետիք – Ռ. Ս.) Սահակեանը»[2]:

Վասպուրականը, որ հայտնի էր իր կրթական օջախներով, խիստ տուժել էր պատերազմի հետևանքով: Ուսումնական հաստատությունների մեծ մասը թալանվել և քարուքանդ էր արվել: Ոչնչացվել էր մի քանի սերունդների տասնամյակներ շարունակ ներդրած աշխատանքը: Այնուամենայնիվ, չնայած բացառիկ ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին, վանեցիները ձեռնամուխ են լինում քանդված մշակութային օջախների վերականգնման աշխատանքներին: Հայությանն է դիմում Վանի «Ազատութեան լոյս» գրադարան-ընթերցարանի վարչությունը, խնդրելով թերթերի խմբագրություններին, հրատարակչություններին և քաղաքացիներին նվիրաբերել թերթեր և գրքեր[3]:

1916 թ. հուլիսի 24-ին Ա. Աճեմյանը, Հ. Կոսոյանը և Բարունակ Կապուտիկյանը կաթողիկոսին ուղղված նամակում հայտնում են, որ

---

[1] *Բաղդասարեան Տ.,* նշվ. հոդվածը, Վէմ, 1938, Փարիզ, թիւ 3, էջ 20:

[2] *Փափազեան Վ.,* նշվ. աշխ., էջ 427: Ռուս հրապարակախոս Սերգեյ Գորոդեցկին հետևյալ գնահատականն է տվել Կ. Համբարձումյանին. «Հենց այդպիսի մարդիկ, ինչպիսին որ նա կա՝ պետք են Հայաստանի վերածնման համար: ...Նա (Կ. Համբարձումյանը - Ռ.Ս.) գիտեր իր ժողովրդին և նրանցից յուրաքանչյուրի մեջ տեսնում էր եղբորը: Ինչ որ բիբլիականություն, նահապետականություն կար նրա մարդու հետ ունեցած հարաբերությունում», տե՛ս *Закарян А.,* Армения и Армянский вопрос в публицистике Сергея Городецкого, ՊԲՀ, 2003, N 1, էջ 97:

[3] «Վան-Տոսպ», 1916, N 33, 10 յուլիսի:

գավառների բնակչությանը լրջորեն անհանգստացնում են քրդական հարձակումները: Զինվորական իշխանությունների կողմից հովանավորվող քրդերին զենք է տրվում, իսկ հայ բնակչության զենքը բռնագրավվում է[1]: Քաղաք այցելած Ա. Սաֆրաստյանը հետևյալն է գրում. «թէև քաղաքի լաւագոյն մասը հրդեհուած է, բայց թէ քաղաքի և թէ գաւառների մէջ մի ահաւոր մղձաւանջից վերադարձող ժողովուրդը նոր յոյսերով և նոր եռանդով է կպել իր հայրենիքի և տնտեսութեան վերականգնման գործին»[2]:

Առևտրականները սկսում են ակտիվ հարաբերություններ հաստատել Պարսկաստանի և Կովկասի հետ:

1916 թ. հուլիսի 28-ին Վանում և նահանգում գործող Գյուղատնտեսական ընկերության լիազոր Արշակ Թադևոսյանը Հայ փախստականներին նպաստող ընկերությանը ներկայացնում է իր և Գ. Շահումյանի կողմից կատարած աշխատանքները: Նա հայտնում է, որ մայիսի սկզբներին մեկնում են Պարսկաստան՝ Վանի բնակչության համար լծկաններ գնելու: Դժվարություններ են առաջանում առաջին իսկ օրերից, քանի որ ռուբլին զգալիորեն արժեզրկվել էր և Ատրպատականում բռնկվել էր դաբաղ հիվանդությունը: Սակայն հաշվի առնելով, որ բնակչությունը կարիք ունի լծկանների, սկսում են մեծագույն զգուշությամբ գնել կենդանիները: Գնվում են մոտ երկու հազար գլուխ լծկան, որոնցից մոտ 400-ը, այսինքն 20%-ը տառապում են դաբաղով: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հաջողվում է վարակը տեղայնացնել:

Ա. Թադևոսյանը ներկայացնում է Պարսկաստանում գնված կենդանիների քանակը և արժեքը:

Գնված է՝

| Շրջանի անունը | Եզ | Կով | Արու գոմեշ | Սատակ գոմեշ | Ընդհանուր թիվ | Վճարված է | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 1 և շրջ.:
[2] «Համբաւաբեր», 1916, N 27, 3 յուլիսի, էջ 837-838:

| | գլուխ | գլուխ | գլուխ | գլուխ | | ռուբ. | կոպ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մարաղա | 594 | 72 | 87 | 69 | 822 | 102177 | 33 | Միջին հաշվով եզն արժե 100-120, գոմեշը՝ 140-180, կովը՝ 90-100 ռուբլի |
| Սալմաստ | 542 | 41 | 30 | 2 | 615 | 66238 | 70 | |
| Խոյի շրջան | 502 | 27 | 4 | - | 536 | 56899 | 95 | |
| Վանում | 192 | 162 | 90 | - | 444 | 51722 | 50 | |
| Գումար | 1830 | 302 | 211 | 71 | 2414 | 277038 | 48 | |
| Ուղարկվել է Վան | | | | | | | | |
| Սալմաստից | 1004 | 95 | 104 | 55 | 1258 | - | - | |
| Խոյից | 476 | 23 | 4 | - | 503 | - | - | |
| Գնվել է Վանում | 192 | 162 | 90 | - | 444 | - | - | |
| Գումար | 1672 | 280 | 198 | 55 | 2205 | - | - | |

Այսպիսով, մայիսի 10-ից մինչև հուլիսի 10-ը գնվել է 2414 գլուխ խոշոր եղջրավոր կենդանի, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 277038 ռուբլի 48 կոպեկ: Վան և նահանգ բերվել է 2205 գլուխ կենդանի: 199 կենդանի Վան բերվելու էին մինչև հուլիսի 15-ը[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 3-4:

Ա. Թադևոսյանի համոզմամբ, բացի գնված կենդանիներից, հարկավոր են ևս 1500 լծկան, որպեսզի հնարավոր լինի մշակել 10 հազարից 15 հազար դեսյատին աշնանացանի համար: Նշված տարածքը ցանելու համար պետք է հայթայթել 100 հազար փութ սերմացու: Ինչպես կենդանիների, այնպես էլ սերմացուի մեծագույն մասը գնվելու է Պարսկաստանում, քանի որ Վանի նահանգում երկու տարվա ընթացքում գրեթե երկրագործական աշխատանքներ չեն կատարվել[1]:

Մի խումբ վանեցիներ հիմնում են «Վան» կոպերատիվ ընկերությունը, որը քաղաքի բնակչությանը պետք է մատակարեր գյուղատնտեսական մթերքներ[2]: Բնակչությունը ձեռնամուխ է լինում տների և խանութների նորոգմանը: Մեծ քանակությամբ բնակչության առկայությունը զսպող դեր էր կատարում մինչ այդ հակաօրինական գործողություններ, ընդհուպ սպանություններ կատարած ռուսական բանակի որոշ զինծառայողների և կազակների վրա:

Վանում և նահանգում աստիճանաբար կյանքը մտնում է խաղաղ հունի մեջ: Սակայն, 1916 թ. հուլիսի 25-ից սկսած անպաշտոն տարածվող լուրերը հնարավոր նահանջի մասին, ապակողմնորոշում են բնակչությանը: Հրամանատարության կարգադրությամբ Գավաշի և Կարճկանի գավառների բնակչությունը սկսում է լքել բնակավայրերը: Վանեցիներն այն հաստատ համոզմունքն ունեին, որ կռվելով ավելի քիչ կորուստ կունենային, քան փախչելով: Այդ նպատակով դիմում են գեներալ Ֆ. Չեռնոզուբովին, խնդրելով հատկացնել զենք ու զինամթերք, սակայն մերժում են ստանում[3]:

Ցավոք, Վանում տեղակայված հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը միասնական կարծիքի չի հանգում: Առաջին խումբն առաջարկում է անվտանգ վայրեր տարհանել միայն կանանց ու երեխաներին, իսկ տղամարդիկ մնան և կազմակերպեն դիմադրությունը: Շտապ կարգով մի խումբ երիտասարդներ գնում են Հայոց ձոր՝ տեղի բնակչության նահանջը կասեցնելու և դիմադրությունը կազմակերպելու հա-

[1] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 4 և շրջ.:
[2] «Արեւ», 1916, N 78, 14 ապրիլի:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2:

մար: Բնակչությունը, սակայն ռուսական հրամանատարության կարգադրությամբ արդեն սկսել էր հեռանալ: Խուճապն ուժեղացավ այն բանից հետո, երբ ռուսական ստորաբաժանումները սկսեցին լքել Նորդուզի, Շատախի և Գավաշի դիրքերը: Նահանջի հետևանքով հիսուն հազար հոգի լքում են Մուշի, Բիթլիսի և Վասպուրականի շրջանները[1]: Վ. Փափազյանը կազմակերպում է զինված երկու խմբեր: Առաջին խումբը լինելու էր նահանջող բնակչության առաջապահը, իսկ երկրորդը՝ վերջապահը: Վ. Փափազյանի հրամանով Թիմարում հավաքվում են փոխադրական միջոցներ և ինքնապաշտպանական ուժեր: Նա «մնաց դատարկած Վանում՝ ենթարկելով վտանգի, միայն թէ մինչև վերջին րոպէն կարողանայ ազատել պահեստները (ի նկատի ունի ԿՀԲԸ-ն պարենի պահեստները – Ռ. Ս.)»[2]:

1916 թ. հուլիսի 25-ին սկսում է Կարճկանի, իսկ 28-ին՝ Վանի բնակչության նահանջը: Միայն հաջորդ օրը, հավանաբար գեներալ Ֆ. Չեռնոզուբովի հրամանով, Ա. Տերմենին հանձնվեց 126 միավոր հրազեն, որը տրվեց Զ. Չանգալյանի գլխավորած միլիցիային: Ինչպես նշում են վանեցիները, Ա. Տերմենը «հատկապէս համոզուած էր, որ ժողովուրդը կվերադառնա, որովհետև համոզուած էր, որ վտանգ չկա»[3]:

Ըստ Հ. Կոսոյանի և Բ. Կապուտիկյանի, նահանջը բացահայտ խաղ էր, քանի որ հակառակորդը բավականին հեռու էր և քաղաքին որևէ վտանգ չէր սպառնում: Նրանց կարծիքով, այդ «թշնամին», ինչպես ցույց էր տալիս նախորդ տարվա փորձը՝ 300-ից 400 քրդեր էին: Փաստորեն հայկական և քաղաքում առկա ռուսական ուժերի հետ հնարավոր էր կազմակերպել Վանի պաշտպանությունը, եթե թշնամին փորձեր գրոհել: Սակայն գեներալ Վորոնովի հրամանին ենթարկվելով, հայկական միլիցիան հարկադրված էր հուլիսի 29-ի գիշերը հեռանալ քաղաքից[4]: Ի վերջո Ա. Տերմենին հաջողվում է հրամանատա-

---

[1] «Համբաւաբեր», 1916, N 33, 14 օգոստոսի, էջ 1032:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 11:
[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2 շրջ.:
[4] Վանում Վ. Փափազյանին փոխարինած Գր. Օհանջանյանի կարծիքով, նախորդ նահանջների ժամանակ առաջին հերթին փախան գործող կազմակերպությունների ներկայացուցիչները: Նրանց հետևեց բնակչության մի մասը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 12:

րությունից թույլտվություն ստանալ և միլիցիան վերադարձնել քաղաք: Օգտվելով հարմար իրադրությունից Վանում մնացած ռուս զինվորները հրամանատարության թողտվությամբ սկսում են հայերի և զանազան ընկերությունների գույքի և ունեցվածքի կողոպուտը: Թալանվեցին Քաղաքների միության պահեստը, ամերիկյան միսիոներների բերած և 100 հազար ռուբլի արժեցող հագուստը[1]:

Հայկական կողմն առաջարկում է Ա. Տերմենին միլիցիային հանձնել քաղաքի հասարակական կարգի պահպանումը, սակայն Ա. Տերմենն ունենալով գեներալ Վորոնովի հրահանգը չի համաձայնվում: Ա. Տերմենի թույլտվությամբ քաղաք են սկսում վերադառնալ այգետերերը[2]: Օգոստոսի 9-ին միլիցիան կարողանում է ետ մղել Թիմարի գավառի հայկական գյուղերը թալանի եկած քուրդ հրոսակներին: Գավառում կար 3 հազար բնակչություն, որը չէր հավատացել նահանջի իսկությանը և կազմակերպել էր ինքնապաշտպանություն[3]:

1916 թ. հուլիսյան նահանջից հետո, սեպտեմբերին, Վասպուրականում բնակվում էր 15 հազար հայ[4]: Սեպտեմբերի 14-ին Վան է մեկնում Ա. Սահակյանը աշնանացանի հետ կապված աշխատանքները կազմակերպելու համար[5]: Իր «Կործանված դրախտ» հոդվածում Սերգեյ Գորոդեցկին հետևյալն էր գրում. «Իսկական վանեցիներ այժմ Վանում չկան, կամ եթե լինեն էլ, շատ չնչին քանակությեամբ: Մեծ մասով շրջակաների բնակիչներն են: Հարկաւոր էր լինել Վանի եկեղեցում պատերազմում ընկած Քեռու հոգեհանգստին, հարկավոր էր լսել նրանց ճառերը՝ հասկանալու համար թէ ինչպես է ճնշում հայ մարդու բերանում յոյս բառը»[6]: Նա ցավով փաստում է, որ քաղաքում գտնվող գաղթականները խուսափում են որևէ աշխատանք կատարելուց՝ գերադասելով «պառկած մնալ միևնոյն տե-

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 2 շրջ.:
[2] «Համբաւաբեր», 1916, N 33, 14 օգոստոսի, էջ 1032:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 122, թ. 3: «Աշխատանք»-ը փաստում է, որ այդ օրերին Ա. Տերմենը «ցույց տուաւ վերին աստիճանի աչալուրջ և հայրենասեր ընթացք», տե՛ս «Աշխատանք», 1916, N 31, 17 օգոստոսի:
[4] «Հորիզոն», 1916, N 204, 14 սեպտեմբերի:
[5] Նույն տեղում, 1916, N 206, 16 սեպտեմբերի:
[6] «Արեւ», 1916, N 170, 4 օգոստոսի:

ղում:...Դրանք ցաւից հոգեպէս մեռած մարդիկ են, որոնց պիտի յարութիւն տալ»[1]:

Հուլիսյան նահանջից հետո Վան սկսեցին վերադառնալ բարեգործական զանազան կազմակերպություններ: Նրանք, սակայն, լայն գործունեություն չեն ծավալում: Կազմակերպություններին անընդհատ սարսափեցնում էր հերթական նահանջի վտանգը: Հիմնական օժանդակությունը գաղթականներին ցույց է տալիս ԿՀԲԸ-ը: Վերջինիս կողմից բացվում են սննդակայաններ և խանութներ Վանում և Թիմարի գավառի Ալյուր գյուղում: Քանի որ ճանապարհների անպահով դրությունը թույլ չէր տալիս Կովկասից ստանալ անհրաժեշտ քանակությամբ պարեն, որոշվում է դիմել հետևյալ քայլի. «Կովկասում ապրող Վասպուրականցի ընտանիքները տալիս են Վանի (ԿՀԲԸ – Ռ. Ս.) պահեստին իրենց թողած ցորենը և դրա փոխարէն ստանում են ալիւր Բարեգործականի Կովկասի պահեստներից»[2]: Նշված քայլը հնարավորություն է տալիս մեղմել պարենի, հատկապես հացի սուր պակասը Վանում և վերջ տալ տեղի առևտրականների կողմից ցորենը և ալյուրը բարձ գներով վաճառելուն: Բացի այդ, փրկվում է փչացումից գյուղերի զանազան գաղտնարաններում պահված ցորենը: Նշված գործողությունները թույլ են տալիս պահեստավորել գարնանացանի համար որոշակի քանակությամբ ցորեն և այն տեղափոխել Կովկասից: Խնայվում են նաև տեղափոխման համար զգալի դրամական միջոցներ[3]:

Գեներալ Մ. Թամամշևի ներկայացրած հաշվետվության համաձայն, ռուսական կառավարությունը, 1914-ից մինչև 1916 թվականները, արևմտահայ գաղթականների և փախստականների կարիքների համար ծախսել է 25 միլիոն ռուբլի: 1916 թ. դրությամբ կառավարական օգնություն են ստանում 200 հազար հայ[4]: Դեկտեմբերի 10-ի ի զեկուցագրում ԿՀԲԸ-ն Վանի և Պարսկաստանի լիազոր Գրիգոր Օհանջանյանն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է Վանի և շրջանում ստեղծված իրադրությունը: Բանը նրանումն է, որ քա-

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 3:
[3] Նույն տեղում, թ. 4:
[4] «Համբաւաբեր», 1916, N 43, 23 հոկտեմբերի, էջ 1347:

ղաքացիական և զինվորական իշխանությունների միջև չկար ընդհանուր համաձայնություն որոշակի խնդիրների լուծման համար: Այդ պատճառով էլ տեղի են ունենում չհամաձայնեցված գործողություններ, որոնց հետևանքով տուժում էր բնակչությունը:

Լուծման ենթակա հրատապ հիմնախնդիրներից էր կրթության խնդիրը: Գ. Օհանջանյանը ցավով նշում է. «Երրորդ տարին է արդէն, որ մի քանի հազար վասպուրականցի երեխաներ զրկւած են դպրոցից:..դպրոցը գիւղի մէջ մտցնում է որոշ կարգ ու կանոն...»[1]: Դպրոցական աշխատանքները ղեկավարելու համար Հայկական Կենտրոնական կոմիտեն կազմում է երկու նախահաշիվ՝ մեկը ութ հազար ռուբլի՝ երեք դպրոցի համար, ուր ընդգրկվելու էին չորս հարյուր երեխա: Երկրորդ նախահաշվով նախատեսվում էր հիմնել յոթ դպրոց՝ 750 երեխայի համար: Նշված դպրոցների թիվը քիչ էր, քանի որ դպրոցահասակ երեխաների թվաքանակն աճում էր: Այսուր գյուղում չորս հարյուր դպրոցահասակ երեխա կար, սակայն դպրոցական շենքի փոքրության հետևանքով սովորում էին միայն 250 հոգի: Սա նշանակում էր, որ նախատեսվող յոթ դպրոցները կկարողանային ընդգրկել բոլոր սովորել ցանկացողներին: Դրա հետ միասին ավելանալու են դպրոցների գործունեության ծախսերը: Ութ հազար ռուբլին անբավարար կլիներ, ուստի անհրաժեշտ էր ավելացնել գումարը[2]:

Գ. Օհանջանյանը պարտադիր է համարում երեխաներին ռուսերեն ուսուցանելը: Նա առաջարկում է, որպեսզի Այսուր գյուղում ավագ ուսուցիչ նշանակելու դեպքում պարտադիր համարվի նրա ռուսերենի իմացությունը, որպեսզի վերջինս դասավանդի նաև ռուսերեն: Դպրոցներում դասավանդում են բացառապես տեղացի ուսուցիչներ: Դա ևս լրացուցիչ ազդակ է, որպեսզի Վանում մնան նաև երիտասարդներ:

Բնակչության ավելացումը ենթադրում էր նաև լրացուցիչ թվով դպրոցների հիմնումը: Ուստի Գ. Օհանջանյանն առաջարկում է

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 6 շրջ.: Ավելի մանրամասն տե՛ս *Սահակյան Ռ.*, Ուսումնական գործի կազմակերպումը Վանի նահանգում (1917 թ.), ԲՀԱ, 2011, N 1, էջ 12-23:

[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 7 շրջ.:

ԿՀԲԸ-ին կից գործող Հայկական Կենտրոնական կոմիտեին բացել ևս երկու դպրոց Թիմարի գավառի երերին և Խժիշկ գյուղերում: Նախատեսվում է, որ երկու դպրոցներում կուսանեն երեք հարյուր երեխա: Ուսուցիչները լինելու էին տեղացիներ[1]: Դեկտեմբերին ԿՀԲԸ-ն Հայկական կենտրոնական կոմիտեից ստացվում է համապատասխան թույլտվությունը:

Բերդակ գյուղի դպրոցը տեղափոխվում է Լեսկ, որը գտնվում էր Թիմար գավառում, ուր կենտրոնացել էր բնակչության զգալի հատվածը: Գ. Օհանջանյանը գտնում է, որ Ալյուր գյուղի համար անհրաժեշտ է հրավիրել ավագ ուսուցչի, որը միաժամանակ պետք է դասավանդի ռուսերեն: Տեղի դպրոցը բացվել էր 1916 թ. նոյեմբերի 1-ին: Աշակերտների թվաքանակը տատանվել է 109-ից մինչև 190: Նրանցից 120 եղել են տղաներ, իսկ 70-ը աղջիկներ: Դասավանդել են չորս ուսուցիչներ: Ավագ ուսուցիչն է եղել Սուրեն Ժամագործյանը[2]:

Վերականգնողական աշխատանքները պահանջում են, որպեսզի ստեղծվի մի կազմակերպիչ մարմին, որը կգլխավորեր և կհամակարգեր շրջանում աշխատող տարբեր կազմակերպությունների գործունեությունը, որոնք շարունակում են գործել, սակայն առանց միմյանց հետ գործողությունները համաձայնեցնելու: Կազմակերպությունների մի մասի ներկայությունը Վանում ներկայացված էր շատ թույլ, քանի որ նրանց ղեկավարությանը վախեցնում էր հնարավոր նահանջի վտանգը, որի հետևանքով նրանք կարող է կրեն զգալի նյութական կորուստներ:

Գ. Օհանջանյանն անհրաժեշտ է գտնում կազմակերպել տեղի հայության ինքնապաշտպանությունը: Դա առաջին հերթին անհրաժեշտ է ոչ միայն բնակչության անվտանգությունն ապահովելու համար, այլ որպեսզի նրա մեջից հանվի հնարավոր նահանջի վախը: Դրա պատճառն էին անընդհատ շրջանառվող լուրերը, թե այս կամ այն շրջանը, օրինակ Հայոց ձորը ենթակա է հարձակման լուրջ վտանգի: Ուստի անհրաժեշտ է բնակչությանը տեղափոխել Թիմար, որտեղ ավելի ապահով է: Նման խոսակցություններ վարողները էին

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 7, 10:
[2] Նույն տեղում, գ. 1083, թ. 6:

հասկանում, որ Թիմարն ապահով է, քանի որ նրան պաշտպանում է Հայոց ձորը: Վերջինիս լքումն արդեն կվտանգի Թիմարը: Եվ արդյունքում «այժմ վտանգը սպառնում է Թիմարին»[1]:

1916 թ. դեկտեմբերի սկզբներին ԱՄՆ-ից Երևան է գալիս բժշկասանիտարական խումբ, որի կազմում էին բժիշկներ Ազգապատյանը և Ալթունյանը: Նրանք գործելու էին ռուսական Կարմիր խաչի կազմում և հիմնական գործունեությունը ծավալելու Վանում[2]: Քաղաքում կազմակերպվում է «Սերմնացան» կոպերատիվը: Վերջինս կարողանում է զգալի տարածք հերկել և նախատեսում է միջին հաշվով ստանալ չորս հազար փութ ցորենի բերք[3]:

1915-ից 1917 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի գրավված շրջանների, Բաթումի նահանգի և Կարսի մարզի բնակչությանն օգնություն ցույց տվող հայկական զանազան բարեգործական կազմակերպությունները և ընկերությունները չկարողացան միավորվել, ընտրել ղեկավար մի մարմին և կատարել աշխատանքի բաժանում: Հրավիրված մեկ կամ երկու համահայկական համագումարներն ի զորու չեղան լուծելու առկա հիմնախնդիրները: Ընդունվեցին մի շարք կարևոր որոշումներ, սակայն ամենակարևորը պետք է լիներ ուժերի միավորումը, որը սակայն տարբեր պատճառներով, հիմնականում քաղաքական և հավանաբար, ավելի շատ անձնական պատճառներով տեղի չունեցավ: Այդ էր պատճառը, որ վերաշինությունն ընթանում էր շատ դանդաղ: Կազմակերպություններն ու ընկերությունները հաճախ մրցավազքի մեջ էին մտնում ցուցադրելու իրենց հնարավորությունները, որի հետևանքով տուժում էր ընդհանուր գործը:

Այսպիսով, սկսած 1915 թ. աշունից մինչև 1917 թ. որոշակի ընդմիջումներով, Վան-Վասպուրականում զգալի գործունեություն են ծավալում հայկական, ռուսական, ամերիկյան և մասամբ բրիտանական բարեգործական, կրոնական և հասարակական կամակերպությունները ու ընկերությունները: Վանի նահանգում կատարված աշ-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 20:
[2] «Վան-Տոսպ», 1916, N 13, 13 դեկտեմբերի, էջ 15:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1030, թ. 30:

խատանքները, ի համեմատություն Արևմտյան Հայաստանի այլ վայրերի, առավել ծավալուն և լիարժեք էին:

Չնայած 1915 թ. աղետալի և հանցավոր նահանջի, Վանի և նահանգի հայության զգալի մասը կարողանում է փրկվել թուրք-քրդական կոտորածից: Վանը հայ հասարակության շրջանում դիտվում էր որպես ապագ ինքնավար Արևմտյան Հայաստանի մայրաքաղաք: Դա էր պատճառներից մեկը, որ հայկական կազմակերպություններն ուժ, ջանք և ֆինանսական միջոցներ չէին խնայում վերականգնելու ավերված և կողոպտված տնտեսությունը, նպաստելու բնակչության արագ վերադարձին և գյուղատնտեսական կանոնավոր աշխատանքների վերսկսմանը: Վան են գործուղվում ԿՀԲԸ-ի կից Հայկական կենտրոնական կոմիտեի, Գյուղատնտեսական ընկերության, Քաղաքների միության, ամերիկյան կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք սկսած 1915 թ. աշնանից իրականացնում են լայնածավալ աշխատանքներ. դրանք իրենց մեջ ներառնում են բնակչությանը սերմացուի, լծկանների, կաթնատու կենդանիների, հողագործական գործիքների բաժանումը, սննդակայանների, հիվանդանոցների, որբանոցների և դպրոցների հիմնումը:

Հայկական կազմակերպությունները հարկադրված են լինում գործել հիմնականում տեղական ռուսական իշխանությունների ոչ բարեկամական վերաբերմունքի պայմաններում: Նահանգապետ Վորոնովը լուրջ խոչընդոտներ է հարուցում հայկական կազմակերպությունների լիարժեք գործունեության համար: Վերջիններս, ուշադրություն չդարձնելով իշխանությունների նման վերաբերմունքին, շարունակում են համառորեն իրականացնել նախատեսված աշխատանքները:

Ի բարեբախտություն, ռուս պաշտոնյաներից իր բարյացակամ վերաբերմունքով առանձնանում էր Վանի օկրուգի պետ, փոխգնդապետ Ա. Տերմենը: Նա իր հնարավորությունների սահմաններում աշխատում էր օժանդակել հայերին: Վանում կազմակերպվում է քաղաքային ինքնավարություն, որը կազմված էր հայերից: Մեծագույն դժվարությամբ հնարավոր է լինում ստանալ նահանգապետի թույլտվությունը՝ հայկական աշխարհազորային ջոկատ (միլիցիա) կազմակերպելու համար:

Ձեռնարկված միջոցառումները հնարավորություն են տալիս աստիճանաբար սկսել վերականգնել ավերված տնտեսությունը և ձեռնամուխ լինել գյուղատնտեսական աշխատանքներին: Սակայն 1916 թ. հուլիսյան հերթական նահանջն ի չիք է դարձնում կազմակերպությունների բոլոր ջանքերը: Նրանց ունեցվածքը կողոպտվում է: Ընկերությունների և կազմակերպությունների զգալի մասն այլևս ծավալուն աշխատանքներ չի նախաձեռնում, քանի որ երկյուղում են հերթական նահանջի հնարավորությունից, որի հետևանքով կարող են կրել զգալի նյութական կորուստներ:

Միայն ԿՀԲԸ-ի կից Հայկական կենտրոնական կոմիտեն է, որ շարունակում է իր աշխատանքները, սակայն նրա ունեցած միջոցներն ու հնարավորությունները բավարար չէին համալիր խնդիրները լուծելու և Վանի նահանգում բնակվող հայության պահանջներն ապահովելու: Այնուամենայնիվ, Հայկական կենտրոնական կոմիտեն շարունակում է աշխատանքները, որն արդեն 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին տալիս է իր առաջին դրական արդյունքները՝ բնակչությունը վերադառնում և սկսում է վերականգնողական աշխատանքները: Ցավոք 1918 թ. փետրվարին թուրքական հարձակումը հարկադրում է Վան-Վասպուրականի հայությանը մարտին լքել հարազատ վայրերը և հեռանալ՝ հիմնականում Պարսկաստան, ինչպես նաև Իրաք[1]:

## գ. Արևմտահայ գաղթականների խնդիրներով զբաղվող հայ հասարակական -քաղաքական և հոգևոր կազմակերպությունների համագումարը Պետրոգրադում (1916 թ. մայիսի 10-13)

1915 թ. աշնանը Մոսկվայի և Պետրոգրադի Հայկական կոմիտեների համատեղ նիստը որոշում է հրավիրել Պետրոգրադում Հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների ներկայա-

[1] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս *Սահակյան Ռ. Օ.*, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, ԼՀԳ, 2011, N 1–2, էջ 336–362:

ցուցիչների[1] նոր համագումար: Բանն այն է, որ 1915 թ. էջմիածնում գումարված գաղթականական համագումարը[2] չկարողացավ լուծել իր առջև դրած խնդիրները: Ընդունվեց տաս կետից կազմված որոշում, որոնք հիմնականում կյանքի չեն կոչվում, ուստի անհրաժեշտ էր հրավիրել գաղթականական հարցերով զբաղվող կազմակերպությունների և հասարակական միությունների նոր համագումար: Ինչպես նշում է Հ. Մանուկյանը «Անհրաժեշտ է միութեան գիծ մը գտնել, գոյութիւն ունեցող մարմինները ի մի բերել, ոյժերը կեդրոնացնել, գծել որոշ ուղղութիւն մը, նախատեսել գործերու յետագայ գլխաւոր կէտերը»[3]: Համագումարի հրավիրման թույլտվություն ստանալու նպատակով 1916 թ. մարտի 9-ից սկսած Պետական դումայի պատգամավոր Մ. Պապաջանովը մի քանի անգամ դիմում է Պետրոգրադի քաղաքապետի գրասենյակ: Սկզբնապես քաղաքապետարանը թույլատրում է համագումարը հրավիրել 1916 թ. մարտի 26-ից 28-ն ընկած ժամանակահատվածում, սակայն ի վերջո, պաշտոնապես համագումարի գումարման ժամկետը սահմանվում է մայիսի 10-ից 13-ն ընկած ժանակահատվածը[4]:

---

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 117: *Կոստանդյան Է. Ա.,* Նորահայտ արխիվային փաստաթղթեր 1916 թ. մարտին Պետերբուրգում կայացած հայկական համագումարի մասին, ԼՀԳ, 2009, N 2, էջ 255, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 411:

[2] Համագումարին մասնակցում են փախստականների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ: 1915 թ. մարտի 3-ի վերջին նիստում որոշվում է հիմնել Կենտրոնական կոմիտե կաթողիկոսի նախագահությամբ: Կոմիտեն բաղկացած էր չորս հոգևոր և ութ աշխարհիկ ներկայացուցիչներից, տե՛ս Հովիտ, 1915, N 9, 8 մարտի, էջ 140, ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 117, թ. 11 շրջ.-12: Նույն թվականի օգոստոսի 11-ին Թիֆլիսում կայանում է քահանայական ժողով, որին մասնակցում էին 30 հոգևորականներ: Ժողովը որոշում է՝ ա. քահանաների և ծխական հոգաբարձությունների միջոցներով պահել տաս որբ, բ. քահանաների շրջանում կատարել հանգանակություն գաղթականների համար հաց հայթայթելու և Ս. էջմիածին ուղարկելու համար, բ. ընտրել մշտական հանձնաժողով, որը պարբերաբար կկազամակերպի երեկույթներ, համերգներ, կիրատարակի մեկօրյա թերթեր, որոնցից ստացված եկամուտը կօգտագործվի գաղթականության կարիքների ապահովման համար և այլն, տե՛ս «Հովիտ», 1915, N 40, 18 հոկտեմբերի, էջ 623–624:

[3] «Աշխատանք», 1916, N 1, 4 մայիս:

[4] *Կոստանդյան Է. Ա.,* Նորահայտ արխիվային փաստաթղթեր, էջ 255: Հայ գաղթականների մի մասն ապաստանել էր նաև Ռուսաստանի այլ քաղաքներում: Այսպես, Եկատերինոդարում 1916 թ. մարտին գտնվում էին 641 հայ փախստա-

Երևանի արևմտահայ փախստականների հանձնաժողովի կողմից որպես պատգամավորներ ընտրվում են Հ. Մանուկյանը և Ղ. Կոնդ Խաչջյանը, իսկ արևմտահայ ուսուցիչների կողմից՝ Աղթամարի թեմական տեսուչ և Վանի ուսումնական խորհրդի ատենապետ Արամ Մանուկյանը[1]:

Կազմակերպիչ կոմիտեն նախատեսում է աշխատանքները կատարել հետևյալ սեկցիաներով.

1. Գյուղատնտեսական,
2. Ֆինանսական-տնտեսական,
3. Բժշկասանիտարական
4. Դպրոցական-կրթական և որբանոցների
5. Իրավաբանական
6. Կազմակերպչական

Առաջարկվում է լսված բոլոր զեկուցումները և ընդունված որոշումները քննել սեկցիաներում, ապա ներկայացնել «Համագումարի ընդհանուր ժողովի հայեցողությանը»[2]:

Համագումարի նախագահ Ս. Հարությունյանի կողմից առաջարկվում է ընտրել ինը հոգուց բաղկացած հանձնաժողով: Անդամներն էին.

1. Գարեգին վարդապետը՝ էջմիածնի եղբայրական օգնության հանձնաժողովից:
2. Ս. Հարությունյանը՝ Թիֆլիսի ԿՀԲԸ-ն և նրան կից Հայկական կենտրոնական կոմիտեից:
3. Հ. Առաքելյանը՝ Նպաստամատույց և Հայաստանի վերաշինության հանձնաժողովից:
4. Ա. Սահակյանը՝ Գյուղատնտեսական ընկերությունից:
5. Փ. Թերլեմեզյանը՝ Թիֆլիսի հայ փախստականների ընկերությունից:

---

կան: Հետագայում նրանց թիվը հասնում է մոտ յոթ հազարի: Փախստականները գտնվում էին սանիտարահիգիենիկ անասելի ծանր պայմաններում: Եկատերինոդարի Հայկական ընկերության տանը գտնվում էին 2748 հոգի, տե՛ս *Леусян О. А.*, Беженцы первой мировой и гражданской войн в Екатеринодаре (1918-1920), http//www .august-1914.ru/index.html

[1] «Հորիզոն», 1916, N 97, 4 մայիսի:

[2] Համահայկական խորհրդակցություններ, էջ 118:

6. Ս. Մամիկոնյանը՝ Մոսկվայի Հայկական կոմիտեից:
7. Հ. Տեր-Միքայելյանը՝ Բաքվի Հայկական գաղթականական հանձնաժողովից:
8. Ա. Ասրիբեկյանը՝ Պետրոգրադի Հայկական կոմիտեից:
9. Գր. Չալխուշյանը՝ Ռոստովի և Ն. Նախիջևանի հայկական կոմիտեներից[1]:

Վերը նշված հանձնաժողովը պետք է անմիջապես գործի անցներ, անկախ այն հանգամանքից, թե հանձնաժողովի որոշ անդամներ կարող էին ներկա չլինեն[2]:

Հայկական կազմակերպությունների մի մասը դեմ էր հրավիրվելիք համագումարին և ի վերջո չի մասնակցում: Նրանք առաջարկում են համագումարը հրավիրել հունիսի վերջերին, երբ իրենք հնարավորություն կունենան մասնակցել համաժողովին[3]: Վերը հիշատակած կոմիտեները չհամաձայնեցնելով իրենց գործողությունները Կովկասի փոխարքայությունում գործող կազմակերպությունների հետ, սկսում են նախապատրաստական աշխատանքները: Կովկասահայ կազմակերպությունները տեղեկանում են միայն այն բանից հետո, երբ կազմակերպիչ կոմիտեն հանդես եկավ հայտարարությամբ, ուր ասվում էր, որ համագումարը հրավիրվելու է 1916 թ. մայիսի 10-ից 12-ին[4]:

"Голос Кавказа" թերթն անդրադառնալով հրավիրվելիք համագումարին, նշում է, որ փոքրաթիվ մտավորականություն ունեցող սակավաթիվ հայությունը, որը բացառապես կազմված է առևտրականներից, ունի մի քանի կազմակերպություններ, որոնք զբաղված են Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնմամբ: Սակայն հայությունը չունի միասնական կենտրոն, որը կկարողանար համակարգել և ուղղորդել բոլոր աշխատանքները: Թերթը հեգնանքով հաղորդում է, որ հայերը համագումարին պատրաստ չեն: Նրանք իրենց տրամադրության տակ չունեն անհրաժեշտ տվյալ-

---

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 122:
[2] Նույն տեղում, էջ 123:
[3] «Գիւղատնտես», 1916, N 9, 15 մայիսի, էջ 141, տե՛ս նաև «Մշակ», 1916, N 103, 22 մայիսի:
[4] *Հարությունյան Ա.*, Պետրոգրադի գաղթականական համագումարը և նրա նշանակությունը, էջմիածին, 2008, Դ, էջ 73-74:

ներ և «Նույնիսկ հայտնի չէ՝ կա՛ հայ բնակչություն այսպես կոչված Հայաստանում»[1]: Թերթը գտնում է, որ եթե համագումարը եզրակացության գա, որ Հայկական լեռնաշխարհը բնակեցված է գերազանցապես քրդերով ու թուրքերով, դա բացասաբար կազդի հայերի նկատմամբ բարեկամական վերաբերմունք ունեցող տերությունների դիրքորոշման վրա: Հաշվի առնելով վերը նշված փաստարկները, թերթը գտնում է, որ հայկական համագումարը ժամանակավրեպ է[2]:

Կազմակերպիչ մարմինը ցանկանում էր միավորել բոլոր հայկական կազմակերպություններին, որոնք զբաղվում էին գաղթականների օգնության և Արևմտյան Հայաստանի վերաշինության հարցերով: Այդ նպատակով 1916 թ. մարտի 10-ին Գևորգ Ե-ի և Պողոս Նուբար փաշայի նախածեռնությամբ տեղի է ունենում ընդդիմադիր ուժերի և ՀՅԴ համատեղ խորհրդակցություն: Դաշնակցությունը ցանկանում էր, որ Ազգային բյուրոն ամբողջ կազմով ներկայացվեր համագումարում: Դա հակասում էր Կազմակերպիչ մարմնի որդեգրած քաղաքականությանը, քանի որ այն նախատեսում էր ազգային կուսակցություններից՝ հնչակյաններից, սահմանադրառամկավարներից և վերակազմյալ հնչակյաններից և առաջատար թերթեր «Մշակ», «Հորիզոն», «Վան-Տոսպ» և «Գաղափար» խմբագրություններից մեկական ներկայացուցիչներ[3]:

Համագումարին մասնակցում էին մեծ թվով ընկերություններ, «որոնք ոչ մի կապ չունեին գաղթականական գործերի հետ»[4]: Սա նկատել է նաև ժամանակի «Հովիտ» շաբաթաթերթը, որը սխալ է համարում նոր կենտրոն ստեղծելը և գտնում է, որ գաղթականական խնդիրների տնօրինողը Ամենայն հայոց կաթողիկոսն է[5]: Այնուամենայնիվ, վերը նշված կազմակերպություններն, ի վերջո, ուղար-

---

[1] ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 89, թ. 4:

[2] Նույն տեղում: «Հովիտ»-ի կարծիքով անհրաժեշտություն չկա նոր կենտրոն ստեղծել, քանի որ այն գոյություն ունի հանձին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, տե՛ս «Հովիտ», 1915, N 16, 1 մայիսի էջ 242:

[3] *Հարությունյան Ա.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը, «Էջմիածին», 2008, Դ, էջ 74:

[4] Նույն տեղում:

[5] «Հովիտ», 1916, N 16, 1 մայիսի, էջ 242:

կում են իրենց ներկայացուցիչներին, քանի որ չէին ցանկանում բացակայել նման կարևոր և համահայկական նշանակություն ունեցող խորհրդաժողովից, կորցնել իրենց հեղինակությունը և ազդեցությունը հայ հասարակայնության վրա:

1916 թ. մայիսի 10-ին ժամը 14-ին Պետրոգրադում իր աշխատանքներն է սկսում համագումարը: Սկզբում նիստերին ներկա էին 142[1], ապա 175 հոգի[2]: Վ. Տերոյանի վկայության համաձայն Պետրոգրադում հավաքվել էին հայ փախստականներին օժանդակող 29 կազմակերպությունների ներկայացուցիչներ[3]:

Ինչպես նշում է Ավետիս Հարությունյանը, պատգամավորների մեծամասնությունը դաշնակցականներ էին, որոնք «հասցրել էին նախապես տեղեր գրավել բարեգործական հաստատություններում՝ օգտագործելով դրանք իրենց կուսակցական նպատակների համար»[4]

Կարծում ենք, որ Ա. Հարությունյանի նման մոտեցումը չի համապատասխանում իրականությանը: Կուսակցությանն անուղղակի ամբաստանել, որ տեղեկանալով համագումարի աշխատանքների մասին, նախօրոք իր անդամներին էր «մտցրել» այս կամ այն կազմակերպության մեջ՝ սխալ է: Համագումարի մասնակից ՀՅԴ-ն անդամների ճնշող մեծամասնությունը այս կամ այն չափով ընդգրկված էին հայ գաղթականությանն օգնություն ցույց տրվող կազմակերպություններում: Այնպես որ չի կարելի միանշանակ գնահատական տալ ելնելով այն հանգամանքից, որ պատգամավորների մեծ մասը դաշնակցականներ են: Բացի այդ, ՀՅԴ այսպես կոչված կուսակցական նպատակը կամ նպատակները չեն պարզաբանվում հեղինակի կողմից: Մեր կարծիքով, ՀՅԴ հիմնական նպատակն էր՝

---

[1] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 331, տե՛ս նաև *Սահակյան Ռ. Օ.,* Վարազդատ Տերոյան (1887–1938). Նշանավոր ճեմարանականներ, պրակ Բ, էջմիածին, 2009, էջ 464–474:

[2] *Հարությունյան Ա.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը, էջմիածին, էջմիածին, 2008, Դ, էջ 75:

[3] *Սահակյան Ռ.,* Վարազդատ Տերոյան. Կյանքը և գործունեությունը (1887–1937 թթ.), ԲՀԱ, 2005, N 1, էջ 155:

[4] *Հարությունյան Ա.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը, էջմիածին, 2008, Դ, էջ 75:

օժանդակել Երկիր վերադարձող կամ այնտեղ գտնվող հայությանը, կարգավորել նրան ցույց տրվող օգնությունը, ինչպես նաև հայ բնակչության ինքնապաշտպանության կազմակերպումը, որի վերջնական նպատակը՝ «հայացումն» էր՝ հայ բնակչությունից խլված հողերի և հեռացած բնակչության վերադարձը:

Համագումարին ներկա էին սենատորներ Իվանովը, Նիկիտինը, Տատյանայի կոմիտեի նախագահ Ալեքսեյ Նեյդգարդտը (Նեյգարդ), ակադեմիկոս Նիկողայոս Մառը, Պետական դումայի պատգամավորներ Մ. Պապաջանովը և Մովսես Ածեմովը (Ածեմյան), գեներալ Վ. Թամամշևը, Լևոն Մանթաշյանը, գեներալ Իվան Բաղրամովը (Բաղրամյան) և ուրիշներ: Համագումարին ողջույնի հեռագրով դիմում է փոխարքա Ն. Ռոմանովը: Նա կրկին հիշեցնում է, որ ռուսական բանակն ունի սուրբ առաքելություն՝ Թուրքիայի դարավոր ճնշումից քրիստոնյա ժողովուրդների ազատագրումը: Նա հույս է հայտնում, որ Ռուսաստանը կազատագրի հայերին և մյուս քրիստոնյա ժողովուրդներին թուրքական տիրապետությունից[1]: Փոխարքայի և այլոց հեռագրերում որևէ խոսք չկար Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին: Միայն հույս էր հայտնվում, որ հայությունը կազատագրվի Օսմանյան կայսրության տիրապետությունից:

Համագումարի նպատակն էր «միօրինակություն ու համաչափություն մտցնել, օգնության բոլոր տեսակներն ու ձևերը կազմակերպելու հարցերը քննել և թեթևացնել թշվառության մատնված եղբայրակիցների կարիքները»[2]: Մայիսի 10-ի երեկոյան սկսվում են սեկցիաների աշխատանքները, որոնք տևում են չորս օր: Նիստերն ընթանում են օրական մի քանի, իսկ ընդհանուր ժողովը՝ մեկ անգամ:

Դպրոցական սեկցիայի աշխատանքների ընթացքում երևան եկավ մի խոշոր թերություն: Սեկցիայի մասնակիցների մեծ մասը գաղթականական դպրոցներում դասավանդելու փորձառություն չուներ: Եվ դա այն դեպքում, երբ դպրոցահասակ գաղթական երեխաների թի-

---

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 127:

[2] *Հարությունյան Ա.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը, «Էջմիածին», 2008, Դ, էջ 75:

վը 55 հազար էր[1]: Մասնակիցների մեծամասնությունը նախապատվություն տալիս է որբանոցներին, քանի որ «*Դպրոցները*՝ (ներկայացնում են – Ռ. Ս.) (ընդգծումը հեղինակինն է՝ Ռ. Ս.) պատահական և անցողական միություններ: Այդ պատճառով որբանոցները պիտի այժմվանից իսկ դնել հաստատուն և կատարյալ հիմունքների վրա, և ազատել գոնե այդ հաստատությունները անկանոնություններից և պատահական ազդեցություններից. պիտի բարձրացնել գոնե 25 ռուբլու յուրաքանչյուր որբի ամսեկան ծախսը»[2]:

Համագումարի որոշման մեջ նշվում է, որ որբանոցները պետք է գտնվեն «միմիայն Անդրկովկասի գլխավորապես հայ գյուղական միջավայրում, իսկ հետո, երկրում խաղաղություն հաստատվելու առաջին պահին մաս առ մաս տեղափոխվեն այնտեղ (Արևմտյան Հայաստան – Ռ. Ս.)»[3]:

Համագումարի պատգամավոր Վ. Տերոյանի հաշվետվության[4] համաձայն, Հ. Թադևոսյանը և Տիգրան Ռաշմաջյանը[5] իրենց զեկուցումներով առաջադրում են հիմնախնդրի հետ կապված այլ տեսակետներ: Սեկցիայի նիստերում քննարկվում են դասավանդվող առարկաների, դասագրքերի և գաղթական ուսուցիչների հետ կապված հարցերը:

Գյուղատնտեսական սեկցիան չի անդրադառնում վերաշինության խնդիրներին, գտնելով, որ նրա մասին պետք է մտածել միայն պատերազմի ավարտից հետո: Սեկցիայի մասնակիցների համոզմամբ, տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ է մտածել և ջանք գործադրել «միայն եղածը կործանումից և ոչնչացումից պաշտպանելով զբաղվել»[6]:

Համագումարն իր որոշման մեջ առաջարկում է օգնություն ցուցաբերել Ատրպատականի հայությանը, որը մեծապես տուժել է մարտական գործողություններից և բնակիչների զգալի մասը հարկադրված է եղել լքել հայրենի օջախները, սակայն պետական

---

[1] „Армянский вестник", N 8, 1916, с. 15.
[2] *Տերոյան Վ.*, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 333:
[3] Համահայկական խորհրդակցություններ, էջ 121:
[4] *Սահակյան Ռ.*, Վարազդատ Տերոյան. Կյանքը և գործունեությունը, էջ 155:
[5] Տ. Ռաշմաջյանի զեկուցումը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1292, ց. 1, գ. 134, թ. 1–13:
[6] *Տերոյան Վ.*, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 333:

նպաստ չեն ստանում[1]: Մասնակիցներն անդրադառնում են նաև արժեքավոր բույսերի և կենդանիների պահպանության խնդրին, «որպեսզի տեսակը չոչնչանա. խնամքի տակ առնել լքված այգիները, տունները և գյուղատնտեսական հաստատությունները և այլն»[2]:

Կատարված հաշվարկների համաձայն, անհրաժեշտ է յուրաքանչյուր գաղթականի կեցության համար ամսեկան հատկացնել 135 ռուբլի: Նշված ժամանակահատվածում գաղթականների թվաքանակը հաշվվում էր 200 հազար հոգի: Իրականում գաղթականության թվաքանակն ավելի շատ էր: Ըստ Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման Գլխավոր լիազորի գրասենյակի պաշտոնական հաղորդագրության, 1916 թ. մարտի 1-ի դրությամբ, փախստականների ընդհանուր թվաքանակը մոտ 336235 էր[3]: Նրանք տեղաբաշխված էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում, այլև Կովկասի փոխարքայության տարբեր նահանգներում, ինչպես նաև Պարսկաստանում[4]:

Անհրաժեշտ էր հաշվի առնել, որ վերաշինության պայմաններում գումարը եռապատկվում է, քանի որ պետք է միջոցներ տրամադրել ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքների, այլև «ընդհանուր տնտեսության և ընտանեկան հարկի շինության» համար[5]: Նշված նպատակների համար պահանջվող գումարը կազմում է 38 միլիոն 500 հազար ռուբլի[6]:

Ինչ վերաբերում է բժշկական սեկցիային, ապա Վ. Տերոյանի գնահատմամբ. «Ծանր աշխատանքներ չուներ կատարելու այս սեկցիան»: Նրա մասնակիցները հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բժշկական օգնությունը հիմնականում ցույց է տալիս «քաղաքների միությունը», ուստի նպատակահարմար կլիներ, եթե հայ բժիշկները հիմնեին «կաշվի (մաշկային-Ռ.Ս.) և հոգեկան հիվանդությանց համար հիվանդանոցներ. մանավանդ առաջինի համար,

---

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 119:
[2] *Տերոյան Վ.*, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 333:
[3] ՀԱԱ, ֆ.Հավաքածու, CA-74, ֆ. 391, g. 6, գ. 305, թ. 73:
[4] *Տերոյան Վ.*, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 333:
[5] Նույն տեղում, էջ 334:
[6] Համահայկական խորհրդակցություններ, էջ 119:

որ լայն չափով տարածված է գաղթականների մեջ»[1]: Առավել տարածված էին աչքի հիվանդությունները: Այն կանխելու և բուժելու համար, առաջարկվում է դիմել «Ռուսաստանում գործող կույրերի հոգաբարձությանը և խնդրել երեք բժշկական թռուցիկ խմբեր ուղարկել կովկասյան ճակատ (Մուշ, Վան, Սալմաստ), այդ հիվանդությանց դեմ կռվելու»[2]: Առաջնահերթ է համարվում որբանոցների բժշկական հսկողությունը: Առաջարկվում է հարյուրից ավելի երեխաներ ունեցող որբանոցներին կից հիմնել հիվանդանոցներ: Իսկ հարյուրից պակաս երեխաներ ունեցող որբանոցներին բժշկական օգնություն պետք է ցույց տրվի մոտակա բժշկականական հաստատություններում:

Իրավաբանական սեկցիան հանդես է գալիս արևմտահայության նկատմամբ գործադրված բռնությունների և կոտորածի վերաբերյալ փաստերը և թվական տվյալները արձանագրելու ու «հայկական ոճրապատումը իբրև պատմական հուշարձան հրապարակի վրա դնելու, հաշվելու հայկական կորուստները թվերով, գնով և արժեքով» առաջարկով[3]: Նրանք նաև հարց են բարձրացնում ռուսական գերության մեջ գտնվող թուրքական բանակի մոտ երկու հազար ազգությամբ հայ զինվորների դրությունը բարելավելու համար[4]:

Ի նկատի ունենալով դաշնակից տերությունների 1915 թ. մայիսի հայտարարությունը, որի համաձայն պատասխանատվության են ենթարկվելու հայերի նկատմամբ բռնություններ և ոճրագործություններ ցուցաբերած թուրք պաշտոնյաները և հանցագործնե-

[1] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 334:
[2] Համահայկական խորհրդակցություններ, էջ 120:
[3] Նույն տեղում, էջ 121:
[4] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 334:

րը[1], որոշվում է դիմել սենատոր, գաղտնի խորհրդական Ալեքսեյ Կրիվցովի նախագահությամբ գործող քննիչ հանձնաժողովին[2]:

Սեկցիայի անդամները գալիս են եզրակացության, որ պետք է միջոցներ ձեռք առնվեն գաղթականների բնակության կամ գտնվելու վայրերում նրանց իրավունքները պաշտպանելու համար: Միաժամանակ հարց է բարձրացվում հայերի լքյալ գույքի իրավական պաշտպանության մասին, որպեսզի նրանց վերադառնալուց հետո վեճեր չծագեն:

Կազմակերպչական սեկցիայի անդամները քննարկում են «գաղթականական գործի օրենսդրական ու վարչական» կազմակերպումը: Սկզբունքներից մեկն էր, բարեգործական աշխատանքներից հեռու պահել թերուսներին և սիրողական մակարդակով աշխատողներին: Տարածայնություններ են առաջանում, թե որտեղ պետք է գտնվի գաղթականականության օգնության կենտրոնը: Մոսկվայի և Պետրոգրադի պատգամավորների կարծիքով, Կովկասը չի կարող լինել նման կենտրոն, քանի որ «Կովկասյան մթնոլորտը թունավորված է ազգամիջյան, կուսակցական և գավառական ախտերով. գործը տուժում է գործի ղեկավարության շատ մոտիկությունից»[3]:

Համագումարն ընտրում է վաթսուն հոգուց բաղկացած «Պատերազմից վնասվածներին օգնող Հայկական կեդրոնական կոմիտե» (այսուհետև՝ Կենտրոնական կոմիտե): Այն իր կազմում ընդգրկում է հայկական հաստատությունների ներկայացուցիչներին «իրենց գործի մեծության չափով»: Նախատեսվում է, որ Կենտրոնական կոմիտեն իր նիստերը գումարելու է Կովկասում, տարին երկու անգամ[4]:

---

[1] 1916 թ. ՀՅԴ Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ, Անդրկովկասի տարբեր վայրերում ապաստանած գաղթականներից վկայություններ են հավաքվում «կոտորածների կազմակերպման և իրականացման վերաբերյալ «Վշտապատում» անունով» գիրք հրատարակելու համար, տե՛ս Վշտապատում. Հայոց Մեծ Եղեռնը ականատեսների աչքերով. Կազմողներ՝ Ամ. Վիրաբյան, Գ. Ավագյան, Պատասխանատու խմբագիր՝ Ամ. Վիրաբյան, Երևան, 2005, էջ 3:

[2] Համահայկական խորհրդակցություններ, էջ 122:

[3] *Տերոյան Վ.*, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 335:

[4] Նույն տեղում, էջ 336:

Կենտրոնական կոմիտեն ընտրում է ինը հոգուց բաղկացած մշտական մարմին, որի կազմում ընդգրկվում են.

1. Ա. Ասրիբեկյանը՝ Պետրոգրադի հայկական կոմիտեից:
2. Ս. Մամիկոնյանը ՝ Մոսկվայի հայկական կոմիտեից:
3. Գ. Չալխուշյանը՝ Ռոստովի և Նոր-Նախիջևանի հայկական կոմիտեներից:
4. Հ. Տեր-Միքայելյանը՝ Բաքվի հայկական գաղթականական հանձնաժողովից:
5. Հ. Առաքելյանը՝ Թիֆլիսի Նպաստամատույցի և Վերաշինության հանձնաժողովից:
6. Ս. Հարությունյանը՝ Թիֆլիսի ԿՀԲԸ-ն և նրան կից Հայկական կենտրոնական կոմիտեից:
7. Ա. Սահակյանը՝ Թիֆլիսի Գյուղատնտեսական ընկերությունից:
8. Գարեգին վարդապետը՝ էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովից:
9. Փ. Թերլեմեզյանը՝ Թիֆլիսի հայ փախստականների ընկերություններից[1]:

Վ. Տերոյանը նշում է. «Կեդրոնական կոմիտեն իր միջից ընտրելու է յոթն հոգուց բաղկացած մի մարմին, որը լինելու է ռոճիկավոր, և իր կողքի կազմած հանձնաժողովներով դառնալու է գաղթականական ամբողջ գործի տերն ու իրական վարիչը»[2]: Բացի այդ, Կենտրոնական կոմիտեն ունենալու է իր ներկայացուցիչը Պետրոգրադում: Նրա հիմնական պարտականությունն է՝ կառավարական նպաստի ստացումը և բաշխումը[3]: Ալեքսեյ Ջիվելեգովի գնահատմամբ, համագումարը մեծ ձեռք բերում է, քանի որ բացակայում էին կուսակցական տարածայնությունները և երկպառակությունները, քանի որ «այդ են պահանջում Հայաստանի շահերը»[4]:

---

[1] Համահայկական խորհրդակցություններ, էջ 122: *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 337:
[2] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 337:
[3] Նույն տեղում:
[4] *Կոստանդյան Է. Ա.,* Նորահայտ արխիվային փաստաթղթեր, էջ 255:

Ինչպես նշում է Ա. Հարությունյանը. «Ճիշտ է, Պետրոգրադի համագումարում ընկերությունների միություն չստեղծվեց, սակայն գոյություն ունեցող յուրաքանչյուր կազմակերպություն առաջադիմեց նրանով, որ իր գործունեությունը որոշ համակարգի վերածվեց: Հիմք դրվեց գաղթականական գործի օրենսդրական և վարչական կազմակերպությանը: Սա էր համագումարի մեծագույն շոշափելի արդյունքը, որով նրա մյուս թերությունները ծածկվեցին»[1]:

Վ. Տերոյանը հետևյալ կերպ է գնահատում համագումարի աշխատանքը. «նրա (համագումարի – Ռ. Ս.) գործունեության մեջ մեծ դեր է ունեցել իր կազմի որակը և ոչ թե քանակը:...Հրապարակի վրա դրված հարցը մի թշվառ ժողովրդի օգնության կազմակերպությունն էր. այդ տեսակետից Համագումարը, եթե ոչ շատերի, բայց գոնե գաղթական պատգամավորների սպասելիքներն իրականացրեց և արդարացրեց»[2]:

Պետրոգրադում կայացած համագումարը մի փորձ էր միավորելու հայկական կազմակերպությունները, որը սակայն չի հաջողվում: Կարծում ենք, որ միավորումը տեղի չունեցավ քաղաքական դրդապատճառներով: Համագումարին մասնակցող կազմակերպությունները ներկայացնում էին տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղություններ, որոնք խոսքով միասնական էին, սակայն գործնականում չէին կարող միմյանց հետ աշխատել: Բացի այդ, ռուսական իշխանություններին ձեռնտու չէր, որպեսզի կազմակերպվեր հայության ջանքերը միավորող մեկ միասնական կազմակերպություն, որի գործառույթները հիշեցնում էին կառավարական: Սակայն, մեր կարծիքով, ամենագլխավոր պատճառը՝ տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղություններ ներկայացնող կազմակերպությունների՝ միմյանց նկատմամբ ունեցած անհանդուրժողականությունն էր, որը հնարավորություն չի տալիս մի կողմ դնել տարաձայնությունները և գործել միասնաբար:

---

[1] *Հարությունյան Ա.,* Պետրոգրադի գաղթականական համագումարը, «Էջմիածին», 2008, Դ, էջ 79:

[2] *Տերոյան Վ.,* Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 338:

## դ. Էրզրումի, Երզնկայի և Բաբերդի հայ բնակչության փրկության կազմակերպումը և բնակավայրերի վերականգնումը

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական Կովկասյան բանակը դժվարին մարտերից հետո գրավում է Էրզրում (Կարին) ամրոցը և քաղաքը: Հակառակորդը ծանր պարտություն է կրում: Էրզրումը դառնում է Կովկասյան բանակի դաշտային շտաբի տեղակայման կենտրոնը:

Մոտավոր տվյալներով, Էրզրումի 18 հազար հայերից, ըստ այլ տվյալի՝ 25 հազար,[1] մնացել էին 59 հոգի[2]: Նրանց թաքցրել էին մի քանի թուրք ընտանիքներ: 18 աղջիկ էլ ապաստան էին գտել տեղի ամերիկյան միսիոներական հաստատությունում[3]: Իսկ Էրզրումում շարունակվում էին բնակվել 28131 թուրք, որոնցից 13291-ը՝ տղամարդ[4]:

Քաղաքի առաջին պարետ է նշանակվում գնդապետ Մ. Սիլիկյանը: Նրա հաղորդման համաձայն, գեներալ Պյոտր Կալիտինն արգելում է հայերի մուտքը Էրզրում[5]: Այդ էր պատճառը, որ 1916 թ. փետրվարի 23-ին Ս. Հարությունյանը դիմում է Կովկասի փոխարքայի զինվորական օգնականին՝ խնդրելով թույլատրել ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեին լիազորներ ուղարկել կանանց և երեխաներին օգնելու և տարհանելու ավելի անվտանգ վայրեր: Նա ներկայացնում է 21 լիազորների ցուցակը, որոնց թվում էին Արշակ Սաֆրաստյանը, Հրաչյա Ջաքարյանցը, Առաքել Սիմաղլյանցը, Կարո և Արմեն Սասունիները և խնդրում նրանց անունով տալ համապատասխան փաստաթղթեր[6]:

---

[1] «Վան-Տոսպ», 1916, 28 փետրուարի, N 14, էջ 14:
[2] Ըստ Հ. Խունունցի ունեցած տեղեկության, ողջ մնացածների թիվը մոտ 80 է, տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 89:
[3] «Մշակ», Թիֆլիս, 1916, 4 մարտի, N 49: "Армянский вестник", 1917, 22 января, N 4, с. 16.
[4] «Համբաւաբեր», 1916, N 21, 22 մայիսի, էջ 655:
[5] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 12:
[6] Նույն տեղում, գ. 126, թ. 26 և շրջ.:

Մարտին էրզրումից Հ. Բժշկյանն իր թղթակցությունում հայտնում է, որ «Հայոց թաղերը թափուր են ու անմարդաբնակ–չորս կողմը կողոպտւած ու ամայացած խանութներ, տներ և այդպէս անվերջ»[1]: Ականատես հայ սպայի վկայությամբ, քաղաքի հայկական թաղամասի տներից մեկի պատի վրա գրված էր. «26 մայիս, սկսաւ կործանումը (բռնագաղթը – Ռ. Ս.)»[2]: Քաղաքի կենտրոնում թափված էին շիրմնաքարեր: Դրանք, հիմնականում հայկական գերեզմանատան տապանաքարեր էին, որոնք բերվել էին թուրքական իշխանությունների հրամանով և պետք է օգտագործվեին որպես շինանյութ՝ երիտթուրքական կենտրոնատեղիի համար[3]:

Հովսեփ Խունունցի կողմից կատարված դեպքերի քննությունը պարզում է, որ հայերի նկատմամբ անօրինականություններին մասնակցել են էրզրում գործուղված գերմանացի սպաները: Նրանցից «Յուրաքանչյուրը վերցրել է իր մոտ հայոց դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիներից մեկին, երկուսին, որոնցից մի քանիսը հազիվ 13 տարեկան են եղել և հետին վաշվաշոտ տաճիկի պես անպատվել նրանց և իրենց մոտ պահել մինչև սեպտեմբեր (1915 թ. – Ռ. Ս.), երբ հեռացել են քաղաքից մի քանիսին հետները տարել են»[4]:

1916 թ. գարնանը էրզրումում իրենց գործունեությունն են ծավալում հետևյալ կազմակերպությունները. Քաղաքների միությունը, ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն, Կարինի հայ փախստականների և Մոսկվայի հայկական կոմիտեները[5]:

Քաղաք են գալիս Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգոր Զամոյանը և Բաքվի մահմեդական բարեգործական ընկերության ներկայացուցիչ Ալի խան Կանդեմիրովը: Նրանք պետք է ուսումնասիրեին հայ և մահմեդական բնակչության դրությունը և կազմակերպեին անհրաժեշտ օգնությունը[6]:

Հայ առաքելական եկեղեցին, բարեգործական և հասարակական ընկերությունները սկսում են քայլեր ձեռնարկել էրզրումի և նահանգի

---

[1] «Համբաւաբեր», 1916, N 14, 18 մարտի:
[2] «Գաղափար», 1916, N 12, 13 մարտի:
[3] «Համբաւաբեր», 1916, N 21, 22 մայիսի, էջ 655:
[4] Համահայկական խորհրդակցություններ, էջ 89:
[5] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 17.
[6] «Համբաւաբեր», 1916, N 21, 22 մայիսի, էջ 654:

ողջ մնացած հայ բնակչությանն օգնելու համար[1]: 1916 թ. փետրվարի 23-ի նիստում ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի անդամ և Ազգային բյուրոյի ներկայացուցիչ Հ. Խունունցը ներկայացնում է իր զեկուցագիրը և առաջարկությունները: Նա առաջնահերթ է համարում կանանց և երեխաների տարհանումը, քանի որ նրանց կեցությունը հոգող ամերիկացի միսիոներների դրամական միջոցները սպառվելու վրա են: Լսելով Հ. Խունունցի զեկուցումը, Հայկական կենտրոնական կոմիտեն որոշում է.

1. Որքերին տեղափոխել Կովկաս:
2. Կանանց և երեխաներին տեղափոխել Կարս:
3. Ուղարկել նոր լիազորներ տեղում օգնությունը կազմակերպելու համար:
4. Ուղարկել բժշկական խումբ[2]:

1916 թ. օգոստոսի 17-ին Հայկական կենտրոնական կոմիտեն պաշտոնապես դիմում է Ռոստոմին, առաջարկելով նրան գլխավորել էրզրումում և շրջանում, ինչպես նաև նոր նվաճված վայրերում հայ բնակչությանը ցույց տրվող օգնությունը: Նա միաժամանակ լիազորվում է կոմիտե հիմնել էրզրումում, իր հայեցողությամբ հրավիրել այնտեղ աշխատելու իրեն անհրաժեշտ մարդկանց, տալ նրանց հրահանգներ և հաշվետու լինել Կենտրոնական կոմիտեին: Ռոստոմին թույլատրվում է հիմնել որբանոցներ և պարենային պահեստներ[3]: Հիրավի, Ռոստոմի ներկայությունը լրացուցիչ ազդակ է հաղորդում էրզրումում և շրջակայքում ակտիվ գործունեություն ծավալելու համար:

Մոսկվայի Հայկական կոմիտեն հիմնել էր երեք ապաստարան, դեղատուն և բժշկական օգնություն էր հասցնում մերձակա գյուղերի բնակիչներին: 1916 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ Մոսկվայի հայկական կոմիտեի հիվանդանոցում բուժվել են 579, իսկ 3409 հոգի ստացել են ամբուլատոր բուժում: Կոմիտեն կազմակերպել է շրջիկ բժշկական խումբ՝ բաղկացած բժշկից և բուժակից: Նշված ժամանակա-

---

[1] "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 17.
[2] «Համբաւաբեր», 1916, N 10, 28 փետրուարի, էջ 306: Համահայկական խորհրդակցություններ, էջ 86-91:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 149, թ. 12:

հատվածում մահանում են 54 որբ: Կոմիտեն սկզբնապես հիմնում է 25 մահճակալանոց հիվանդանոց, սակայն երբ հիվանդների թիվն ավելանում է, մահճակալների քանակը հասցվում է 75-ի[1]:

Ցավալին այն էր, որ ռուսական զինվորական իշխանությունը հովանավորում էր տեղի թուրք բնակչությանը, որն օգտվելով նման վերաբերմունքից, նույնիսկ հանդգնում էր բռնագաղթված հայերի տները վարձով տալ ռուս զինվորականներին: Մասնակի քննությունը ցույց տվեց, հայերին պատկանող 163 տներում բնակվում են թուրքեր[2]: «Հորիզոնի» թղթակիցը հաղորդում է. «Էրզրումի և թէ շրջակայ գիւղերի թիւրքերը բոլորը ազատ ներս ու դուս են անում քաղաքի պարիսպների դռներով, իսկ հայ մարդկանցից պահանջում են մի որև է վկայական, որ թոյլ տան այդ դռներով անցնել»: Նա ցավով հայտնում է. «Էրզրումի թիւրքերը սայլերով դարձեալ կրում են հայ գիւղերից իրենց համար ձմռան այրելու աթար և փայտեր, դռներ, պատուհանի փեղկեր, երկաթներ, վերջապես ինչ որ ճարւում է: Հայերի արտերը հասել են, բայց թոյլ չի տրւում ձմռան պաշարը հոգալու»[3]: Իսկ Հ. Բժշկյանի վկայությամբ, քաղաքի շուկայում թուրքերը վաճառքի էին հանել հիմնականում հայերին պատկանող իրերը: Ջարդերից փրկված էրզրումցի հայերից մի քանիսը ճանաչում են իրենց իրերը[4]:

Զգալի թվով թուրքեր շարունակում էին բնակվել այնպիսի խոշոր և ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերում, ինչպիսիք էին Հասան Կալեն և Քյոփրիքյոյը[5]: Ռուսական հրամանատարությունը այդպես էլ չկարողացավ ամենայն խորությամբ հասկանալ, թե ինչ վտանգավոր զանգված են թողնում իրենց թիկունքում գտնվող կարևոր ճանապարհների հանգուցակետերում գտնվող բնակավայրերում: Դա հնարավորություն էր տալիս հակառակորդին կանոնավոր կերպով հետախուզական տեղեկություններ

---

[1] "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 17.
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 11 շրջ.:
[3] «Հորիզոն», 1916, N 71, 30 մարտ:
[4] «Գաղափար», 1916, N 16, 23 մարտի:
[5] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 423, թ. 3:

ստանալ ռուսական զորքերի տեղաշարժի և մատակարարման մասին[1]:

Ռուսական իշխանությունը փորձում է ամեն կերպ ընդգծել իր բարեհաճ վերաբերմունքը մահմեդական բնակչության նկատմամբ: Մերժվում է հայերի խնդրանքը Էրզրումի եկեղեցիներից մեկն օգտագործել իրենց կրոնական արարողությունները կատարելու համար, իսկ մզկիթներում ընթանում են կանոնավոր հոգևոր արարողություններ, բայրամի օրերին՝ մահմեդական սովորության համաձայն կրակում էին ռուսական թնդանոթներից: Այդ կերպ ռուսները փորձում էին շահել տեղի մահմեդականների համակրանքը և զերծ պահել նրանց հակառուսական գործողություններից: Սակայն, այդ ջանքերը հիմնականում հաջողությամբ չեն պսակվում: Թուրք և քուրդ բնակչությունը միայն արտաքնապես էր հպատակություն հայտնում և հարմար պահը չէր կորցնում ռուսական զորքերի ստորաբաժանումների վրա հարձակվելու և հօգուտ թուրքական հրամանատարության լրտեսություն կատարելու:

Ինքնին հասկանալի է, որ ռուսական իշխանությունները ճիշտ էին վարվում, թույլատրելով տեղական մահմեդական բնակչությանը կանոնավոր կատարել իրենց կրոնական արարողությունները, աշխատելով չգրգռել նրանց կրոնական մոլեռանդությունը: Սակայն, այդ ամենն արվում էր խիստ ընդգծված և ի վնաս տեղի հայ բնակչության: Բազմաթիվ դիմումներից հետո, ի վերջո, միայն 1916 թ. օգոստոսին, հայերին թույլատրվում է եկեղեցիներից մեկում կատարել հոգևոր արարողություններ[2]: Իսկ գյուղերում գտնվող մի շարք եկեղեցիներ ռուսական զորքի կողմից վերածվել էին ուղղա-

---

[1] Հետագայում տեղի մահմեդական բնակչությունը դարձավ չեթեական ջոկատների հիմքը, որոնք սկսեցին հարձակումներ գործել հայերի դեմ: Ավելի մանրամասն տե՛ս *Սահակյան Ռ. Օ.,* Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանի զեկուցագիրը թուրքական բանակի մարտակազմի վերաբերյալ, ԼՀԳ, 2010, N 1-2, էջ 476:

[2] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 52 շրջ., տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 423, թ. 3 շրջ.-4: Կարծում ենք, որ Էրզրումի ռուսական հրամանատարությանը հայտնի պետք է լիներ այն փաստը, որ երիտթուրքական իշխանությունների հրամանով քանդվել էր հայկական գերեզմանոցում կանգնեցված 1828–1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զոհված ռուս զինվորների եղբայրական գերեզմանոցի մահարձանը, տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 86–87:

փառ եկեղեցիների, որտեղ զինվորների համար կատարվում էին հոգևոր արարողություններ[1]:

"Русское слово" թերթի թղթակից Ֆ. Սիբիրսկին ևս նկատել է նման «տարօրինակ» վերաբերմունքը. «Հայ խանութներ գրեթե չը կան, որովհետև հայերը մի քանի պատճառներով չեն կարողացել խանութ բանալ և Կարինը, որ մինչև պատերազմը թիւրքահայկական քաղաք էր և նոյնիսկ, գուցէ աւելի հայկական, այժմ դարձել է զուտ թիւրքական»: Նա նշում է, որ էրզրումի թուրքերից կազմվել է «յատուկ ոստիկանութիւն, և մինչև անգամ նրանց նշանագգեստների և գօտիների վրայ գրուած է ոչ թէ ռուսերէն, այլ արաբերէն (օսմաներեն-Ռ. Ս.)»[2]: Թղթակիցը հավանաբար տեղյակ չի եղել, կամ էլ չի համարձակվել գրել իր թղթակցությունում, որ հայերին արգելված է խանութներ բացել, առևտրով կամ արհեստներով զբաղվել[3]: Նրանց «խորհուրդ» է տրվել խանութը բացել տեղացի թուրքերից մեկի անունով, իսկ իրենք կարող են այնտեղ աշխատել որպես սովորական վաճառող[4]:

Այնուամենայնիվ, չնայած արգելքներին և զանազան արհեստական խոչնդոտներին, առաջիններից քաղաք է գալիս Քաղաքների միության էրզրումի լիազոր Ռոստոմը: Մարտին նա Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին հայտնում է, որ Մամախաթունից ուղարկել են 59 հոգու: Սպասվում են ևս 300 հոգի: Խնդրում է, որպեսզի շտապ հասցվեն սնունդ և դրամ՝ եկող գաղթականների սննդակայան բացելու համար[5]:

1916 թ. օգոստոսի 30-ին Երզնկայից[6] Ս. Հարությունյանին գրած նամակում Ռոստոմը[1] դժգոհում է, որ իրեն տրվել է ընդամենը

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 137, թ. 24:
[2] «Համբաւաբեր», 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1327 :
[3] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 54 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39 շրջ.:
[5] «Յորիզոն», N 64, 20 մարտի 1916:
[6] Մինչև ցեղասպանությունը, քաղաքի և շրջակայքի 31 հայկական գյուղերում բնակվում էր մոտ 15 հազար հայ: Երզնկայի գրավումից հետո վերադառնում են 600-ից 750 հոգի: «Գլխաւորապէս ազատուած են Ագրակ և Կեզլիճիէ անուն գիւղերու բնակիչներ, թերեւս այն միակ պատճառով, որ յիշեալ գիւղերը աւելի մօտիկ են վերոյիշեալ (Տավրոսի-Ռ.Ս.) լեռնաշղթային, իսկ մնացեալ 29 գիւղի բնակիչներէն կարծես նմուշի համար ազատուած են մէկ մէկ հոգի», տե՛ս ՀԱԱ, ֆ.

հազար ռուբլի: Գումարն անբավարար է, քանի որ ծախսերն օրեցօր ավելանում են: Ռոստոմի կարծիքով. «Պէտք է առնւազը այստեղ պատրաստ ունենալ 10000 ր(ուբլի-Ռ.Ս.): Անհրաժեշտ եմ համարում նոյն իսկ մի քիչ աւելի ծախսել, միայն թէ շատ մարդ ազատւի, եթէ ոչ՝ ճանապարհները շուտով կը փակւին»[2]: Սեպտեմբերի 2-ին Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը Ռոստոմի անունով փոխանցում է պահանջված 10 հազար ռուբլին[3]:

Հայ կամավորներին և փախստականներին նպաստող Սուխումի Հայկական կոմիտեն արձագանքելով «Հորիզոն» թերթում տպագրված Սեպուհի և Մուրադի հեռագրին, քրդական գերությունից հայ պատանդների ազատագրման համար ուղարկում է 1800 ռուբլի[4]: Քրդերը մեկ հային ազատում էին մեկ օսմանյան ոսկով, որի արժեքը ռուսական ռուբլով կազմում էր 18 ռուբլի: Ավազակությամբ և մարդավաճառությամբ զբաղվող քրդերի մեծ մասի համար մարդկանց առևտուրը բավականին եկամտաբեր էր:

Իրավիճակը ծանր էր Դերջանի գյուղերում: Այնտեղ շարունակվում էին տեղի ունենալ կողոպուտներ և սպանություններ: Հրամանատարությունն անբավարար էր հսկում իրավիճակը: 1916 թ. նոյեմբերի դրությամբ սպանվում են 21 հայ և երեք քուրդ: Մարդասպանների ճնշող մեծամասնությունը ռուսական բանակի շարքային զինվորներն էին: Այդ մասին են վկայում տեղացիները և զոհերին հասցված, հիմնականում, սվինային վերքերը: Բացի այդ, հաճախակի էին դարձել գյուղացիներից զանազան տնային կենդանիների անվարձահատույց բռնագրավումները[5]:

---

654, g. 4, գ. 14, թ. 18: Ռոստոմի հաղորդման համաձայն Երզնկայում գտնվում են ցեղասպանությունից փրկված չորս հազար հայեր, որոնց սպառնում է սովը և տարափոխիկ հիվանդությունները, տե՛ս «Հորիզոն», 1916, N 201, 8 սեպտեմբերի:

[1] 1916 թ. օգոստոսի 17-ից Ռոստոմը հանդիսանում էր ԿՀԲԸ-ն կից գործող Կենտրոնական կոմիտեի լիազորը Էրզրումում, տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 149, թ. 12:

[2] ՀԱԱ, ֆ. 28, g. 1, գ. 536, թ. 22:

[3] Նույն տեղում, ֆ. 239, g. 1, գ. 8, թ. 41:

[4] Նույն տեղում, ֆ. 28, g. 1, գ. 536, թ. 6:

[5] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ֆ. 1, g. 1, գ. 227, թ. 1 և շրջ.:

Սկսվում է նաև Քղիից բնակչության տեղափոխումը էրզրում և շրջան: ԿՀԲԸ-ի կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի Քղիի լիազոր Մ. Նանիկյանի զեկուցագրի համաձայն, սկզբնապես իրեն հանձնարարվել էր ուսումնասիրել շրջանը և պարզել բնակչության թիվը և նրանց դրությունը, իսկ ծայրահեղ կարիքի մեջ գտնվող ընտանիքները տեղափոխել էրզրում:

Կարևոր էր էրզրումում կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից քաղաքում որպես իր ներկայացուցիչ Զավեն վարդապետին նշանակելը[1]: Կարելի է ենթադրել, որ նա հանդիսանալու էր համակարգող և կազմակերպող օղակ գործող կազմակերպությունների միջև: Նրա միջոցով էրզրումում և շրջանում գործունեություն ծավալած տարբեր բարեգործական ընկերությունները փորձում էին լուծել իրենց առջև ծառացած տարբեր խնդիրները[2], ինչպես Երզնկայում և Բաբերդում գործող հայկական կազմակերպությունների կանոնավոր գործունեության հետ կապված խնդիրները:

Սուրբ հոր նշանակումն անհրաժեշտ էր նաև այն պատճառով, որպեսզի նա օգնի բռնի մահմեդականացված հայերին վերադառնալու Հայ առաքելական եկեղեցի[3]: Նշված հիմնախնդիրը խիստ դժվար էր, քանի որ փոքրահասակ երեխաների մեծ մասը մոռացել էր մայրենի լեզուն և Տիգրաններն ու Լևոնները դարձել էին Օսմաններ և Մահմեդներ: Մոսկվայի հայկական կոմիտեի անդամները իրականացնում են որոնողական աշխատանքներ՝ քրդերի և թուրքերի մոտ պահվող հայ մանուկներին հայտնաբերելու համար[4]:

Ռուսական իշխանությունները հրաժարվում էին պատժել այն թուրքերին, որոնք մասնակցել են հայերի կոտորածներին: 1916 թ. օգոստոսին Դերսիմից վերադարձած 14-ամյա կարինցի տղան, պատահաբար փողոցում հանդիպում է իր հորը և հորեղբորը սպանած թուրքին: Մարդասպանը բռնվում է հայերի կողմից և հանձն-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 31:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 421, թ. 18:
[3] Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 34:
[4] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 17.

վում ոստիկանական տեղամաս: Որոշ ժամանակ անց թուրքն ազատ է արձակվում առանց որևէ քննություն կատարելու[1]:

Միաժամանակ անհրաժեշտ էր լուծել երիտթուրքական իշխանությունների կողմից հայերից բռնագրավված գույքի խնդիրը: Գույքը գտնվում էր հիմնականում էրզրումի Ս. Աստվածածին եկեղեցում և հարևանությամբ գտնվող մատուռում: Այդ էր պատճառը, որ թուրքերը չէին ոչնչացրել կամ վնասել հոգևոր այդ երկու հոգևոր շինությունները:

Հավանաբար Զավեն վարդապետի, ինչպես նաև էրզրում քաղաքի կայազորի պարետ Մ. Սիլիկյանի հեռագիրն Ալ. Խատիսյանին[2] առիթ են դառնում, որպեսզի Գևորգ Ե-ն պաշտոնապես դիմի Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ գույքի հետ կապված խնդիրը տնօրինելու համար: Սակայն, երբ հայերը ցանկություն են հայտնում մասնակցել գույքի հաշվառմանը, էրզրումի քաղաքապետ Նողայբեկովը մերժում է[3]:

Ռուսական հրամանատարությունը, հանձին Կովկասյան բանակի դաշտային շտաբի պետ, գեներալ Լեոնիդ Բոլխովիտինովի, 1916 թ. մարտի 17-ի նամակում հայտնում է կաթողիկոս Գևորգ Ե-ին վերը նշված գույքի մասին, նշելով, որ նրա միայն 1/5 կամ 1/4 մասն է մնացել: Մնացածը թալանվել է թուրքական զինվորական իշխանությունների կողմից: Ըստ Զավեն վարդապետ Բաբայանի, Ս. Աստվածածնից դուրս բերած թալանը տեղափոխելու համար թուրքերին անհրաժեշտ է եղել 600 ուղտ[4], որ կազմել է երկու հազարից երեք հազար հակ[5]: Նշված գույքի նկատմամբ պահանջներ են ներկայացնում նաև էրզրումցի թուրքերից ոմանք: Նրանք փորձում են ռուսներին համոզել, որ եկեղեցում գտնվող ապրանքի մի մասն իրենց է

---

[1] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 58 շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 12:
[3] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 53 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 137, թ. 25: Ց. Զավրիևի վկայությամբ, հայերի գույքի կողոպուտին մասնակցել են նաև ռուս սպաները, տե՛ս նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 52 շրջ.:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 423, թ. 3 շրջ.:

պատկանում[1]: Օսմանյան իշխանությունները յուրացրել էին նաև էրզրումցիների կողմից բանկ պահ տրված ոսկին և ակնեղենը[2]:

1916 թ. մարտի 14-ի նամակում, գեներալ Լ. Բոլխովիտինովը հայտնում է Մ. եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, որ հայկական եկեղեցիներում գտնվող ապրանքների և իրերի պատկանելիության վերաբերյալ կատարվել է հետաքննություն: Ըստ հայ, թուրք բնակիչների և չեզոք տերությունների ներկայացուցիչների վկայության, 1915 թ. հունիս և հուլիս ամիսներին հայերի բռնագաղթի ժամանակ հայերից շատերը, որոնք պարտք ունեին օսմանյան բանկի տեղի բաժանմունքին, պարտքը մարելու, իսկ այլ վկայության համաձայն՝ բանկի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, հանձում են իրենց պատկանող իրերը և ապրանքները: Ինչպես հայտնում է գեներալը Լ. Բոլխովիտինովը, նշված ապրանքները հանձնվել են հապճեպ, ուստի հնարավոր չի եղել կազմել ապրանքների ստույգ ցուցակը և դրանք հանձնողներին ցուցակագրել: Ապրանքատերերից ոմանք իրենց իրերի վրա գրել են ազգանվան և անվան սկզբնատառերը և համարակալել իրերը, ու երբ օսմանյան բանկի բաժանմունքը տարհանվել է քաղաքից, եկեղեցիներում գտնվող ապրանքը թալանվել է էրզրումի թուրքական զինվորական իշխանության կողմից: Լ. Բոլխովիտինովը հավաստիացնում է, որ էրզրումը գրավելուց հետո եկեղեցիները վերցվել են բանակի հսկողության ներքո[3]:

Ինքնին հասկանալի է, որ երիտթուրքական իշխանություններին պետք չէր կատարել գույքի «խիստ և ստույգ» հաշվառում, քանի որ նրանք հաստատ գիտեին, որ ունեցվածքի տերերն այլևս չեն վերադառնալու: Նրանք բոլորն էլ կոտորվելու են: Իսկ ինչ վերաբերում է օսմանյան բանկին ունեցած «պարտքի» մասին եղած վկայությանը, ապա դա չի համապատասխանում իրականությանը: Պարզապես որոշ ռուս բարձրաստիճան սպաները, հատկապես գեներալ Պ. Կալիտինը «հետաքրքրված» էին հայերի ունեցվածքով:

---

[1] «Գաղափար», 1916, N 14, 18 մարտի:

[2] *Բարսեղով Յ.,* Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը (ռեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ), Երևան, 1999, էջ 8-9:

[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 110, թ. 5 և շրջ.:

Նրանց համար ցանկալի չէր, որ գույքի հսկողությունն անցներ հայերին: Այդ իսկ պատճառով ստեղծվել էր օսմանյան բանկին ունեցած «պարտքի» մասին առասպելը: Ինչպես երևաց հետագա իրադարձություններից, ապրանքի որոշ մասը կողոպտվում է Պ. Կալիտինի կողմից:

1916 թ. ապրիլի 14-ին Կովկասի փոխարքա Ն. Ռոմանովը Գևորգ Ե-ին ուղղված նամակում հայտնում է, որ էրզրումում և շրջակայքում հայ բնակչության ունեցվածքի պահպանության համար ձեռք են առվել համապատասխան միջոցներ[1]: Փոխարքայի հավաստիացումներն իրականում միայն խոսքեր էին, որոնք ամրագրված չէին էրզրումում և շրջանում կատարվող կոնկրետ գործողություններով:

Էրզրումում Քաղաքների միության կողմից բացվում է սննդակայան, որից կարող են օգտվել 1200 հոգի: Իսկ Կարինի հայ փախստականների կոմիտեն հիմնում է որբանոց՝ 100 որբերի համար և զբաղված էր փախստականների բնակության հարցերով: Գործում էր վերապատվելի Հարոլդ Բաքստոնի անվան անգլիական որբանոցը: Այն հիմնվել էր 1916 թ. ապրիլին, անգլիական հայասեր հասարակության հանգանակած գումարների միջոցներով: Որբանոցի հովանավորությունը ստանձնում է Պ. Կալիտինը: Նա առաջարկում է որբանոցի կառավարման գործը հանձնարարել Ռոստոմին[2]: Սկզբնապես որբերի թիվը 50[3] էր, ապա՝ 100, իսկ 1916 թ. դեկտեմբերին՝ 125[4]:

Ռուսական իշխանություններն անց են կացնում նվաճված տարածքների ռուսացման քաղաքականություն: Հայ զինվորական հովիվ Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցը 1916 թ. նոյեմբերի 1-ին կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղված զեկուցագրում հայտնում է, որ ի թիվս մի շարք այլ հայկական եկեղեցիների, «Կարինի մօտ գտնուող

[1] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 38:
[2] «Յորիզոն», 1916, N 114, 25 մայիսի:
[3] «Համբաւաբեր», 1916, 30 հոկտեմբերի, N 44, էջ 1391:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 10 շրջ., 19:

Իլիճայ աւանի հայոց եկեղեցին զինւորական իշխանութեան հրամանով ձևափոխել է ուղղափառ եկեղեցու»[1]:

Նման ոչ բարենպաստ պայմաններում հարկադրված էին գործել հայկական բարեգործական կազմակերպությունները: Այնուամենայնիվ, Ռոստոմին հաջողվում է հաղթահարել վերը նշված արգելքները, իրականացնել որոնողական աշխատանքներ և նույնիսկ փորձել հայերին վերադարձնել էրզրումի Մայր եկեղեցում գտնվող իրենցից կողոպտված գույքը: Եպիսկոպոս Մ. Տեր-Մովսիսյանին ուղղված հեռագրում Ռոստոմը հայտնում է. «1) Այսօր սկսեցի բաժանել տէրերին հայոց եկեղեցում պահուած ապրանքները: 2) Ուղարկեցինք 300 փախստականներ, կան 200 (հոգի ևս – Ռ. Ս.), գալիս են նորերը: Խնդրում ենք հեռագրով փոխադրել Քաղաքների Միութեան միջոցով 2000 ռ(ուբլի)»[2]: Ռոստոմը կարողանում է որոնողական աշխատանքների շնորհիվ գտնել ևս 131 հայ որբ և նրանց տեղափոխել Ալաշկերտ: Իր հեռագրում նա հայտնում է, որ Խնուսում կան 50 որբ: Բացի այդ սպասվում են ևս 150 երեխա[3]:

1916 թ. ամռանն էրզրում այցելած Արշակ Սաֆրաստյանը հետևյալն է հայտնում. «Ես վերջին անգամ էրզրում տեսած էի 1911-ի, երբ հայկական կեանքը իր ամեն երեւոյթներով եռում և յորդում էր այդ քաղաքին մէջ: Իսկ այժմ չկայ այդ տարրը...: Բայց արդէն քաղաքը սկսել է ցոյց տալ կենդանութեան նշաններ: Օրից օր աւելանում է հայերի թիւը թէ քաղաքի և թէ շրջակայ գիւղերի մէջ և ուրիշ չափերով առաջ են տարւում երկրագործական աշխատանքները[4]»:

Ա. Սաֆրաստյանի բնորոշմամբ, Քաղաքների միության սննդակայանները, Կարմիր խաչի և Զեմստվային միության ապաստարանները «օրհնութեան աղբիւրներ են անապատացած այդ երկրին

---

[1] *Սահակյան Ռ. Օ.,* Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները, 2009, ԼՀԳ, N 3, էջ 300:
[2] «Հորիզոն», 1916, N 175, 7 օգոստոսի:
[3] «Գաղափար», 1916, N 41, 27 մայիսի:
[4] «Համբաւաբեր», N 27, 3 յուլիսի 1916, էջ 838:

մէջ, ուր ամէն ուղևոր՝ թէ փախստական և թէ պատուաւոր հիւր գտնում է ջերմ ու սիրալիր հիւրընկալութիւն»[1]:

Սեպտեմբերի 22-ին Հայկական կենտրոնական կոմիտեն էրզրում է ուղարկում Մկրտիչ Հարությունյանին: Նա զբաղեցնելու էր էրզրումի շրջանի պարենի պահեստի կառավարչի պաշտոնը: Պահեստը նախատեսված է փախստականներին հիմնականում ալյուրով և ցորենով ապահովելու համար: Ս. Հարությունյանի լիազորությունները հաստատում է Կովկասյան ռազմաճակատում փախստականների տեղավորման գլխավոր լիազոր, գեներալ Վ. Թամամշևը[2]:

Սեպտեմբերի 24-ին, գեներալ Վ. Թամամշևին ուղված դիմումում ԿՀԲԸ-ն նախագահ Ս. Հարությունյանը խնդրում է օժանդակել էրզրումում բրդի մշակման արհեստանոց հիմնելու համար: Նա տեղեկացնում է, որ Ռոստոմն իրեն հայտնել է, թե հնարավորություն ունի էժան գնով գնել 400 փութ բուրդ: Դա թույլ կտա անգործ կանանց ընդգրկել վերը նշված արհեստանոցում և ապահովել աշխատանքով[3]:

1916 թ. հոկտեմբերի 26-ի նամակում Տ. քահանա Տեր-Վարդանյանը Խ. եպիսկոպոս Մուրադբեկյանին տեղեկացնում է, որ էրզրումի շրջանի 26 գյուղեր բնակեցված են հայերով: Բուն քաղաքում գտնվում են 1200 գաղթական: Վերջիններիս սննդամթերքը հոգում է Քաղաքների միությունը: Մոսկվայի հայկական կոմիտեի հիմնած որբանոցում ապաստանել են 234 երեխա: Նախատեսվում է նրանցից 120-ին տեղափոխել Ջիթող և Օձնի գյուղերի բացվող որբանոցները[4]:

---

[1] «Համբաւաբեր», N 27, 3 յուլիսի 1916,էջ 838:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 539, թ. 4 և շրջ.:
[3] Նույն տեղում, ֆ. 1168, ց. 1, գ. 324, թ. 54: Այդ մասին Ռոստոմին տեղեկացրել է Յ. Զավրիևը: Ռուսական համբարակային ծառությունն առաջարկում էր նաև զինվորների համար կարել սպիտակեղեն, գուլպաներ և ձեռնոցներ: Կարինի հայկական կոմիտեն քննարկելով առաջարկը որոշել է կարել գուլպաներ և ձեռնոցներ: Վճարը որոշվել է վերցնել ոչ թե դրամով, այլ բրդով, տես ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 61, թ. 6 շրջ.-7:
[4] Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 42 և շրջ.:

Երզնկայում գտնված ժամանակ Ռոստոմը հեռագրում է Ալ. Խատիսյանին շտապ դեղորայք, պարեն ուղարկելու անհրաժեշտության մասին: Փրկվածների թիվը հասնում է չորս հազարի[1]: Ողջ մնացածներին գլխավորապես ապաստան էին տվել Դերսիմի քրդերը (կամ էլ ղզլբաշները)[2], որոնք իրենց վերաբերմունքով արմատապես տարբերվում էին քրդական մյուս ցեղախմբերից: Ենթադրվում է, որ նրանք ունեն հայկական ծագում[3]: Ըստ որոշ տվյալների, Երզնկայում և Դերսիմում գտնվող հայերի թիվը հասնում էր մոտ վեց հազարի[4]:

Երզնկայի գրավումից 15 օր անց՝ 1916 թ. հուլիսի վերջերին քաղաք է ժամանում Մոսկվայի հայկական կոմիտեի թռուցիկ ջոկատը, որը պետք է բժշկական օգնություն ցուցաբերեր տեղի բնակչությանը: Հայկական թաղամասի տների մեծ մասը քանդվել էր թուրքերի կողմից: Ավերվել էր շուկայի 80%-ը[5]: Այստեղ գտնվող արհեստանոցների և վաճառատների մեծ մասը պատկանում էին հայերին:

Երզնկայում գտնվող Տ. Դևոյանը „Армянский вестник"–ին հղած թղթակցությունում նկարագրում է քաղաքի հայության ունեցած մարդկային և նյութական կորուստը: Նա հայտնում է Սեբաստիա ուղարկված և հայերից կազմված ինը բանվորական գումարտակների և Կամախի կիճում հայ բռնագաղթվածների զանգվածային սպանդի մասին:

Պատանդ հայերի որոնման համար կազմակերպվում է հատուկ ջոկատ, որը ազդեցիկ քուրդ բեկերի միջնորդությամբ սկսում է

---

[1] «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 201, 8 սեպտեմբերի: Երզնկայում պատերազմի նախօրյակին բնակվում էր 20 հազարից ավելի հայ, տե՛ս "Армянский вестник", 1916, N 32, с. 19. Քաղաքը գրավելու նախօրյակին թուրքական իշխանությունները գնդակահարում են երկու հազար հայ արհեստավորների, տե՛ս ***Ստեփանյան Գ. Խ.,*** Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը): Պ. Հ. Հովհաննիսյանի և Ա. Գ. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, 2005, էջ 543:

[2] Այդ մասին առաջիններից մեկը հայտնում են էրզրումի օպերացիային մասնակցած VI խմբի մարտիկները, տե՛ս «Գաղափար», 1916, N 8, 4 մարտի:

[3] Ավելի մանրամասն տե՛ս ***Մելքոնյան Ա. Ա.,*** էրզրում, Նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 61–62:

[4] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 25:

[5] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 19:

փնտրողական աշխատանքները: Քրդերը, համապատասխան գումարի դիմաց լեռներից տեղափոխում էին հայերին և հանձնում կոմիտեի անդամներին: Հունիսի 24-ից մինչև հոկտեմբերի 1-ը հաջողվում է հայտնաբերել և ազատել 4671 հոգու: Նրանցից մոտ 450-ը 4-ից 12 տարեկան որբեր են[1]:

1916 թ. սեպտեմբերի 26-ին Կարինի հայկական կոմիտեն ԿՀԲԸ-ը ներկայացնում է քաղաքում և շրջանում ստեղծված իրավիճակը: Առաջին հերթին նշվում է, որ չնայած Քաղաքների միությունը էրզրումում հիմնել է սննդակայան, սակայն օրեցօր թանկացող հացը հնարավորություն չի տալիս մարդկանց ապահովել հացով: Խնդրվում է շտապ կարգով Կովկասից ալյուր հասցնել: Հակառակ դեպքում տեղի բնակչությունը գտնվելու է անելանելի վիճակում: Փախստականների պարենային խնդիրը հիմնականում հոգում էր Քաղաքների միությունը, որը լայն օգնություն էր ցուցաբերում[2]:

Քաղաքների միությունը էրզրումում հիմնում է 40 մահճակալանոց հիվանդանոց և ամբուլատորիա: Օրական ընդունվում և համապատասխան օգնությունն էին ստանում միչև 30 հիվանդ[3]:

Որբերի անմխիթար դրությունն անհանգստացնում է Ջավեն վարդապետին: Նա աշխատում է օր առաջ էրզրումում որբանոց բանալ, որպեսզի անապաստան երեխաները ապահովվեն գոնե նվազագույն սնունդով և տանիքով: Նա դիմում է Ս. Հարությունյանին, խնդրելով արագացնել Բարեգործականի կողմից էրզրումում որբանոց հիմնելու ծրագիրը[4]:

Սակայն ցավալին այն էր, որ ռուսական զինվորական իշխանությունը հովանավորում էր տեղի թուրքերին և կրավորական վերաբերմունք ուներ հայ բնակչության նկատմամբ: Երզնկայի հայերի կոտորածներին մասնակից, ժանդարմական պորուչիկ Սուլեյմանը շարունակում է բնակվել քաղաքում և նույնիսկ հիմնել իր սե-

---

[1] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 16.
[2] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 82, թ. 3:
[3] *Հարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը, էջմիածին, 2007, թիվ Դ, էջ 62:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 26:

փական գործը[1]: Անհասկանալի և վիրավորական էր նաև այն, որ էրզրումի քաղաքապետարանը կազմված էր բացառապես մահմեդականներից և դա այն դեպքում, որ նշված հաստատությունում, նախորդ իշխանությունների ժամանակ էրզրումցի հայերը երկու ներկայացուցիչ ունեին: Հայերի խնդրանքը՝ մեկ հայ ընդգրկել քաղաքապետարանի կազմում, որպես ներկայացուցիչ՝ մերժվում է: Քաղաքագլուխ Նողայբեկովը մերժումը պատճառաբանում է նրանով, որ հայերի թիվն այնքան քիչ է, որ նման քայլը վիրավորանք կհասցնի մահմեդականներին[2]:

Ռուսական հակահետախուզության ունեցած տեղեկություններ ի համաձայն, Երզնկայում և շրջակայքում շարունակում էին բնակվել մոտ 35 հազար թուրք և քուրդ: Նրանց թվում կային մի քանի հազարի հասնող թուրք զինվորներ, քուրդ համիդեականներ և կամավորներ: Նրանք խառնվելով խաղաղ բնակչության մեջ հարմար առիթի էին սպասում կրկին զենքը ձեռքերին ռուսների դեմ կռվելու համար[3]:

1916 թ. սեպտեմբերի 10-ին Ռոստոմին գրած նամակում Յ. Զավրիևը հայտնում է Դերսիմից եկած նոր գաղթականների մասին: Իշխանությունները շարունակում են նախկինում որդեգրած քաղաքականություն և թույլ չեն տալիս գյուղացիներին բնակվել գյուղերում, իսկ քաղաքաբնակներին՝ էրզրումում, ինչպես նաև զբաղվել հողագործությամբ և առևտրով[4]: Այնուամենայնիվ, հաջողվում է հասնել նրան, որ թույլատրվում է փախստականներին բնակվել լքյալ գյուղերում, վարել, ցանել և հնձել դաշտերը: Շրջանի պետ Մաքսիմովը խոստացել է փախստականներին տալ ընտանեկան նպաստ, եթե նրանք իշխանություններին հանձնեն բերքի կեսը, իսկ քաղաքապետ Նողայբեկովն ի վերջո թույլատրում է հայերին բնակվել էրզրումում և զբաղվել առևտրով ու արհեստներով:

---

[1] Տե՛ս "Армянский вестник", N 43-44, 5 ноября 1917, с. 9.
[2] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 53 շրջ.: «Համբաւաբեր», 1916, N 21, 22 մայիսի, էջ 655:
[3] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 6 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 54, թ. 2 և շրջ.:

Հասկանալով, որ մահմեդականների նկատմամբ տարվող քաղաքականությունը որևէ շոշափելի արդյունք չի տալիս, Կովկասյան բանակի դաշտային շտաբը փոխում է վերաբերմունքը հայերի նկատմամբ: Շտաբի բարձրաստիճան սպաները խոստանում են հնարավոր աջակցություն հայկական կազմակերպություններին: Յ. Զավրիևը նշում է. «Իրենց մանր ծառայություններով նրանք մերթ ընդ մերթ ապացուցում կամ էլ փորձում են դա ինձ ապացուցել»[1]: Կարելի է ենթադրել, որ նման փոփոխության պատճառը գեներալ Ն. Յուդենիչի հրամանն էր: Նա թույլատրել էր փախստականներին զբաղեցնել լքյալ գյուղերը, հավաքել ցորենը և հերկել հողը[2]:

Հայ սեփականատերերը հնարավորություն չէին ստանում բնակվել իրենց պատկանող տներում, եթե այնտեղ արդեն բնակվում է մահմեդականը: Ապացուցելու համար, որ տվյալ շինությունն իրեն է պատկանում, հայը պարտավոր վկա բերել ոչ թե իր ազգակցին, այլ տեղացի մահմեդականի[3]: Փաստորեն վերականգնվել էր նախկին սուլթանական Թուրքիայում ընդունված օրենքը՝ այլադավանի վկայությունը չէր ընդունվում մահմեդական իշխանություններ կողմից:

Կարինի հայկական կոմիտեն փորձեր է կատարում տղամարդկանց որևէ աշխատանքով ապահովելու համար, սակայն «հնարաւորութիւն չունինք գոնէ մի քանի օրով անոնց կուշտ ուտացնելու և տաք հագուստ տալու: Այնուամենայնիւ ամեն օր քիչ քիչ կը տեղաւորենք զանազան աշխատանքներու մէջ»[4]:

Խարբերդից ստացված տեղեկությունների համաձայն, այնտեղ գտնվում էին մոտ երեք հազար հայեր: Յ. Զավրիևը գտնում էր, որ պետք է փորձել նրանց այդտեղից դուրս բերել, որը կարելի է անել քրդերի օգնությամբ՝ համապատասխան գումարի դիմաց: Այդ նպատակի համար պետք է հինգ հազար ռուբլի, որը հնարավորություն կտար փրկել մինչև հազար մարդու[5]: Իսկ Քղիում, Մամա-

[1] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 54, թ. 3 և շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 28:
[3] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 71, թ. 55 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 35:
[5] Նույն տեղում, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 35 շրջ.:

խաթունում և շրջակա գյուղերում գտնվում են 1800 հոգի: Բաբերդում բնակվում են 100, իսկ շրջակա գյուղերում՝ 400 հոգի: Առավել ծանր վիճակում էր գտնվում Բաբերդի հայությունը. նրանք գրեթե որևէ օգնություն չեն ստացել[1]:

Էրզրում են վերադառնում նաև պատերազմից առաջ Ռուսաստան արտագնա աշխատանքի գնացած հայ տղամարդիկ: Այսպես, Չիթող գյուղ են գալիս նրա նախկին բնակիչ երեսուն տղամարդ, որոնք ձեռնամուխ են լինում ավերված օջախների վերականգնմանը[2]: Առանձին անհատներ ևս փորձում են օգտակար լինել իրենց հայրենակիցներին և գալով Էրզրում օժանդակում են փախստականներին: Քաղաք է գալիս նախկին կարինաբնակ մի հայ, որը ծննդավայրից հեռացել էր Կովկաս դեռևս Աբդուլ Համիդ II-ի սանձազերծած կոտորածների ժամանակ: Ռուսաստանում նա որոշ կարողություն էր վաստակել և հիմա շտապում է օգնել իր համաքաղաքացիներին:

1916 թ. օգոստոսի 9-ին Յ. Զավրիևը մշակում է հրահանգ գյուղացիների համար, որտեղ նշվում է, թե նրանք ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն: Դա արվում է, որպեսզի էրզրումցիները խնդիրներ չունենան տեղական ռուսական իշխանությունների հետ: Գյուղացիներն զգուշացվում են, որ հացահատիկ կարող են քաղել այն արտերից, որոնք կթուլատրվի ռուսական իշխանության կողմից: Քաղված հացահատիկի կեսը պարտավոր են հանձնել պետական պահեստ[3]: Յուրաքանչյուր գյուղական համայնք պարտավոր է հերկել և ցանել որքան հնարավոր է մեծ հողատարածություն: Խորհուրդ է տրվում ցանել հիմնականում գարի: Մինչև լծկանների և այլ ընտանի կենդանիների բերելը, անհրաժեշտ էր քաղել խոտ՝ որպես անասնակեր, որպեսզի կենդանիները ձմռանը ապահովված լինեին կերով:

Որբերի հայտնաբերման աշխատանքները խիստ անհրաժեշտ էին, քանի որ տեղեկություններ էին ստացվել, որ ծնողազուրկ հայ երեխաներին տանում են Ռուսաստան: Ախալքալաքի գավառի

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 32ա:
[2] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 4, 22 января, с. 16.
[3] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 77, թ. 6 շրջ.-8:

Սուլտա գյուղի բնակիչ Զարմայր Եղոյանի վկայության համաձայն «Սարիղամիշի երկաթուղու կայարանում տեսայ երկու զինուոր, որոնց մօտ գտնւում էին 18 հոգի հայ որբեր 6-10 տարեկան: Որբերը բերուած էին էրզրումի նահանգի թիւրք բնակիչների մօտից և ռուս սպաների յանձնարարութեամբ յիշեալ երկու զինուորները պիտի տանէին Ռուսաստան սպաների տնեցոց մօտ ապրելու իբրև հոգեզաւակ»[1]:

1916 թ. նոյեմբերի 22-ին Կարինի հայ փախստականների կոմիտեի նախագահ Գ. Թերզյանը անգլիական որբանոցի տնօրեն Լ. Լանիսին ուղղված գրությունում իր գոհունակությունն է հայտնում որբանոցի վիճակի մասին: Նախագահը կատարած աշխատանքի համար իր շնորհակալությունն է հայտնում, նշում է, որ ԿՀԲԸ-ը որոշել Կարինում հիմնել մեկ որբանոց ևս: Գ. Թերզյանն առաջարկում է Լ. Լանիսին ստանձնել նոր բացվելիք որբանոցի ղեկավարությունը[2]:

«Բաքստոնյան» որբանոցի իրավական վիճակը մնում է անորոշ: Բանն այն է, որ Հ. Բաքստոնը բացի տաս հազար ռուբլուց ոչինչ այլ բան չէր խոստացել. թե ինչպիսին էր լինելու որբանոցի հետագա ճակատագիրը, արդյո՞ք շարունակվելու էր որբանոցի հետագա ֆինանսավորումը, թե ոչ: Եվ դա այն դեպքում, երբ որբանոցն իր գոյության ընթացքում տրամադրված գումարից շատ ավելի է ծախսել: Նշված հիմնախնդրին տեղյակ էր նաև Ռոստոմը: Նման վիճակը դրդում է, որպեսզի անգլիական որբանոցի խնամակալությունն իր վրա վերցնի Հայկական կենտրոնական կոմիտեն:

Մոսկվայի Հայկական կոմիտեն Երզնկայում բացում է 25 մահճակալանոց հիվանդանոց և կազմակերպում ամբուլատոր ընդունելություն: Բացվում է նաև սննդակայան, ուր սկսած 1916 թ. հունիսի 25-ից ճաշ էին ստանում 500, իսկ սեպտեմբերի 18-ից՝ 1200 հոգի[3]:

Տ. Դևոյանը լինելով Երզնկայում, իր տպավորություններն է հաղորդում „Армянский вестник" լրագրի ընթերցողներին: Նա ականատես է լինում թուրքական գազանություններին, որոնցից հրեշավորներից մեկն էր Կամախ քաղաքի կամուրջի մոտ և համանուն

[1] «Համբաւաբեր», 1916, N 44, 30 հոկտեմբերի, էջ 1391:
[2] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 16:
[3] «Համբաւաբեր», 1916, N 44, 30 հոկտեմբերի, էջ 17:

կիրճում թուրք զինվորների և ժանդարմների կողմից հայ տարագիրների կոտորածը: Տ. Դևոյանը գրում է. «Այստեղ (Կամախի մոտ և կիրճում – Ռ. Ս.) կոտորվեցին հայկական 7 վիլայեթների հայերի մնացորդները»[1]:

1916 թ. դեկտեմբերի 1-ի հեռագրում Զավեն վարդապետ Բաբայանը հայտնում է Խորեն Սրբազանին, որ էրզրումում կուտակվել են մեծ քանակությամբ փախստականներ՝ յոթ հազար, որոնց թվաքանակն օրեցօր աճում է: Խնդրում է շտապ ուղարկել շաքար, ալյուր և ձմեռային հագուստ[2]: Զավեն վարդապետի վկայությամբ, թուրքական ու քրդական կոտորածներից հրաշքով փրկվածները գտնվում են ծանր պայմաններում: Նա հետևյալն է գրում. «Հրաշքով ազատուած մայրը գլխիկոր դառնապես ողբում է իւր ամուսնու և զաւակների անդառնալի կորուստը, անմեղ գառնուկ մանուկները ցնցոտիների մէջ բոկոտն և գլխաբաց, անխնամ, անտէր ու անտիրական թափառում են փողոցները և խմբերով շրջապատում փողոցների անկիւններում դրուած զինվորական շարժական կաթսաների շուրջը, ցրտից կապտած և սառած ձեռքերն ու մարմինը տաքացնելու համար»[3]:

Յ. Զավրիևը որոշում է ստանալ իշխանությունների թույլտվությունը բնակիչներին տեղավորել բոլոր ազատ գյուղերում: Նրանց միաժամանակ անհրաժեշտ է ապահովել ընտանի կենդանիներով: Բանն այն է, որ բնակչության հավաքած ցորենն անբավարար էր մինչև նոր բերք ստանալը: Իրենց ունեցածով նրանք կարող էին գոյատևել երկուսից երեք ամիս: Մնացած ինն ամսվա համար պետք էր Սարիղամիշից բերել ցորեն կամ ալյուր: Յ. Զավրիևը նախատեսում էր հացահատիկի տեղափոխման աշխատանքները սկսել 1916 թ. նոյեմբերից, երբ զինվորական փոխադրումներ կատարող սայլերի մեծ մասն ազատ կլինեին[4]:

---

[1] *Девоянин Т.,* В Эрзинджане, "Армянский вестник", 1917, N 32, 4 сентября, с. 19.
[2] ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 34:
[3] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 9 շրջ.:
[4] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 27 շրջ.:

Հայերի կողմից մշակվող հողատարածությունները մեծացնելու և ավելի շատ բերք հավաքելու համար, Յ. Զավրիևն առաջարկում է Ռոստոմին ռուսական իշխանություններից թույլտվություն ստանալ փախստականներին լեռնային և նախալեռնային լքյալ գյուղերում բնակեցնելու համար: Ըստ Յ. Զավրիևի, նա ստացել էր Մաքսիմովի համաձայնությունը այդ խնդրի վերաբերյալ: Մաքսիմովը միայն մի պայման ուներ՝ հարևան մահմեդական գյուղերի բնակիչների հետ որևէ բախում չունենալ[1]: Բացի այդ, Յ. Զավրիևն առաջարկում է գյուղերում ունենալ երկու վստահելի անձի, որոնք կհետևեն բնակչության տեղավորմանը և օգնության բաժանմանը[2]:

Արևելյան Հայաստանի և Կովկասի հայաբնակ շրջանների հայ բնակչությունը գտնվելով սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ, շարունակում էր միջոցներ հայթայթել գաղթականությանն օգնելու համար: Շարունակվում էր ոչ միայն ռուսահպատակ հայերի, այլև արտասահմանում բնակվող հայության օգնությունը: Դրա արդյունքում հնարավոր եղավ էրզրումի որբանոցի համար ուղարկել մեկ վագոն հագուստ և 1600 ռուբլի[3]: Իսկ Չիթող գյուղի որբանոցի համար ցորեն հայթայթելու մեկ այլ ձև է գտնում Յ. Զավրիևը: Նա առաջարկում է գյուղացիական խմբերին տրվող մեկ զույգ եզների դիմաց ստանալ տաս փութ ցորեն, որը կտրամադրվի որբանոցին[4]:

Ըստ կատարված հաշվարկների, Երզնկայի հայության համար անհրաժեշտ էր կուտակել հազար փութ ցորեն, 200 գլուխ խոշոր եղջրավոր կենդանի, 150 փութ բրինձ, 100 փութ յուղ, 200 փութ սիսեռ և 300 փութ լոբի: Նշվածը տեղում գնելու համար անհրաժեշտ կլիներ 88 հազար, իսկ Բաբերդի համար՝ 44 հազար ռուբլի[5]: Երզնկայում հավաքված հայերի թիվը հաշվվում էր մոտ չորս հազար[6]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 61, թ. 5 շրջ.-6:
[2] Նույն տեղում, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 31 շրջ.:
[3] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի արխիվ, թղթապանակ 2, վավերագիր 143, թերթ 413:
[4] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 28:
[5] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 14 շրջ.:
[6] *Ստեփանյան Գ. Խ.,* նշվ. աշխ., էջ 547:

Առավել ծանր վիճակի մեջ գտնվում էր Բաբերդի հայությունը: Սեպուհը նույնիսկ նամակ-կոչով դիմում է ուղղակի Անդրանիկին հայցելով նրա միջամտությունը[1]:

3. Զավրիևի վկայությամբ, էրզրումի ռուսական իշխանությունները բացարձակապես չէին հոգում հայ բնակչության կարիքները: Նրանք գտնում էին, որ հայերի խնդրով պետք է զբաղվի հայ ժողովուրդը: Բժշկի համոզմամբ, նրանց չի անհանգստացնի, «եթե կանհետանա վերջին հայը»[2]:

Հայկական կենտրոնական կոմիտեի պարենային պահեստը սպասարկում էր նաև էրզրումում գործող մի շարք բարեգործական և հասարարական կազմակերպություններին՝ Մոսկվայի հայկական կոմիտեին, Քաղաքների միությանը, Նպաստամատույցին և «Մի բաժակ թեյ» ընկերությանը, որը տեղական՝ Կարինի հայկական կոմիտեի մասնաճյուղն էր: Նշված բոլոր կազմակերպությունները աշխատում են բացառապես փախստականների համար[3]:

1916 թ. դեկտեմբերի 24-ի դրությամբ էրզրումի նահանգում բնակվում էր 20-ից 30 հազար գաղթական: Նրանք տեղավորված էին.

ա. էրզրում քաղաքում մոտ՝ երկու հազար հոգի:

բ. էրզրումի շրջակա 24 գյուղում մոտ՝ երկու հազար հոգի:

գ. Բասենի շրջանի մոտ 33 գյուղում՝ 13 հազար հոգի:

դ. Բաբերդ քաղաքում և շրջակա գյուղում՝ 700 հոգի:

ե. Դերջանի շրջանում, այդ թվում Մամախաթունում և գյուղերում՝ մոտ 2500 հոգի:

---

[1] *Յարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, «Էջմիածին», 2007, թիվ Դ, էջ 72: 1916 թ. օգոստոսի 25-ի նամակում Ց. Զավրիևը գտնում է, որ անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել Բաբերդի հայությանն օգնելու համար: Այնտեղ չի գործում որևէ հայկական կազմակերպություն: Բնակչությունը գտնվում է ծայրահեղ աղքատության մեջ: Ստեղծված իրավիճակը հարկադրում է նրանց վերադառնալ թուրքերի մոտ, իսկ կանայք, ընդհուպ մինչև 13-ից 14 տարեկան աղջիկները զբաղվում են մարմնավաճառությամբ: Այդ մասին հաղորդել են Բաբերդից վերադարձած Մոսկվայի հայկական կոմիտեի բժիշկը և ավագ քահանա Ռ. Բեկգուլյանցը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 32:

[2] Նույն տեղում, թ. 32 շրջ.:

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 532, թ. 38:

զ. Երիզա քաղաքում և մի քանի գյուղերում՝ 1500 հոգի:

է. Քղիի գյուղերում մոտ՝ 400 հոգի:

ը. Խնուս քաղաքում և շրջակա գյուղերում՝ մոտ յոթ հազար հոգի: Նրանցից մոտ հինգ հազարը Մուշի, Վանի և այլ վայրերից գաղթածներն են:

թ. Թորթումի, Կիսկիմի և Սպերի շրջաններում՝ մոտ 150 հոգի: Նրանց մեծամասնությունը հայ կաթոլիկներ են[1]:

Իսկ Երզնկայում գտնվում էին մինչև 2500 փախստական[2]:

Ստեղծված լարված վիճակը՝ հատկապես վարակիչ հիվանդությունների տարածումը, հարկադրում է Էրզրումի ռուսական իշխանություններին 1917 թ. հունվարի 19-ին հիմնել Էրզրումի շրջանի փախստականական կոմիտե: Նրանում ընդգրկվում են ինչպես հայ, թուրք, այնպես էլ ռուսական զինվորական իշխանության ներկայացուցիչներ, որպեսզի համատեղ ջանքերով կարողանան կանխել վարակիչ հիվանդությունների տարածումը ոչ միայն բնակչության, այլև զորքի շրջանում[3]:

1917 թ. հունվարի 27-ին Ս. Հարությունյանին ուղարկված նամակում գոհունակություն է հայտնվում որբանոցին նոր տնօրեն-կառավարիչ նշանակելու մասին: Տեղեկացվում է, որ որբանոցի համար նոր հարմար շինություն չի հաջողվել գտնել, ուստի նախընտրվել է բարեկարգել առկա շենքը: Տեղեկացվում է, որ որբանոցում, որ նախատեսված էր 60-ից 70 որբի համար, գտնվում են 126 երեխա: Որբանոցի նեղ պայմանները հնարավորություն չեն տալիս առողջ երեխաներին առանձնացնել հիվանդներից:[4]:

Էրզրումում Քաղաքների միության կողմից հիմնված պարենային պահեստը մթերք է հատկացնում ԿՀԲԸ-ն տեղի որբանոցին, որտեղ 1917 թ. մարտի 27-ի դրությամբ որբերի թիվը 136 էր[5]: Կովկա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 9 և շրջ.

[2] Նույն տեղում, գ. 532, թ. 38 շրջ.:

[3] Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 423, թ. 48:

[4] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 4–3 շրջ.:

[5] Նույն տեղում, գ. 532, թ. 38 շրջ.:

սի փոխարքայությունը փետրվար-մարտ ամիսների համար որբանոցին հատկացնում է 3780 ռուբլի[1]:

Դպրոցում մեծ դժվարությամբ հնարավոր է լինում տեղավորել 100 երեխայի: Դպրոցի տեսուչ ընտրվում է Լուլահյանը: Նա պետք է ավարտեր շենքի նորոգելու հետ կապված հարցերը և 10-ից 15 օրվա ընթացքում երեխաները կսկսեն կանոնավոր պարապմունքները[2]: Ըստ պայմանավորվածության կրթական բոլոր խնդիրների հետ կապված հարցերը լուծելու է ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն, իսկ նախաճաշը և ճաշը հոգալու է Կարինի հայկական կոմիտեն[3]:

1917 թ. հունվարի 13-ին Երզնկացիների միությունը դիմելով ԿՀԲԸ-ին հայտնում է մանրամասներ հայ բնակչության հետ տեղի ունեցած ողբերգության մասին: Միաժամանակ խնդրվում է օգնություն հասցնել նրանց: Նամակում նշում է. «Եւ այսօր, այդ կենսունակ ժողովրդի կիսակենդան մնացորդները զուրկ օգնութիւնից, տարագրւած իրենց աւեր վաթանից դէպի սառն, անհամբոյր և իրենց համար աննպաստ Կարին քաղաքը՝ հեծեծում են կեանքի ու մահուան ճիրաններում»[4]:

Փետրվարի 10-ին Երզնկա է գործուղվում I բանակային կորպուսի զինվորական քննիչի օգնական, պորուչիկ Վոսկրեսենսկին՝ թուրքական իշխանությունների կողմից կատարված անօրինականությունների՝ հայերի զանգվածային կոտորածների վերաբերյալ փաստեր հավաքելու համար[5]: Փետրվարի 27-ին Քաղաքների միությունը ստանում է երկու հազար փութ ալյուր և կազմակերպում է սննդակայան, որտեղ օրական ճաշում են մինչև 700 հոգի: Մոսկվայի հայկական կոմիտեի կատարած հաշվառումը ցույց է տալիս,

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. գ. 126, թ. 17:
[2] Նույն տեղում, գ. 536, թ. 4 շրջ.:
[3] Նույն տեղում, թ. 5 շրջ.:
[4] Նույն տեղում, գ. 166, թ. 21:
[5] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 41, 2 октября, с. 12. Փետրվարի 28-ին Զավեն վարդապետ Բաբայանին ուղված նամակում Սեպուհը ուրախությամբ հայտնում է, որ Քաղաքների միության կողմից ուղարկված ալյուրը «փրկեց տառապանքի ենթակայ եղող դժբախտ գաղթականութեանը», տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 536, թ. 4 շրջ.:

որ Երզնկայում գտնվում են 1400, իսկ շրջակայքում՝ 400 հայ փախստական: Սակայն նշված թվաքանակը վերջնական չէր, քանի որ ամեն օր քաղաք էին գալիս նորանոր ողջ մնացած հայեր: Քաղաքների միության ունեցած ալյուրը հնարավորություն կտա փախստականներին հացով ապահովել միայն 20 օր: Այնուամենայնիվ կազմակերպությունները միջոցներ են ձեռնարկում հողագործական աշխատանքները վերսկսելու համար: Կրկին Քաղաքների միությունն է հանդես գալիս նման նախաձեռնությամբ և կազմում է գյուղատնտեսական աշխատանքների նախահաշիվը[1]:

Երզնկայում վերապրած հայերը կազմակերպում են մարտական խմբեր, որոնք իրականացնում են հայ բնակչության ինքնապաշտպանությունը: Նրանք միաժամանակ փնտրողական աշխատանքներ կատարում և հայտնաբերում են թուրքերի և քրդերի տներում բռնի պահվող հայերին: Նշված գործողությունների ղեկավարը Սեբաստացի Մուրադն էր[2]: Բացի այդ, նա գործակալներ է հավաքագրում հայերից, հույներից, ինչպես նաև այն քրդերից, որոնք բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ[3]: Գեներալ Նիկոլայ Մորելի բնութագրմամբ, «Շնորհիվ Մուրադի եռանդին, երկրամասի և տեղի բնակչության բնավորության հիմնավոր իմանալուն և գործակալների հաջող ընտրությանը՝ Երզնկայից հետախուզությունը կատարվում էր բավականին հաջող: Ջոկատի շտաբը ժամանակին տեղեկացված էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժման և ուժերի մասին»[4]:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո հնարավորություն է ստեղծվում Ս. Աստվածածին եկեղեցում կատարել կրոնական արարողություններ: Նախկին իշխանություններն անհաս-

---

[1] Տե՛ս "Армянский вестник", 1917, N 10–11, с. 26.
[2] *Ստեփանյան Գ. խ.,* նշվ. աշխ., էջ 549, 551:
[3] ՀԱԱ. ֆ. 1267, ց. 2, գ. 204[1], թ. 17:
[4] *Սահակյան Ռ.,* Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914-1917 թթ.), ՊԲՀ, 2011, N 3, էջ 116:

կանալի պատճառներով արգելել էին եկեղեցին օգտագործել կրոնական նպատակով[1]:

Երզնկայում հանկարծամահ է լինում Կայծակ Առաքելը: 1917 թ. մարտի 8-ին նրա մարմինը Վահագն Նալբանդյանը և Սուքիաս Գազանճյանը բերում են Մամախաթուն՝ այնտեղից էրզրում փոխադրելու, որպեսզի հողին հանձնվի իր հայրենի քաղաքում[2]:

Էրզրումի և շրջակա գավառների հայկական բնակավայրերի վերաշինությունը «հարկադրում» է ժամանակին հավատափոխ եղած հայերին վերադառնալ հայոց եկեղեցու գիրկը: 1917 թ. հոկտեմբերի 4-ին Նովոռոսիյսկից Պողոս քահանա Տեր-Միհասյանը հայտնում է, որ Տիմրուկ քաղաքի բնակիչ, էրզրումցի Յուսուֆ Մեհմեդ օղլին, ցանկանում է մկրտվել հայոց եկեղեցում: Նա հայտնել է Տեր հորը, որ իր պապերը հայեր են եղել[3]:

1917 թ. հունվարի 31-ին Գյուղատնտեսական ընկերությանն է դիմում Համառուսաստանյան Զեմստվային և Քաղաքային միության բանակին մատակարարող Գլխավոր կոմիտեի տնտեսական բաժինը, առաջարկելով Երզնկայի և էրզրումի բնակչության ուժերով կազմակերպել կարտոֆիլի և գարու ցանքի հետ կապված աշխատանքները: Բաժինը միաժամանակ ընկերությունից խնդրում է ներկայացնել, թե ինչ պայմաններով կհամաձայնվի գլխավորել վերը նշված աշխատանքները[4]:

Ռուսական իշխանությունները, ցանկանալով հիմք նախապատրաստել հայկական գավառների մի մասի հետագա գաղութացմանը, ստեղծել էին անզեն բանվորական դրուժինաներ, որոնք կազմված էին Ռուսաստանի տարբեր գավառներ բնակիչներից: Նրանք պետք է զբաղվեին գյուղատնտեսական աշխատանքներով՝ բանաջարանոցային կուլտուրաների և հացահատիկի մշակմամբ: Սակայն, կատարված աշխատանքներն անբավարար էին և դրուժինաները չեն կարողանում կատարել իրենց վրա դրված հանձնարարությունը: Այդ էր պատճառը, որ 1917 թ. հունվարի 31-ին Համառու-

[1] «Աշխատանք», N 95, 1917, 12 ապրիլի:
[2] «Արեւ», 1917, N 62, 25 մարտի:
[3] ՀԱԱ, ֆ. 52, g. 1, գ. 7425, թ. 2:
[4] ՀԱԱ, ֆ. 654, g. 4, գ. 17, թ. 1:

սաստանյան Զեմստվային և Քաղաքային միությունների Գլխավոր կոմիտեի Կովկասյան ռազմաճակատի ինժեներային-շինարարական կոմիտեն առաջարկում է Գյուղատնտեսական ընկերությանը Էրզրումի և Երզնկայի շրջաններում ցանել կարտոֆիլ և ցորեն: Կոմիտեն խնդրում է ընկերությանը՝ հայտնել, թե ինչ պայմաններով կհամաձայնի իրականացնել այդ աշխատանքները:

1917 թ. փետրվարի 4-ի պատասխան նամակում Գյուղատնտեսական ընկերությունը հայտնում է իր պատրաստակամությունը, եթե նախատեսվող հողատարածությունը կկազմի առնվազն հազար դեսյատին: Պահանջվում է նաև 500 ձի և կարտոֆիլի ու ցորենի սերմացու, որոնք պետք է տեղ հասցվեն ամենաուշը մարտի 1-ին: Գյուղատնտեսական ընկերությունը տեղեկացնում է, որ ցանքսի աշխատանքները կատարվելու են տեղի գյուղացիների ուժերով: Բերքը կիսվելու է երկու հավասար մասերի[1]: Փետրվարի 8-ի պատասխան նամակում կոմիտեն հայտնում է, որ սկզբունքորեն համաձայն է առաջարկվող պայմաններին: Ստացվել է համաբարակային ծառայության թույլտվությունը՝ 30 հազար փութ գարի տրամադրելու մասին[2]:

Էրզրումը, ինչպես նաև Բաբերդն ու Երզնկան Արևմտյան Հայաստանի այն վայրերից էին, որոնք ահռելի կորուստներ էին կրել 1915 թ. ցեղասպանության ժամանակ: Ի տարբերություն Վանի և Ալաշկերտի, այստեղ գործող հայկական կազմակերպությունները հարկադրված էին այլ գործելակերպ որդեգրել: Նրանք առաջին հերթին քայլեր են ձեռնարկում վերացնելու հայերի էրզրում մտնելու արգելքը: Դա անհրաժեշտ էր, քանի որ 1916 թ. փետրվար-մարտին հնարավոր չէր կազմակերպել ողջ մնացածների տեղափոխումը Կովկաս: Այդ էր պատճառը, որ էրզրում են գործուղվում հայ հասարակական և քաղաքական նշանավոր գործիչներ Ռոստոմը և Յ. Զավրիևը: Նրանց է հանձնարարվում տեղում կազմակերպել ողջ մնացածների փրկությունը, ինչպես նաև թուրքերի և քրդերի ընտանիքներում բռնի պահվող հայ կանանց և երեխաների ազատման

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 17, թ. 1, 3:
[2] Նույն տեղում, թ. 5:

բարդ և դժվարին գործը: Նրանք կարողանում են կապեր հաստատել Դերսիմի քրդերի հետ, որոնց մոտ ապաստանել էին մոտ չորս հազար հայեր և խումբ առ խումբ նրանց տեղափոխել էրզրում, չնայած ռուսական զինվորական իշխանության արգելքների: Ի վերջո հայ հասարակական-քաղաքական շրջանները ստանում են իշխանությունների թույլտվությունը և ցեղասպանությունից փրկված հայերին բնակեցնում են ոչ միայն հայկական, այլև թուրքերի կողմից լքված գյուղերում: Էրզրումում իրենց գործունեությունն են ծավալում Հայկական կենտրոնական կոմիտեն, Քաղաքների միությունը, Մոսկվայի հայկական կոմիտեն, իսկ ավելի ուշ՝ Գյուղատնտեսական ընկերությունը: Հիմնվում են սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ և այլն: Իշխանությունների հետ հարաբերությունները կարգավորելուց հետո հնարավորություն է ստեղծվում նախածեռնել գյուղատնտեսական աշխատանքները:

## ե. Մուշի և Խնուսի հայության փրկության և օգնության կազմակերպումը

Երբ 1916 թ. փետրվարի 3-ին գեներալ Թ. Նազարբեկյանի դիվիզիան և նրա կազմում գործող Հայկական II կամավորական խումբը, ազատագրեցին Մուշը, այնտեղ գրեթե հայ չէր մնացել: Տեղեկանալով այդ մասին, լեռներում թաքնված և հրաշքով փրկված հայերի փոքրաթիվ խմբերը Մուշ էին գալիս հիմնականում՝ կանայք ու երեխաները:

Ինչպես վկայում է գեներալ Թ. Նազարբեկյանը, Խնուսում հավաքել էին (Խնուսը ռուսները գրավել էին հունվարի 13-ի երեկոյան) մեծ թվով հայ գաղթականներ: Նրանցից շատերը հիվանդ էին և զուրկ գրեթե ամենատարրական պարագաներից: Փրկված հայերին ուղարկում են Ալաշկերտ, որտեղ կար սննդակայան: Քանի որ շատերն ի վիճակի չէին ինքնուրույն գնալ, Թ. Նազարբեկյանի խնդրանքով IV բանակային կորպուսի հրամանատար, գեներալ

Վլադիմիր դե-Վիտտը թույլ է տալիս փախստականներին տեղափոխել բանակային գումակի սայլերով[1]:

Ս. Մարինեի թաղամասում գտնվող Մշո առաջնորդարանի շենքն իր հարակից շինություններով և տներով ամբողջությամբ գետնին էր հավասարեցվել: Մատնության հետևանքով, թուրքերը Գասպար աղա Ջուլիկյանի տնից հայտնաբերում են այնտեղ թաքցված ս. Առաքելոց վանքի ոսկե և արծաթե անոթները և այլ իրեր: Թուրքերը կարողացել են հայտնաբերել մի քանի թաքստոցներ ևս ու կողոպտել այնտեղ գտնվող եկեղեցական իրերը[2]:

Թ. Նազարբեկյանի վկայությամբ, Մուշում մնացել էր մոտ հիսուն հայ ընտանիք, հիմնականում արհեստավորներ: Մնացած հայ բնակչությունը սրի էր քաշվել[3]: Քաղաքի թուրք բնակչության մի մասը մնացել էր իր տներում: Հաջողվում է Մուշի շրջակա գյուղերում գտնել ողջ մնացած 70 կին և երեխա[4]: Մուշ են գալիս Հայկական կենտրոնական կոմիտեի, Եղբայրական օգնության լիազորներն ու խմբերը: Քաղաքների միության լիազոր Ռ. Տեր-Մինասյանի և ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գ. Ղամարեանի համատեղ ջանքերով Խնուսի մոտ հիմնվում է նոր որբանոց: Դա հնարավորություն է տալիս այնտեղ տեղավորել անապաստան ու ծնողազուրկ երեխաներին[5]: Խնուսում և նրա մոտ գտնվող Արոս գյուղում հիմնվում են սննդակայաններ: Գաղթականները նշված հաստատություններում երկուսից երեք օր հնարավորություն են ունենում հանգստանալ, սնվել, ապա ուտելիքի պաշար վերցնելով շարունակել իրենց ճանապարհը:

Հայկական կենտրոնական կոմիտեն Մուշ է ուղարկում Կ. Սասունուն: 1916 թ. մարտի սկզբին նրա գլխավորած խումբը, որի կազմում էին Արմենակ Սասունին և Հմայակ Մանուկյանը[6], Իգդիրից ժամանում է Մուշ: Խնուս և Մուշ են գործուղվում Գյուղատնտեսական ընկերության Ալաշկերտի խմբի երկու ներկայացուցիչներ, որոնք

[1] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 9, թ. 42 և շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 69 շրջ.-70:
[3] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 13 շրջ.:
[4] «Վան-Տոսպ», 1916, N 12, 14 փետրուարի, էջ 16:
[5] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 48:
[6] «Աշխատանք», 1916, N 43, 28 սեպտեմբերի:

այնտեղ աշխատանքներ են իրականացնում երեք ամիս[1]: Կ. Սասունին նշում է. «Ռուսական տիրապետութիւնը իր ցարական կնիքը կը դնէր ամէնուրեք: Ու մենք ստիպուած էինք գերազանցապէս ծածկուիլ գաղթականական դիմակի տակ ու օգնութեան հետ զուգընթաց, մեծ մասամբ գաղտնի, տանիլ վարչական, քաղաքական եւ ինքնապաշտպանական աշխատանքները»[2]: Խնուսում իրենց սննդակայաններն են հիմնում Քաղաքների միությունը և Հայկական կենտրոնական կոմիտեն: Նրանք բացի սննդից և ճանապարհի պաշարից տալիս են ճանապարհածախս[3]:

Թ. Նազարբեկյանի վկայությամբ, ամենածանր խնդիրը Մուշում պարենի հայթայթումն էր: Բանակային համբարակային ծառայությունը գրեթե ոչինչ չէր ուղարկում: Գեներալը ցավով նշում է, որ իր ունեցած սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս քեկուզ ամենաչնչին օժանդակություն ցույց տալ: Այդ դժվարին պահին իր մոտ է գալիս «Քաղաքների միության» լիազոր Ռոստոմը: Նա խնդրում է իրեն տալ զինվորներ՝ պաշտպանության համար, որպեսզի խուզարկեն և գտնեն գյուղերում հորած ցորենի պաշարները: Գեներալը համաձայնվում է միայն մի պայմանով, եթե գտնվածի կեսը տրվի բանակին: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս և՛ զորքին և՛ բնակչությանն ապահովել հացով[4]:

1916 թ. մայիսի 15-ի դրությամբ Մուշում բնակվում էին ջարդերից փրկված 26 ընտանիք՝ 126 հոգի: Քաղաք էին եկել 26 հոգի: Ընդհանուր առմամբ ցուցակագրվել են 4884 հոգի: Սակայն, որ տարբեր վայրերից, հիմնականում Սասունից և Խոյթից, գրեթե ամեն օր Մուշ և շրջակա գյուղերն են գալիս նորանոր գաղթականներ և փրկվածների թիվը հասնում է ութից ինը հազարի[5]:

Կ. Սասունին առաջարկում է ռուսական հրամանատարությանը՝ գեներալ Զախարի Մդիվանիին թույլատրել Խնուսում հայերից կազ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 44 շրջ.:
[2] *Սասունի Կ.,* Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 116:
[3] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 50:
[4] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 19 և շրջ.:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 78 և շրջ.: Ավելի մանրամասն տե՛ս նաև *Սահակյան Ռ.,* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարոնահայությանը օգնության կազմակերպումը, ՊԲՀ, 2011, N 1, էջ 36-60:

մակերպել աշխարհազորային խմբեր՝ միլիցիա: Նրանք ոչ միայն կպաշտպանեին բնակչությանը քրդական հարձակումներից, այլև կիրականացնեին ռուսական բանակի հաղորդակցության ուղիների հսկումը և կհետախուզեին հակառակորդի դիրքերը: Սակայն, գեներալ Զ. Մդիվանին թույլատրում է զբաղվել զուտ գաղթականական գործերով: Ի բարեբախտություն, Մուշի կայազորի պետը գնդապետ Մ. Սիլիկյանն էր, որի խորհրդով Կ. Սասունին դիմում է 16-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Իպոլիտ Սավիցկուն[1]: Նրա անմիջական օգնությամբ, Կ. Սասունին ստանում է զենք, զինամթերք, հագուստ և պարեն[2]:

Մուշ վերադառնալու ցանկություն են հայտնում Կովկասում գտնվող 130 մշեցիներ, որոնք հիմնավորվելով Մուշում մեծ օժանդակություն են ցույց տալիս գործող գաղթականական մարմիններին: Մշեցիները և սասունցիները կազմակերպում են խուզարկու խմբեր, որոնցում ընդգրկվում են 300-ից ավելի երիտասարդներ: Նրանք քրդական շրջաններից հավաքում կամ ազատում են հայերին: Խմբերի ներկայությունը շատ դեպքերում զսպում էր քրդերին հարձակողական գործողություններից: Բացի այդ, նրանք իրականացնում էին հետախուզություն, ռուսական հրամանատարությանը հաղորդելով արժեքավոր տեղեկություններ: Ինչպես նշում է Կ. Սասունին ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեին ուղված զեկուցագրում, «...խմբերը ամբողջ ժամանակաշրջանում ոևէ նիւթական օգնութիւն մարմիններից ստացած չեն, բացի բարոյական աջակցութիւնից, այն է՝ յարաբերութեան մէջ մտնել զինուորական իշխանութեան հետ, փաստաթղթեր ստանալ և զանազան դիւրութիւններ ունենալ երթևեկութեան և տեղափոխութիւնների համար»[3]:

Ինքնին հասկանալի է, որ վերադասին ուղղված նամակում Կ. Սասունին պետք է թաքցներ այն հանգամանքը, որ խմբերը գործում են իրենց անմիջական ենթակայության ներքո: Կարելի է ենթադրել,

---

[1] Ի. Վ. Սավիցկին 66-րդ հետևակային դիվիզիայի պետն էր, տե՛ս *Масловский Е. В.*, указ. соч., с. 11.

[2] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 120–121:

[3] «Համբաւաբեր», 1916, N 40, 2 հոկտեմբերի, էջ 1257-1258:

որ դա արվում էր, որպեսզի ռուսական իշխանությունները չկարողանան տեղեկանալ հայկական խմբերի իրական նպատակների մասին: Այդ էր պատճառը, որ Կ. Սասունին հարկ է համարում ընդգծել, որ իրենք որևէ կապ չունեն մշեցիներից և սասունցիներից կազմակերպված մարտական խմբերի հետ: Սասունցի Մանուկի ղեկավարությամբ կազմված, 100 հոգուց բաղկացած ջոկատը, բազմաթիվ կռիվներ մղելով, ազատում է մեծ թվով հայերի: 1916 թ. ապրիլի սկզբներից մինչև ապրիլի 15-ը Սասունցի Մանուկն իր ջոկատի հետ կատարել է երկու արշավանք և գերությունից ազատել է 2500, իսկ հաջորդ երեքի ընթացքում՝ 770 հոգու: Ընդհանուր առմամբ, նրանք կարողացել են Մուշ բերել 3270 հոգու[1]: Մայիսին հաջողվում է Տարոնի տարբեր վայրերից հավաքել մոտ երկու հարյուր որբերի և ուղարկել Ալեքսանդրապոլում գտնվող որբանոցը[2]:

Սասունցիների հավաքած տեղեկության համաձայն, քրդերի մոտ, գերության մեջ, գտնվում էին մոտ չորս հազար սասունցիներ, որոնք զրկված էին գոյության ամենատարրական միջոցներից: 1916 թ. մայիսի 13-ին կաթողիկոսին ուղված նամակում, առաջարկվում է «գումար փութացնել հոս (Մուշ-Ռ.Ս.), (որ-Ռ.Ս.) ղրկուի քիւրդերին նուէր և ազգակիցներուն հացի գին, որ կարողանան քալել և վստահելի քիւրդ ցեղապետների միջոցաւ ազատել»[3]: Սասունից 160 տղամարդու հաջողվում է հասնել Մուշ[4]:

1916 թ. մարտի 29-ին Քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի գլխավոր կոմիտեում լսվում է միության Խնուսի գործակալ Ռոստոմի զեկուցումը: Նա հայտնում է, որ Խնուսում և Մուշում օրեցօր ավելանում են քրդական գերությունից փախած և ողջ մնացած հայեր: Զգալի թվով հայեր շարունակվում են պահվել քրդերի մոտ: Բացվել են որբանոցներ: 15 օրվա ընթացքում եկածների թիվը հասնում է 1500 հոգու: Ռոստոմը հաղորդում է. «ոչխար, եզներ, սեր-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 65:
[2] Նույն տեղում, ֆ. 503, ց. 1, գ. 7, թ. 73:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 131, թ. 7:
[4] Նույն տեղում, գ. 404, թ. 252:

մացու շատ էժան են, հագուստ կայ, պակասում է թէյ և սպիտակեղէն»[1]:

Մուշում մնացել էր զգալի թվով թուրք բնակչություն: Հակառակ թուրք պատմագրության պնդումներին, նրանց նկատմամբ որևէ լայնածավալ բռնության դեպքեր չեն եղել: Տեղի են ունեցել միայն մի քանի ոչ էական անախորժություններ: Այնուամենայնիվ, թուրք բնակչությունը շարունակում էր ապրել իր տներում և հայ գաղթականների նման գտնվում էր նյութական և սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Այդ ամենը հարկադրում են գեներալ Թ. Նազարբեկյանին դիմել Խնուսում գտնվող Քաղաքների միության լիազոր Ռոստոմին՝ խնդրելով շտապ օգնություն հասցնել Մուշում գտնվող թուրքերին և հայ գաղթականներին[2]:

Կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Կ. Սասունում է տրվում երկու հազար ռուբլի՝ գաղթականների համար ցորեն գնելու համար[3]: 1916 թ. ապրիլից մինչև հուլիս Կ. Սասունին բնակչության համար գնում է երեք հազար ռուբլու ցորեն և գըլգըլ, որի մեծ մասը բաժանվում է կարիքավորներին[4]: Կ. Սասունին հեռագրում է Հայկական Կենտրոնական կոմիտեին՝ արագացնել օգնությունը, քանի որ «Փախստականների մեծ մասը ներկայումս ենթակայ է սովի»[5]:

1916 թ. մարտի վերջերին Գևորգ Ե-ի հրամանով Մուշ ժամանած հանձնաժողովի անդամ Խ. Փաշոսյանի տեղեկության համաձայն, Մշո շրջանի հայ բնակչության թիվը հասնում է մոտ իննը հազարի[6]: Իսկ կամավորական II խմբի պորուչիկ Տեր-Գևորգյանի հայտնած տեղեկության համաձայն Մուշում կար վեց հազար փախստական, որոնք սոված են և կարիք ունեն զգեստի: Նա գրում է. «Օգնութիւնը անյետաձգելի է: Շուտ հասցրէք ուտելիք, շոր և ոտնաման»[7]: Իսկ Անդրանիկը հետևյալն է հաղորդում. «Անհրաժէշտ է շուտափոյթ բժշկական և սննդի օգնութիւն, հարկավոր է սրանց (Մուշում գտնվողնե-

---

[1] «Արեւ», 1916, N 74, 4 ապրիլի:
[2] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 23, թ. 26:
[3] «Յորիզոն», 1916, N 127, 9 յունիսի:
[4] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թ. 6 շրջ.:
[5] «Համբաւաբեր», N 30, 24 յուլիսի 1916, էջ 941: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 62:
[6] «Վան-Տոսպ», 1916, N 29, 12 յունիսի, էջ 7:
[7] «Համբաւաբեր», 1916, N 12, 13 մարտի, էջ 371:

րին Ռ. Ս.) տեղափոխել, բոլորովին ուտելիք և միջոցներ չկան: Եթե օգնութիւնը ուշանայ, բոլոր փախստականները կը կոտորուեն»[1]:

Կ. Սասունին նշում է. «Տարօնի բոլոր գաւառներու մէջ ծուարած հայութիւնը թուրքերու և քիւրդերու դէմ կեանքի ու մահուան պայքարի մը բռնուած էր: Թիկունքային պատերազմ մըն էր այդ, որ տեղի կ'ունենար երկու նպատակով. առաջինը՝ *հայացնել* (ընդգծումը հեղինակինն է-Ռ.Ս.) Տարօնը, եւ երկրորդ՝ ջլատելով թշնամիի տարրերը, ապահովել հայութեան թիկունքը: Ապահովութեան այս աշխատանքը ռուսական բանակի գործին ալ կուգար: Սակայն ռուսական զինուորական իշխանութիւնը շատ յաճախ արգելքներ կը յարուցէր ու կը խափանէր կենսունակ ուժերու գործունէութիւնը: Ժողովուրդը ընտելացեր էր ընել ա՛յնքան, որքան կարելի էր, եւ շահել ա՛յնքան, որքան կարելի էր անմիջապէս շահիլ»[2]:

Կազմակերպվում են խմբեր, որոնք հեռավոր գյուղերում փնտրում էին թաքցրած ցորենի պաշարները և բերում Մուշ: Սասունցի Մանուկի և Արշակ Բոլեյանի խմբերը հաճախ ուղեկցում էին բնակիչներին, քանի որ մի շարք շրջաններ վտանգավոր էին: Երբեմն գործողությանը մասնակցում էին զինվորականներ, որոնք տրամադրում էին զինվորներ՝ բնակիչներին պաշտպանելու համար: Այդ օգնության դիմաց զինվորականները ստանում էին գտնված ցորենի կեսը:

Ապրիլի 7-ից Մուշում սկսում է գործել Հայկական կենտրոնական կոմիտեի բժշկասանիտարական խումբը: Նրանք բժիշկ Մանուշակյանի գլխավորությամբ մեկնում են Արոս գյուղը: Այստեղ կար մոտ 600 գաղթական: Բժշկական օգնության համար դիմում են նաև այլ գյուղերի բնակիչները: Խումբը օրական ընդունում էր միջին հաշվով 36 հիվանդ: Միաժամանակ խումբը այցելություններ էր կատարում Խնուսի շրջակա գյուղերում գտնվող հիվանդներին[3]: Խմբի գլխավոր նպատակն էր վերացնել Արոսում որոշ չափով տարածված տիֆ հիվանդությունը, թույլ չտալ, որպեսզի այն համաճարակային բնույթ ստանա: Հաջողությամբ ավարտելով իր առաքելությունը,

[1] «Համբաւաբեր»,1916, N 12, 13 մարտի, էջ 372:
[2] *Սասունցի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 124:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 76–77:

բժշկասանիտարական խումբը հունիսի 13-ին վերադառնում է Մուշ: Հունիսի 15-ից խումբն սկսում է իր այցելությունները Մշո դաշտի գյուղերը[1]:

1916 թ. մայիսի 4-ին Թ. Նազարբեկյանին ուղված նամակում Ա. Աթանասյանն հայտնում է Մուշ քաղաքից և շրջակա գյուղերի բնակչության վիճակից ստացած տպավորությունների մասին: Ա. Աթանասյանն իր գործընկերների հետ այցելել են յոթից ութ գյուղեր: Նրա կատարած վիճակագրությունից հետևում է, որ յուրաքանչյուր գյուղում բնակվում են 100-ից 150 հոգի, զրկված նույնիսկ հացից: Բնակիչներին անհանգստացնում է ապագայի նկատմամբ ունեցած անորոշությունը: Ա. Աթանասյանի հաշվարկների համաձայն Մուշի հայ բնակչությունը չորս հազարից ավելի է[2]:

1916 թ. մայիսի 20-ին կազմած զեկուցագրում ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի Մուշի լիազոր Կ. Սասունին հայտնում է, որ օրական Մուշ են գալիս կոտորածներից փրկված 10-ից 20 հոգի: Երիտասարդ կանանց 95%-ը մահացել է: Ժամանածներին տրվում է տաս օրվա ուտելիք և հագուստ: Ինչպես նշում է Կ. Սասունին, զգալի թվով փախստականներ դեռ չեն ցուցակագրվել: Մոտավոր տվյալներով գաղթականների ընդհանուր թիվը հասնում է 9500-ի[3]:

Հունիսի 12-ին Մուշից ուղարկած զեկուցագրում, Կ. Սասունին հայտնում է, որ մարտին գալով Մշո դաշտ, ականատես եղան բնակչության խուճապային տրամադրություններին: Բնակչության շրջանում շարունակ շրջանառվում են լուրեր ռուսական բանակի հնարավոր նահանջի մասին: Դա էր պատճառը, որ ժողովրդի մի մասը շտապ, չնչին գներով վաճառելով ունեցվածքը, 100-ական, 200-ական խմբերով հեռանում են են Խնուս[4]:

Կ. Սասունին հայտնում է. «Ապրիլի 20-ին մենք կազմեցինք մի ընդհանուր վիճակագրութիւն, որի հիման վրայ շարունակեցինք օգ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 50 շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 9–10, տե՛ս նաև *Սահակյան Ռ. Օ.,* Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանցի նամակները, ԼՀԳ, 2009, N 3, էջ 296–301:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60:
[4] Նույն տեղում, թ. 57:

նութիւն հասցնել, բայց որովհետև ժողովրդի մի մասն անցաւ Խնուս և աւելի հեռուները, մի մասը տեղաւորուեց գիւղերում և նոր եկողները շատացան, մենք հարկադրուեցինք կազմելու երկրորդ վիճակագրութիւնը մայիսի 20-ին, մի ամիս յետոյ առաջին վիճակագրութիւնից:

Վիճակագրութեան արդիւնքը.

3071 շունչ Խութ, Բռնաշէն, Մօտկան

1596 շունչ Սասուն

4144 շունչ Մուշ, Մշոյ դաշտ և Կենճ

Դասաւորուած են հետևեալ կերպով.

4506 շունչ Մշոյ քաղաքում

4205 շունչ Մշոյ դաշտում

Գումարը՝ 8711 շունչ»[1]:

Կ. Սասունին և նրա գործընկերների առաջին գործը լինում է բնակչության շրջանում հանգստություն հաստատել և վերջ տալ խուճապին, որ համակել էր գրեթե բոլորին: Կ. Սասունին նշում է. «...անմիջապէս ժողովրդի մի խոշոր մասին տեղաւորում ենք դաշտի գիւղերում, ուր դեռ մինչև այդ օրը ոչ մի բնակչութիւն չկար և պարէնը անխնայ վերաբերմունքից փչանում էր»: Օրական Մուշ են գալիս Սասունի, Դիարբեքիրի և այլ շրջաններից 40-ից 60 հայ: Նրանց թիվն ավելանում է կապված ռուսական բանակի առաջխաղացման հետ[2]:

Գյուղերում ստեղծվում են կառավարման տեղական մարմիններ: Նրանց հետ աշխատելով, Կ. Սասունին և գործընկերներն փորձում են կազմակերպել երկրագործական աշխատանքները: Նրանք գյուղացիներին տալիս են 24 եզ, «որպէս զի կարողանան կամել իրենց կալերը»[3]:

Բնակչության հիմնական կենսական խնդիրները լուծելուց հետո, Կ. Սասունու խումբը ձեռնամուխ է լինում մոտ հազարի հասնող որբերի, այրի կանանց և հիվանդների Խնուս տեղափոխման աշխա-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60:
[2] «Համբաւաբեր», 1916, N 40, 2 հոկտեմբերի, էջ 1258: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 67:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 69:

տանքներին: Խնուսում և Արոս գյուղերում կազմակերպված սննդակայանները զգալի օժանդակություն են ցույց տալիս տեղափոխվողներին: Կ. Սասունին հայտնում է ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեին, որ զբաղված լինելով բնակչությանը պարենով ապահովելով, հնարավորություն չեն ունեցել փոխադրել որբերին: Որբերի մեծ մասը փոխադրել են Մոսկվայի հայկական կոմիտեն և Քաղաքների միությունը: Մուշի որբանոցում մնում են 30 երեխա[1]:

Ըստ Կ. Սասունու տվյալների Սասունի բնակչութեան «80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ են, իսկ Դաշտինը (Մուշի – Ռ. Ս.)՝ 50 տոկոսը տղամարդ: Խութի և Բռնաշէնի գաղթականութիւնը եկել է ամբողջ ընտանիքով, որոնց մեծամասնութիւնը՝ 70 տոկոսը կանայք ու երեխաներ են»[2]: Ա. Աթանասյանի կարծիքով, ռուսական հրամանատարությունը կարող էր օգտագործել հայերի աշխատանքային ուժը: Հայերը կարող էին Կովկասյան IV բանակային կորպուսի համար ապահովել երկուսուկես միլիոն փութ խոտ[3], որի կարիքն այդքան զգում է բանակը:

Կ. Սասունու վկայությամբ, դաշտի բնակչությունը շատ արագ կազմակերպվում և նույն արագությամբ սկսում է վերականգնել հարազատ օջախները և վերսկսում գյուղատնտեսական աշխատանքները: Դա թույլ է տալիս պարենով ապահովել ոչ միայն Մուշի գաղթականությանը, այլև ռուսական զորամասերին[4]:

Կ. Սասունու հավաստիացումով, սասունցիների շրջանում ուժեղ է միմյանց օգնելու զգացմունքը: Նորեկ սասունցիներն անմիջապես ստանում էին ավելի վաղ եկածների օժանդակությունը՝ պարեն, անկողին և այլն: «Այդ մի բուռ ժողովուրդը այս երկու տարւայ արհաւիրքների ընթացքում, ապաստանելով իւր լեռներում, իւր գոյութիւնը պահպանել է իրարու ձեռքը ամուր բռնելով և անցել է աւելի մեծ փորձութիւն և փոթորիկ, քան ներկայումս: Այսօր նա դարձեալ

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 59:
[2] Նույն տեղում, թ. 60:
[3] Նույն տեղում, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 12 շրջ. :
[4] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 58:

հետևում է իւր աւանդական սովորութեան»[1]: Ըստ Կ. Սասունու կյանքը, չնայած դժվարություններին, աստիճանաբար իր հունի մեջ է մտնում: Նա ուրախությամբ տեղեկացնում է, մարդիկ ամուսնանում և նոր ընտանիքներ են կազմում: Երիտասարդ կանանց 95 տոկոսն ամուսնացել է: Նրա վկայությամբ, «Առաջ ընտանեկան կեանքը ներկայացնում էր մի քաոս, ուղղակի մի անարխիա էր տիրում...»[2]:

Բավական լավ հարաբերություններ են հաստատվում հայերի և տեղի ռուսական հրամանատարության միջև: Հայերը ոչ միայն պարենով էին օժանդակում ռուսներին, այլև հետախուզում էին հակառակորդի դիրքերը: Լինելով տեղացիներ, հայերը կարողանում էին ամենայն մանրամասնությամբ հետախուզել տեղանքը և արժեքավոր տեղեկություններ հայթայթել ռուսների համար:

Հավանաբար հայերից կազմված մարտական խմբերի ակտիվ գործողությունները և ռուսական զորամասերի առաջացումն ու ներկայությունը հարկադրում են քրդերին «կամավոր» հրաժարվել հայ գերիներից: Նրանց հոսքը գնալով ավելանում է: Արդեն օրական սկսում են Մուշ գալ Սասունից և այլ վայրերից 30-ից 60 հոգի:

1916 թ. հունիսին քաղաք է գալիս Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի ներկայացուցիչ, գյուղատնտես Աշոտ Աթանասյանը: Նա ուսումնասիրություններ է կատարում և իր եզրակացություններն է ներկայացնում վերադասին: Նրա հաշվարկների համաձայն, Մշո դաշտի 93 հայկական գյուղերից կանգուն մնացել էր միայն 17-ը: Մնացածները կամ հրդեհվել, կամ քարուքանդ էին արվել քրդերի ու թուրքերի կողմից: Բոլոր բնակավայրերը ենթարկվել էին թալանի[3]:

Ըստ մոտավոր տեղեկությունների, ռուսական բանակի թիկունքում գտնվում էին մոտ 25 հազար քրդեր: Ռուսական հրամանատարությունը չունենալով անհրաժեշտ քանակությամբ ուժեր և ժամանակ, չէր կարողանում լրացուցիչ զորամասեր տրամադրել թիկունքը քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Նշված 25 հազար

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 61:
[2] Նույն տեղում:
[3] *Սահակյան Ռ.*, Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, «ԲՀԱ», N 1–2, 2007, էջ 47:

քրդերից տասից տասներկու հազարը կազմում էին զինյալները[1], որոնք անընդհատ հարձակումներով կազմալուծում էին բանակի կանոնավոր մատակարարումը:

1916 թ. հուլիսի 20-ին ռուսական հրամանատարությունը նախաձեռնում է հարձակում, որը նպատակ ուներ գրավել Անդոկը, ապա իջնել Տիգրիսի հունով և առաջանալ Դիարբեքիր (Տիգրանակերտ): Հաջողության դեպքում նրանց աջակցելու էր Բիթլիսի ջոկատը, որը արշավելու էր դեպի Սղերդ: Իր գործողություններում ռուսական հրամանատարությունը լայնորեն օգտագործում էր սասունցիներից կազմված խուզարկու խմբերը: Նրանցում ընդգրկված էին երեք հարյուր հոգի: Նրանք Սասունի լեռնաշղթայի վրա դիրքեր էին գրավել և հետախուզում էին հակառակորդի տեղաշարժը: Հուլիսից սկսած սասունցիների մարտական խմբերը կռիվներ են մղում հակառակորդի դեմ, որի թվաքանակն օրեցօր աճում է: Ռուսական հրամանատարությունն շտապում է նրանց օգնություն հասցնել: Երկու օր անընդհատ ընթանում են կատաղի կռիվները: Հուլիսի 22-ին թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումներն անցնելով ռուսական բանակի թիկունքը գրավում են Մշո դաշտի Ղզզըլաղաճ գյուղը: Դա վտանգում է Մուշում և դաշտում գտնվողներին[2]:

Հուլիսի 23-ին Կ. Սասունին և ընկերները շտապում են համապատասխան հրահանգներ տալ բնակչությանը՝ պատրաստվել նահանջի: Քաղաքի բնակչության նահանջը սկսվում է հուլիսի 23-ի գիշերը, իսկ դաշտի բնակչությանը՝ վաղ առավոտյան: Մուշում ռուսական զորքից մնում է քաղաքի պարետը և մեկ տասնյակ զինվոր: Նրանք ևս պատրաստվում են հեռանալ Մուշից: Լեռներից մարտիկների իջնելուց հետո հնարավոր է դառնում մարտական խմբերն օգտագործել նահանջի ճանապարհը պաշտպանելու համար: Մուշից գաղթի ճանապարհը բռնում է հինգ հազար հոգի:

Հայկական կենտրոնական կոմիտեին ուղված հեռագրում Կ. Սասունին հայտնում է. «Դէպի Բաշքէօյ ճանապարհուեցին 10000-ից

[1] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 12:
[2] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 69:

աւելի գաղթական և 400 որբ[1]. խնդրում ենք կարգադրեցէք նրանց դիմաւորելու և օգնութիւն ցույց տալու»[2]: Շտապ կազմակերպվում է բնակչության նահանջը: Հուլիսի 26-ին նրանք հասնում են Խնուսի Արոս գյուղը: Ճանապարհին գաղթականների մի մասը ենթարկվում է թուրքական զորքի հարձակմանը: Սպանվում են 22 հոգի[3]:

Հաջողվում է անվնաս տեղափոխել 350 երեխաների: Նրանցից 150-ին հանձնում են իրենց մայրերին, իսկ 200-ին ուղարկում են Կաղզվան[4]: Այնտեղ հիմնվել էր նաև հիվանդանոց՝ ինֆեկցիոն բաժանմունքով[5]:

Վտանգը վերանալուց հետո, 1916 թ. սեպտեմբերի 23-ին Կ. Սասունին, Հ. Մակարյանը և Ա. Սասունին վերադառնում են Մուշ[6]: Նրանք Մուշում և Խնուսում հիմնելու էին մթերքի պահեստներ[7]: Հուշերում Կ. Սասունին նշում է. «Այս նահանջէն յետոյ, գրաւուած Հայաստանը այլևս մասնակի նահանջներու ենթակայ չեղաւ: Ժողովուրդը կամաց կամաց տեղաւորուեցաւ, մնայուն բնակիչի հանգամանք ստացաւ, իր սեփական աշխատանքով եւ վարուցանքով ապրելու կեանքի մէջ մտաւ»[8]:

Նշված ժամանակ Մուշում գործում էր միայն ԿՀԲԸ-ն Հայկական Կենտրոնական կոմիտե, այլ կազմակերպություններ և ընկերություններ այնտեղ չկային:

Վերադարձողների համար ԿՀԲԸ-ը կազմակերպում է սննդակայն: 1916 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այստեղ սնունդ են

---

[1] Իր հուշերում, Կ. Սասունին նշում է, որ որբերի թիվը 500 էր, տե՛ս *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 133:
[2] «Համբաւաբեր», N 32, 7 օգոստոսի, էջ 1005:
[3] Նույն տեղում, N 40, 1916, 2 հոկտեմբերի, էջ 1258:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 72:
[5] *Յարությունյան Ա. Հ.*, Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, էջմիածին, թիվ Դ, 2007, էջ 77:
[6] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 37:
[7] «Աշխատանք», 1916, N 43, 28 սեպտեմբերի:
[8] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 134:

ստանում երկու հազար հոգի[1]: Այդ նպատակի համար ծախսվում է 1801 ռուբլի 76 կոպեկ գումար[2]:

Այդպիսով՝ ռուսական զորքերի հուլիս 23-ի հերթական նահանջից հետո Կ. Սասունու կատարած նոր հաշվառումը ցույց է տալիս, որ 1916 թ. մայիսի 20-ին իր արձանագրած փրկվածների մոտ կեսը այլևս հայրենի բնակավայրեր չի վերադարձել: Ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունանալուց հետո, հայկական կազմակերպությունները, հիմնականում ԿՀԲԸ-ը, վերսկսում են իրենց գործունեությունը:

Ռուսական կառավարության կողմից տրամադրված գումարներն անբավարար էին սննդակայանի գործունեության համար, այնուամենայնիվ որոշակի օգնություն էր ծանր կարիքի մեջ գտնվողների համար: 1916 թ. նոյեմբեր-դեկտեմբերին հատկացվել է 1200 ռուբլի, որը «նոր ազատուողների համար մի բարիք էր»[3]: Նոյեմբերին Խնուսում Կ. Սասունին հիմնում է որբանոց: Վերջինիս նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների և կահավորման համար հատկացվում է 3900 ռուբլի: Սկզբնական շրջանում որբերի սննդի խնդիրը հոգացել են ԿՀԲԸ-ն Մուշի և Խնուսի ու Քաղաքների միության սննդակայաններից:

Որբանոցը, 50 որբով, կանոնավոր կերպով սկսում է գործել 1917 թ. հունվարից: Սկզբնապես նախատեսվում էր որբերի թիվը հասցնել հարյուրի, սակայն համապատասխան մեծությամբ շինության բացակայությունը հնարավորություն չի տալիս իրականացնել մտահաղացումը: Ուստի Հարամիկ գյուղում հիմնվում է երկրորդ որբանոցը, որտեղ ապաստանելու էին 50 որբ[4]:

1916 թ. դեկտեմբերի 1-ին Կ. Սասունին Թիֆլիսում ներկայացնում է մանրամասն զեկուցագիր հայ փախստականների և գերությունից ազատվածների մասին:

Նա հայտնում է, որ սեպտեմբերին խումբը մեկնում է Խնուս-Մուշ: Նրանց հանձնարարված էր.

1. Սննդամթերքի պահեստ հիմնել Խնուսում:

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 14:
[2] Նույն տեղում, թ. 14:
[3] Նույն տեղում, թ. 20:
[4] Նույն տեղում, գ. 126, թ. 20:

2. Պարեն հասցնել Մուշում գտնվողներին և նոր եկողներին:
3. Որոնել, հավաքել, խնամել և տեղափոխել որբ երեխաներին:
4. Նախապատրաստել սերմացու:

Իր ենթակայության ներքո գտնվող աշխատակիցներին բաժանում է երկու խմբի: Մի խումբը ուղարկում է Խնուս, իսկ երկրորդին՝ Մուշ, որպեսզի տեղերում կազմակերպեն վերը նշված աշխատանքները:

Խնուսի շրջանում հողագործական աշխատանքներ չեն կատարվել: Անհրաժեշտ էր վաղ գարնանը սերմացու հասցնել, որպեսզի բարենպաստ եղանակային պայմաններում գյուղացին հնարավորություն ունենա սկսել երկրագործական աշխատանքները: Կ. Սասունին գրում է. «Եթէ այս գարնանը (1917 թ. – Ռ. Ս.) հնարաւորութիւն չը լինի ցանքերը կազմակերպելու, կ'ստեղծուի տնտեսական այնպիսի քայքայում, որը միայն երեք-չորս տարի յետոյ կը վերականգնուի: Մինչդեռ, եթէ 5000 բնակչութեան, նուազագոյն հաշուով 5000 փութ սերմացու ցորեն տանք, եկող տարւայ օգոստոսից սկսած 8 ամիս ապահոված կը լինենք ամբողջ ազգաբնակչութիւնը»[1]:

Կ. Սասունին և աշխատակիցներն անց են կացնում Խնուս-Մուշ շրջանի բնակիչների մեկօրյա վիճակագրություն: Ըստ դրա, Խնուսի շրջանում բնակվում էր 3343, Կումկումի՝ 600, Մուշի շրջանում՝ 100, ընդամենը՝ 4043 հոգի[2]: Միաժամանակ խումբը ձեռնամուխ է լինում քրդերի մոտ գտնվող հայերի փրկագնմանը: Այդ նպատակի համար Կ. Սասունուն տրվել էր 2500 ռուբլի:

60 սասունցի և մշեցի ցանկություն են հայտնում գալ Մուշ և զբաղվել պատանդների ազատման խնդրով: Նրանք տեղացիներ էին, գերազանց գիտեին տեղանքը և կարող էին լուրջ օգնություն ցույց տալ: Չնայած որ չի տրամադրվում անհրաժեշտ դրամը (հնարավորություն կար միայն երկու հոգու ֆինանսավորել, այն էլ երկու ամսով), Մուշում գործում են մոտ հարյուր հոգի: Նրանցից 25-ը ծիավոր էին: Իսկ Սիլվանի շրջանում գործում էին 150 զինված երիտա-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 44:
[2] «Համբաւաբեր», 1916, N 50, 11 դեկտեմբերի, էջ 1577: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 39:

սարդների ջոկատը: Վերը նշված խումբը, բացի հայերին լեռներում հայտնաբերելուց, կատարում էր նաև հետախուզություն: Նրանց հայթայթած տեղեկությունների համաձայն, Մոտկանի և Խիզանի շրջանում կան մոտ հինգ հազար հայեր: Իսկ Խուլփի, Ֆարղինի, Հազրոյի և Սիլվանի դաշտում՝ մոտ ութ հազար, որոնք բացառապես երիտասարդներ էին: Հաջողվում է բարեկամական հարաբերություններ հաստատել մոտկանցի Մահմեդ աղայի հետ, որը բավական օգնություն է ցույց տալիս պատանդ հայերի գտնվելու վայրերը հայտնաբերելու և նրանց Մուշ բերելու գործում[1]:

Մինչև 1916 թ. նոյեմբերի 10-ը գերությունից ազատվում են 380 հոգի, որոնց թիվը ամսվա վերջին հասնում է 630 հոգու: Քրդերը հայերին ազատում են յուրաքանչյուրի համար պահանջելով մեկ ոսկի[2]: Ընդհանուր գումարը հասնում է 200 օսմանյան ոսկու: Գումարն անհրաժեշտ էր շտապ հայթայթել, քանի որ ճմեռը հնարավոր չէր ազատվածներին տեղափոխել: Այդ գումարի դիմաց «քիւրդ աղաները խօսք են տալիս ... պահելու մինչև գարուն իրենց մօտ գտնուած հայերին»[3]:

Վերը հիշատակած 150 զինված երիտասարդները, որոնք նույնիսկ տեղյակ չէին, որ Մուշում հայեր կան, կատաղի կռիվներ են մղում թուրքերի և քրդերի դեմ, նրանց շրջանում տարածելով ահ ու սարսափ: Եվ ինչպես նշում է Կ. Սասունին, «դրանց (հայերի – Ռ. Ս.) գոյութիւնը մի տեսակ դիւրութիւն է տալիս... լեռնանցքով անցնող փախստականներին»[4]:

Հուսադրող էր իրավիճակը ռազմաճակատում: Կովկասյան բանակի հրամանատարությունն ուժեղացված կերպով ամրապնդում էր թիկունքը, կառուցում էր նոր ճանապարհներ և երկաթգծեր: Միայն նորակառույց խճուղիների երկարությունը հասնում էր երկու հազար կիլոմետրի: Նշված շինարարություններին հիմնականում մասնակցում էին արևմտահայեր: Մուշում և այլ վայրերում գտնվող հայության համար դա լավ նշան էր, քանի որ վկայում էր, որ ռուս-թուրքա-

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 41:
[2] «Համբաւաբեր», 1916, N 50, 11 դեկտեմբերի, էջ 1577:
[3] Նույն տեղում, էջ 1578:
[4] Նույն տեղում, էջ 1577:

կան ռազմաճակատում իրադրության կայունության մասին և այլևս ռուսական զորքը չի նահանջի[1]: Բաղեշից Սեպուհը հայտնում է. «Քիւրդերը մրցումի ելած են հայերին ազատելու գործում. ամեն օր տասնեակ հայեր են գալիս: Այս երեք օրուայ ընթացքում 250 հայ է ազատ արձակուած: Իւրաքանչիւրի համար տալիս ենք մէկ օսմանեան ոսկի. ում սրտին մօտ է հայի կեանքը, թող աճապարէ փրկելու հայութեան մնացած բեկորները»[2]:

Կ. Սասունին նշում է. «1916-ի աշունը դարձավ մեզի համար տեղաւորման եւ ցանքի շրջան մը, որ 1917-ի տարեշրջանին աւելի բարգաւաճ վիճակի մը հասաւ: Երկրի ամբողջ հայութիւնը հետզհետէ ինքնաբաւ կը դառնար»[3]: Խնուս-Մուշի շրջանը բժշկական օգնությամբ ապահովելու նպատակով, Քաղաքների միությունը կազմակերպում է հիվանդանոց, որի տնօրենն էր բժիշկ Գ. Շահնազարյանը: Նա իր ենթակայության ներքո ուներ երկու բուժակ, գթության քույր, երկու սանիտար, երկու հիվանդապահուհիներ և այլ աշխատողներ[4]: Խնուսում, Սարիղամիշում, Մանազկերտում և այլ վայրերում տեղակայված էին Քաղաքների միության այլ բաժանմունքները, ինչպես՝ պարենի պահեստներ, սննդակայաններ, թռուցիկ ջոկատներ, գումակ և այլն[5]:

Ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունանալուց հետո, հայկական կազմակերպությունները, հիմնականում ԿՀԲԸ-ը, վերսկսում են իրենց գործունեությունը: Մուշ է գալիս Կ. Սասունին: 1917 թ. հունվարի 27-ին, նա լինելով Խնուս-Մուշի լիազոր, խնդրում է ԿՀԲԸ-ն Կենտրոնական կոմիտեին ուղարկել հետևյալ գումարները.

1. Ջոկատի՝ հունվար-փետրվար ամիսների գործունեության համար տրամադրել 1435 ռուբլի 73 կոպեկ:
2. Ջոկատի անդամների հունվար-փետրվար ամիսների աշխատավարձը՝ 2600 ռուբլի:

---

[1] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 136:
[2] «Համբաւաբեր», 1916, N 30, 24 յուլիսի, էջ 955:
[3] *Սասունի Կ.*, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 137:
[4] ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 23:
[5] Նույն տեղում, թ. 23–24:

3. Ձոկատի հունվար-փետրվար ամիսների ծառաների, ձիերի և ներկայացուցչական ծախսերի համար 1000 ռուբլի:
4. Հունվար-փետրվար ամիսներին գաղթականների օգնության համար 500 ռուբլի:
5. Մուշի սննդակայանի համար յուրաքանչյուր ամիս հատկացնել 1200 ռուբլի, այսինքն՝ 3600 ռուբլի (Կ. Սասունու նշված գումարը մերժվել է և հատկացվել է 2400 ռուբլի):
6. Խնուսի որբանոցի 50 երեխաների համար՝ հուվար-փետրվար ամիսների համար 2000 ռուբլի (պահանջված գումարի դիմաց արվել է ուղղում և նշվել է 1000 ռուբլի):
7. Հարամիկի որբանոցի 50 որբերի համար հունվար-փետրվար ամիսների համար անհրաժեշտ է 1000 ռուբլի:

Ընդհանուր առմամբ լիազորը խնդրել է հատկացնել 12135 ռուբլի 73 կոպեկ: Սակայն ղեկավարությունը պահանջվող գումարի փոխարեն առաջարկում է 8500 ռուբլի[1]:

Ռուսական իշխանությունների կողմից թույլատրվում է Բուլանըխ գավառի շուրջ 400 ընտանիքի տեղափոխվել Ալաշկերտ իրենց տնային կենդանիներով: Հայտնելով այդ մասին, Յ. Զավրիևը միաժամանակ նշում է, որ նրանք տեղում ապահովվելու են սերմացուով: Տեղափոխվողների սննդի հետ կապված խնդիրները հոգալու է Քաղաքների միությունը, ընդհուպ մինչև 1917 թ. հուլիսը[2]:

Այսպիսով, 1916–1917 թթ. Մուշ-Խնուսում աշխատանքներ են ծավալում հիմնականում երկու կազմակերպություններ՝ ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն և Քաղաքների միությունը: Ինչպես էրզրումի, այնպես էլ Սասունի և Մուշի հայությունը կրել էին ահռելի մարդկային և նյութական կորուստ: Կազմակերպությունների համար առաջնահերթը՝ փրկված հայության համար գոյության տարրական պայմանների ստեղծումը և քրդական գերության մեջ գտնվող հայրենակիցների ազատումն էր: Այդ նպատակի համար Մուշ է գործուղվում Կարո Սասունին և նրա գործընկերները: Մուշ է գալիս նաև Ռոստոմը: Նրանց հաջողվում է փրկագնման,

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 1–2:
[2] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 53 և շրջ.:

զենքի սպառնալիքով կամ էլ այլ ճանապարհով հասնել զգալի թվով հայերի ազատմանը: Դրան նպաստում են մշեցիներից և սասունցիներից կազմված մարտական խմբերը, որոնց ներկայությունը և անընդհատ մարտերը քրդական տարբեր ավազակախմբերի հետ հարկադրում են վերջիններիս «կամավոր» ազատել իրենց մոտ գտնվող հայ գերիներին: Հայ մարտիկները ռուս զինվորների հետ միասին մասնակցում էին տեղական նշանակություն ունեցող մարտական գործողությունների: Շատ դեպքերում հայերից կազմված զինված ջոկատների ներկայությունը սթափեցնող ազդեցություն էր ունենում քրդերի վրա, որոնք հաճախ ձեռնպահ էին մնում հայկական բնակավայրերի վրա հարձակվելուց:

Ռազմաճակատում ստեղծված անկայուն իրադրության հետևանքով, ռուսական զորքը հարկադրված է լինում նահանջել Մուշից: Դա ստիպում է հայերին ևս հետևել բանակին: Նահանջը, սակայն, կատարվում է կանոնավոր և կորուստները լինում են չնչին: Դրա հիմնական պատճառներից էր սասունցի և մշեցի մարտիկների պաշտպանությունը: Վտանգը վերանալուց հետո ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն և Քաղաքների միությունը վերսկսում են իրենց գործունեությունը Մուշում և շրջական գյուղերում: 1916 թ. աշնանից և ամբողջ 1917 թ. կազմակերպությունները ծավալում են համեմատաբար ազատ գործունեություն: Հայ բնակչությունը հնարավորություն է ստանում վերսկսել կիսատ թողած վերականգնողական և հողագործական աշխատանքները: Հիմնվում են բնակչության տարրական կենսապայմաններն ապահովող տարբեր հաստատություններ՝ սննդակայաններ, խանութ-պահեստներ, հիվանդանոցներ և այլն:

Սակայն, 1917 թ. ապրիլի 19-ին թուրքական բանակը Մուստաֆա Քեմալի հրամանատարությամբ գրավում է Մուշը, թեև կարճ ժամանակով: Ռուսական բանակի հեռանալուց հետո, 1918 թ. փետրվարին թուրքերն անցնում են հարձակման, որի հետևանքով հնարավորություն չի լինում շարունակել Մուշի և Խնուսի հայկական բնակավայրերի վերականգնողական աշխատանքները:

## զ. Տրապիզոնի հայության փրկության կազմակերպումը

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայոց ցեղասպանության զոհերից էր նաև Տրապիզոն վիլայեթի (նահանգի) և համանուն քաղաքի հայ բնակչությունը[1]: Նրանց որոշ մասին հաջողվում է խուսափել բռնագաղթից և ապաստանել լեռնային անմատչելի վայրերում:

1916 թ. ապրիլի 5-ին ռուսական զորքերը և ռազմածովային նավատորմը գրավում են Տրապիզոն քաղաք-նավահանգիստը:

Դեռևս փետրվարի 26-ին Բաթումի ս. Փրկիչ եկեղեցու ավագ քահանա Մեսրոպ Մելյանը ս. էջմիածնի դիվանապետ Տիրայր վարդապետին ուղղված նամակում հայտնում է, որ փետրվարի 6-ի N 47 գրությամբ դիմել է էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովին, վերջինիս ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ օրերի խնդիր է Տրապիզոնի գրավում և անհրաժեշտ է օր առաջ անցնել Տրապիզոն և զբաղվել ողջ մնացած հայերի փրկութ-

---

[1] Պատերազմի նախօրյակին վիլայեթում բնակվում էր մոտ մեկ միլիոն մահմեդական՝ թուրքեր, քրդեր, լազեր և այլոք, մոտ 250 հազար հույներ և 60 հազար հայեր ( Տե՛ս *Дадрян В.,* Геноцид армян; содержание преступления, Е., 2005, с. 19): Ըստ Կովկասյան բանակի հակահետախուզական բաժանմունքի աշխատակից, ենթասպա Տ. Դևոյանի՝ 120 հազար: Տե՛ս "Армянский вестник", № 43–44, 5 ноября 1917, с. 9. Տրապիզոն քաղաքի հայ բնակչության թվաքանակը կազմել է 16 հազար, տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 4: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 33: Թուրք պատմաբան Խալիդ Դյունդար Ակարջայի տվյալներով՝ մինչև պատերազմը Տրապիզոնի ողջ բնակչությունը կազմել 51016 բնակիչ: Նրանցից 29168-ը՝ թուրք, 13190-ը՝ ուղղափառ հույն, 7121 հայ, 1453 կաթոլիկ, տե՛ս *Халит Дюндар Акарджа* (Khalit Dundar Akardja), Трабзон становится Трапезондом: Превращение османского города в русский во время Первой мировой войны, с. 96.-Русский сборник. Исследования по истории России. М., Том VIII, 2010. ԱՄՆ-ի Պրինստոնի համալսարանի ասպիրանտի վկայակոչած վիճակագրությունը այնքան էլ ստույգ չէ ներկայացնում Տրապիզոնի բնակչության թվաքանակը: Այսպես օրինակ, ինչ է նշանակում «1453 կաթոլիկ»: Հայտնի է, որ կաթոլիկ ազգ գոյություն չունի: Բացի այդ, իր հոդվածում, նա այլևս որևէ խոսք կամ ակնարկ չի կատարում «7121 հայ» բնակչության բռնագաղթից հետո նրանց շարժական և անշարժ գույքի և այլնի մասին: Իր հոդվածում Խ. Դ. Ակարջան խուսափում է հայերի մասին որևէ ակնարկ անելուց: Նա միայն նշում է, որ 1915 թ. հայերը բռնագաղթվել են, տե՛ս նույն տեղում, էջ 96:

յամբ[1]: Մ. ավագ քահանա Մելյանը դիվանապետին զեկուցում է, որ փետրվարի 21-ին և 25-ին իր նախագահությամբ տեղի ունեցած հատուկ խորհրդակցություններում քննարկվել է Տրապիզոնի և վիլայեթի հայության օգնություն կազմակերպելու հարցը: Խորհրդակցություններին մասնակցել են նաև նախկին տրապիզոնաբնակ հայերը: Ինչպես գրում է Տեր հայրը. «Այս խորհրդակցութիւնը գտաւ անհրաժեշտ նախապատրաստուելու այդ ցանկալի օրի (այսինքն՝ Տրապիզոնի գրավումը – Ռ. Ս.) և վաղ ընդ փույթ»[2]: Համանման բովանդակությամբ նամակ է գրվում ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեին[3]:

Որոշվում է կազմակերպել վեց հոգուց բաղկացած հանձնաժողով, որը Տրապիզոնի գրավումից հետո պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում անմիջապես մեկնի քաղաք և «Աստծոյ առանձին հրաշքով ողջ մնացած կարիքաւոր հայերին օգնելու, սրանց վիճակագրութիւնը կազմելու և կացութեան մասին մեզ ստուգապատում և շուտափոյթ տեղեկութիւններ հաղորդելու»[4]: Նա միաժամանակ դիմում է Տիրայր վարդապետին, որպեսզի Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն գումար տրամադրի նշված նպատակի համար:

Մ. ավագ քահանա Մելյանը դիվանապետի ուշադրությունը հրավիրում է մեկ այլ կարևոր փաստի վրա՝ տրապիզոնցի հայերի և Հայ առաքելական եկեղեցու լքյալ գույքի տնօրինման անհրաժեշտությունը: Նա առաջարկում է այդ նպատակի համար լիազորել հոգևորականի, որը պետք է հետևեր գույքի տնօրինման հետ կապված հարցերին, մինչև օրինական տերերի վերադարձը: Բացի այդ, անհրաժեշտ է նման լիազորություններ ունեցող անձի համար ստանալ զինվորական և քաղաքացիական իշխանությունների թույլտվությունը, որպեսզի նա իրավունք ունենա վերը նշված հարցերով զբաղվել:

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101:

[2] Նույն տեղում: "Кавказское слово" թերթը հայտնում է, որ Խոպի մոտկայքում ապրում են հայ մահմեդականներ՝ համշեններ, կամ խոպցիներ, որոնց թիվը հասնում է մոտ 30 հազարի, տե՛ս "Кавказское слово", Тифлис, N 45, 25 февраля 1915.

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 37:

[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101:

Փետրվարի 28-ին Բաթում վերադարձած Ա. Անտոնյանը և Հ. Ջաքարյանը հայտնում են, որ Ռիզեում և շրջակա մահմեդական գյուղերում կան 200-ից ավելի հայ երեխա՝ 3-ից մինչև 14 տարեկան: Ռիզե քաղաքի մահմեդականների տներում հայտնաբերվում են 60, ծնողազուրկ հայ երեխաներ: Կան նաև որպես հարճ և կին տարած կանայք ու աղջիկներ: Այդ կանանցից ու աղջիկներից երկուսին հաջողվում է բերել Բաթում[1]:

Փետրվարի 29-ին Մ. ավագ քահանա Մելյանը հայտնում է էջմիածին, որ ծնողազուրկ երեխաների համար Բաթումի «շրջանային կոմիտետի քաղաքական կոմիսսիայից... ստացայ 60 ձեռք ճերմակիղէն ու ոտնաման»[2]: Տեր հայրը տեղեկացնում է, որ Ռիզեում հայտնաբերվել են Հայ առաքելական եկեղեցուն պատկանող իրեր՝ խաչեր, եկեղեցական հագուստներ և այլն: Քահանան հայտնում է, որ Ռիզեում լայն գործունեություն է ծավալել Բաքվի մահմեդական բարեգործական ընկերությունը մահմեդական փախստականներին և պատերազմից տուժածներին օգնության գլխավոր լիազոր, մասնագիտությամբ բժիշկ Սուլթանովի գլխավորությամբ[3]: Նմանատիպ աշ-

---

[1] «Հորիզոն», N 51, 5 մարտի 1916: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 36:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112:

[3] Խոսրով բեկ Սուլթանովը մահմեդական քաղաքական գործիչ և մասնագիտությամբ բժիշկ էր: Նա և իր երկու եղբայրները՝ Սուլթանը և Իսքանդերը, հայտնի էին հակահայ հայացքներով: 1917 թ. նոյեմբերի 27-ի Կովկասյան բանակի հակահետախուզական բաժանմունքի կողմից կազմված զեկուցագրում Խ. բեկ Սուլթանովը հիշատակվում է որպես թուրքական հետախուզության լրտես: Նրա գլխավորած բարեգործական կազմակերպությունը լոկ «տանիք» էր ռուսական զինուժի մասին հետախուզական տեղեկություններ հավաքելու համար: Մահմեդական բարեգործական ընկերության տված հարյուրավոր կեղծ տեղեկանքների օգնությամբ հարյուրավոր թուրք ռազմագերիներ հնարավորություն են ունենում փախչել և միանալ յուրայիններին, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 7: 1919 թ. հունվարի 16-ին Ադրբեջանական կառավարությունը Խ. բեկ Սուլթանովին նշանակում է Ղարաբաղի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ-նահանգապետ: Նա այդ պաշտոնը վարել է մինչև 1920 թ. մայիս: 1920 թ. մարտի 22-ի լույս 23-ի գիշերը կազմակերպել է Շուշիի հայկական թաղամասի բնակչության զանգվածային ջարդը, որի հետևանքով զոհվում է 30-ից 35 հազար հայ: Բաքվում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, Խ. բեկ Սուլթանովն իրեն հայտարարել է «Ղարաբաղի հեղկոմի նախագահ»: Խորհրդային իշխանությունների կողմից ձերբակալվել, ապա Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի միջնորդությամբ ազատվել և հեռացել է Պարսկաստան: Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է Սուլթանովի 1917 թ. նոյեմբերի 8-ի

խատանքներ են իրականացնում վրացական բարեգործական ընկերությունը աջար բնակչության շրջանում, նրանց հատկացնելով ոչ միայն նպաստ, այլև իրավաբանական օգնություն: Մ. ավագ քահանա Մելյանը ցավով և ափսոսանքով նշում է, որ «ամենից շատ նահատակված, ամեն բանից զրկուած ու կողոպտուած հայը չունի նոյն իսկ մի յատուկ շրջիկ հովիւ, ուսումնասիրող, քաջալերող, խորհրդատու»[1]:

"Le Temps" թերթի հաղորդման համաձայն, քաղաքում գտնվել են «50 հայ որբ, 15 կին և մոտավորապես 1000 տղամարդ, որոնք թաքնվել էին հարևան գյուղերում»[2]:

Փրկված հայերի մասին առաջին տեղեկությունները ստացվում է Ռիզե քաղաք մեկնած բաթումաբնակ մի խումբ հայերից, որոնց թվում՝ Աշոտ Անտոնյան, Հարություն Ջաքարյան և չորս այլ անձերից, որոնք նվերներ էին տարել ռուս զինծառայողների համար: Ռիզեում նրանք տեղեկանում են, որ «Տրապիզոնի հայերին կոտորելուց յետոյ, նրանց երեխաներին նաւերով բերել են Ռիզէ մահմեդականների միջև բաժանելու համար»[3]:

Տրապիզոնը գրավելուց հետո կազմվում է Կովկասյան ռազմական օկրուգի Տրապիզոնի ամրացված շրջանը (Трапезундский укреплённый район Кавказского военного округа): Գրավված նահանգը բաժանվում տեղամասերի: Հիմնվում է ամրությունների կառուցման վարչություն, որը սկսում է պաշտպանական ամրությունների կառուցումը[4]: Կազմակերպվում է ժամանակավոր զինվորական վարչություն՝ Կովկասյան V բանակային կորպուսի հրամանատար գեներալ Վլադիմիր Յաբլոչկինի գլխավորությամբ: Նա օժտվում է գեներալ-նահանգապետի լիազորություններով[5]: Տրապիզո-

---

նամակը ԿՀԲԸ-ն, ուր խնդրում է իր գրասենյակի աշխատակիցների համար տրամադրել օճառ, թեյ և ալյուր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 250, թ. 1-2.:

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112 շրջ., տե՛ս «Գաղափար», N 8, 4 մարտի 1916:

[2] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 505:

[3] Նույն տեղում, թ. 112: Ըստ տեղեկությունների աքսորվել են նաև Տրապիզոնի, Սամսունի, Կիրասոնի և այլ վայրերի մահմեդականություն ընդունած հայերը, տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 572, թ. 49:

[4] с. 274-275.

[5] Տե՛ս *Халит Д. А.,* указ. ст., с. 97.

նում ռուսական վարչակարգն ամրապնդելու նպատակով նշանակվում է ոստիկանապետ, որն զբաղեցնում է Ռիբինսկ քաղաքի ոստիկանապետ Ա. Պ. Օրանսկին[1]: Նա իր ենթակայության ներքո ուներ վեց օգնականներ՝ պրիստավ, 12 թաղային հսկիչ և 120 ոստիկան[2]:

Մարտի 3-ին ստանալով Բաթումիից Մ. ավագ քահանա Մելյանի հեռագիրն այն մասին, որ գտնվել են 60 հայ որբ և ըստ տեղեկությունների նրանց թիվը հասնում է մոտ երկու հարյուրի[3], նույն օրը՝ կաթողիկոս Գևորգ Ե-ն հրամայում է Իմերեթի և Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Մովսիսյանին 5000 ռուբլի «փոխադրել Բաթում Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելեանին, որպէսզի Տրապիզոնի գրաւելուց յետոյ գործադրուի այնտէղի ու ծուամերձ շրջանների ազատած հայ թշուառների կարիքների վրայ»[4]:

Միաժամանակ հանձնարարվում է Ս. էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողովի» նախագահ Գարեգին վարդապետին միջոցներ ձեռնարկել, որպեսզի որբերին տրվի պետական նպաստ[5]: նպաստ[5]:

Ապրիլի 16-ին ԿՀԲԸ-ն Հայկական կենտրոնական կոմիտեին ուղված նամակում Մ. ավագ քահանա Մելյանը հայտնում է, որ ստացել է կոմիտեի ուղարկած հինգ հազար ռուբլին: Կազմակերպվել է երկու հանձնախումբ: Նրանցից մեկն ուղարկվել է Ռիզե, իսկ մյուսը՝ Տրապիզոն: Նրանք պետք է որոնողական աշխատանքներ կատարեն՝ հայտնաբերեն մահմեդականների ընտանիքներում պահվող հայ որբերին և ուղարկեն Բաթում: Կատարված աշխատանքների շնորհիվ Ռիզեյից 19-ը, իսկ Տրապիզոնից 25 երեխա Բաթում են տեղափոխվում: Սպասվում են ևս 25 երեխաներ: Ինչպես նշում է Մ. ավագ քահանա Մելյանը. «Ստացուած տեղեկութիւններից երեւում է, որ որբերի թիւը շատ է...: Բացի որբերից, Տրապիզոն երևան են եկել առ այժմ 300 հոգի...»: Նա հայտնում է, որ Կոբուլեթի ծովափնյա

[1] „Армянский вестник", N 12-13, 24 апреля 1916, с. 29.
[2] «Մշակ», N 91, 8 ապրիլի 1916:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 99:
[4] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 102:
[5] Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 100:

մասում վարձել են ամառանոց՝ ընդարձակ պարտեզով, տարեկան 450 ռուբլի վարձով, որբերի համար[1]:

Մ. ա. քահանա Մելյանը տեղեկացնում է, որ Լիանոզյանները[2], անհատույց, Բաթումի վարչությանն են տրամադրել իրենց չորս սենյակից բաղկացած ամառանոցը[3]:

Զինվորական իշխանությունների թույլտվությամբ Ռիզեում գտնվող հանձնախումբը տեղափոխվում է Տրապիզոն: 1916 թ. ապրիլի 19-ին գեներալ Վլադիմիր Լյախովը պաշտոնապես արտոնում է Հայկական կոմիտեին գործելու Տրապիզոնում: Գեներալը թույլատրում է կոմիտեին՝ տնօրինել հայերին պատկանող գույքն, ըստ հայեցողության՝ վարձով տալ, ստանալ վարձակալման գումարը, ինչպես նաև ունենալ իր առանձին պահակախումբը գույքը հսկելու համար[4]: Փաստորեն, Վ. Լյախովը թույլատրում է կոմիտեին գործել մինչև նրա պաշտոնապես կազմվելը: Դա նրա կողմից կատարված մեծահոգի քայլ էր: Հավանաբար այդ քայլը պայմանավորված էր նաև գեներալի անձով: Նա ականատես էր հայ բնակչության ողբերգությանը և իր օժանդակությունն էր ցուցաբերում ողջ մնացածներին փրկելու և հայերի գույքը պահպանելու գործում: Երբ Վ. Լյախովը տեղափոխվում է ռազմաճակատի այլ հատված՝ տեղական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ կտրուկ փոխվում է:

Ապրիլի 22-ին Բաթումի «Տրապիզոնի հայրենակցական միությունը» հայտնում է, որ ստացել են 106 որբի անվանացուցակը և սկսել են անհրաժեշտ սննդամթերքի՝ ալյուրի և շաքարի գնումները: Առավել դժվար էր ալյուրի խնդիրը, քանի որ պետք էր ստանալ քաղաքապետարանի թույլտվությունը ոչ միայն նման քանակի ալյուրի գնման, այլև նավով տեղափոխելու համար: Այդ խնդրով Մ. ավագ քահանա Մելյանը մի քանի անգամ այցելում է քաղաքապետարանի պաշտոնատար անձանց՝ թույլտվություն ստանալու համար, սա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 32:

[2] Նկատի ունի նշանավոր նավթարդյունաբերող Ստեփան Լիանոզովի (Լիանոզյան, 1872–1951) ընտանիքը: Ս. Լիանոզովին անվանում էին «ռուսական Ռոկֆելլեր»:

[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 32 շրջ.:

[4] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 11:

կայն «արդիւնքը գրեթէ ոչինչ եղաւ»: Պատճառն այն է, որ Բաթումի բնակչությունը ևս մեծ կարիք է զգում ալյուրի:

Հայրենակցական միությունը հայտնում է, որ Սոչիի կոմիտեից ստացվել է 975, իսկ Նովոռոսիյսկից՝ 700 ռուբլի: Գումարը պատրաստ են առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ուղարկել: Միաժամանակ կոմիտեն հայտնում է, որ կան ցանկացողներ Տրապիզոնի հայկական կոմիտեում աշխատելու համար[1]:

Ապրիլի 26-ին Տրապիզոնում հիմնվում է Հայկական կոմիտե, որը գլխավորում է Մ. ավագ քահանա Մելյանը[2]: Հայկական կոմիտեն պետք է զբաղվեր ոչ միայն ողջ մնացած հայերի փրկությամբ, այլև սպանված կամ աքսորված հայերի և հայ եկեղեցու լքված գույքի հաշվառման ու տնօրինման խնդիրներով[3]: Այս վերջին խնդիրը ևս խիստ կարևոր էր: Հայ բնակչության բռնագաղթից հետո Տրապիզոնի երիտթուրքական իշխանությունները հայերի անշարժ գույքը հանձնել էին տեղի թուրք բնակչությանը: Այդ «նվիրաբերությունը» հաստատվել էր սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերով[4]:

Գեներալ Վ. Լյախովը թույլատրում է Ռուսաստանում հայ կաթոլիկների ներկայացուցիչ Թիմոթեոս Տեր-Գյուլյան քահանային տնօրինել Տրապիզոնի հայ կաթոլիկներին պատկանող եկեղեցին, ինչպես նաև կաթոլիկ համայնքին պատկանող մշակութային-լուսավորչական հաստատությունները: Հունիսի 7-ին հուլիսի 12-ին Տրապիզոնի ամրացված շրջանի պետ, գեներալ Ալեքսեյ Շվարցը վերահաստատում է Թ. Տեր-Գյուլյանի իրավունքները[5]:

Հայկական կոմիտեն հաշվառում է Տրապիզոն քաղաքում հայեր ունեցած անշարժ գույքը: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերին պատկանող 426 տնից 131-ն ամբողջությամբ քանդված են, իսկ 101-ը՝ կիսաքանդ: Հայերն ունեցել են

---

[1] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 30–31:
[2] Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 3:
[3] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 80:
[4] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 1008, թ. 2 շրջ.:
[5] "Армянский вестник", N 36, 1916, с. 18.

141 խանութ[1]: Տների ու խանութների մի մասն ամբողջությամբ թալանվում կամ ավերվում են երիտթուրքական իշխանությունների և տեղական մահմեդական բնակչության կողմից:

Հայկական կոմիտեն հատուկ տետրում արձանագրում է այն տները և պահեստները, որտեղ նրա կողմից անց է կացվել գույքագրում:

Հայկական կոմիտեի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքի հայերին պատկանող և չվնասված 200-ից 250 տուն կարելի է վարձակալությամբ տալ ամսեկան 15-20 ռուբլի վճարով: Կոմիտեն որոշում է նաև վարձակալության հանձնել 150-ից 200 խանութը՝ յուրաքանչյուրը ամսական 25-ից 30 ռուբլով: Նախատեսվում էր վարձակալված տներից և խանութներից վեց ամսվա համար ստանալ համապատասխանաբար 23600 և 28000 ռուբլի գումար[2]:

Ապրիլի 30-ի նամակում Մ. ա. քահանա Մելյանը հայտնում է ԿՀԲԸ-ը, որ կատարած հաշվառումից հետևում է, որ Տրապիզոնի 16 հազար հայերից ողջ են մնացել 506 հոգի: Նրանցից 233-ը տղամարդ, 103-ը կին, 98-ը տղա, 72-ը աղջիկ[3]: Տեր հայրը հետևյալն է գրում. «Հայերի կայքը հափշտակել են թիւրքերը, գիւղերը կրակի ճարակ են դարձել: Ազատուածներից շատերը բռնի կրօնափոխ արածներն են, իսկ կիներ և աղջիկներ ազատուել են հարեմներում և թիւրքերի տներում բռնութեամբ պահուելով»[4]:

Հունիսի 19-ին, կիրակի օրը, Մ. ավագ քահանա Մելյանը Տրապիզոնի Ս. Աստվածածին եկեղեցում առաջին պատարագը և ընդհանուր հոգեհանգստի արարողությունն է կատարում: Վերջինիս ընթացքում «մահից ազատուած Տրապիզոնցիները, մանաւանդ կանայք ու աղջիկները, շարունակ արտասուքներ էին գլորում. հոգեհանգստին կանանց հեստերիկան (հիստերիան – Ռ. Ս.) բռնեց. քահնիսին եկեղեցուց դուրս տարան»[5]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 4: ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 3:
[2] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5 շրջ.:
[3] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 33: ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 30, թ. 122 շրջ.:
[4] «Համբաւաբեր», N 21, 22 մայիսի 1916, էջ 656:
[5] Նույն տեղում, N 29, 17 յուլիսի 1916, էջ 917:

Հայկական կոմիտեն կատարում է նաև հարցախույզեր տեղի հույն և մահմեդական բնակչության շրջանում՝ պարզելու համար այս կամ այն հայի ճակատագիրը: Նրա գործունեության շնորհիվ հնարավոր է լինում պարզել Տրապիզոնի բնակիչներից մեկի՝ 46-ամյա Հովհաննես Պետրոսի Փաչաջյանի ողիսականը: Պարզվում է, որ նա եղել է քաղաքից տեղահանվածների երկրորդ խմբում: Նրանք աքսորվել են 1915թ. հունիսի վերջերին և սպանվել Գյումուշխանե քաղաքի մոտ[1]: Երբ տրապիզոնցի թուրքերից մեկին հարցրել են, թե ինչու են սպանել հայ երեխաներին, նա պատասխանել է, որ միևնույնն է՝ նրանք հայեր էին դառնալու[2]:

1916 թ. մայիսին Տրապիզոնի Հայկական կոմիտեն հնարավորություն է ունենում անցկացնել նոր վիճակագրություն և հայերի ունեցվածքի հաշվառում: Տրապիզոն քաղաքում հայ բնակչությունն ունեցել է 1200 տուն և ողջ են մնացել 92 հոգի: Նահանգի 46 հայկական գյուղի բնակչությունից ողջ են մնացել 368 հոգի: Նրանց են միացել այլ վայրերից փրկված 46 հոգի[3]: Ինքնին հասկանալի է, որ վկայակոչված վիճակագրությունը ամբողջական չէ և չի ներկայացնում քաղաքի և նահանգի բնակչության և անշարժ գույքի ստույգ թվաքանակը, որը եղել է մինչև պատերազմը և տեղահանությունը: Այնուամենայնիվ, հանձնաժողովը որոշակի աշխատանքներ է կատարել հայ բնակչության թվաքանակը, գույքը, թեկուզ և մոտավոր, ճշտելու համար: Նշված աշխատանքները կոմիտեն շարունակում է իր հետագա գործունեության ընթացքում:

1916 թ. մայիս-հունիս ամիսներին Քաղաքների միության Տրապիզոնի բաժանմունքը տարբեր բնակավայրերում հիմնում է 5 պարենային-բժշկական կետ, 5 բաղնիք, 4 թեյարան, պարենի 4 պա-

[1] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 23:
[2] ***Шавельский Г. И.,*** Воспоминания последнего протопресвитера Русской армии и флота, http://militera.lib.ru/memo/russian/shavelsky_gi/index.html
[3] «Համբաւաբեր», N 21, 22 մայիսի 1916, էջ 657: Ամբողջական վիճակագրությունը տես ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 35 և շրջ.:

հեստ, կենտրոնական դեղատուն, ամբուլատորիա, որբանոց և գաղթականների համար ժամանակավոր հանգրվան[1]:

Հայկական կոմիտեն քայլեր է ձեռնարկում ստանալու «Ռեժի» ընկերության պահեստներում պահվող և բռնագաղթված հայ վաճառականներին պատկանող ծխախոտն ստանալու համար: Կոմիտեն ցանկանում էր ծխախոտը վաճառել և գոյացած գումարն օգտագործել ողջ մնացած հայերին օգնելու, որբերին ապաստան տալու և այլ կենսական խնդիրների համար: «Ռեժի» ընկերությունը տեղեկացնում է, որ իր մթերանոցում 151 հակ՝ 10021 կգ ծխախոտ, որոնք պատկանում են հայերին: Ընկերությունը, սակայն, չի կարող նշված ծխախոտը հատկացնել, քանի որ «Թիւրք կառաւարութիւնը մեկնող հայերու ստացուածքէն և անոնց բուն տէրերուն վերադարձին վերաբերեալ հրատարակուած օրէնքին համաձայն, հայ մշակողներու և վաճառականներու վերոգրեալ ապրանքներն թիւրք կառաւարութիւնեն տէր դարձած ու մեզ յանձնած է ի պահ»[2]: Նշված պատասխանից հետևում է, որ «Ռեժի» ընկերությունը ամենայն «սրբությամբ» կատարում էր Տրապիզոնը լքած օսմանյան իշխանությունների հրամանը: Ինքնին հասկանալի է, որ դա կարող էր պայմանավորված լինել նաև սեփական շահերից: Հավանաբար ընկերությունը ցանկանում էր յուրացնել հայերին պատկանող ծխախոտը և այդ իսկ պատճառով հղում էր կատարում թուրքական իշխանությունների հրամանի վրա:

Կոմիտեի աշխատանքներն օրեցօր ավելանում էին: Բանն այն է, որ քաղաքում թողնված հայ բնակչության գույքը պահանջում էր ամենօրյա հսկողություն և հաշվառում: Այդ իսկ պատճառով կոմիտեում աշխատողների թվաքանակն ավելացվում է: 1916 թ. հուլիսի 1-ի դրությամբ, բացի մշտական հինգ անդամից, կային ևս 17 հոգի, որոնց թվում հաշվապահ, երկու գրագիր, պահեստների երկու կառավարիչ, տասներկու պահակ և առանձին հանձնարարություններ

---

[1] *Յարությունյան Ա. Հ.*, Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, էջմիածին, թիվ Դ, 2007, էջ 70–71:

[2] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 42:

կատարող: Կոմիտեի վեց ամսվա գործունեության համար անհրաժեշտ էր 17070 ռուբլի[1]:

Օգոստոսին Տրապիզոնի Հայկական կոմիտեի նախագահի պաշտոնում Մ. ավագ քահանա Մելյանին փոխարինում է մասնագիտությամբ իրավաբան Արշակ Առաքելյանը[2]: Վերջինիս նշանակումը պայմանավորված էր նրանով, որ անհրաժեշտ էր կարգավորել գույքի և կալվածքների հետ կապված խնդիրները, ինչպես նաև պետք էր օգներ վերադարձողներին իրավաբանական խորհրդատվությամբ, որը հնարավորություն կտար նրանց լուծել իրենց գույքի հետ առաջացած խնդիրները:

Օգոստոսի 6-ին ԿՀԲԸ-ն և Հայկական Կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը դիմելով Տրապիզոնի ամրացված շրջանի պետ գեներալ Ա. Շվարցին, հայտնում է, որ ներկայացնում է Տրապիզոնի հայկական կոմիտեի գործունեությունն ուղղորդող հրահանգը[3]:

Առաջնահերթ խնդիրներից պնդուկի բերքահավաքը կազմակերպելն էր: Տրապիզոնը և նահանգը հայտնի էին պնդուկի բերքով, իսկ տարին բարեհաջող էր և բերքը հասնում էր հարյուր հազարավոր փթերի[4]:

Տրապիզոնում իր աշխատանքներն է ծավալում Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի ներկայացուցիչը: Բաթումի մարզի զինվորական գեներալ-նահանգապետ Բ. Ս. Ռոմանկո-Ռոմանովսկուն ուղղված հեռագրում, Քաղաքների միության ներկայացուցիչ կոմս Տիշկևիչը հայտնում է, որ Նովոռոսիյսկի հայերը Տրապիզոնի սովյալների օգտին գնել են 1500 փութ ալյուր: Վերջինիս տեղափոխումը հանձնարարվում է Մ. ա. քահանա Մելյանին: Բացի այդ, ռուսական հրամանատարության՝ գեներալ Վ. Լյախովի կողմից, Տրապիզոնի հայկական կոմիտեին թույլատրվում է տնօրինել հայոց եկեղեցու և անհատ անձանց շարժական ու ան-

[1] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5 շրջ.-6:
[2] «Համբաւաբեր», N 41, 9 հոկտեմբերի 1916, էջ 1291:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 16:
[4] «Համբաւաբեր», N 29, 17 յուլիսի 1916, էջ 917:

շարժ գույքը[1]: Իր հերթին, Քաղաքների միությունը Տրապիզոն է տեղափոխում 4 հազար փութ ցորեն և բաժանում տեղի բնակիչներին[2]: Քաղաքների միությունը Ռիզեում հիմնում է հիվանդանոց՝ 100 մահճակալով[3]:

Տրապիզոնի սանիտարահիգիենիկ պայմանները խիստ անբավարար էին: Քաղաքի աղբյուրներն այն աստիճանի էին աղտոտված, որ հնարավոր չէր օգտվել նրա ջրերից: Ջուրը բերվում էր այլ վայրերից և կուժն արժեր 20 կոպեկ: Ինչպես հաղորդում է Մելյանը. «նաւթ, շաքար, աղ գրեթէ սպառուած են համարւում, կանաչեղէն անգամ չի ճարւում. դատարկ ամայի տներ-որքան կամիք»[4]: Չնայած առկա ծանր սոցիալ-տնտեսական պայմաններին, Ռուսաստանում ապաստանած տրապիզոնաբնակ հայերը ձգտում էին վերադառնալ և վերաշինել քանդված օջախները, սակայն Կովկասի փոխարքա, մեծ իշխան Ն. Ռոմանովն արգելել էր հայերի մուտքը Տրապիզոն[5]: Եվ դա այն դեպքում, երբ Տրապիզոնում և շրջակա վայրերում կառուցվում էին պաշտպանական տեղամասեր, իսկ հայերի վերադարձը կնպաստեր նրանով, որ ռուսները կունենային աշխատանքային ուժ, իսկ հայ գյուղացին նրանց կապահովեր անհրաժեշտ սննդամթերքով:

Տրապիզոնի կոմիտեն նաև զանազան անհրաժեշտ իրեր էր տրամադրում Տրապիզոնի ամրացված շրջանի զորամասերին: 1916 թ. հուլիսի 1-ից մինչև 1917 թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում բանակի կարիքների համար տրամադրվում է 92 հազար ռուբլու զանազան առարկաներ և կենցաղային իրեր[6]:

1916 թ. նոյեմբերի 12-ին Սոչիի ԿՀԲԸ-ն մասնաճյուղը և շրջակա հայկական գյուղերի լիազորների համատեղ ժողովը որոշում է «մի որբանոց-ապաստարան բաց անել Սօչիում առայժմ քսան որբերի համար»: Սոչիաբնակ հայերն իրենց որոշումը պատճառաբանում են այն հանգամանքով, որ շրջանի բնակչությունը և ապաստանած գաղթականությունը կամավոր են նման ցանկություն հայտնել, խոս-

---

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 924, թ. 33 :շրջ.:
[2] *Յարութիւնեան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը, էջ 62:
[3] «Համբաւաբեր». N 25, 19 յունիսի 1916, էջ 780:
[4] Նույն տեղում, N 29, 17 յուլիսի 1916, էջ 917:
[5] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 56:
[6] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5:

տանալով իրենց վրա վերցնել որբերի պահպանության հետ կապված ծախսերը: Բացի այդ, տեղի կլիման բարենպաստ կլինի երեխաների առողջության համար: Տեղում կան բավական թվով բժիշկներ: Նամակի վերջում ԿՀԲԸ-ն մասնաճյուղի քարտուղար Հակ. Թոռլաքեանը գրում է. «Հաղորդելով այս մանրամասնութիւնները, ջերմապէս խնդրում ենք ընթացք տալ մեր շրջանի ժողովրդի միահամուռ ցանկութեան և արտօնել, որ Բաթումից և կամ Տրապիզոնից կարողանանք բերել տալ մեր ցանկացած որբերը»[1]:

Նոյեմբերին խաթարվում է Հայկական կոմիտեի նորմալ գործունեությունը: Տրապիզոնի ժանդարմական բաժանմունքին է դիմում Ալեքսանդր Կալամկարովը (Կալամկարյան), և հայտնում Հայկական կոմիտեի անդամների կողմից կատարված չարաշահումների մասին: Նոյեմբերի 16-ին ժանդարմական բաժանմունքի պետ, գնդապետ Դինգան պահանջում է Տրապիզոնի ոստիկանապետից հետաքննել և զեկուցել[2]:

Ա. Կալամկարովն իր հայտարարությունում նշում է, որ Հայկական կոմիտեի անդամներն օգտվելով գեներալ Վ. Լյախովի կողմից տրված լայն լիազորություններից, չեն դիմանում գայթակղությանը և «հայ որբեր որոնելու փոխարեն, որը գլխավոր պատճառն էր կոմիտեի հիմնման համար, իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացրեցին ... ունեցվածքի յուրացման վրա»[3]:

Հիմք ընդունելով Ա. Կալամկարովի հայտարարությունը, 1916 թ. օգոստոսի 12-ին Տրապիզոնի ոստիկանապետը 1-ին տեղամասի պրիստավին հրամայում է կնքել Տրապիզոնի հայկական կոմիտեի զբաղեցրած շենքը և պահեստը, հսկողություն սահմանելով վերջինիս վրա[4]: Նշված կարգադրության հետևանքով դադարեցվում է կոմիտեի գործունեությունը, որը բացասաբար է անդրադառնում որբերի որոնման և նրանց Ռուսաստան տեղափոխման վրա: Փաստորեն, ռուսական իշխանությունները հավատ ընծայելով Ա. Կալամկարովի

[1] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1008, թ. 5-6:
[2] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 29, թ. 4:
[3] Նույն տեղում, թ. 13 և շրջ.:
[4] Նույն տեղում, թ. 7:

անհիմն և փաստերով չհիմնավորված ամբաստանություններին, հրամայում է դադարեցնել կոմիտեի աշխատանքները:

Տարպիզոնի ոստիկանության կողմից կատարված հետաքննությունը որևէ արդյունք չի տալիս: Կոմիտեի գործունեությունը վերսկսելու նպատակով, ԿՀԲԸ-ն կողմից Տրապիզոն է գործուղվում իրավաբան Ա. Առաքելյանը: 1916 թ. հոկտեմբերի 16-ին նա պաշտոնապես դիմում է Տրապիզոնի ամրացված շրջանի պետին, խնդրելով թույլատրել վերաբացելու նոր «Տրապիզոնի հայկական կոմիտե»: Ա. Առաքելյանն ուղղված խնդրագրում ներկայացնում է Ա. Կալամկարովի ամբաստանությունների անհիմն լինելը և խնդրում հաստատել նոր կոմիտեի կազմը և միաժամանակ թույլատրել գբաղեցնել կոմիտեի շենքը, տնօրինել իրենց պատկանող դրամական միջոցները, պահեստը և վերադարձնել բռնագրավված ընթացիկ գրագրությունը: Ինչպես նշում է Ա. Առաքելյանը, կոմիտեն բաղկացած է լինելու հինգ անդամից և չորս թեկնածուից, իսկ կոմիտեն գլխավորելու է ինքը՝ Ա. Առաքելյանը[1]: Տրապիզոնի ամրացված շրջանի պետ, գեներալ Ա. Շվարցի հրամանով, Կալամկարովը դատի է տրվում իր անհիմն ամբաստանությունների համար: Գեներալը Տեր հորը «իրաւունք է տուել հրաւիրել գործի Հայկական Կոմիտէին և յանձնել նրան բոլոր հայկական գույքերը, կալուածքները, դրամը և գործերը»[2]:

Հոկտեմբերի 16-ին Ա. Առաքելյանը և 1-ին տեղամասի պրիստավը կատարում են Ս. Աստվածածին եկեղեցու գույքի ցուցակագրումը: Գույքագրվում են 42 անուն առարկա, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 305 ռուբլի 50 կոպեկ[3]:

Դեկտեմբերին Մ. ա. քահանա Մելյանը հայտնում է Տրապիզոնում ԿՀԲԸ-ն մասնաճյուղ հիմնելու մասին[4]: Նա միաժամանակ հայտնում է Երզնկայից ծննդավայր վերադարձողների մասին: Իսկ դեկտեմբերի 22-ին Տեր հայրն անձամբ զեկուցում է Հայկական կենտրոնական կոմիտեին արված աշխատանքների մասին: Նորաբաց ԿՀԲԸ-ն անդամներն էին՝ Արշակ Առաքելյանը (նախագահ, լիա-

[1] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 21, թ. 2-3:
[2] «Համբաւաբեր», N 52, 25 դեկտեմբերի 1916, էջ 1643:
[3] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 26, թ. 16-17:
[4] «Համբաւաբեր», N 51, 18 դեկտեմբերի 1916, էջ 1619:

զոր ԿՀԲԸ-ն), Մ. Էմերյանը, Ս. Մանկրսազյանը, Վ. Բալայանցը և Ա. Սինանյանցը[1]:

Դեկտեմբերի 20-ի նամակում Մ. ավագ քահան Մելյանը կարգադրում է կոմիտեի անդամներին այլևս չվաճառել իրենց «իրաւասութեան տակ գտնուած մանուֆակտուրային այն գործուածքները, որոնք կարող են ճերմակեղէնի ու հագուստեղէնի համար պետք գալ մեր որբերին»: Տեր հայրը հրահանգում է նման ապրանքներ վաճառել միմիայն բարեգործական կազմակերպություններին, որոնք խնամում են որբերին և սահմանում է վաճառքի մոտավոր գինը[2]:

Հայկական կոմիտեի աշխատանքների շնորհիվ, հնարավոր է լինում տնօրինել հայերին պատկանող շարժական և անշարժ գույքի մի մասը: Առաջինը կազմում էր 30 հազար ռուբլի, իսկ երկրորդը՝ 100 հազար ռուբլի[3]:

1917 թ. հունվարի 1-ին ԿՀԲԸ-ն Կենտրոնական կոմիտեին ուղված նամակում ԿՀԲԸ-ն Սոչիի մասնաճյուղը հայտնում է, որ 1916թ. նոյեմբերի 12-ին տեղի ունեցած նիստում որոշվել է քսան երեխայի համար որբանոց հիմնել Սոչիում: Մասնաճյուղի ղեկավարությունն իր որոշումը հիմնավորում է նրանով, որ երեխաների կեցության ծախսն իր վրա է վերցնում Սոչիի և շրջակա հայկական գյուղերի բնակչությունը և շրջանում ապաստանած գաղթականությունը: Բացի այդ, տեղի կլիման բարերար ազդեցություն կունենան երեխաների վրա, որոնք սովոր են այդ կլիմային: Կան զգալի թվով բժիշկներ, որոնք կարող են համապատասխան բուժօգնություն ցուցաբերել և այլն[4]:

Ռուսաստանում բնակվող տրապիզոնցիներից՝ Երվանդ Մութաֆյանը, տեղեկանալով, որ Բաբերդի որբանոցը խիստ կարիք ունի դրամական միջոցների, պաշտոնապես դիմում է Արշակ Առաքելյանին, խնդրելով Տրապիզոնի իրենց խանութից վաճառքի հանված ապրանքների գումարը փոխանցել որբանոցին[5]:

---

[1] «Համբաւաբեր», N 52, 25 դեկտեմբերի 1916, էջ 1643:
[2] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 11:
[3] *Յարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը, էջ 70:
[4] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1008, թ. 5-6:
[5] Նույն տեղում, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 36:

Տրապիզոնում վերաբացվում են ազգային–լուսավորական և Մխիթարյան վարժարանները: Առաջինում աշակերտների թիվը 60-ից 70 էր, իսկ երկրորդում՝ 50: 1917թ. հունվարից սկսում է գործել տարրական դպրոցը՝ 44 աշակերտով[1]:

Հունվարի 20-ին Հայկական կոմիտեն դիմում է Կովկասի փոխարքա, մեծ իշխան Ն. Ն. Ռոմանովին, հայտնելով, որ Տրապիզոնից աքսորված կամ սպանված հայ վաճառականների պահեստներում կա մեծ քանակությամբ մթերված ծխախոտ: Կոմիտեն խնդրում է փոխարքային հրամայել, որպեսզի «Ռեժի» ընկերությունը, հայերին պատկանող ծխախոտը հանձնի կոմիտեին[2]:

Մարտի 20-ին Կենտրոնական կոմիտեին նախկին տրապիզոնցիների անունից դիմում է Արամ Հակոբյանը: Նա խնդրում է միջնորդել փոխարքային, որպեսզի նա թույլատրի իրենց կազմակերպել պնդուկի բերքահավաքը, որը նախորդ տարի հնարավորություն չեղավ կատարել: Ա. Հակոբյանը հայտնում է, որ ռուսահպատակ տրապիզոնցի հայերի մեծ մասը՝ 90%-ը գյուղացիներ են, որոնք Տրապիզոնի նահանգում ունեն զգալի սեփականություն: Իրենց ունեցած տեղեկությունների համաձայն, Տրապիզոնի ռուսական իշխանությունները որոշել են օգտագործել սեփականատեր չունեցող հողերը: Ենթադրվում է, որ դա ապագայում թյուրիմացությունների պատճառ կարող է դառնալ, «մանաւանդ, որ տասնեակ հայ գիւղերում մի հատ հայ չկայ: Ուստի անհրաժեշտութիւն է ծագում այստեղի գիւղացիներին գնալ (իւրաքանչիւր ընտանիքից գոնէ 1 հոգի) անմիջապէս Երկիր»[3]:

Ա. Հակոբյանը խնդրում է Հայկական կենտրոնական կոմիտեին միջնորդել՝ Տրապիզոն անցնելու համար թույլտվություն ստանալու համար: Նա հայտնում է, որ Սուխումում կազմվել է Կենտրոնական հանձնաժողով, որը «նպատակ է դրել մարդով, փողով և բարոյապէս (հասնել-Ռ.Ս.) Տրապիզոնի վերաշինութեան և (հայերի-Ռ.Ս.) սեփականութիւնների իրաւունքների պահպանմանը»[4]:

---

[1] *Յարությունյան Ա. Հ.,* Հայ գաղթականության տեղաբաշխումը, էջ 71:
[2] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 80 և շրջ.:
[3] Նույն տեղում,, ֆ. 28, ց. 1, գ. 1008, թ. 3:
[4] Նույն տեղում, գ. 1008, թ. 3 շրջ.:

Սակայն, մեծ իշխանի հրամանի համաձայն, արգելվում է հայերի մուտքը Տրապիզոն: Միայն շատ քչերին է հաջողվում հնարավորություն ստանալ վերադառնալ հայրենի օջախները: Եվ դա այն դեպքում, երբ Տրապիզոնի ռուսական իշխանությունները լայնածավալ պաշտպանական-շինարարական աշխատանքներ էին կատարում և կարիք ունեին բանվորական ուժի: Ռուսները չեն կարողանում շինարարական աշխատանքներում ընդգրկել տեղացի հույներին: Հիմնական բանվորական ուժն է դառնում տեղի մահմեդական բնակչությունը[1]: Բացի այդ, ռուսական իշխանությունները Տրապիզոն, Երզրում և Սարիղամիշ են ուղարկում զգալի թվով ռուսահպատակ գերմանացիներ, որոնց աքսորել էին Պովոլժեյից[2]:

Հայրենի գյուղեր վերադարձած հայերին սպառնում էր սովի վտանգը: Հատկապես ծանր վիճակում էին գտնվում Տրապիզոնի մերձակա գյուղերը: Քաղաքը գրաված զորքերն իրենց պարենի պաշարները լրացնելու նպատակով, առաջին հերթին հավաքել էին մերձակա գյուղերի ցորենը: Պարեան գյուղի երկու հազար փութ ցորենից ոչինչ չէր մնացել: Ինչպես նշվում է Հայկական կոմիտեին ներկայացված գրությունում, «Այսօր երկրագործական աշխատանքի ժամանակն է, (գյուղացիները-Ռ.Ս.) ոչինչ չունին, որ նոյնիսկ իրենց արտերը մշակելով զբաղէն և յառաջիկային հացի կարօտութիւն չ'քաշեն»[3]:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը որոշ դրական տեղաշարժեր է առաջացնում Տրապիզոնի հայության համար: Վերացվում են փոխարքայության կողմից քաղաք և ազատագրված նահանգ հայերի վերադառնալու հետ կապված արգելքները: Հայ բնակչությունը հնարավորություն է ունենում աստիճանաբար վերականգնել քանդված օջախները և ձեռնամուխ լինել գյուղատնտեսական աշխատանքներին: Գույքի վերադարձի հետ առաջանում են մի շարք խնդիրներ: Ինչպես հաղորդում էին մարտի 9-ին Գևորգ Ե-ին ուղղված նամակում Սուխումում ապաստանած և հայրենակիցների կող-

[1] Տե՛ս *Халит Д. А.*, указ. ст.,, с. 100.
[2] *Герман А. А.*, Немецкая автономия на Волге. 1918-1941. Издание 2-е, исправленное и дополнительное, Москва, 2007, с. 15, http://www.rusdeutsch.ru/biblio/files/Block.pdf
[3] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 26, թ. 61:

մից լիազորված Գրիգոր Հովսեփյանը և Արամ Հակոբյանը՝ հայ բնակչության կոտորածից և բռնագաղթից հետո, երիտթուրքական իշխանությունները հայերի գույքին տիրացած մահմեդականներին հանձնել էին գույքի տնօրինման իրավունք, որը վավերացված էր համապատասխան փաստաթղթերով: Գ. Հովսեփյանը և Ա. Հակոբյանը առաջարկում են կաթողիկոսին հնարավորություն ստեղծել, որպեսզի իշխանությունները թույլատրեն յուրաքանչյուր ընտանիքից մեկական հոգի վերադառնա Տրապիզոն և տնօրինի գույքը[1]: Նման անհանգստությունը բացատրվում էր նրանով, որ Տրապիզոնի ռուսական իշխանությունները տեղյակ չէին երիտթուրքական իշխանությունների նման կեղծարարությանը և գույքի հետ կապված վեճը կարող էին լուծել հօգուտ մահմեդականների:

1917 թ. մարտի 10-ին պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված շրջանների գեներալ-նահանգապետին են դիմում դեռևս 1890-ական թվականների համիդյան ջարդերի ժամանակ Սոչիի և Սուխումի օկրուգներում ապաստան գտած նախկին տրապիզոնաբնակները: Նրանք հայտնում են, որ նախկին Տրապիզոնի վիլայեթում, այժմ օկրուգում, մնացել է մեծ թվով հայկական գույք՝ վարելահողեր, այգիներ և այլն: Դրանք մնացել են անխնամ: Նախկին տրապիզոնցիներն առաջարկում են թույլատրել հողագործներին ժամանել Տրապիզոնի օկրուգ և մշակել իրենց հարազատներին և ազգականներին պատկանող հողատարածությունները: Օկրուգ են գալու բացառապես կամավորներ և տղամարդիկ: Նրանք են հոգալու իրենց կեցության հետ կապված բոլոր խնդիրները: Դա հնարավորություն կտա որոշ չափով մեղմել գաղթականների պարենի հետ կապված խնդիրները[2]:

Միաժամանակ, Տրապիզոնում շարունակում էին մնալ ռուսական ինքնակալությանը հավատարիմ պաշտոնյաներ, որոնք շարունակում էին կայսերական քաղաքականությունը և զանազան խոչնդոտներ էին հարուցում հայրենիք վերադարձող հայերի նկատմամբ: Բացի այդ, փորձում էին արհեստականորեն նվազեցնել հայերի

[1] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 57:
[2] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 1008, թ. 4:

թվաքանակը նահանգում և քաղաքում: Այսպես, "Армянский вестник"-ի թղթակիցը հայտնում է, որ Տրապիզոնում հրատարակվող "Трапезундский Военный Листок" թերթը[1], կիրակնօրյա համարներում տպագրում է պատմական բնույթի հոդվածներ՝ «Մի քանի խոսք Փոքր Ասիայի քրիստոնեական հողերի մասին», «Տրապիզոնի անցյալը» և այլն: "Армянский вестник"-ի թղթակիցը նշում է, որ լույս է տեսել նշված թերթի քսաներորդ համարը, սակայն այնտեղ ոչ մի խոսք չի ասվում Հայաստանի և հայերի մասին: Միայն "Трапезундский Военный Листок"-ի N 24-ում տրվում է վիճակագրական փոքրիկ տեղեկություն, համաձայն որի Տրապիզոնի օկրուգում բնակվում են ընդամենը 165 հայ: Ըստ "Армянский вестник"-ի թղթակցի. «Թերթը ("Трапезундский Военный Листок"-ը — Ռ.Ս.) այնպիսի տպավորություն է թողնում, կարծես թե Փոքր Ասիայում Հայաստան ընդհանրապես գոյություն չունի»[2]:

Այնուամենայնիվ, իշխանությունների վերաբերմունքը սկսում է աստիճանաբար փոխվել: 1917 թ. դրությամբ Տրապիզոնում բնակվում էր 1500 հայ[3]: Շարունակվում է նահանգի հայ բնակչության հաշվառումը: 1917 թ. հունվարին Շանա գյուղում բնակվում էր 34, Ասֆանցում՝ 5, Թոծում՝ 9, իսկ մարտին Սիֆա գյուղում՝ 19 հայ[4]:

Ցավոք, 1918 թ. փետրվարին սկսված թուրքական հարձակումը հնարավորություն չտվեց իրականացնել նախատեսված ծրագրերը: Անհանգստացած թշնամու լայնածավալ հարձակումից, փետրվարի 13-ին, N 5 գրությունում Մ. ավագ քահանա Մելյանը տագնապով հայտնում է կոմիտեի անդամներին, որ «Տրապիզոնը կանգնած է մեծ վտանգի առաջ»: Նա խնդրում է շտապ Բաթում ուղարկել արժեքավոր[5] իրերը: Փրկված և հարազատ օջախները վերադարձած

---

[1] Թերթը տպագրվել է 1916թ. նոյեմբերից մինչև 1917 թ. դեկտեմբեր, տե՛ս ***Гужва Д. Г.,*** Русская военная печать в годы Первой мировой войны, „ВИЖ", N 12, с. 38.

[2] "Армянский вестник", № 2, 8 января 1917, с. 15.

[3] «Աշխատանք», N 47, 28 հոկտեմբերի 1917:

[4] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 26, թ. 17-20, 28:

[5] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 58:

տրապիզոնցի հայերը ստիպված էին կրկին ապաստանել Ռուսաստանում:

Օսմանյան զորքը Տրապիզոն մտնելով կրկնում է 1915 թ. վայրագությունները: Գերմանիայի արտաքին գործերի նախարությունը տեղեկանում է, որ թուրքական կանոնավոր բանակը «Հեռացող հազարավոր ռուսների գնդակահարել կամ կենդանի այրել են: Հայերը աննկարագրելի չարչարանքների են ենթարկվում: Երեխաներին լցնում են պարկերը և նետում ծովը: Ծեր մարդկանց և կանանց խաչում և խեղդում են, բոլոր երիտասարդ աղջիկներն ու երիտասարդ կանայք տրվել են թուրքերի ձեռքը»[1]:

«Ճակատամարտ» թերթի տեղեկությունների համաձայն, 1922 թ. սկզբներին Տրապիզոնում բնակվում էին 130 հայ ընտանիք, 70 կանայք, 80 որբ և 70 որբուհիներ: Նրանց կեցությունը հոգում է Գարեգին վարդապետ Խաչատրյանը: Ամերիկյան Նպաստամատույցը քաղաքի ամերիկյան հյուպատոսի միջոցով հայերին ուղարկում է սնունդ և հագուստ[2]:

Այսպիսով, Տրապիզոնում և համանուն նահանգում հայկական կազմակերպությունների ծավալած գործունեությունը հնարավորություն է տալիս փրկել զգալի թվով հայերի, սակայն հետագա աշխատանքները կասեցվում են ռուսական զորքի նահանջի հետևանքով, որն արդյունք էր բոլշևիկյան կառավարության քաղաքականության:

---

[1] *Հայրումի Ա.,* Հայկական խնդիրը կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ. մարտ-հունիս ամիսներին, էջմիածին, թիվ Դ, 2006, էջ 94:
[2] Տե՛ս «Ճակատամարտ», Բերա (Կ. Պոլիս), թիւ 2823, 2 մարտի 1922:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմը երկար ժամանակ ընդունված էր անվանել «մոռացված» պատերազմ, քանի որ 1914–1918 թթ. վերաբերյալ ուսումնասիրություններ, բացառությամբ հայ և որոշ այլ պատմաբաններից, գրեթե չեն կատարվել: Հատկապես 1990-ական թվականներից պատմաբանները սկսում են կատարել զանազան հետազոտություններ, որոնք գլխավորապես առնչվում են ռազմադիվանագիտական պատմությանը: Հրապարակված ուսումնասիրությունների ճնշող մեծամասնությունը լուսաբանում է Արևելյան ռազմաճակատում ընթացած մարտական գործողությունները: Խիստ հազվադեպ են այն հետազոտությունները (բացառությամբ հայ պատմաբանների), որտեղ ներկայացվում են ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունները, առավել ևս հայ կամավորական խմբերի մասնակցությունը ռազմաբեմի զանազան օպերացիաներին: Նման մոտեցումը բացատրվում է նրանով, որ ռուս-թուրքական ռազմաճակատը համարվում էր երկրորդական և պատերազմի ընթացքի վրա որևէ վճռորոշ ազդեցություն չունեցող ռազմաճակատ: Մեր հետազոտությունները, սակայն, հակառակն են ապացուցում: Ի տարբերություն Արևելյան (ռուս-ավստրիական) ռազմաճակատի, ռուս-թուրքականում ռուսները գերակշռող առավելություն ունեին: Օսմանյան բանակի նախաձեռնած գրեթե բոլոր օպերացիաներն ավարտվում են անհաջողությամբ: Կովկասյան բանակը մեկը մյուսի ետևից նվաճում է ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք բնակավայրեր՝ Վանը, Մուշը, Բիթլիսը, Էրզրումը և հասնում է մինչև Կամախ: Դա վերջին բնակավայրն էր, որ ռուսները գրավեցին պատերազմի ընթացքում: Մարտական գործողությունների ընթացքում ռուսական բանակը գլխովին ջախջախում է հակառակորդի III, ինչպես նաև II բանակը, որոնք 1917 թ. սկզբին գրեթե դադարում են գոյություն ունենալուց: Ռուսների համար բացվում են գերազանց օպերատիվ հնարավորություններ:

Առկա պատմագիտական գրականության վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ Օսմանյան կայսրությունը Քառյակ

միության ամենաթույլ օղակներից մեկն էր: Ռուսական Գերագույն գլխավոր հրամանատարությունը, չնայած Կովկասյան բանակի և հատկապես Սևծովյան հրամանատարության կողմից արված առաջարկություններին, հրաժարվում էր ակտիվացնել մարտական գործողությունները ռուս-թուրքական ռազմաճակատում: Դրա վկայություններից մեկն էր Էրզրումի օպերացիան: Չնայած Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատար և փոխարքա, մեծ իշխան Ն. Ռոմանովի ընդդիմությանը, գեներալ Ն. Յուդենիչն իր անձնական պատասխանատվությամբ և գիտակ շտաբային սպաների օժանդակությամբ, իրականացնում է օպերացիան և կարողանում է գրավել Էրզրում անառիկ ամրոցը: Այդ փայլուն հաղթանակի շնորհիվ ռուսների ձեռքն է անցնում Արևմտյան Հայաստանում թուրքական վերջին հզոր հենարանը: Էրզրումի գրավումը հնարավորություն է ընձեռում իրականացնել նաև Տրապիզոնի նվաճումը, որը կատարվում է նվազագույն կորուստներով: 1916 թ. ծմռանը և գարնանն իրականցրած այդ երկու օպերացիաների արդյունքում ռուսների ձեռքն է անցնում օպերատիվ և ռազմավարական գերակշռությունը: Թուրքերի նախաձեռնած հետագա գործողությունները միայն ավելի են վատթարացնում իրենց դրությունը:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը որոշակի փոփոխություններ է մտցնում մարտական գործողությունների հետագա պլանավորման խնդրում: Կովկասյան բանակը ստանում է զգալի համալրում, ինչպես նաև զենք և զինամթերք: Սևծովյան նավահանգիստներում նախապատրաստվում են դեսանտային գործողություն իրականացնելու համար, սակայն «անսպասելի» սկսվում է բանակի և նավատորմի «հեղափոխականացումը»: Եվ դա այն դեպքում, երբ Կովկասյան բանակը և Սևծովյան նավատորմն առավել քիչ էին «հեղափոխականացված»:

Պատերազմի տարիներին հայությունը ենթարկվում է անասելի փորձությունների: Օսմանյան կառավարությունն օգտվելով պատերազմի պատեհ առիթից՝ իրականացնում է արևմտահայության զանգվածային բռնագաղթն ու կոտորածը՝ ցեղասպանությունը: Այդ ոճրագործության հետևանքով հայ բնակչությունը հայրենազրկվում է, կրում մարդկային և նյութական ահռելի կորուստներ: Պատերազ-

մի առաջին իսկ օրից հայության ճնշող մեծամասնությունը գործուն մասնակցություն է ունենում կամավորական շարժմանը: Շարժման առաջին փուլը՝ ութ խմբերի կազմակերպման և համալրման ժամանակն էր: Այդ ընթացքում արձանագրվում են մի շարք բացթողումներ և թերություններ, որոնք հատուկ էին նման լայնածավալ աշխատանքների ժամանակ:

Առաջին փուլում կամավորները հիմնականում կատարում են պարեկապահակային և հետախուզական ծառայություն: Առավել ծանր մարտեր է մղում կամավորական IV խումբը, որին վիճակված էր դժվարին փորձությունը: Ստորաբաժանումը հարկադրված է լինում անհավասար մարտեր մղել հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ: Միայն շնորհիվ Քեռու զորավարական հմտության, կամավորները և ռուս զինվորները կարողանում են դուրս գալ շրջապատումից և միանալ յուրայիններին:

1915 թ. հունվարից մինչև ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածն օգտագործվում է մարտիկներին զինավարժելու, խմբերում զինվորական կարգապահություն հաստատելու համար: Հատկապես արմատական գործողությունների է դիմում I խմբի հրամանատարությունը և անձամբ Անդրանիկը: Կազմակերպվում է ռազմական ոստիկանություն և ռազմական դատարան: Դա հնարավորություն է տալիս որոշակիորեն ամրապնդել կարգապահությունը խմբում:

Հրամանատարության կողմից կազմվում է զինվորական պարզագույն կանոնագիր, որը հնարավորություն է տալիս մարտիկներին ծանոթանալ իրենց իրավունքներին և պարտականություններին: Դա որոշակիորեն նպաստում է խմբերում զինվորական կարգապահության ամրապնդմանը և ժամանակակից մարտական գործողություններին զինվորներին ծանոթացնելուն: Հարկավ, կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր բազմաբարբառ, կիսագրագետ և մարտական փորձ չունեցող կամավորների մեծ մասին ամբողջությամբ ուսուցանել ռազմական գործի բոլոր մանրամասները, սակայն ձեռնարկված միջոցառումները նպաստում են մարտական պատրաստականության բարձրացմանը:

Կամավորական շարժման երկրորդ փուլում, 1915 թ. ապրիլի 1-ից մինչև օգոստոս, հայկական խմբերն աչքի են ընկնում երկու գործողություններում: 1915 թ. ապրիլի 16-ից 18-ը I խումբն Անդրանիկի հրամանատարությամբ աչքի ընկավ ռուս–թուրքական ռազմաճակատի համար բախտորոշ Դիլմանի ճակատամարտում: Կամավորների մասնակցությունը բացառիկ նշանակություն ունեցավ ճակատամարտի ելքի վրա: 1915 թ. ապրիլի 1-ին պաշտոնապես կազմակերպվում է Արարատյան գունդը կամ V խումբը Վարդանի հրամանատարությամբ: Ստորաբաժանումը վճռորոշ նշանակություն ունեցավ Վանի ազատագրման գործում: Հայկական խմբերի հրամանատարները՝ Վարդանը, Դրոն, Համազասպը և Քեռին, հակառակ Բայազետի ջոկատի հրամանատար գեներալ Ա. Նիկոլաևի, նախածեռնում են օգնություն պաշարված Վանին: Շնորհիվ հայ հրամանատարների և մարտիկների վճռականության, Վանը և նահանգի մեծ մասը հնարավորություն է ունենում փրկվել անխուսափելի ոչնչացումից:

Այն բանից հետո, երբ Արարատյան գնդին միանում է I խումբը, հայ կամավորականները պատկառելի ուժ դարձան և ռուսական զորամասերի հետ միասին կարող էին հեշտությամբ ազատագրել Մուշ քաղաքն ու դաշտի հայկական գյուղերը, ինչպես նաև օգնության հասնել Սասունի հայությանը: Սակայն 1915 թ. հուլիսի 11-ի նահանջի հրամանը ի չիք է դարձնում բոլոր ջանքերը. նահանջն ուներ երկու ենթատեքստ՝ քաղաքական և ռազմական: Առաջինով վերացվում էր Վանի հայկական ժամանակավոր վարչությունը, իսկ երկրորդով հրահրվում էր հակառակորդին նախածեռնել հարձակում և փորձել օսմանյան ուժերը շրջապատել և ոչնչացնել:

1915 թ. հուլիսյան նահանջը բացասական է ազդում կամավորների վրա: Նրանք գտնվում էին բարոյահոգեբանական ճնշված վիճակում, քանի որ չկարողացան օգնության հասնել Մուշի և Սասունի իրենց հայրենակիցներին: Բացի այդ, նրանք ականատես են դառնում Վասպուրականի հայության տառապալից և մարդկային զգալի կորուստներ խլած նահանջին: Այդ ամենը պատճառ էր, որ մարտիկների զգալի մասը լքում է խմբերը: Միայն խմբերի հրամանատարների և հատկապես Անդրանիկի կոչն իր ծանրակշիռ ազդե-

ցությունն է ունենում, և կամավորները կրկին զինվորագրվում են ստորաբաժանումներին: 1915 թ. աշնանը ռուս-թուրքական ռազմաճակատում գործում էին հայկական վեց խումբ, որոնք կռվում էին ռազմաճակատի տարբեր հատվածներում:

Կամավորները մասնակցում են մի շարք կանխարգելիչ մարտական գործողությունների, որոնք նպատակ ունեին գաղտնի պահել էրզրումի օպերացիան: Հայ կամավորները և ռուս զինվորները համատեղ գործողությամբ հարկադրում էին քրդական ջոկատներին հեռանալ այն շրջաններից, որտեղ նախատեսվում էր կենտրոնացնել ռուսական զորքերը՝ էրզրումը գրոհելու համար: էրզրումի օպերացիային անմիջական մասնակցություն է ունենում կամավորական VI խումբը: Հայկական մյուս խմբերը մասնակցում են Մուշի և Բիթլիսի գրավման օպերացիաներին: Սակայն սկսած 1915 թ. դեկտեմբերից ռուսական հրամանատարությունը նախածեռնում է հայ կամավորական խմբերը լուծարելու գործընթացը: Առաջինը լուծարվում է V խումբը, իսկ 1916 թ. ընթացքում մնացած մյուս խմբերը: Մարտական գործողությունների վերջին փուլում հայ կամավորական շարժումը ծանր կորուստ է կրում՝ մարտերից մեկի ժամանակ զոհվում է հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկ Քեռին և VI խմբի հրամանատար Գ. Ավշարյանը:

1916 թ. սեպտեմբերին պաշտոնապես ավարտվում է հայ կամավորական շարժումը: Այն կամավորները, որոնք ցանկանում էին ընդգրկվել ռուսական ստորաբաժանումներում, շարունակում են ծառայությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հետագայում հայ հասարակության, քաղաքագետների և պատմաբանների ուշադրության կենտրոնում է եղել կամավորական շարժումը: Հստակ առանձնացվում են երկու տեսակետներ՝ դրական և բացասական: Նրանք, որոնք բացասաբար են գնահատում կամավորական շարժումը, գտնում են, որ շարժումը պատճառ դարձավ երիթուրքական կառավարությանը իրականացնելու արևմտահայության ցեղասպանությունը: Իրենց տեսակետը նրանք հիմնավորում են, որքան զարմանալի է, երիտթուրք պարագլուխների վկայություններով: Ինչպես գիտենք, եռյակը՝ էնվերը, Թալեաթը և Ջեմալը

հայտնի էին որպես փաստերի և դեպքերի կեղծարարներ: Հայտնի է, թե նրանք ինչպես են աղավաղել և գլխիվայր ներկայացրել 1914-1916 թթ. և հետագա իրադարձությունները: Համոզված ենք, որ չի կարելի հիմք ընդունել երիտթուրք կեղծարարների, ինչպես անցյալի և ներկա թուրք պատմաբանների, քաղաքագետների, նաև նրանց մի շարք օտարերկրացի գործընկերների այն պնդումները, թե հայ կամավորական շարժումը, թուրքական բանակում ծառայող հայ զինվորների «զանգվածային» դասալքությունը և հայերի «ապստամբությունները» պատճառ են դարձել օսմանահպատակ հայերի բռնագաղթի համար: Հարկ ենք համարում նշել, որ այդ ամենը թուրքական կողմի հորինվածքներն են, որոնց օգնությամբ նրանք ճգնում են արդարացնել հայերի ցեղասպանությունը և մոլորեցնել համաշխարհային հասարակությանը և սեփական ժողովրդին:

Աղբյուրների հաղորդումների համաձայն, ռուսական գերության մեջ գտնվում էին թուրքական բանակի մոտ երկու հազար հայ ռազմագերի: Առ այսօր, մեզ չի հանդիպել մեկ այլ թվաքանակ: Ինքնին հասկանալի է, որ մոտ երկու հազար հայ զինվորների «դասալքությունը» չէր կարող անդառնալի կորուստ հասցնել օսմանյան բանակին: Հարկ ենք համարում նշել, որ հայ զինվորները գերվել էին մարտական տարբեր գործողությունների ընթացքում:

Նման վերաբերմունքը դեպքերի ականատեսների և մասնակիցների մի մասի կողմից կարելի է հասկանալ: 1914–1916 թթ. իրադարձությունները՝ կամավորական խմբերի լուծարումը և ռուսական իշխանությունների կողմից Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների նախատեսվող գաղութացման ծրագրերը, քրդամետ դիրքորոշումը, հայերի զանգվածային կոտորածներն ու բռնագաղթը շփոթեցրել և ապակողմնորոշել էր հայ հասարակության մի մասին: Վերջինիս կարծիքով ռուսական կառավարությունը կարողանում է օգտագործել հայության ազատագրական ձգտումները և կազմակերպել կամավորական շարժումը: Նրանց նման տեսակետն ունի իր հիմքերը: Հիրավի, իշխանությունները, որոնք սկզբնական շրջանում որդեգրել էին «հայամետ» դիրքորոշում, հատկապես պատերազմի նախօրյակին՝ կապված Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հետ, 1915 թ. օգոստոսից

կտրուկ փոխում են իրենց վերաբերմունքը հայության նկատմամբ: Նիկոլայ II-ի «խոստացած» ինքնավարությունից հետք անգամ չմնաց: Ն. Ռոմանովին Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար նշանակելուց հետո, հայությունը այլևս չէր կարող հուսալ, որ կիրականանա իր երազանքը:

Հայ հասարակական-քաղաքական և կրոնական գործիչների համար ծանր հարված էր ռուսական իշխանությունների կողմից ծրագրվող Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքներում ռուս վերաբնակիչների բնակեցման ծրագիրը: Կամավորական խմբերի լուծարումից հետո, սա երկրորդ հակահայ գործողությունն էր, որ իրականացնում է ռուսական կառավարությունը:

Իրենց սխալը ռուսական իշխանությունները հասկացան միայն 1916 թ. վերջերից և հատկապես 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ անհրաժեշտություն դարձավ ռազմաճակատը համալրել նոր, մարտունակ զորքերով և սկսեցին աջակցել հայկական ազգային կազմավորումների ստեղծմանը: Ցավոք, ձեռնարկված միջոցառումները բավականին ուշ էին:

Պատերազմի տարիներին հայությունը կրում է ահռելի մարդկային և նյութական կորուստներ: Հայրենազրկվում է Արևմտյան Հայաստանը: Փախստական և բռնագաղթված բնակչությունը գտնվում էր սոսկալի ծանր սոցիալ-տնտեսական դրության մեջ: Երևանի նահանգը և Անդրկովկասի հայաբնակ գավառներում ապաստանած արևելահայ (Պարսկահայքից, Բաթումի նահանգից և Կարսի մարզից) և արևմտահայ գաղթականներին հիմնական օգնությունը ցուցաբերում էր տեղի հայությունը: Սակայն վերջիններիս նյութական հնարավորությունները պատերազմի ընթացքում սկսում են հատնել: Նրանք այլևս չունեին այն տնտեսական և դրամական հնարավորությունները, որոնք կային պատերազմի առաջին երկու տարիներին: Սկսած տնտեսական ճգնաժամը բնակչությանը հարկադրում են հոգալ առօրյա կարիքները:

Հայտնի է, որ երիտթուրքերը նպատակ էին դրել վերջ տալ Հայկական հարցին, որը մեծ տերություններն օգտագործում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Երիտթուրքերը ցանկանում էին ստեղծել «Մեծ Թուրան» երևակայա-

կան տերությունը: Հայերը և Հայկական հարցը արգելք էին երիտթուրքերի ծրագրերի համար: Ուստի, միանշանակ չի կարելի ընդունել, որ կամավորական շարժումը եղել է հիմնական պատճառը հայերի ցեղասպանության: Հարկ ենք համարում նշել, որ 1890-ական թվականների և 1909 թվականների Ադանայի (Կիլիկիայի) հայության կոտորածի ժամանակ չկար հայ կամավորական շարժում, սակայն թուրքերը սպանում էին հայերին, ուշադրություն չդարձնելով նրանց սեռին կամ հասակին: Չպետք է մոռանալ նաև թուրքական կառավարության կողմից իրականացվող ժողովրդագրական քաղաքականությունը, որը նպատակ ուներ զուտ հայկական նահանգներն ու բնակավայրերը բնակեցնել մահմեդական զանազան ցեղերով: Իսկ այդ ամենն արվել է մինչև Հայկական հարցի առաջ գալը:

Անհրաժեշտ է նշել, որ կամավորների շնորհիվ հնարավոր եղավ փրկել արևմտահայության զգալի հատվածներ, որոնցից գլխավորը Վանի և նահանգի հայ բնակչության ազատագրումն էր անխուսափելի ոչնչացումից: Կամավորները զգալի դեր են ունենում թուրք-քրդական գերությունում գտնվող հայրենակիցների ազատագրման գործում: Կարելի է փաստել, որ կամավորական շարժումը որևէ կերպ չի կարելի դիտարկել որպես 1914–1915 և 1918, 1920–1923 թթ. հայոց ցեղասպանության պատճառներից մեկը:

1915 թ. դժնդակ օրերին արևմտահայության մի մասն իր մեջ ուժ է գտնում կազմակերպելու ինքնապաշտպանություն: Թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումներին և քրդական ջոկատներին հատկապես ակտիվ դիմադրություն է ցույց տալիս Վան քաղաքը և նահանգի հայկական գյուղերը: Ցավոք, հայտնի պատճառներով՝ տղամարդկանց զորակոչման, հայ բնակչության ուսեզրկման, մտավորականության ոչնչացման և այլ պատճառներով, արևմտահայության զգալի մասին չի հաջողվում դիմագրավել ջարդարարներին:

Ցեղասպանության ենթարկված և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում գտնվող հայությունն իր մեջ ուժ և հնարավորություն է գտնում օգնել 1915 թ. մայիսի 7-ին Վանում հիմնված հայկական ինքնավար (ժամանակավոր վարչություն կամ նահանգապետություն) իշխանությանը: Այն իրենից ներկայացնում էր ազգային միաս-

նության կառավարման մարմին: Վանեցիները կազմակերպում են կառավարման մարմիններ, ազատագրական շարժման ականավոր գործիչ Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Քաղաքը և նահանգը սկսում են վերականգնել ավերված տնտեսությունը: Աշխատանքներ են տարվում բնակչությանը բնակավայրերը տեղափոխելու և գյուղատնտեսական աշխատանքները վերսկսելու համար: Գյուղացիությանը պաշտպանելու նպատակով կազմակերպվում է ոստիկանություն: Իր հերթին արևելահայությունն զգալի օժանդակություն է ցուցաբերում վանեցիներին: Կազմակերպվում են բժշկասանիտարական ջոկատներ, տրամադրում դրամական օգնություն, վարչական աշխատանքի փորձ ունեցող արևելահայերը ծառայության էին անցնում գավառներում: Ցավոք, հուլիսյան նահանջը վերջ է տալիս հայկական իշխանությանը:

